ԴԱՎԻԹ
ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՉԱՐԵՆԾԸ

89.99 092 Գասպ
Գ-31

ԴԱՎԻԹ
ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՉԱՐԵՆՑԸ



ԵՐԵՎԱՆ «ՆԱԻՐԻ»
1990

ԳՄԴ 83. 327
2282 գ

Խմբագիր՝ Հրաչյա ԹԱՄՐԱԶՅԱՆ

Գասպարյան Դ. Վ.
Գ 282 գ Ողբերգական Չարենցը՝ կյանքի և ստեղծագործ
նորահայտ էջեր / [Խմբ.՝ Հ. Հ. Թամրազյան].— Եր
«Նաիրի», 1990.— 384 էջ։

*Երևանի գրականության և արվեստի թանգարանի Չարենցի ֆո
դում պահվող ձեռագրերի, 1930-ական թթ. մամուլի և այլ նյո
թերի ուսումնասիրությամբ գրքում ներկայացվում ու վերլուծվո
են Չարենցի անտիպ երկերը, որոնք հիմնականում ընդգրկում են ն
վերջին տասնամյակը։ Բացահայտվում է մեծ բ
նագողջի կյանքի ողբերգությունը։*

4602020102
Գ ——— 69—90
705 (01) 90

ISBN 5—550—00427—5

ԳՄԴ 83, 327

© «Նաիրի»
Հեղինակային համար, 1990

ԱՅՍ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Հայ բազմադարյա գրականության և մեր դարի համաշխարհային պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ Եղիշե Չարենցի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող ճարցերը շարունակում են մնալ ժամանակակից գրական և հասարակական մտի ուշադրության կենտրոնում: Անչափ մեծ է նաև նրա հանդեպ եղած ընթերցողական հետաքրքրությունը:

Չարենցի ժառանգության ուսումնասիրությամբ այսօր զբաղվում է գրականագետների չորրորդ սերունդը: Առաջինը նրա ժամանակակիցներն էին՝ Ն. Աղբալյան, Ս. Հակոբյան, Հ. Սուրխաթյան, Պ. Մակինցյան, Հ. Օշական, Ա. Կարինյան, Տ. Հախումյան և ուրիշներ: Չարենցի ստեղծագործության ուսումնասիրության մի նոր փուլ սկսվեց 1950-ական թթ. կեսերից, երբ 17 տարվա ընդմիջումից հետո գրողի ժառանգությունը վերադարձվեց իր իսկական տիրոջը՝ ժողովրդին: Այս տարիներին Չարենցի վաստակի ուսումնասիրության և հրապարակման գործին նվիրվեցին Հ. Սալախյանը, Ս. Աղաբաբյանը, Հ. Թամրազյանը, է. Ջրբաշյանը, Ա. Ջահարյանը և այլոք: Քիչ ավելի ուշ այդ գործը շարունակեցին Գ. Ջահուկյանը, Ան. Չարենցը:

Այս գրականագետների հետևողական ջանքերի շնորհիվ Չարենցի ժառանգության ուսումնասիրությունը դարձավ հայ գրականագիտության առաջատար ուղղություններից: Նպատակը մեկն է՝ համակողմանիորեն ուսումնասիրել գրողի վաստակը, բացահայտել պատմական ճշմարտությունը, անհատի հոգեբանական դրամաները, նոր ժամանակների գեղարվեստա-

կան պատկերման սկզբունքները և, իհարկե, Չարենցի ան-կրկնելի արվեստը: Թվարկել հիշյալ գրականագետների գրքերը և ավելի հանգամանորեն խոսել նրանց վաստակի մասին, նշանակում է անցնել չարենցագիտության հարուստ հանապարհը՝ սկսած բանաստեղծի մասին գրված առաջին մենագրությունից (Ս. Հակոբյան, Եղիշե Չարենց, Վիեննա 1924) մինչև վերջերս լույս տեսած գրքերը: Բայց հանի որ դա մեզ հետաքրքրական կտանի, ուստի թողնում ենք ավելի հարմար առիթի:

Փաստական և վերլուծական հարուստ նյութ պարունակող ուշագրավ ոչ քիչ մենագրությունների ու հոդվածների կողքին իրենց արժանի տեղն ունեն նաև Չարենցի երկերի վեցհատորյա ժողովածուն (1962—1968), «Անտիպ և չհավաքված երկերը» (1983), որոնց հրատարակությունը Ա. Ջահրյանի և Ան. Չարենցի աշխատասիրությամբ իրականացրել է ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը: Այս ընթացքում 1961 և 1986 թվականներին լույս է տեսել նաև Չարենցին նվիրված հիշողությունների երկու գիրք, որոնցում ևս ամբարված է բավականին հարուստ նյութ և որոնց վկայություններով ճշտվել ու լրացվել են շատ էական մանրամասներ:

Այսօր Չարենցի ստեղծագործության ուսումնասիրությամբ հետևողական քայլեր է անում նաև գրականագետների նոր սերունդը: Ահա այսպես, սերնդից սերունդ Չարենցն ուղեկցում է իր ժողովրդին և նրա առջև շարունակում բացել իր անսպառ գանձերը:

Այսքանով հանդերձ, Չարենցի կյանքի և ստեղծագործության շատ ու շատ էջեր դեռևս կարոտ են նոր լրացումների, ընթերցումների, մեկնաբանությունների, ճշգրտումների: Դա հատկապես անհետաձգելի անհրաժեշտություն է մեր օրերում, երբ հնարավորություն է ընձեռված առանց համահարթեցումների ու կախման կետերի, առանց սուր անկյունների շրջանցումների ու հանցավոր լռության խոսելու Չարենցի ժառանգության փակ ու անհայտ էջերի մասին:

Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ) պահվող Չարենցի ֆոնդի (ՉՖ) ուսում-

Հասիրությունը հնարավորություն է տալիս շրջանառության մեջ դնելու նրա կյանքի ու ստեղծագործության տարբեր տարիների հետ կապված գեղարվեստական ու փաստական բովանդակին հարուստ նյութ՝ այդ թվում պոեմներ, բանաստեղծություններ, օրագրային գրառումներ, աշխատանքային նշումներ, նամակներ, մակագրություններ, ընծայագրեր և այլն:

Չարենցի վիթխարի ու բացառիկ դերը հայ գրականության պատմության մեջ օր առաջ պահանջում է ամբողջացնել նրա ժառանգությունը, լրացնել նրա կյանքի էջերը: Այդ հպատակին են ծառայում հան հնարապետության տարբեր դիվանատներում պահվող նյութերը, որոնք ևս հարուստ տրվյալներ են պարունակում բանաստեղծի մասին:

Այս գրքի համար առաջաբանի կամ ուղեցույցի դեր ունեցող «Չարենցը 1930-ական թթ. գրական կյանքի հորձանուտում» ուսումնասիրությունը գերազանցապես գրվել է մամուլի ընձեռած նյութի տվյալներով, ինչը ևս ի մի բերելու և հաջորդական ընթացքի մեջ բացահայտելու անհրաժեշտություն ունի: Դա հատկապես կարևոր է այն նկատառումով, որ, ի տարբերություն 1910–1920-ական թթ., Չարենցի կյանքի և գործունեության 30-ական թթ. ընդգրկող շրջանը համեմատաբար քիչ է ուսումնասիրված:

Հաշվի առնելով ուսումնասիրվող և հրապարակվող անտիպ նյութերի բնույթը՝ հարմար համարեցինք դրանք խմբավորել առանձին հարցադրումների շուրջ: Այդպես ավելի հստակ ուղեգծեր են բացվում դեպի Չարենցի աշխարհը: Բարդ ու հարուստ մի աշխարհ, որ շատ ու շատ դեպքերում փոխում կամ լրացնում է նախկինում արմատավորված պատկերացումները և սերունդներին ներկայանում իր անբասիր արժեքներով ու այդ արժեքներն ստեղծողի հերոսական և ողբերգական նկարագրով:

Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

9 նոյեմբերի, 1988 թ.

նության հիմնական տենդենցները» նյութով բանախոսում է Չարենցը՝ մտքերի փոխանակությունից առաջ հարկ համարելով անդրադառնալ «էպիքական լուսաբացին»։ Բայց գրքի հանդեպ եղած այս ուշադրությունը, բարձր գնահատականը և ներգործման ուժը հակառակ խմբակցության, այսինքն՝ Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի (այսուհետև՝ ՀՊԳԱ) նախկին անդամների ու նրանց հարող նոր համալրումի սրտով չէր։ Ամիսներ շարունակ նյութվում էր հակահարվածը՝ գաղափարապես նախապատրաստելով վերակառուցման ու շրջադարձի այն մթնոլորտը, որը, աստիճանաբար լարվելով, պիտի հասներ արյունոտ վերջաբանի։ Դեպի 1937 թ. տանող ոգով Չարենցի գիրքը բոլոր առումներով քննադատում է այն տարիներին քննադատի համարում ունեցող, ՀՊԳԱ-ի ղեկավարության ցուցումներն իրագործող Հ. Մկրտչյանը (Քսպե)։ Ահա այս քննադատը ամենաբացասական արտահայտություններով է որակում գիրքը, ի վերջո, այն համարելով գաղափարական սայթաքումների, ստեղծագործական նահանջի և պոեզիայի զարգացման տրամագծորեն սխալ ճանապարհի արտահայտություն (տես՝ ՆՈՒ, 1932, № 2)։ Նույն մտայնությամբ «Խորհրդային գրականությունը զարգացման նոր էտապում» հոդվածի մեջ նա գրում է.

Ստեղծագործական ճարտեռում ոչ լեհինյան դիրքավորման օրինակ կարող է ծառայել «կենդանի մարդու» իդեալիստական լոզունգի կենսագործումը մեր պոեզիայի մեջ։ Ավելին, դա համարվել է որոշ ստեղծագործությունների մեջ («էպիկական լուսաբաց») որպես մեր գրականության շրջադարձի նախապայմաններից մեկը։ Այդ կենդանի մարդու իդեալիստական լոզունգը իր արտահայտությունն է գտել նաև Վ. Նորենցի «Երկրորդ գրքում», Ս.Տարոնցու ստեղծագործությունների մեջ։ Ելակետը եղել է ոչ թե դասակարգային պայքարը, այլ աբստրակտ ինդիվիդուումի հոգեբանությամբ ողջ հասարակական կյանքը պայմանավորելու փորձը (Գրական թերթ, այսուհետև՝ ԳԹ, 1932, №10, 30 մայիսի)։

Ահա այս պայմաններում «ճշգրտվում» էին գրականության ստեղծագործական զարգացման ուղիները, մի կողմի վրա դնելով մերկապարանոց գաղափարայնությունը, խոս-

բմբռնված դասակարգային պայքարի սրումը, սոցիալիստական առօրյայի մակերեսային պատկերումը, մյուս կողմի վրա՝ բուն ազգային գրականությունը, իր լուրջ ու ծանրակշիռ պահանջներով, ինչը որ զոհ գնաց 1937-ի արյունոտ սպանդին։

Ուրեմն՝ երկրում դրված էր վերակառուցման արմատական պահանջ, որը տնտեսության մեջ ընթանում էր ինդուստրացման և կոլեկտիվացման ծրագրով, իսկ գրական-մշակութային կյանքում՝ առանձին խմբակցությունների միավորմամբ։ Համկ(բ)կ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի որոշումը հենց այսպես էլ ձևակերպված էր. «Գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին», ընդորում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերակառուցման առաջադրանքը կար ավելի վաղ։ Այսպես, «ճգնաժամ է ապրում արդյոք մեր պոեզիան» հոդվածում Ընձակ Վահանյանը, առարկելով Գ. Վանանդեցու ճգնաժամային մտորումներին, գրում էր.

Ներկա շրջանում մեր, ինչպես գրականությունն առհասարակ, այնպես էլ պոեզիան առանձնապես, հիրավի ապրում է որոշ դժվարություն, որը հատուկ չէ միայն վերակառուցման շրջանին։ Սակայն որը վերակառուցման շրջանում էլ ավելի է խորանում, որովհետև նրա առաջ դրվում են էլ ավելի բարդ ու բազմակողմանի պրոբլեմներ (ՆՈՒ, 1930, № 6—7, էջ 120)։

Նույն ոգով ՀՊԳԱ վարչության բանաձևում ասվում է.

Պրոլետգրականությունը Հայաստանում, չնայած ճգնաժամներին, իր ներկա դրությամբ ու զարգացման տեմպերով ետ է մնում վերակառուցման շրջանի պահանջներից *(Խորհրդային Հայաստան, այսուհետև՝ ԽՀ, 1930, №154)։*

Նույն ՀՊԳԱ քարտուղարությունը 1930-ին ընդունում է «Պրոլետգրականության զարգացման համար» վերնագրով մեկ այլ բանաձև՝ ընդունված Ռուսաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի՝ ՌԱՊՊ-ի ստեղծագործական բանավեճի առթիվ, որի առաջին կետում ասված է.

Մեր երկրի սոցիալիստական ինդուստրալիզացիայի, գյուղի հասարակական հարաբերությունների արմատական վերակառուցման, կուլտուրական հեղափոխության էլ ավելի

ծավալման և խորացման միջոցով... կապիտալիզմի մնացորդների դեմ բոլոր ֆրոնտներում ծավալվող ճարձակումը պահանջում է իդեոլոգիական ֆրոնտում ևս համապատասխան շրջադարձ կատարել (ԽՀ,1930, № 215, 13 սեպտեմբերի)։

Գրականության հարցերում ՌԱՊՊ-ի դիրքորոշումը շատ կոպիտ էր ու կտրուկ։ Այդ քննադատությունը մեծ մասամբ ծավալվում էր խմբակայնության դիրքերից և բավական է, որ գրողը ստորակետը այնպես չդներ, ինչպես նրանք էին պատկերացնում, իսկույն հայտարարվում էր դասակարգային թշնամի, ապա մի քանի տարի անց՝ ժողովրդի թշնամի։ Իսկ ՌԱՊՊ-ի դիրքորոշումը օրինակ էր ՀՊԳԱ-ի համար։ Այդ կոզմնորոշմամբ նրանք կոպիտ պայքար են ծավալում գրողների և քննադատների դեմ։ Դրա վկայություններից են Ա.Բզնունու «Նացիոնալ օպորտունիզմի և փտած լիբերալիզմի դեմ» (ԽՀ, 1932, № 8, 9 հունվարի) և Գ. Անդրեասյանի «Անհրաժեշտ է շեշտակի ու անվրեպ կրակ դաշնակցության դեմ» (ԽՀ, 1932, № 11, 12 հունվարի) հոդվածները։ Առաջինում սմենովեխովականության՝ այսինքն ազգայնականության մեջ մեղադրվում է Ա. Կարինյանը, իսկ երկրորդն ուղղված էր Վ. Թոթովենցի դեմ՝ քիրախ ունենալով նրա «Հայ ազգի «փրկիչ» դաշնակները» (Մոսկվա, 1931) գրքույկը։ Ճիշտ չհասկանալով Թոթովենցին, հոդվածի հեղինակը նրան մեղադրում է մի շարք «չափազանց կոպիտ սխալների» մեջ։

Ահա այս պայմաններում էլ Համկ(բ)կ Կենտկոմի նշված որոշմամբ խնդիր դրվեց վերակառուցելու գրական կազմակերպությունների աշխատանքները։ Այդ նպատակով նույն թվականին պիտի հրավիրվեին համագումարներ, որոնք, մի քանի անգամ հետաձգվելով, գումարվում են 1934-ին։ Այսպես, Հայաստանի գրողների համագումարը նախապես հրավիրվել է 1932-ի հունվարի 25-ին, ապա՝ 1933-ի հունիսի 1-ին, 1934-ի մայիսի սկզբներին, իսկ ԽՍՀՄ գրողների համագումարը՝ 1932-ի հուլիսի սկզբին, այնուհետև՝ 1933-ի հունիսի 20-ին, 1934-ի մայիսին։ Այս հետաձգումները պատճառաբանված էին համագումարին ըստ ամենայնի լրջորեն նախապատրաստվելու անհրաժեշտությամբ։ ԽՍՀՄ գրողների համագումարի կազմկոմիտեի նախագահը Գորկին էր։ Հայաս-

տանում այդ աշխատանքը նախապես ղեկավարում էր Ե. Չուբարը։ Քարտուղարի պարտականությունները կատարում էր Ն. Զարյանը։

Մինչ գրական կազմակերպությունը պատրաստվում էր համապումարի՝ վերակառուցման այդ օրերի աղմուկ-աղաղակի պայմաններում Չարենցը ծավալել էր ստեղծագործական լուրջ գործունեություն, որն ընդգրկում էր գրահրատարակչական բնագավառն ու գրական կուլտուրան և, որ ամենակարևորն է, այդ օրերի ամեն ինչ ապազգայնացնող գաղափարախոսության պայմաններում նա ամեն կերպ աշխատում էր պահպանել խոսքի ու արվեստի ազգային նկարագիրն ու պատկանելությունը։ Փաստերի հերթականությունն հուշում է։ 1930 թ. հունիսի 17-ին գրողների տանը Չարենցը դասախոսում է գրքի կուլտուրայի մասին (հաղորդումը տես՝ Խ2, 1930, № 188, 13 օգոստոսի)։ Խմբակային կոպիտ պայքարի պայմաններում խոսել գրքի կուլտուրայի մասին՝ նշանակում է նոր երանգ հաղորդել ընդհանուր, բայց մեծ մասի կողմից չգիտակցվող գործին։ Ասվածի ծանրակշիռ արտահայտությունը դառնում է 1932-ին հրատարակված «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգիրքը (ընդհանուր ծավալով 674 էջ), որը հիմնականում խմբագրել, գլուխ էր բերել Չարենցը, գործընկերներից ունենալով Ա. Բակունցին և Ե. Չուբարին։ Գրքի գրականության բաժնում նյութեր ունեին Շիրվանզադեն, Ա. Իսահակյանը, Ա. Բակունցը, Գ. Մահարին, Մ. Արմենը, Ս. Զորյանը, Գ. Սարյանը, Վ. Նորենցը։ Չարենցը տպագրել էր «Գովք...»-ը։ Չետեղված էր նաև Հ. Սուրխաթյանի «Խորհրդային Հայաստանի գրականությունը» հոդվածը, որի մեջ հանգամանալի վերլուծության էր ենթարկված մեկ տասնամյակից քիչ ավելի պատմություն ունեցող խորհրդային հայ գրականության զարգացման ընթացքը իր հիմնական անուններով և ուղղություններով։ Սուրխաթյանը հավասարապես բարձր է գնահատում և՛ Չարենցի «էպիքական լուսաբացը», և՛ Չարյանի «Ռուշանի քարափը»՝ գտնելով, որ Չարենցը միտում է «պարզության մեջ հայտնաբերելու խորություն, նյութը կենդանացնելու գեղարվեստական հատակություն», իսկ Զարյանը «մի խոշոր քո՛չ է կատա՛ր դեպի

գրական ստեղծագործության դիրքերը» (էջեր 149, 159)։ Տարեգիրքը հարուստ նյութ է պարունակում նաև արվեստի այլ ճյուղերի, ինչպես նաև գիտության ու տնտեսության վերաբերյալ։

Գրքի բարձր կուլտուրայի արտահայտություններ են նաև Չարենցի «Երկեր» (1932) և «Դիրք ճանապարհի» (1933-1934) ժողովածուները, ինչպես նաև նրա անմիջական մասնակցությամբ կամ խմբագրությամբ այս տարիներին լույս տեսած Սունդուկյանի, Թումանյանի, Մեծարենցի հատորները։

Չարենցի «Երկերը» լույս տեսավ ի նշանավորումն բանաստեղծի 20-ամյա գրական վաստակի, մի հոբելյան, որը նշելու համար գրողների միության 1932 թ. դեկտեմբերի 4-ի կազմկոմիտեի նիստում, որին նախագահում էր Շիրվանզադեն, ընտրվում է հատուկ հոբելյանական հանձնաժողով՝ Բակունց, Մահարի, Արմեն, Ալազան, Դաբաղյան։ Սակայն հոբելյանը չի նշվում։ Դառնացած ու նեղացած այդ փաստից՝ գրողների միության կազմկոմիտեին և «Գրական թերթի» խմբագրությանը 1933 թ. ապրիլի 28-ին հղած «Բաց նամակում» Չարենցը գրում է.

Վերջում թույլ տվեք երկու խոսք ասել... Իմ գրական գործունեության 20-ամյակը նշելու մասին... Գիտե՞ք ինչ, սիրելի ընկերներ. եկե՛ք չնշենք այդ «հոբելյանը»։ Որովհետև, առաջինը, ներկայումս մենք բոլորս ավելի մեծ և կարևոր գործերով ենք զբաղված, քան այս կամ այն գրողի «հոբելյանն» է։— Երկրորդ՝ ինչո՞ւ անպայման նշել գրողի գործունեության 20-ամյակը և ոչ, ասենք, 30-ամյակը, կամ 40-ամյակը։ Բայց եթե ճիշտը կուզեք, այս երկու արգումենտներն էլ, ինչպես ասում են, «հե՛չ»։ Այս երկու արգումենտներն էլ ես բերեցի հենց այնպես, խաղամավարության համար։ Իսկ իմ իսկական արգումենտացիան հետևյալն է։—

Յուրաքանչյուր «հոբելյան» ոչ այլ ինչ է, եթե ոչ հարգանքի և վստահության արտահայտություն դեպի տվյալ անձնավորության ո՛չ միայն անցյալ վաստակները, այլև ներկա և ապագա։ Ուրեմն, այս ամբողջից հետո, էլ ավելորդ չէ՞ խոսել անգամ այդ մասին։ Ավելի լավ չէ՞ գրական ղեկավարություն ստանձնած ընկերների կողմից մի «փոքր» ավե-

լի զգույշ, ավելի պատասխանատու, ավելի հարգալից վերաբերմունք դեպի խորհրդային գրողը,— ահա մի «մեծ» «հոբելյան»՝ առանց այդ վերաբերմունքի *(Տրկերի ժողովածու, 6 հատորով, հ. 6, 1967, էջ 243։ Այսուհետև կնշվի միայն այս հրատարակությունից կատարվող հաջորդ հղումների համարն ու էջը)։*

Վերակառուցման այս տասնամյակում սա դեռ Չարենցին բաժին ընկած դառնությունների ու հուսալքումների ակիզբն է, որ չանում էր ուղղել, երևի թե կանխելու հետագա ավելի ծանր ու անհեռանկար վիճակը։ Համենայն դեպս, կյանքն ու գրական գործը դեռևս շարունակվում էին։

1931 թ. մարտին Չարենցն ընտրվում է ՀՊԳԱ-ի, ապա Անդրկովկասի պրոլետարական գրողների ասոցիացիայի՝ ՉԱՊՊ-ի տնորընտիր վարչությունների կազմում, ելույթներ ունենում գրական հավաքույթներում, ողջույնի խոսք ասում Դ. Դեմիրճյանի գրական գործունեության 35-ամյակին նվիրված հանդիսավոր երեկոյին։ 1932-ին ընտրվում է գրողների միության կազմակերպիչ հանձնաժողովի կազմում։ Նույն թվականի մայիսի 14-ին ելույթ է ունենում Հանրապետության գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման խնդիրներին նվիրված գրողների և արվեստագետների ընդհանուր ժողովում։ Գրական թանգարանը Մ. Սարյանից գնում է Չարենցի հանրահայտ դիմանկարը, որը բանաստեղծը դիտում է որպես իր հանդեպ բարի վերաբերմունքի արտահայտություն։ 1932-ին Չարենցն ընտրվում է նաև Հոկտեմբերյան հեղափոխության 15-ամյակի առթիվ հայտարարված գրական մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ։ 1932 թ. նոյեմբերի 7-ին «Գրական թերթում» (№ 23) տպագրվում է Ա. Սարգսյանի և Վ. Նորենցի «Հոկտեմբերը և մեր գրականությունը» հոդվածը, որի մեջ Չարենցի ստեղծագործությունը ընդհանուր առմամբ գնահատված է դրական։ Նույն համարում տպագրվում է նաև Ջեք-օճառ գործարանի ջանվոր Խորեն Ամիրխանյանի նամակը՝ ուղղված Ն. Զարյանին, Ալազանին և Չարենցին, որի մեջ նամակագիրը դժգոհություն է հայտնում, թե նշված գրողները չեն գնում իրենց հետ հանդիպելու։ Մասնավորապես Չարենցի առիթով ասված է.

Ընկ. Եղիշե Չարենց, ուսանողներից լսում եմ Ձեր ստեղծագործություններից, մանավանդ «Ամբոխներ խելագարվածը» շատ հիանալի բան է, Դուք ևս շատ բանկ-բանկ եք երեում, գիտեմ լույս է տեսել Ձեր երկրի ժողովածուն, բայց գիրքը բանկ է և մատչելի չէ բանվորներին: Ցանկալի կլիներ, որ դուք անձամբ կապ պահպանեիք մեզ հետ:

Դրողներին եռանդուն ստեղծագործական աշխատանքի մեջ ներգրավելու, ինչպես նաև ժողովրդի հետ գրականության կապերն ուժեղացնելու նպատակով դեռևս 1932 թ. սկզբին Հկ(բ)կ Կենտկոմը հատուկ որոշում է կայացնում, որով Չարենցը, Ալազանը, Վշտունին, Զորյանը, Զարյանը, Դեմիրճյանը, Արմենը, Սարյանը, Բակունցը, Թոթովենցը, Արապին, Մահարին, Նորենցը մեկ տարով ազատվում են զբաղեցրած պաշտոններից, նյութապես ապահովվում՝ որպեսզի նվիրվեն գրական գործի: Չարենցը բողոքում է այս որոշման դեմ և նույն թվականի փետրվարի 17-ին Հկ(բ)կ Կենտկոմի կուլտպրոպ բաժնի հասցեով այսպիսի մի գրություն ուղարկում.

...եթե ինձ Պետհրատից ազատելու միակ պատճառը ինձ ստեղծագործական ճնարավորություն տալն է — ապա Պետհրատից ազատվելը ինձ չի տալիս այդ ճնարավորությունը նյութական տեսակետից, և, ընդհակառակը, Պետհրատի աշխատանքը ինձ չի զրկում այդ ճնարավորությունից ժամանակի տեսակետից՝ եթե ես ունենամ բացի Պետհրատի ռոճիկից այլ մշտական ճասույթ:

Բացի այս՝ ես ինձ չեմ պատկերացնում, թե ինչպես կարելի է միանգամայն կտրվել պրակտիկ աշխատանքից և զբաղվել ստեղծագործությամբ: Պետհրատի աշխատանքը միակ պրակտիկ ասպարեզն է, որին կապված եմ ես,— ինձ ճամար մի չափազանց ճետաքրքիր ասպարեզ, որի մեջ կատարած իմ աշխատանքը, կարծում եմ, վնասակար չէ ոչ ինձ, ոչ էլ Պետհրատի ճամար:

Ի նկատի ունենալով այս ամենը՝ խնդրում եմ ինձ թողնել Պետհրատում աշխատելու, եթե, իհարկե, Պետհրատից ինձ ազատելու ճամար, բացի վերոնիշյալ նկատառումից, չկա այլ նկատառում *(VI, էջ 462)*:

Իսկ այդ ընթացքում Հայաստանի գրական կազմակերպու-

թյունն, իրոք, վերակառուցվում էր։ 1932 թ. հունվարին ընտրվում է ՀՊԳԱ քարտուղարության նոր կազմ։ պատասխանատու քարտուղար՝ Ն. Դաբաղյան, քարտուղարներ՝ Հ. Մկրտչյան և Ա. Ոսկերչյան։ ՀՊԳԱ-ի օրգան «Գրական դիրքերում» ամսագրի խմբագիր է հաստատվում Ն. Դաբաղյանը։ Ասոցիացիան իր դիրքերն ամրապնդում է նաև Լենինականում, ուր համապատասխան մասնաճյուղ գործում էր 1928-ից։ Ընտրվում է նաև Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի քարտուղարություն. պատասխանատու քարտուղար Հ. Մկրտչյան, քարտուղարներ՝ Ա. Հախումյան, Խ. Սարգսյան։ Հ. Մկրտչյանը դառնում է նորաստեղծ «Գրական թերթի» (առաջին համարը լույս է տեսել 1932 թ. փետրվարի 23-ին) հիմնադիր խմբագիրը, մայիսից նրան փոխարինում է Ե. Չուբարը, 1933-ի փետրվարից թերթը խմբագրում է Ն. Դաբաղյանը, դեկտեմբերից՝ Ալազանը։ Թերթը տասնօրյա պարբերականությամբ նախապես եղել է Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիայի, ապա նույն թվականի մայիսի 30-ից՝ Հայաստանի խորհրդային գրողների, երաժիշտների, կերպարվեստագետների միությունների, այնուհետև՝ 1933 թ. հունիսի 15-ից՝ գրողների միության կազմկոմիտեի և վերջապես 1934 թ. համագումարից հետո՝ Հայաստանի խորհրդային գրողների միության օրգանը։ Արվեստի այլ. բնագավառներով զբաղվում է 1932 թ. հուլիսից լույս տեսնող «Խորհրդային արվեստ» ամսագիրը, որի խմբագիր է հաստատվում Ա. Վշտունին։

«Գրական թերթի» հրատարակությունը հանրապետության մշակութային կյանքում կարևորագույն իրադարձություն էր։ Առաջին համարում թերթն իր մարտական խնդիրներն է համարում.

Կազմակերպել ու ղեկավարել ինչպես պրոլետարական, նույնպես ողջ խորհրդային գրականության տեսական-ճանաչողական ստեղծագործական աշխատանքը, պայքարել հաճուն պրոլետգրականության հեգեմոնիայի, գլխավորել ուղեկցային գրականության դիֆերենցիացիան, մերկացնելով այդ ուղեկցայնության ստեղծագործությունների մեջ հրապարակ եկող բուրժուա-կուլակային ոեակցիոն տենդենցնե-

րը, նպաստել դաշնակցային գրականության (այսինքն՝ ֆեդերացիային՝ Դ. Գ.) գրավելու ճառագնր դիրքեր:

Իրոք որ մարտական սկիզբ է և պատահական չէ, որ թերթի երկրորդ համարում արդեն տպագրվում է Ն. Զարյանի «Բաց նամակը»՝ ուղղված Չարենցի դեմ, ուր այդ օրերի վերակառուցման դիրքերից նա, այսպես ասած, դաս է տալիս իր մեծ ժամանակակցին՝ նրան մեղադրելով ժամանակի խընդիրները չհասկանալու և դրանց գեղարվեստական մարմնավորում չտալու մեջ։ «Էպիքական լուսաբացը» բնութագրելով որպես «նահանջի մի ուժգին ժեստ», նա այնուհետև ասում է. «Անցել է երկու տարի, դու ոչինչ չես տվել։ Ինչո՞ւ։ Արդյոք դու ընդունակ չե՞ս ըմբռնելու և ապրելու վերակառուցման շրջանի հերոսական էպոխան»։ Բացահայտ չարամտության այս նույն դիրքերից պայքարը ծավալվում է նաև Չարենցի համախոհների դեմ։ Արես ստորագրությամբ թերթի առաջին և երկրորդ համարներում տպագրվում է «Ուղեկցային և դաշնակցային գրականության շուրջ» հոդվածը՝ ուղղված Մահարու դեմ.

Մահարին գնում է դեպի բուրժուական անկումային գրականությունը... օբյեկտիվորեն կանգնում է ժամանակակից բուրժուական գրականության պլատֆորմի վրա:

Հաջորդ հարվածն ուղղվում է Սուրխաբյանի դեմ։ Թևրթի 3-րդ համարում (20 մարտի) «Տրոցկիզմի գրականագիտությունը և նրա արտահայտությունը մեզանում» հաղորդումը տեղ է հատցնում նույն հարցի շուրջ վանանդեցու զեկուցման դրույթները, ըստ որի.

Տրոցկիզմի գրականագիտության կոնցեպցիայի «ճայկական» առանձնապես Սուրխաբյանը, որի վերջին գրքերը (1929, 1931 թթ. լույս տեսած) տրոցկիզմի ամենացայտուն վարիանտներն են մեզանում գրականության և կուլտուրայի ճարցերում:

...Սուրխաբյանի մոտ մեր պրոլետարական գրականության ճանաչումը ձևական բնույթ է կրում:

Այսպես հայտնվում է այն ամենը, ինչը որ ազգային բնույթ ուներ։ Ալազանը չի խնայում անգամ հեռուներում ապրող Ա.

Ջոպանյանին։ Եվ փոխանակ ուրախանալու, որ Ռումինիայի թագավոր և նախարարապետ, միաժամանակ հայագետ, Յորգան Ջոպանյանին պարգևատրել է ռումինական «Աստղի» շքանշանով և շնորհել «Հրամանատարի» տիտղոս, նա այսպիսի տողեր է գրում իր հայրենակցի դեմ.

Կենչի ժամը, երբ ֆրանսիական պրոլետարիատը արգահատությամբ կճատուցի ձեզ ձեր շանճացի արյան գինը։ Եվ այդ ժամը հեռու չէ (ԳԲ, 1932, № 5, 10 ապրիլի)։

Հետո թերթն ուշացումով ներողություն է խնդրում Մահարուց, որ «ընկ. Արեսի հոդվածում Գուրգեն Մահարուն դասակարգային թշնամու ազենտ համարելը կոպիտ սխալ է», բայց և այս կարգի քավություններն առանձին նշանակություն ձեռք չեն բերում։ Դրա փոխարեն ավելի է սրվում առճակատումը, որի վկայություններից է նաև նույն Ալազանի «Հայ ֆաշիստների գրական անդաստանում» (1932) գրքույկը՝ գրված արտասահմանյան ուղևորության խառնիփնթոր տպավորություններով։

Գալիս է 1933 թվականը։ Երևանում, Աբովյան փողոցով զրնգալով սկսում է վեր ու վար անել առաջին տրամվայը։ Չարենցն այսպիսի բաներ սիրում էր, բայց այս անգամ լուռ է մնում։ Լավ թե վատ՝ կյանքը շարունակվում էր։ Շարունակվում էին նաև գրական հանդիպումներն ու ելույթները։ Հունվարի 30-ին գրողների տանը ընդարձակ զեկուցումով Չարենցն իր մասնակցությունն է բերում մանկական գրականության հարցերին նվիրված խորհրդակցությանը, մարտին ընտրվում է գրողների միության կազմկոմիտեի նախագահության կազմում։ Գրական գործունեության մոռացված 20-ամյակը դեռևս հիշողներ են լինում. հուշերի, տպավորությունների կարգով Մահարին տպագրում է «Չարենցի մասին» նյութը՝ դրան կցելով այսպիսի բացատրություն՝ «Հատվածներ անավարտ սևագրություններից, նրա գրական գործունեության 20-ամյակի առթիվ» (տես՝ ԳԲ, № 3, 12 փետրվարի)։ Նախկին նոյեմբերականների գրական սկզբունքները պաշտպանելու նպատակով ասպարեզ է նետվում նաև Մ. Արմենը։ Արդյունքը լինում է «Չարենցի և հարակից խնդիր-

ների մասին» հոդվածը, որի մեջ նա պաշտպանում է ազգային հատկանիշների խտացման տեսությունը՝ դա ուղղելով պրոլետգրողների ապազգային տեսակետների դեմ։ Ըստ նրա.

Ջարենցի ոտին շարունակ եղել է ազգային հատկանիշների կոնսոլիդացիայի ոտին իր երկերում, որը և մինակ ճանապարհն է դեպի պրոլետարական համամարդկային կուլտուրան։... Ջարենցի մեծագույն արժեքը և մեծագույն ծառայությունը մեր կուլտուրային այն է, որ նա հանդիսանում է մեր ազգային կուլտուրայի ստեղծման առաջավոր հարվածայինը... (ԴՓ, 1933, № 7, 21 ապրիլի)։

Այս խոսքերն ասվում են «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» դրույթի լայն տարածման ժամանակներում, ուստի և հեղինակն անմիջապես հնթարկվում է խիստ քննադատության, մանավանդ որ ասում էր. «Սխալ է... Նաիրի Զարյանը, որ դեռ կանգնած է անազգային ձևով պրոլետարական դրականության դիրքերի վրա»։ Այս ելույթի դեմ թերթի միևնույն համարում միաժամանակ տպագրվում է երեք հոդված։ Մեկը խմբագրական է («Պայքար երկու ճակատով»), ուր, վկայակոչելով ԽՍՀՄ գրողների երկրորդ ընդլայնված պլենումը, պլենումի բանաձևը, ասվում է, որ «Հայաստանի գրական կազմակերպության մեջ գոյություն ունեն բուրժուա-նացիոնալիստական կարգերի ռևանշիստական-գրուպայական տրամադրություններ»։ «Ակտիվացած նացիոնալ-դեմոկրատական» այս տրամադրություններն է, ահա, որ իր «Ջախջախել խմբակայնությունը և նացիոնալ-դեմոկրատական տենդենցները» հոդվածում շատ վտանգավոր դիրքերից քննադատում է Ե. Ջուբարը.

Մ. Արմենի հոդվածը ճշմարիտ է նրանով, որ նա փորձում է ձևակերպել որոշ գրուպայի սկզբունքային տենդենցները. Արմենի ստորագրությամբ լույս տեսնող այս դոկումենտն արտահայտում է նացիոնալ-դեմոկրատիզմի ազդեցության փաստր հեղինակի վրա։

Ջուբարը մի հարցում ճիշտ էր, որ Արմենը հանդես է եկել որոշակի նախասիրություններ պատկանող գրողների անունից, որոնցից տալիս է Ջարենցի, Բակունցի, Մահարու, և այս միտումների շուրջ «հավաքված» «մի շարք ուրիշ»

գրողների անունից։ Բայց և նրա հոդվածի առողջ միջուկը անմիջապես արժեզրկվում է, ազգայինը վերածվում ազգայնականի և ահա պատրաստ է քաղաքական մեղադրանքների շարանը։ Այս տեսակետից առավել վտանգավոր էր Վանանդեցու «լեգենդա ազգային և «միջազգային» ձևի մասին» հոդվածը։

Ինչևէ, Արմենի այս բանավիճային հոդվածը, գրված Չարենցի գրական-հասարակական գործունեության 20-ամյակի առիթով, մի նոր փորձանք է դառնում և՛ Չարենցի, և՛ մյուսների համար։ Իհարկե, ազնիվ էր Արմենը, երբ իր հոդվածին ավեց այսպիսի սկիզբ.

Չարենցի գրական-հասարակական գործունեության հսկ ամյակի առնչությամբ, մեր ճճնադատությունը բնականաբար պետք է հատուկ ուշադրություն դարձներ Չարենցի ստեղծագործության և նրակից այլ խնդիրների վրա։ Սակայն մեր ճճնադատությունը, որ տառապում է հանցավոր ամլությամբ, մինչև այժմ դեռ հրապարակ չի հաշել ոչ մի խնդիր և ոչ մի հարց, կապված այս հսանամյակի հետ։ Կարծեմ թե մեր գրականությունը ունի մի բանի տասնյակ Չարենցներ, որոնցից մեկին,— ի՞նչ կա որ,— կարելի է անտեսել։

Ազնիվ մտահոգություն, բայց և սրված բախումներ, երբ Չարենցին հակակշիռ, արդեն առանց անհարմար զգալու, հակառակ խմբավորումը տալիս է Ն. Չարյանի անունը և նրան ժամանակավոր հաղթանակ ապահովում Չարենցի ոտնահարումի։ Աստիճանաբար վերանում է նաև փոխդիջողությունը։

Ընդգծում պրոլետգրողի «անշեղ» դիրքորոշմամբ «Արեւվաղող լիրիկա» վերնագրով և «Կոլխոզահուլգ իմ երգ» ենթավերնագրով բանաստեղծությամբ բանավեճին է միանում Վշտունին։ Բացահայտորեն ակնարկելով Չարենցի «էպիքական լուսաբաց» ժողովածուի որոշ բանաստեղծություններ՝ կապված ստեղծագործական բարձունքներ նվաճելու ծրագրային առաջադրույթի հետ, Վշտունին գրում է.

Թխել եմ ես իմ որ բարձունքներին հետու,
Որոնց երգն է երգում վճռա մի մարդ.
Բարձունքը մեզ համար մեր պայքարն է եռուն,
Կարծարաճներն ու հանք, գալխոզ ու արա:

...Գրիչս ինձ լինի, բայլևիկյան արվեստ՝
Միշտ անզիջում լինես և անթերի
...Եվ բրիգադիր լինես մեր հանդերին:
Իմ կոլխոզնիկ ընկեր, տրակտորը ինձ գնի,
Տիրիր դու երաժ, շոյիր ու ճանաչիր...
(ԳԹ, № 11, 27 հունիսի)

Վշտունու հետ մեկտեղ հանդես է գալիս նաև Ա. Ոսկերչյանը, թիրախ ունենալով Մահարուն և Սուրխաթյանին: Սուրխաթյանին այն բանի համար, որ «Հոկտեմբեր—Նոյեմբեր» տարեգրքում զետեղված հոդվածում դրվատել է Մահարու «Մանկություն և պատանեկություն»: Եվ դա, ըստ Ոսկերչյանի, այն դեպքում, երբ գրքի հիմնական միտումը «անցյալի իդեալականացումն է», որի հետևանքով այդ անցյալը չի ներկայացվել իր իսկական էությամբ՝ «դասակարգային հակասություններով», ինչն էլ հասցրել է «նացիոնալիստական տրամադրությունների»: Այսքանից հետո, շարունակաբար տպագրված հոդվածի երկրորդ մասում, նա այսպես է ամփոփում միտքը.

Այս բոլորից հետո մի՞թե պարզ չէ Սուրխաթյանի ֆենոդատական մարզաճիճեր նացիոնալ-օպորտունիստական բնույթը: Մի՞թե հայտնի չէ, որ նա fողարկում է «Մանկության ու պատանեկության» անկումային բովանդակությունը, ծածկում ու պաշտպանում նրա նացիոնալիստական տենդենցները, փոխանակ մերկացնելու այն (ԳԹ, 1933, № 12, 13 հուլիսի):

Մթնոլորտը գնալով շիկանում է. «Խորհրդային Հայաստանը» 1933 թ. հուլիսի 9-ին հանդես է գալիս «Գրական ֆրոնտի խնդիրների շուրջը» խմբագրականով, որը արտատպում է նաև «Գրական թերթը» (№ 13, 31 հուլիսի), դրա հետ մեկտեղ խոստանալով իր թերացումները: Արմենի հոդվածում հայտնաբերելով «գրական-քաղաքական կոպիտ սխալներ», շարունակության մեջ ասվում է, որ.

Ընկ. Չարենցը և ընկ. Բակունցը հետագայում սխալ կատարեցին ընդհանուր առմամբ իրենց պաշտպանության տակ առնելով այդ հոդվածն ու պարզ ու մեկին չդատապարտելով նրա պարունակած ակնհայտ կոպիտ սխալները:

Այնուհետև առճակատման կիրքը մասամբ մեղմելու հա-

մար երկկողմանի քննադատության է ենթարկվում խմբակայնությունը և ասվում, որ առ այսօր՝

Առանց լուրջ վերլուծության ենք մնացել մեր գրականության մեջ կշիռ ունեցող այնպիսի երկեր, ինչպես Չարենցի «Էպիֆական լուսաբացը», Ն. Զարյանի «Լուշանի ֆարափը», Ս. Զորյանի «Սպիտակ ֆաղամբ», Գ. Մահարու «Մանկություն և պատանեկությունը»:

«Խորհրդային Հայաստանի» խմբագրականից հետո հանդես է գալիս նաև Ն. Զարյանը և «Կոնկրետ քննադատության զարգացման պրոբլեմը» հոդվածում, կրկնելով կուսակցական թերթի առաջադրած խնդիրների հիմնադրույթները և իր հերթին լրացնելով դրանք, ասում է.

...Բազմաթիվ մաներ բոշյուրներ իրենց ծավալի չափ գրախոսականների են արժանացել լույս տեսնելուց անմիջապես հետո, իսկ այնպիսի մի ծանրակշիռ աշխատություն, ինչպիսին է Չարենցի երկերի ժողովածուն, որ մի տարի է, ինչ լույս է տեսել, միևչև հիմա լռության է մատնված: ... Չի կարելի առաջ մղել գրականությունը՝ լռության մատնելով նրա ամենակարևոր և ամենաբարդ երևույթները *(ՊՀ, 1933, № 12,13 հուլիսի)*:

Այս խառը իրադրության մեջ Չարենցը, բնական է, ձեռքերը ծալած չէր նստել: Տպարանում շարվում էր «Գիրք ճանապարհին» և պայքարը գնում էր հանուն այդ գրքի սկզբունքների: Չարենցը, ինչպես և սկսել էր սպասել, ինչպես նաև հուշում են վկայությունները, պաշտպանել է Արմենի հոդվածի սկզբունքները, որոնք ամրապնդում էին իրենց տարիներ շարունակ սևաժ պայքարի գաղափարական հիմքերը: Ճշմարիտ ազգային արժեքների վրա ամեն կերպ դրվում էր նացիոնալիզմի քայլաքական մեղադրանքը, և դա այն դեպքում, երբ Չարենցը, Բակունցը, Մահարին, Արմենը ոչ թե հիվանդագին նացիոնալիստներ էին, այլ՝ ճշմարիտ հայրենասերներ՝ իրենց ազգային որոշակի ծաղումով, պատկանելությամբ և խնդիրներով: Այս տեսակետից շատ ուշագրավ է Չարենցի աշխատանքային անթվակիր նշումներից մեկը, որն, ամենայն հավանականությամբ, կատարվել է այս օրերին.

Ծրգելով և ընդունելով ազգային արժեքները՝ գրգռում էին հայ ժողովրդի ՊԱՏՐԻՈՏԻԶՄԸ, որը որակվում էր իբրև նացիոնալիզմ:

1) Հայ կուլտուրայի ազգային արժեքների դաստիարակում:

Ուժերի կուտակում:

Ժառանգականությունը չի ընդհատվում, տրադիցիա է դառնում:

2) Գրողների ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄ:

3) Պերիոդիզացիա, որ կատարում է խորհ. գրակ. իր կարճատև ուղու ճվաճումների փորձից:

Չարենցը օղակն է անցյալ կուլտուրայի և նոր կուլտուրայի *Անտիպ և չհավաքված երկեր, էջ էջ 474—475)*:

Սա շատ կարևոր գրառում է՝ կապված թե՛ ընդհանուր հետաքրքրություն հարուցած հարցադրման ճիշտ մեկնաբանման հետ, որով նա հանդես է եկել և թե՛ ժառանգորդական գծի վրա իր տեղը հստակորեն ըստակերացնելու: Անցյալ և նոր կուլտուրանները միավորող այդ օղակն էր, որ ՀԳԴԱ անդամներն ամեն կերպ ջանում էին խզել և դրանով իսկ՝ մաքրել իրենց հարցերը Չարենցի հետ:

1926 թ. քրեական գործով դատվելուց հետո՝ Չարենցը դուրս էր մնացել կուսակցության շարքերից, որի անդամ էր 1921 թվականից: Այդ իսկ պատճառով նա չէր կարող մասնակցել կուսակցական ժողովների, ուր քննվում էին գրականության հարցեր, այդ թվում նաև իր հետ կապված հարցեր: Այդ դրդապատճառից ելնելով՝ 1933 թ. մարտի 25-ին նա ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղարության և գրողների միության կազմկոմիտեի անունով հղում է մի դիմում, որի մեջ իր դժգոհությունն է հայտնում գյուղ գնացած գրող Սիրասի հաշվետվությունից, որը փոխանակ ստեղծագործական հաշվետվություն տալու, ներկայացնում է քաղաքական բնույթի ինչ-որ զեկուցագիր այն մասին, թե «քանի կուլակ են ձերբակալել»: Չարենցը շարունակում է.

...գյուղ գնացող գրողներից մենք պետք է պահանջենք ոչ թե բաղմաթանձ-ադմինիստրատիվ զեկուցում, այլ գրական-ստեղծագործական:... Ի պատասխան իմ այս միանգա-

մայն պարզ, համարյա այբբենական ճարտադրման՝ ես բախտ ունեցա ընկ. Վշտուճուց սկսած մինչև Կազմկոմիտեի նախագահ ընկ. Զուբարից լսել միմիայն դեմագոգիկ մեղադրանք այն մասին, թե իբր ես անարխիզմ եմ քարոզում, որ իբր ես գրողին բաժանում եմ հասարակական գործչից և այլ նման հիմար բաներ:... Ես գտնում եմ, որ ժամանակն է արդեն ցրելու մեր խորհրդային գրողների կազմակերպության միջից այն զզվելի մթնոլորտը, որ մեզ ժառանգություն է մնացել նախկին Ասոցիացիայից, երբ գրողի յուրաքանչյուր ելույթին կպչվում էր բաղաքական յաղլիկ, երբ յուրաքանչյուր աչքաբաց սկսնակ, կամ անորակ գրող, հենվելով իր «հասարակական» բաջագործությունների վրա՝ կարող էր ոչնչացնել խոսկան խորհրդային գրողի, ճողին ճավասարեցնել նրան, վարկաբեկել բաղաքականապես, այսինքն մի զենքով, որով չի կարող օգտվել նրանից շատ ավելի ընդունակ, ոչ թե աճից դրդված, այլ խղճի մտոք հեղափոխական, խորհրդային գրողը...

Ելնելով այս ամենից և գտնելով, որ նման մթնոլորտում ավելորդ է առանսարակ ինձ նման անպաշտպան գրողի համար նույս ունենալ խղճի մտոք մասնակցելու մեր գրական-հասարակական կյանքին... խնդրում եմ այս օրվանից ինձ ազատ արձակել ինչպես Խ. Գ. Մ. Կազմկոմիտեի պրեզիդիումի անդամությունից, այնպես էլ «Նոյեմբեր» ամսագրի կոլեգիայի անդամի պարտականություններից և թողնել սոսկ Խ. Գ. Մ. շարքային անդամ (VI, էջ 464—466):

Չարենցը այլևս չի կարողանում զսպել կուտակված դժգոհության ձայնը և ինչպես տարիներ առաջ, հիմա նույնպես դրական կարևորագույն հարցերի հանդեպ պահանջում է պետական լուրջ մոտեցում: Հակառակ դեպքում սահմանափակ հնարավորություններ տեր մարդկանց գրական «խուժանությունը» օրինականացվում է և դառնում գործունեության ուղղություն: Ահա ստեղծված պայմաններում և անհրաժեշտ միջամտության բնույագրանքով ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը 1933 թ. օգոստոսի 20-ին ընդունում է մի որոշում, որի մեջ ասվում է, որ գրողների միությունում չեն վերացել խմբակային պայքարի միտումները և բացակայում է աշխա

տանքային գործարար մթնոլորտը։ Որոշման մեջ քննադատվում է Ա. Բակունցը, իբր թե «նացիոնալիստական տենդենցներ արտահայտող դիրքեր» գրավելու համար, որի պատճառով որոշվում է. «... խիստ հանդիմանություն անել ընկ. Բակունցին, վերջին նախազգուշացումով և հանել նրան կազմկոմիտեի կազմից»։ Հավասարակշռությունը պահպանելու համար կազմկոմիտեի քարտուղարի պարտականություններից ազատվում է նաև Ն. Զարյանը (տես՝ ԳԲ, 1933, №15, 10 սեպտեմբերի)։

Այս որոշումը օգոստոսի 25-ին քննարկվում է գրողների միության կազմկոմիտեի պլենար նիստում։ Զեկուցում է Զուբարը և ընթացքում հրապարակում Ա. Բակունցի «գրավոր դիմումը»՝ ուղղված կազմկոմիտեին, որով նա «անվերապահորեն է ընդունում կենտկոմի որոշմամբ մատնանշված սխալները»։ Այս քայլը թեև կանխամտածված կերպով արտաքինձևական բնույթ էր կրում, բայց և ժողովը փաստորեն ուղղվում է Զարենցի և յուրայինների դեմ, որոնց կենտկոմի որոշման ճնշմամբ փորձում են իրենց իմացած ձևով «կարգի հրավիրել»։ Ասվածի վկայությունը Զուբարի զեկուցման այս վերջաբանն է.

Զարենցի, Մկրտիչ Արմենի և Մահարու գրավոր դիմումը Կազմկոմիտեին՝ խմբակային պայմարը դադարեցնելու և կենտկոմի որոշումը ընդունելու մասին կրում է ձևական բնույթ... Գործնականում խմբակային պայմարը դադարեցնելու համար ընկ. Զարենցի կողմից երաշխիքներից մեկը կլիներ այն, եթե նա այս ժողովում ինքնաքննադատական ելույթ ունենար, բայց նա ոչ միայն չեկավ ժողովի, այլև գրավոր դիմում ներկայացրեց, խնդրելով իրեն ազատել Կազմկոմիտեի անդամությունից, դառնով իսկ ձևական հիմք ստեղծելու... գործնականում իրեն ազատ պահելու խմբակայնության լիկվիդացիայի համար մղվող պայմարից հետո մնալու համար *(ԳԲ, 1933, №15, 10 սեպտեմբերի)*։

Զարենցի դեմ թանձրացող այս մթնոլորտում ամեն առիթ օգտագործվում է նրան վարկաբեկելու համար։ «Գրական թերթում» (1933, № 17, 20 հոկտեմբերի) տպագրվում են Ս. Զորյանի և Ա. Վշտունու նամակները Զարենցի կազմած

Շ-րդ դասարանի դասագրքի դեմ, որի մեջ սպրդել էին ինչ-ինչ վրիպակներ։ 1933 թ. նոյեմբերի 14-ին ՀԿ(բ)Կ կենտկոմն ընդունում է մի նոր որոշում՝ այս անգամ ամբողջությամբ ուղղված Չարենցի և նրա գրական համախոհների դեմ։ Այդ որոշմամբ արգելվեց Չարենցի «Դիրք ճանապարհին» առաջին տարրերակը և որակվեց որպես

Հակահեղափոխական-տրոցկիստական զրպարտություն կուսակցության և նրա առաջնորդի դեմ, որը բունդ իդեալիստական մենաբանում է տալիս Հայաստանի պատմությանը, ակնհայտորեն արտահայտելով նայկական մարտնչող նացիոնալիզմը (ԽՀ, 1933, №267, 18 նոյեմբերի)։

Այս որոշմամբ, որը հրապարակվեց «Հայպետհրատի արտադրանքի իդեոլոգիական անկայունության մասին» վերնագրով, Չարենցը հեռացվում է պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչի պաշտոնից, «գործածությունից հանվում է» Մ. Արմենի «Երևան» գիրքը, որը իբր «քարոզում է տեղական նացիոնալիզմը և կոչ է անում կողմնորոշվել դեպի ֆեոդալական Արևելքը», օգտագործման չի երաշխավորվում նաև հայ գրականության պատմության քրեստոմատիան, որի մեջ, ըստ որոշման, «զետեղված են ծայրահեղ շովինիստական ստեղծագործություններ (Դամառ-Քաթիպա, Րաֆֆի, Շահազիզ և ուրիշներ)»։

Այս պայմաններում Չուբարն ազատվում է գրողների միության կազմկոմիտեի նախագահի պարտականություններից, տեղը զիջելով Դ. Տեր-Սիմոնյանին։ Ընտրվում է նաև քարտուղարության նոր կազմ, որի մեջ մտնում են Ալալյանը, Ս. Մելիքսեթյանը, Ս. Զորյանը, Գ. Մահարին։

Ժամանակի իրադարձությունների մեջ կարևոր դեր են ստանձնում նաև Լևոն Արիսյանը, որը 1933 թ. սեպտեմբերի 15-ին նշանակվում է լուսժողկոմ, իսկ նոյեմբերին՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի կուլտ-պրոպ բաժնի վարիչ և բացասական դեր կատարում Չարենցի ու համախոհների կենսագրության մեջ և Ներսիկ Սահակյանը, լուսավոր մի մարդ, կանգնած Չարենցի, Բակունցի ու մյուսների կողքին, որը անցել էր կուսակցական աշխատողի երկար ճանապարհ, ավարտել Մոսկվայի

ժողովրդական տնտեսության ինստիտուտը, ապա՝ կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտը, 1931-ի դեկտեմբերին նշանակվել ՀԿ(բ)Կ կենտկոմի բաժնի վարիչ, 1932-ից ղեկավարել մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղը, միաժամանակ 1933 թ. նոյեմբերից վարել ՀԽՍՀ լուսժողկոմի պաշտոնը։ Սրանք պատահական անուններ չեն և գործնական մասնակցություն են ունեցել ժամանակի գրական-հասարակական կյանքին։

ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարին նախապատրաստվելու համար տարեվերջին Հայաստան է ժամանում ռուս գրողների մի խումբ և Գորկու անմիջական ցուցումով ըբաղվում հայ գրողների ստեղծագործության ուսումնասիրությամբ։ Վալերի Կիրպոտինին, որն այդ ժամանակ ՀԿ(բ)Կ կենտկոմի կուլտ-պրոպ բաժնի գեղարվեստական գրականության սեկտորի վարիչն էր և ԽՍՀՄ գրողների միության կազմկոմիտեի պատասխանատու քարտուղարը, ամենևին էլ ոչ առանց պատահականության բաժին են ընկնում Չարենցն ու Արմենը, Ֆեդինը ուսումնասիրում է Շիրվանզադեի, Կավբինը՝ Բակունցի, Թոթովենցի, Դեմիրճյանի, Կոլոսովը՝ Ալազանի, Մահարու, Գատովը՝ Նորենցի, Վշտունու ստեղծագործությունը։ Արազու, Զորյանի և Զարյանի ժառանգությամբ ըբաղվում է Աբովը։

1933 թ. դեկտեմբերի 1-ին տեղի է ունենում հայ գրողների ընդհանուր ժողովը, ուր զեկուցում է Կիրպոտինը։ Նա, ինչպես և պետք էր սպասել, քննադատում է Արմենի «Չարենցի և հարակից խնդիրների մասին» հոդվածը, դատապարտում Չարենցի ու Բակունցի դիրքորոշումը և դարձյալ հավասարակշռությունը պահպանելու համար խոսում նաև Վշտունու և Զարյանի ձախլիկության մասին։ Ամեն ինչ ընթանում է խմբակայնության մերկացման ճանապարհով, մի բան, որ Կիրպոտինը շարունակում է նաև հետագա տարիներին և ճակատագրական փակուղու առջև կանգնեցնում հայ գրողներից շատերին։ Կիրպոտինի զեկուցման շուրջ արտահայտվում են Չարենցը, Արմենը, Ալազանը, Ս. Հակոբյանը և քննարկվող հարցի կապակցությամբ հայտնում իրենց նկատառումները։

Ավարտվում է 1933 թվականը։ Գրական հարաբերություն-

ները լարված էին առճակատման աստիճանի։ Համենայն դեպս, կենտկոմը նպատակահարմար է գտնում վերանայել նոյեմբերի 14-ի որոշումը և մի նոր որոշմամբ Չարենցին վերականգնել իր պաշտոնում։ Տարեվերջին Թիֆլիսում ռուսերեն լույս է տեսնում «Դրական Անդրկովկաս» ամսագիրը և «Անդրկովկասի ժողովուրդների պոեզիա» ժողովածուն, որոնցում նյութեր ուներ նաև Չարենցը։

Իսկ հիմնական գործը՝ «Գիրք ճանապարհին», կալանավորված էր, թեև ինչպես հեղինակի, այնպես էլ մի քանիսի ձեռքին կային ազդօրինակները։ Գիրքը փրկելու համար նոյեմբերի վերջին և դեկտեմբերի առաջին օրերին Չարենցն ստիպված էր նամակներ գրել Ստալինին և Մ. Շահինյանին. բախել Բերիայի դռները։

1933 թ. հայ խորհրդային պոեզիայի համար հանրագումարային տարի էր։ Համագումարի նախապատրաստական փուլում մեկը մյուսի ետևից պիտի լույս տեսնեին Չարենցի «Գիրք ճանապարհին», Մահարու «Մրգահասը», Ն. Զարյանի «Հարվածները», Ալազանի «Մաքառումները», Գ. Սարյանի «Երկաթե ոտնաձայները», Տարոնցու «Սերունդների երգը»։ Բոլոր գրքերը լույս են տեսնում, բացի հիմնական գրքից, և Չարենցը երևի թե իրավունք ունի մի պահ գլուխն առնելու ափերի մեջ և խորհելու իր ճակատագրի մասին, հետո, իր իսկ ճակատագրի անդրադարձով, քննելու հայոց պատմության ողիսականը և, որպես երթի մի նոր Մովսես, ելք որոնելու իր ժողովրդի համար, անցյալի դառը դասերով փրկության ուղի նշելու նրան։ Այս գաղափարը բազմաձայն կանչերով ու կոչերով հնչեցնում էր ամբողջ գիրքը՝ իր մեջ զետեղված տասը պոեմներով, «Տաղեր և խորհուրդներ», «Զանազան բանաստեղծություններ և թարգմանություններ» շարքերով։

Այս պայմաններում ակամա հարց է առաջանում. իսկ ի՞նչ էին գրում մյուսները, ինչպե՞ս էին ոմանք դժվարությամբ, ոմանք էլ անհամեմատ հեշտությամբ հարթում իրենց ճանապարհը։ Գրական բանավեճերը, համակրանքներն ու հակակրանքներն իրե՛նց հերթին, քանի որ կարևորն, ի վերջո, ստեղծագործական վաստակն է։ Այդ հայացքով մի ակնարկ նետենք Չարենցի շրջապատին։

Մահարին գրական հաջողությունների մեջ էր. գրիչը բեղուն էր, մամուլը հեղեղված էր նրա ստեղծագործություններով։ Պ. Մակինցյանը, գրախոսելով «Սիրո, խանդի և նիցցայի պարտիզպանների մասին» գիրքը, մասնավորապես «Մանկություն» վիպակի մասին գրում էր.

Մեր պրոլետգրականության մեջ Մահարու Վանը կապրի, ինչպես ենում ապրել է Բաֆֆու Վանը։ Սա ճեղինակի և մեր արդի գրականության ամենախոշոր ներածումներից մեկն է *(ՆՈՒ, 1929, № 4, էջ 237)։*

Գնահատության այս շեշտն էլ նույն օրերին պիտի դառնար հարձակման առիթ։ Ո՞նց թե անցյալ, ո՞նց թե Վան, այդ ի՞նչ կարոտ է կամ սրբագործվող թախիծ։ Վրա է հասնում հարվածը։ Տպագրվում է Հ. Հովհաննիսյանի «Մեշչանիզմի գրական պարտիզպանությունը» Պետհրատի հովանավորությամբ հոդվածը (Գրական դիրքերում, 1929, № 3, այսուհետև՝ ԳԴ)։ Մահարուն կոմունիստական գծից շեղված «մեշչանու մանր բուրժուա» է համարում նաև Գ. Անդրեասյանը «Լուսինը ձախից կամ սովորական սեր» պատմվածքի առիթով գրված հոդվածում (ԳԴ, 1929, № 1)։ Մահարու դեմ, ինչպես տեսանք, հալածանքը շարունակվում էր նաև 1930-ական թթ. առաջին տարիներին։

Շեփո՞ր, թե՞ սրինգ բանավեճի ժամանակ, որ տարբեր ձևերով մղվում էր ամբողջ 1920-ական թթ., Մահարին նախընտրել էր սրինգը, երբեմն միայն կոպիտ ճնշման պայմաններում ձայնը միացնելով շեփորահարներին։ Դժվարին պայքարի մեջ, համենայնդեպս, նա պահպանեց իր ինքնությունը։ Խորհելով Մայակովսկու և Եսենինի մասին, որպես անցնող 20-ական թթ. երկու ձայնափողերի և երգի ճանապարհ բացողների, Մահարին 1930 թ. մայիսին գրում էր. «Նա դարձրեց իր երգը շոգեշարժ, կոկորդը—շչակ»։ Սա Մայակովսկին է։ Եվ. ապա՝

Ես —
Աստղերի լեզուն
Սեհենիից սովորեցի,
Իսկ երկաթի լեզուն՝
Մայակովսկուց:

Եղել եմ երանց դրացի,
Իմ այգում ճասել է
Իմ միրգը
Չեմ եղել երգի մուրացիկ:
(ՆՈՒ, 1931, № 1)

Այսինքն՝ բազմաձայն համերգում ես իմ երգի տերն եմ։ Բայց և որոշ բանաստեղծություններում նկատելի է նրա հակվածությունը դեպի մարտունակ երգը։ Արևելքի երգին, որով վշտունու դիխավորությամբ զբաղված էին իր ժամանակակիցներից ոմանք, նա հակադրում է Արևմուտքի երգը՝ ըստ այդմ վերստին սրելով խոսքի շեշտերը։ Մահարին մի տեսակ բանաձևում է իր անցումը.

Ես
Արևի ու սրճգի պռես
Իչեում եմ աճա անտառից
...Անցճում եմ ճովվերգությանճ
Քաղցրամեղրիկ առուճ
Ու մտճում եմ խաղամ...

Քե՛զ,
Արևմուտք,
Գարգում եմ աճա երգերիս
Գղնձե շեփորը:
(ՆՈՒ, 1930, № 8—9)

Սրնգի անուշ մեղեդու ներքո հասունացող Մահարու երգի այգին կարծեք թարմ շունչ բերող քամիների անհրաժեշտություն է զգում։ Դրվում է «Երգի մասին» բանաստեղծությունը, որի մեջ թաքնված հեգնանքը նաև լրջության հենակետեր ունի.

Դժվար է ճիմա երգելը
Անգամ մի մրջյունի մասին,
Արշավում է աճա երկիրը,
Գոե՞ա ես, վազիր ու ճասիր:

Եվ ինչպես ամեն ինչ մեր կյանքում՝
Սրգելն էլ ունի իր պլաները.
Կատարիր պլանդ փառքով,
Փարի՛ր առջերիդ խոտը:

Կռակի՛ր այնտեղից անբեծ
Ինշամու դիրճերի վրա,
Կրճերիդ ռումբերով ֆանգիր
Ուռարվող բերդերը նրա:

Իսկ ճետո բաղ դառնա երգդ,
Շինարար տուֆ, չուգուն, ցեմենտ... *(ՆՈՒ, 1931, № 5)*,

Նույն այս ոգով, իր ձայնը խեղդելու գնով անգամ, «երկաթե» բանաստեղծության մեջ Մահարին ողջունում է «երկաթե գարունը», ա՛յն գարունը, որ դեռ նոր պիտի սով ու աքսոր բերեր երկրին: «Ահա՛ բացվում է երկաթե գարունը իմ երկրի դաշտերի վրա» (ԽՀ, 1929, № 182, 11 օգոստոսի),— սրանք տողեր են ծնված ոչ թե սրտից, այլ՝ պրոլետգրողների կոմից գրականությունից դուրս մնալու վտանգից: Եվ պատահական չէ, որ այս հարկատվություններով հանդերձ՝ «Մրգահասը» հասուն և ավարտուն գիրք էր, գրված որոշակի գեղագիտական դավանանքով, նպատակադրումով և խնդիրներով: Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ գիրքը խմբագրել էր Զարենցը: Իսկ իր գիրքը առաջին էջին տպագրված «Ջոնով» Մահարին նվիրել էր Զարենցին.

Ա՛ռ ամառային այս ոսկե սինին
Ու բաղ աշուրը փառաճեղ լինի...

Զարենցը վերցրեց Մահարու երգերի ամառային ոսկե սինին և տարավ հարսանիք (այսինքն՝ համագումար), բայց նրա երգերի ուշ աշնան բերքահավաքին և՝ հնձանների լուծյանը այլևս ներկա չէր...

Վերակառուցման թափով ներշնչված՝ Ն. Զարյանը գրում էր արդյունաբերական, կոլեկտիվացման հարցերին նվիրված հույժ գաղափարական և դրանով իսկ անասելի մերկապարանոց երկեր: «Քսենոփոնից մինչև Լենին» պոեմում նա կոթողանապես ասում է, որ հնում, անցյալում ոչինչ չի եղել,

իսկ ահա սոցիալիստական հասարակարգն ստեղծել է նոր գյուղ և բերել տրակտոր։ Այս մտայնությունը ծնունդ տվեց «Հարվածներ» գրքի իրոք որ հարվածային, բայց և գեղարվեստական տեսակետից բացարձակապես ոչ մի արժեք չունեցող պոեմներին, որոնց միայն վերնագրերը ամեն ինչ ասում են հեղինակի դիրքորոշման մասին. «Տրիբունը», «Կառուցողները», «Հնոցի մոտ», «Ջուգուն», «Պատմում է կարմիր դիրեկտորը», «Մնվում է նոր կյանք»։ Թե այս և թե այս շրջանում գրած մնացած գործերում, ուղղափառ պրոլետգրականության պահանջներից ելնելով, այսինքն անելով այն, ինչ պաշտոնապես պահանջվում էր, Չարյանն ամեն կերպ չանում է մարդու մեջ մեռցնել մարդկայինը, ոչնչացնել հոգեբանական միջավայրը և իր հերոսին դարձնել գաղափարական ճառասաց։ «Նամակ» բանաստեղծության մեջ ստեղծվում է այսպիսի կենսազուրկ բախում. լինել կոլեկտիվի՞ հետ, թե՞ գնալ սիրած աղջկա հետից։ Լուծումը պարզ է՝ իհարկե, կոլեկտիվի՛, այլ կերպ ինչպե՞ս կարող է վարվել գաղափարական կուիվածք ունեցող երիտասարդը.

> *Ուրիշ աղջիկ կսիրես, կմոռանաս ճառս...*
> *...Դու անցել ես բանակից, դու մեռվել ես մեռոց,*
> *Եվ դու կարող ես դառնալ առաջավոր ճերոս...*
> (Կ2, 1930, № 202, 29 օգոստոսի)

Նույն պարզունակ լուծումով «Ավտորուս» բանաստեղծության մեջ սայլը ճանապարհ է տալիս ավտորուսին և բաղձանքով ասում. «Արի՛, մեքենա, նոր կյանքով լեցուն, Մեր գլխի վրա բզդունում ենք քեզ» (ԳԴ, 1928, № 10)։ Նույն ներշնչանքով «Գարնանային լոզունգներ» վերտառությամբ նա նաև չափածո շարադրում է կոլեկտիվացման կարգախոսները։ «Բոլորս դեպի բոլշևիկյան գարնանացան» կոչը նա ընկալում է շատ ուղղակի։ 1931 թ. նույն՝ «Բոլշևիկյան գարնանացան» վերտառությամբ լույս է տեսնում բանաստեղծությունների մի ժողովածու, որին Ն. Չարյանից բացի մասնակցում են նաև Վշտունին, Ալազանը, Նորենցը, Տարոնցին, Մահարին։ Կենսագործելով առաջնորդի պատգամները, գրողները ժողովրդին խորհուրդ էին տալիս մտնելու կոլեկտիվ տնտեսությունների

մեջ։ Բոլորը միաբանված գրում էին «Քառյակներ գարնանացանին» և համանման բաներ։ Ահա Ն. Զարյանի քառյակներից մեկը.

Ջուված սերմը բերքով էր,
Բայլևիկյան խելքով էր,
Արտը ոսկի էր կապել՝
Մեր կոլեկտիվ ձեռքով էր։

Կոլտնտեսային շարժման, գարնանացանի և դասակարգային պայքարի մոտիվներով գրված այսպիսի քառյակներ Զարյանը զետեղել էր նաև «Հարվածներ» գրքում։

Թե՛ ժամանակի քննադատությունը, թե՛ հետագա տարիների պատմագրությունը համեմատաբար բարձր է գնահատել նրա «Ուշանի քարափը» պոեմը, որի մի հատվածն էր նաև վերը նշված «Նամակը»։ Հաշտողություն անպայման կար. կենդանի շունչ, սխեմատիզմից ազատված լեզու, մարդկային ճակատագրեր։ Բայց և ճշմարտությունն այն է, որ պոեմը հյուսված էր գաղափարական սխեմաների վրա։ Հուշագիրները վկայում են, որ Զարենցը օբյեկտիվորեն բարձր է գնահատել այդ պոեմը։ Թե ինչքանով են ստույգ դրանք, թողնենք հուշագիրների խղճին, իսկ ինքը՝ Զարենցը, «Մեր գրական լեզվի զարգացման տենդենցները և Դ. Դեմիրճյանի լեզուն» զեկուցման մեջ, առարկելով բոլոր նրանց, ովքեր Զարյանի պոեմի լեզվական ավանդները բխեցնում էին Թումանյանից, ասում է.

«Ընկերներ, ես խնդրում եմ մի անգամ ընդմիշտ ձեր մտքից հանեք այն լեգենդը, թե իբր Զարյանի լեզուն նման է Թումանյանի լեզվին» (VI,էջ 338)։

Եթե միևնույն օրերին, միևնույն վարչակարգի պայմաններում Զարենցն ապրում էր հանճարի չգնահատման ողբերգություն, ապա, ինչքան էլ տարօրինակ լինի, Ն. Զարյանը, առանց լրջորեն գիտակցելու, առանց մի պահ անգամ կասկածելու, ապրում էր իր կարողությունների (կուզեք շնորհք կասենք, կուզեք՝ տաղանդ) գերագնահատման ողբերգություն։ Ինչո՞ւ այդպես։ Զարենցի հարցը պարզ է. դեռևս 20-ական ԹԹ. կեսերից, այսինքն՝ ձախ մոլորությունները հաղ-

թահարելուց հետո, նա անընդհատ կռվում էր պաշտոնապես պարտադրված և պետականորեն ընդունելի համարվող գաղափարական մերկապարանոց սխեմաների դեմ և անհատական ըմբռնումների շնորհիվ ու միջոցով ճանապարհ հարթում ճշմարիտ գրականության և այդ ճանապարհով ընթացող նոր սերնդի համար։ Հանուն դրա՝ նա գնում էր ընդդիմության, դիմադրության, զիջումներ չընդունող դժվարին ճանապարհով։ Դա այդպես է, որովհետև նրան առաջնորդում էր ոչ թե սոսկ օրվա պահանջը, այլ՝ ժողովրդի մաքառումների փորձը, համաշխարհային գրականության պատմական զարգացման ուղին, ազգային կյանքի նպատակը։ Իսկ օրվա խնդիրը նրա համար ոչ թե օրացույցի թերթիկ էր, այլ՝ «ժամանակի շունչ» ոչ թե հեշտ ասվող մի բան, այլ՝ մոնումենտալ արվեստ, ոչ թե մերկապարանոց ճառ, այլ՝ բարդ համադրություններից ծնվող ժամանակակից մտածողություն, ոչ թե միակողմանի մարդկային նկարագիր, այլ՝ հոգեբանական բարդ դրամա։ Այս հարցերի մասին մեկ անգամ չէ, որ նա խոսել է «էպիքական լուսաբացում» և բանավիճային ելույթներում։

Դրան հակառակ՝ Ն. Զարյանը իր կարողություններով, որոնք այլ պայմաններում կարող էին գրական անհամեմատ ավելի որակյալ արժեքներ ստեղծել, ծառայեց պաշտոնական պահանջներին, գաղափարական ամեն մի կարգախոս համարեց գրականության օրենք, վարչական որոշումները դարձրեց ստեղծագործության չափանիշ, երբեք չդիմադրեց, չկռվեց, փաստորեն արեց այն, ինչ պահանջվում էր, դրա համար արժանացավ պարգևների և հենց այդպես էլ կործանեց իր տաղանդը։ Պաշտոնական պահանջներին ծառայելով՝ նա զրկվեց մուսաների հովանավորությունից։ Ինդուստրացման շրջան է՝ պատրաստ են նրա արդյունաբերական պոեմներն ու բանաստեղծությունները, կոլեկտիվացում է՝ կա՛ կոլեկտիվացման պատկերում գրականության մեջ, անհատի պաշտամունք է՝ կեցցե՛ անհատը։ Ահա այսպես անտեղի ծախսվում է տաղանդը, իսկ վերջնական արդյունքը՝ պարտությունն է, որը գրողի համար ավելին է, քան՝ ողբերգությունը։

Ահա այսպես նա գրում էր «Ստալինն» բանաստեղծությու-

նը և ներշնչված կարդում առաջնորդի առաջ, հյուսում «Դյուցազնագիրքը» և փառաբանում ղեկավարին, ընթացքում է գրում «Շքանշանի երգում», «Ողջույն առաջնորդին» և համանման շատ այլ բանաստեղծություններ։ Ճիշտ էր Ն. Զարյանը դեռևս 1926 թ. գրած և «Հարվածներ» գրքում զետեղած սրիոլետներից մեկում.

Այնմա՞ն կապեր կխորտակվեն,
Այնմա՞ն ձևեր կանէանան.
Այս պայքարում մեծ ու հսկաո
Այնմա՞ն կապեր կխորտակվեն։
Մինչև դառնա ծվեն-ծվեն
Կյանքը ու նոր ձև ստանա,—
Այնմա՞ն կապեր կխորտակվեն,
Այնմա՞ն ձևեր կանէանան։

Պատմության առջև այս պահանջներին ենթակա է նաև գրականությունը, և բանաստեղծն այս մասին ևս պիտի ժամանակին հոգար։

Այս հեշտ դիմադրության ճանապարհով ընթացավ նաև Ալազանը՝ այս տարիներին ստեղծագործության հիմնական նյութ դարձնելով հանրապետության արդյունաբերական զարգացումը։ Դրա վկայություններն են «Երգեր կառուցման և հաղթանակի» (1930), «Պոեմ պատերազմի, խաղաղության և հնգամյա պլանի մասին» (1931) գրքերը, նաև՝ «Մաքառումներ» ժողովածուի մեջ զետեղված գործերի մեծամասնությունը։ Այդտեղ, համենայնդեպս, երևում են նաև Ալազանի ջանքերը՝ արևմտահայ պոեզիայի ավանդների օգտագործմամբ ազատագրվելու սխեմատիզմի շրջանակներից։

Նույնքան անմխիթար վիճակում էր նաև Վշտունին, որը, արևելյան կյանքի պատկերումով գրված բարձրաշառաչ բանաստեղծություններից ու պոեմներից հետո, չէր գտնում ու այդուհետև այլևս չգտավ գրելու նյութ։ Մի քանի նոր գործերը՝ «Խոսում է ռադիո-Ալժիրը» (1931), «Լուսադեմին» (1939), «Ստալինի դորգանկարը» (1939) ոչ մի լուրջ բան չավելացրեցին նրա նախորդ գրքերին։ Վշտունու սնամեջ գրական գործերի հանդեպ ունեցած իր ծաղրը Ա. Բակունցն արտահայ-

տեց շատ սրամիտ ձևով՝ նրա մեծադիր «Երկեր» (1935) դիրքը օգտագործելով որպես չգրված թուղթ և դրա վրա շարադրելով իր «Ծղբայրության ընկուզենիները» պատմվածքը։

Գ. Սարյանը փորձում էր իր քնարական խառնվածքը համատեղել երկաթե ոանձաձայների հետ, միաժամանակ գրում «Երկիր՝ մեծ մի կոլխոզ» վերնագրով պարտադիր մի գործ։ Ի տարբերություն Վշտունու, իր բալլադներում նա աստիճանաբար հայտնաբերում է արևելքի դունեղ մի աշխարհ և այս տասնամյակում իր հիմնական որոնումները զարգացնում այդ ուղղությամբ։

Որոնումների մեջ էր նաև գրական երիտասարդությունը, որոնցից մի քանիսի՝ Դաշտենցի, Տարոնցու, Նորենցի, Հուրյանի համար ուղեգիծը Չարենցի ճանապարհն էր։

Համենայն դեպս՝ այս տասնամյակում երկաթբետոնե քնարերգությունը շարունակեց մեծ ավերածություններ գործել։ Դրանք տուրք էին տալիս ոչ միայն հետևողական պրոլետգրողները, այլ՝ մյուսները։ «Օշոշ ծաղիկներ» պոեմում Մ. Արմենը գրում էր.

Օշոշ ծաղիկները մեռնելու վայրկյանին
Լիզեցին բետոնը վերջին հայացքով.
... Սշոշները երգում են ամբո՞ղջ Շիրակով,
Նրանք երգում են գործարանի ձոնը։
(ԳԴ, 1929, № 12)

Հայ գրական կյանքի կենտրոնում կատարվող այս փորձերից ետ չէր մնում նաև Ստեփանակերտում Գրիգոր Ներսիսյանի հրատարակած «Կայծ» գրական-գեղարվեստական, քննադատական և... գյուղատնտեսական ամսագիրը, որի էջերում տեղ են գտնում նաև այսպիսի տողեր.

Ոգջ քաղաքը լույսերի տակ
— Կրակների մի բոստան,
Բյուր լարերից ճյուսված մի ցանց,
Էլեկտրիկ մի ոստայն։
(1929, № 4—5)

Ահա գրական կյանքի այս մթնոլորտում և գրական նախասիրությունների այս պայմաններում պիտի 1933 թ. լույս

տեսներ «Գիրք ճանապարհին», որը ոչ միայն ստեղծագործական հաղթանակ պիտի նշանավորեր, այլ պիտի ճշտեր հայ գրականության զարգացման հետագա ուղիները: Բայց գիրքը դեռևս չկար և տպարանում «վերակառուցվում» էր:

Գ

Վերակառուցման այս շրջանում մոտիկից հետևենք նաև գրական կյանքի ընթացքին՝ ավելի ամբողջական ընդգրկման մեջ տեսնելու Չարենցի ու նրա շրջապատի հարաբերությունները:

Գրական ուժերը չլատված էին տարբեր խմբակցությունների միջև: Ըստ Հայկ Ադոնցի «Ստեղծագործական խմբավորումները ժամանակակից խորհրդային գրականության մեջ» հոդվածի՝ «վերջին հնգամյակի տվյալներով» ներկա գրականությունը բաժանվում է այսպիսի հինգ խմբերի՝ նեոբուրժուական գրողներ, աջակողմյան ուղեկիցներ, ձախակողմյան ուղեկիցներ, գյուղացիական գրողներ և պրոլետարական գրողներ (տես՝ ՆՈՒ, 1929, № 2—3, էջ 251): Այսպիսի բաժանումը ենթադրում էր նաև համապատասխան վերաբերմունք: Իսկ մանրամասների մեջ խորանալու և նրբություններն ընկալելու ժամանակներն անցել էին: Միտումը գրական խմբավորումների և խմբակցությունների միավորումն էր, ինչը և վավերացվեց Համկ(բ)կ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի որոշմամբ: Իսկ այդ ընթացքում և դրանից հետո ամեն կերպ ղեկավար դիրքի էին ձգտում հասնել նախկին ՀՊԳԱ անդամները՝ այդ նպատակին հասնելու համար՝ բոլոր միջոցներով սրելով պայքարը և ոտնատակ տալով գրական չափանիշները: 1930 թ. հոկտեմբերի վերջին Երևանում բացվում է անդրկովկասյան պրոլետգրողների ասոցիացիայի երկրորդ պլենումը, ուր Վըշտունին հանդես է գալիս «Պրոլետարական գրականության հեգեմոնիայի պատմական իրավունքի համար» զեկուցմամբ և հիմնավորում պրոլետգրողների ղեկավար դերի անհրաժեշտությունը (տես՝ ԽՀ, 1930, № 258, 2 նոյեմբերի): Իսկ գրական չափանիշների տերերը նախկին նոյեմբերականներն էին՝ Չարենցի գլխավորությամբ:

Ահա այս [illegible] ընթացքում 1930-ական թթ. ծավալվում են մի քանի բանավեճեր՝ կապված սխեմատիզմի հարցերի, գրական լեզվի զարգացման միտումների, նատուրալիզմի ու ֆորմալիզմի ըմբռնումների հետ։

Վանանդեցին, Դյուլիքևխյանը, Ալազանը և մյուսները 1930-ին ճշտում ու վերաճշտում էին սխեմատիզմի սահմանները և քննադատում հոգեբանական մեթոդը որպես «ինդիվիդուալիզմի» վտանգով հղի ուղղություն։ Դրա հետ մեկտեղ ոմանք ընդունում, ոմանք մերժում էին Վ. Երմիլովի առաջադրած «կենդանի մարդու» կարգախոսը գրականության մեջ, որը կոչված էր իր դիրքերը հաստատելու սխեմատիզմի տապալումով։ Բայց «կենդանի մարդու» մուտքը գրականության մեջ ամենևին էլ հեշտ չէր, դրա դիմաց կանգնած էին սխեմատիզմի հայրերը, որոնք նաև պաշտոնական վերաբերմունք էին թելադրում։ Ահա այս դիրքերից էլ 1929 թ. մայիսի 19-ին հանդես եկավ «Պրավդան».

Վտանգավոր են ներկայի մոդայական դարձած կենդանի ներդաշնակ մարդու լոզունգները գրականության մեջ։ Լինելով մեծ մասամբ լոկ ուղեղային ծագման աբստրակցիաներ՝ այդ լոզունգները վնասակար են մի կողմից իրենց անբովանդակությամբ, իսկ մյուս կողմից նրանք մատչելի են ռեակցիոն նպատակներով օգտագործելու համար՝ իրենց ապադասակարգային բնույթի հետևանքով։

Համանման մեկ այլ հոդված տպագրվեց թերթի նույն թվականի դեկտեմբերի 4-ի համարում։ Իսկ այս դրույթները, է՛լ ավելի ծայրահեղացվելով ու գռեհկացվելով, լայն արձագանք էին գտնում պրոլետգրողների շրջանում։ ՀՊԳԱ քարտուղարության «Բանաձևի» 13-րդ կետը դրա ցայտուն վկայությունն է.

Պսիխոլոգիական ռեալիզմ տերմինն իր բովանդակությամբ չի դիմանում ննջադատության, որովհետև մեզ համար հոգեբանական մեթոդը, որպես գրական ճանաչողության մեթոդ, ընդունելի չի կարող լինել։ Ինճճանպատակ պսիխոլոգիզմը, որը հանդիսանում է բուրժուական ինդիվիդուալիզմի և սուբյեկտիվիզմի արտահայտություն՝ կապված բերգսոնիզ-

մի և ֆրոյդիզմի հետ, պետք է ժխտել։ Ժխտելով բուրժուական պսիխոլոգիզմը, մարքսիզմը երբեք չի ժխտել և չի ժխտում դասակարգային հոգեբանությունը *(ԽՀ, 1930, № 215, 13 սեպտեմբերի)*։

Այս կարգի դատողությունները արմատապես ժխտում էին ոչ միայն Զարենցը և նրա շուրջ համախմբված գրողները, այլև, այսպես կոչված, ուղեկիցները։ Այդ տեսակետից համաման մտայնությունների դեմ ուղղված և բարձր գրականության պահանջներ առաջադրող մի փաստաթուղթ է Ս. Հորյանի «Քննադատը, գրողը և հարակից խնդիրներ» հոդվածը՝ գրված Վանանդեցու մի ելույթի առիթով։ Հորյանը խոսում է գրական կուլտուրայի, քննադատության պահանջկոտության մասին և ասում, որ այդ քննադատության մոտեցումը հիմնականում միակողմանի է ու մակերեսային.

Գրվածքներում այժմեական բան կա՞, գրվածքը օրվա խնդիր շոշափո՞ւմ է։ Եթե կա, ուրեմն նվաճում է։ Էլ չեն հաշվում տվյալ գրվածքը բավարարո՞ւմ է գեղարվեստի միևիմալ պահանջները, լեզու, կոմպոզիցիա ունի՞, հոգեբանությունը ճի՞շտ է, սխա՞լ։ Տիպեր կա՞ն, իրակա՞ն են, քե՞ կեղծ։

Մեր հեղափոխական կյանքը, նրա առաջադրած խնդիրները պետք է պատկերել ու երգել ոչ թե պլակատային ներկերով ու ճիչերով, բաղգրագիտական թեզեր բացատրելով... այլ խոր, հոգեբանական, կենցաղային ռեալիստական գրվածքներով։ Մանավանդ գեղարվեստորեն գրված։ ... Այսօրվա գրականությունը... չունի (մեծ մասով) և տեղական առանձնահատկություն, տեղական բույր ու գույն, որով միայն գրվածքը կարող է հարազատ լինել մասսաներին... Շատ գրվածքներ բարգմանության տպավորություն են թողնում *(ԽՀ, 1930, № 22, 26 հունվարի)*։

Կարծիքների բախումները շարունակվում են, բայց, դրժբախտաբար, միշտ չէ, որ դրանք գրական-գեղագիտական ուղղվածություն են ձեռք բերում։ Քաղաքական մեղադրանքի վտանգը անընդհատ կախված էր բոլորի գլխին։ Որոշ շրջանակներում տարածվում է այնպիսի մտայնություն, ըստ որի Հայաստանում գրականությունը մեռնում է, «պրոլետգրողները այնքան են այլասերված, որ գրում են կոմկուսի, կոմ-

սոմոլի, կոմինտերնի, Թուրքի մասին», իսկ ուղեկից գրողներն էլ ստեղծագործում են Չեկայի սարսափների տակ» (Հ2, 1929, № 98, 28 ապրիլի)։ Այս պայմաններում ծավալվում է մի նոր գործունեություն, թե իբր գրողները կյանքը չգիտեն և նրանց պետք է կապել կյանքին։ Այս նպատակով ՀՊԳՀ քարտուղարության 1931 թ. օգոստոսի 3-ի որոշմամբ կատարվում են ամրացումներ՝ Չարենցը կցվում է Երևանի ծխախոտի գործարանին, Բակունցը՝ մեխանիկական, Վշտունին՝ պահածոների, Ն. Զարյանն ուղարկվում է Դոնբաս, Գ. Սարյանը՝ Կուզբաս, Ալազանը՝ Ալավերդի, Լ. Թարգուլը՝ Լենտեքստիլ։ Այսպես «ամրացվում» են 24 գրող, որոնց վրա նաև պարտականություն է դրվում իրենց ստեղծագործություններում պատկերելու հնգամյակի հերոսներին, հարվածայիններին, ինչպես նաև ղեկավարելու գործարանների գրական խմբակները։

Այս ընթացքում առաջնահերթ խնդիր է դառնում նաև գրականությունը նոր ուժերով համալրելու հարցը։ Ստալինին պետք էին նոր կադրեր, որ աստիճանաբար հաշիվները մաքրեր հների հետ. նա ամեն ինչ ծրագրել էր ըստ ամենայնի բարեխղճորեն։ Ընդ որում՝ այդ կադրերն էլ պիտի ունենային բանվորագյուղացիական ծագում, առաջ քաշվեին անգրագետ չքավորների միջից, որպեսզի հնազանդորեն կատարեին «հայր» Ստալինի ցուցումները։ Դա արվում էր նույն այն օրերին, երբ Րաֆֆուն ու Պատկանյանին Հ. Դյուլիքեխյանը համարում էր «հակահեղափոխական ու նացիոնալիստ գրողներ» (Հե, 1930, № 80, 8 ապրիլի), երբ նույն մեղադրանքը կախված էր Չարենցի, Բակունցի, Մահարու, Արմենի գլխին։ Ահա նրանց փոխարինելու համար ՀՊԳՀ-ն 1930-ի հունվարին կազմակերպում է գրական 18 խմբակ, որոնցից ութը՝ բանվորական, հինգը՝ գյուղական, չորսը՝ դպրոցական, մեկը՝ բանակային։ Այս խմբակներն աշխատում են որոշակի ծրագրով՝ առանց մազաչափ շեղվելու ղեկավարների ցուցումներից։ Նրանք հրատարակում են նաև իրենց պարբերականները։ Բ. Ստաֆֆու խմբագրությամբ 1931-ին Լենինգրադում լույս է տեսնում «Բանվոր գրող» ապակետիպ մեքենագիր ամսագիրը։ 1933 թ. Երևանում Գ.Մասյանի խմբագրությամբ հրատարակվում է «Երիտ-գրող» ամսագրի երեք համար։ 1934-1936 թթ.

Ն. Զարյանի, ապա Դ. Տեր-Սիմոնյանի խմբագրությամբ, որպես «Երիտ-գրողի» շարունակություն, տպագրվում է «Գրական սերունդ» ամսագիրը։

1931 թ. հուլիսի 25-ին Ղարաքիլիսայում հիմնադրվում է Հայաստանի ԼՕԿԱՖ-ը (կարմիր բանակի և նավատորմի գրական միավորում), որի խորհրդի մեջ այլ գրողների հետ մեկտեղ մտնում է նաև Զարենցը։ Զարենցն ընտրվում է նաև խորհրդի նախագահության կազմում։ Պետհրատի հանձնարարությամբ Զարենցին և Ալազանին հանձնարարվում է կազմել կարմիր բանակին և նավատորմին նվիրված գեղարվեստական մի ժողովածու, որի մեջ պիտի ընդգրկվեին թե գրողների ֆեդերացիայի և թե բանակային գրողների ստեղծագործություններ։ 1932 թ. հունիսի 12-ին Ղարաքիլիսայում կայանում է ԼՕԿԱՖ-ի, իսկ հուլիսի 10-ին՝ Լենինականի գրական խմբակների ստուգատես։ Հուլիսի 12-ին ստեղծվում է Լենինականի խորհրդային գրողների ժամանակավոր վարչություն. նախագահ է ընտրվում Գ. Սարյանը, քարտուղար՝ Վ. Բզնունին։

1933 թ. հունիսի 13-ին Զարենցը ներկա է գտնվում Երևանի Կարմիր բանակի տանը կազմակերպված հայկական դիվիզիայի հրամանատարական կազմի և գրական ակտիվի հանդիպման երեկոյին, իսկ հոկտեմբերի 21-ին՝ գրական խմբակների և գրողների համատեղ խորհրդակցությանը։

Խնդիր է դրվում կենտրոնացնելու նաև գյուղական գրողների ուժերը։ Ստեղծվում է հանձնախումբ, որի գլխավոր նպատակը դառնում է «Մաճկալ» թերթի շուրջ համախմբել գյուղի գրողներին և աշխատանքներ տանել կազմակերպելու «Հայաստանի կոլխոզային պրոլետարական գրողների միություն»։ Դասակարգային պայքարի սրման ստալինյան դրույթը հանգեցնում է «Զինակից գրողների խմբակցության» ստեղծմանը, որի կազմակերպչական խմբի մեջ մտնում են Դ. Դեմիրճյանը, Ս. Զորյանը, Ս. Հակոբյանը և ուրիշներ։

Գրական և կուսակցական մամուլի էջերին ծածանվում է «Բանվոր հարվածայիններ, խտացրե՛ք պրոլետգրականության շարքերը» կոչը։ Ահա այս պայմաններում գրականություն են մտնում և նրա՛նք, ովքեր կոչված էին, և նրա՛նք,

ովքեր անկոչ էին՝ այդ թվում Հ. Շիրազը, Լ. Գայշենցը, Թ. Հուրյանը, Խ. Հրաչյանը, Աղավնին, Մ. Կորյունը, Գուրգեն Մասլովը, Բ. Ստաֆֆին, Ա. Շայբոնը, Ղ. Կոմունին. Հենր. Թումանյանը, Գ. Հայրյանը, Բ. Կարապետյանը և այլք։ Կարճ ժամանակ անց նրանց են միանում Մ. Մարգարյանը, Ս. Կապուտիկյանը, Հ. Սահյանը, Գ. Էմինը, Վ. Դավթյանը։ Իսկ ի՞նչ էր նրանց գրածն ու տպագրածը։ Հիշենք մի քանիսի գրքերի վերնագրերը. Աղավնի՝ «Արտերի լիրիկան», Վ. Գրիգորյան՝ «Անիվի երգը», Խ. Հրաչյան՝ «Մկանների լիրիկան», նաև՝ «Շեփորներ», Խ. Ռադիո՝ «Համազարկեր»։ «Գրական թերթի» 1938 թ. մայիսի 31-ի № 25-ում տպագրվում է «Նոր Արաբկիրի դպրոցի գերազանցիկ աշակերտ» պիոներ Վ. Դավթյանի «Մեր ձայնը քեզ, մեծ առաջնորդ» բանաստեղծությունը՝ գրված ընտրությունների առթիվ և այն վստահությամբ, որ ժողովուրդն անպայմանորեն իր ձայնը կտա Ստալինին։ Այսպես գրական նոր սերունդը աչքը բացում էր թունավոր մթնոլորտում։

Երկրի ղեկավարության անմիջական ցուցումներով նախապատրաստվող սերնդափոխությունը, ինչպես ասացինք, նպատակ ուներ ապարեզից հեռացնելու հին մտավորականությանը։ Գրականությունը նրանք տանում էին բանվորականացման, իսկ քիչ ուշ՝ աշուղականացման ճանապարհով։ «Կոլխոզչրոնտա» թերթը տպագրում է կիսագրագետ մի մարդու չափածո շարադրությունը և տակը ավելացնում. «Իհարկե, Նիկողոս բիձեն ոչ ՉԱՐԵՆՑԻՆ, ոչ ՄԱՀԱՐՈՒՆ, ոչ էլ ԱԼԱԶԱՆԻՆ չի հասնի։ Նրանք էլ ՆԻԿՈՂՈՍ բիձին չեն հասնի»։ Եվ այս տողերը հաճույքով վկայակոչված է Ասուր Վ.-ի (Ա. Ասատրյան) «Մասսայական կոլտնտեսային գրական շարժման կազմակերպման խնդիրները» հոդվածում (ԳԹ, 1934, № 8, 20 մարտի)։ ԼՕԿԱՖ-ի անդամներից մեկը՝ Փայլակ Ղազարոս գրական անունով, նամակ է հղում Ալազանին. «Դուք, բանաստեղծներդ, ինչպե՞ս եք գրում, ինչպե՞ս եք շարահյուսում, մենք այդ մասին պատկերացում չունենք։ Ասում են գրելու հատուկ մեթոդ ու տեխնիկա գոյություն ունի։ Արդյոք ճի՞շտ է։ Եվ եթե ճիշտ է, ընկեր Ալազան.

ինչո՞ւ մի օր այդ մասին գրույց չեք անում մեզ հետ» (ԴԹ, 1932, № 6, 20 ապրիլի)։ Համատարած կոլեկտիվացման հետ այս համատարած բանաստեղծականացումը լավ է երեվում նաև Թիֆլիսի «Պրոլետար» թերթի «Գրական արշավ» դրական-գեղարվեստական հավելվածի էջերում։ Ահա այդ պարբերականի տարբեր համարներում տպագրված գրական կոչերը.

Բանվորականացնե՛նք պրոլետգրական կազմակերպությունները։ Լա՛յն նամփա բանվոր հարվածայիններին դեպի գրականության դիրքերը։ Գրականությունը ծառայեցնե՛նք հեղափոխության հաղթական իրացման և սոցիալիզմի կառուցման կարիքներին։ Տիրապետե՛նք տեխնիկային գրական ֆրոնտում։

Ահա այսպես օրըստօրե իջեցվում էին գրականության չափանիշները՝ ասպարեզը տրամադրելով բոլոր նրանց, ովքեր իրենց «ժողովրդական» ծագումով պիտի աստիճանաբար ապահովեին անհատի պաշտամունքը՝ նրա մասին շարադրելով նորօրյա վիպերգեր ու խաղիկներ։

Լայն սպառման գրականության այս աճող պահանջները բավարարելու համար զարկ է տրվում նաև գրական ալարբերականների հրատարակությանը։ Նախ, գրականության հարցերին նկատելի տեղ են հատկացվում կուսակցական օրգանները՝ Երևանի «Խորհրդային Հայաստանը», Թիֆլիսի «Պրոլետարը», Բաքվի «Կոմունիստը», Լենինականի «Բանվորը», որոնք հրատարակում են նաև իրենց հավելվածները՝ «Արվեստի ֆրոնտում» (1930, Երևան), «Գրական շաբաթ» (1929, Թիֆլիս), «Գրական արշավ» (1930—1931, Թիֆլիս)։ «Պրոլետարի» հրատարակությամբ Թիֆլիսում լույս է տեսնում նաև «Պրոլետար» միամյա թերթը (1931) և «Գրոհ» ամսագիրը (1931—1933)։ Լենինականի «Բանվորը» իր հերթին 1933 թ. հրատարակում է «Գրական գրոհ» հավելվածը։

Թեև 1932-ին դադարում են հրատարակվել «Գրական դիրքերում» և «Նոր ուղի» ամսագրերը, բայց դրանց փոխարեն իրենց գործունեությունն են սկսում «Գրական թերթը» (1932-ից) և «Խորհրդային գրականություն» ամսագիրը (1934-ից)։ 1932-ին լույս է տեսնում «Նոյեմբեր» հանդեսի

միակ համարը, ապա 1933—1934-ին՝ սրա շարունակությունը՝ «Վերելքը»։ Գրական նոր ուժերին խրախուսելու համար, ինչպես ասացինք, 1933-ին հրատարակվում է «Երիտ-գրող», 1934—1936-ին՝ սրա անմիջական շարունակությունը հանդիսացող «Գրական սերունդ» ամսագիրը։

Թիֆլիսում 1932—1941 թթ. լույս է տեսնում Վրաստանի գրողների միության հայկական բաժանմունքի օրգան «Արշավ» նախ՝ միամսյա, ապա՝ երկամսյա, այնուհետև՝ եռամսյա հանգեսը։ Նույն թվականներին Բաքվում լույս է տեսնում տեղի հայ գրողների օրգան «Խորհրդային գրող» ամսագիրը, իսկ Ստեփտնակերտում 1934-ին՝ «Գրոհ» ամսագրի միակ համարը։ «Գրոհ» անվանումով երկօրյա թերթ 1931—1937 թթ. տպագրվում է նաև Դոնի Ռոստովում։ Այդտեղ 1934-ին հրատարակվում է նաև «Հյուսիսային Կովկաս» գրական-գեղարվեստական-քննադատական ալմանախի միակ համարը։ Այս տարիներին Հայաստանում և Միության հայաշատ վայրերում տպագրվում են նաև բազմաթիվ այլ գրական ժողովածուներ ու ալմանախներ։

Դ

Ահա գրական-կազմակերպչական ձեռնարկումների այս պայմաններում սկսվում է Չարենցի կյանքի ու գործունեության առավել լարված շրջանը։

1934 թ. սկսվում է նոր մեղադրանքներով։ Հունվարի 10-ին բացված ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարում իր ճառի մեջ Խանջյանը, ուրբ տալով Բերիայի և գրողների միութենական կազմակերպության ճնշմանը, Չարենցի և նրա համախոհների մասին ասում է.

Մեր տաղանդավոր գրողներից Չարենցը, Աբմեները, Բակունցը ստեղծագործական հիմնական մի խնդրում՝ գեղարվեստական մեջ ազգային ձևի և սոցիալիստական բովանդակության հարցերում կանգնեցին սխալ տեսակետի վրա՝ ըստ էության ընդունելով «ազգային ձևի խտացման» պահանջը, որն իսկ էության նացիոնալիստական շեղում է գրական

ստեղծագործության կոմունիստական դիրքերից:... Կենտկոմը ժամանակին հարվածել է 1933 թվի օգոստոսի 20-ի որոշման մեջ ընկ. Բակունցի խմբակը, նրա արտահայտած նացիոնալիստական տեղեղնցների համար: Մեր գրականության հետագա բարգավաճման համար անհրաժեշտ է ամենից առաջ ավելի անհաշտ և ուժեղ պայքար նացիոնալիզմի ամեն մի արտահայտության դեմ գրական ստեղծագործության բնագավառում... անհրաժեշտ է, որպեսզի անցյալի կուլտուրական ժառանգության հարցերը շոշափելիս՝ մենք ամենից առաջ մոտենանք այդ խնդիրներին նացիոնալիզմի դեմ պայքարն ուժեղացնելու տեսանկյունով (ԳԹ, 1934, № 2, *20 հունվարի*):

Միջանկյալ ասենք, որ նույն ոգով խանջյանը ելույթ էր ունեցել նաև 1933 թ. դեկտեմբերի 5-ին՝ Երևանի կուսակազմակերպության կոնֆերանսում:

Դրանից հետո 1934 թ. հուլիսի 14-ին Հ(բ)Կ կենտկոմի բյուրոն մի հերթական որոշում է ընդունում գրողների միության գործունեության մասին և խմբակայնության երկկողմանի մեղադրանքներով ու երկկողմանի թվացող հարվածներով ջանում լուծնել նրանց՝ պատապարտման հիմնական թիրախ ունենալով Չարենցին և նրա համախոհներին: Այդ որոշման 5-րդ կետում ասված է.

Կենտկոմը դիտողություն է անում Կազմկոմիտեի կուսակցական խմբին, որ այնտեղ չի եղել կուսակցական զգաստություն և անհրաժեշտ պայքար տեղական նացիոնալիզմի արտահայտությունների և Չարենցի ու ուրիշների գլխավորած խմբակայնության դեմ, որ կուսխմբակը չի կարողացել ժամանակին մերկացնել մի խումբ գրողների ու ճննադատների (Ոսկերչյան, Չարյան և այլն) «ձախ» ելույթները *(ԳԹ, 1934, № 19, 24 հուլիսի)*:

Նույն ոգով «Դեպի ծավալուն ստեղծագործական ինքնաքննադատություն» վերնագրով մի խմբագրական հուլիսի 23-ին տպագրվում է «Խորհրդային Հայաստանի» էջերում: Ամրապնդվում են դարձյալ նույն մեղադրանքները.

Մեր գրականության մեջ նացիոնալիստական տենդենցների արտահայտիչն էր Չարենցի խմբակը նաև իր մի շարք

գրական-քաղաքական հայացքներով:

Այնուհետև նացիոնալիզմի մեջ մեղադրվում է գրեթե ամեն ինչ: Մեղադրանքների ալս տարափը պատահական չէր և երկրի կուսակցական բարձրագույն ղեկավարների պահանջով դեռևս սկսած է շարունակվեր ու խորանար:

Իսկ Չարենցը, դիմանալով այս ճնշմանը, դեռևս շարունակում էր արդունավետ գործունեություն ծավալել գրական-մշակութային կյանքում:

1934 թ. ապրիլի 9-ին նա մասնակցում է «Դիքոր» կինոնկարի քննարկմանը, մայիսին ներգրավվում գրողների միության ընդունող հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովի հունիսի 10-ի նիստում միության անդամ են ընտրվում 70 գրող, այդ թվում՝ 10-ից ավելի անդամության թեկնածու: Գրողների միության հիմնադիր կազմում էր նաև Չարենցը: Նա ներգրավվում է գրողների միության կազմկոմիտեի մեջ: Վարչության նախագահ է ընտրվում Դ. Տեր-Սիմոնյանը, քարտուղարներ՝ Ալազանը և Հ. Մկրտչյանը: Միաժամանակ նրանք հաստատվում են «Գրական սերունդի», «Գրական թերթի» և «Խորհրդային գրականության» խմբագիրներ:

Որոշումների ու մեղադրանքների, կազմակերպչական ու հրատարակչական աշխատանքների ընթացքում գրողները դադարեր արծարծում են նաև ստեղծագործական հարցեր: «Հիմա պետք է գնալ դեպի մարդը»,— պարզ ու որոշակի ավետում է Դեմիրճյանը «Կոչումը պարտավորեցնում է» հոդվածում (ԳԹ, 1934, № 12, 29 ապրիլի): Թերթի նույն համարում տպագրած «Կարևոր անելիք» հոդվածում սխեմատիզմի և գրական մոլախոտերի դեմ իր ձայնն է բարձրացնում նաև Ս. Զորյանը: Ստեղծագործական հարցերի արծարծումը շարունակվում է 1934 թ. հունիսի սկզբից ծայր առած աստիճանում՝ նվիրված գրական լեզվի զարգացման խնդիրներին, որն ընթանում է երկու փուլով՝ քննարկման նյութ ունենալով նախ արձակը և ապա՝ պոեզիան:

Առաջինը զեկուցել է Բակունցը և խոսել Ալազանի «Վաթսուներորդ հորիզոնում» վեպի լեզվի մասին: Գրական երկի լեզվին մոտենալով գեղարվեստական ամբողջության պահանջով՝ Ալազանի վեպում նա մատնանշել է բազմաթիվ թե-

րությունները։ Չարենցը հակաճառում է Բակունցին, շեշտելով, որ «լեզվի խնդիրը ամենից առաջ ոճի խնդիր է և չի կարելի այն քննել առանց նկատի առնելու տվյալ երկի ոճը, նրա ուղղությունը»։ Հակաճառելով՝ փաստորեն Չարենցը լրացնում է Բակունցին, քանի որ, ըստ նրա, Ալազանի վեպն, իրոք, ունի բազմաթիվ թերություններ, որոնք գալիս են ոճի ամբողջականության բացակայությունից։

Երրորդ հավաքին զեկուցել է Դեմիրճյանը և, ըստ լեզվի զարգացման միտումների, գրողներին բաժանել երկու խմբի։ Նրա կարծիքով գրողների մի մասը իր լեզվի մեջ դրսևորում է «խոսքի ներքին ուժը, ձգտելով գրական լեզվի նոր բարձունքների», իսկ մյուս մասը գործադրում է «այսօրվա մասսայական լեզուն»։ Առաջին խմբի մեջ նա տեղ է տալիս Չարենցին ու Բակունցին, երկրորդում՝ Զորյանին, Մահարուն, Արմենին։

Իր ելույթի մեջ Արմենը դրվատում է Չարենցի «Մաճկալ Սաքոյի պատմությունը» պոեմի «գյուղացիական» լեզուն՝ այն համարելով «միաձույլ և հետևողական» և հակառակը՝ նույն դիրքերից քննադատում Ն. Զարյանին։ Վերջինս խոսում է Բակունցի «Միրանի փողը» պատմվածքի և Չարենցի «Գովքի» լեզվի մասին։ Ահա նրա ելույթի այդ հատվածը.

... Այն հանգամանքը, որ Բակունցը պատմվածքի մեջ իր խոսքը գրել է մաքուր գրական լեզվով, իսկ սասունցի գյուղացուն խոսեցրել է բարբառով՝ դրանով աղայական վերաբերմունք է ցույց տվել գյուղացուն և արհամարհել նրան։ Ապա ընկ. Զարյանն առանձնապես կանգ է առնում Չարենցի «Գովքի» վրա և նրա լեզուն համարում է ռեակցիոն, կեղծ կլասիկիկան *(ԳՓ, 1934, № 16, 20 հունիսի)*։

Անմիջապես ելույթ է ունենում Չարենցը և դատապարտում Զարյանի «սխալ ու վնասակար դրույթները», որոնցով նա հանդես է գալիս Բակունցի դեմ և գտնում, որ վերջինիս գործադրված այդ ձևը «միանգամայն ճիշտ է և պատմվածքի համար շահական»։ Ապա նա բացատրում է կեղծ կլասիցիզմի էությունը և միանգամայն սխալ համարում Զարյանի կարծիքը նաև իր «Գովքի» մասին։ Այդքանից հետո Չարենցը գնում է շատ էական ընդհանրացման և, խոսելով սո-

ցիալիստական ռեալիզմի մասին, ասում, որ մի քանի գրողներ սխալվում են, կարծելով, թե այդ մեթոդով ստեղծագործել «նշանակում է միայն առօրյա խնդիրների մասին գրել»։ Նա գտնում է, որ ստեղծագործական տվյալ մեթոդը «ընդգրկելու է նաև մեր ժամանակի փիլիսոփայական խնդիրների վերարտադրումը, ինչպես իր ժամանակին գրել է Գյոթեն»։

Պոեզիայի լեզվի մասին զեկուցում է Վ. Թիրվիբաշյանը։ Դարձյալ ելույթ է ունենում Ն. Զարյանը և առաջ քաշում «ածականների տեսությունը», ըստ որի՝ առատ ածականների գործածությունը հատկանշական է միստիկ և ռոմանտիկ գրողներին, որոնց ստեղծագործության «բնորոշ գիծն է անորոշությունը, վերացականությունը»։ Այդպիսի լեզվով գրողներ է նա համարում Զարենցին, Մահարուն, Ալազանին։ Իր ընդարձակ ելույթներում Զարենցը նախ հիմնովին ջախջախում է վաղ շրջանի կոնստրուկտիվիստներից Ն. Զարյանի «փոխ առած» այս տեսությունը և ապա այն կարծիքը հայտնում, որ, անկախ քերականությունից, «մեր գրական կադրերի խոշորագույն մասը կանգնած է ճիշտ ճանապարհի վրա»։ Ելույթ են ունենում Բակունցը, Զորյանը, Արմենը և ուրիշներ։

Հունիսի 28-ին Զարենցն ինքն է հանդես գալիս զեկուցմամբ՝ նյութ ունենալով «Մեր գրական լեզվի զարգացման ուղղությունները և Դ. Դեմիրճյանի լեզուն»։ Նա ի մի է բերում գրական լեզվի զարգացման մի երկարատև ճանապարհ՝ սկսած «Հյուսիսափայլից», Թումանյանի ու Տերյանի լեզվից մինչև իր ժամանակակիցները։ Նախապատվությունը նա տալիս է Տերյանի լեզվին, այն համարելով «կենտրոնաձիգ, համաժողովրդական, բարձր, ինտելեկտուալ լեզու», որը սակայն, ըստ նրա, շատ է «ներվիլիրովկայի» ենթարկվել և կարիք ունի կենդանի, ժողովրդական խոսքի տարրերով հարստացվելու։ Ահա այս տեսակետից է նա բարձր գնահատում Դեմիրճյանի լեզուն։

Մտքերի փոխանակությունը տեղի է ունենում հունիսի 30-ին՝ ելույթ ունեն ունենում Դ. Դեմիրճյանը, Մ. Արմենը, Վ.

Նորենցը, Ռ. Զարյանը և Գ. Սևակը։ Ն. Զարյանը թեև ելույթ չի ունենում, բայց երկու տարի անց «Խորհրդային գրականություն» ամսագրի մարտ-ապրիլյան միացյալ համարում Զարենցի այս զեկուցման առթիվ տպագրում է «Գրական լեզվի նացիոնալիստական աղավաղման դեմ» հոդվածը։ Տերյանի լեզուն նա համարում է «բուրժուական», ուստիև՝ անօգտագործելի և ապա. «Ըստ Զարենցի մենք պետք է վերցնենք ազգային կուլտուրայի բուրժուական նացիոնալիստական տարրերը և դեն նետենք նրա դեմոկրատական և հեղափոխական տարրերը»։ Եվ ապա՝ «Տերյանի լեզվով ավելի շուտ կարելի է փախուստ տալ սոցիալիզմի կառուցման իրականությունից, քան արտահայտել այդ իրականությունը»։ Հետևում է քաղաքական մեղադրանքների շարանը, թե իբրև Զարենցը այդ ճանապարհով «ձգտում է գրականությունը կտրել սոցիալիզմ կառուցող ամենալայն մասսաներից»։ Նա Զարենցին քննադատում է նաև գրաբարի հարբուտությունների օգտագործելու հարցում՝ ոսկեղենիկ հայերենը համարելով «անցյալի կուլտուրայի բուրժուա-նացիոնալիստական» մնացուկ։ Անգամ Զարենցին նա չի ներում «դպրություն» բառն օգտագործելու և միջնադարյան էրեզիայի բանաբղեսյոը շրջանառության մեջ դնելու համար (տես՝ էջ 184—202)։

Դեռ նոր էր վերջացել լեզվի մասին ընթացող այս շուրջ մեկամսյա ծանր խոսակցությունը, երբ 1934 թ. հուլիսի 21-ին գրողների տանը Բակունցը շուրջ երկու ժամ զեկուցում է «Տեղական նացիոնալիզմի մի քանի արտահայտությունները մեր գրականության մեջ» հարցի շուրջ՝ չխնայելով ո՛չ իր «Միրանի փողը», ո՛չ Զարենցի «Գիրք ճանապարհին», ո՛չ Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը, ո՛չ Մահարու «Մանկությունն ու պատանեկությունը»։ Ճնշման տակ ուժեղացող ինքնաքննադատությունը վերածվում է ինքնաոչնչացման՝ նախադրյալ ունենալով Արմենի աղմուկ հանած հոդվածը «ազգային հատկանիշների խտացման» հիմնադրույթով։ Իր «Միրանի փողը» պատմվածքի կապակցությամբ Բակունցն ասում է.

Հեղինակը պատմվածքի հերոս Հազրոյի բերանով հրա-

հոգում է վերադարձ դեպի անցյալը, ներշնչելով վերադարձի նույսեր դեպի «հին երկիրը»: Այդ ոչ միայն ստեղծագործական անկում է, այլև տուրք բշնամու գաղափարախոսության (ԳՔ, 1934, № 19, 24 հուլիսի):

Նկատի են ունենում Չարենցը, Մահարին Թոթովենցը և, բարձր գնահատելով Բակունցի զեկուցումը, խոստովանում իրենց «նացիոնալիստական սխալները»: Այսպիսի ճնշմամբ նույն օրերին զնդաններում մարդկանց ստիպում էին կամ ստորագրել իրենց մահախոսականները, կամ հրաժարվել իրենց հարազատներից: Բակունցի և Չարենցի այս կանխամտածված նահանջը թեև դիվանագիտական նպատակներ ուներ, բայց երկու տարի անց նրանց հարվածեցին հենց նո՛ւյն կետում՝ «մերկացման» առարկան ունենալով նույն «Միրոնի փողը», «Գիրք ճանապարհին» և մյուսների հիշատակված գրքերը, նաև՝ Չարենցի, Բակունցի լեզվի մասին զեկուցումները, որոնք հենց նույն՝ 1934 թ. հուլիսին «Խորհրդային Հայաստանի» վերը նշված խմբագրականում համարվեցին «նացիոնալիզմի արտահայտություն»:

Ահա այս ծանր գրական առօրյայի պայմաններում վրա է հասնում 1934 թ. օգոստոս ամիսը՝ իր երկու հիմնադիր համագումարներով: Օգոստոսի 1—5-ը գումարվում է Հայաստանի, իսկ օգոստոսի 17-ից մինչև սեպտեմբերի 1-ը՝ ԽՍՀՄ գրողների առաջին համագումարը: Դրանք ոչ միայն գրական-մշակութային, այլև հասարակական-քաղաքական կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններ էին երկրի կյանքում:

Հայաստանի գրողների համագումարի նախօրյակին վերջապես լույս է տեսնում «Գիրք ճանապարհին» նոր, վերափոխված տարբերակը: «Գրական թերթի» օգոստոսի 1-ի համարում տպագրվում է «Գրքի» առաջին էջերի ձևավորումը և այսպիսի ծանուցում.

Պետհրատը շրեղ հրատարակությամբ լույս ընծայեց Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին»՝ նկարիչ Հակոբ Կոջոյանի իլյուստրացիաներով: Մեր թերթի հաջորդ համարներում կլինեն հատուկ հոդվածներ այդ գրքի մասին:

Այդ «հատուկ» հոդվածները այդպես էլ լույս չեն տեսնում, իսկ հայ գրողների համագումարի ողջույնի խոսքում «Լիտերատուրնայա գազետան» հարկ է համարում վերստին ասել նույնը.

Մի շարք բնկերներ, որոնց երբեք չի կարելի երկրորդ կարգի գրողների շարքը դասել, ինչպիսիք են բնկ. Չարենցը, Բակունցը, Մահարին, թույլ են տվել ազգայնական բնույթի կոպիտ սխալներ, որոնք պնդել են ազգային պրոբլեմի իմպնուրույն նշանակությունը *(ԳՓ, 1934, № 20, 1 օգոստոսի)*:

Համագումարում մեկուկես ժամից ավելի տևող ճառով հանդես է գալիս Ա. Խանջյանը, որը շատ բարձր գնահատելով Չարենցին՝ «խորհրդային շրջանի ծնունդ է մեր այսօրվա գրականության ողնաշարը կազմող Չարենցը, հետհոկտեմբերյան խոշորագույն մեր պոետը», միաժամանակ, արդեն բազմիցս կրկնվող նույն արտահայտություններով քննադատում է նրան և համախոհներին, որոնք իբր թե իդեալականացնում և կարոտով են պատկերում անցյալը Իսկ «Գիրք Ճանապարհի» մասին, որի տպագրությանը նա ամեն կերպ աջակցել էր, հրապարակավ այսպիսի կարծիք է հայտնում.

Չափազանց հատկանշական է Չարենցի «Գիրք ճանապարհին»: Գեղեցիկ, հաջող, մնայուն կտորների կողքին այստեղ կան առանձին գործեր, որտեղ արտահայտված գաղափարները մերը չեն: Սխալ է Չարենցի մոտեցումը դեպի մեր անցյալը («Պատմության ֆառուղիներով»). մեր ժողովրդի ամբողջ անցյալի մեջ նա չի գտնում ոչ մի լուսավոր կետ. նրա պոեմը վերածվում է մի նոր «ողբի» և տարածվում է ոչ միայն մեր անցյալի, այլև որոշ չափով նաև մեր ներկայի վրա: Այստեղ արդեն այնքան լուրջ է Չարենցի կատարած սխալը,— ըստ էության նացիոնալիստական շեղում,— որ նա պետք է շատ լուրջ մտածի և անհապաղ ուղղի այն... Առավել ևս անհրաժեշտ է խիստ և անհաշտ լինել, որովհետև նացիոնալիստական սխալներն ու սայթաքումները հանդես են եկել մեր գրականության երկու խոշոր վարպետների մոտ (Չարենց, Բակունց), այն էլ մեր մի շարք

պարզորոշ նախազգուշացումներից հետո (ԳԲ, 1934, № 21, 10 օգոստոսի)։

Ուրեմն այսպես՝ հավասարապես մեղադրվում է և՛ անցյալի վերհուշը, որ համարվում է «իդեալականացումը», և անցյալին ուղղված քննական հայացքը, որը համարվում է անցյալի ժխտում։ Դա, ըստ էության, նշանակում էր, որ անցյալը համարվում է անցանկալի ժամանակաշրջան գեղարվեստական պատկերման համար և որ անուղղակի կերպով նորից շեշտը դրվում է ներկայի՝ այսինքն կոլեկտիվացման և ինդուստրացման վրա։ Իր ճառում Խանջյանը քննադատում է նաև անցյալի լեզուն, ասելով, որ բանաստեղծը «մասսաների համար» անհասկանալիության աստիճանի բարդացնում է իր խոսքը։

Ջարենցի «Գիրք ճանապարհի» լեզուն, Բակունցի անցյալին ուղղված հայացքը, Արմենի տեսական դատողությունները և նրանց բոլորի «նացիոնալիստական» սխալները քննադատում է նաև Լ. Արիսյանը (տես՝ ԳԲ, 1934, № 22, 25 օգոստոսի)։

Գրական տարբեր խնդիրների մասին զեկուցում են Դ. Տեր-Սիմոնյանը, Հ. Գյուլիքեխյանը, Հ. Մկրտչյանը, այնուհետև սկսվում են ելույթները։

Օգոստոսի 4-ի նիստում ելույթ է ունենում Ն. Զարյանը, ինքնաքննադատության կարգով խոսում իր սխալների մասին և ապա շեշտում, որ.

... Մասնավորապես ընկ. ընկ. Զարենցի և Բակունցի նկատմամբ կատարված իմ սխալները ճնշավորություն չէին տալիս վեր հանելու այդ ընկերների սխալները և ընկերաբար օգնելու նրանց (ԳԲ, 1934, № 21, 10 օգոստոսի)։

Իր «ընկերաբար օգնելն» էլ լինում է այն, որ ելույթի շարունակությունը նա նվիրում է Զարենցի լեզվի քննադատությանը։

Զարենցը ելույթ է ունենում համագումարի վերջին օրը։ Նրա ելույթն ընդունվում է առանձին ջերմությամբ։ Խոսելով շուրջ մեկուկես ժամ, նա անդրադառնում է ընթացիկ գրականության մի քանի արմատական խնդիրների։ Հավանություն տալով Խանջյանի ելույթին և շեշտելով դրա «բա-

յառիկ նշանակությունը մեր գրականության հետագա զարգացման համար», նա՝ այնուհետև անդրադառնում է իր լեզվի մասին Ն. Ջարյանի արած դիտողություններին և ասում.

...Նրա մեթոդը, որով մոտենում է այդ խնդիրներին, այնպիսին է, որ կարող է մեզ ավելի շուտ խանգարել թե՛ գրականության ասպարեզում և թե՛ լեզվի. դա նրա սխեմատիկ մեթոդն է (VI, էջ 342)։

Խոսելով իր լեզվի մասին, Ջարենցն ասում է, որ այն «ենթարկված է ժանրին» և համապատասխանում է նրան։

Մայր աստիճանի դժգոհությամբ է նա խոսում քննադատության մասին, իր ոչնչացնող ապտակը հասցնելով նախ Ս. Կիրակոսյանին, որը, սկզբունք չունենալով և աղավաղելով, նախորդ նիստերից մեկում խոսել էր «Գիրք ճանապարհի» դեմ և ապա, որպես հետամնաց քննադատության նախահայր, առանձնացնում Հ. Գյուլիքևխյանին, որը անցած տարիների ընթացքում ոչ մի դրական բան չի գտել գրականության մեջ և միշտ «հետևողական կերպով խմբակային պայքար է մղել մեր մի քանի գրողների դեմ»։ Ջարենցը քննադատության և գրական կուլտուրայի բարձրացման խնդիր է դնում և խոսում այն «նեղ դիապազոնի» մասին, որի մեջ ներփակված են իրենք՝ հայ գրողները։ Ելույթի վերջում Ջարենցը ասում է, որ Խանջյանի ճառից հետո «մեծապես ընդունում է» իր սխալը, և խոստովանում, որ ինքը, իրոք, գերագնահատել է անցյալը, անցյալին նայել «նացիոնալիստական տենդենցներով»։ Այս «նահանջը» ևս ըստ ամենայնի դիվանագիտական քայլ էր Ջարենցի կողմից, որովհետև իր սխալներն ընդունելու կապակցությամբ ինչ որ ասում էր հրապարակավ՝ ամենևին էլ չէր համապատասխանում իր համոզմունքներին։

Համագումարը փակվում է, բայց վեճերը չեն ավարտվում։ Իսկ փակումից առաջ, բոլորը, ինչպես ընդունված էր, ողջույնի հեռագիր են հղում ղեկավարությանը՝ Ստալինին, Ֆերրային, Գորկուն, Խանջյանին...

Մի քանի օր հետո հայ գրողների 17 հոգուց բաղկացած պատվիրակությունը ուղղություն է վերցնում դեպի Մոսկվա։ Նրանց մեջ էր նաև Ջարենցը։

Համագումարի կապակցությամբ «Պրավդան» անդրադառնում է «Հայաստանի բանաստեղծները» ռուսերեն ժողովածուին (թարգմանիչ՝ Ա. Գատով) և իր էջերում տեղ տալիս այսպիսի տողերի.

Ամենամեծ չափով բարգմանություններ են գեռեվված Հայաստանի ժամանակակից խոշոր պոետ Եղիշե Չարենցից («Երկիր Նաիրի» եղիճակը), որի բանաստեղծությունները մինչև այժմ ֆիչ են ծանոթ ռուս ընթերցողին:

Նվ ընդհանրապես համագումարի նախօրյակին լուրջ աշխատանք է ծավալվում խորհրդային բազմազգ գրականության, այդ թվում նաև հայ գրականության, ռուս ընթերցողին ծանոթացնելու ուղղությամբ: «Լիտերատուրնայա գազետան» փետրվարի 4-ին տպագրում է Վ. Գոլցևի հոդվածը Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի երկրորդ հրատարակության առթիվ: Այն արտատպում է նաև «Դրական թերթը» (1934 № 6, 28 փետրվարի): Համայն խորհրդային Միության գրական աշխարհով մեկ հնչում են ռուս քննադատի, հետագայում «Դրուժբա նարոդով» ամսագրի խմբագրի այս հիրավի ոգեշնչող խոսքերը.

Եղիշե Չարենցը խորհրդային Հայաստանի ամենաիարկաւոր ու տաղանդավոր գրողներից մեկն է: Հսկայական է նրա նշանակությունը հայկական նոր գրականության համար: Իր ունակությունների թափով, իր ստեղծագործության ծավալով, իր գաղափարական նշանակությամբ Չարենցը վաղուց դուրս է եկել ազգային նեղ շրջանակներից: Նրա աճուրդը պետք է հիշատակել ողջ խորհրդային Միության լավագույն գրողների շարքում:

Մարտի 16-ին նույն «Լիտերատուրնայա գազետան» էջ է նվիրում հայ գրականությանը (Բակունց, Մահարի, Ալազան): Տպագրվում են Վ. Կիրպոտինի և Հ. Մկրտչյանի հոդվածները ժամանակակից հայ արձակի և պոեզիայի մասին: Ուշադրություն դարձնենք, որ նույն թերթը քիչ ավելի ուշ՝ 1934 թ. նոյեմբերի 28-ին, Հայաստանի խորհրդայնացման 14-ամյակի կապակցությամբ, վերստին անդրադարձել է հայ գրականությանը՝ տպագրելով Չարենցի մի քանի բանաստեղծություններ, Շիրվանզադեի «Տասնչորս ուարի» հոդ-

վածը։ Մեկ տարի անց՝ 1935 թ. մայիսի 12-ին «Լիտերատուրնայա գազետան» այլ հայ գրողների հետ մեկտեղ ասպարեզ է տրամադրել նաև Չարենցին՝ Պ. Անտոկոլսկու թարգմանությամբ տպագրելով նրա «Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին» բանաստեղծությունը։ Նույն թվականին Բ. Պաստերնակի թարգմանությամբ «Պրավդայում» (№ 260, 7 նոյեմբերի) տպագրվել է «Գանգրահեր տղան» չափածո նովելը։ Դարձյալ նույն թվականին երրորդ և չորրորդ հրատարակությամբ Մոսկվայում լույս է տեսել «Երկիր Նաիրի» վեպը։ Երրորդ հրատարակությանը կցված էր Վ. Գոլցևի առաջաբանը, չորրորդին՝ դրա սեղմված անստորագիր տարբերակը։ Չարենցի ռուբայիներից ինը Օ. Ռումերի թարգմանությամբ 1936 թ. տպագրվել է «Լիտերատուրնայա գազետայում» (№ 25, 1 մայիսի), քերթի նույն համարում զետեղված է նաև Լ. Պերվոմայսկու «Եղիշե Չարենց» բանաստեղծությունը՝ նվիրված հայ գրողին։ Նույն թվականին «Օգոնյոկի» հրատարակությամբ 50.000 տպաքանակով լույս է տեսնում «Խորհրդային Հայաստանի բանաստեղծները» ռուսերեն ժողովածուն, որի մեջ տեղ էին գտել նաև Չարենցի գործերը։ Այս ամենը վկայում է մշուլենական ընթերցողի հետաքրքրությունը հայ գրողի ստեղծագործությունների հանդեպ։ Դա պետք է պսակվեր Մոսկվայում և Թիֆլիսում Չարենցի ռուսերեն երեք ժողովածուների տպագրությամբ, որի աշխատանքները 1934—1936 թթ. տարվում էին, բայց որոնք այդպես էլ լույս չտեսան։ Գրքերից մեկի շարվածքը պահվում է կենտրոնական պետական գրական արխիվում։

Ահա «նեղ դիապազոնից» դժգոհ, հայ գրողների համագումարում շրջանցված գրականության սկզբունքային հարցերի արծարծման լուրջ սպասումներով ու նաև բազմազգ խորհրդային գրականության մեջ իր վաստակի արժեքը գիտակցելով էր Չարենցը մասնակցում համագումարին, որի ոգին Մ. Գորկին էր։ Համագումարի նախօրյակին իր իսկ՝ Չարենցի թարգմանությամբ Երևանում տպագրվել էր Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» ժողովածուն, որը հայ պատգամավորները վերցրել էին իրենց հետ և համագումարի օրերին բաժանում էին մյուսներին։ Գրքի վրա հա-

յերեն և ռուսերեն դրված էր. «Խորհրդային գրողների համամիութենական համագումարին. ՀԽՍՀ Պետհրատ»: Դրքի մի օրինակ Ալազանը նվիրում է Գորկուն, որի հետ Չարենցը ծանոթ էր դեռևս 1928 թվականից:

Գորկու ճառը, ներթափանցված խորագույն հարգանքով ու սիրով բոլոր ժողովուրդների գրականությունների հանդեպ, ցնցող տպավորություն է թողնում բոլորի վրա: Ծավալվում է գործարար ու առողջ խոսակցություն: «Պոեզիան, պոետիական և պոետական ստեղծագործության խնդիրները ԽՍՀՄ-ում» զեկուցումով հանդես է գալիս Ն. Բուխարինը և պոեզիայի պատմական զարգացման ճանապարհի քննությունից ու առանձին բանաստեղծների երկերի վերլուծությունից հետո՝ պահանջելու իրավունքով ասում, որ հարկավոր է «վճռականապես, ամբողջ ֆրոնտով բարձրացնել բանաստեղծների և բանաստեղծական կուլտուրան», որ «Չի՛ կարելի մնալ այժմյան մակարդակի վրա»:

Համագումարը իր ընդգրկման չափանիշներով աննախադեպ էր նաև հայ գրողների համար: Հայ գրականության անցյալի ու ներկայի մասին ծավալուն զեկուցումով հանդես է գալիս Դ. Տեր-Սիմոնյանը: Ողջույնի խոսք է ասում Շերվանզադեն: Ելույթ են ունենում Չարենցը, Բակունցը, Դեմիրճյանը, Ն. Զարյանը, Զ. Եսայանը: Տեր-Սիմոնյանը իր զեկուցման մեջ շատ բարձր է գնահատում Չարենցին, նրան համարում հետհոկտեմբերյան հայ գրականության «ամենից ուժեղ խոշոր ներկայացուցիչը», նաև, նկատի ունենալով առաջին գրքի հրատարակության տարեթիվը, ասում, որ այս տարի լրանում է նրա գրական գործունեության 20-ամյակը: Այնուհետև նա շարունակում է.

Վերջին տարիներս Չարենցն իր ուժերը փորձում է փիլիսոփայական պոեզիայի բնագավառում: Չարենցը հսկայական ազդեցություն է գործել հայ պոեզիայի վրա: Խորհրդային Հայաստանի բանաստեղծների և խորհրդային Անդրկովկասի հայ բանաստեղծների մեծ մասը իր զարգացման մեջ ավելի կամ պակաս չափով ենթարկվել է Չարենցի ազդեցությանը: Դժբախտաբար մինչև այժմ այդ խոշոր բանաստեղծի լավագույն ստեղծագործությունները, որոնք մեծ

նշանակություն ունեն ամբողջ միության գրականության համար, ռուսերեն չեն թարգմանված (ԳԹ, 1934, № 23, 5 սեպտեմբերի)։

Տեր-Սիմոնյանը խոսում է նաև Վշտունու, Ալազանի, Մահարու, Զարյանի, Շիրվանզադեի, Դեմիրճյանի, Թոթովենցի, Մանվելյանի, Բակունցի, Զ. Եսայանի և այլոց մասին։ Բայց և զեկուցման վերջում նա չի մոռանում անհրաժեշտ կամքիններ և ասում, որ Զարենցը, Մահարին, Բակունցը, Թոթովենցը «անցյալի պատմության հարցերին նվիրված իրենց մի շարք ելույթներում թույլ են տվել որոշ չափով իդեալականացնել այդ անցյալը»։

Համագումարում Զարենցը ելույթ է ունեցել օգոստոսի 29-ի երեկոյան, համագումարի 21-րդ նիստում։ Նրա ելույթը «Հանուն սինթետիկ արվեստի» վերնագրով ժամանակին տպագրվել է «Խորհրդային Հայաստանում» և «Գրական թերթում», զետեղվել համագումարի նյութերի ռուսերեն ժողովածուի մեջ։

Իր ելույթում Զարենցը շատ բարձր է գնահատում ազգային գրականություններին նվիրված զեկուցումները և խնդիր դնում այդ ազգային առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ հարստացնել համայն խորհրդային գրականությունը և դրանով իսկ հասնել բազմակողմանի համադրությունների։ Որովհետև.

Որքան էլ փոխ լինեն մի ժողովուրդ և նրա գրականությունը, վերջինս չի կարող չունենալ իր ինքնատիպ, եզակի և անկրկնելի նրբերանգները, այն, որ հատուկ է միմիայն ավյալ գրականությանը և նրա լավագույն ներկայացուցիչներին։

Զարենցն անդրադառնում է նաև անցյալի ժառանգության ուսումնասիրության հարցին և բարձր գնահատում այդ ժառանգությունը ու նաև խոսում իր ստեղծագործության վրա հայ միջնադարյան պոեզիայի թողած բարերար ազդեցության մասին։ Ասում, որ խորհրդային գրողները պիտի իրար լրջորեն ճանաչեն և ոչ թե հենվեն մեկ-երկու պատահական թարգմանությունների վրա։ Նա նաև իր դժգոհությունն է հայտնում Բուխարինի զեկուցումից, որի մեջ ազգային գրականություննե-

բին քիչ տեղ էր հատկացված, իսկ հայ գրողներից հիշատակված էր սոսկ Հ. Հակոբյանի անունը։ Հանուն կյանքի «ահեղ ճշմարտության» բացահայտման՝ նա խնդիր է դնում հնուռ կանգնել ամեն տեսակի մանր-մունր վեճերից և կերտել ժամանակին արժանի բարձր արվեստ։

Ըստ հուշագիրների վկայության՝ Չարենցի ելույթը լավ ազդեցություն է թողել ունկնդիրների վրա։ Դա վկայում են շատերը, նաև՝ Մ. Իլկևիչը.

Վերհիշում եմ իմ հանդիպումները նրա հետ Մոսկվայում, խորհրդային գրողների հումանիստական առաջին համագումարի օրերին, զրույցները, որոնց մասնակցում էին Տիխոնովը, Ասեևը, հանգուցյալ Լուգովսկոյը։ Այն ժամանակ Չարենցը ապշեցնում էր մեզ ընդհանրապես գրականության և մասնավորապես ռուս գրականության մասին ունեցած իր հայացքների խորությամբ ու լայնությամբ։ Նա իրեն զգում էր համամիութենական գրական պրոցեսի մասնակից... (Լավտեսական տրագիզմ.— Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, 1961, էջ 32—33)։

Համագումարի վերջում Չարենցն արժանանում է Գորկու հատուկ վերաբերմունքին՝ գրողների ընտրովի շրջանակի կազմում հրավիրվում խնջույքի։ Այդ օրվանից նրան հիշատակ է մնում Գորկու ծխախոտի տուփը, որի վրա Չարենցը գրում է օրն ու ամիսը և վերցնում հետը ու մեկ էլ՝ Գորկու իրեն դիմելու ձևը՝ «Ահա երկիր Նաիրին» (տես՝ Ի. Չարենց, Չարենցի հետ.— Հուշեր Եղիշե Չարենցի մասին, 1986, էջ 388—389)։

Բարձր տրամադրությամբ հայ գրողները վերադառնում են Մոսկվայից և սեպտեմբերի 21-ին Երևանում, 25-ին Լենինականում կուսակցական, հասարակական և գրական ակտիվի առջև պատմում իրենց տպավորությունները։ Դ. Տեր-Սիմոնյանը, մտաբերելով Բուխարինի ճառը, ասում է, որ նա հանդես եկավ «մոնումենտալ արվեստի պահանջով, խորագույն պատմափիլիսոփայական ընդհանրացումների արվեստի պահանջով»։ Այս միտքը ձևակերպելիս՝ նա աչքի առջև պետք է որ ունենար հենց Չարենցին, որը իր վերջին երկու գրքերում դնում էր ճիշտ նույն գեղագիտա-

կան պահանջները, ու ինքն էլ գեղարվեստորեն իրագործում դրանք։ Չարենցի հանդեպ վերաբերմունքը կարծես թե դեպի դրականը փոխվելու միտումներ է դրսևորում, «Խորհրդային գրականության մի քանի հերթական խնդիրները» հոդվածում, որը նախորդեց երկու համագումարներին, Ա. Կարինյանը շատ բարձր էր գնահատել Չարենցի, նաև Բակունցի դերը ընթացիկ գրականության մեջ, մի տեսակ կարծեք ազատելով նրանց խմբագրության բանադրանքից.

Մեր գրական առաջավոր գործիչները հսկայական աշխատանք են կատարել նաև գրական լեզվի մշակման ուղղությամբ։ Եղիշե Չարենցն ստեղծել է արդեն իր դպրոցը։ Ակսելի ոճը միանգամայն ուրույն է և խարսխված հայ կլասիկների «լեզվական ժառանգության» վրա։ ... Եղիշե Չարենցն ու Ակսել Բակունցը կոչված են կատարելու շատ խոշոր դեր նույն այդ բնավայրում։ Երկուսն էլ բավական ուժեղ են ու զինված բոլոր այն զենքերով, որոնք անհրաժեշտ են ռեալիստ գրագետներին։ ... Չարենցի ու Բակունցի միակողմանի տենդենցների և առանձին սխալների դեմ պայքարողները պարտավոր են կոնկրետ երկերի ու աշխատանքների միջոցով ճաստատել իրենց պաշտապնած դրույթների ճշտությունը *(ԳՔ, 1934, № 18, 10 Հուլիսի)։*

Սա արդեն շատ լուրջ գնահատական էր, երբ արժեքի դիմաց պահանջվում է արժեք ստեղծել և ոչ թե խմբակային բնազդներով ճառեր ասել։

Նույն այս օրերին Չարենցն իր եռանդուն մասնակցությունն էր բերում «Հայ պոեզիայի անթոլոգիայի» նախապատրաստական աշխատանքներին, որը Մոսկվայում ռուսերեն պիտի լույս ընծայեր «Acedemia» հրատարակչությունը։ Լրացումներով և նոր բաժնի հավելումով, որը պիտի ընդգրկեր նորագույն շրջանի պոեզիան, այդ գիրքը լինելու էր Բրյուսովի խմբագրած «Հայաստանի պոեզիան» (1916) գրքի վերափոխված հրատարակությունը։ Չարենցին հանձնարարված էր միջնադարյան և ժողովրդական ստեղծագործության բաժնի աշխատանքի ղեկավարությունը։ 1934 թ. Նոյեմբերի 5-ին տեղի է ունենում անթոլոգիայի նյութերի նախնական քննարկումը։ Ընդարձակ զեկուցման մեջ Չարենցը խոսում է

Թարգմանության ընդհանուր սկզբունքների և որակի մասին։ Ըստ էության արտահայտվում են Ս. Շիրվինսկին և Պ. Անտոկոլսկին։ Ելույթ են ունենում Գ. Լևոնյանը, Կ. Միքայելյանը, Գ. Սևակը (տես՝ ԳՔ, № 29, 20 նոյեմբերի)։

Այս գրքի հանդեպ ուշադիր էր Գորկին, որը ժամանակին, Բրյուսովին զուգահեռ, կազմում և խմբագրում էր «Հայ գրականության ժողովածու» գիրքը, ինչը և 1916 թ. լույս ընծայեց Պետրոգրադի «Պարույս» հրատարակչությունը։ Նույն ժամանակ Գորկու խմբագրությամբ հրատարակվեցին նաև «Ֆինական գրականության ժողովածուն» և «Լատիշական գրականության ժողովածուն»։ «Հայ գրականության ժողովածուի» հետ կապված՝ Գորկին գործ էր ունեցել հայ գրողների, մասնավորապես՝ Վ. Տերյանի հետ։ Ահա այդ օրերի սիրով ու հիշողությամբ էլ մեծ գրողը միջամտում է այս անթոլոգիայի հրատարակությանը։ Նրա վերաբերմունքն արտահայտվել է 1936 թ. ապրիլի 17-ին գրած մի նամակում, որից մի հատված 1936 թ. տպագրեց «Խորհրդային Հայաստանը».

Մաքսիմ Գորկին «Պոեզիա Արմենիի» ժողովածուի մասին
(Մոսկվայից մեր սեփական թղթակից)

Մոսկվա.— «Պոեզիա Արմենի» ժողովածուի խմբագրությանը հասցեագրված նամակի մեջ Մաքսիմ Գորկին գրում է.

Որչափ ես կարող եմ դատել առհասարակ պոեզիայի մասին և որչափ կարելի է դատել հայերի՝ ռուսերեն թարգմանված պոեզիայի մասին, ինձ թվում է, որ Հայաստանի պոեզիայի անթոլոգիան կազմված է չափազանց սոլիդ կերպով։

Նա հնարավորություն է տալիս հասկանալու պոեզիայի աճման պատմությունը, պատկերացում է տալիս գեղեցկության և ուժի մասին, օրիգինալության և պատկերավորության մասին։

Այս ամենն այսպես։ Բայց դուք գիտե՞ք, որ լավը հաճախ եռ է պահում լավագույնի ծնունդը, իսկ լիակատարությունը երբեմն վեր է ածվում վատառողջ հաստատության։ Ուստի և ես խորհուրդ եմ տալիս ձեզ՝ մեկ անգամ ևս վերահայել ձեր նյութը։ 730 էջ բանաստեղծություն— այդ չափազանց շատ է։ Չէ՞ որ դեռ անհրաժեշտ կլինի նախաբան տալ։ Բացի նախա-

յարից հարկավոր է տալ նաև մի փոքր ծանոթություն հայկական տաղաչափության յուրահատկությունների մասին, պոետների համառոտ կենսագրություններ։ Առհասարակ ցանկալի է անթոլոգիան տեսնել օրինակելի կերպով հրատարակված, այնպես, որ այդ գրքի ձևին հետևեն մյուս անթոլոգիաները— վրացական, ուզբեկական և այլն (№ 95, 24 ապրիլի)։

Նոր պայմաններում Չարենցը կարծեք ստանձնել էր Ջերյանի դերը՝ անթոլոգիայի հարցով բաղմիցս եղել էր Խանջյանի մոտ, հեռագրել ու նամակներ հասցեագրել Մոսկվայում ապրող և գործին հետևող Կ. Միքայելյանին, բանակցել ռուս թարգմանիչների հետ։ Բայց Չարենցին վիճակված չէր տեսնել այդ գիրքը։ Այն լույս տեսավ 1938-ին, իհարկե, առանց նրա անվան հիշատակության...

Չարենցի կյանքի ամենաերջանիկ պահերից մեկը տարեվերջին՝ դեկտեմբերի 30-ին համալսարանի ուսանողության և դասախոսական կազմի հետ ունեցած հանդիպումն էր։ Լեփ-լեցուն դահլիճը նրան դիմավորում է հոտնկայս և խանդավառ ծափերով։ Հանդիսականների մի մասը նստելու տեղ չգտնելու պատճառով խռնվում է միջանցքում։ Ներածական խոսք է ասում Ս. Հարությունյանը, զեկուցում է Ռ. Ջարյանը, ելույթ են ունենում Ս. Հակոբյանը և ԱՄՆ-ից եկած և հանդիսությանը ներկա Պ. Սեյլյանը։ Ամփոփումով հանդես է գալիս Մ. Ոսկանյանը։ Խոսում է նաև Չարենցը, որին, թերթի վկայությամբ, «դահլիճը դիմավորեց բուռն ու երկարատև ծափահարությամբ» (ԳԹ, 1935, № 1, 10 հունվարի)։ Այս երեկոյի մասին ուշագրավ մանրամասներ է հաղորդում նաև զեկուցողը՝ Ռ. Ջարյանը, իր «Մայրամուտից առաջ» հուշերի գրքում (1968, էջ 451—458)։

Երջանկության կարճ ակնթարթը շարունակվում է նաև 1935 թվականին։ Հայաստանի խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ հունվարի 9-ին Չարենցն ընտրվում է ՀԽՍՀ կենտգործկոմի անդամ, հուլիսի 9-ին Մոսկվայում խորհրդային գրողների կազմում հանդիպում ունենում Ռ. Ջոյանի հետ։ Եվ միայն այսքանը... Մնացյալը շարունակվող ու ահագնացող հալածանքն է։

Դեռևս 1934 թ. վերջերից Բակունցի փոխադրած Այգեկցու առակների կապակցությամբ «Գրական թերթի» և «Խորհրդային արվեստ» ամսագրի միջև բուռն վեճեր ծագեցին։ Բակունցի փոխադրություններից ութ առակ «Աղվեսագիր» խորագրով 1934-ին տպագրվեց «Գրական թերթում» (№ 30, 29 նոյեմբերի), իսկ 1935-ին թվով 40 առակ լույս տեսավ առանձին գրքով։ Վշտունու գլխավորած ամսագրի մեղադրանքն այն էր, թե Այգեկցու առակները հասկանալի են և Բակունցը դրանք փոխադրել է ոչ թե զուտ գրական շահախնդրությամբ, այլ (օ՜, զարմանք) հանուն հոնորարի։ Սրվող վեճին, որը խմբակային կրքերի անիմաստ շիկացում էր, 1935 թ. հունվարի 22-ի որոշմամբ միջամտեց ՀԿ(բ)Կ կենտկոմը։ Որոշումը քննարկվում է գրողների ժողովում, այլոց հետ մեկտեղ ելույթ է ունենում նաև Չարենցը և հավանություն տալիս որոշմանը, ուր դրական շեշտ կար անցյալի դեմոկրատական բնույթ ունեցող արժեքների գնահատության վերաբերյալ, այդ թվում՝ նաև Այգեկցու առակների։ Մթնոլորտը կարծեք թե հարթվում է... Բայց մթնոլորտը լարված էր անասելի չափով, ամեն ինչ մեղադրվում էր, անմեն ինչի մեջ հանցանք էր որոնվում։ Ինչպե՞ս կարող էր Չարենցը իրեն լավ զգալ, երբ ոչ միայն ամբաստանվում էին ինքն ու գրական բարեկամները, երբ ոչ միայն խաչ էր քաշվում գրեթե ամբողջ դասական ժառանգության վրա, այլև կատաղի ու թունավոր հալածանքով քննադատվում էր մոտիկ անցյալը։ «Դաշնակցական ֆաշիզմը հին արժեքների ժառանգի դերում» հոդվածում Գ. Վանանդեցին գրում էր, որ դաշնակցությունն ստեղծեց, իհարկե, իր գրականությունը և ապա բնորոշում գրողներին. «Միստիկ, հիվանդոտ Ահարոնյանի գրականություն, անասնային բնազդը սրբագործող Շանթի դրամատուրգիա, ցեզապաշտ անտաղանդ գրչակների մի լեգեոն—Կոստան Զարյան, Արմենուհի Տիգրանյան և մյուսներ...» (ԳԹ, 1935, № 3, 20 փետրվարի)։ Ինչպե՞ս կարող էր լուրջ գրողը հրեն լավ զգալ, երբ ոտնահարվում էին բոլոր արժեքները, ոչընչացվում բոլոր չափանիշները և ասպարեզը տրամադրում կամ

թանավոր բնազդներով օժտված մարդկանց, կամ երբեմն հանրությունից հալումաշ եղող հանձարեղատարերին, որոնք տալիս էին անհատի պաշտամունքը: Իսկ գրականությունը վրա թափվում էին ամեն տեսակի հալածանքներ, քի իսկ այն էս է մնում «սոցիալիստական շինարարության արագ ընթացքից, որ մեր հայկական իրականության բուռն մարմիով պրոցեսներ գեռևս իրենց արտացոլումը չեն գտել գեղարվեստական գրականության մեջ: Եվ խնդիր է դրվում գեղարվեստորեն պատկերել գործարանների, կոլեկտիվների անհատականությունների, քաղաքացիական կռիվների պատմությունը: Գրական նոր հերթափոխ անցնում է սոսկինյան դիմավորության այդ առաջադրանքների կենսագործման, իհարկե, համար գա այնքան էլ հեշտ չէր:

Եվ ահա իր շուրջը կատարվող այս ահռելի անցուդարձի դժգոհ, գրական բարքերից զզված՝ 1935 թ. մարտի 8-ի Չարենցը մի հայտարարություն-դիմում է ուղղում ՀԽԿ վարչությանը և հատուկակամաբեն պահանջում իրեն ազատել գրողների միության և վարչության անդամի պարտականություններից: Նրա դիմումը քննարկվում է մարտի 11-ի Ալագանի ստորակած մի գրույցամբ քննարկմանը հրավիրվում է նաև Չարենցը, բայց նա մերժում է և իր պատասխան գրում. «Չեմ կարող գալ և առհասարակ խնդրում եմ հետագայում չհրավիրել ինձ գրական գործերին: Բոլորը համաձայնվեցինք և նրա հեռացման օգտին և Չարենցի հայտարարությունը ամենը քաղաքական բնույթ: Չայրացած բարկացած, նեղացած հատկապես գրական համախոհների որոնք ևս խոսել էին նրա գեմ, Չարենցը գրում է մի քանի բանաստեղծություն և գրատախտակում նրանց այդ արարքը «նեերքող երգողներին» բանաստեղծությունն ունի այսպիսի հետևյալ «Ինձ ես. Գ. Մ.-ից վտարելու առթիվ» և այսպիսի սկիզբ.

Դո՛ւ. Ակո՛վ. և դո՛ւ. «ճայերի» Ալագյո՛ն.
Եվ դո՛ւ, Գևորգի՛կ, և Կարե՛ն դու «ձեր».—
Դուք ճերատեսե՛ք կամքով մեծության—
Ինձ դո՛ւրս եք տեսե՛լ մեծության «ձեր»՝
Դուռտամասյան «Գրական Տեղ»—
Եվ կարծում եք. թե դուրս եք տեսե՛լ ինձ

Մեր երգանվեր վայրի՜ց սրբազան,—
Ուր ոտ չի դրել տանձման օրից
Նվ ո՛չ մի Նոյենց, ո՛չ մի Ալազան...
Ո՛չ, այդ չի այսօր պռեսիս ճուզում,—
Ձեզ չի՛ ենթարկվում Հելիկոնն ճայոց...
Պատում է ճոգիս տրտմություն մի ճոխ,
Որ փրփրաբեբան կիզել եմ ուզում
Ճակատին դուխ իմ՝ դափնու արժանի՝
Դռոշմ մատնիչի ու դավաճանի՝
Սև գերությունից ճառնած խնդագեմ՝
Իր երքին ելած ժողովրդի դեմ:

Ճիշտ այս նույն ոգով է գրված նաև «Մեր նոր Հորտերին» բանաստեղծությունը (ԳԱՓ, ՉՖ, № 14), որից երևում է, որ այդ օրերին Չարենցին կանչել են ՉԵԿԱ, մեղադրել ահաբեկչության մեջ, իսկ հանրապետության ղեկավարությունը հոխորտացել է նրա վրա:

Դա, իրոք, այդպես էլ եղել է: 1935 թ. փետրվարի 2-ին, 25-ին, մարտի 3-ին, 22—23-ին, նաև այլ օրերի Չարենցը ենթարկվել է հարցաքննության: Մեղադրական կասկածը եղել է այն, թե նա, իբր, ահաբեկչական գործողություններ է նախապատրաստում Լ. Արխայանի դեմ: Դրան ավելացել է և ՀԿՄ շարքերից դուրս գալու մարտի 8-ի դիմումը, որին տրվել է քաղաքական երանգավորում:

Այս օրերին մի սառը հոսանք է անցնում նաև Չարենցի ու համախոհների միջև: Բանաստեղծը ցավով խոսում է իրենց խումբը քայքայած «ոգու՛ խուժանության» մասին և տագնապ հայտնում, որ դժվար թե այսուհետև հավաքվի իրենց հին «քաբուևը»: Ամենայն հավանականությամբ այս օրերին է վերաբերվում «Նոյեմբեր» միության գործունեության վերաբերյալ Չարենցի գրառումներից մեկը: Դրանք սեղմ դրույթներ են միության ստեղծման, հիմնական ուժերի և խմբի տրոհման մասին.

«Նոյեմբեր».— իմ հիմնական մոտեցումը՝ զուտ գրական–էսթետիկական մոտեցում.— Գ. Մահարի— Մ. Արմեն (այն ժամանակ հետևողական պրոլետգրող).— հիմնական կադրը՝ ես, Գ. Մահարի, Մ. Արմեն, հետո— Ակսել,— Իմ ծանոթությամբ Ա.–ի հետ 1926 թ.–ին՝ արտասահմանից հետո.— իմ

անվստահելի վերաբերմունքը դեպի նա՝ սկզբում,— նրա գրական աշխատանքի երկու կողմը՝ հիանալի նովելիստ և մակերեսային օշերկիստ.—

«Մթնաձորը»,— գյուղական օշերկները.— նրա տարօրինակ ընթացքը սկզբից ևեթ միության ներսում.— էպիզոդիկ մասնակցությունը միության գործերին: «Խոսուճչ» —փոխադարձ սիմպատիաներ «Ն».-ի կենտրոնական ուժերի միջև՝ Չ–ց, Ա.ր–ն, Բ–ց, Մ–ի.— կենցաղային ամենի անկում.—

Բարեկամություն Ա–ի հետ. կրկին անշուշափելի *(ՉՖ, № 146, նաև՝ Անտիպ և չհավաքված երկեր, էջ 474)*:

Սա շատ կարևոր վավերագիր է գրական այդ միության ներկայացուցիչների հարաբերության այս փուլը պատկերացնելու համար: Սառն ու սթափ արձանագրելով իր այս խոհերը՝ Չարենցը նաև մեծ ցավ է զգում ստեղծագործական այդ դաշինքի տրոհման համար: Դրա վկայությունը «Տխուր կարուսել» բանաստեղծությունն է՝ «Ակսելին, Արմենին, Մահարուն» ուղերձով: Այն թեև գրվել է Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի առթիվ, բայց և շարժառիթը, ժամանակի դժվարություններին դիմագրավելով, պայքարի ու գործունեության նպատակը չկորցնելն էր.

Ներանա՞լ էր հարկավոր, բարանո՞լ գուցե,
Հանկանալու, զգալու համար այն նախի
Խռովությունը, որ ինձ եթե հարկածեն՝
Պիտո է սիրտդ գոցես, որ չար չեայի...
Դու պիտի սիրտդ գոցես, և աչխարդ ապա,
Եվ պիտի բաց պահես լոկ մեղանչող ճոպիդ,—
Որ չտեսնես հայացքներ՝ ահավ հանդիպած,—
Որ խեղճությունը հանկարծ սրտիդ չչոքի:
Որպեսզի լուռ կարենաս լռատանջ ու ամոթ
Ու դառնություն կրել դու, անգամ մատնություն,—
Եթե կոչված ես լինել հիմն՛ր կործանող,
Եթե գիտես, որ չկա խմիչ՝ առանց թույն:
Եթե զգում ես դու մեջ ոգի՛ ներթողի,
Սանձողի, կերտողի—առաչնորդի նար,—
Եթե անցնել ես ուզում—դժվարին ուղի,—
Եթե ատելի ես ուզում— և գիտես, թե ո՛ւր:—
Ա՞խ, պատմությանն այս այնքա՞ն, այնքա՞ն է ծանոթ,
Այս պատմությունը կյանքի, աչխարհի պես հին...
Հրապարակում է այն ինձ հասակից մանուկ,—

Պատկերազարդ գրեթուղ՝ «Մեծ մարդկանց մասին...»:
...Եվ մեծ հետո՛, եմ միայն հասկացել՝ հանախ
Արդեն բեկված,— ար. ավա՛ղ, գրեթուղ այն մեզ—
Միայն վարդեռն են գեբել, իսկ խոցերը չար—
«Պատմություն» են թվացել՝ գրված «ենց այնպե՛ս»...

1935 թ. հունիսի 6-ին, իր դիմումի համաձայն, Չարենցը վերականգնվում է գրողների միության անդամության և վարչության կազմի մեջ: Ժորյանի, Դեմիրճյանի, Բակունցի և Տեր. Սիմոնյանի ստորագրությամբ հաստատված այդ որոշմամբ ասվում է, որ Չարենցն ընդունում է «իր կողմից թույլ տված քաղաքական սխալները և խոստանում իր գործնական աշխատանքներում ուղղել այդ «սխալները» (Անտիպ և չհավաքված երկեր, էջ 697): Թե ի՞նչ բնույթի քաղաքական սխալներ էր թույլ տվել Չարենցը, այդպես էլ չի ասվում, բայց նրա հանդեպ գրական և կուսակցական ղեկավարության ցուցաբերած վերաբերմունքը գնալով սկսում է վատթարանալ: Բանաստեղծը փաստորեն մեկուսացվում է գրական-հասարակական կյանքից:

1935-ին նախատեսվում է հայ խորհրդային բանաստեղծների այց Լենինգրադ և հանդիպում տեղի գրողների հետ: Այդ կապակցությամբ «Լիտերատուրնի Լենինգրադ» թերթը տպագրում է բազմազան նյութեր, իսկ Ն. Տիխոնովը, «Ուրախությամբ ենք դիմավորում մեր բարեկամներին» հոդվածում, գրում է. «Այժմ Լենինգրադ եկող բանաստեղծների անունների կողքին պետք է նշել նաև... չափածոյի խոշոր վարպետ Եղիշե Չարենցի անունը»: Բայց Չարենցը չի ներդրավվում Լենինգրադ մեկնող պատվիրակության մեջ: Չարենցը չի ընդգրկվում նաև Մոսկվա մեկնող պատվիրակության կազմում: Մոսկվայի այեռդիայի երեկոն բացում է Վ. Կիրպոտինը: Զեկուցում է Դ. Տեր-Սիմոնյանը: Հանգամանորեն անդրադառնալով Վշտունու, Ալազանի, Չարյանի, Մահարու, Նորենցի, Սարյանի, Տարոնցու, Վահունու, Աղավնու ստեղծագործություններին զեկուցողը ասում է, որ «հանդիպման երեկոյին, բացի մյուսներից, կարդացվելու են նաև Հակոբ Հակոբյանի ու Եղիշե Չարենցի բանաստեղծությունները, որոնք պատվիրակության կազմի մեջ չեն»: Իսկ թե ինչո՞ւ

Չարենցը պատվիրակության կազմի մեջ չէր, իր հաղորդագրության մեջ, հենվելով Կիրպոտինի և Տեր-Սիմոնյանի տվյալների վրա, «Պրավդան» այսպիսի բացատրություն է տալիս.

Եղիշե Չարենցը իր ստեղծագործության առաջին իսկ օրերից և, դժբախտաբար, մինչև ամենավերջին օրերը գտնվում է հին հայկական նացիոնալիստական գրականության ազդեցության տակ: ...Եթե Եղիշե Չարենցը լրջորեն չմտածի, թե ուր է տանում նրան իր ստեղծագործական գիծը և ինչպիսի տեղենց ունեն նրա ստեղծագործությունները, եթե նա առաջվա նման չլսի, թե ինչ է ասում նրան խորհրդային ճնշադատությունը, ապա նա կարող է դառնալ դասակարգային թշնամու գաղափարական դիրքերի արտահայտիչը:

Այս հաղորդումը մեծ բավականությամբ արտատպում է «Գրական թերթը» (տես՝ 1935, №11, 20 մայիսի):

Չարենցը դուրս է մնում նաև տարեվերջին Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի կապակցությամբ Մոսկվա մեկնող աշխատավորության և մտավորականության ներկայացուցիչների պատվիրակությունից, որը դեկտեմբերի 30-ին արտակարգ ընդունելության արժանացավ Կրեմլում Ստալինի և երկրի մյուս ղեկավարների կողմից:

Այս հանդիպման մասին խոսենք քիչ մանրամասն: Իսկ մինչ այդ, պատկերացում տալու համար, թե բարոյական ինչպիսի մթնոլորտ էր տիրում երկրում, թե ինչ չափերի էր հասնում Ստալինի պաշտամունքը, ձայները տանք հենց իրենց՝ այդ օրերի ականատես-վկաներին:

Խորհուրդների Համամիութենական VII Համագումարում գրող Ա. Ավդեյենկոն հառ է ասում և այդ ճառը «Ինչու ես ծափահարեցի Ստալինին» վերնագրով տպագրում մամուլում: Ահա այդ ճառից մի շատ բնորոշ հատված.

Ընկեր պատգամավորնե՛ր: Ես զառամ ծերունի կդառնամ, բայց երբեք չեմ մոռանա, թե ինչպե՛ս երկու օր առաջ մենք ձեզ հետ միասին դիմավորեցինք Ստալինին: Ես երբեք ավելի բախտավոր չեմ եղել, տեսնելով և զգալով Սթալինի նկատմամբ տածվող մեծ սերն ու նվիրվածությունը: Դարեր կանցնեն, և ապագա կոմունիստական սերունդները մեզ կհամա-

րեն ամենից բախտավոր մարդիկ բոլոր մահկանացուներից, բոլոր դարերում երկրիս երեսին ապրած մարդկանցից, նրա՛ համար, որ մենք տեսել ենք Ստալինին, այդ հանճարեղ, իմաստուն, ժպտուն, սիրալիր, վեհորեն պարզ առաջնորդին: ...Երբ Ստալինը ամբիոն բարձրացավ, դահլիճում իր ուժի, ուրտի, բացակաճչությունների, զգացումների տեսակետից անկրկնելի ինչ-որ բան կատարվեց: Երկու հազար պատգամավորներ տեղից վեր ելան, ծափահարում էին, «ուռա՛» բացականչում, ժպտում էին նրան, մեր հարազատ Իոսիֆ Վիսարիոնովիչին: Մեզ բոլորս Ստալինի թիկունքին տեսնում էինք սոցիալիզմի երկիրը՝ գործարանները, իմնարկները, վերակառուցված Ուրալը, Սիբիրը, նոր մարդիկ, սոցիալիզմը:

Երբ ես հանդիպեցի Ստալինին, ինձանից զգացի նրա ուժը, նմայքը, մեծությունը: Ես ուզում էի երգել, բղավել, լաց լինել երջանկությունից և խանդավառությունից:

...Մեր սերը, նվիրվածությունը, ուժը, սիրտը, ներսությունը, կյանքը— բոլորը ինձ համար են, ա՛ռ, վերցո՛ւ, մեծ Ստալի՛ն, բոլորը քոնն է, մեծ հայրենիքի առաջնո՛րդ: Կարգադրիր քո որդիներին, որ ընդունակ են սխրագործությունների թե՛ օդում, թե՛ գետնի տակ, թե՛ ջրում, թե՛ ստրատոսֆերայում:

Բոլոր ժամանակներում բոլոր ժողովուրդների մարդիկ քո անունով կկոչեն այն ամենն, ինչ գեղեցիկ է, ուժեղ, իմաստուն, հիանալի:

...Երբ իմ սիրելի կինը երեխա ծնի, առաջին բառը, որ ես կսովորեցնեմ նրան, կլինի՝ Ստալին *(ԳՓ, 1935, № 4, 20 փետրվարի)*:

Ինչ ոգևորությամբ ես չէր մնում այս աղետալի հանդիպակառարությունից: Թերթերն ամեն օր ողջույնի հեռագրեր էին տպագրում՝ ուղղված առաջնորդին և նրա տեղապահներին, որոնք բոլորն էլ՝ Վորոշիլովը, Մոլոտովը, Մալենկովը, Բերիան, Միկոյանը իրենց պահվածքով ու արտաքինով, անգամ «անհրաժեշտ» բեղերով, կրկնում էին առաջնորդին, նրա հետ կիսելով փառքի քաղցր թմբիրը:

Հայաստանի Խորհրդայնացման 15-ամյակի առթիվ

150.000 հարվածային բանվորի և կոլտնտեսականի ստորագրությամբ նամակ է ուղղվում «Ընկեր Ստալինին», որն էլ այդ խանդավառ մթնոլորտում ընդունվում է հայ աշխատավորների պատվիրակությանը։

Ընդունելությունն անցնում է խորհրդակցության ձևով, որը բաց է անում Մոլոտովը։ Հայերեն ելույթ է ունենում Ստեփանավանի շրջանի Ստալինի անվան կոլտնտեսության նախագահ Մացակ Պապյանը և առաջնորդին հանձնում 150 հազարի կողմից ստորագրված նամակը։ Պապյանը Ստալինին հավանաբար շատ է դուր գալիս, որովհետև 1937-ին նա նշանակվում է ՀԽՍՀ ԿԳԿ նախագահ, իսկ 1938-ից մինչև 1954 թվականը զբաղեցնում ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի պաշտոնը։ Ահա այսպես էր Ստալինը վարձատրում իրեն հաճոյացողներին։ Այնուհետև առաջնորդի առջև ելույթ է ունենում Վաղարշապատի շրջանի «Արշալույս» կոլտնտեսության բրիգադիր Զաբել Բուդաղյանը, Ստալինին մատուցելով իր մեկ կոլտնտեսային աշխօրը, որպեսզի ցույց տա, թե ի՜նչ հարուստ է ապրում կոլեկտիվացման ճանապարհը բռնած հայ գյուղացիությունը։ Ըստ այդ մեկ աշխօրի գյուղացուն ընկնում է. հաց՝ 7 կգ, խաղող՝ 500 գրամ, գինի՝ 1 լիտր, օղի՝ կես լիտր, լոբի՝ 400 գրամ, փշատ՝ 300 գրամ, բացի այդ՝ դրամով 20 ռուբլի։ Իսկ ելույթ ունեցողի ընտանիքը վաստակել է 400 աշխօր։ Երջանի՜կ է Ստալինը։ Երջանի՜կ են հայ ղեկավարները։ Թատերական ներկայացումը լավ է մտածված։

Այնուհետև ելույթ է ունենում Ս. Զորյանը, ասելով, որ «Հայաստանի դրողները լավ են զգում իրենց, լավ են զգում և զբաղված են ստեղծագործական բերկրալի աշխատանքով»։ Հայաստանի թատրոնների մասին պատմում է Ավետ Ավետիսյանը, ապա Նաիրի Զարյանը կարդում է «Ստալինն» «պայծառ ու գունեղ ոտանավորը» (այս ընթերցանը դեռ կանդրադառնանք)։ Այնուհետև կրկին խոսում է Մոլոտովը։ Ահա ընթրի հաղորդագրությունը.

Ողջույնի առաջին բառերը ընկ. ՄՈԼՈՏՈՎՆ արտասանում է հայերեն լեզվով։ Եզրափակման մեջ ընկ. ՄՈԼՈՏՈՎՆ ասում է, թե ընկ. ՍՏԱԼԻՆԻ առաջարկությամբ այս խորհրդակցու-

թյան նախագահությունը միջնորդություն է հարուցում կառավարության առաջ՝ հայկական պատվիրակության անդամներին Միության բարձր պարգևներով՝ շնորհներով պարշևատրնու վերաբերյալ։ ... Խորհրդակցության մասնակիցներից յուրաքանչյուրին ընկ. ՄՈԼՈՏՈՎԸ ներ է հանձնում կառավարության կողմից— մեկական պատեֆոն՝ իր պլաստինկայով և ժամացույցներ— տղամարդկանց՝ գրպանի, իսկ կանանց՝ ձեռքի ոսկյա ժամացույցներ *(ԴԲ, 1936, № 1, 10 հունվարի)*։

Լենինի շքանշանի են արժանանում Ա. Խանջյանը և Ա. Գուլոյանը, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի՝ Մ. Սարյանը, Ա. Ավետյանը, Ս. Զորյանը, Պատվո նշան շքանշանի՝ գրականագետ Մ. Հակոբյանը և այն ժամանակ կոլտնտեսային թերթի խմբագիր, արձակագիր Վ. Անանյանը։ Ըստ ամենայնի բոլորը գոհ են՝ երկրի ղեկավարները ստացել են հավատարմության երդումներ, փառք ու մեծարում, հանրապետության ղեկավարները և արվեստի աշխատողները՝ շքանշաններ, իսկ հարվածային աշխատավորները՝ թանկարժեք նվերներ։ Այդ երջանկությամբ էլ մի մեծադիր լուսանկար պահում է թերթի էջը։ Ստալինը բարեկամաբար գրկել է հայ գեղջուկ կնոջը։ Նստած են մյուս ղեկավարները։ Աջ և ձախ կողմերում կանգնած են Ն. Զարյանը և Ս. Զորյանը։ Ոչ ոք այդ պահին երևի չէր գիտակցում, որ չանցած մի քանի ամիս իբենցից ամանք, այդ թվում Հայաստանի ղեկավարները՝ Խանջյանն ու Գուլոյանը, կսպանվեն «ժողովուրդների հոր» ձեռքով։ Ահա այսպես Ստալինը գիտեր ժպտալ և ոչընչացնել։ Ահա այսպես նրա սատանայական շուրջպարը գնահատվում էր որպես «սրտաշարժ ու ոգեպնդող ուշադրություն, հայրական հետաքրքրություն դեպի մարդը, դեպի կադրերը, դեպի գրողներն ու արվեստագետները»։

Թերթի նույն համարը տպագրել է նաև Զարյանի և Զորյանի ելույթների շարադրանքը։ Ահա Ն. Զարյանի ելույթը.

Ընկերներ, ես պատվիրակության անդամ չեմ։ Ես խնդրեցի, որ ինձ կրեմլ բերեն. վաղուց էի երազում տեսնել ընկ. Ստալինին։ Եվ ահա իմ կյանքի այդ երջանիկ, ամենաբերկրալից օրը հասավ։ Ես կարդում եմ հայերեն իմ «Ստալին» ոտանավորը։

Բուռն ծափահարությունների տակ Ջարյանը ոգում է.

Աֆիլլեսին Համերն երգեց, Ռուստամ-Ջալին Ֆիրդուսին,
Ոսկեզօծված ճազար երգով Բռնապարտի փառքը սին...
...Երգում եմ Քեզ, մեծ Ստալին, դու ճարազատ ամենքին,
Դու մարդկային երջանկության ճարտարապետ ու դարբին:

Այսքանից հետո Ջարյանը շարունակում է.

Իմ երջանիկ ժողովրդի մեծ սերն եմ մատուցում Քեզ՝ ընկեր Ստալին, երգելով Քեզ՝ մեծ առաջնորդ: Այդ դու ես ժողովուրդների երջանկության ինժեներն ու դարբինը (ծափահարություններ):

Սրանից հետո Ջարյանը առիթը բաց չի թողնում փառաբանելու առաջնորդին: Բելոռուսիայի ժողովրդական բանաստեղծ Յանկա Կուպալային ուղղած ողջույնը նա ավարտում է այս խոսքերով. «Կեցցե՛ աշխատավոր մարդկության առաջնորդ և գրողների մեծագույն բարեկամ Ստալինը (բուռն ծափահարություններ)»: Նույնը նաև Բելոռուսական պոեզիայի վերաբերյալ ունեցած ելույթում.

...մեր անծայրածիր հորիզոնի վրա ավելի ու ավելի է բարձրանում ինտերնացիոնալիզմի արեւաշող դրոշը: Այդ դրոշն իր հզոր ձեռով բռնել է Մարքսի, Էնգելսի և Լենինի մեծ ժառանգ, ժողովուրդների մեծ բարեկամ, մարդկության երջանկության մեծ ճարտարապետ, - մարդկային պատմության մեծ արեգակ, հանճարեղ Ստալինը (բուռն ծափահարություններ) *(ԳՓ, 1936, № 5, 9 փետրվարի):*

Այս ամենը ապարդյուն չի անցնում: «Ստալինն» բանաստեղծությունը նրան բերում է բարձրագույն պարգև՝ Լենինի շքանշան, որին նա Ս. Վուրղունի և Ա. Լահութիի հետ մեկտեղ արժանանում է հենց 1936-ի հունվարին:

Հայ աշխատավորների ընդունելության ժամանակ Ստալինը հետաքրքրվում է Չարենցի որպիսությամբ: Այս ուշադրությունը բավական էր, որպեսզի նրա հանդեպ փոխվեր վերաբերմունքը: 1936 թ. հունվարին նա նշանակվում է Պուշկինի մահվան 100-ամյակի առիթով ստեղծված «Հատուկ հանձնաժողովի» նախագահ, որի մեջ մտնում էին մշակութային-կուսակցական բնագավառի 27 բարձրաստիճան ներկայացուցիչ: Հունվարի 19-ին կենտկոմում հրավիրվում է

հանձնաժողովի առաջին նիստը։ Հակիրճ խոսքով այն բացում է Չարենցը, որից հետո զբաղվում են կազմակերպչական աշխատանքներով։ Չարենցը ամեն ինչ անում է ամենաբարձր մակարդակով։ Նրա առաջարկությամբ ստեղծվում է չորս ենթահանձնաժողով՝ գրական-հրատարակչական, Պուշկինի հիշատակը հավերժացնող ձեռնարկումների, մասսայական աշխատանքների, ցուցահանդեսների կազմակերպման։ Առաջինի և երկրորդի մեջ մտնում է նաև Չարենցը։ Այս հաղորդման հետ մեկտեղ «Գրական թերթը» (1936, № 2, 20 հունվարի) տպագրում է նաև Չարենցի մեծածավալ դիմանկարը՝ արված նույն թվականի և նույն ամսի 14-ին, ինչպես նաև Ալազանի «...Օպերային թատրոն ունե՞ք,... ինչպե՞ս է ապրում գրող Չարենցը» Ստալինի խոսքերով վերնագրված հոդվածը, որի մեջ նա իր անմնացորդ հիացմունքն է հայտնում առաջնորդի վերաբերմունքի հանդեպ.

Ավելի քան հուզիչ է այն հանգամանքը, որ առաջնորդը հարցնում է մեր մեծ բանաստեղծի դրության մասին։ Նա մտահոգված է, թե ինչպե՞ս է ապրում հայ ժողովրդի բանաստեղծը։ Ինչպե՞ս է նա զգում իրեն։... Այդ հարցումից ոչ միայն Չարենցն է իրեն անսահման երջանիկ ու վարձատրված զգում, այլև Հայաստանի բոլոր խորհրդային գրողները, մեր ողջ մտավորականությունը։ Այդ հարցումը մի նոր, մի զորավոր փաստ է այն բանի, թե ինչպես երբեմնի տիրապետված փոքր ժողովուրդները և սրանց գրականության ու մտքի մշակները դրված են անսահման երջանիկ պայմաններում, որոնց մասին մտածում են մեր երկրի աշխատավորներից սկսած մինչև մեծ Ստալինը։

Այսպիսի երկյուղածությամբ Ալազանը իրավունք է խընդրում առաջնորդին ասելու, որ «Հայաստանի գրողները շատ լավ են ապրում»։

Չարենցի հանդեպ փոխված վերաբերմունքն արտահայտվում է նաև «Գրական թերթի» փետրվարի 12-ի № 4-ում Ս. Հարությունյանի տպագրած «Չարենցը և կլասիկ պոեզիան» հոդվածի տպագրությամբ, որը երբևէ Չարենցի մասին եղած լավագույն հրապարակումներից մեկն է։ Հակադրվելով անցյալի մշակութային ժառանգությունը ժխտողներին ու նաև

Չարենցին այդ տեսանկյունից քննադատողներին, հեղինակն ամենայն իրավամբ գրում է.

Անցյալի պոեզիայի մեջ Չարենցի ուշադրությունն ամենից առաջ գրավում են պոետական օրգանական, ամբողջական դեմքեր, դպրոցներ և ուղղություններ: ...Սակայն նրա ուշադրությունը կլանում է կուլտուրական—ամբողջականը, իդեապես և արվեստով բարձրը, նշանակալիցը, օրինաչափականը, կլասիկը՝ այս բառի ամենախոր բմբռնումով: Անցյալի պոետական արվեստի դեմքերն ու ուղղությունները ենթակա տարր են Չարենցի ստեղծագործության մեջ: «Կարգադրիչը», գերիշխողն իմն է:... Իր պոետական հոգևոր-ինտելեկտուալ հսկայական պահանջներին ելք տալու համար Չարենցն անխոնջորեն խոր ակոսներ է բաց անում մեր ողջ պատմության մեջ:... Պայմար համաշխարհային կլասիկ պոեզիայի բարձունքներին տիրանալու համար— սա է Չարենցի դեպի այդ պոեզիան ունեցած վերաբերմունքը... Չէր լինի Չարենցի հզոր արվեստը, եթե չլիներ կլասիկ պոեզիան և այնքան արգասավոր չէր լինի կլասիկ պոեզիայի ճշգրտությունը տվյալ դեպքում, եթե չլիներ Չարենցի ինքնուրույն տաղանդը, որի շնորհիվ նա ընդունեց անցյալի արժեքները... Չարենցը ամենից առաջ չի ճանաչում ստեղծագործական ոչ մի սահմանափակություն...

Այսպիսի խոսքեր, այն էլ հրապարակավ, այն էլ 30-ական թթ. իր շուրջն ստեղծված թունավոր մթնոլորտում Չարենցը համարյա թե չէր լսել: Բայց և, դժբախտաբար, Չարենցի կենդանության օրոք, սա եղավ գնահատության ամենավերջին խոսքը:

Թեև 1936-ին լույս են տեսնում բանաստեղծի նախկինում տպված գործերը՝ «Պոեմներ», «Մահկալ Սաքոյի պատմությունը», բայց նա լի էր նոր հղացումներով:

Մայիսի 9-ին Ֆրանսիայից դուրս է գալիս Հայաստան ներգաղթող հայ տարագիրների մի խումբ, որն իր հետ բերում է Կոմիտասի զմռսված աճյունը և արխիվը: Նրանք տեղ են հասնում մայիսի 25-ին: Կոմիտասի սրբազան աճյունի վերադարձն էլ առիթ է դառնում ստեղծելու «Կոմիտասի հիշատակին» պոեմը:

Մինչ Չարենցի հանճարը ստեղծագործական ոգորումների մեջ էր՝ գրական կյանքում ծավալվում է մի նոր ասուլիս՝ նյութ ունենալով նատուրալիզմի և ֆորմալիզմի հարցերը, դրանց դեմ տարվող պայքարի արդյունավետ ուղիների որոնումը։ Ասուլիսն սկսվում է 1936 թ. ապրիլի 26-ին և ավարտում 28-ին։ Զեկուցել է Դ. Տեր-Սիմոնյանը։ Ալազանը կարդացել է Չարենցի նամակը, որը հիվանդության պատճառով ներկա չի եղել։ Նամակում, որից մի պատառիկ ժամանակին տպագրվել է մամուլում, Չարենցը գրել է.

Իմ խորին ճամոզմամբ մեր դիսկուսիան պետք է ընթանա սկզբունքային բարձր մակարդակով և պետք է բացահայտվեն ոչ միայն ֆորմալիզմի և նատուրալիզմի տարրերը, այլև այլ կարգի թերություններ ևս, որոնցով հաճախ տառապում են մեր երկերը *(VI, էջ 473)։*

– «Ֆորմալիզմի մի քանի արտահայտություններ մեր գրականության մեջ» վերնագրով տպագրած ելույթում Մ. Արմենը նախ քննադատում է իր «Երևան» վեպը, որը, ըստ նրա, ֆորմալիզմի «ամենաբնորոշ օրինակներից մեկն է» մեր գրականության մեջ, այնուհետև Չարենցի «Մահվան տեսիլ» պոեմը, Վշտունու, Մահարու, Զարյանի որոշ բանաստեղծություններ։ Ըստ նրա՝ Զարյանի մոտ ֆորմալիզմն արտահայտվել է սխեմատիզմի ձևով (տես՝ ԳԹ, 1936, № 9, 10 ապրիլի)։ Իր պատասխան հոդվածում՝ «Փայլուն սրախաղություն, բայց ոչ բուն ճակատամարտ» (տես՝ ԳԹ, 1936, № 11, 30 ապրիլի) և ելույթում (տես՝ ԳԱԹ, գրողների միության ֆոնդ, № 13, այսուհետև՝ ԳՄՖ) Ն. Զարյանն առարկում է Արովին և միաժամանակ քննադատում Չարենցի «Քամբապետ Շավարշը», «Գիրք ճանապարհի» լեզուն և ասում, որ Չարենցի լեզուն մեր պոեզիայի ճանապարհը չէ։ Նա նաև փքուն է համարում արևմտահայ պոեզիան և դրան հակառակ ասում. «Մենք պետք է օգտվենք ռուսական մեր պայծառ պոեզիայից», կարծես ռուսական պոեզիան պետք է հայ պոեզիայի լեզու մշակեր։ Դրա փոխարեն նա իրեն ազատում էր նացիոնալիզմի վտանգից և ապահով ապաստանում ինտերնացիոնալիզմի այս դեպքում ոչինչ չտվող, այսինքն՝ կեղծ գաղափարների թաքստոցում։ Չարենցին և արևմտահայ

պոեզիայի լեզուն քննադատում են նաև Ս. Վահունին և Հ. Քոչարը։ Ըստ նրանց՝ Սիամանթոյի և Վարուժանի պոեզիան և լեզուն «ազգայնամոլական» են, «շովինիստական» ու «միստիկ» և «դրական ազդեցություն չեն կարող ունենալ»։ Վահունին «Մահվան տեսիլ» պոեմի հետ մեկտեղ ֆորմալիստական է համարում նաև Չարենցի «Սասունցի Դավիթը», «որովհետև Հ. Թումանյանից հետո... ոչ մի քայլ չի արել առաջ», իսկ նրա լեզվի մասին ասում է.

...Նա ետ է տարել իր լեզվական ֆակտուրան նույնիսկ Թումանյանի լեզվական ֆակտուրայից։ Այնտեղ կան այնպիսի բառեր, որոնք բոլորովին արխայիկ են, կարկատած... (ԴԱԲ, ԳՄՖ, № 13)։

Արևմտահայ պոեզիայի ավանդույթները նորոգելու համար քննադատվում են նաև Ալազանը, Նորենցը, Տարոնցին։ Իսկ Չարենցը՝ ամբողջ հայ մշակույթի արժեքների նորոգողը, ըստ Քոչարի, դարձել է «մի քար, որ ընկած է խորհրդային պոեզիայի ճանապարհին»։ Ուստի՝ այդ քարը պետք է «դեն շպրտվի»։ Եվ ապա.

Կան մարդիկ, որոնք մտածում են, թե պատմությունը ապագայում նրանցից գոհ կլիներ, որոնք բարյացակամ վերաբերմունք են ունեցել դեպի Չարենցը (ԴԱԲ, ԳՄՖ, № 17)։

Զ

Ահա այս օրերին էլ վրա է հասնում քաղաքական մեղադրանքների հերթական ալիքը, որի առաջին զոհերից մեկը 1936 թ. հուլիսի 9-ին դառնում է Ա. Խանջյանը։ Ինչքան էլ նա Բերիայի սադրանքներին ու, ընդհանրապես, ստալինյան վարչակարգի պարտադրանքին տուրք տալով, երբեմն նույնիսկ ձևականորեն քննադատում էր ազգային դեմք ու դիմագիծ ունեցող գրողներին, բայց և այնպես հոգով նրանց հետ էր։ Խանջյանի սպանությունը ազգային մտավորականության և կուսակցական գործիչների մահազդի գույժն էր։ Իսկ Ստալինին ու Բերիային «անհրաժեշտ» էր մաքրել Հայաստանը, որովհետև նրանք մտադիր էին խորհրդային այդ հանրապետությունը վերածել մարզի և... կցել Վրաստանին։ Դրա համար պետք էր նախ արմատախիլ անել ազգայինը։

Իսկ այդ ժամանակ ամբողջ երկիրը բարեխղճորեն քննար-

կում էր ստալինյան սահմանադրության նախագիծը, ապա Ն ողջունում սահմանադրության ընդունումը։ Գրողները վերստին առաջ են ընկնում և ողջունում դարի այդ «մեծագույն» փաստաթուղթը։ Նրանց մեջ էին ոչ միայն գրեթե բոլոր խորհրդայինների գրողները, նաև՝ Ջարենցը, այլն՝ հենց սահմանադրության ընդունման օրը հայրենիք վերադարձած Խահակյանը, Ֆրանսիայից՝ Արագոնը, Ռոլանը, Ժիդը, Իսպանիայից՝ Ալբերտին... Բոլորն էլ լուսավոր դեմքեր։

Բայց և չարագույժ լուրերը սկսում են հաջորդել մեկը մյուսին։ 1934 թ. դեկտեմբերի 1-ին սպանվել էր Կիրովը, 1935-ի հունվարի 25-ին՝ Կույբիշևը։ 1936 թ. հունիսի 18-ին, 69 տարեկան հասակում վախճանվում է Գորկին։ Ըստ բժիշկների պաշտոնական ախտորոշման՝ գրիպից, թոքերի բորբոքման և 40 տարվա թոքախտի սրացման հետևանքով։ Հունիսի 8-ին հիվանդ Գորկուն այցելել են Ստալինը, Մոլոտովը, Վորոշիլովը և ասել իրենց մխիթարանքի վերջին խոսքը։ Մինչև դավեր նյութելը և հետո Գորկու մահվան մեջ Բուխարինին ու Ռիկովին մեղադրելը, Ստալինը մեծ գրողի բարեկամի համարում էր ձեռք բերել։ Հիշենք 1932 թ. Գորկու գրական գործունեության 40-ամյակի կապակցությամբ նրա հղած ողջույնը.

Թանկագին Ալեքսեյ Մաքսիմովիչ, սրտանց ողջունում եմ Ձեզ և պինդ սեղմում Ձեր ձեռը։ Ցանկանում Ձեզ երկար կյանք ու աշխատանք՝ ճուրախություն բոլոր աշխատավորների և ի սարսափ բանվոր դասակարգի բոլոր թշնամիների։ Ի. Ստալին *(ԳՔ, 1932, № 20, 30 սեպտեմբերի)։*

Ստալինի այցելությունը Գորկուն ամբողջ երկրով թնդացնում է մեծ գրողի ճակատագրով առաջնորդի ունեցած «խոր մտահոգությունը»։ Իսկ Բուխարինի ու Ռիկովի դատավարության ժամանակ, 1938 թ. մարտի 2-ին, մի շարք սպանություններ նրանց վրա բարդելուց հետո, նաև ասում են. «Այդ նրանք նախապես մտածված պլանով սպանեցին մեր հանճարեղ գրող Գորկուն»։ Ուրեմն՝ Գորկու մահը պատահական չէր։ Մեծագույն գրողի ներկայությունն ու համաշխարհային հեղինակությունը «ավելորդ աչք» էր՝ ուղղված Ստալինի ու նրա վարչակարգի գործունեությանը։

Գորկու մահվանը Ջարենցը արձագանքեց երկու հոդված-

ծով։ Նախ հունիսի 20-ին Երևանի «Կոմունիստ» ռուսերեն լրագրում տպագրվեց նրա «Մեծագույն կորուստ» խոսքը, այնուհետև հունիսի 20-ին «Խորհրդային Հայաստանում»՝ «Հանճարների և աստղերի ուղին» հոդվածը։ Վերջինս ուներ «շարունակելի» ծանուցումը։ Բայց հոդվածի շարունակությունը այդպես էլ չգրվեց։ Ամենևին ճիշտ չի լինի կարծել, թե Զարենցը «ի վիճակի չեղավ» գրելու հոդվածի երկրորդ մասը, ինչպես վկայում է Խ. Սարգսյանը (տես՝ Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, էջ 350)։ Հավանականն այն է, որ Չարենցը իմացել է Դորկու մահվան հետ կապված ճշմարտությունը, իսկ ճշմարտությունն ասել չէր կարող։ Այդ պատճառով էլ չի գրել հոդվածի շարունակությունը։

Անակնկալ մահերն ու «ինքնասպանությունները» շարունակվում էին։ 1937 թ. փետրվարի 18-ին 51 տարեկան հասակում «սրտի կաթվածից՝ հանկարծամահ եղավ» ԽՍՀՄ ծանր արդյունաբերության ժողկոմ Օրջոնիկիձեն։ Նույն թվականի ապրիլի 13-ին 40 տարեկան հասակում «թոքերի տուբերկուլյոզից» իր մահկանացուն կնքեց Իլյա Իլֆը։

1936 թ. օգոստոսից սկսվում է տարվա ամենամեծ գործը, այսպես կոչված «տրոցկիստական-զինովևական տեռորիստական կենտրոնի» դատավարությունը։ Պետական մեղադրող ԽՍՀՄ դատախազ Ա. Վիշինսկին իր ճառն ավարտում է «Դընդակահարել կատաղած շներին, բոլորին մինչև վերջին մարդը» խոսքերով և օգոստոսի 19-ի դատավճիռով գնդակահարության պատի տակ կանգնեցնում Զինովևին, Կամենևին, թվով 16 մարդու, այդ թվում նաև Վաղարշակ Հարությունի Տեր-Վահանյանին և բռնագրավում անձնապես նրանց պատկանող ամբողջ գույքը։ Վիշինսկու հետ մեկտեղ դատավճիռն ստորագրել էին Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի նախագահ Վ. Ուլրիխը և ուրիշ երկու հոգի։ ԽՍՀՄ Ներքին գործոկոմի նախագահությունը մերժում է դատավճռի բեկանումը։

Միջանկյալ ասենք, որ Վ. Տեր-Վահանյանը, որն աշխատել էր Մոսկվայում գործող Խորհրդային Հայաստանի կուլտուրայի տանը և տնօրինել տպարանի գործունեությունը, պրակտանդետ Ը. Վահանյանի հորեղբայրն էր, որը եղել էր

«Խորհրդային Հայաստան» օրաթերթի խմբագիր և ապա՝ Ամա-
սիայի շրջկոմի քարտուղար։ Նվ այն օրերի մասնակցությամբ,
Վ. Տեր-Վահանյանի անվան հետ կապվում է նաև Ա. Բակունց-
ի և Ն. Ստեփանյանի «դործը», ըստ որի՝ իրենց ահաբեկչա-
կան ծրագրերը իրականացնելու նպատակով վերջիններս
կապ են ունեցել նրա հետ և ղեկավարվել ընդհանուր կենտ-
րոնից տրվող ցուցումներով։

Չինովևի և Կամենևի, ինչպես նաև մյուսների դեմ ուղղված մեղադրանքը, բացի տրոցկիզմին հարելուց, նաև այն էր, որ նրանք տեռորի ճանապարհով իբր թե մտադիր էին ասպա-
րեզից հեռացնել ժողովրդի «հայր» Ստալինին և խորհրդային մյուս ղեկավարներին։ Հարմար առիթ էր և կիրովի սպանու-
թյունը բարդեցին այս խմբի վրա։

Եթե կենտրոնում կան դավաճաններ, ուրեմն՝ այդպիսիք պետք է լինեն նաև ծայրամասերում։ Այս «մաքրագործմա-
նը» անմիջապես հաջորդում է Բերիայի «Փոշիացնել, հող-
մացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին» ճառը, որն ուղղվ-
ած էր Թիֆլիսում, Բաքվում և Երևանում, ապա և՝ Լենինա-
կանում, Բաթումում և Կիրովաբադում տրոցկիստական-զի-
նովևական խմբակների բացահայտմանն ու մերկացմանը։ Առավել չափով նա խոսում է Հայաստանի մասին՝ աչքի առաջ ունենալով Ա. Խանջյանին, Ա. Գուլոյանին և Ն. Ստեփանյանի, այսպես կոչված, «խմբակը»։ Մեղադրանքն այն էր, որ Խանջյա-
նը հետևողականորեն չի զբաղվել հանրապետությունում իբր թե գործող «նացիոնալիստական խմբերի» մերկացմամբ, որ նա տևական նամակագրական կապ է ունեցել «ոմն» Ա. Զո-
պանյանի հետ, իսկ վերջինս էլ նրան հուշել է վերանայել Հայաստանի տամաններների հարցը, մամուլում քիչ քննադա-
տել դաշնակցության գործունեությունը։ Բերիայի եզրա-
կացությունն այն էր, որ Խանջյանը «տոգորված էր նացիո-
նալիզմով» և հովանավորել է համաեվման խմբակի գործու-
նեությունը։ «Ա. Խանջյանը դիտակցելով իր այդ կոպիտ քա-
ղաքական սխալները,— շարունակում է նա,— փոխանակ...
դրանք գործնականորեն ուղղելու, ցուցաբերեց ամոթալի փոք-
րոգություն և դիմեց ինքնասպանության ակտի» (ԳԲ, 1936, № 19, 25 օգոստոսի)։

«Դրական թերթի» այս նույն համարում, ուր տպագրված են Վիշինսկու և Բերիայի ճառերը, կան նաև Հայաստանին վերաբերող և հայ գրողներին ու մտավորականությանը առընչվող այլ ելույթներ, որոնք անհնար է անտեսել ոչ միայն ընդհանրապես, այլև՝ Չարենցի բարոյահոգեբանական վիճակը պատկերացնելու առումով։

Թերթի «Միշտ բարձր պահել պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը» խմբագրականում «մերկացվում» են առանձին գրողներ, ովքեր, իբր, հովանավորվել էին Խանջյանի կողմից և ովքեր՝

Մեր գրականության մեջ ճանդես են գալիս որպես նացիոնալիզմի տիպիկ արտահայտիչներ (Բակունց, Տեր-Սիմոնյան, Վանանդեցի, Թոթովենց, Ալազան, Նորենց, Մահարի և ուրիշներ)... Ավելին, Ա. Բակունցը, այդ fողարկված դաշնակը մեր կուսակցության շարքերում, Խանջյանի կողմից ճայտարարվեց որպես մեր գրականության վարպետներից մեկը։

Այնուհետև քննադատվում են Բակունցի, Տեր-Վահանյանի, Վանանդեցու ուսումնասիրությունները Աբովյանի մասին, որոնք իբր թե Աբովյանին ուժի են դարձրել ի հայտ բերելու իրենց թաքնված նացիոնալիզմը։ Ասվում է, որ Բակունցը «Միրանի փողը» պատմվածքում «քողարկված կերպով անցկացնում է ֆաշիստական դաշնակցության քարոզները», Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» վիպակը շաղախված է «զոոլոգիական նացիոնալիզմով և թրքատյացությամբ»։ Որ իբր Բակունցի խմբակը (Ս. Հարությունյան, Խ. Մարգսյան և ուրիշներ) «իրենց փեշակ էին դարձրել նացիոնալիստական երկերի գովերգը», իսկ Տեր-Վահանյանն ու Ստեփանյանը տեռոր էին կազմակերպում «կուսակցության լավագույն զավակների դեմ»։ Հալածվում են նաև «սև ցուցակի» մեջ թվարկված մյուս գրողները։ Հալածանքը բաժին է ընկնում նաև Ադրբեջանում ապրող ու ստեղծագործող հայ գրողներին՝ Թ. Հուրյանին և Մ. Դավթյանին։

«Դրական թերթի» այս նույն համարում տպագրվել է նաև Ն. Չարյանի «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով» հոդվածը՝ ուղղված Բակունցի դեմ։ Ըստ նրա՝ 1923 թ. նոյեմբերի 20-ին խորհրդային Հայաստանում դաշնակցության

կուսակցության լուծարքի ժամանակ Բակունցը ամբողջապես չի հրաժարվել այդ կուսակցության գաղափարախոսությունից և... «սողացել է գրական ասպարեզ»: Դրան հաջորդում է Բակունցի երկերի այսպիսի «վերլուծությունը».

Բակունցն առտնինայտում է այն միտքը, թե հայ գյուղացին բնությանն ու վայրի գազաններին ձուլված տարերային մի ֆենոմեն է և իր կենցաղով ու հոգեբանությամբ համարյա չի տարբերվում աղջից:... Այդ լղարիկ հատվածներում չկա մարդկային ոչ մի կենդանի կերպարանք, իրական կենցաղի ամբողջական ոչ մի նշույլ: Բայց գտնվեցին տկարամիտ լիբերալներ, որոնք... խորհրդային գրողի համբավ ստեղծեցին Բակունցի համար...

Ըստ Ն. Զարյանի՝ «Բակունցն իր գրական ողջ գործունեության ընթացքում օձային հետևողականությամբ թույն է արտադրել իր բոլոր գրվածքներում»: Այսքանից հետո նա անդրադառնում է այդ օրերին Բակունցի ամենաբզկտված պատմվածքին՝ «Միրանի փողին», ապա և՝ «Որդի որոտման» վիպակին որպես նացիոնալիզմի և տրոցկիզմի բնորոշ օրինակ: Մեղադրանքն այն էր, թե Բակունցը «կոլեկտիվ տնտեսությունը չի տեսնում, չի լսում Լենինին և Ստալինին նվիրված ժողովրդական երգերը համայնական դաշտերում աշխատող կոլտնտեսականների շուրթերից», որ նրա հայացքը «մենատնտեսի» կողմն է: Նրա պատկերացմամբ Բակունցի պատմվածքը գրված է «շինծու, գեհենիկ գավառաբարբառով», նրանում իշխում է «կեղծ դիալոգը», «լեզվական անճարակությունը», «քստմնելի շովինիզմը»: Այնուհետև.

Բակունցը զայրատում է հայ աշխատավոր գյուղացիներին իր դաշնակցական զոոլոգիական բրմատեցությունը վերագրելով նրանց:... Բակունցը ոչ միայն չի բարձրանում Բաֆֆու ռասսայական բրմատեցությունից, այլ մի աստիճան ավելի խորն է թաղվում անասնական շովինիզմի թունավոր ճահիճը: Մի՞թե պարզ չէ, որ Բակունցի բերանով խոսում է դաշնակ խմբապետը... բացարձակ կոչ անելով դեպի Մարութա սարը:

Նույն ոգով դատափետվում է նաև «Որդի որոտման» վիպակը, որն, ըստ նրա, «տրոցկիստական հակահեղափոխա-

կան քստմնելի մի պամֆլետ է՝ ուղղված գյուղի սոցիալիստական վերակառուցման մեր ստալինյան քաղաքականության դեմ...»։ Այնուհետև նա «մինչև ոսկորների ծուծը փտած, հանրածանոթ ստախոս» է համարում Դ. Տեր-Սիմոնյանին, «գրական խալտուրայի վարպետ»՝ Ալազանին, Խանչյանի «Թաշկինակ ու դենշչիկ»՝ Նորենցին և իր խոսքն ավարտում այն համոզմունքով, որ Ստալինի ու Բերիայի ղեկավարությամբ գրականությունը առաջ կգնա հսկայի քայլերով՝ «ազատագրվելով Բակունցի և բոլոր երանգի նացիոնալիստների ու տրոցկիստների թունավոր միջամտությունից»։

Չբավարարվելով այսքանով՝ Զարյանը Բակունցի դեմ երկու հոդված էլ տպագրել է իր խմբագրած «Գրական սեռունդ» ամսագրում՝ «Ընդդեմ նացիոնալիզմի և տրոցկիզմի, հանուն մեծ գրականության» (1936, № 4), «Կապը կտրած խմբապետը» (1936, №5—6)։ Առաջինը համատարած մեղադրանք է, երկրորդն ուղղված է «Քեռի Դավոն» պատմվածքի դեմ։

«Գրական թերթի» այս տխրահռչակ համարը ստորագրել էր խմբագրական կոլեգիան, որովհետև արդեն նախկին խմբագիրը՝ Ալազանը, քննադատվողների ցուցակում էր, իսկ նոր խմբագիր դեռ չէր նշանակվել։ Ահա այս պայմաններում կատարվում է գրական ուժերի մի նոր վերախմբավորում։ Գրողների միության քարտուղար և «Գրական թերթի» խմբագիր է ընտրվում Գ. Աբովը, «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր՝ Ն. Դաբաղյանը։

Քննադատական-չարդարարական հոդվածները հաջորդում են մեկը մյուսին։ Իրար են հաջորդում նաև գրողների միության ժողովները։ 1936 թ. սեպտեմբերի առաջին օրերին անցկացրած մի բուռն ժողովից հետո հայ գրողները ողջույնի հեռագիր են հղում Ստալինին և ՀԿ(բ)Կ Կենտկոմի նորընտիր քարտուղար Ամատունուն։ Դրանց բովանդակությունը գրեթե նույնն է։ Իրար շարունակող և լրացնող հատվածներով դրանք այս բնույթն ունեն.

Մեր թանկագին ընկեր, մեր ուսուցիչ, մեր սիրելի հայր, մեր հարազատ բարեկամ ու ճանճարեղ ղեկավար ընկեր Ստալինին.

Սրթի անճոռնի բերկրանքով ընդունեցինք տրոցկիստական-զինովևական ֆաշիստական գարշելի ավազակախմբի ոչնչացման դատավճիռը:... Շնորհիվ Հկ(բ)կ Կենտկոմի, շնորհիվ Անդրեևկոմի և նրա նմանատ ղեկավար ընկեր Բերիայի՝ դիմակազերծ է արված նաև Հայաստանի խորհրդային գրողների միության մեջ բուն դրած հակահեղափոխական նացիոնալիստական-տրոցկիստական խմբակը... Հայաստանի խորհրդային գրողների միությունը գարշանքով դուրս է շպրտել իր շարքերից հակահեղափոխական այդ ստոր տականքներին, մաքրել է իր մարմինն այդ թարախից...

ԱՄԱՏՈՒՆՈՒՆ.

Գրողների ընդհանուր ժողովը կատաղի ցասումով լսեց այն հակահեղափոխական տրոցկիստական-նացիոնալիստական գործունեության մասին, որ ծավալել են մեզ մոտ, Հայաստանի խորհրդային գրողների միության շարքերում, հակահեղափոխական նացիոնալիստական-տրոցկիստական ոհմակի անդամներ Բակունցը, Ալազանը, Նորենցը, Վանանդեցին, Մահարին, Թոթովենցը հակահեղափոխական տրոցկիստ Սահյանի և երկերեսանի սրիկա տրոցկիստ՝ գարշելի Ե. Տեր-Սիմոնյանի ղեկավարությամբ ու հանձյանի ղովանավորությամբ: Հայաստանի խորհրդային գրողների միության ընդհանուր ժողովը զզվանքով դուրս է շպրտում իր շարքերից այդ ստոր երկերեսանի հակահեղափոխական տրոցկիստ-նացիոնալիստներին *(ԳԹ, 1936, № 20, 10 սեպտեմբերի)*:

Սա, իհարկե, տեղական երևույթ չէր: Խմբակներ են հայտնաբերվում և մերկացվում նաև Մոսկվայում՝ ԽՍՀՄ գրողների միության շարքերում, որոնք իբր թե կապ են ունեցել Զինովևի և Կամենևի հետ համագործակցած գրող Ռ. Պիլնյակի հետ: Հարվածի տակ է ընկնում Մայակովսկուց հետո Չաբենցի ամենից ավելի սիրած ու գնահատած մյուս բանաստեղծը՝ Բ. Պաստերնակը, որի մասին «Պրավդան» խմբագրական առաջնորդողում գրում է.

Պաստերնակի բանաստեղծությունների թանձր մշուշի ն կռանախևության միջից երբեմն գլուխ են բարձրացնում բո-

յուովին պարզ հաղաքական հարձակումներ... Պուշկինի սոսկ մեկ բանաստեղծության մեջ ավելի միտք ու իսկական փիլիսոփայություն կա, քան Պաստեռնակի բոլոր խժդժական ոտանավորների մեջ (ԳԹ, 1937, № 6, 10 մարտի)։

Քննադատական ծանր մեղադրանքներ են ուղղվում նաև Սելիվանովսկու, Սելվինսկու, Բեզիմենսկու, Սերեբրյակովայի, Մելվանսկու, Տրոշչենկոյի և այլոց դեմ։

Զարմանալի ժամանակներ էին։ Մի կողմից նույն օրերին ժողովներ էին գումարվում և պաշտպանության տակ առնվում ֆաշիզմի դեմ պայքարող իսպանական ժողովրդին ու գրողներին, արժանավայել ընդունելություն ցույց տալիս նրա ներկայացուցիչներին (Ռ. Ալբերտի և ուրիշներ), մյուս կողմից ստալինյան ֆաշիզմի կրնկի տակ ճզմում ամեն մի լուսավոր միտք, զնդաններում տանջամահ անում միլիոնավոր մարդկանց։ Դեռ ավելին, կուսակցական կազմակերպություններից Ստալինը հավաստիացումներ էր պահանջում, որ առաջիկայում է՛լ ավելի բարձրացնեն հարձակողական զգաստությունը, «ճզմեն ժողովրդի գազազած թշնամիներին»։ Այս հարձակողական լայն թափին հաջորդում են ահավոր աղետ գուժող և ողբերգական հետևանքներ՝ ունեցող հոդվածներ։ Անհնար է դրանց բոլորին անդրադառնալ, բայց և անկարևոր չէ թեկուզ թվարկել դրանք։ Պատմության առջև իրոք որ մութ անկյուններ չպետք է մնան։ Ահա համանման հոդվածներ՝ ըստ ժամանակագրական հերթականության.

Վ. ԹԵՐՁԻԲԱՇՅԱՆ, Հակահեղափոխական նացիոնալիստների գրական հնարքները (ԳԹ, 1936, № 22, 12 հոկտեմբերի)— ուղղված է Բակունցի, Թոթովենցի, Ալազանի դեմ, որոնք, իբր, ճնշել են Արազուն, Զոլյանին և Զարյանին։

Գ. ԱՐԱՄՅԱՆ, Ալազանի նացիոնալիստ-տրոցկիստական գարշելի դեմքը (ԳԹ, 1936, № 22, 12 հոկտեմբերի)։

Հ. ՔՈՉԱՐ. խոսքը տանք նրան. «նացիոնալիստ տակաների ոճագործին՝ Ե. Դաշտենցը, մեկն է այն երիտասարդ գրողներից, որոնց վրա ոչ պատահական կերպով նացիոնալիստ գրչակները դրել էին իրենց մատը։ «Բոցում» լսիրչության է հասնում հակահեղափոխական, բակունցյան... Վերաբերմունքը... նա գովերգում է Արագածն ու Արարատը, որոնց սովերները դրոշ են երիտասարդ նացիոնալիստի համար։ Ու

այսպիսով «Բոցը» վերածվել է ճետադիմական ոեակցիոն գրական օջախում մխացող աթարի ծխի: ...Ապաշնորհ այս գիրքը տրոցկիստական-նացիոնալիստական գրական վիժվածք է:... Պաշտենցը պրոլետարիատի և մեր ժողովրդի թշնամիների բանակն է ընկել» (ԳԹ, 1937, № 6, 10 մարտի)։

Գ. ԱՐՈՎԸ ԽՍՀՄ գրողների միության վարչության 4-րդ պլենումում (1937) խիստ քննադատության է ենթարկում Բակունցին, Թոթովենցին, Տեր-Սիմոնյանին, Մահարուն, Ալազանին, Նորենցին, Վանանդեցուն. «նացիոնալիստ-դաշնակ Բակունցը իր «Միրանի փող» պատմվածքում հակադրում է այսպես կոչված Թուրքահայաստանը ներկա Խորհրդային Հայաստանին, կոչ է անում վերադառնալ այդ երկիրը» (ԳԹ, 1937, №7, 20 մարտի)։

Հ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ, Նացիոնալիստ-տրոցկիստական «գրականագիտության» դրոշակակիրը— ուղղված է Հ. Սուրխաթյանի և նրա հովանավորած գրողների դեմ (ԳԹ, 1937, № 10. 8 ապրիլի)։

1937 թ. ապրիլին հրավիրված հայ գրողների հնգօրյա ընդհանուր ժողովում Վ. Կ ի ր պ ո տ ի ն ը խոսել է Չարենցի, Բակունցի և այլոց դեմ։ Իսկ 40 հայ գրող «ինքնաքննադատաբար» դատապարտել են կա՛մ իրենց, կա՛մ մեղադրել իրենց գրչակիցներին (ԳԹ, 1937, №№ 12, 13, 23 ապրիլի, 1 մայիսի)։

ԱՍՈՒՐ ՎԵՆ. (Ա. ԱՍԱՏՐՅԱՆ), Գրականության դասագրքերը մաքրենք նացիոնալիզմի կեղտից (ԳԹ, 1937, № 15, 21 մայիսի)։

Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Գոգոլի «Տարաս Բուլբան» և Բակունցի նացիոնալիստական կոնցեպցիան (Գրական սերունդ, 1936, №5—6), «Երևան»-ի հետքերով— քննադատում է Մ. Արմենին (ԳԹ, 1937, № 20, 26 հունիսի)։

Սա այդ օրերին տպագրված հոդվածների միայն չնչին մասն է։ Ամբողջը հիշել՝ նշանակում է էլ առ էլ վկայաբերել ժամանակի մամուլը։ Քննադատական այս աննախադեպ գրոհի ալիքը մեծապես պայմանավորված էր ինչպես վերևներից եկող ցուցումներով, այնպես էլ 1936 թ. հոկտեմբերի 2-ին Երևանի կուսակցական կազմակերպության քաղաքային ակտիվի ժողովում Ամատունու ճառի հիմնադրույթնե-

բով։ Վերակրկնելով Բերիայի անփառունակ ճառի մտքերը, նույն մեղադրանքով նա, նախ, հարձակվում է Խանչյանի վրա և նրա կողմից իբր թե հովանավորվող նացիոնալիզմը արմատավորելու համար հասնում մինչև սպեցիֆիկների գործունեությունը, մեղադրանքի սյունին գամում այդ տարիներին աքսորում գտնվող Դավիթ Անանունին, ապա քննադատության սլաքներն ուղղում Աշոտ Հովհաննիսյանի 1923-1927 թթ. գործունեության դեմ։ Նա նաև բերում է ցուցմունքներ, ըստ որի՝ «Խորհրդային Հայաստան» օրաթերթի նախկին քարտուղար Ռ. Աթայանը հայտարարել է, թե Խանչյանը թուլացնում էր քաղաքական պայքարի զգոնությունը՝ արգելելով թերթում հոդվածներ տպագրել դաշնակցության դեմ։ Իսկ Խանչյանի և Ջոպանյանի կապի մասին Բերիայի նշած փաստը Ամատունին իր հերթին այսպես է խորացնում ու մանրամասնում.

1936 թ. հուլիսին գրած իր վերջին նամակում Ջոպանյանը, ընթացիկ տարվա նոյեմբերին գումարվելիք խորհուրդների համագումարի կապակցությամբ, Խանչյանի առջև հարց է դնում, թե անհրաժեշտ է Հայաստանի բաղաքական սահմանները վերանայելու պահանջ հարուցել։ Ջոպանյանն առաջարկում է «ուղղել այն անարդարությունը, որը կատարվել է 1920 թվականին։ Ես խոսում եմ ոչ միայն Տաճկահայաստանը, Արարատը, Սուրմալուն, Ղարսը հանձնելու մասին, այլև Ախալքալաքի ու Ղարաբաղի՝ այդ բուն հայկական շրջանների մասին... ինչպես և Նախիջևանի մասին, որը միշտ Հայաստանի մասն է հանդիսացել... Եթե այդ անարդարությունները չուղղվեն խորհուրդների նոյեմբերին տեղի ունեցելիք համագումարում, որտեղ ինձ արկվելու և ընդունվելու է նոր սահմանադրությունը, ապա այդ որոշումը հետագայում բոլորովին կդժվարանա...» *(ԳՓ, 1936, № 23, 1 նոյեմբերի)։*

Ամատունին իր ճառում բերում է նաև Բակունցի ցուցմունքը, ըստ որի.

...Մեր խմբակի գործունեությունը, ամբողջովին վերցրած, ուղղված էր Համկ(բ)կ կենտկոմի ազգային բաղաքականության դեմ և, ի հակակշիռ կուսակցության «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրա»

լոզունգին, մենք պաշտպանում էինք «ազգային հատկանիշների խտացման» թեզը, բառացիորեն այդ նշանակում էր «ձևով ազգային, բովանդակությամբ ճացիոնալիստական կուլտուրա»:... Մեր ճացիոնալիստական գիծը ամբողջովին պաշտպանում էր ՀԿ(բ)Կ կենտկոմի նախկին քարտուղար Խանջյանը, որը մի շարք զրույցներում... համամիտ էր մեզ հետ:

Թե ինչպես էին այն տարիներին ցուցմունքներ կորզվում՝ հիմա հայտնի է բոլորին: Բռնությամբ ու խոշտանգումներով մարդկանց ստիպել են իրենց վերագրել մեղքեր, խոստովանել չգործած հանցանքներ: Եվ բոլորը չէ, որ դիմացել են այդ սահմռկեցուցիչ տանջանքներին: Բակունցի հետ կապված ծանր փորձությունը ուշագրավ գեղարվեստական արձագանք է գտել Ջարենցի «Ա. Բ.-ին» բանաստեղծության մեջ՝ գրված 1936 թ. հոկտեմբերի 14-ին, այսինքն՝ Ամատունու հոկտեմբերի 2-ի ճառից և նույն Ամատունուն, նաև ներքին գործերի ժողկոմ Մուղդուսուն հոկտեմբերի 6-ին՝ ծայրահեղորեն անտանելի պայմաններից փրկության ելք որոնելու նկատառումով Բակունցի հասցեագրած նամակից մի քանի օր հետո: Եվ ի՞նչ՝ Բակունցի պես լուսամիտ մարդու անբասիր նկարագիրն արատավորող ասեկոսեները կարծեք մի պահ կասկածանքի մեջ են գցել Ջարենցին, և նա բանաստեղծության առաջին սևագիր տարբերակում տեղ է տվել այսպիսի կեսգիշերային մտատանջությունների. «Ես ներում եմ քո հանցանքը... Ես ներում եմ ահա իմ անաղարտ Մտերմության, սիրո առևանգումն անգամ, Ներում եմ [վիշտն] վերքն անգամ անծայրածիր, Որ քո [վարքով] ձեռքով դժնի դու իմ սրտում բացիր...»: Բայց և նույն պահին, հերյուրանք համարելով բոլոր ստահոդ լուրերը և մաքրելով հոգին կասկածանքի ժանգից, նա ստեղծել է բանաստեղծության ազնիվ եզբայրությամբ շաղախված վերջնական տարբերակը, որը համակ սեր է ու նվիրում: Ջարենցը այդտեղ, ի հեճուկս իր բարեկամի «Սիրանի փողը» պատմվածքը և մյուս գործերը վարկաբեկող ելույթների, շատ բարձր է գնահատում այն և վերջին հրաժեշտի պահին, արցունքն աչքերին ու ցա-

վը հոգում, ստեղծում իր այս գլուխգործոցը։ Դա տարիների գրական համատեղ պայքարի, անձնական ընկերության ու բարեկամության մի առհավատչյա է, դիմացած ամենածանր փորձությունների և դրանով իսկ վերածված հերոսական սխրանքի։ Պահի դրամատիկականությունն ու ողբերգականությունը զգալու համար, արժե վերստին ընթերցել այդ բանաստեղծությունը.

...Ս՛վ բառերի համար fո մարմարյա,
Հնամենի, բուրյան, որպես մեր հին
Քարաճանդակ անդուռ մատռաններ
Անշնչելի գրերն ճնադարյան,—
Եվ մյուռոնի նման սրբազնագույն
Քո երկերի մեռուր սկիճեռում պահված՝
Խորհուրդների համար մշտանըմա,
Որպես խորհուրդը մեր նախրյան ոգու,—
Քո «Միրհավի» համար—և լուսեղեն՝
Արվեճնիկի հուշով սրբագործված հավետ,
«Ալպիական ծաղկի» այն բուրավետ,
Որ բուրելու է ճա՛ր աննյութեղեն,—
Եվ վերջապես fո վեճ, հերոսական
«Սերմնացանի» համար, որ ձեռհերով վսեմ
Սև ցելերի վրա մեր գոյության այս սև,
Շաղում է շողք ու սերմ անանձնական,—
Այս ամենի համար,— և «ՄԻՐԱՆԻ»—
Հազարամյա փողի՛ համար fո այն,
Որ դարերո՞վ տեճված խաղաղության
Երգն է ճնշում,— և մեր ժողովուրդը fանի
Ունի գեթ ափ մի հող աւեգակի ներfո՝
Հնչելու է երգեր եղբայրական,—
Այս ամենի համար, օ՜, խեղճ իմ բարեկամ
Ես fեզ օրճնում եմ արդ իմ անաղարտ երգով...
Այս ամենի համար,—և fո եղերական
Տառապանքի համար, որ արդ կրկին
Վեճություն է խառնում fո անաղարտ երգին—
Ես fեզ պարզում եմ ձեռ եղբայրական...
Եվ ներողում եմ fեզ ահա կրկին անեղծ
Իմ շուրթերով, ինչպես օրեր առաջ,—
Երբ դեռ դու ա՛յր էիր մի անաբատ,
Եվ ես ընկերն էի fո բանաստեղծ...

14. X. 1936, գիշեր, Երևան

1936-ից ավելի ուժգնացած հալածանքների օրերին Չարենցը մեկուսացված կյանք էր վարում։

Սեպտեմբերի 24-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ-ն նրանից տեղեկանք է վերցնում, որ «գտնվելով հետաքննության տակ, մինչև դատը պարտավորվում է չթաքցնել երևանից»։ Նույնը կրկնվում է նոյեմբերի 9-ին. այս անգամ ՆԳԺԿ-ի կողմից կայացվում է հատուկ որոշում՝ որպես պատժամիջոց Չարենցի հանդեպ կիրառելով տնային կալանքը, և դա բացատրելով բանաստեղծի «անառողջ վիճակով»։ Այդ մասին նրան հայտնվել է հաջորդ օրը։

Այդ ընթացքում նա չէր մասնակցում գրողների միության ժողովներին, չէր լինում հասարակական վայրերում։ Տանն էր, հիմնականում անկողնում պառկած, թուղթ ու գրիչը ձեռքին։ Դեռևս 1936-ի սկզբներից Անդրերկրկոմի զննավարության հետ խանջյանը բանակցություններ էր վարում բուժվելու նպատակով Չարենցին արտասահման ուղարկելու մասին։ 1936 թ. փետրվարի 2-ին Անդրերկրկոմի բյուրոն որոշում է կայացնում բավարարել ՀԿ(բ)Կ կենտկոմի խնդրանքը «հատուկ բուժման համար» Չարենցին արտասահման ուղարկելու կապակցությամբ։ Որոշմամբ նաև հարց է հարուցվում թույլատրել Չարենցին մեկնել արտասահման և այդ նպատակով հատկացնել անհարաժեշտ միջոցներ (տես՝ ՄԻ ՀՄԿԱ, ֆ 1, ց. 24, գ. 36, թ. 71)։

Չարենցն սպասումների մեջ էր։ 1936 թ. հունիսի 20-ին Կ. Միքայելյանին հասցեագրած նամակում նա տեղեկացնում է. «...երևի լսած կլինես, որ ես բուժվելու համար մեկնելու եմ արտասահման. շուտով Մոսկվա կլինեմ Փարիզ մեկնելու համար» (VI, էջ 494—496)։ 1936 թ. հուլիսի 29-ին, սպանությունից 10 օր առաջ, խանջյանը ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյում կայացնում է վերջին անհրաժեշտ որոշումը.

Ընկ. Չարենցի մասին.

Հանձնարարել Լուսժողկոմատին (ընկ. Եղիազարյանին).

1. Բուժման նպատակով ընկ. Չարենցի արտասահմանում գտնվելու միջոցին նրա ընտանիքին ամսական հատկացնել 800 ռուբլի, 2. Չարենցի ուղևորության համար բաց թողնել

անհրաժեշտ միջոցներ, նաև միջոցներ՝ մինչև Մոսկվա ճոճանը տղեկցող ընկերոջ համար:

ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ա. Խանջյան *(ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 16, գ. 39, թ. 81)*:

Վրա հասած Խանջյանի դավադիր սպանությունը ձախողում է Չարենցի մեկնումը: Այս կապակցությամբ պահպանվել է մեկ այլ վավերագիր ևս: 1936 թ. օգոստոսի 8-ին Արտո Եղիազարյանը նամակով հարցում է անում Խանջյանին հաջորդին՝ Ամատունուն. արդյոք, համաձայն ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշման, Չարենցի ընտանիքին տրամադրե՞լ 800 ռուբլի, թե՝ ոչ: Պատասխանը միանշանակ է՝ «Ջտա՛լ» (տես՝ ՄԼԻ ՀՄԿԱ,ֆ. 1, ց. 24, գ. 51, թ. 71).

Չարենցի արտասահման մեկնելու շատ կարևոր գործը ձախողվում է: Շատ կարևոր այն առումով, որ նա, նախ, կազատվեր հալածանքներից և, ապա, կբուժվեր, կվերականգներ իրոք քայքայված առողջությունը: Հուսախաբության, ծանր մտորումների և օրըստօրե վատացող առողջական պայմաններում նա արդեն պիտի մտահոգվեր ոչ թե բուժվելու, այլ՝ կյանքը փրկելու մասին: Մինչև 1937 թ. ապրիլը նրա անունը չէր հոլովվում հոդվածներում, ժողովներում նրան կարծես դեռ խնայում էին: Ստալինի ցուցաբերած «մտահոգ ուշադրությունը» թեև դեռ չէր մոռացվել, բայց աստիճանաբար դառնում էր ավելորդ մի զրահ նյութվող դավերի դիմաց:

Նշվում է Պուշկինի մահվան 100-ամյակը, իսկ «հատուկ հանձնաժողովի» նախագահը ինքը չէր, այլ՝ ՀԽՍՀ կենտգործկոմի նախագահ՝ Գ. Հանեսօղլյանը: 1937 թ. փետրվարի 22—26-ին հրավիրվում է ԽՍՀՄ գրողների միության վարչության պուշկինյան պլենումը, որտեղ նրա փոխարեն զեկուցումով հանդես է գալիս Ն. Զարյանը:

Իսկ երկրի քաղաքական կյանքը նոր թափ էր առնում: 1937 թ. մարտի 3-ին տեղի է ունենում ՀամԿ(բ)Կ կենտկոմի պլենումը, ուր Ստալինը վերստին պնդում է, թե մեր հաջողություններուհ հետ մեկտեղ է՛լ ավելի է սրվելու դասակարգային պայքարը, ուստի՝ չպետք է կորցնել զգոնությունն ու ամենայն ժամանակ թմրել: Դա նշանակում էր, որ ժամանակը նոր զոհեր էր պահանջում: Արյունը դեռ չէր հագեցրել հրեշին և չէր էլ հագեցնելու:

Ամենապարզ հաշվումներն անգամ սոսկալի թվեր են գուժում։ Ըստ պատմաբանների՝ 1917—1922 թթ. օտարերկրյա ինտերվենցիայի, քաղաքացիական կռիվների, երկրի խորհրդայնացման ժամանակ և դրան հաջորդող սովի տարիներին զոհվել է 10 միլիոն մարդ։ 1928—1932 թթ. կուլակաթափման պատրվակով հալածվեց կամ զոհվեց ևս 10 միլիոն մարդ։ 1933 թ. սովը խլեց մի նոր 10 միլիոնի կյանք։ 1935—1939 թթ. հալածանքներին զոհ գնաց ավելի քան 10 միլիոն մարդ։ Դրանց պիտի ավելանար նաև Հայրենական պատերազմում զոհված 20 միլիոնի կյանքը, ապա և՝ 1949—1952 թթ. հալածված 5—7 միլիոնի կյանքը։ Ուրեմն՝ 20-րդ դարի այդ արյունախում հրեշը միայն արյունով էր հագենում։ Եվ այդ արյունը չպետք է դադարեր հոսելուց, ինչքան էլ նա ասեր ու կրկներ, թե կադրերն են որոշում ամեն ինչ։

Գալիս է 1937 թվականը, արյան խրախճանքի տարին։ Ստալինը զոհերի նոր քանակ է պահանջում։ «Ձախ թեքմանը» գալիս է հավասարակշռելու «աջ թեքումը»՝ թիրախ ունենալով Բուխարինին, Ռիկովին, որոնց հեռացնում են կուսակցությունից։ Սկսվում է մահվան մի նոր շարժում՝ սև ցուցակների մեջ նետելով նոր անուններ ու նոր «խմբավորումներ»։

Մարտյան պլենումի որոշումների կենսագործման և Ստալինի ցուցումների անմիջական կատարման նպատակով 1937 թ. ապրիլի 17—21-ը հրավիրվում է հայ գրողների ընդհանուր ժողով։ Նախագահությունում էին Իսահակյանը, Կիրպոտինը, Դաբաղյանը, Աբովը, Գյուլիքևխյանը, Զորյանը։ Բացման խոսք է ասում Աբովը՝ վերստին կրկնելով հին մեղադրանքները. «Երկերեսանի նացիոնալիստ-տրոցկիստ թշնամիները՝ Բակունցը, Ալազանը և մյուսները, կարողացել էին իրենց շահատակությունների աստիճարեղ դարձնել միությունը»։ Գրողների միության կուսակազմակերպության անդամների մասին խոսում է Սիրասը և ասում. «Մեր առաջնորդի զեկուցումը, նրա հանճարեղ ցուցումները մեզ համար ուղեկնիշ կհանդիսանան աշխատանքները ավելի բարձր աստիճանի վրա դնելու համար»։ Արագին իր ելույթում ասում է, որ «Յուրաքանչյուր գրական շեղում իր հետ բերում է քաղաքական շեղում»։ Ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս Կիրպոտինը։ Նա հիշեցնում է Ստալինի խոսքերը, ըստ որի՝

Խորհրդային Միությունը շրջապատված է կապիտալիստական երկրներով, որոնք իրենց լրտեսներն են ուղարկում մեր երկիր: Ահա այդ մտայնությամբ նա կապիտալիզմի լրտեսներ, այլ կերպ՝ ազգայնական տրամադրություններով համակված և խորհրդային գաղափարախոսությունից «շեղված» գրողներ է փորձում հայտնաբերել հայ գրողների ընտանիքում: Նախ, նա «միջազգային կապիտալիզմի գործակալներ» է համարում Բակունցին և մյուսներին, որոնք իբր թե ցանկանում էին հայ ժողովրդին շեղել «երջանիկ կյանքի ուղուց» և, խանդարելով հայ գրականության համաշխարհային ճանաչմանը, «խեղդել հայ գրականության տաղանդները»: Այնուհետև նա բարձր է գնահատում Իսահակյանին այն բանի համար, որ նա «հուրժուական նացիոնալիզմի բանակից» եկել է դեպի մեզ և նույն սեսանկյունով բացասական գնահատում Չարենցի ամբողջ գործունեությունը, որը, ըստ նրա, անցնում է գաղափարական հակառակորդի դիրքերը. «Չարենցի ձեռքից բոնեց Թշնամին»:

Հրապարակվում է Իսահակյանի նամակը, որը «Իմ ազատ և ստեղծագործ ժողովրդի հետ» վերնագրով տպագրվել է «Գրական թերթում» (1937, № 12, 23 ապրիլի): Իսահակյանը լսել էր Կիրպոտինի զեկուցումը, բայց «հիվանդության պատճառով չկարողացավ անձամբ ներկա գտնվել ժողովի վերջին մի քանի նիստերին»: Իսահակյանը ասում է, որ Կիրպոտինի «խոսքը տոն տվեց ինձ գրելու այս երկտողը» և խոստովանում, որ եղել է

Տոլստոյական, նիցշեական, Գերմանիայում ուսանող ժամանակս՝ սոցիալ-դեմոկրատ: Հուսախաբված դարձել եմ անիշխանական, պեսիմիստ: Տարվել եմ Բուդդայով: Ոգեորվել եմ հայկական մարտական ազգայնականությամբ, դաշնակցական ոչ երկրորդական գործիչ՝ աշխատել եմ անձնվիրաբար, բանտեր եմ նստել, ախտորվել, փախել հայրենիքից:

Այսքանից հետո նա գրում է նաև հավուր պատշաճի ոչխարի տողեր.

Ինձ շատ մեծ վիշտ պատճառեց նաև մի բանի գրողների ձերբակալությունները, որոնց մեջ ունեի անձնական ընկերներ, բայց երբ վերադարձա Երևան և հնար եղածի չափ ծանոթացա իրերի և իրադարձությունների հետ, տեսա, որ մեր

կառավարությունը (որին անպայման հավատում եմ) և ժողովուրդը ուրիշ կերպ չէին կարող վարվել նրանց հետ: Որովհետև նրանք շեղվել են ուղիղ, տրամաբանական ճանապարհից և ընթացել են մի դատապարտելի ճանապարհով, որ միայն վնաս է բերում մեր բազմաչարչար ժողովրդին:

Ոգևորված այս նոր «մերկացումներով»՝ հայ գրողներն անցնում են հարձակումների: Չարենցի դեմ խոսում են Հ. Քոչարը, Ա. Ոսկերչյանը, Վ. Ղազանչյանը: Նրա դեմ խոսում է նաև Ս. Հակոբյանը, Չարենցի մասին առաջին գրքի հեղինակը (1924, Վիեննա), նրա տաղանդի գնահատողը, որ, այլ մեղադրանք չգտնելով, ասում է.

Չարենցը դասագիրք է կազմել, բայց այդ դասագրքերից հանել էր ռուսական և եվրոպական գրողներին, մի խոսքով՝ օտար հեղինակների գրվածքները:

Այսպես կոտակվում են «նացիոնալիստական հանցանքների» վկայությունները, իսկ այդ ճնշմանը այլևս անհնարին էր դիմանալ:

Ժողովում ելույթ են ունենում նաև մյուսները՝ նախապես կարծեք միմյանց մեջ բաժանելով իրենց զոհերին: Ինքնաքննադատաբար իրենց սխալներն են ընդունում Դեմիրճյանը, Գյուլիքևխյանը, Արմենը, Ռ. Չարյանը:

Այս բանակովի հիմքում ևս ընկած էր նախկին ասոցիացիայի և «Նոյեմբերի» բախումը: Նախկին գրական-գեղագիտական վեճը հանգում է գաղափարական-քաղաքական մեղադրանքների: Դա ավելի է սրվում Ամատունու մի զեկուցումից հետո (տես՝ ԳԹ, 1937, № 18, 12 հունիսի), ուր նա «Նոյեմբերի» գործունեությունը վերջնականապես կապում է սպենգլիզմ-ուկլոնիզմ-նացիոնալիզմ գծի հետ և Բակունցից հետո թիրախ ընտրում Չարենցին: Նույն այդ զեկուցման մեջ՝ ընդարձակելով մեղադրյալների ցուցակը, նա ի հայտ է բերում մի նոր խումբ՝ «Հայաստանի հակահեղափոխական նացիոնալիստական-տրոցկիստական կենտրոնը»:

Ամեն ինչ կատարվում էր փոխպայմանավորված ձևով: Նոր «հակահեղափոխական կենտրոնի» հետ մեկտեղ գրականության մեջ ևս հայտնաբերվում են նոր դավաճաններ: Այս անգամ կրակի տակ են առնվում Զ. Եսայանը և Ե. Չուբարը:

Գրողների միության 1937 թ. հուլիսի 1-ի ժողովում, ուր ելույթ են ունենում Խահակյանը, Զորյանը, Դեմիրճյանը, Արազին, Սիրասը, Աբովը, Զնդին, նրանք «մերկացվում են», հեռացվում գրողների միությունից ու կալանավորվում: Բակունցի և մյուսների ձերբակալությունից հետո այսպիսի ուշացումն էլ նրանք բացատրում են «բոլշևիկյան զգոնության պակասով»:

Բանից պարզվում է, որ այդ «զգոնության թուլացումը կամ պակասը» գաղափարական նոր կարգախոս էր, որը ինչքան էլ Ամատունին չանաց կատարել կամ գերակատարել, այնուամենայնիվ՝ չկարողացավ բավարարել դիկտատորի պահանջները: 1936 թ. քաղաքական մեղադրանքներով Հայաստանում ձերբակալվել էին 1138 մարդ, իսկ 1937-ի առաջին կեսին՝ 646: Սրանք, իհարկե, «չնչին» թվեր էին մեծ պահանջների համեմատ և պետք էր բազմապատկել դրանք: Բայց և նոր զոհերի արյունը հեզելուց առաջ՝ Ստալինը սովորություն ուներ նրանց բարեկամաբար ժպտալ, անգամ պարգևատրել երկրի բարձրագույն պարգևներով: Այսպես նա վարվում է նաև Հայաստանի դահիճ Մուղդուսու հետ: 1937 թ. հուլիսի 22-ի հրամանագրով «Կառավարության կարևորագույն առաջադրանքները օրինակելի կերպով և անթերի կատարելու համար» նա պարգևատրվում է Լենինի շքանշանով: Նույն հրամանագրով միևնույն պարգևին է արժանանում նաև երկրի համար մեկ դահիճը՝ Ն. Եժովը: Ինչպիսի՜ մեծագույն պատիվ Մուղդուսու համար, որը հուլիսի 8-ին արդեն գնդակահարել էր Բակունցին, Տեր-Սիմոնյանին, Ստեփանյանին, իսկ հուլիսի 26-ին պետք է ստորագրեր Զարենցի ձերբակալության «օրդերը»: Հուլիսի 8-ին գնդակահարվում է նաև Բակունցի մտերմագույն ընկեր խոտրջուրցի Արտաշես Գևորգյանը՝ հայ ժողովրդի դահիճ Ջեմալ փաշային սպանողը, որը իբր Ն. Ստեփանյանի դրդումով հիմա էլ պատի շարքից հաներ Բերիային: Այսպես ոչնչացվում էր ժողովրդի հանճարն ու ուժը:

Անտեղյակ դեպքերի զարգացման նոր շրջադարձին, Զարենցի վերջնական մեկուսացման օրերին հայ գրողները մի նոր ժողով են գումարում և ընտրում քարտուղարության նոր կազմ՝ Գ. Աբով (ընդհանուր վարչական գծով), Ա. Վշտունի

(երիտասարդ կադրերի ու գրական խմբակների գծով), Ն. Զարյան (հասարակական-մասսայական աշխատանքներ), Արազի (կուլտուրա և կենցաղ)։ «Գրական թերթի» խմբագիր է ընտրվում Հենրին (Հենրի Գաբրիելյան)։ Բակունցի և մյուսների մեկուսացումով նախկին ասոցիացիայի առաջատարներ Վշտունին և Զարյանը հասնում են բաղձալի ղեկավար դիրքի, բայց, էլ ո՞ւմ պիտի ղեկավարեին, երբ ճշմարիտ գրողների մեծ մասը այլևս ասպարեզում չէր։ Սա նրանց համար թերևս պյուռռոյան հաղթանակ լիներ, եթե միայն գիտակցվեր։ Սա նշանակում է, որ Չարենցի ու Բակունցի գործը պարտվեց։ Տվյալ վարչակարգի պայմաններում այդպես էլ պիտի լիներ։ Բայց գրականության և արվեստի մեջ պարտություն կա, որ հաղթանակ է, հաղթանակ կա, որ պարտություն է։ Որովհետև վերջնական արդյունքում հաղթանակը ոչ թե վարչական ուժի կողմն է, այլ՝ տաղանդի ուժի։ Համենայն դեպս, պատմությունը արդեն ճշտել է այդ հարցերը, թեև դեռ ճշտման տեղեր կան։

Բայց և դեռ 1937 թ. սեպտեմբերն էր և կյանքը շարունակվում էր այն օրերի տրամաբանությամբ։ Սեպտեմբերի 15-ին գումարվում է ՀԿ(բ)Կ կենտկոմի պլենումի նիստ, որին մասնակցում են Մալենկովը, Միկոյանը, ուշացումով՝ Բերիան։ Մալենկովը հրապարակում է Ստալինի սեպտեմբերի 8-ի նամակը՝ հասցեագրված Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյին, որի մեջ մասնավորապես ասված է.

Կուլտուրական շինարարությունը կաղում է, իսկ կուսակական աշխատանքը նորից շեղվել է կուսակցական գծից։ Տրոցկիստները և այլ հակակուսակցական տարրեր Հայաստանի կուսակցական ղեկավարության կողմից անհրաժեշտ հակահարված չեն ստանում (նամակը առաջին անգամ հրապարակվել է «Երեկոյան Երևան» օրաթերթում, 1988, № 213, 9 սեպտեմբերի)։

Այդ կապակցությամբ և հատկապես օգոստոսի 19-ին հարցաքննության ժամանակ երրորդ հարկի պատուհանից Ս. Տեր-Գաբրիելյանի իրեն «դուրս նետելու» փաստը ծածկելու, Ստալինին չհայտնելու համար՝ սեպտեմբերի 14-ին ձերբակալվում է չքանշանակիր Մուղդուսին և «հատուկ կարգով» գնդակահարվում նույն՝ 1937 թ. նոյեմբերի 22-ին։ Նույն «հա-

տուկ կարգով» 1938 թ. փետրվարի 3-ին գնդակահարվում են նաև Մուղդուսու տեղակալ և նրա հետ մեկտեղ Լենինի շքանշանի արժանացած Ի. Գևորգովը և կարմիր աստղով պարգևատրված քննիչ Ե. (բախտի ծաղրով անունը Եղբա՛յր է) Նիկողոսյանը։ Իսկ Ամատունին, Ակոպովը և մյուսները հրեչակվում են «բուրժուական նացիոնալիզմի մնացուկներ», որոնց անհրաժեշտ է արմատախիլ անել։ Խանջյանից հետո սա երկրորդ մաքրագործումն է, որ տևում է մինչև 1939 թ.։

Գրականության մեջ հերթն այս անգամ հասնում է Ամատունու հովանավորյալներին. հարվածի տակ են ընկնում Աբովն ու Գյուլիքևխյանը, իսկ «ավերբախականության» մեղադրանքը բաժին է հասնում նաև ուղղափառ պրոլետգրողներին։ Համբգրականներից մեկում «Գրական թերթը» գրում է.

Գրողներ Ն. Զարյանն ու Վշտունին, որոնք տուրք էին տվել ավերբախականության, դեռ մինչև օրս էլ լուռ են մնում իրենց սխալների մասին: Սրիկա... հակահեղափոխական Ամատունին իր պաշտպանության տակ էր առել և բմբկահարում էր բուրժուական–նացիոնալիզմի վիժվածք, շպիոն Զապել Եսայանի տիպի անձնավորություններին, ինչպես նաև Զարեճցին իր պաշտպանության տակ էր առնում *(1937, № 30, 8 սեպտեմբերի)։*

1937 թ. հոկտեմբերի 25-ին Վշտունին հեռացվեց կուսակցությունից և, մինչև կարդարանար, 1937 թ. հոկտեմբերի 27-ից մինչև 1939-ի հունիսի 13-ը անց կացրեց կալանավայրում։ 1937 թ. նոյեմբերի 15-ին կուսակցությունից հեռացվում է նաև Ն. Զարյանը և մեծ ջանքերի գնով վերականգնվում 1938-ի փետրվարի 10-ին։

Նույն ծրագրով կրկնվում է մեկ տարի առաջվա պատկերը։ Այսպես Ստալին-Բերիա հանցագործ մեքենան մեկի ձեռքով սպանում էր մյուսին, հետո նաև շարքից հանում վերջին վկային։ Այսպես աջը ձախի դեմ էր ուղղվում, ձախը՝ աջի։ Իսկ որպեսզի Հայաստանում դրանք տեղական բնույթ ձեռք բերեին, անմիջապես հերթական նոր իզմը միաձուլվում էր բուրժուական նացիոնալիզմի հետ և պատրաստ էր մեղադրանքը։ Այս նոր ալիքին զոհ են գնում «մնացորդացիք» ոմանք, իսկ Ն. Զարյանը սև ցուցակից իր անունը հանելու

համար շտապ սկսում է մի նոր պոեմ գրել Ստալինի մասին և արագ արագ տպագրել մամուլում։

Այդ ընթացքում նրա անունն այլևս չհոլովվեց «ճակատագրով դատապարտվածների» կողքին։ Նոր ալիքի վրա բարձրացած չախչախիչ հոդվածներ գրեցին Ա. Ոսկերչյանը՝ «Ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի՝ գրականության և քննադատության ասպարեզում» (ԳԹ, 1937, №№ 32, 33, 24, 31 հոկտեմբերի), Ա. Ասատրյանը (Աս. Վեն.)՝ «Հակախորհրդային մաքսանենգություն մանկական գրքի անվան տակ» (ԳԹ, 1937, № 32, 24 հոկտեմբերի), Ց. Շողենցը՝ «Դաշնակցական վիժվածքը» (ԳԹ, 1937, № 33, 31 հոկտեմբերի), Ա. Ինճիկյանը՝ «Հոկտեմբերյան հայ պոեզիան» (ԳԹ, 1937, № 34, 7 նոյեմբերի), Ա. Մակարյանը՝ «Մինչև վերջ մերկացնել նացիոնալ-բուրժուական գրականության վնասարար հետքերը», որի մեջ հեղինակը Չարենցին ոչ ավել, ոչ պակաս համարում է «Դ. Անանունի վիժվածք» (ԳԹ, 1938, № 3, 18 հունվարի), Հ. Դրիգորյանը՝ «Խորհրդային Հայաստանի գրականության նոր վերելքը» (ԽԴ, 1939, № 2)։

Այդ հոդվածներն ուղղված էին Չարենցի, Բակունցի, Մահարու, Նորենցի, Ալազանի, Արմենի, Թոթովենցի, Զ. Եսայանի, Վ. Անանյանի, Պ. Մակինցյանի և այլոց դեմ։ Այս ամենի մեջ հատկապես շատ նենգ ու թունավոր էր Ոսկերչյանի հոդվածը, որը, դատելով լեզվաոճական և գաղափարական ընդհանրություններից, ամենայն հավանականությամբ հեղինակել է նաև անստորագիր խմբագրականները։ Հիշյալ հոդվածում, չարախնդալով բոլորի վրա, նա գրում էր.

Սպեցիֆիկյան-դաշնակցական սկզբունքների պրոպագանդայով ժողովրդի ստոր թշնամիները... ձգտում էին հայկական գրականությունն ու կուլտուրան դուրս բերել սոցիալիզմի ճանապարհից և ուղղել այն պրոլետարական ինտեռնացիոնալիզմի դեմ։ ... «Նոյեմբեր» միությունը կանգնած էր սպեցիֆիկյան-ազգային սահմանափակության թթու նացիոնալիստական դիրքերի վրա։... «Նոյեմբեր» միության նախկին անդամ հակահեղափոխականները – Ա. Բակունց, Գ. Մահարի, Վ. Նորենց, Ե. Չարենց, Մ. Արմեն և այլն – հավատարիմ մնալով իրենց բաղմական դավանանքին և միաձուլ-

Երևանի իր մահկանացուն է կնքում Եղիշե Չարենցը՝ ժամանակի մեծագույն բանաստեղծը: Մարտին լրացել էր նրա 40 տարին, իսկ 41-ին դեռ չորս ամիս կար: Տարիներ շարունակ տևած այս դաժան ողբերգության գլխավոր դեմքը արյունաքամ և ուժասպառ հեռացավ աշխարհից:

Նույն օրը՝ նոյեմբերի 28-ին կատարեցին դիահերձում: Արձանագրության մեջ ասված է՝ քննության է դրված տղամարդու դիակ, միջինից ցածր հասակով, խիստ նիհարած: Ձախ կրծքավանդակին նշել է դաջվածք. «1927 թ., հունվար, Ա. Ջ.»: Անչինչ գրերով բանաստեղծը մարմնի վրա արձանագրել է իր մեծ սիրո՝ Արփենիկ Չարենցի մահվան թվականը:

Չարենցը տառապել է խորացած մորֆինիզմով, որից և հյուծվել է օրգանիզմը, իսկ վերջին օրերին մորֆիի բացակայությունը հասցրել է աղեստամոքսային ուղու քայքայման: Գլուխ են բարձրացրել նաև նախկին հիվանդությունները՝ շարունակական պլևրիտը, լյարդի էխինակոկը, երիկամի բորբոքումը: Այդ ամենը հասցրել են թոքերի կատաղային բորբոքման, որից էլ վրա է հասել մահը: Նրա վիճակը ծանրացել էր նոյեմբերի 17-ից, այդ իսկ պատճառով տեղափոխվել էր բանտի հիվանդանոց, ուր և վախճանվել է՝ չհասնելով դատավճռի կայացման:

Իսկ մեղադրանք նրան ներկայացվում էր 67, 68, ապա և՝ 78 հոդվածներով: Դա նշանակում է՝ հակախորհրդային տրոցկիստական նացիոնալիստական գործունեություն, Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական համագործակցության քայքայման նպատակով՝ ազգամիջյան թշնամանքի բորբոքում: Հոլովվում է նաև 17—65 հոդվածը, որ նշանակում է երկրի ղեկավարության դեմ ահաբեկչական գործողությունների նախապատրաստում: Այսպիսի հոդվածներով մեղադրվողներին գնդակահարում էին: Ուրեմն, եթե Չարենցը չմահանար՝ պիտի գնդակահարվեր:

Իր ճակատագրին Չարենցն ընդառաջ էր գնում ոչ միայն միայնակ ու հալածական, այլև՝ անբասիր ու խրոխտ պահվածքով, հարցաքննությունների և ոչ մի «ցուցմունք-վկայություններով» չարատավորելով իր ժամանակակիցների անունն

ու գործը։ Կյանքից հեռանում էր ոչ միայն մեծ բանաստեղծը, այլև, ըստ ամենայնի, հերոսական մարդը։

Նրան քաղեցին գիշերը, բոլորից գաղտնի, աչքից հեռու, Սթեփանից էշմիածին տանող խճուղու ձախ կողմում, Հրազդանի աջ ափին, ձորի բարձունքում գտնվող նեբքին գործերի մինիստրության պանսիոնատի այգու քարքարուտների մեջ։ Դեռ ապրում է այդ օրերի ականատես վկան։

Նա, որ վաղուց արդեն լեգենդ էր դարձել իր ժողովրդի համար, շարունակեց այդպես էլ ապրել մինչև իր նոր հարությունը ու նաև դրանից հետո։ Մարգարեանալով, մի քանի ամիս առաջ՝ 1936 թ. դեկտեմբերի 15-ին, ինքն էր գրել.

Իմ մահվան օրը կիջնի լռություն,
Ծանր կնստի խաղաղի վրա,
Ինչպես ամպ մթին կամ ձին սուտմություն,
Կամ լուր աղետի՝ թերթերում գրած։
...Եվ համր մի պահ՝ գիշերվա կեսին,
Բոլորի սրտում կկանգնի հանկարծ
Անճաղատդ, ինչպես հեռավոր լուսին,
Իմ դեմքը, արդեն հավիտյան հանգած։
Եվ մարդիկ՝ երեկ կյանքիս անծանոթ,
Եվ երբեմ, երբեմ դեմս չտեսած,
Եվ մարդիկ՝ միայն երբեմն ինձանով
Իրենց ֆանտաստիկ առասպելն ձյուսած,
Եվ մարդիկ՝ անգամ երգերիս անգետ,
Մարդիկ, որ թեև կյանքիս արձագանք՝
Մնացել են լոկ վկա անտարբեր
Եվ կարծել են, թե ես վաղո՞ւց չկամ,—
Այդ բոլոր մարդիկ իմ մահվան բոթից,
Ուրախ ըղձանուր աղետից սարսած՝
Չարմացած կզգան ինձ այնքա՞ն մոտիկ
Եվ հանկարծ այնքա՞ն թանկ ու հարազատ...
Եվ երկրում, ինչպես բարձրանա փոշի,
Եվ հոգիներում, ինչպես հուշ հառնի,—
Ելնելով անցած օրերիս նաշից,
Իմ ստվերները պիտի սավառնի։
...Այն որ է՛ս էի, որ ի՛մն էր առաջ,
Արդեն չի հառնի և ոչ մի գրքում,
Եվ ո՛չ մի գրքում աշխարհում գրած,
Եվ ո՛չ մի գրքում, և ո՛չ մի գրքում...

Ջարենցից առաջ շատերն արդեն գնդակահարվել էին, շատերն էլ դեռ պիտի գնդակահարվեին, իսկ բազմահազար անմեղ մարդկանց խմբեր արդեն բռնել էին կամ դեռ պիտի բռնեին աքսորի ճանապարհը։

Ջարենցի մահից հետո, թվում է, թե կարելի է այստեղ վերջակետ դնել։ Բայց այդ վերջակետը նպատակահարմար է հետաձգել ևս մի քանի էջ, երբ երկաթե վարագույրների ետևում ավարտին կհասնի այս ահավոր, այս աննախադեպ, այս անհեթեթ ողբերգության չափից ավելի երկարած փուլը։

Ը

Արյունով ու խոշտանգումների լռեցված ճիչով բացվում է 1938 թ. առաջին առավոտը։ Թերթերի առաջին էջերի ճակատը պսակված էր առաջնորդին ուղղված շնորհավորական բարեմաղթություններով։ Ծտ չի մնում նաև «Գրական թերթը»։

Ուրախական բուռն սիրով ու երախտագիտությամբ շնորհավորում ենք մեծ Ստալինի՝ մեր հոր, մեր առաջնորդի, մեր ուրախ ու երջանիկ կյանքը կերտողի, մեր զրականության մեծագույն բարեկամի նոր տարին։

Ընդ որում՝ Ստալին բառը գրված է հատուկ ընդգծումով։

Մարտի սկզբին տեղի է ունենում, այսպես կոչված, «աջ տեռորիստական բլոկի» դատավարությունը։ 18 հոգի՝ Բուխարին, Ռիկով և ուրիշներ, դատապարտվում են մահվան՝ անձնական գույքի բռնագրավումով։ Դատավճիռը ի կատար է ածվում մարտի 15-ին։ Խմբից երեք հոգի դատապարտվում ևն 15, 20, 25 տարվա ազատազրկման։ Նրանք բռնում են աքսորի ճանապարհը։

Քաղաքական այս ալիքը, Հայաստանի նոր ղեկավարի՝ Գ. Հարությունյանի ցուցումով, նորից ոտքի է հանում հայ գրողներին։ Իահակյանը հրապարակում է «Ոչնչացնել» վերնագրով մի հոդված և, միամտաբար հավատալով պաշտոնական լուրերին, այսպիսի տողեր շարադրում.

. Աշխարհի բոլոր բուրժուազիաները նախանձով պիտի նայեն

այն բոլոր ոճիրների, եղեռնների, որ կատարել են մեծ Միության աշխատավորների դեմ տրոցկիստական-բուխարինական երկերեսանի դավաճանները. բանդիտները: Տրոցկիստական-բուխարինական հրեշները դիվական ծրագրեր են խորհել վերջ դնելու հանճարեղ Լենինի, մեծ Ստալինի քաղկագին կյանքին: Նրանք, այդ գազանները սպանեցին ամաճ Գորկուն:... Ով նրանց գազրելի անունները պատմությունը դարեռով պիտի հիշի խորին զարշանքով և նողկանքով, դասելով նրանց Հուդաների, ժողովրդի դահիճների և մեծագույն դավաճանների կողքին (ԳՓ, 1938, № 12, 11 մարտի:)

Գնդակահարության դատավճիռը ողջունում են Զորյանը, Զարյանը, Դեմիրճյանը, Սարյանը, Շիրազը, բեմադրիչ Գուլակյանը, Տ. Հախումյանը: «Ոչնչացնել ֆաշիզմի գազազած շներին» հոդվածի տակ ստորագրում են Իսահակյանը, Զորյանը, Դեմիրճյանը, Շիրազը, Քոչարը, Բորյանը և ուրիշներ:

Այսպես այս ալիքն էլ է անցնում...

Հունիսի 20-ին տեղի է ունենում գրողների միության վարչության նիստ: Ընտրվում է նոր քարտուղարություն՝ Հ. Գրիգորյան (պատասխանատու քարտուղար), Արազի, Գ. Բորյան: «Գրական թերթի» խմբագիր է ընտրվում Հ. Մելիքյանը. «Խորհրդային գրականության»՝ Սիրասը:

Բայց էլ ո՞ւմ պիտի նրանք ղեկավարեին: 1938 թ. հուլիսի 18-ին, 15 րոպե տևած դատավարությունից անմիջապես հետո, գնդակահարվել էր Վ. Թոթովենցը: 1939 թ. հունվարի 23-ին Զ. Եսայանը դատապարտվել է գնդակահարության, հետո՝ նույն թվականի մայիսի 8-ին մահապատիժը փոխարինվել էր 10 տարվա աքսորի: Հալածվում էին նաև ուրիշները:

Մարդկային հարյուր հազարավոր զոհեր տանող քաղաքական հերթական գրոհները ավելի են ուժգնացնում պաշտամունքի ալիքը: Թե՛ կենտրոնում, թե՛ գավառներում, թե՛ կուսակցական մամուլը և թե՛ գրական՝ ամբողջական համարներ, նյութերի ամբողջական հավաքածուներ է նվիրում Ստալինին: Ամբողջ երկրով մեկ տարածվում են Ջամբուլի տոզերը.

Ստալին—մեր երկրի դու նշանաբան,
Ստալին—դու ոգի մեր պոեզիայի...

Այդ անունը դառնում է չափանիշ, փորձության քար ու նաև... կյանք պարգևող արև՝ հենց բառացի նշանակությամբ, որովհետև, հակառակ դեպքում, այդ կյանքը չէր լինի։

Օրըստօրե նոր սահմաններ նվաճող պաշտամունքի այս տուրքը տալիս էին նաև հայ գրողները։ Մի մասը հոգու հետ մեկտեղ ծախում էր գրիչը, մի մասը օվսաննա էր երգում կյանքը փրկելու համար, մյուսները, կույր աշուղի պես, փառաբանում էին չտեսածը, չիմացածը, բայց եզակին։ Բանաստեղծություններ գրեցին գրեթե բոլորը՝ բացառություններ այլևս չեղան։ Ծաղկեց նաև խմբական չափածո նամակի ժանրը։ Ընտրությունների առթիվ՝ առաջինը փորձեցին երիտասարդները.

Մեր ձայնը ֆեզ, անմար արև, մեր սերը ֆեզ, ո՛վ իմաստուն,
Ուղևոյն ֆեզ ճայ ժողովրդից, որ վառ գարուն ունի սրտում։
Մեր գետերն են լեզու առել, մեր աղբյուրներն են կարկաչում,
Երգիչները բլբուլ դառել, անուշ երգով ֆեզ են կանչում...

Հետո պատմվում է հայ ժողովրդի ծանր կյանքի մասին՝ Թումանյանից չափածո մեջբերումներով, հետո գալիս է Հայաստանի փրկությունը՝ Ստալինից քաղվածքներով և այն տպավորությունն է ստեղծվում, որ եթե չլիներ Ստալինը՝ չէր լինի նաև հայ ժողովուրդը։ Ահա այսպես Ստալինը սարսափի պայմաններում մարդկանց ստիպում էր մտածել այնպես, ինչպես ինքն էր կամենում։ Այս չափածո նամակը, որ տպագրվեց երկու պարբերականներում միաժամանակ (ԳՔ, 1938, № 27, 12 հունվարի, ԽԳ, 1938, № 6—7), ստորագրել էին Գ. Սարյանը, Հ. Շիրազը, Գ. Բորյանը, Հենր. Թումանյանը, Վ. Արամունին, Ս. Կապուտիկյանը, Գ. Արտունին։ Այս ընթացքում և հետո նրանք նաև առանձին բանաստեղծություններ ձոնեցին առաջնորդին՝ մանրամասնելով իրենց «քանկ» զգացմունքները։ Իսկ նամակի ժանրը այնքան էր դուր եկել Շիրազին, որ նա գրեց «Մեր երջանկությունը» պոեմը և դրան դրեց «Նամակ-երգ ընկեր Ստալինին» ուղերձը (տե՛ս ԳՔ, 1938, № 28, 18 հունիսի)։ Ստալինի պաշտամունքը իր գա-

գրքնակետին հասավ 1939 թ., երբ հրատարակվում էր նրա ծննդյան 60-ամյակը։ Լույս տեսան Ն. Զարյանի «Ստալինն», «Դյուցազնագիրք. Ցարիցինյան դրվագներ» գրքերը, տպագրվեց Իսահակյանի «Մեծ Ստալինին» բանաստեղծությունը (ԽԴ, 1939, № 8—9)։ Հանդես եկան նաև մյուսները։

Իսկ ովքե՞ր եկան փոխարինելու Զարենցին, Բակունցին, Մահարուն և մյուսներին և ապա՝ ի՞նչ միտումներ ի հայտ բերեց գեղարվեստական զարգացումը։

Նախ, հարցի երկրորդ կեսի մասին։ 1930-ական թթ. երկրորդ կեսի գեղարվեստական զարգացումը ակնհայտորեն միտված էր դեպի ժողովրդայնությունը, խոսքի ժողովրդականացումը։ Իսահակյանն այս տարիներին ավարտեց «Սասմա Մհեր» վիպերգը, գրեց «Սիրահար Նադոն (քրդական մոտիվ)» պատմվածքը։ Հ. Շիրազը, Մ. Խերանյանը, Ա. Շիրոյանը մշակում էին «Մոկաց Միրզան»։ Այս տրամադրությունների ազդեցությամբ՝ անգամ Զարենցը 1937-ի հոկտեմբերին Թաշկինակի վրա Իսահակյանին նամակ գրեց ու նաև այսպիսի բանաստեղծական տողեր.

...Արգելե ցնորք է ծնեցար՝
Ուշեղալ երգ այնման նախիվ,
Որ հմայե երեխային
Եվ ծերուհու սրտում մեռ:
...Ախ, կուզեի ես ունենալ
Գանե մի երգ այնման չերմին,
Որ գրեի խուզիս որմին—
Եվ նա հավետ այնտեղ մնար...

Գրականության ժողովրդայնացման բարձրագույն արտահայտությունը լինում է այն, որ համամիութենական ընդգրկումով նշվում են «Սասնա ծռեր» ժողովրդական վիպերգի 1000, «Աշք Իգորի արշավանքի մասին» երկի 750-ամյակները, ինչպես նաև Ֆիրդուսու և Ռուսթավելու դարակազմիկ հոբելյանները։

Բայց և գրականության այս ժողովրդայնացման միտումը ուներ նաև այլ հոսանքներ, որոնք բացասաբար ազդեցին գեղարվեստի վրա։ Ըստ էության գրականության այս գիծը

նորություն չէր և գալիս էր 1920-ական ԹԹ. սկզբներից։ Հենց այդ տարիներին դասական ժառանգությունը ժխտելու միտումով զարգացավ, այսպես կոչված, ագիտիցիոն գրականությունը։ Գրում էին «ագիտ-վեպ», «ագիտ-պոեմ», «սատիր-ագիտ» և այլն։ Այդ նպատակով մշակվեց բարձր գրական ոճի իջեցման, հասարակ խոսակցական լեզվի օգտագործման, կենցաղային նյութի չբարդացված շարադրանքի հատուկ գեղագիտություն։ Դա պահանջում էր բուն պրոլետարական գրականությունը։ Զարտացմամբ այդ միտումն ընդունեց «բանվորազարկի» բնույթ և գրականությունն ընթացավ բանվորականացման-ագիտացման, ապա և՝ աշուղականացման ճանապարհով։ Այս առիթով ասենք ու կրկնենք, որ սա Ստալինի վարչակարգի կոլմից գրականության և արվեստի բնագավառում կիրառվող հատուկ քաղաքականություն էր, այն որոշակի և անշեղ նպատակադրումով, որն, ի վերջո, լիարժեքորեն ի հայտ բերեցին աշուղները։ Դա անհատի պաշտամունքի ստեղծման աստիճանական ընթացքի մեջ նրա անվան ու գործի ժողովրդականացումն էր, անգամ այնպիսի ժամանակավրեպ մի բան, որպիսին նույն ուժերի միջոցով նրա անձի շուրջ ստեղծվող նորօրյա բանահյուսությունն էր։

Հիմա պատասխանենք առաջադրված հարցի առաջին մասին։ Կյանքից հեռացած գրողներին 1936—1940 ԹԹ., որքան էլ դա արտառոց լինի, եկան փոխարինելու աշուղները՝ խոսքի ուղղակի իմաստով։ 1938 թ. փետրվարի 9-ին գրողների միության վարչությունը, գրական-մշակութային կյանքում տեղի ունեցող մի բացառիկ դեպքի հանդիսավորությամբ, գրողների միության անդամներ է ընդունում աշուղներ Աշխույժին, Խայաթին, Ահմեդին, Ջալոյին, Հրկեզին, Շերամին, Գրիգորին և Աթային։ Հերթի էր սպասում աշուղ Վերդին (Գեղամ Թարվերդյան)։ Ջուզեպե Վերդիից մինչև աշուղ Վերդի՝ ինչպիսի՜ «թռիչք». ահա հենց սա էլ երազում էր Ստալինը։ Իսկ ինչո՞վ էր հայտնի աշուղ Վերդին. նրանով, որ 1932 թ. հրատարակել էր «Ի՞նչ պետք է իմանալ ճաշարանների մասին» գիրքը, իսկ հետո արդեն կազմել առաջնորդին նվիրված աշուղական բանահյուսության ժողովածուներ։ Գրական կազմա-

էներգության անդամ կարգվելու անհամբեր սպասումների մեջ էին նաև աշուղներ Նոր Սոխակը, Սյունիքը, Շավարշը, Սևուկը, Խազային, Որսորդը։

Գրական, կուսակցական մամուլի ամբողջ համարներ տրամադրվում էին նրանց։ Տպագրվում էին նրանց լուսանկարները՝ փաթաթը գլխներին, բեղ ու մուրուքով, անբաժան սազը ձեռքերի մեջ։ «Գրական թերթը» իր 1938 թ. ապրիլի 12-ի № 17-ը ամբողջությամբ տրամադրում է աշուղներին՝ թվով 26 հոգուս Թերթի առաջին էջին մեծադիր տպագրված է ժողովրդական վարպետ Ղարաֆիլլանի գորգանկարը՝ Ստալինի պատկերով, որին գեղարվեստական խոսքի ձև ու կերպարանք են տվել խոսքի այս նոր 26 «վարպետները»։

Այս միտումը համընդհանուր էր ամբողջ երկրում։ Եվ պատահական չէ, որ այս տարիներին գրականության առաջին պլան մղվեցին դաղստանցի Սուլեյման Ստալսկին և ղազախ Ջամբուլ Ջաբաևը, երկու տարիքն առած և Ստալինի համար անվտանգ մարդիկ, որոնցից առաջինը, ի մեծ ցավ նրա անունը տարփողողների, իր մահկանացուն կնքեց 1937-ի նոյեմբերին։ Հեշտ ժողովրդականության այս մոլուցքը մի պահ համակեց նաև Շիրազին, որը իր «Երգ Հայաստանի» (1940) երքում զետեղեց նաև «Աշրղ Շիրազ» շարքը։

1937 թ. սեպտեմբերի 9-ին «Պրավդան» տպագրեց «Ժողովրդական ստեղծագործության ծաղկումը» հոդվածը՝ ըստ սմենայնի փառաբանելով գրականության և արվեստի տարբեր բնագավառներում հանդես եկած ամեն տեսակի աշուղներին։ Դրան անմիջապես արձագանքեց Ն. Զարյանը (ԳԹ, № 28, 17 սեպտեմբերի)։ Եվ, ընդհանրապես, Զարյանը կարծեք վերցրել էր աշուղների հոգևոր առաջնորդի դերը։ Սեպտեմբերի 3-ին գրողների տանը նա մասնակցել է «Հայ աշուղներ» (1937) ժողովածուի քննարկմանը և հանգամանալի դեկուցում կարդացել «գրական» այս նոր համալրումի մասին։ Զարյանը աշուղների մասին զեկուցել է նաև նրանց գրողների միության անդամ դառնալու կապակցությամբ և ասել.

Մեր աշուղական պոեզիան այժմ զարգանում և աճում է, առաջ է ընթանում գրական պոեզիայի հետ։ Նրանք մեկը

մյուսին լրացնում և օր օրի նոր, հսկայական քայլեր են անում (ԳԹ, 1938, № 7, 12 փետրվարի)։

Այդուհետև գրողների միությունում պարբերաբար գումարվում են հայ, քուրդ ազրբեջանցի աշուղների հանրապետական խորհրդակցություններ, որոնք ամենայն ջանասիրությամբ անցկացնում են գրողները։ 1938 թ. փետրվարի 2-ին հրավիրվում է Հայաստանի աշուղների առաջին համաժողովարը, որին մասնակցում են հայ, քուրդ, ադրբեջանցի 130 աշուղ։ Վերստին զեկուցողը Ն. Զարյանն էր։ Սկսած շարժմանը զարկ տալու համար Լենինականի «Բանվորը» իր հերթին հավաքում և առանձին գրքով տպագրում է «աշխատավորության օլիմպիադայի» նյութերը, որոնք ժողովրդական բանահյուսության նոր «գոհարներ» էին Ստալինի, նրա բերած նոր կենցաղի, նրա ստեղծած նոր ըլուղի մասին։ Իսկ գրականագետներն սկսում են խորազնին ուսումնասիրել այս նոր երևույթը։ Նույն այն Վ. Կիրպոտինը, որ ճակատագրական պահին ոչ մի լավ բառ չգտավ Զարենցի համար, իր «Հայ ժողովրդի պոեզիան» ուսումնասիրության մեջ, որը տպագրվել է և՛ հայերեն, և՛ ռուսերեն, ի հայտ եկել և՛ հոդվածի, և՛ առաջաբանի տեսքով, ոչնչացնելով գրական ամեն մի չափանիշ, ձայնը գլուխը գցած փառաբանում է այս հակագրական երևույթը (տես՝ ԽԳ, 1938, № 1)։ Նրանից ետ չէին մնում նաև հայ գրականագետները։ Ա. Ասատրյանը մեկը մյուսի ետևից հոդվածներ է տպագրում այսպիսի հարցադրումներով՝ «Ստալինյան սահմանադրությունը խորհրդային հայ աշուղների երգերում» (ԳԹ, 1938, № 27, 12 հունիսի), «Ստալինի կերպարը խորհրդային հայ պոեզիայում» (ԽԳ, 1939, № 12)։ Թե այս մոտիվներով և թե այդ շրջանի, այսպես կոչված, ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությամբ այս և հետագա տարիներին հանդես են գալիս շատերը և իրենց գրքերը չերմ ուղերձներով ընծայում Նրան՝ այն օրերի համար «Միակին» ու «Անփոխարինելիին»։

Այս աշուղականության և կեղծ ժողովրդայնության դեմ մի քանի տարի անց պիտի կռվեր գրական նոր սերունդը, որը, այդ տարիներին դեռևս խանձարուրում էր։ Պիտի կռվեր և, սկզբում ջաղտնի, իսկ հետո՝ բացահայտ, փորձեր

վերականգնել չարենցյան ոտնահարված [illegible] իրեն հուշակելով նրա դպրոցի սան, ապա և հուշի պատառիկներ պատմելով անցած օրերի ողբերգության ու այդ օրերի ամենամեծ զոհի՝ Ծղիշե Չարենցի հերոսական կյանքի մասին։

Ահա, այս է հշմարտությունը և ամեն ինչ այսպես է եղել՝ անուն առ անուն, դեպք առ դեպք, տարի առ տարի։

Իսկ որպես հավիտենության ուղղված պատգամ՝ ժամանակի խորքից հնչում է մեծ նահատակի խրոխտ, հպարտ, բայց և տառապագին ձայնը.

Իմ օրերում ես ցանկացա լինել վսեմ և իմաստուն,
Իմ օրերում ես ցանկացա կյանքս զոհել դրա սիրուն:

Իմ օրերում դժվար էր շատ լինել հաստատ ու մնայուն,—
Իմ օրերում պատմությունն էր յուրաքանչյուր տողիս նայում:

Իմ օրերում երգը միայն նրանո՛վ էր մեծ ու անգին,—
Որ բարբոսում, ճուռ էր տալիս դեռ չկոփված, չեկած կյանքին:

Իմ օրերում շա՞տ էր դժվար երգը՝ կյանքի համար երգած.—
Յուրաքանչյուր բառը—կամ մի թռի՛չք էր վեհ, կամ—մութ արկած:

...Ողջու՛յն, ուրեմն, օրերիս, իմ օրերի անհո՛ւն շնչին,—
Եվ օրերիս հանդեպ այս մեծ— թող երգս ձեզ թվա չնչին...

Բայց եթե կա երգում իմ գեթ շեշտ կամ մի բառ իմ օրերից—
Ես կմնամ ճար ու հավետ, ես կարքանամ մահից նորից...

Մե՛ծ եմ և վեհ իմ օրերով—ես այդ գիտեմ—ճուռ հավիտյան,
Ողջո՛ւյն, իմ ե՛րգ, իմ խնդությո՛ւն, իմ օրերի անհո՛ւն մատյան ..

ՉԱՐԵՆՑԻ ԵՐԿՐԱՅԻՆ ՍԵՐԸ

Ես արդեն անցել եմ ճանապարհը
Երկրային բոլո՜ր հույզերի...
Ե. Չարենց. Օր. X-ին

1920-1921 թվականներին Ե. Չարենցն ապրում էր իր կյանքի ամենաբուռն օրերը։ Այդ աննախադեպ եռուզեռը նրան պարտադրել էր ոչ միայն ազգային, քաղաքական և հանրային կյանքը, այլև՝ անձնական ճակատագիրը։ Սիրո հրդեհն այրում էր 23-24-ամյա երիտասարդի հոգին։ Եվ մեկը չէր նրա սերը, մեկից «դաղվածներից» չէր նա։

Արտաքուստ բարեկիրթ, անգամ սառը, բայց ներքուստ վարար ու կրքոտ սեր է նա տածել բանաստեղծուհի Արմենուհի Տիգրանյանի (Մենուհի, 1888-1962) հանդեպ, որը նրանից մեծ էր տասը տարով։ 1910-ական թվականներին Ա. Տիգրանյանին նախորդել են Աստղիկ Ղոնդախչյանը, Կարինե Քոթանջյանը, Հյուսիս Թառայանը, որոնց Չարենցը նվիրել է իր գրքերը, առանձին բանաստեղծություններ, ակնարկել որոշ երկերում։ Ա. Տիգրանյանին ձոնած նրբակիրթ երգերը «Էմալե պրոֆիլը Ձեր» խորագրով տպագրվեցին մամուլում 1921-ին և երկերի ժողովածուի առաջին հատորում՝ 1922-ին։ Ի դեպ, ֆրանսիական պոեզիայի պառնասական ուղղության հետ ունեցած կապի հետ մեկտեղ, որը հայտնի է, շարքը ընդհանրություններ է հանդես բերում նաև Պ. Վերլենի «Գալանտ տոնակատարություններ» («Les fêtes galantes», 1869) գրքի հետ։

1920-ին Չարենցի գրած և Ա. Տիգրանյանին նվիրած մի քանի բանաստեղծություն տպագրվեց ավելի ուշ՝ 1964-ին («Գրական թերթ», № 39, 29 սեպտեմբերի)։ Դրանք ևս հայտնի են։ Բայց այստեղ կա մի նրբություն, որը չի կարելի անտեսել։ Բանն այն է, որ Չարենցի սերն ամենևին էլ անպատասխան չի եղել։ Դա են վկայում 1964-ին տպագրված բանաստեղծությունների ձեռագիր թերթիկները (ՉՖ, № 3), որոնք նախկինում պահվել են Ա. Տիգրանյանի մոտ։ Այդ թերթիկների հակառակ երեսին ոչ Չարենցի ձեռքով գրված է երկու բանաստեղծություն։ Ամենայն հավանականությամբ դրանց հեղինակը Ա. Տիգրանն է։ Այդ ենթադրության համար հիմք է տալիս Չարենցի ֆոնդում պահվող Լեյլիի ալբոմը (№ 245), որը բացվում Ա. Տիգրանյանի «Նորը լավ է, քան թե հինը» բանաստեղծությամբ՝ գրված հեղինակի ձեռքով։ Վերոհիշյալ ենթադրությանը մղում է ձեռագրերի նմանությունը։ Ահա այդ բանաստեղծությունները.

Այսպես բաժան, բախտավ գաժան,
Քեզնից հեռու մի լուռ ուրու
Տենչում էի երազում գեր լինել ինձ հետ,
լինել ինձ հետ։

Ու ժպտացի, ու թախծեցի, երբ կարոտով նկատեցի
Իմ գեմ դիմաց պատից կախված մի վառ նկար,
խենթ ճանապարհ,

Փոշով արթած ձիերն անսանձ
թռչում վիհ սուր—արբնքաց,
Միրաս էլ խարված այնպես բեղաց՝
Նկարն անհուն հանույթ բվաց։
1920 թ., 16 փետրվարի

ՉԱՐԵՆՑԻՆ ԷՔՍՊՐՈՄՏ

Չարենց, գիտես, չէ՞, դու գիտես,
Որհան բանկ է ընկեր հոգին,
Բայց դու գիտես և չգիտես,
Ով է եղել միշտ ֆո կողին։

Եվ ինձ համառ գու էլ ուրաճ
Թանկ ես վատնել, թանկ ու բյուրեղ՝
Հավատալով, որ կան, ախ, կան
Լավեր, ևարեր մեր մեջ այստեղ...

1921 թ., 20 մայիսի

Այս բանաստեղծությունները փոխադարձ սիրո ու մտերմության վկայություններ են։

Հայտնի է Չարենցի մոլեգին սերը բանաստեղծուհի Լեյլիի (Փառանձեմ Սահակյան-Տեր-Մկրտչյան, 1884-1951) հանդեպ, որը նրանից տարեց էր 13 տարով։ Նրան ևս Չարենցը նվիրեց բանաստեղծությունների առանձին մի շարք՝ «Փողոցային պչրուհուն», որը ևս տպագրվեց Երկերի ժողովածուի առաջին հատորում՝ 1922-ին։ Ի դեպ, այդ շարքը Չարենցը գրել է Լեյլիի ալբոմում, որը, ինչպես ասացինք, բացվում է Ա. Տիգրանյանի ձեռքով գրված «Նորը լավ է, քան թե հինը...» եռատուն բանաստեղծությամբ՝ թվագրված 1919, 13 ապրիլի, Թիֆլիս։ Սա նշանակում է, որ Արմենուհին և Լեյլին մտերիմներ են եղել, որոնց ընդհանուր մտերմությունը վայելել է և Չարենցը։ Ա. Տիգրանյանի բանաստեղծության մեջ կան այսպիսի տողեր. «Գիտենք ամեն ինչի գինը, Արբենք գինով ու ևիրով...», որ հոգևհարազատ էր կյանքի հիմերի կործանում, գաղթ, եղեռն տեսած սերնդին։

Լեյլու մարդկային նկարագիրը կարևոր տեղ է գրավում Չարենցի այս տարիների կյանքում և ստեղծագործության մեջ։ Բացի վերոհիշյալ շարքից Չարենցը նրան հասցեագրել է նաև շատ ջերմ նամակներ (տես՝ Երկերի ժողովածու, հ. 6. 1967, էջ 372—375, 377—379, 431)։ Այդ ոգով բանաստեղծը նրան է նվիրել նաև իր գրքերը, որոնց ընծայագրերը շատ բան են հուշում։ «Միածան» ժողովածուի վրա մնացել են այս տողերը՝ «Սիրելի և անգին Լեյլիին անչափ—սիրով ու համակրանքով, 921, VI. 3, Թիֆլիս, Իրա սենյակում»։ «Սոմայի» Լեյլիին նվիրած օրինակի վրա գրել է «Փողոցային պչրուհուն» շարքի «Շամիրամ», իսկ «Ամբոխները խելագարված» պոեմի դարձյալ նվիրաբերված օրինակի վրա՝ «Անկումների սարսափից» բալլադները։ «Երեք ռադիոպոեմները» 1921-ի հոկտեմբերի 18-ին Մոսկվայում նվիրել է դարձ-

յալ «Սիրելի Լեյլիին»։ 1922 թ. հունվարի 17-ին դարձյալ Մոսկվայում գեղեցիկ մի լնծայականով Լեյլիին է նվիրել նաև Ա. Ախմատովայի 1922 թ. ժողովածուն (տես՝ Անտիպ և չհավաքված երկեր, էջ 482—483)։ Չերմուխյան տաք ալիքը շարունակվել է նաև մի կարճ պահ. 1923-ի հունվարի 7-ին «Ոսկանես անսերը» Թիֆլիսում նա նվիրել է «Ամենասիրելի Լեյլուն»։ Բայց ահա արդեն «կապկազի» ընծայագիրը պաշտոնական բնույթ ունի. «Սիրելի Լեյլի Մեջլումովնային և իր կողակցին՝ Գևորգին, իրենց Չարենցից։ Մոսկվա քաղաք, 923 թվի, Գ. XII, 7-րդ ամի հավասարապետության»։ Չերմ մակագրություններով Չարենցը Լեյլիին է նվիրել նաև իր լուսանկարները, որոնց վրա գրած է. «Սիրելի Լեյլիին, որ չմոռանա, 921, VII. 8. Թիֆլիս», «Սիրելի Լեյլիին, իմ նկարը»։

Արփիկի ողբերգական մահից առաջ Չարենցի կյանքում տեղի է ունենում աղմուկ հանած մի միջադեպ։ 1926 թ. սեպտեմբերի 5-ին Աբովյան փողոցում հոգեկան անհավասարակշիռ կացության մեջ Չարենցը ատրճանակով կրակում և վիրավորում է Մարիաննա Այվազյան անունով մի գեղեցկուհու, որի հանդեպ նախապես ունեցել էր բուռն զգացմունքներ։ Բարեբախտաբար, Չարենցը վրիպում է և սոսկ թեթև ֆերծվածք պատճառում այդ աղջկան, որը կոմպոզիտոր Արտեմի Այվազյանի քույրն էր։ Նույն օրը Չարենցը կալանավորվում է և ուղարկվում է Երևանի միլիցիայի բաժանմունք։ Այս միջադեպի մասին պահպանվել է Չարենցի բացատրությունը, գրված հաջորդ օրը՝ սեպտեմբերի 6-ին և հասցեագրված Հայաստանի կոմունիստական կուսակցության վերստուգիչ հանձնաժողովին։ Այդ ուշագրավ փաստաթուղթը, որ Հ. Աղասարյանը դեռևս 1942-ին հայտնաբերել է ՀԿԿ կուսկոլեգիայի արխիվում և Չարենցի ձեռքով լրացրած կուսակցության անդամի անձնական թերթիկի հետ մեկտեղ հրապարակել միայն բանաստեղծի ծննդյան 90-ամյակի օրերին (Բանբեր Երևանի համալսարանի, 1987, № 2, էջ 77—82), լույս է սփռում նրա այդ օրերի ապրումների ու մտորումների վրա։ Ընդ որում, դրանով նաև ճշգրիտ վկայագրի արժեք է ստանում Ջ. Եսայանի բացատրությունը, որ, նա, Չարենցի դատավարությանը ներկա լինելուց հետո,

հրապարակել է Փարիզի «Երևան» թերթում (1926, № 163)։ Այդ հոդվածը արժանիորեն վկայակոչված է «Երևանի ուղղիչ տնից» հուշակնարկի ծանոթագրություններում (V, էջ 615)։

Հույս ունենալով, որ իրեն կհավատան և կըմբռնեն՝ իր բացատրագրում Չարենցը խոստանում է ասել «ամբողջ ճըշմարտությունը»։ Դեպքը տեղի է ունեցել Արփիկի բացակայությամբ, երբ վերջինս մեկ ամսից ավելի տևող ժամանակով մեկնել է Լենինգրադ։ Այս ընթացքում բանաստեղծը տարվել է Մ. Այվազյանով, որը նրա վրա միանգամից թողել է «անջնջելի տպավորություն»։ Երկարատև փորձերից հետո, ընկերներից մեկի միջոցով հաջողվում է ծանոթանալ նրա հետ, որի գոյությունը, հիվանդագին չափերի սրված հոգեկան սեվեռուն զգայությունների պայմաններում, Չարենցի համար, ինչպես ինքն է խոստովանել, դառնում է «Իդեա Ֆիքս», կրչուն գաղափար, զառանցական ցնորք։

Մեր ծանոթանալուց երկու օր հետո,— գրում է Չարենցը,— ես արդեն զգում էի, որ արդեն կորցնում եմ կամքս, հասնում եմ խելագարության։ Ինձ հարկավոր էր հեռանալ Երևանից և հանգստանալ, ես այդ զգում էի իմ ամբողջ էությամբ, բայց հնարավորություն չկար։ Ով ես հասկացա, որ հոգեկան այդ կացությունը չի կարող երկար տևել, որ մոտենում է վախճանը, որ հարկավոր է դիմել վճռական քայլերի։ Նսխ ես տեսնվեցի Մարիաննա Այվազյանի հետ և բաժանվեցի, սակայն նախ ամեն այդ ես շատ լավ հասկանում էի, որ ոչինչ էլ չի դուրս գա դրանից, որ ես ընկնում եմ հիմարության մեջ, որ այդ ամբողջ պատմությունը զառանցանք է և ուրիշ ոչինչ։

Բայց և այնպես ես որոշեցի խոսել նրա հետ և երբ երկու րոպե տևող խոսակցությունից հետո ես հասկացա, թե ինչ ծիծաղելի դրության մեջ եմ ընկել, ինձ համար պարզ դարձավ, որ հարկավոր է դիմել ծայրահեղ միջոցի. ես որոշեցի գնալ տուն, վերցնել ատրճանակս և կես ժամ հետո սպանել նաև։ Այդպես էլ արեցի։ Չնայած որ ես երկու անգամ կրակեցի երկու քայլ հեռավորության վրա—բարեբախտաբար ձեռքիցս վրիպեց, և նա ստացավ միմիայն մի անվնաս վերք։ Անմիջապես ամբողջը։

Սրանից առաջ Չարենցը, առանց հոգեկան ներքին վիճակների վարագուրման, ներկայացնում է այն կացությունը, որի մեջ եղել է ինքը։ Դա ծանր և հիվանդագին հոգեբանական վիճակ է, որը զարմանալի հստակությամբ և անկեղծությամբ նկարագրում է բանաստեղծը.

Վերջին ամսվա ընթացքում, կնոջս Լենինգրադ գնալուց հետո, ես գտնվում եմ հոգեկան ծայր աստիճանի գրգռված դրության մեջ. դրությունը բարդացավ նրանով, որ վերջերս ես սկսեցի տառապել խրոնիկական անհնությամբ։ Սրա՛ն նպաստում էր մի շատ փոքրիկ հանգամանք, որ կարող է աննշմարելի թվալ։ Դա այն է, որ իմ ապրած բնակարանում, էլեկտրական լույս չլինելու պատճառով, ես ստիպված էի բնել մութ սենյակում—մի բան, որ ինձ շատ գրգռում է ու վախեցնում։ Նյարդային նման գրգռված կացությունը, երևի առաջացրեց իմ մեջ վախ մենակությունից. ես վախենում էի մենակ մնալ, ես խնդրում էի ընկերներիս, որպեսզի բնեն ինձ հետ միասին։ Գիշերվա ընթացքում բնակարանում հնչող յուրաքանչյուր ձայն ինձ սարսափի էր մատնում։ Այս ամենին գումարենք և այն, որ եթե ինձ հաջողվում էր բնել՝ այդ բուռը անմիջապես փոխվում էր զարհուրելի գառնացանի։ Ամեն գիշեր, պարբերաբար, ես տեսնում էի միևնույն երազը. հագիվ էի աչս փակում, երբ հանկարծ թվում էր ինձ, թե իջնում է երեսիս ծանր, խոնավ, կպչող մի թաթ. իջնում և ու խեղդում։ Այդ բոլորից մի երկ գտնելու համար ես սկսեցի պարբերաբար խմել. վերջին ամսվա ընթացքում ես խմում էի յուրաքանչյուր օր միջին հաշվով մի շիշ օղի։ Ես տեսնում և զգում էի, որ այս ամենը այսպես չի կարող շարունակվել, որ հոգեկան նման կացությունը կարող է վերջանալ ողբերգությամբ։ Ես խնդրում էի իմ բոլոր ընկերներին, որ ինձ հնարավորություն տրվի գոնե մի ամսով գնալու ուրիշ տեղ. այս մասին հայտնեցի նաև ընկ. Աշոտ Հովհաննիսյանին, սակայն, դժբախտաբար, գնալու հնարավորություն չեղավ։ Անհավասիկ այն ընդհանուր կացությունը, որի ֆոնի վրա առաջացավ այս պատմությունը։

Ասենք, որ հոգեբանական այս վիճակները Չարենցին

քնորոշ են եղել ի սկզբանե և գնալով սրվել են ու խորացել։ Դրա վկայությունը նրա առաջին իսկ գրքի երեք բանաստեղծություններն են՝ գրված 1913 թ., երբ բանաստեղծն ընդամենը 16 տարեկան էր, բայց գրում էր անհուսության մատնված կյանքի, անքուն գիշերների ու մեռելոցի մասին։ Նույն հոգեբանական վիճակի ծնունդ են նաև «Կան անտես հյուրեր...» (1915), «Երեքը (պոեմ հավիտենական)» (1915-1916), «Դահիճը կարմրազգեստ» (1916), «Հիշում եմ. հնչեց զանգը միջանցքում» (1916), «Մարմնիս երազը» (1916) գործերը, որոնցում բանաստեղծի ներանձնացած զգայությունները հայտնաբերում են տեսիլների, անտես հյուրերի զառանցական, ցնորային պատկերներ։ Դրանցում մարդ անհատի ողբերգականորեն ծանր կյանքն է, բայց ոչ թե արտաքին հեշտ ու տեսանելի կողմերով, այլ անհատական նկարագրից եկող և անկեղծությամբ վերարտադրվող հոգու անդունդների անտեսանելի ոլորապտույտների դարձդարձումներով։ Սա Զարենցի հանճարի առաջնային կողմերից մեկն է։ Բանտարկության առիթով գրված բացատրությունից երկու տարի անց, թե այս, թե այն օրերի զգացողությամբ, որոնց արանքով անցել է տասը տարուց ավելի ժամանակ, այսինքն՝ 1928 թ. Զարենցը գրում է ահավոր ուժի մի բանաստեղծություն, որի մեջ ի մի են բերված և՛ 1913-1916 թթ. զգայական գրգիռները, և՛ 1926 թ. սեպտեմբերին նրան պաշարած ապրումները.

Ես վախենում եմ, ինչպես ննկրոման, կես-գիշերային ժամից,
Երբ ելնում է լուսինը դագաղից ու մեռնում է անգամ Համին:
Այդ ժամին, թե արթուն եմ լինում, զգում եմ սարսափով,
Որ ահա կգա Բոդլերը, կերևա Էդգար Պոն:
Մերուսի Վերլենը կգա ու Ֆավնի ձայնով երգեցիկ
Կերգե աշուն, թախիծ, գիշերվա լապտեր, ակացի:
Եվ դեմը խշշացող բարդին, կթվա կրկին, թե Հայնեն է—
Եվ լուսինը կրկին վերևում կթերթե իմ տխուր «Ռուբայիները»...

Նորից վախ, այս անգամ արդեն՝ մեռելահարցուկի վախ, նորից կեսգիշեր ու մենություն, տագնապներն ավելի ընդգծող ու սրող լռություն՝ մեռնող քամի ու դագաղից ելնող լուսին, հարություն առնող ուրվականներ, որոնց հետ՝ ամբողջ օրը

նա գուցեև զրուցել է ու նրանց մեջ՝ Բոդլեր, Պո, Վերլեն, Հայնե... Ու այս բոլորի շուրջպարի մեջ նետված ստեղծագործող անհատ, որ ամեն անգամ նման պահերի ընկնում է իր ցնորման տարերքի մեջ։

Հետագայում ևս Չարենցը չի ազատագրվել այս ներանձնացած, հոգու անդունդի եզրին կանգնելու խելագարեցնող վիճակներից, երբ կարող ես երկնքի կամարին կանգնածի պես թևերդ բացել և ճախրելով իջնել երկրի դաշտերի վրա։ Մի այնպիսի վիճակ, երբ ինքդ տեսնում ես քեզ արարքներ կատարելիս, գիտակցում, բայց և, անկարող ինչ որ բան փոխելու, անկամ հետևում քո իսկ մարմնից անջատված ոգու այս նոր կենսաձևին։ Այլոք դրանք կարող են կոչել և՛ խելագարություն, և՛ զառանցանք, դրանց բառարանային կիրառությամբ, բայցև՝ թե՛ բանաստեղծը, թե՛ նրան ճիշտ հասկացողը դրանք նորից կարող են կոչել խելագարություն ու զառանցանք, սակայն այս անգամ՝ ստեղծագործական ցնորական տարերքի գիտակցությամբ, ուր մահու պես դաժան ու ծնունդի պես օրհնաշափ ինքնանջատումով ծնվում է խոսքը, ի սկզբանե տրված Բանը։

1930-ական թվականներին՝ հատկապես 1935-1937 թթ. կրած գործերից, երբ բանաստեղծը մեկուսացված էր հասարակական կյանքից, միայնակ ու անկողնուն գամված, կարելի է առանձնացնել վերը նշված բնույթի այլ գործեր ևս՝ «Հերոսի հարսանիքը» դրամատիկական պոեմը, «Զառանցանք», «Էկլեզիաստես», «Հուսահատության ժամերին իմ ես...» բանաստեղծությունները, «Անվերնագիր» պոեմի «Երազների մասին» գլուխը և այլն։

Ահա իրեն տևականորեն ուղեկցող և պարբերաբար սրվող այս հոգեբանական վիճակի ճշգրիտ և անվրեպ նկարագրություններից հետո, 1926 թ. սեպտեմբերի 6-ին գրած նույն բացատրագրում, իր կատարած ծանր հանցանքի սթափ գիտակցությամբ, Չարենցը այսպես է շարունակում ու ավարտում խոսքը.

Այժմ, երբ ես աղեղն իմ հրեական արարով վերջ տվի իմ ամբողջ կյանքին, ամենահիմար և վայրենի ձևով խեղաթյուրեցի այն — ինձ համար ոչ մի ելք չի մնացել։ Ես այս

գգում ու նասկանում եմ ավելի լավ, քան կարող է նասկանալ մեկ ուրիշը: Քրեական արարքով ինքս ինձ դնելով կուսակցության շարքերից դուրս՝ պարզ է, որ ես չեմ կարող գտնել ուրիշ միջավայր, որ ինձ հարազատ լինի և բավարարի: Պարզ է, որ չկա վերադարձ. վերջ: Ենթադրենք, որ մի քանի ամիս կամ տարի քանտ նստելուց հետո մի օր դուրս կգամ, ինչ պիտի անեմ. ես չեմ պատկերացնում այդ վայրկյանը. **Я живу еще физически— но я уже труп. Я чувствую свое разложение. Я с ума схожу.** Եվ այժմ ես միայն մի խնդրանք ունեմ ընկերներին՝ դատել ինձ որքան կարելի է խիստ և եթե կարելի է դատապարտել մահվան: Դա ամենալավ ելքը կլիներ թե ինձ համար, թե ընկերների...

Ծայրահեղ անցումների արագությունը և վճիռներ կայացնելու կտրուկությունը երեկ հոգեկան խանգարման մեջ գտնվող Չարենցին այսօր դարձնում է ծայր աստիճանի սթափ, իսկ իր բացատրությունն ու խոստովանությունը հանգեցնում իր դեմ մահապատժի կիրառման անհրաժեշտության: Սա Չարենց մարդ-անհատի քնավորությունն է՝ նույնությամբ տեղափոխված ստեղծագործությունների մեջ:

Նոյեմբերի 9-ին կայացվում է Չարենցի դատավճիռը: Այդ առիթով «Խորհրդային Հայաստան» թերթի դատական լրատվությունը նոյեմբերի 11-ի № 260-ում հաղորդում է.

Դատարանը, նկատի ունենալով մեղադրյալի բացատրությունները ու ցուցմունքները, ինչպես դատավարության, նույնպես և նախնական քննության ընթացքում, աչքի առաջ ունենալով նաև վկաների ցուցմունքները ու գործի ամբողջ նյութերը, որոշեց.

ե. Արգարի Չարենցին նանաչել մեղավոր հանձայն առաջադրված մեղադրանքի, ըստ fr. or. 14–142 հոդվ. և ենթարկել սոցիալական պաշտպանության միջոցի — ազատազրկման, ութ տարի ժամանակով, խիստ մեկուսացմամբ, սակայն, աչքի առաջ ունենալով այն, որ հասցրած վերքն անընդունակ է ու անվտանգ կանքի և առողջության համար, որ Չարենցի նկատմամբ երկարատև ազատազրկումը կարող է կործանիչ ազդեցություն ունենալ նրա գրական ընդունակությունների վրա, հանձայն fr. or. 28 հոդվածի, սոցիա-

լական պաշտպանության միջոցը մեղմացնել և վերջին հաշվով ենթարկել ազատազրկման 3 տ. ժամանակով՝ առանց խիստ մեկուսացման և իրավունքների սահմանափակման և նամաձայն fr. or. 31 հոդվածի, դուրս գալով նախնական կալանքը 2 ամիս 5 օր, ազատազրկման սկիզբը հաշվել ս. թ. սեպտեմբերի 5-ից:

...Դատավճիռը վերջնական է և ենթակա բեկման 3 օրվա ընթացքում Հայաստանի Գերագույն դատարանում:

Ահա այս պայմաններում 1926 թ. դեկտեմբերի 29-ին Ջարենցի կնոջը՝ Արփիկին (Արփենիկ Տեր-Աստվածատրյան-Ջարենց, ծնվ. 1889 թ., ամուսնացել են 1921 թ. ամռան սկզբին) արտարգանդային հղիություն ախտորոշմամբ տեղափոխում են հիվանդանոց, ուր և նա վախճանվում է 1927 թ. առաջին օրվա գիշերը, լույս հունվարի 2-ին: Կնոջը հուղարկավորելու կապակցությամբ Ջարենցը դիմում է վերադաս մարմիններին և օրենքի սահմաններում ստանում 7 օր արձակուրդ: 1927 թ. «Խորհրդային Հայաստանի» մարտի 9-ի № 55-ում տպագրված «Ողիշե Ջարենցի գործը» հաղորդման մեջ կարդում ենք.

Դեկտեմբերի 29-ին Ջարենցի կնոջ հիվանդության և մահվան պատճառով ներքգործժողկոմատի կողմից նրան տրվում է 7 օր արձակուրդ, համաձայն Ուղղիչ-Աշխ. օր. 103-14; ճ. ն., ըստ որի միջին շարքում հաշվվող կալանավորներ կարող են մեկ տարվա մեջ 7 օր արձակուրդ ստանալ:

Սակայն Ջարենցի հոգեկան առանց այն էլ խանգարված դրությանն ավելի աչակցող հանգամանք հանդիսացավ նրա կնոջ անակնկալ մահը: Նրա հոգեկան դրությունը վատթարացավ այնչափ, որ նրան կալանքի տակ պահելը դառավ անհնար: ... Հանձնաժողովը, հունվարի 8-ին ծանոթանալով Ջարենցի հոգեկան դրությունը, գտավ, որ նրան հետագայում կալանքի տակ պահելը վերջնականապես կխաթարի նրա առողջությունը:

Այդ հիման վրա ներքգործժողկոմատին կից Բաշխ. հանձնաժողովը իր հունվարի 8-ի արտակարգ նիստում որոշեց միջնորդել ՀԽՍՀ Կենտգործկոմի նախագահության առաջ՝ Ջարենցի նկատմամբ կիրառվող սոց. պաշտպանության մի-

ջոց կալանքը փոխարինել հարկադիր բժշկությամբ, ուղարկելով նրան սանատորիաներից մեկը:

Ներքնաժողովրդական դատարանի հանձնաժողովը որոշումն ի կատար է ածել:

Այս ընթացքում Գերագույն դատարանի կողմից Չարենցի գործը վերաորակավորվում է. «այն է՝ մահափորձ կատարված հոգեկան դրության խանգարման մեջ»:

Ահա հոգեբանական այս դրության մեջ Չարենցը մասնակցել է կնոջ հուղակավորությանը: Ամբողջ ճանապարհին, որ ձգվել էր դեպի ներկայիս Կոմիտասի այգին, այսինքն՝ նախկին Մլեր կոչված գերեզմանոցը, կյանքից հուսահատ ոգևավից տառապագին Չարենցը գոռացել է ու ողբացել: Գերեզմանափոսի մոտ կանգնած դիմադրել է, չի թողել, որ դագաղը գերեզման իջեցնեն, ստիպել է բացել կափարիչը: Վերջում ուժասպառ ընկել է հարազատի շիրմաքարին և աղեկտուր մղկտացել իր կորուստը (ավելի մանրամասն տես՝ Վ. Հովսեփյան, Չարենցյան մտաբերումներ.— Հուշեր Չարենցի մասին, էջ 190):

Արփիկի մահը Չարենցը ահավոր ծանր է տարել: Մահվան հաջորդ օրն իսկ այրել է հանգուցյալ կնոջ բոլոր զգեստները, որոնք ինքը սիրով ու գուրգուրանքով բերել էր արտասահմանից: Այրել է, որպեսզի ուրիշի ձեռքը չընկնեն և որևէ նով իսկ չնսեմանա սիրելիի հիշատակը: Իսկ որպես յուրահատուկ արժեք մասունք հանել է Արփիկի գիպսե դիմակը և ձեռքի կրկնօրինակը: Դրանք պահվում են բանաստեղծի տուն-թանգարանում: Այդ օրերին էլ Չարենցը մարմնին դաջել է Արփիկի մահվան տարեթիվն ու նրա անունը:

Հոգեկան այս խոռվքի մասին 1935 թ. փետրվարի 20-ի հարցաքննության ժամանակ շատ ուշագրավ մանրամասն է հաղորդել Նշան Մակինցը: Նա ասել է, թե ինչպես 1930 կամ 1931 թ. Չարենցը գիշերով իրեն զանգահարել է տուն և խնդրել գալ իր մոտ՝ հյուրանոց, ուր ապրում էր: Սեղանին դրված է եղել նրա հանգուցյալ կնոջ գիպսե դիմակը և գիպսե ձեռքը: Խմած և հուզված վիճակում գտնվող բանաստեղծը Մակինցի ներկայությամբ 3 սրվակ մորֆի է սրսկ-

վել և, Արփիկի հիշատակի համար լաց լինելով, ասել, որ բանկանում է ինքնասպանություն գործել։ Մակինցը նաև վկայել է, որ այս դեպքից մի քանի օր հետո Զարենցը կտրել է զարկերակը։ Բղնունու տագնապալի կանգից հետո ինքը կանչել է պրոֆեսոր Քեչկին, որը և կապել է Զարենցի ձեռքը։

Արփիկի մահից հետո, մինչև հարազատների մոտ՝ Մայկոպ մեկնելը, Զարենցը մեկուսացել է շրջապատից, օրեր շարունակ փակվել իր սենյակում և գրել «De profundis» վերնագրով պոեմ, որ հոգեհանգստի աղոթքի տրամադրություններ է ունեցել (տես՝ Վ. Նորենց, Հավերժ կենդանի դեմք.— Հիշողություններ եղիշե Զարենցի մասին, էջ 194)։

«Այրած երգեր» (1929) բանաստեղծության մեջ Զարենցը խոսում է մի երկո գրած տխուր երգերի մասին, որոնց նվագների միջից՝

Հառնեց հառկարծ, ճայեց ու ժպիտով ժլատ
Ինձ աղջունեց նազով արդեն մեռած մի կին։

Այդ կինը Արփիկն է, որը սակայն կյանքի է կոչում բանաստեղծին և մղում է այրելու իր հուսաբեկ երգերը։

Արփիկին Զարենցը սիրել է բարձրագույն սիրով։ Բնավորությամբ նա եղել է մեղմ ու սրտակից ընկեր, տխուր պահերին երգել Զարենցի համար։ Եվ որ ամենակարևորն է՝ հաճախացել բանաստեղծին, ներել նրա մոլորությունները, սիրային պատմությունները, կենցաղային ու գրական սկանդալները։ Արփիկը, իրոք, հոգեկան նեցուկ է եղել Զարենցին և սատար կանգնել նրան մշտապես։ Այդ սերը հետագայում դեռ շատ է ներշնչել բանաստեղծին։ «Էպիքական լուսաբացը»՝ «Նվիրում եմ հիրքս հիշատակին կնոջս, ընկերոջս, հերոսական բարեկամիս՝ Աւրիեվիկ Զարենցին (Տեր-Աստվածատրյան)» ընծայագրով ձոնել է նրան։ Գրքում Արփիկի հիշատակին նվիրված է նաև երկու սոնետ՝ «Իմ բարեկա՛մ, իմ սե՛ր. հերոսական ընկեր», «Մենք ապրեցինք քեզ հետ մի վիթխարի դարում»։ Արփիկին Զարենցը ոգեկոչել է նաև շատ այլ էջերում («Արփիկի հիշատակին»)։ «Նավզիկե» պոեմի ճակատին գրել է. «Արփիկին, Արփիկին, Իզաբելլային՝ իմ ամենաչքնաղ երկը. ե. Զար. 1936, 21 IX»։ Արփիկի հիշատակը մի նոր ոդբերգությամբ է նա երգել 1937 թ. իր համար

արդեն անհեռանկար օրերին՝ ստեղծելով «Բալլաղ սիրո» հրաշալի երկը.

Ինչպես գարնան առու ածիծ,
Ինչպես սիրո ճմռուկ ճնար,—
Կարկաչելով անցար կյանքից,
Իմ սե՛ր անգին, իմ սե՛ր անմար...
...Նվ ևո՛ր է fո իմաստը միշտ,
Իմ սե՛ր անգին, իմ սե՛ր անմար...

Ա՛յս էր վիճակված Արփիկին: Ոմանք նաև պատմում են, որ Արփիկի հետ մեկտեղ, նրա դագաղում, ապակյա տարայի մեջ ամփոփված, Չարենցը բանաստեղծություններ է թաղել: Արփիկի գերեզմանի տեղը փոխվել է և այդ մասունքները հիմա անվերադարձ հանգչում են հողի տակ:

Ծանր էր կորուստը, բայց և կյանքը շարունակվում է ապրելով:

1930-ական թթ. սկզբներին Չարենցը մտադրվում է ամուսնանալ: Թեկնածուների մեջ էր նաև այն տարիների Երևանի գեղեցկատես կանանցից մեկը՝ Արաքսյա Մանուկյանը (1906—1984), որով հետագայում գերվել է նաև Ա. Խաչակյանը: Այդ կինը 1930 թ. սկզբին կորցրել էր ամուսնուն՝ Ստեփան Մանուկյանին (1902—1930), որը հիմա հանգչում է Կոմիտասի անվան պանթեոնում, Հովհաննես Հովհաննիսյանի կողքին: Ստեփան Մանուկյանը եղել է Հայաստանում պիոներական (պատկոմական) շարժման կազմակերպիչ: Մանուկյանների ընտանիքի հետ Չարենցը մտերիմ էր դեռևս 1924 թ., իսկ Արփիկն ու Արաքսյան եղել են մտերիմ ընկերուհիներ: Որպես այդ օրերի հիշատակ մնացել է տպավորիչ մի լուսանկար. շինծու բաց մեքենայի մեջ գլխարկը գլխին, ծխախոտը շուրթերին նստած է Չարենցը, կողքին կինն է՝ Արփիկը, ղեկին՝ Արաքսյան, նրանից աջ՝ Ս. Մանուկյանը:

Չարենցի ամուսնական առաջարկը Արաքսյան մերժում է, բայց և սիրո հրդեհը արդեն բռնկել էր պոետին: Ահա այդ օրերին էլ, այսինքն՝ 1930 թ. նա գրում է իր սիրային բանաստեղծություններից երկուսը՝ «Արաքսյային», «Ո՞ւր ես Արաքս», *որոնցում առկա է դժվարին կյանքում մեկը մյուսի մեջ ամոքում ու երջանկություն գտնելու փափագ.*

Տրված է մեզ երկուսիս էլ
Ի՛նչ կարող է բախտը տալ,—
Սակայն ինչո՞ւ դո՛ւ լլ, ե՛ս էլ
Տրտնջում եմ կյանքից հար...

Այդ օրերին է վերաբերվում նաև Չարենցի բալլադներից մեկը՝ «Ունդերվունդի, Աչոնի, ոսկե կնոջ և բացիլի մասին...»։ Ունդերվունդը Ս. Մանուկյանի գրամեքենան էր, ինչը Չարենցը ցանկանում էր գնել, Աչոնը Ս. Մանուկյանի աղջիկն է (Դորա Մանուկյան, ծն. 1928 թ., աշխատում է նախագծային ինստիտուտում որպես շինարար-կոնստրուկտոր), իսկ ոսկե կինը Արաքսյան է, որը «Ուներ — հուր աչքերում, Սրտում — ոսկիներ»։ Եվ ապա՝

Ախ, մի անգամ միայն նա
Այնքան սրտաբաց
Այդ ոսկիներն ինձ տվեց
Ու անդարձ գնաց...

Մանուկյանների ընտանեական արխիվում պահվում է նաև մի լուսանկար, որի վրա պատկերված են Արաքսյան և նրա ընկերուհին՝ Նեկտար Գրիգորյանը (ծնվ. 1908)։ Նկարի հակառակ երեսին Չարենցի ինքնագիրն է՝ «Արաքսը շատ լավն է, բայց ընկերուհին փինթի է. Չարենց»։ Նկարն ունի 1. 01. 1926 թվագրությունը։ 1988 թ. հուլիսի 23-ին մենք հանդիպեցինք Ն. Գրիգորյանին։ Արդեն կենսաթոշակի անցած 80-ամյա կինը, որը զբաղվել է կենսաբանությամբ, դարձել գիտության թեկնածու, սիրով հիշեց իր երիտասարդությունը։ Չարենցի գրած խոսքից նա բնավ նեղացած չէր, և դա բացատրեց այն օրերին ճաշակով հագնվելու դժվարություններով։ Նա պատմեց գրական այն հավաքույթների մասին, ուր Չարենցը հատկապես անդրադարձել է Եսենինին ու բարձր գնահատել նրան։ «Խոսելիս Չարենցը արտակարգ գեղեցկանում էր, աչքերը փայլում էին, դիմացինին նա գերում-դյուրում էր ամբողջապես»,— ասաց նա։

Ն. Գրիգորյանը իր հերթին ևս վկայեց այն բարձր սիրո մասին, որ իրար հանդեպ տածում էին Չարենցն ու Արփիկը. «Արփիկը,— ասաց նա,— Չարենցից բարձրահասակ էր,

սպիտակամաշկ, բաց շականակագույն մազերով, արտակարգ ճաշակով և արժանի բանաստեղծի կինը լինելու բախտին»։ Նա պատմեց նաև Աստաֆյան փողոցի վրա 1926 թ. սեպտեմբերի 5-ին տեղի ունեցած միջադեպի մասին։ Փաստը հետաքրքիր է այնքանով, որ, ըստ Ն. Գրիգորյանի, Այվազյանով տարված բանաստեղծը, հետո խորապես հիասթափվել է նրանից։ Այդ հիասթափության վկայությունը «Ձիու մուութ» (1927) բանաստեղծությունն է։

Չարենցի այս տարիների սիրային գործերի մեջ պայծառ լավատեսությամբ առանձնանում է մի պատառիկ, որ պահվում է Գրականության և արվեստի թանգարանի Չարենցի ֆոնդում (Սև տետր, № 14)։ Այդ առ այսօր անտիպ ստեղծագործությունը ամենայն հավանականությամբ ապագա պոեմի դրվագ է, որի մեջ նա խոսում է մի չահել աղջկա մասին և նրան գուշակում պայծառ գալիք։ Այդ աղջկա կյանքը պիտի տարբեր լինի բոլոր այն հայ աղջիկների ողբերգական ճակատագրից, որոնց լլկել են ու առևանգել։ Այդ աղջիկը ազատ ու պայծառ սիրով պիտի ապրի իր ազատ ու անվտանգ հայրենիքում։ Այդ հերոսուհուն Չարենցը համեմատում է իր սիրած աղջկա հետ՝ «Որ մեռավ այդ նույն քնքշագին նազով»։ Դատելով այս նույն հուշումից՝ խոսքի առարկա երկը, որ անթվակիր է, գրված պետք է լինի Արփիկի մահից հետո։ Սև տետրում զետեղված են գործեր, որոնք գրվել են 1927—1936 թվականների ընթացքում։ Ընդ որում՝ 1927 թվագրումով տետրում զետեղված է միայն մեկ գործ (Ն. Զ.»)։ Մեզ հետաքրքրող դրվագը ամենայն հավանականությամբ գրվել է 1928-1929 թթ.։ Դա հուշում է տրամադրությունը։ Արփիկի մահից անմիջապես հետո, այսինքն 1927 թ., այն չէր կարող գրվել, քանի որ բանաստեղծը գտնվում էր շատ ծանր ապրումների մեջ։ Այն չէր կարող գրվել նաև 1930-ական թթ., քանի որ Չարենցին համակել էին մղձավանջային տրամադրություններ։ Իր լուսավոր տրամադրությամբ այդ դրվագը կարելի է համեմատել «Գանգրահեր տղան» չափածո նովելի հետ (գրվել է 1928-1929 թթ.)։ Համեմատության եզրը մի կողմից պայծառ ապագայի տիրոջ՝ գանգրահեր տղայի կերպարն է, մյուս կողմից՝ նույն պայծառ ապագայի համար ծնված հնչուն ծիծաղով աղջկա կերպարը։ Ահա այդ դրվագը.

Աղջիկ է նա մի երջիկ, ճերմակաձայն,
Մի երիտասարդ աղջիկ կենդանություն,—
Նա ունի աչքեր և՛ քիլ, և՛ պայծառ,
Սև ունի սիրած և՛ եղբայր, և՛ քույր:—
Աղջիկ է նա կույս, այսինքն ճնշուն,
Դեռ մարդու, գնդող ձայնով կրծքային,—
Եվ նման է նա ամենայն ինչով
Իր նման բոլո՛ր, լե հին, քե գալիք,
Թե դարեր առաջ ապրած ու մեռած
Բոլոր կենդանություն աղջիկներին ա՛յն,
Որ համբուրելով պատանուն սիրած
Երազում են նույն համբույրը միայն...
Մի սովորական աղջիկ է նա չինչ,
Արցունքի միջից ժպտացող երազ,—
Ինչպես իմ սիրած աղջիկը վճիտ,
Որ մեռավ այդ նույն ճերմակի նազով...
Նույն կենսակարոտ աղջիկը սակայն
Կիենելով իմ նոր բարեկամուհին—
Ունենալու է սի՛րտ ճերմասական,
Որ չի ունեցել ոչ մի թագուհի:—
Որքան գալիքի կյանքին է լինելու
Մեր անմահական օրերից տարբեր—
Այնքան նա սրտով լինելու է լույս,
Եվ մտով—այնքան հզարտ ու .....,—
Ո՛չ մոր արգանդում ծնվելուց առաջ,
Ո՛չ օրորոցում, ո՛չ դարձած արդեն
Բառեր բոբավոդ մանկիկ, ո՛չ առած
Արդեն գգվանքի նարաբաց վարդեր,—
Ո՛չ նվիրական նարկի տակ իր տան,
Ո՛չ հայրենական ափերից իր դուրս—
Նա չի՛ տեսնելու ո՛չ բեռ նարտության,
Ո՛չ երջանկության անմերձելի դուռ:
Առաջին անգամ արևի ճանդեպ
Իր աչքերը չինչ բանալու օրից—
Ոչ կամքը նրա պիտի կաշկանդեն,
Ոչ սիրտը նրա, ոչ հոգին խարին:
Իր հայրենական երկնքի ներքո՝
Սկզբից մինչև ծնունդը նրա—
Դեռ ո՛չ մի աղջիկ այդ֊պե՞ս անարգել
Դեռ չի՛ մեծացել աշխարհի վրա:—
Իրենից առաջ իր հայրենական
Աշխարհում ապրած բոլոր հայրերից՝
Նա անքեր ոգով տարբեր է այնքան,

Դու բեկուզ ճասակով դեռ փոքր ես,
Բայց գիտես արդեն, որ դու
Աշխարհում դեռ չեզած մի կին ես,—
Որ կարող ես խենթացնել մարդու:

Կամ՝

Մագդա՛, ես սիրում եմ քեզ
Ավելի, քան կյանքը, լույսը,
Գուրգուրել եմ ուզում ես ձեզ
Դյուրական մարմինդ, որ կույս է:

Այս զգացողությունների արտահայտություն է նաև հաջորդ քանաստեղծությունը, որի սկիզբն այսպիսին է.

Արմիկ, Արմիկ,—
Դու աղայի ունես մարմին.
Բարակ մարմին,
Կրակ մարմին—
Ոսկե եղեգ գարնանային...
Ախ, կուզեի մռութս գայիր,
Բարակ մարմինդ ինձ տայիր...

Իսկ մնացյալը սիրո մարմնական տանջանքն է՝ «Մինչև մեռնինք կամ դու, կամ ես»: Ավելորդ սրբագրումների անհրաժեշտություն թեև չկա, բայց երբեք չպետք է մոռանալ ներքուստ սրված, հոգեկան անհավասարակշիռ պահերի հասցնող այն ջղային վիճակը, որը նրան ամեն վայրկյան ոչ միայն կարող էր հասցնել ահավոր մոլեգնության, այլև՝ սովորական աչքի համար անըմբռնելի ցանկությունների ու պահանջների: Ջմոռանանք նաև ամենակարևորը՝ այն, որ Չարենցը տարիներ շարունակ գտնվում էր Թմրադեղերի ներգործության տակ, որոնք տևականորեն նրան զգում էին զգայական բռնկումների, ապա և՝ անկման ու մղձավանջի մեջ: Երիկամ-

ների վիրահատությունից հետո՝ քարի հեռացում (տես՝ Մ. Մազմանյան, Չարենցի հետ.— Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, էջ 78, առողջական բերումով Չարենցը թըմբրադեղերին սկսեց դիմել այն տարիներին (1929 թ.), երբ երկրում արդեն գլուխ էր բարձրացնում ստալինյան ռեակցիան, երբ գնալով սովորական էին դառնում քաղաքական մեղադրանքներն ու հալածանքները։ Այսինքն, երբ հասարակական կյանքը ենթարկվեց կտտանքների և հասավ բարձրագույն լարվածության։ Ի դեպ, Չարենցի ֆոնդում (№203) պահպանվել է այսպիսի մի գրություն.

ЛЕЧЕБНАЯ КОМИССИЯ СНК АРМЕНИИ

Тов. ЧАРЕНЦ!

Посылаю Вам немного кокаина (взял я его в нашем раб. кабинете).

Чварс 14.III.36

Երկրային բոլոր հույզերը ճաշակած բանաստեղծը հոգեկան անհավասարակշիռ վիճակում անգամ շարունակում է իր և բոլորի համար ճանաչելի դարձնել տղամարդու և կնոջ հավիտենական սիրախաղի էությունը։ «Իմ լավ, իմ բարի բարեկամուհի» տողով սկսվող բանաստեղծությունը, որը թերի վիճակում «Արուսին» վերնագրով տպագրվել է «Անտիպ... երկեր» գրքում, ունի նաև դեռևս անտիպ այլ տողեր, որոնցում բացահայտվում է այդ խաղը։ Ըստ Չարենցի՝ կնոջ մշտահմա սիրտը նման է բլոկնոտի, որի մեջ ինչքան էլ «Հրեղեն սիրտ գիր գրես թեպետ—Բավական է ջուր ամենաչնչին,— Որպեսզի բոլոր գրերը ջնջի»։ Շարունակության մեջ, թեև իրոնիկ շեշտով, բայց և ցավով նա ավելացնում է.

Որպեսզի, Արուս, սրանով ասեմ,
Թե սիրտը կնոջ՝ ճնոուշ ու վսեմ
Սիրով, կրճեռով իր մշտահմա
Ո, շա՞տ է որ այս բլոկնոտին նման...
(ՁՖ, № 109)

Իսկ հոգուց ընդմիշտ մաքրված հին գրերի փոխարեն պիտի գան «նորեկ հիմարներ» և սիրատոչոր խաբկանքի մեջ «նոր գրեր գրեն»։

Բայց և, այս խաղերով հանդերձ, Չարենցը ձգտում էր կենսական լիարժեք օիրո, որի լավագույն արտահայտությունը 1937 թվականի ապրիլի 27-ին գրած այս քառատողն է.

Ախ, ամեն անգամ, ախ, ամեն անգամ
Բացվում է իմ դեմ երբ բեռուզ գառուն,—
Ձո կուրծքն եմ կրկին կարծես ճամբառում
Եվ զգում կրկին անանսաի ճամ...
(ՉՏ, № 97)

Սիրո ինքնախոշտանգող տառապանքը, որ նրա ստեղծագործության մեջ հոգևոր կենսագրություն է դարձել առաջին իսկ տպագիր տողերից և հասել մինչև հասուն այրություն՝ այս տարիներին կարծեք թե ներքին անհրաժեշտություն է զգում միավորվելու մեկ ամբողջության մեջ։ Արդյունքը «նավզիկե» պոեմն է։ Ամբողջ կյանքում տարբեր մարդկանց մեջ և տարբեր ձևերով որոնված սիրո մի աստվածային, հոգու տառապանքով և մարմնական խրախճանքով, դեպի որը նա գնացել է անվերջ ու անդադար և այդպես էլ չի հասել նրան։ Ահա սա է, որ նրան մղում էր կենսական արբեցության մեջ մոռանալու չգտածի, բայց և, չգտածով հանդերձ, կորուստը զգալու ողբերգությունը։ Դա որքան հոգեկան, նույնքան էլ իրական կյանքի ճանապարհ է։

ԸՆԾԱՅԱԳՐԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամբողջ ստեղծագործական կյանքում Չարենցը եղել է գրքերի հետ: Գիրքը եղել է նրա գրական պայքարի ուղեկիցը: Այդ պայքարի մեջ ոչինչ հեշտ չի տրվել նրան, և ինքն էլ ոչ մի գայթակղությամբ երբեք չի շեղել նպատակի ուղին: Պայքարը սկզբունքների հաստատում էր ենթադրում, որը ճշմարիտ արժեքների հաղթանակ պիտի լիներ ընդդեմ անհող ու անհայրենիք գրականության: Բոլոր միջոցներով Չարենցը ցանկանում էր ճշմարիտ հուն մղել իր ժամանակն ու ժամանակակիցներին: Այս տեսակետից առանձնանում են նաև ընծայագրերը՝ գրված Չարենցի կողմից, և ընծայագրեր, որոնցով նրա հայ և այլազգի գրական ընկերները նրան են նվիրել իրենց գրքերը՝ ըստ ամենայնի բնութագրելով նրան որպես գրական մարտիկ, ստեղծագործական պայքարի առաջնորդ:

1923-ին լույս տեսած «Կապկազ» թամաշայի առանձին հրատարակությունը տպագիր ուղերձով Չարենցը նվիրել է գիրքը ձևավորող իր համախոհ բարեկամին՝ ճարտարապետ Կարո Հալաբյանին (1879-1959): Հալաբյանը գիրքը ձևավորել էր այն ժամանակների համար սազական ֆուտուրիստական ոճով: Մեկ տասնամյակ հետո Չարենցը գրքի վրա այսպես է մակագրել.

Մեր գրականության հիմը – նահապետական – գյուղական հոգեբանությունն է: Դրա համար էլ մեզ մոտ չպատվաստվեց ֆուտուրիզմը (իր լավագույն կողմերով, իբրև f ա ղ ա f ի

կուլտուրա)։ Վա՛յ մեզ։ Մեզ մոտ ողորմելի Զորյանը միևչև օրս ներիճակ է համարվում։ Ե՞րբ ներիճակ, ի՞նչ ժողովուրդ։

Այս գործը ես համարում եմ իմ լավագույն գործերից մեկը— մի գործ, որ թե իր դիապազոնով, թե զուտ գրականատեխնիկական նորություններով մի ամբողջ նոր էտապ է բացում մեր գրականության մեջ։ Բայց ո՞վ հասկացավ։ Համարյա ոչ ոք։ Բայց ես համոզված եմ, որ ապագայում կհասկանան և կգնահատեն։

Ե. Չարենց, 1934. II. 4. Երևան։

Ուշագրավ է, որ իր ստեղծագործական հասունության գագաթնակետին, երբ արդեն ստեղծված էր «Գիրք Ճանապարհին», Չարենցը հայացք է ուղղում իր «ձախ» որոնումների ժամանակին և գնահատում այդ տարիների ստեղծագործական փորձը։ Սա կարևոր է նաև այն տեսակետից, որ «Գիրք Ճանապարհում» նա հասավ այդ «ձախ» որոնումների, ինչպես նաև դասական և ազգային ձևերի անկրկնելի համադրությանն։ Ուրեմն անցած ճանապարհը իզուր չէր կորչել։

Ուշագրավ մի ընծայականով «Գիրք Ճանապարհին» երկրորդ տարբերակը Չարենցը նվիրել է իր ազգանունով անվանակոչված մի ամերիկահայ մանչուկի.

Սիրելի Չարենց Թիմուրյանին

Այն հանճարեղ հայ մանուկին, որ հեռավոր Ամերիկայում կրում է նաիրցի պոետ Եղիշե Չարենցի անունը. հետաքրքրությամբ իմ համար մեծագույն բախտավորություն այս պատիվը՝ պատվիրում եմ նրան լինել կյանքում խիզախ և հպարտ նաիրցի՝ անշեջ պահելու համար այն արթազան հուրը, որ մեզ ժառանգություն է մնացել մեր բազմադարյան մշակույթից։

1934, 25. II, Երևան, Եղիշե Չարենց[1]։

---

[1] *Այս ընծայագրի հրապարակումից հետո (Հայրենիքի ձայն, 1988, 1 հունիսի, № 23) մեզ դիմեց Չարենց Թիմուրյանի զարմուհին, որը ապրում է Երևանում։ Նա ասաց, որ «Գիրք Ճանապարհին» մակագրված օրինակը Ե. Չարենցը հանձնել է Չ. Թիմուրյանի մորը՝ Մարիամ Դեմիրճյանին (Մերի Թիմուր, ծնված 1892 թ.), որը եղել է ԱՄՆ-ի հայ կարմիր խաչի*

Շատ հետաքրքիր է Չարենցի մակագրությունը իր «Երկերի» (1932) օրինակի վրա, որը նվիրել է Գ. Բեսին (վերջինս այն հրապարակել է իր Երկերի ժողովածուի երրորդ հատորում, 1981, էջ 192)։ Ահա այն.

Սիրելի Գաբեգին Բեսին, բարի ցանկություններով, որ կապվի հայ գրականության լավագույն տարիքիաներին և դառնա արժանի, իբրև ճեղինակ, այն գրական հունին, որ գալիս է միջնադարյան հայ ա ղ ի ա ր ի ք գրականությունից, անցնում է այսօրվա մեր միջով և գնում է հավիտյան դեպի համաշխարհային դեմոկրատիկ գրականության միջազգային սիմֆոնիան:

Ե. Չարենց. 1932. 1. 8. Երևան.

Այս մակագրությունն էլ արված է այն օրերին, երբ Չարենցը կանգնած էր «Գիրք ճանապարհի» ստեղծման առջև, որը և՛ նյութով, և՛ ոճով հարություն էր տալիս հայ միջնադարին («Սասունցի Դավիթը»; «Գովք...», «Տաղեր և խորհուրդներ») և որի ստեղծագործական սկզբունքների մասին նա պիտի լիաձայն խոսեր ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարում։

Ինչպես պարզ երևում է՝ չարենցյան այս տողերը ոչ թե մասնավոր բնույթ ունեն, այլ՝ միմիայն գրական և ներկա-

---

Խախագահը։ Այդ կապակցությամբ 1934-ին երկու ամսով նա եղել է Հայաստանում ծանոթացել ու մտերմացել Ե. Չարենցի հետ «Գիրք ճանապարհի» մակագրված օրինակը Մ. Դեմիրճյանը իր հետ տարել է Ամն, այնուհետև 1970-ական թթ. վերջերին ուղարկել Հայաստան, որը և այս փաստը մեզ հաղորդող էմմա Գրիգորյանը հանձնել է ԳԱԹ-ի տնօրեն Վ. Մելիքսեթյանին։

Ե. Չարենցի ընծայագրի տերը՝ Զ. Թիմուրյանը ծնվել է ԱՄՆ-ում, 1924 թ.։ Ամբողջ կյանքում նա զբաղվել է ուսուցչությամբ։ Նա բացարձակապես չի տիրապետել հայերենին, ուստի անհաղորդ է մնացել Չարենցի գրքին։ Բախտի ինչպիսի ծաղր։ Եվ հավանաբար օտարության մեջ չկորչելու համար՝ նրա հայախոս և չարենցասեր մայրը գիրքը կրկին վերադարձրել է Հայաստան։ Այսպիսով, «Գիրք ճանապարհին» ընծայաբերվելուց հետո ոչ թե «մնացել է բանաստեղծի գրադարանում» (ինչպես մենք նախապես գրել էինք «Հայրենիքի ձայնի» հրապարակման մեջ), այլ կատարել է անդրօվկիանոսյան մի մեծ ճանապարհորդություն։

յացնում են համընդհանուր հետաքրքրություն։ Ուստի՝ դրանց տեղն այսուհետև պիտի լինի նրա ժողովածուների մեջ։

Ավելորդ չէ ասել, որ շատ ուշագրավ ընծայագրերով գրքեր է ստացել նաև Չարենցը։ Նվիրատուների մեջ են Կ. Միքայելյանը, Ա. Ղազիկյանը, Թ. Հուրյանը, Ն. Միծիշվիլին, Տ. Տաբիձեն, Ս. Գորոդեցկին, Մ. Բաժանը և ուրիշներ։ Այս ընծայագրերում կարևորվում է այն հարցը, թե ինչ տեղ և դեր են հատկացրել Չարենցին նրա ժամանակակիցները։

Մեծերը միշտ էլ ճիշտ են գնահատում մեծերին։ Այս ճշմարտությունը վերստին հաստատվում է Իսահակյանի և Շիրվանզադեի մակագրություններով, որոնք համապատասխանաբար արված են առաջինի «Բանաստեղծություններ» (1930) ժողովածուի և երկրորդի «Կյանքի բովից» (1930) հուշագրության վրա։ Ահա դրանք.

Անզուգական եղիշե Չարենցին, անկեղծ սիրող ընկերին, էպոխայի առաջին բանաստեղծին՝ սիրով և լավ հուշերով Ավ. Իսահակյանից։

15. II. 1930, Երևան։

Հետոևկտեմբերյան ամենաառաղանդավոր հայ բանաստեղծ և իմ թանկագին բարեկամ եղիշե Չարենցին՝ իր Շիրվանից։

3. III. 1930 թ., Երևան։

Ընծայագրով Չարենցը նվեր է ստացել նաև Արամ Չարըգի թարգմանությամբ լույս տեսած Օմար Խայամի քառյակների գիրքը (Փարիզ, 1934), որի վրա վերջինս մակագրել է.

Տաղանդավոր բանաստեղծ ընկեր եղիշե Չարենցին՝ եղբայրորեն։

2 մարտի, 1934, Փարիզ։

Ինչպես ասվեց, ուշագրավ մակագրություններով գրքեր Չարենցն ստացել է նաև խորհրդային բազմազգ գրականության շատ ներկայացուցիչներից։ Եվ սա պատահական չէ, որովհետև «Երկիր Նաիրի» վեպը Մոսկվայում ռուսերեն տպագրվելուց հետո (1926) նա ձեռք էր բերել համամիութենական ճանաչում։ Իսկ ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարում արտասանած ճառը է՛լ ավելի է տարածում նրա համբավը։

Խորհրդային գրողներից շատերն են շփվել Չարենցի հետ և հետագայում խորին հարգանքով հիշել ու վերհիշել նրան։ Դրա վկայությունը Ի. էրենբուրգի, Մ. Ռիլսկու, Մ. Բաժանի, Գ. Լհոնիձեի, Ս. Զիքովանու, Պ. Անտոկոլսկու, Ի. Սելվինսկու, Վ. Կիրպոտինի, Վ. Գատովի, Վ. Յվելյովի և այլոց տպագրված հուշերն են։ Դրա վկայությունը նաև նրանցից ոմանց նվիրած գրքերն են ու գրքերի վրա արված մակագրությունները։

Ռուս բանաստեղծ, արձակագիր, տեսաբան Անդրեյ Բելին իր «Վերադարձ» գրքի վրա արել է այսպիսի մակագրություն.

Մեծարգո եղիշե Աբգարի Չարենցին՝ բարի հիշատակ։ Անդրեյ Բելի։

1928 թվական, 22 մայիսի։

Մեկ այլ ռուս բանաստեղծ, նաև թարգմանիչ Պավել Անտոկոլսկին իր «Բանաստեղծություններ և պոեմներ» ժողովածուն Չարենցին է նվիրել այսպիսի չերմ տողերով.

Եղիշե Չարենցին՝ հրաշալի Հայաստանի բանաստեղծին, հարգանքով և ընկերական հանդիպման հույսով։ Պ. Ա.։

Երևան, 8. XI. 34։

Այս ընծայագրերի հետ մեկտեղ ավելորդ չէ հիշել նաև Չարենցի դիվանի 207 համարանիշով պահվող մի գրություն, որը գրված է ռուսերեն և ունի այս բովանդակությունը.

Ելիսե՛յ,

Ինձս անցյալի, ներկայի և գալիքի ֆո բոլոր ստեղծագործությունները հայտարարում եմ ազգային սեփականություն։ Դուռ բոլորը լույս կտեսնեն, բանի որ լույսը ինձ նրանցում է՝ մեր օրերի զգացմունքների և ապրումների, որոնումների և հայտնագործությունների ամենաուժեղ արտացոլումը։

Ելիսեյ ասելով՝ այս անթվակիր գրության հեղինակը (Ա. Մռանին) նկատի ունի եղիշե անունը։ Ի դեպ, Չարենցին Ելիսեյ անունով էր դիմում նաև պատմաբան, կուսակցական գործիչ Ա. Հովհաննիսյանը, որը իր նկարը բանաստեղծին նվիրել է այսպիսի մակագրությամբ.

Ընկերոջս ու բարեկամիս՝ սիրելի Ելիսեյին։

1933. VII. 25, Աշոտ Հովհաննիսյան։

Վերոհիշյալ մակագրություններն ըստ ամենայնի դուրս են անձնական նշանակության սահմաններից և գալիս են մի նոր տեսանկյունից նոր փաստերով լրացնելու Չարենցի վիթխարի վաստակի գնահատությունը՝ նրան բնութագրելով և՛ իբրև բանաստեղծի, և՛ իբրև գրական գործչի։ Այս մակագրությունները ավելի շատ կլինեին՝ եթե այն տխուր տարիներին Չարենցի հարուստ գրադարանը պահպանվեր, եթե նրա գրքերը չկորչեին ու չանհայտանային։

Տարբեր առիթներով Չարենցը գրել է նամակներ և այլ կարգի գրություններ։ Դրանց մեծ մասը հրապարակված է, բայց կան նաև նորահայտ վավերագրեր, որոնք լույս են սփռում առանձին հարցերի վրա։

Դրանցից կարևորագույնը 1927 թ. մարտի 31-ին ԽՍՀՄ լուսժողկոմ Ա. Վ. Լունաչարսկուն հասցեագրած նամակն է։ Չարենցն այն ուղարկել է Մայկոպից, ուր, Երևանի ուղղիչ տնից ազատվելուց հետո, ժամանակավորապես ապրում էր հարազատների մոտ և, ակնարկելով իր նյութական ծանր վիճակը, խնդրում հոնորար վճարել 1926 թ. Մոսկվայում ռուսերեն տպագրված «Երկիր Նաիրի» վեպի համար։ Ահա այդ նամակը, որի ռուսերեն լուսապատճենն բնագիրը պահվում է Չարենցի ֆոնդում (№ 187).

Մեծարգո ընկ. ԼՈՒՆԱՉԱՐՍԿԻ

Մոտավորապես մեկ տարի առաջ ՌԽՍՖՀ պետհրատի կողմից հրատարակվեց իմ «Երկիր Նաիրի» վեպի թարգմանությունը։ Գրքի հրատարակության համար ես ոչ մի հոնորար չեմ ստացել, բայց ես այն ժամանակ դրան ուշադրություն չդարձրեցի, քանի որ միջոցների կարիք չունեի։ Ներկայումս գտնվելով շատ ծանր նյութական կացության մեջ՝ խնդրում եմ Ձեզանից ինձ հոնորարն ինձ ուղարկելու մասին։ Դիմելով Ձեզ խնդրանքով, ես կարծում եմ, որ խորհրդային գրողը իրավունք ունի նկատի ունենալու Ձեր օգնությունը ոչ միայն որպես ՌԽՍՖՀ լուսժողկոմի, այլև որպես Միության ամբողջ գրականությունը գլխավորող անձնավորության։

Ընդունեք Ձեր հանդեպ իմ ունեցած խորին ակնածանքներս։

Ընկ. ողջույններով՝

Հասցեն. Մայկոպ, Կրեստյանսկայա 124, Եղիշե Չարենցին

1932 թ. հունիսի 2-ին Չարենցն ստացել է կարմիր պարտիզանի վկայական, որի միջոցով նա օգտվել է որոշ արտոնություններից (տես՝ ՉՖ, № 159, նաև՝ VI, 750)։ Այդպիսի վկայական ձեռք բերելու համար նա երաշխավորել է նաև ուրիշների։ Ահա դրանցից մեկը (ՉՖ, № 219).

Հաստատում եմ, որ Աբուենակ Գրիգորյանը ինձ հետ միասին 1921 թվին եղել է բաղ. կռիվների Ղամարլուի ֆրոնտում, բրկ. Յանուշևսկու կոմունիստական ատրյադում:

1933. XI. 12. Ե. Չարենց

Չարենցն ամեն կերպ ջանում էր իր կարողացածի չափ օգնել մարդկանց։ Կեսից պատռված մի գրության վրա կարգում ենք (ՉՖ, № 198).

ԸՆԿ. ՌՈՒԲԵՆ ԴԱՇՏՈՅԱՆԻՆ
ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻՆ
ԿԱՄ ԸՆԿ. ՍԵՐԳՈ ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ
(եթե րնկ. Դաշտոյանը բացակայում է քաղաքից)

Խնդրում եմ ամեն կերպ աջակցել ոդեսզի բանվոր ատաղձագործ՝ բազմամարդ ընտանիքավոր (8 երեխա և <.....> հասակավոր իր խնամքի ...

Այն, որ Չարենցն ամեն կերպ ջանում էր մարդկանց օգնել վկայում է նրա ֆոնդում (№ 208) պահվող մի գրություն՝ ուղղված բանաստեղծին։ Գրության հեղինակը գրագիտությանը լրիվ չի տիրապետել և հիմա, կարծում ենք, ուշացումով հարկ չկա սրբագրել նրան, ուստի այդ նամակ-գրությունը բերում ենք այնպես, ինչպես, որ պահպանվել է.

ԵՂԲԱՅՐ ՉԱՐԵՆՑԻՆ

Սրանով խնդրում եմ մի քանի ռուբլի էլ ուղարկես, մինչև որ տեսնենք ինչ կլինի: Ու դրա համար ներողամիտ կլինես, որ քեզ նեղություն ենք պատճառում և ոնգեպես զգացված

եմ ձեր եղբայրական վերաբերմունքից: Ջարենց, ինձ ուղարկիր ֆեզ մոտի Թիֆլիսի հասցեն, ես ուզում եմ մի հեռագիր կամ նամակ ուղարկեմ, տեսնեմ թե ինչ կպատասխանեն:

15. III. 36 թ. Հ. Շահինյան (Շեգինյան)

Ջարենցը ժամանակին մի տհաճ միջադեպ է ունեցել Շարապովա ազգանունով մի տնային աշխատողի հետ, որի կապակցությամբ մի գրություն է հղել բնակարանային ծառայողների տեղկոմի նախագահ Եղիազար Բարսեղյանին (ՉՖ, № 197).

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԵՂԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ ԵՂ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ

Ներդրելով, որ ձեր վերջին գրության վրա գրած իմ պատասխանը Շարապովան կարող է ձեզ տված չլինել՝ ստիպված եմ համարում հայտնել.

1. Հիվանդության պատճառով չկարողացա անցնել ձեզ մոտ՝ խնդրում եմ ինձ ներել բարեհաճեք գալ և իմանալ գործի դրությունը ի ն ձ ա ն ի ց:

2. Հետագա թյուրիմացություններից խուսափելու համար՝ խնդրում եմ առանց իմ կարծիքն իմանալու՝ Շարապովայի նման խուլիգանների տված տեղեկությունների հիման վրա դատարանական գործեր չսարքել,— հետևանքը կարող է լինել տխուր ոչ միայն նրա, այլև նման գործեր հարուցողների համար ևս:

Ընկ. բարևներով՝ Ջարենց:

Ի՛նչ գործի կապակցությամբ Ե. Բարսեղյանը այցելել է Ջարենցին: Այդ այցելության և գործի մանրամասների հետ կապված նա հետագայում՝ 1960 թ. հոկտեմբերի 12-ին գրել է մի հուշ-բացատրագիր, որի մեջ կան նաև այսպիսի տողեր. «Ջարենցը մի փոքր գրություն էր ուղարկել ինձ, կեսը՝ ընկերական, կեսը՝ սպառնական» (ՉՖ, № 216):

Հայտնի է, որ Ջարենցը ընկերական ջերմ հարաբերություններ է ունեցել Մ. Գևորգյանի հետ, որին տարբեր առիթ-

ներով հասցեագրել է նամակներ և այլ կարգի գրություններ։ Պահպանվել է դրանցից մեկը ևս (ՉՖ, № 185), որը թեև անթվակիր է, բայց ամենայն հավանականությամբ վերաբերում է 1925-ին.

ՄԱՄԻԿՈՆ։

Երեկ ես պայմանավորվեցի Վանյա Պողոսյանի հետ վաղը հանդիպելու համար (գնում էր ինչ-որ նիստի)։ Դանիելին կաշխատեմ տեսնել այսօր։ Մնացածը կարվի ըստ հարմարության լիովին։

Քո Չարենց։

Չարենցի կյանքի այս կամ այն մանրամասնը լրացնելու համար համանման գրություններն, անշուշտ, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում։ Պակաս կարևոր չեն նաև նրա անունով ստացված կամ նրան վերաբերող գրությունները ևս։ Դրանցից մեկը կենցաղային բնույթ ունի, բայց և թերևս ճիշտ կլինի զետեղել այստեղ, որպեսզի պարզ դառնա, թե ինչ դժվարին կյանքով էր նա ապրում և սովորական մի լոգարան ձեռք բերելու համար ո՞ւմ պիտի դիմեր և ի՞նչ պիւ-ի արվեր (ՉՖ, № 174).

ԲՆԱԿՇԻՆԿՈՊԻՆ

21 նոյեմբերի, 1934 թ.

Ժ. Կ. Խ. Նախագահի տեղակալ ընկ. Երզնկյանի կարգադրության համաձայն բաց թողնել կանխիկ վճարով ընկ. Եղիշե Չարենցին մեկ հատ վաննա՝ հաշվելով վերջինի արժեքը պետական գներով։

Ժ. Կ. Խ. գործերի կառավարիչ։

Նույն թվականի դեկտեմբերի 22-ին այս գրության վրա մակագրվել է՝ «Վաննա (մեկը) չունենք»։

Չարենցի ֆոնդում պահվում է նաև մի հեռագիր (№ 205), որ Մոսկվայից նրան է հղել Ա. Տեր-Մարտիրոսյանը.

Երևան, Սունդուկյան 6, Տղիշե Չարենցին

Առաջարանը հանձնարարել եմ գրել Անատոլսկուն. վերջնահաշիվը կանենք ըստ ենթինակի ճերկայացրած առղերի քանակի. մանրամասները փոստով:

Մարտիրոսյան

Այս ընծայագրերը, նամակները, տարբեր կարգի գրությունները գալիս են լրացնելու Չարենցի ժառանգության կամ նրա կյանքի ու գործունեության բաց էջերը և նպաստելու մեծ գրողի մասին մեր ունեցած պատկերացումների ամբողջացմանը:

«ՄԱՏՅԱՆ ՄՏԱՏՈՒԹՅԱՆ»
ԿԱՄ
«ՏԵՏՐ ԳՐՈՒԹՅԱՆՑ ԱՅԼԵՎԱՅԼ»

(Սահղծագործական մտահղացումներ, ծրագրեր, օրագրեր, գրառումներ, թարգմանություններ)

Ա

Չարենցի «Բոլորին, բոլորին, բոլորին. երեք ռադիոպոեմ» (1920) գրքի վերջին էջում տպագրված է նրա արդեն հրատարակված և հրատարակվելիք գրքերի ցուցակը։ Ըստ այդ ծանուցման՝ «Ողջակիզվող կրակ. բանաստեղծություններ» գիրքը լույս կտեսնի Թիֆլիսում։ Եվ ապա՝ «Պատրաստ են հրատարակության»՝ «Էմալե պրոֆիլը Ձեր. գալանտ երգեր», «Մարդերգություն. պոեմներ մարդու մասին», «Ազգային երազ. սատիրական պոեմ»։ Թե՛ «Ողջակիզվող կրակ» և «Էմալե պրոֆիլը Ձեր» շարքերը, թե՛ «Ազգային երազ» պոեմը առանձին լույս չտեսան։ Դրանք հրատարակվեցին «Սրբերի ժողովածուի (Մոսկվա, 1922) առաջին և երկրորդ հատորներում։

Նշված ծանուցման մեջ ուշագրավը «Մարդերգություն» վերնագրված գիրքն է, որը, եթե «Պատրաստ էր հրատարակության», ապա պիտի որ գրված լիներ։ Այդ դեպքում որո՞նք են այդ տպագրվելիք գրքում զետեղվելիք պոեմները։ Ընդ որում՝ հատուկ ցուցումով՝ «Պոեմներ մարդու մասին»։ Ահա չարենցյան ժառանգության մի առեղծված ևս, որին պատասխանելը ոչ թե դժվար է, այլ, ըստ ամենայնի, անհնարին։ Առաջանում են տարբեր հարցեր։ Նախ, ինչո՞ւմ է անկասկած

է, որ այդ գրքում պետք է զետեղվեին նոր գործեր։ Եթե այդպես է՝ Չարենցն իրո՞ք գրել էր այդ պոեմները և ի՞նչ մտահղացումների արգասիք էին դրանք։

Ժամանակին «Մարդերգություն» վերնագրով պոեմ (1909) գրել էր Ռ. Սևակը։ Մարդերգության մեծ փափագ ուներ Դ. Վարուժանը, որը չհասցրեց իրականացնել իր ծրագրերը։ Չարենցի հղացումը ևս, անկախ պատճառներից, չիրագործվեց։

Այս նույն շրջանում Չարենցը հուշում է ևս երկու գրքի վերնագիր։

«Մորս համար գազելը» առաջին անգամ «Հայաստանի կոոպերացիա» ամսագրում (1920, № 12) տպագրվել է «Գազելների գրքից (Մորս համար գազել)» վերնագրով։ Գազելների գիրք թեև Չարենցը չտպագրեց, բայց Մահարու և այլոց հուշերից հայտնի է գազելների հեղինակի խոսքը. «Ի՞նչ գազելի վախտ է... Հիսուն գազել էի գրել, հիսունն էլ վառեցի... Ուրիշ բան է հարկավոր հիմի» (Դ. Մահարի, Երիտասարդության սեմին.— Երկերի ժողովածու, 5 հատորով, հ. 2, 1967, էջ 367)։ Հայտնի է նաև, որ այդ օրերին գրազի համար մի գիշերում Չարենցը գրել և հաջորդ օրը պատռել է վեց տասնյակից ավելի քառյակ։

«Աստղիկ» բանաստեղծությունը ևս նույն՝ «Հայաստանի կոոպերացիա» ամսագրում առաջին անգամ տպագրվել է «Բրոնզե գրքից» հղումով (1920, № 17)։ Այդ վերնագրով դիրք ևս Չարենցը չհրապարակեց, թեև կարելի է ենթադրել, թե ինչ գործեր կզետեղվեին դրանում։ Ամենայն հավանականությամբ դրանք կլինեին «Ողչակիզվող կրակ» շարքի «Առավոտ» ենթաշարքը, «Ութնյակներ արևին» շարքը և այս բնույթի մի քանի այլ բանաստեղծություններ։

Չարենցի չիրականացած ծրագրերից մեկն էլ կապվում է Մոսկվայում 1935 թ. ռուսերեն հրատարակվելիք բանաստեղծությունների ժողովածուի հետ, որի նախնական աշխատանքներն ամենայն հավանականությամբ պիտի սկսված լինեն 1933-ի վերջերին, երբ ռուս գրողների մի խումբ, նրանց մեջ նաև Չարենցի ապագա գրքի թարգմանիչներից մեկը՝ Ա. Գատովը, լինում է Երևանում, ծանոթանում հայ բանաս-

տեղծի ու նրա ստեղծագործությունների հետ։ Մոսկվայի գեղարվեստական գրականության պետական հրատարակչության հետ Չարենցը պայմանագիր է կնքում 1934-ի սկզբին, նույն թվականի փետրվարի 2-ին և ապրիլի 7-ին նա նամակներ է հղել Գատովին (առաջին նամակի բնագրի լուսապատճենը պահպանվում է ՉՖ՝ № 191)։ Նույն հարցի կապակցությամբ 1935-1936 թթ. նա հեռագրել է նաև Կ. Միքայելյանին, որը Մոսկվայում զբաղվում էր Չարենցի գրքի հրատարակության հարցերով։ Այդ կապակցությամբ վերջինս դիմել է նաև հրատարակչության դիրեկտոր Նակորյակովին։ 1935-ին նրան հղած նամակում ասում է, որ մեկ տարուց ավելի է, ինչ 4.500 տող ծավալով թարգմանության և տպագրության համար հրատարակչությունում է գտնվում իր գիրքը, որը, սակայն, գործը տեղից չշարժվելու պատճառով, գտնվում է մեռյալ վիճակում։ Այդ կապակցությամբ գրքի վերաբերյալ Չարենցը տալիս է լրացուցիչ ցուցումներ։

Այս բոլոր նամակներից երևում է, որ Չարենցը ծայր աստիճանի բծախնդիր է եղել ռուսերեն տպագրվող իր առաջին գրքի հանդեպ։ Դա վերաբերում է և՛ տողացիներին, որոնց մի մասը արել էր ինքը, և՛ թարգմանիչների ընտրությանը, և՛ հայերենի տաղաչափական, խոսքի կառուցվածքային տարրերի առանձնահատկությունների պահպանմանը, և՛ այն վերաբերմունքին, որ դրանց հանդեպ կունենա ռուս ընթերցողը։ Եվ պատահական չէ, որ տարբեր տարիներ նրա գործերի ռուսերեն թարգմանությունը կատարել են այնպիսի հեղինակություններ, ինչպիսիք են Վ. Բրյուսովը, Բ. Պաստեռնակը, Ա. Ախմատովան։ Նակորյակովին հղած նամակում նա նույնիսկ այսպիսի տողեր է գրել. «...մինչև այսօր ես ամեն կերպ խոչընդոտել եմ իմ բանաստեղծությունների ռուսերեն հրատարակությանը» (Անտիպ և չհավաքված երկեր, էջ 464)։ Եվ դա այն մտահոգությամբ, որ անորակ են եղել ազգային մյուս հանրապետություններից թարգմանված բանաստեղծների գրքերը։ Ըստ Չարենցի՝ դրանց «վատ բնագրերից» մնացել են «գունատ դրոշմվածքներ»։ Նամակից անմիջապես հետո նույն հասցեով Չարենցն ուղարկել է մի հեռագիր, որն անտիպ է.

Մոսկվա, Պետերատ
Նակորյակովին, Մուսայելյանին

Խնդրում եմ հետագրել իմ բանաստեղծությունների գրքի վիճակի մասին, անկասկած՝ խմբագրի անունը բացառող պատմությունից հետո: Խնդրում եմ ըստ Ձեր հայեցողության փոխել խմբագրին: Պատասխանը խնդրում եմ հետագրել հետևյալ հասցեով՝ Երևան, Սունդուկյան, 6, Եղիշե Չարենցին:

(Թարգմանություն, ռուսերեն բնագիրը պահվում է ՉՖ, № 199):

Չարենցի գրքի նոր խմբագիր է նշանակվում Ի. Պոստուպալսկին: Բայց և այդ ժողովածուն այդպես էլ լույս չի տեսնում: Ըստ վկայության՝ չտպագրված գրքի «շարվածքային բնօրինակը պահվում է ՅԴԱՀ-ի արխիվում» (VI, 752):

Անտիպ են մնացել ռուսերեն տպագրության համար նախապատրաստվող ևս երկու գիրք: Դրանցից մեկը Անդրկովկասյան պետական հրատարակչության կողմից 1935 թ. Թիֆլիսում հրատարակվելիք «Բանաստեղծություններ և պոեմներ» ժողովածուն է, որի պայմանագիրը հինգ հրատարակչական մամուլ ծավալով (3.500 տող) Չարենցը կնքել էր դեռևս 1932-ին: Այդ գրքի մասին Չարենցն ակնարկում է Ա. Դատովին հասցեագրած վերոհիշյալ երկու նամակներում, ինչպես նաև 1935 թ. Գ. Բեբուտովին գրած նամակում և վերջինիս ու Բ. Պաստերնակին հղած երկտողում: Այդ գրքի մասին «Ե. Չարենցի բանաստեղծությունները ռուսերեն լեզվով հրատարակելու հարցի շուրջը» վերտառությամբ հոդված է տպագրել Բեբուտովը ռուսերեն՝ «Ստալինեց» թերթի 1934 թ. հոկտեմբերի 8-ի № 120-ում (VI, 739):

Անտիպ է մնացել նաև Մոսկվայի «Սովետսկայա լիտերատուրա» պետական հրատարակչության գծով նախապատրաստվող ռուսերեն ժողովածուն, որը ևս պետք է լույս տեսներ 1935-1936 թթ.:

Բ

Չարենցի օրագրային գրառումները հատվածաբար լույս են տեսել Երկերի ժողովածուի վեցերորդ հատորում, որից տարբեր պատճառաբանություններով դուրս են մնացել ոչ քիչ

թվով էջեր։ Եվ եթե այսօր խնդիր ենք դնում ամբողջացնելու բանաստեղծի ժառանգությունը, ապա պիտի լույս աշխարհ բերենք նաև նրա օրագրի անտիպ էջերը, որոնք ամբողջությամբ 144 համարանիշով պահվում են Չարենցի ֆոնդում։

Օրագիր պահելու հետևողական սովորություն Չարենցը չի ունեցել։ Դրառումներ սկսել է անել 1934 թ. մարտի 14-ից, իր ծննդյան օրից մեկ օր անց և գրիչը վայր դրել 10 օր հետո՝ մարտի 23-ին։ Այդ ընթացքում օրագրային նշումներ է արել մարտի 14-ին, 15-ին, 17-ին, 18-ին, 19-ին և 23-ին։

Ի՞նչ խոհեր է բանաստեղծը պահ տվել իր կեսգիշերային լռությանը և ի՞նչ արձագանքներ են այսօր հասնում մեզ։

Իր խորհրդածությունները Չարենցն սկսում է մահվան մասին դատողություններով, մահը համարելով մի մեծ պարտություն։ Խոսքը տանք իրեն.

14. III, 1934

Մահվան մեջ կա ինչ որ խայտառակ, ստորացուցիչ, ամոթալի բան։ Գոնե այսպիսի տպավորություն է միշտ թողել իմ վրա ինձ անձամբ ծանոթ մարդկանց մահը։ Երբ տեսել եմ ինձ ծանոթ մարդկանց՝ դագաղում՝ միշտ այս է եղել իմ առաջին զգացմունքը։ Կարծես մեռնողը մի ինչ որ ծայր աստիճանի, աններելի, բսոմճելի, կեղտոտ հանցանք է կատարել – թե մեր, այսինքն կենդանի մնացողների, թե, մանավանդ, իր հանդեպ։ Թե ինչից է առաջ գալիս այս տպավորությունը – չգիտեմ։ Երևի կյանքի հանդեպ ամենամեծ հանցանքը նրա բացասումն է, ձերբոմը։ Տարօրինակն այն է, որ ես ողջ գիտակցությամբ զգում ես, որ ամենից փիչ այդ բանում մեղավոր է մահացողը, բայց և արդեն ամենից շատ նրա դեմ ես դառնանում և... լցվում բսոմճելի վախով ու զզվանքով։ Այդ զգացմունքը մի փոքր նման է այն արգահատելի զզվանքի ու արհամարհանքի զգացմունքին, որ մարդու մեջ առաջացնում է թղթախաղում անաջողակ մարդը. տարվում է, տարվում է վերջին ունեցածը, գարզապես թուղթը չի գալիս,— և, փոխանակ խղճալու—արհամարհանք ես զգում և զզվանք դեպի նա... կենդանի, առողջ, նորմալ մարդը առհասարակ չի սիրում դժբախտությունն ու անաջողակությունը։ Իսկ ինչ է մահը—եթե ոչ ամենածանր, ամենամեծ «տանուլ տալը», անաջողությունը:— Եվ այս չէ՞

պատճառը, որ առողջ, լիարյուն ազգերը... չեն սիրում հայերին, որ հանճարեղ տաղանդներ և անաչառներ են, իսմմնելի լինելու աստիճան թշվառ ու անաչառակ... Եվ ի՞նչ մոլորություն, որ իբր թշվառությունը վեհ է և ազնիվ... Արգահատելի է թշվառությունը, ինչպես մանը—և ուրիշ ոչինչ...

Նույն օրը Չարենցը գրառումներ է անում շուրջ մեկ տարի իր մոտ գտնվող Տերյանի ձեռագրերի մասին, այդ առիթով ասում սիրտ, հիացմունքի ու խանդաղատանքի խոսքեր: Բայց և դրանից հետո անցնում ահա այսպիսի մտորումների.

Որքան չլինաղ տպավորություն են թողնում իմ վրա Տերյանի ձեռագրերը, որքան զգվելի, արգահատելի տպավորություն եմ ես ստանում Հ. Թումանյանի աղջիկներին տեսնելիս, կամ նրանց հետ որևէ գործ ունենալիս:—Զարմանալի անհամապատասխան «ժառանգություն»... <...> Մանավանդ՝ Նվարդը... Եվ երևակայել, որ Տերյանը, այդ լուսավոր պոետը սիրել է նրան և նվիրել որքան զմայլելի բանաստեղծություններ...

Հայտնի է, որ Հ. Թումանյանի «Գեղարվեստական երկերը» (1934) խմբագրելիս՝ Չարենցը վեճեր է ունեցել գիրքը կազմողի՝ Հ. Թումանյանի դուստր Ն. Թումանյանի հետ: Այդ կապակցությամբ 1933 թ. հուլիսի 20-ին նա պաշտոնապես դիմել է ՀԽԳՄ կազմկոմիտեին և պահանջել քննել հարցը (տես՝ VI, 466—469): Չարենցի վիրավորվածությունն այն աստիճանի է հասել, որ պաշտոնական այդ գրություն մեջ ստիպված է եղել ասելու. «Հաճախ մի «ը»-ի կամ ստորակետի համար ես ստուգել եմ մի քանի վարիանտներ, պահանջել եմ ձեռագրեր և այլն. առհասարակ ավելորդ չեմ համարում հայտնել, որ ավելի անշնորհակալ, կասկածամիտ... վերաբերմունք դեպի գրողը և խմբագիրը, որի միակ հանցանքն է անսահման սերը դեպի Թում.,— ես ոչ միայն չեմ հանդիպել կյանքում, այլև, եթե այդ ամենը մի հազարերորդ չնգամ ես կարողանայի նախատեսել սկզբից— չէի ձեռնարկի այդ գործը, թեկուզև դրանից կախված լիներ իմ կյանքի փրկությունը»: Չարենցը իրեն հանձնարարված և իր ստանձնած խմբագրական աշխատանքն արել է արտակարգ խնամքով՝ ըստ

էության հիմք դնելով Թումանյանի ժառանգության գիտական հրատարակությանը։ Այս պայմաններում, երբ նա, իր իսկ բառերով ասած, զգացել է շուրջը տարածվող «հերյուրանքներ, որոնք դուրս են գրական ամենատարրական էթիկայի սահմաններից», բնական է, չէր կարող չվրդովվել։ Ահա այդ օրերի արձագանք է օրագրային այս գրառումը, երբ, Տերյանի մասին մտորելիս, Զարենցը հիշում է նրա հետ կապված որոշակի մի անձնավորության և վերջինիս հանդեպ էլ ունեցած իր վերաբերմունքը։

Նույն օրվա գրառումների երրորդ հատվածը վերաբերում է իր ժամանակակից երկու արձակագրի՝ Մ. Արմենին և Ս. Զորյանին։ Արմենի մասին Զարենցը խոսում է չթաքցված համակրանքով. այդ հատվածը տպագրված է։ Բայց, ահա, Զորյանի վերաբերյալ նա արտահայտվում է բավականին խիստ, որի հետևանքով և այդ մասը չի տպագրվել։ Ընդհանրապես, Զարենց-Զորյան գրական և անձնական առնչությունը բավականին բարդ պատմություն ունի։ Զարենցին միշտ էլ վանել է Զորյանի սառը և զուսպ պահվածքը։ Դա թերևս ունենա հոգեբանական այնպիսի հիմքեր, որոնք գալիս են մարդկային նկարագրերի տարբերություններից։ Մի կողմից բուռն ու վարար և մինչև վերջին սահմանը գնալու հակվածություն, Աստծու հետ մերձենալու աղերս և վերջին ղոհի պատրաստակամություն, բացահայտ հանճար գավառական խեղճուկրակության մեջ, մյուս կողմից՝ հավասարակշիռ, հաշվենկատ նկարագիր, չափված—ձևված արարքներ, մտավորական մարդու մշակված պահվածք, գրական ձիրքի հանգիստ արտահայտություն՝ առանց բռնկումների։ Մի կողմից «սկանդալիստի» ու «նարկոմանի» համբավ, մյուս կողմից՝ «բարեկիրթ ինտելիգենտ»՝ մշտական ակնոցով։ Այս տարբերությունը, հնարավոր է, որ նրանց մեջ սառնության պատնեշ ստեղծեր և արտահայտվեր թե՛ անձնական հարաբերություններում, թե՛ գրական։

Դեռևս 1922 թ., իր բուռն շեփորահանդեսների օրերին, Զարենցն այսպիսի մի նամակ է հղել Զորյանին.

Ի՞նչ կարծիք է կազմել նա («Կովդ») «Երեքի» դեկլարացիայի մասին։

Մենք այստեղ շնորհիվով գործ ենք սկսել: Երեկոներ՝ դասախոսություններ, ինչ որ կուզես: Աչի մի ֆանի օրով Երեվան և կհիանաս, կզարմանաս, կշշմես, կալեկոծվես!...

922. VIII. 25. Երևան

(Սովետական գրականություն, 1977, № 8, էջ 161)։

Սա իսկը Չարենցն է։ Թեև Զորյանի արձագանքը որոշակիորեն պարզ չէ, բայց պարզ է մի բան, որ նա քնավ չհարեց Չարենցի և մյուսների սկսած գրական նոր շարժմանը, մնաց հին մտավորականների խմբում, որոնք հետո կոչվեցին ուղեկիցներ և լիարժեք գրական մասնակցություն ունեցան գրական կյանքին։ Այդուհետև գրական-հասարակական գործունեության մեջ նրանք շատ են հանդիպել։ Զորյանի վերաբերյալ, ինչպես տեսանք, Չարենցը աննպաստ է արտահայտվել 1934 թ. փետրվարի 4-ին «Կապկազ թամաշայի» իր օրինակի վրա արած գրառման մեջ։ Եվ ահա, դրան էլ հաջորդում է մարտի 14-ի օրագրային գրառումը, որի հիմնական միտվածությունն արտահայտված է այս արտահայտությունների մեջ.

..Խեղճ հայ գավառացի, որի ամբողջ տեսադաշտը Ղարաֆիլիսան է <.....> Ամեն անգամ, երբ ես ուզում եմ պատկերացնել մեր կյանքի և գրականության ամբողջ սահմանափակությունը—իմ աչերի առջև կանգնում է Ստ. Զորյանը՝ իր գավառական, «ղարաֆիլիսեցիական» արտաֆինով և... ակնոցներով... Խե՜ղճ մարդ, նույնիսկ կուլտուրականության պրետենզիա ունի, որի միակ աուրիբուտն է նրա պենսնեն <.....> Եվ կարո՞ղ է արդյոք լինել ավելի ցավալի և տխուր բան, քան երբ գավառացին իր ճոգևոր «կույրաղիֆին», կարճատես կերպարանքին է հարմարեցնում անգամ այնպիսի վիթխարի և անհուն բաներ, ինչպիսին հեղափոխությունն է... Ստացվում է աբսուրդ: Իսկ երբ այդ աբսուրդը դառնում է մի ամբողջ ժողովրդի գրականության միջին մակարդակ—դա արդեն ոչ միայն տխուր է, այլև աղետալի ու ողբալի...

Թվում է, ավելորդ բարեպաշտություն հանդես բերելու անհրաժեշտություն չկա։ Չարենցի կարծիքն այս դեպքում խիստ ենթակայական է։ Այնպես որ, Զորյանի արժեքը դրա-

նով չի նսեմանում։ Սոսկ ճշգրտվում են գրական հարաբերությունների ինչ-ինչ եզրեր։

1933 թ. հոկտեմբերի 20-ին «Գրական թերթում» (№ 17) Զորյանը Չարենցի կազմած 7-րդ դասարանի դասագրքի մեջ տեղ գտած վրիպումների առիթով դժգոհություն էր հայտնել՝ ասելով, որ իրեն են վերագրել Տոլստոյի «Հաջի Մուրադի» և Չեխովի «Զորակում» պատմվածքի թարգմանությունները։ Նա պարզաբանում է, որ առաջինը ինքը սոսկ խմբագրել է, իսկ երկրորդից անտեղյակ է ընդհանրապես։

1935 թ. Զորյանը այլոց հետ մեկտեղ ելույթ է ունեցել գրողների միության այն ժողովում, ուր դրված էր Չարենցի հեռացման հարցը։ Ընդ որում՝ Զորյանը հանդես է եկել Չարենցին համոզելու առաջարկությամբ, որ գուցե նա գրողների միությունից դուրս գալու իր դիմումը ետ վերցնի։ Բայց, ահա, 1935 թ. դեկտեմբերի 30-ին, Կրեմլում հայ աշխատավորների պատվիրակության ընդունելության ժամանակ, Չարենցի վերաբերյալ Ստալինի տված հարցին նա պատասխանել է բավականին վեհերոտ, չի ասել ճշմարտությունը, չի խոսել Չարենցի իրոք որ ծանր կացության մասին։ Գուցե չէ՞ր կարելի։ Գուցե անհրաժեշտ համարձակությունը կվտանգե՞ր նրա կյանքը... Համենայն դեպս՝ դա միակ առիթն էր երկրի ղեկավարի մոտ խոսելու նախիրյան հանճարի ճակատագրի մասին...

Հետագայում Զորյանը հուշեր գրեց Չարենցի մասին։ Դրանից պարզվում է, որ ծանոթացել են 1918-ին, Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատանը։ Ծանոթությունը սկզբում չի վերածվել մտերմության։ Հետո նրանց հարաբերությունները հասել են նաև դրան։ Զորյանը 1921-ին մասնակցել է Չարենցի հարսանեկան փոքրիկ հավաքին, որին ներկա են եղել լորս հոգի։ Ծանոթության խորացումը Զորյանի համար հանաչելի է դարձնում Չարենցին, որին նա ներկայացնում է սա այսպիսի անդրադարձով.

Լինելով մարմնով փոքր, սիրում էր սակայն միշտ ունենալ մեծ սենյակ, մեծ բեֆ, մեծ զույգ, մեծ գիրք, մեծ խոսք... Նա երբեմն ունենում էր մանկական ասեմ, թե տղայական անկեղծության, պարծենկոտության պահեր. կպարծենար տեսած մի բանով, կամ կարդացած գրքերով... Կա-

յին մարդիկ, որ... Եթե նույնիսկ անբովանդակ գրածներիմէջ (ընդգծում՝ Դ. Գ.) ուզում էին տեսնել մեծ խորություններ...

Այնուհետև եկել են տարակարծությունների օրերը և գրական մի զրույցից հետո, ինչպես շարունակում է Զորյանը, «...սառան մեր հարաբերությունները, բայց մինչև վերջը մնացին միշտ կոռեկտ»։ Զրույցի նյութը եղել էր «Ռոմանս անսերը» և Չարենցի ձախ շրջանի գրական փորձը, որի մասին Զորյանը այսպես է արտահայտվել.

Պետք է ասեմ, որ այդ շրջանում նա տուրք էր տալիս էժանագին, արևմտահայերի ասած, վարնոց իմաժինիզմին ու ֆուտուրիզմին և ճանդես էր բերում ֆուտուրիստական գծեր, վարֆագիծ. երբեմն դառնում էր իճճաճավան, անհանդուրժող։ Հաճախ, շատ հաճախ (երբեմն իրավացի) գրական իր ընկերներին՝ պրոլետգրողներին, վիրավորում էր, դիպչելով նրանց ամենազգայուն տեղերին, թե սա շնորհ չունի, նա անգրագետ է, տգետ և այլն...

Ահա այս վերաբերմունքի մեջ էլ թաքնված է գաղտնիքը։ Նոր ճանապարհ հարթելու Չարենցի ստեղծագործական մղումներն ու փորձը համարվում է «վարնոց», արդարախոսությունը՝ «ինքնահավանություն»։ Եվ բնական է, որ ստեղծագործական խառնվածքների և մարդկային նկարագրերի տարբերությունը նրանց պետք է հեռացներ իրարից, արտաքին «կոռեկտության» տակ թաքցնելով փոխադարձ ինչ-որ անհարգալից մի բան...

Մարտի 15-ին Չարենցն արտակարգ հետաքրքիր գրառումներ է արել՝ կապված Լերմոնտովի «Դևի» հետ։ Այս առիթով նա խորամուխ է լինում Դևի ժխտողական տարերքի մեջ և դրանով բացահայտում ազգային նկարագրի որոշակի առանձնահատկություններ.

Ես շատ եմ մտածել Լերմոնտովի «Դևի» մասին։— Ի՞նչ սիմբոլ է այդ։—Չէ՞ արդյոք այդ ռուս-թաթարական ժխտողական հանճարի պատկերը... Եվ չէ՞ արդյոք այդ «Դևը» նախահայրը ռուսական նիհիլիզմի... Հետաքրքի՜ր կոնցեպցիա... Ըստ այս կոնցեպցիայի—«Դևի» հետևողները ռուսա-

կան և համամարդկային պատմության և կուլտուրայի <ներդաշնության> ոչ այլ ոք են, քան... Չերնիշևսկուց սկսած—մինչև... Լենին... Ո՞վ չի արդյոք կրել «Դևի» նոգևոր կերպարանքի ճզոր ազդեցությունն իր վրա ռուսական պատմության մեջ. ա՛յն ամենը, որ բուն ռուսական է, և, որպես այդպիսին, միանգամայն ինքնուրույն:— Այսպիսով, Լերմոնտովի «Դևը» դառնում է նախահայրը այն ամենի, որ ռուս ժողովուրդը մուծել է կամ փորձում է մուծել համամարդկային պատմության մեջ:—Եվ նրա լավագույն աշակերտներն են հանդիսանում—Չերնիշևսկին, Պիսարևը, Շչեդրինը, Դոստոևսկին, Տոլստոյը, Լենինը, Նիկոլայ Մորոզովը...Մանավանդ վերջինս, որ հերոսում է ամբողջ մարդկության պատմությունը!... Իսկապես որ «Դևը» ոչ այլ ինչ է, քան ռուսական հանճարի լավագույն սիմբոլը!!!

***

Իսկ ռուսական դրական ապաղոնյան հանճա՞րը... Նա իր լավագույն արտահայտությունը գտել է հանձին Ա. Պուշկինի-ն... մնացել է... մենակ!...Եվ սա՛ էլ է չափազանց հետաքրքիր, որ ռուսական կուլտուրայի մեջ դ ր ա կ ա ն ապաղոնյան հանճարի ներկայացուցիչը սերում է... Աֆրիկայից!... Եվ մինչև այս չունի ոչ մի շարունակող ու հետևող իր լուսավոր գործին... Պուշկինը — ռուսական կուլտուրայի միակ դ ր ա կ ա ն, շիներաբար սկզբունքն է— և մնացել է մենակ... Բոլորը նրան երկրպագում են, բայց ոչ ոք նրան չի հետևում...

Ժխտողական հանճար ասելով՝ Չարենցը փաստորեն նկատի ունի կործանման տարերքն ընդհանրապես և դրա վերափոխիչ ուժը՝ հեղափոխական ոգին, որը Ռուսաստանում նախապատրաստեցին 19-րդ դարի դեմոկրատ մտածողները և որի գործնական կիրառողը Հոկտեմբերյան հեղափոխությամբ եղավ Վ. Ի. Լենինը: Դևն այս դեպքում դառնում է վերափոխող ուժի խորհրդանշան: Դրա կողքին միաբանող՝ այսինքն դրական և ոչ քե ժխտող-բացասող ուժի արտահայտություն է համարում Պուշկինի հանճարը:

Մարտի 17-ի գրառումը Չարենցն սկսում է Պրիշվինի ու Ռոզանովի ստեղծագործության շուրջ ունեցած խորհրդածություններով՝ հիմքում դնելով արվեստի ինչպիսին լինելու

Հարցը՝ Արդուկած ոճին նա հակադրում է կյանքի բնականոն տարերքը, որպես, իր ըմբռնումով, արվեստի միակ ճանապարհ.

Ինչո՞ւ ռուս մարդը սիրում է տխրությունը... Նույնիսկ այնպիսի մարդասեր ռուսը, ինչպիսին է **Մաքսիմ Գորկին**... Անվավասիկ նա առաջաբան է գրել Միխայիլ Պրիշվինի գրքերի մասին, իսկ <.....> վերջինս ևվիրել է նրան (Գորկուն) իր երկը (**«Журавлиная Родина»**), որ, իբր թե, երկ է ստեղծագործական պրոցեսի մասին: Այդ երկն, ուրեմն, գրված է ստեղծագործական պրոցեսի մասին, այսինքն այն մասին, թե ինչպես է ծնվում երկը գրողի հոգում,— սակայն իրեն գրական «ժանր» այդ երկը չափազանց հետևում է... տխրահռչակ, կամ ավելի շուտ՝ երջանկահիշատակ— Վ. Վ. Ռոզանովին... Այս վերջինս ուներ մի ճաշակավոր աֆորիզմ՝ **«Литература—это мои штаны!»** ...Հանճարեղ աֆորիզմ, որ կարող էր ճնշել միմիայն Տոլստոյի և Դոստոևսկու հայրենակիցը: Սակայն որն է այդ հանճարեղ աֆորիզմի ներքին իմաստը:—Ինչպես, այն, որ գրականությունն, իբրև ստեղծագործական ակտ, ինտիմ հանգամանք է:— Իր ֆիզիոլոգիական մերկությամբ այս ախտիմաստ հանճարեղ է: Սակայն ի՞նչ է անում Պրիշվինը սրանից... Նա իր այդ ստեղծագործական վարպետիր նախ լվանում է «գրական ճարմարություն» լոբանոցով, «արդուկում» է «տանելի» ոևերով և ապա ցույց տալիս այդպիսի (նման) ինտիմությունների սիրահարին... Եվ Գորկին, արդեն գլուխը կորցրած դիֆերամբ է երգում նրան... Իսկ իմ կարծիքով, երբ սովորում ես «ինտիմությաններ»—որքա՞ն ավելի գերադասելի է «կեղտոտ» վարպետիր, քան— արդուկածը և օսլայածը... Որքան էլ ոչ-պաթետիկ լինի կեղտոտ վարպետիր, նա, այնուամենայնիվ, նրանո՛վ է գերազանց, որ – բնական է (չէ՞ որ այդ ամբողջ «մեթոդի» գերագույն իմաստը—հենց ֆիզիոլոգիական «բնականությունն» է): Ուրեմն էլ ի՛նչ Պրիշվին, երբ կա Վ. Վ. Ռոզանով!! Ըստ իս՝ Վ. Վ. Ռոզանովի «կեղտոտ վարպետիր» միլիոն անգամ բարձր է ու թանկ, իբրև ստեղծագործական ակտի մերկացում, քան Միխ. Պրիշվինի «արդուկած» վարպետիր...

sapiente sat !!!

Չարենցը խոսում է ի՛ր լեզվով, ի՛ր ոճով, ի՛ր բացվածությամբ և դրանից ամենևին էլ պետք չէ «մի տեսակ» զգալ և մտքում արդեն ամեն ինչ կանոնակարգած քաղքենու պատրաստի դատողություններով հարձակվել բանաստեղծի վրա։ Շրագրային գրառումների առանձնահատկությունը հենց խոր բապես անհատական-ենթակայական բնույթի մեջ է։ Այս նույն ոգով Չարենցը շատ ուշագրավ դիտողություններ է անում՝ կապված քաղաքական գործիչների և արվեստի մարդկանց ճակատագրի հետ։ Ըստ Չարենցի՝ Լենինը հեղափոխությունն սկսեց նախկին վարչակարգի «գաղտնի դիպլոմատիան» իրավացիորեն մերկացնելով։ Ահա այդ «գաղտնի» կյանքով ապրող մարդկանց վրա էլ մի պահ հայացք է ուղղում բանաստեղծը և բացում այն անջրպետը, որ առաջանում է նրանց ու նրանց կողքին ապրող մարդկանց միջև ու նաև խոսում այն վաղանցուկ փառքի մասին, որին տիրանում են նրանք, բայց և հետագայում կորչում մոռացության փոշում։ Իսկ դրան հակառակ, հասարակության դժգոհության ու անբմբռնողականության պատնեշը հաղթահարելով, աստիճանաբար իրենց փառքի պատվանդանին են բարձրանում հենց այդ ժամանակաշրջանում ապրող, բայց և անտեսված ու չգնահատված արվեստի աշխարհի մարդիկ.

Լենինը հիանալի, հանճարեղ կերպով գլխի է ընկել, որ մարդկության գլխին թափվող չարիքների ամենամեծ աղբյուրներից մեկն էլ «գաղտնի դիպլոմատիան» է և այդ պատճառով իր մեծագույն հեղափոխությունն սկսեց այդ դիպլոմատիայի գաղտնի վավերաթղթերի հրապարակումով։ Բայց բանն այն է, որ բանի դեռ աշխարհիս երեսին գոյություն ունի պետությունը—դիպլոմատիան, ինչպես ընդհանրապես հաղաքականությունը, լինելու է գաղտնի և միշտ «մամուր հաղաքականությամբ» զբաղվող (այսինքն՝ որոնց պ ր ո ֆ ե ս իա ն է հաղաքականությունը) մարդիկ, հենց իրենց պ ր ո ֆ ե ս իա յի, իրենց գործի բնույթի բերումով, լինելու են մնացած մարդկությունից չինական պարիսպներով ծածկված մի կաստա, որոնք ապրում են մի տեսակ կրկնակի կյանքով։ Եվ ինձ վրա միշտ մի տեսակ միստիկական տպավորություն են թողնում այդ մարդիկ, նայում ես՝ մարդ է, ինչպես և դու,

սակայն զգում ես յուրաքանչյուր վայրկյան, որ նա բացի բոլորին ճայտնի իր կյանքից ապրում է և մի այլ, բոլորովին թաքուն կյանքով, գիտե բազմաթիվ բաներ, որ դու, հասարակ մահկանացուդ, երբեք չես իմանա, և, որ ամենաճիշտն է— իրավունք չունես իմանալու... Դուրս է գալիս այսպիսի մի դրության. հենց ես կողքին, ինձ հետ կողք-կողքի, ապրում է մարդկային մի ամբողջ շերտ, ինձ նման մարդիկ, մի ամբողջ խավ, որ զբաղվում է ինչ-որ բոլորից թաքուն գաղտնի կյանքով, գործ ունի յուրաքանչյուր օր այսպիսի դեպքերի ու փաստերի հետ, որոնք մնացած մարդկության համար մի տեսակ «փակ աշխարհ» են—և այդ ամբողջը հանուն այդ միևնույն մահկանացուների շահերի լավագույն հետապնդման... Միտքս սխալ ըմբռնելուց խուսափելու համար ես պետք է ասեմ, որ ի նկատի ունեմ այսպես կոչված «քաղաքական մարդկանց» գործունեության աոօրյա, գ ո ր ծ ն ա կ ա ն բովանդակությունը, ընթացիկ քաղաքական գործունեությունը, այդ գործունեության կոնկրետ պարունակությունը (ընթացիկ բանակցություններ, պետական ընթացիկ հարցերի ինարկում, կառավարական փոփոխություններ և այլն)—այսինքն «քաղ. մարդկանց» գործունեության այն կողմը, որը բոլոր ժամանակներում և բոլոր սիստեմներում ընթանում է մնացած մարդկությունից գաղտնի,—և ոչ թե այդ մարդկանց գործունեության ընդհանուր իդեական բովանդակությունը, ւր, իհարկե, երբեք էլ գաղտնի չէ և չի էլ կարող լինել։ Եվ ահավասիկ այն հանգամանքը,—այսինքն այն, որ մարդկային հասարակության մեջ մի շարք մարդիկ իրենց գործի բնույթով հարկադրված են ամբողջ ժամանակ ապրել մնացած մարդկությունից թաքուն, նրանց տեսողությունից ծածկված ինչ-որ երկրորդ կյանքով,—այս հանգամանքը բնականորեն մշակում է այդ մարդկանց մեջ մի հոգեբանություն, որ հատուկ է «ընտրյալներին»։—Քաղ. գործունեությամբ զբաղվող մարդը բնականորեն պետք է որ իրեն բարձր զգա իր շրջապատից, իրեն շրջապատող «հասարակ մահկանացուներից», որոնք ոչ միայն ոչ մի տեղեկություն չունեն այս «ընտրյալների» նեղ շրջանակում կատարվող դեպքերից, աոօրյա անցուդարձից, այլև ի ր ա վ ու ն ք էլ չունեն ունենալու,

ինքն էլ իրավունք չունի ասելու:—Սրա վրա ավելացնենք և այն, որ այդ «ընտրյալների» գործունեությունը ոչ թե սովորական մարդկային գործունեություն է, որ կարող է վերաբերվել միայն իրենց, այդ գործունեությամբ զբաղվող մարդկանց, այլ մի գործունեություն, որ ամբողջովին վերաբերվում է ուրիշներին, անմիջականորեն վերաբերվում է նրանց կյանքին ու ճակատագրին,—և պատկերը ավելի սոսկալի կդառնա:—Եվ բանի դեռ չի վերացել այս, այսինքն բանի դեռ մարդկային հասարակության մեջ այդ հասարակության մի չափազանց չնչին մասը պ ա շ տ ո ն ա պ ե ս ապրում է նույն հասարակության վիթխարի մեծամասնությունից գաղտնի գործունեությամբ և այն էլ մի այնպիսի գործունեությամբ, որից կախված է այդ մեծամասնության կյանքը իր բոլոր առօրյա մանրամասնություններով,—բանի դեռ մարդկային հասարակության մեջ սա կմնա այսպես—ավելորդ է երազել անգամ, որ բաղաքականությունը կարող է դառնալ յուրաքանչյուրի սեփականություն (խոսքը, իհարկե, վերաբերվում է միևնույն դասակարգին պատկանող մարդկանցից յուրաքանչյուրին): Քանի դեռ այսպես է՝ միշտ էլ հասարակության մեջ կլինեն պատրիկներ և պլեբեյներ—և այն էլ այս հակադրության ամենավատթար առումով: Քանի որ՝ եթե մարդկային բանականությունը չի ուզում հաշտվել, որ գոյություն ունեն «պատրիկներ և պլեբեյներ» սոցիալական պատճառներով (այսինքն՝ ես պատրիկ եմ, որովհետև հ ա ր ու ստ եմ, իսկ դու պլեբեյ ես—բանի որ ա ղ ք ատ ես.—Մարքսից հետո մենք գիտենք ավելի բան լավ, որ այս տարբերությունը մարդկային հասարակության մեջ բնավ էլ չի իշխում մարդկանց հոգևոր կարողություններից)—էլ ինչպես կարելի է հաշտվել, որ այդ տարբերությունը գոյություն ունենա... չգիտես թե ի՛նչ պատճառով:— Մի՞թե X-ը, որ զբաղվում է բաղաքականությամբ, ավելի է խելացի, ընդունակ, բան Y-ը, որ զբաղվում է, ասենք, նկարչությամբ... Կարող է պատահել ճիշտ հակառակը:— Այնինչ բաղաքականությամբ զբաղվող X-ի «երկրորդ» կյանքը ամբողջովին թաքնված է Y-ից, X-ի փաստացի տեղյակությունը բաղաքական կյանքի ընթացիկ, գործնական անցուդարձից տասնյակ հազար անգամ

ավելի է, քան *Y*-ը,— և ընդհանրապես այս վերջինիս ճոգևոր տեսադաշտից միանգամից դուրս է մարդկային հասարակության ավյալ շրջանի քաղաքական կոնկրետ առօրյայի այն ամբողջ գումարը, որը կազմում է այդ X-ի ամբողջ «երկարդ» կյանքը... էլ ո՞նց այդ X-ը, որքան էլ ճոգեպես նա փոքր ու ողորմելը լինի *Y*-ից,— էլ ո՞նց նա իրեն չզգա և չհամարի «ընտրյալ», իսկ *Y*-ին— խեղճ քաղքենի **обыватель**, որը ապրում է, շնչում, կին ու երեխա ունի, նույնիսկ գրքեր է կարդում ու գրում—այնինչ ոչ մի տեղեկություն չունի, բե հենց իր կողքին, համարյա իր «քթի տակ», ինչ է կատարվում ներկայումս մի այնպիսի կարևոր ասպարեզում, ինչպիսին է քաղաքական կյանքը...

Բայց սա ունի իր հակառակ կողմը: Եթե մի կողմ թողնենք քաղաքական հանճարներին և վերցնենք այդ «կաստային» պատկանող միջին, միջակ անհատներին, կտեսնենք, որ համարյա միշտ այս վերջիններս իրենց ճոգևոր ունակություններով պատկանում են մտածող մարդու տիպի բավական ողորմելի տեսակին: Ջրկեցեք այդ «կաստայի» միջակ ներկայացուցչին դիրքից ու պաշտոնից և կտեսնեք, որ ձեր առաջ կանգնած է մի սովորական, հաճախ ավելի քան սահմանափակ ճոգևոր ունակություններ ունեցող անձնավորություն: Եվ այս չէ՞ պատճառը, որ այնքան շատ են «խուճանում» քաղաքական ասպարեզը այս կամ այն պատճառով կորցրած մարդիկ, հաճախ նույնիսկ այնպիսիները, որոնք թվում էին ճոգու և մտքի շտեմարան:—Եվ ես չգիտեմ կյանքում ավելի խղճալի և տխուր պատկեր, քան քաղաքական «նախկին գործիչն» է. մի՞թե այդպես է ստեղծագործությունից հրաժարված գրո՞ղը, նկարի՞չը, մտածո՞ղը...

Բայց սրան կասեն <.....> սրա՝ մխիթարանք— մեզ, հասարակ մահկանացուներիս համար...

***

Որքան դժվար է գրավոր կերպով արտահայտել այն ամենը, ինչ որ մտածում ես և մտածելիս թվում է թե պարզ, թե հասկանալի: Գրելուց հետո ես կարգացի այս վերջին հատվածը և տեսա, որ չեմ կարողացել արտահայտել բուն միտքս

«բաղ. մարդկանց» և «սովորական մահկանացուների» միջև եղած տարբերության մասին: Այս խնդիրն ինձ շատ է զբաղեցրել, բազմիցս ես մտածել եմ, թե ինչն է, որ որոշ մարդկանց համարում է բաղ. կյանքի, իսկ մյուսներին–ոչ: Բացի այս՝ բազմաթիվ այլ հարցեր, կապված այս խնդրի հետ: Այս ամենի մասին հարկավոր է լավ մտածել և աշխատել ճիշտ կերպով գրի առնել այդ մտքերը,— մի բան, որ շատ ավելի է դժվար, քան ոտանավոր գրելը...

Ահա այսպես՝ իրեն պաշարած հարցերի խոր ու բովանդակալից քննությամբ Չարենցը կորզում է լուսությունից քամվող ճշմարտություններ, որոնք այլ դեպքերում մնում են ենթազգայությունների ոլորտում, կորչում աչքի տեսածի և մտքի ձևակերպածի պատահական, հպանցիկ, հապճեպ արտահայտությունների մեջ, որոնք շատ դեպքերում չեն էլ հասցնում դառնալ խոսք:

Օրագրային գրառման պատառիկը, արված վերջին օրը՝ մարտի 23-ին, և մնացած անտիպ, վերաբերում է իր էպիգրամներից մեկի առթիվ երկու բանաստեղծների արտահայտած կարծիքին: Քանի որ առանձին ուսումնասիրություն հատկացված է Չարենցի անտիպ էպիգրամներին, ուստի՝ օրագրային գրառման այդ հատվածի մասին խոսք կլինի այնտեղ:

Գ

Չարենցը միշտ հետամուտ էր ոգու և հանճարի գաղտնիքին: Նա որոնում էր իր Աստծուն և գիտեր, որ մի օր իրենք դտնելու են իրար: Այս որոնումը իրեն տանում էր դեպի ճանաչողության անիմանալի խորքերը, դեպի իմացության սկիզբը՝ որպես մարդկության մտավոր մանկության շրջան և դեպի ճանաչողության վերջը՝ որպես մարդկային հանճարի կուտակումների արտահայտություն: Այսինքն՝ եթե մի ծայրին Հոմերոսն էր ու հունական դիցաբանությունը, ապա մյուս ծայրին կանգնած էին է. Պոն, Զ. Ֆրեյդը, Ֆ. Նիցշեն: Այս որոնումների ընթացքում նա անընդմեջ չանում էր գտնել արվեստի գաղտնիքը՝ պարզ, մոնումենտալ ձևերից սկսած մինչև անել ու անդուռ ոգու լաբիրինթոսի խառնիճաղանջ քաոսը:

Այս տեսակետից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում նրա «Պոեմ անվերնագիր» երկը և դրա հետ կապված «De profundis» գրառումը, որոնցից առաջինը տպագրված է «Անտիպ և չհավաքված երկեր» գրքում, երկրորդը՝ Երկերի ժողովածուի 6-րդ հատորում: Բայց և կան սրանք լրացնող անտիպ գրություններ, որոնց շուրջ էլ կդառնա մեր խոսքը: Այդ նյութերը գտնվում են Ձեռագրի մի տետրում (ՉՖ, № 85), որի առաջին էջը Չարենցը գեղազարդել է լատինական գրերով, երկրորդը՝ երկաթագիր հայերենով.

EGICHE TCHAPENTZ
Anno Domini MCMXXXII
EREVAN
AVRILIUS
1937 թ. = 1386 = Ռ3ՁՁ
Եղիշե Չարենց. Հազարհինհարյուր
երեսունյոթ թ. ապրիլ
ի մ. ք. Երևան. Ռ3Ձէ
տետր գրությանց այլևայլ

«ի մ. ք. Երևան» ոչ թե նշանակում է «իմ քառասնամյակը», ինչպես մեկնաբանված է «Անտիպ և չհավաքված երկերի» ծանոթագրության մեջ (էջ 665), այլ՝ ի մայր քաղաքն Երևան, իսկ տետրի գրառումներն էլ ոչ թե արված են բանաստեղծի ծննդյան օրը կամ այդ օրերին, այլ՝ ապրիլին: Վրիպումը գալիս է նրանից, որ «ի մ. ք.»-ն կարդացվել է «իմ ք.»:

«Պոեմ անվերնագիրը» Չարենցի բարդագույն երկերից է, սկսված 1937-ի ապրիլի 2-ին: Մուտքն սկսվում է մի այսպիսի գրառումով.

ՊՈԵՄ ԱՆՎԵՐՆԱԳԻՐ
1. Երազների մասին
2. Երազը
3. Բանալին
ԻԹ ԼԱ Ա ԺԲ ԺԱ ԻԲ ՃՁ
Ըստ էդգար Պո-ի + Ֆրեդ
Սկսված է 2- IV- 1937 Երևան
ANNO DOMINI MCMXXXII
Ի թվակ. ճայկ. Ռ3Ձէ
Եղիշե Չարեճց
Մեղսաբարո դպիր երզասաճ

Ի՞նչ է նշանակում այս գաղտնագիրը. առաջին, երկրորդ, երրորդ կետերը հուշում են պոեմի բովանդակությունը։ Հայերեն տառերով գրված թվերի կարգը սա է՝ 29 31 1 12 11 22 և 106։ Ընդ որում՝ բոլոր թվերի գումարը, բացի վերջինից, 106 է։ Այսինքն, եթե նախորդ թվերը գումարելիներ են, ապա վերջինը դառնում է գումար։ Կարելի է մտածել, որ Զարենցն ակնարկում է պոեմի տողաքանակը։ Բայց դրա համար բավարար նախադրյալ չկա, քանի որ պոեմն ավարտված չէ։ Իսկ գուցե Զարենցը հուշում է պոեմի համապատասխան տողերը, որոնցում, ինչպես «Ստեղծագործության փիլիսոփայությունը» հրաշալի հոդվածում իր «Ագռավը» երկի մասին կասեր է. Պոն, թաքնված է «իմաստի ստորջրյա հոսանքը»։ Այդ տողերը, բացառությամբ վերջինից, որը բացակայում է, ըստ «Անտիպ և չհավաքված երկեր» գրքում տպագրված տարբերակի, միասնության մեջ այսպիսի պատկեր են ներկայացնում.

Ի՞. 29 Բայց մառնված բախտի իմահանությամբ հիմար՝
ԼԱ. 31 Խողխողելով ոգուս հանդգնությունն հախուռն—
Ա, 1 Ջարմանալի շփոթ ու անհեթեթ, ու մութ
ԺՓ. 12 Վարժեցնում եմ ոգիս հայեցումի անկիրթ...
ԺԱ. 11 Եվ, իոզի նման ծալապատիկ նստած՝
ԻՓ. 22 Երջանկությ[ա]ն ոգու,— հղում եմ հիմն անգին...
ՃՉ. 106 . . . . . .

Գաղտնագրի հաջորդ մասը վերաբերվում է Պոի և Ֆրեյդի անունների համատեղ գումարումով թվարկմանը, որն արդեն իսկ հուշում է պոեմի բնույթն ու ի հայտ բերում ստեղծագործական նախադրյալները։

Բացառված չէ, որ այս երկը Զարենցը գրած լինի քըմբրադեղերի ներգործության պահին։ Տարբերակներից մեկը պարզորոշ հուշում է.

Ø, մարֆիի աված երանությունն անհուն,
Անզգաստությունն ոգու և հոգնությունն անհագ...
Եթերային, ինչպես անանձնական անուշ,—
Երազային խոնչենք և իմքենությունն անես...

Ես ճաշակում էի երանության անհուշ,
Կարծես ննջել էի և ինքշպին ու ինձ
Մի մտերիմ էակ ինձ օտրում էր իր
Աներկրային երգով ու քովչությամբ պատիր:

Ամեն ինչով հանդերձ՝ պոեմը տառապագին մտասևեռումի արգասիք է: Չարենցը մտասուզվել է իր անցյալի մեջ՝ առավել հստակ պատկերացնելու իր ապագան, վստահորեն կանխազգալով մոտակա ողբերգությունը: Դա է պատճառը, որ մի կողմում մորֆիի առաջին պահի պարգևած երազային հրանությունն է, իսկ մյուսում՝ «զառանցական տեսիլը», որը բանաստեղծին համակում է աչքերը բաց, անհուշ, անխոհ, կիսարթմնի պառկած վիճակում: Հոգեբանական անցումները կտրուկ են ու արագ, երանելին ու զառանցականը շարունակում են մեկը մյուսին:

Չարենցն իրեն համարում է յոգ (յոգ), որ կամքի ուժին վստահ՝ ներհայեցությամբ փորձում է վերագտնել իր մարմնի ու հոգու մեջ թաքնված ներքին հնարավորությունները, հասնել ինքնաճանաչման վերջնական սահմանին և միավորվել Աստծուն: Այս ճանապարհին, ֆրեյդիզմի հիմունքների ոգեկոչումով, Չարենցն ընթացք է տալիս իր ենթագիտակցական մտագոյացումներին, որի արտահայտությունն է թե պոեմը, թե «De profundis» գրառումը: Մայրահեղ հուսահատություն արտահայտող իր հոգեբանական վիճակից ելնելով՝ նա մտովի հարություն է տալիս նաև մեկ այլ խորհրդանշական պատկերի՝ կապված է. Պոի «Ուլալյում» ստեղծագործության հետ, որը մահվան ուրվականի, հոկտեմբեր ամսի սառն օտարացման մեջ կանգնած կապարե լճերի, աշնան հոգեվարք ապրող թավուտների և դիշերների գիշեր բեյող դերեզմանային լռության զգայություններ է արթնացնում: Մահվան սառը ձեռքն է ասես իջել ամեն ինչի վրա, և ամեն ինչ մահ է ու մահվան մոխիր...

Ահա այս կտրուկ անցումների ողբերգականորեն սրվող զգայական վիճակներում գոյաբանական հզոր վերացարկումներով Չարենցը խոսում է իր ճակատագրի մասին՝ արծաթայոլ, զուլալ այգաբացից մինչև «քանքարազուրկ մարդկանց էգ ոհմակների» դավերը:

Պոեմի գրության ժամանակ բանաստեղծի անձի շուրջ ստեղծված կենսական մթնոլորտը պատկերացնելու համար ավելի ուշադիր թերթենք Չարենցի ձեռագիրը։ Նույն այս տետրում է գետեղված Հ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ամատունուն հղած 1937 թ. մայիսի 30-ի նամակը, որին կանդրադառնանք այս գրքում զետեղված «Չարենցը Ամատունու վարչապետության օրերին կամ ողբերգության վերջին արարը» ուսումնասիրության մեջ։ 1937 թ. ապրիլից սկսվում է Չարենցի կյանքի ամենաողբերգական շրջանը, որը և նրան հասցնում է կործանման։ 1937 թ. ապրիլի 17-21-ը տեղի ունեցած հայ գրողների ընդհանուր ժողովում Չարենցի առթիվ շատ անբարենպաստ խոսք է ասել Վ. Կիրպոտինը, Չարենցի կյանքը կերել են նաև տեղական ճառասանները։ Ինքնարդարացման նպատակով, անգամ իր հասցեին ասված հերյուրական քննադատությունն ընդունելով, Չարենցը չրահեղձին նետված փրկարար օղակի պես մի ելք էր որոնում։ Այդ ելքը նա գտավ հանրապետության ղեկավարին հասցեագրած նամակներով, բայց, իհարկե, ապարդյուն։ Մայիսի 30-ի վերոհիշյալ նամակը այդ «գործի» մաս կազմող փաստաթղթերից մեկն է։ Միաժամանակ, այս տետրում է գետեղված Ստալինին նվիրված բանաստղերից մեկի մշակումը... 38 տարբերակով։

Ահա, բանաստեղծի հոգեվիճակը պատկերացնելու համար իրար են գումարվում մահվան բացահայտ ղգացողությունը, աննպաստ միջավայրից մեկուսացումը, սարսափն ու վախը և ապրելու համար փրկության ուղիների որոնումը՝ մեծ ու փոքր դահիճներին՝ միապետին ու գավառապետին ուղղված փրկագրերով։ Ահա այս հոգեվիճակում է Չարենցը գրել պոեմը և կատարել «De profundis» գրառումը։

Ամբորղ շարադրանքը մտքի մեջ անվերջ ճյուղավորումներով և ճանաչողության խորխորատների մեջ դեգերումներով ոգու ներքին շերտերում թաքնված գաղտնիքները հայտնաբերելու և վերարտադրելու ջանքի արգասիք է։

Իր այս խորհերը Չարենցը գրի է առել սև թանաքով, տետրի մեկ երեսի վրա, իսկ հետո կապույտ թանաքով էջի հաջորդ երեսին արել է նշումներ, որոնք թվագրել է նույն

օրվա՝ ապրիլի 13-ի ամիս ամսաթվով։ Այսինքն այդ նշումները անմիջական լրացումներ են, որոնք շարունակում են ասվածը։

Ջեռագրի երկրորդ էջին գրել է. «1937. 11-13. VI. NB !! (իբրև կոնկրետ կետեր)» և ապա թվարկել 22 բառ, որոնք տարբեր ճյուղավորումներով պիտի շարունակեին մեկը մյուսին։ Այնուհետև՝ ձեռագրի չորրորդ էջին նա նշումներ է արել Դանթեի «Աստվածային կատակերգության» մասին, գրել հայերեն այբուբենը, մինչև յոթերորդ նիշը՝ նաև լատինական տառերը ու նաև ցանկություն հայտնել հնարավորության չափքում աչքի առաջ ունենալ հունական այբուբենը։ Այս գրառումներն արտացոլված են «Անտիպ և չհավաքված երկերի» 480—481-րդ էջերում։ Վեցերորդ էջին նորից գրել է հայոց այբուբենը, չնջել և ավելացրել. «լատինական-ռուսական» այնուհետև նշել, որ Աբեղյանը աղավաղել է մեր թվերը։ Նկատի ունի այն, որ ուղղագրության հեշտացման համար մեսրոպյան այբուբենում կատարված անհարկի փոփոխությունները աղճատել են տառերի թվային կարգը։ Նույն 6-րդ էջին Չարենցը կատարել է նաև որոշ բառերի շարակարգում։ Սրանք ևս ամենայն հավանականությամբ առնչվում են ոստնային ճյուղավորված մտածողության այն սկզբունքներին, որոնց մասին նա խոսում է իր գրառումների մեջ։ Ընդ որում՝ նախորդ անգամ էլ էր նա գրել 22 բառ, հիմա էլ։ Ահա այդ բառերը նրա դասավորությամբ և հերթականությամբ.

ժայռ	ձայն	գիրք
աուտ	գմռուսս	բերդ
տաճար	ճենճե	շաղ
զարդ	բիրտ	ժիրայր
սոսի	fար	Պավլո
	աճդ	
	լախտ	
	ցորյան	
	ընդճաճուր	
	մոմ	
	բերդ	
	շամբ	

Թե ինչպես պիտի այս բառերը մտնեին տրամաբանական ընդհանուր շղթայի մեջ և ոստնային ու ճյուղավորված զարգացումով իմաստային հանգույցներ կազմեին՝ դա արդեն Չարենցի գաղտնիքն է։ Իսկ որ դա այդպես է՝ վկայում են ոչ միայն «De profundis» գրառման տպագրված էջերը, այլև երկու անտիպ պատառիկ՝ գրված միևնույն էջի երկու երեսին։ Դրանք հետևյալներն են.

1)... չեմ կարողանում անցնել և տողն արդեն ճյուղավորվում է, ինչպես սերմը, ինչպես ծառը և ամեն մի տողը դառնում է ծառ,—և ամեն մի բառը—ճյուղ է դառնում ու ճյուղավորվում անվերջ, էլ ինչպե՞ս—ինչպե՞ս—ինչպե՞ս կարող եմ ես անցնել մյուս տողին, մյուս <.....> և հուսահատվում երկու տողից հետո <.....> ինձ հետուն տանում, որ հոգնում խճճվում եմ ես fn ճողմի մեջ— և թողնում եմ սկսածս կիսատ,— և հուսահատվում եմ <.....> և չեմ կարողանում այլևս եռևից հասնել— ոչ միայն <.....>

2)... այն աստիճան, որ դու ինչ կատարել ես առաջ— այժմ թվում է ինձ— էլեմենտար, միամիտ,— ինչի դիպչում ես դու — թեկուզ ամենահասարակ բառի— հազար խոհեր է ինձանից ցայտում <.....>: Քո նախկին երգերն ես երբ կարդում- զարմանում ես, որ նրանց մեջ դրված ճյութից (ոսկուց, ադամանդից)— այդ ոչ մի չ ես կարողացել ցոլքեր հանել: Եվ ես վախենում եմ դիպչել հին երգերիս— հանի որ <.....>

Այս քայքայված ու կիսաընթեռնելի էջի կողքին թեքուքյամբ նա գրել է.

... բառից արդեն դու ոչինչ չես <.....> իր տեղը— նախկին իմ յուրահանչյուր տողը սկսում է <.....> ճյուղավորվել ու տարածվել...

Պարզ է, որ Չարենցը իր հասունության կեսօրին, երբ արդեն հետևում էր թողել գրական հարուստ վաստակի ուղիղ քառորդ դար, այլ հայացքով պիտի նայեր ավելի վաղ գրած գործերին, որոնցից, իր բառերով ասած, հնարավորից քիչ ցոլքեր էր հանել։ Չարենցը այդպես էլ պիտի մտածեր, որովհետև ստեղծագործական ներքին զարգացմամբ հասել

էր մտածողության մի նոր աստիճանի, որը նոր հորիզոններ էր բացում նրա առջև։ Ընդ որում՝ մտածողության այդ աստիճանին նա հասել էր արդեն իսկ հաղթահարելով համադրականության փուլը, որը նրան հետաքրքրում էր 1933-1935 թթ.։ Գեղարվեստական մտածողության այս նոր շրջանում ամենայն հավանականությամբ նա առաջնորդվելու էր գիտակցության հոսքի գեղագիտությամբ՝ ազատ ու անարգել ընթացք տալով իր բարդ ու ճյուղավորվող մտազգայություններին։ Դրա վկայությունն են վերջին շրջանի նրա մի քանի գործեր, այդ թվում՝ «Պոեմ անվերնագիրը», «Հերոսի հարսանիքը»։

Դ

Չարենցը ստեղծագործական լայն ծրագրեր ուներ կապված նաև թարգմանչական աշխատանքի հետ։ 1930-ական թթ. նա թեև հրատարակեց թարգմանական երկու գիրք, բայց մտահղացումները շատ էին։ Այդ երկու գրքերից մեկը է. Մ. Ռեմարկի «Արևմտյան ֆրոնտում անփոփոխ է» վեպն էր (1932), մյուսը՝ Մ. Գորկու «Բանաստեղծություններ և լեգենդներ» ժողովածուն (1934)։ Բացի դա, նրա թարգմանությամբ մի քանի գործեր զետեղվեցին նաև Ա. Պուշկինի մահվան 100-ամյակի առթիվ տպագրված «Բանաստեղծություններ, հեքիաթներ» գրքում (1936)։ Հայտնի են նաև Գյոթեից նրա կատարած թարգմանությունները, որոնք տպագրվել են ժամանակին։

Բայց ահա Չարենցը թարգմանել է նաև Թեոֆիլ Գոթյեի «Արվեստ» և Նիկոլայ Գումիլյովի «Վեցերորդ զգացմունք» բանաստեղծությունները, որոնք 136 և 137 համարանիշներով պահվում են Չարենցի ֆոնդում։ Դժբախտաբար, երկուսի ինքնագիրն էլ քայքայված է ու գրեթե անընթեռնելի։ Բայց և, հաշվի առնելով դրանց կարևորությունը, նաև ամբողջական պատկերացում կազմելու համար Չարենցի նախասրությունների մասին՝ փորձենք ներկայացնել գոնե այնքանով, որքանով որ հնարավոր է վերականգնել։ Ընդ որում՝ դրանք արժանի են ուշադրության նաև այն բանի համար, որ, ամենայն հավանականությամբ, թարգմանվել են բանաստեղծի կյանքի վերջին տարիներին։ Ահա Գոթյեի «Արվեստը».

. . . . . .

Սառած եյտքն է անկիրճ՝
Խոսք, պղինձ կամ մարմար:

Օ, լույս ընկեր,
Վարաճը սին ձգիր
Եվ ձիգ-ձիգ ավելի
Գահիճերդ բաշիր:

Նկարվեն ձևերը ճիշտ,
Միանան ամեն իճչի՝
Ծանոթ և՛ ինձ, և՛ ինձ,
Եվ մատացկին չնչին:

...Գծիր ձեռքովդ ուղիղ
Կաղն ազատի վճիռ,—
Եվ դուրս կգա
Ապտակը միչից:—

Ջրնա՛ղ արգելատուն.
Սիրակուզյան բռնզից
Կերպարանվն է ցայտում
Մուսաճերի...

Վարպե՛տ, ճերկիդ համար
Դու չե՛ս լինի դժգոհ,
Քուրաճ վառած՝
Հալիր էմալը fո:

Եվ իղձը փոշի է, ճուչի
Սովերճ է լոկ ամմաճ.
Ժողովրդից ամբողջ
Մնում է մի արձաճ...

Պարզ երևում է, որ սա ուրվագիր է, սևագրություն: Նույն վիճակում է նաև Ն. Գումիլյովից կատարած թարգմանությունը, որից հնարավոր է ներկայացնել այս մի քանի տունը.

Ջրնաղ է մեր սրտում արբած գինին,
Եվ հացը՝ մեզ համար ընդմիշտ թխվող.
Եվ կինը, որ տված է մեզ ճնից,
Որ մեզ տանջում է նախ, գերում ճետո:

...Որպես մանուկը՝ իր խաղը թողած
Աղիկների լացանքն է դիտում մերթ
Եվ գեռ սիրտ մասին բեկուզ անգետ,
Սակայն տանջվում է մութ ցանկությունից...

... Բայց ի՞նչ, մենք ի՞նչ անենք կարմիր արփին՝
Վառված ճեռու ու ցուրտ ճեռվում—
Ուր լուսո ճանգիստ է լոկ գերեզկայիկ,—
Ինչի՞ են պետք անմահ երգերն արդյոք:

Հենց միայն այն հանգամանքը, որ իր կյանքի ամենածանր օրերին Չարենցը ձեռք է զարկել Դումիլյովին, մի բանաստեղծ, որն արգելված անուն էր հեղափոխությունից հետո և որի մասին սկսել են խոսել սոսկ 1985 թվականից, արդեն ինքնին խոսում է Չարենցի ներքին ազատության մասին ու նաև այն մասին, որ պոեզիան նա միշտ բարձր էր դասում տվյալ վարչակարգի պաշտոնական կարծիքից: Համանման մի զգացողություն առկա է դեռևս 1922 թ. մարտի 20-ին Գ. Ադամյանին հասցեագրած նամակում: Խոսելով Վ. Տերյանի և Գ. Քալաշյանի մահվան մասին, որոնք աննկատ մնացին իշխող վարչակարգերի կողմից, որովհետև, երբ կոմունիստ Վ. Տերյանը մեռավ՝ Հայաստանում դաշնակներն էին, իսկ երբ դաշնակ Գ. Քալաշյանը մեռավ՝ Հայաստանում արդեն կոմունիստներն էին, Չարենցը ցավով շարունակում է. «Ради бога, սպանեք քաղաքացուն, բայց մի մոռանաք պոետը: Քաղաքացին այսօր է, պոետը— միշտ: Քաղաքացուն կարող եք սպանել, պոետին— ո՛չ երբեք: Քաղաքացուն պետք է սպանել, եթե նա վնասակար է օրվա տեսակետից, բայց պոետը: եթե նա իսկական պոետ է և ոչ թե «հանգաշար քաղաքացի», որքան էլ վնասակար թվա օրվա տեսակետից՝ օգտակար է «под знаком вечности» (VI, 386):

Ահա այս ճշմարիտ կողմնորոշումն է, որ ամբողջ կյանքում առաջնորդել է նրան՝ ի հայտ գալով նաև Դումիլյովի հանդեպ ունեցած վերաբերմունքի մեջ:

Ասենք նաև, որ Չարենցը թարգմանել է Վ. Ռոժիցինի «Իմպերիալիզմի պատմական բնորոշումը» հոդվածը, որը 19 էջ ծավալով մաքրագրված և ընթեռնելի վիճակում պահվում է Չարենցի ֆոնդում (№ 140): Թե ի՞նչ նպատակով է այն

թարգմանվել և ինչո՞ւ ժամանակին չի հրատարակվել՝ մնում է անհայտ։

Չարենցը լուրջ ներդրում ունի նաև առանձին թարգմանությունների խմբագրման գործում։ Դրանցից մեկը Շեքսպիրի «Լիր արքան» է Հ. Մասեհյանի թարգմանությամբ, որի օրինակները պահվում են Չարենցի ֆոնդում (№№ 139ա, 139բ), իսկ մյուսը Ո. Խայամի քառյակներն են։ Երկու դեպքում էլ Չարենցի միջամտությունը շատ էական է։ Խայամի քառյակներն արտագրված են «Նոյեմբեր» միության մեջտեղից երկու մասի բաժանված բլանկի էջերին (ՉՖ, № 138)։ Խմբագրման ժամանակ Չարենցը ձեռքի տակ է ունեցել Արամ Չարըգի թարգմանությունների գիրքը (Փարիզ, 1934), որը թարգմանիչը մակագրությամբ նվիրել էր նրան և Ո. Ռումերի ու այլոց ռուսերեն թարգմանությամբ լույս տեսած «Ռուբայաթ» ժողովածուն (Academia, 1935), որը Աշոտ Հովհաննիսյանը նվիրել էր նրան այսպիսի ընծայագրով.

Խորհրդային «Ռուբայաթի» տաղանդավոր հեղինակին՝ ֆեոդալական «Ռուբայաթի» դասական մատյանը՝ հիացումի և հաղթահարման համար *(գիրքը պահվում է Չարենցի ֆոնդում)։*

Թե թարգմանությունները և թե դրանց խմբագրությունը Չարենցի համար համարժեք է եղել ստեղծագործական աշխատանքի։ Նրա համար այլ կերպ թերևս չէր էլ կարող լինել։

ԽՈՍՔՆ ԻՐԻՆՎ ՉԵՆՔ ԿԱՄ ԷՊԻԳՐԱՄՆԵՐԻ ԱՆՎՐԵՊ ԿՐԱԿԱՀԵՐԹ

Չարենցը եղել է էպիգրամների մեծ վարպետ։ Այդպես դիմում էր Պուշկինին, նրան, ումից սովորել էր այդ արվեստը։ Ինչպես «Տաղարանում»՝ Սայաթ-Նովային, «Մահվան տեսիլ» պոեմում՝ Դանթեին, էպիգրամներում Չարենցն իրեն գրական առաջնորդ է ընտրում Պուշկինին, այդ վերաբերմունքն արտահայտելով ռուս բանաստեղծին ձոնած, նրանից թարգմանած, նրան ընդօրինակած գործերում («Պուշկինին», «Ex ungue leonem. Պուշկինից», «Ժամանակակից Կարամազին. նմանություն Պուշկինին»)։ Պուշկինի «Եվգենի Օնեգինի» չորրորդ գլխից բերված բնաբանով է բացվում նաև Սև տետրը (ԴԱԲ, ՉՖ, № 14), որի մեջ գտնվում են Չարենցի էպիգրամների մի զգալի մասի ինքնագրերը։ Այդտեղից էլ առանձին գործեր տպագրվել են Չարենցի «Ընտիր երկերում» (1954), Պ. Սևակի կազմած «Ժողովածու» գրքում (1967), վեցհատորյակի չորրորդ հատորում (1968), «Անտիպ և չհավաքված հրկերում» (1983) և այլ հրատարակություններում։ Առաջին էպիգրամը թվագրված է 1925 թ., այնուհետև նա բավականին շատ էպիգրամներ է գրել 1928-1929 թթ., ապա և՝ 1930-ական թթ. տարբեր տարիների, ընդհուպ մինչև կյանքի վերջը։ Տպագրվածների համեմատությամբ քիչ չեն նաև չտպագրվածները, որոնք հիշյալ գրքերի մեջ չեն ներմուծվել այն պատճառաբանությամբ որ բացահայտել են ժամանակի գրական և կուսակցական «ջոջերի» իրական պատկերը։

Բացատրվ՝ չէ, որ Չարենցը երբեմն ծայրահեղաորոշ լինի իր խոսքը։ Բայց և՝ դա էպիգրամի ժանրային օրենքն է։ Էլ ի՞նչ էպիգրամ՝ առանց գրոտեսկային շարժի։ Այսօր եկել է Չարենցի ժառանգության այդ էջերը ևս հրապարակելու ժամանակը։ Հրապարակայնության լուսարձակը, որ տեսանելի է դարձնում մեր պատմության շատ ու շատ փակ ու մութ ծալքեր, պիտի արևերես հանի նաև մեծ գրողի ժառանգության այդ էջերը՝ վերականգնելու 1920-1930-ական ԹԹ. գրական-հասարակական մթնոլորտի իրական պատկերը։

Էպիգրամի ժանրին Չարենցը ձեռք է զարկում հասարակության պատմության և իր՝ որպես մարդու և բանաստեղծի հոգեբանական վերափոխման շատ կարևոր մի շրջափուլում։ Չարենցի առջև երկփեղկվում է պատմությունը՝ նրա դիմաց կանգնեցնելով երկու ժամանակ. պայծառ ոգևորությունների ժամանակը և հիասթափությունների ժամանակը։ Չարենցը օր առաջ կանխատեսում էր արյունալի մղձավանջը։ Այս երկու ժամանակների «տերերը» բանաստեղծի աչքի առջև էին։ Մի կողմում Ալեքսանդր Մյասնիկյանն էր, մյուսում՝ նորերն էին, նորերի մեջ նաև նրանք, ովքեր զուրկ էին բանաստեղծին հասկանալու և գնահատելու ղեկավարի համար խիստ անհրաժեշտ հատկություններից։ Չարենցն ամբողջ կյանքում խորին ու անանց հարգանք է ունեցել պետական և կուսակցական խոշոր գործիչ, հայ արվեստի ու գրականության ճըշմարիտ պաշտպան, տաղանդների հովանավոր և հայ հանճարի ցաքուցրիվ սերմերը Հայաստանում համախմբող այնպիսի մի հեղինակության հանդեպ, ինչպիսին Մյասնիկյանն էր, որի կերպարը ոգեկոչել է ոչ քիչ թվով գործերում։ Համենայն դեպս՝ Մյասնիկյանի ղեկավարության շրջանը, որ ընդգրկում է 1920-ական ԹԹ. առաջին տարիները, դժվարություններով հանդերձ, դրական մեծ տեղաշարժեր էր բերում։ Այնուհետև, մինչև Խանջյանի իշխանության գլուխ բարձրանալը, որին ևս Չարենցը շատ բարձր է գնահատել, և Խանջյանի սպանությունից հետո եկող շրջանում ժամանակները շատ փոխվեցին։ 1920-ական ԹԹ. երկրորդ կեսին, ավելի ստույգ՝ 1926 թ. սեպտեմբերի 5-ից Չարենցը մեկուսացվեց Երևանի ուղղիչ տանը, վախճանվեց կինը, փոխվեց պաշտո-

նական վերաբերմունքը նրա հանդեպ։ Իսկ Չարենցն այդ ամենը շատ սուր էր զգում, որովհետև իրավացիորեն ինքն իրեն միշտ էլ զգում էր պետության կառուցողների առաջին շարքում, բայց ոչ երբեք բյուրոկրատական վերնախավում։ Ահա այս զգացողությունների խտացումն է «Դիֆերամբ մեկենասիս» երկը, որի մեջ հակադրվում են երկու ժամանակները և երկու ժամանակների գործիչները։ Անցյալից որպես մեկենաս հառնում է Ա. Մյասնիկյանի դեմքը, որը բրոնզյա վսեմ բարեկամ է, իսկ ներկայից նայում է այդ օրերի ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Հայկազ Կոստանյանը, որին Չարենցը դեռ պիտի շարունակեր երգիծել ու խարազանել։ Ուրեմն՝ ժամանակները փոխվել էին և բանաստեղծը կանգնած էր մեծ փորձության առջև։ «Դիֆերամբը», ահա, այս օրերի արգասիք է ու այս ամենի արձագանք.

Օ, Դու, իմ բրոնզյա բարեկամ,
Իմ վսեմ մեկենաս, Ալեքսա՛նդր,—
Ինչ լա՞վ է, որ ձիմա դու չկաս
Եվ շիրիմը fո fառուfանդ է։
Թեկուզ fո շիրիմին բացեքաց
Չեն տալիս ձիմա դեռ fացի—
Բայց գիտե Հայկազի աստվածը,
Որ դու ևս եղար «նրաճցից»...
Որ ինչպես պոետն է ասել,
Այճ պոետը մեր ալեճեր—
Դու միայճ ճախրցի մի սեզ,
Դու միայճ «լավ հայ» ես եղել,—
Որ դու միշտ ճեռու ես եղել
Իր երգած մեծերի ճունից...
. . . . . .
Էլ ինչպե՞ս դիֆերամբ երգեմ
Ես ձիմա պայծառ աճունիդ...

(1928, ՉՖ, № 14)

Չարենցի գրեթե բոլոր էպիգրամների հերոսները իրական մարդիկ են, իրենց գրական և մարդկային իրական թերություններով։ Ահա այդ բնույթի էպիգրամներից մեկը՝ վերնագրված «Վարք սրբոց» և «Հ. Գ. Ք.» հղումով, որ նշանակում է Հայկ Գյուլիքևխյան.

Բարձրանում է նա տապավոտ կանաչ
Լսում է մի ինչ ու նորից ընում.
Ճաշերից հետո ատում է նորից—
Ու ճարպ է նստում վաստակած փորին:—
Թերթում է մեկ-մեկ գանազան գրքեր,
Կարդում է միայն «Գրական դիրքեր»,
Հետո «Դիրքերը» դրած սեղանին,
Նա տուրֆ է տալիս սրբոյն Սնահին:—

(ՉՖ, № 14)

Էպիգրամը գրված է 1928-ին, երբ արդեն մեկ տարի էր, ինչ լույս էր տեսնում Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի օրգան «Գրական դիրքերում» ամսագիրը, որի ղեկավարության մեջ գլխավոր դերերից մեկը պատկանում էր Հ. Գյուլիքևխյանին և որը դագանակի քաղաքականություն էր վարում նախկին նոյեմբերականների, այդ թվում նաև Չարենցի հանդեպ:

Չարենցը հետևողականորեն ձաղկում է ձախության շրջանի մոլորությունները, բոլոր «ձախլիկների» հակագրական տեսությունները, շինծու պատկերներն ու տեխնիցիստական բուլությունները: Պոեզիան հեղեղված էր տթակտորով, օդանավով, պղնձահնչյուն ձայնարկություններով, երկաթով, շարժիչի շռինդով և համանման այլ «զարդանախշերով»: Խոսքի քիրախ դառնում են շատերը, նաև ոուս պրոլետգրողներից մեկը, որին և ուղղված է այս էպիգրամը.

АНЕКДОТ

Се лев, а не осёл...
Козьма Прутков

Իր գրած բազում երգերից մեկում
Պրոլետարական այս պոեմն իրեն
Նվաճացրել է մի անգամ հանդուգն
Ավտոմոբիլի, իսկ կնոջը իր՝
Գարաժի, որի մեջ իեիր ամեն
Երեկո, բազում հոգսերից հետո
Մտնում է մի ինչ հագստանալու:—
Ների՛ր, ընթերցո՛ղ,

Դու նրան:— Ես այս պատկերն անպատկառ
Վերագրում եմ ոչ թե նրա զեխ
Բնույթին, այլ լակ... նիմարությանը:—
Ների՛ր, ընթերցող:

(1928, ՉՖ, № 14)

Ահա այսպես լայն ընդգրկումով Չարենցը պայքարի ճաչկատ է բացում իր էպիգրամներում և շարունակում գրական այն բանավեճերը, որ երկու հիմնական խմբավորումների միջև մղվում էին 1920-1930-ական թթ.: Այդ խմբավորումներից մեկը գլխավորում էր Չարենցը, զինակիցներ ունենալով Բակունցին, Մահարուն, Արմենին և էլի մի քանիսի, իսկ մյուսի մեջ մտնում էին ՀՊԳԱ անդամները: Նրանք գտնվում էին գրական ըմբռնումների տարբեր դիրքերում, ինչը և տեսական ու սուր գրապայքարի առիթ ծառայեց: Ճշմարիտն ու հաղթողը Չարենցն էր՝ յուրայիններն էլ անխտիր, իսկ ՀՊԳԱ անդամները գործում էին ուժի և քաղդրափետական կարգախոսների դիրքերից՝ դրան երբեմն զոհ տալով նաև իրենց տաղանդը: Մի կողմից երկրի ցավերն էին, մյուս կողմից՝ հորիզոնին խանդավառ հրճվանքը, մի կողմից պատմության չբուժված վերքն էր, մյուս կողմից՝ դրան հապշտապ տրվող «ազգայնական» որակումը, մի կողմից մարդն էր իր իրական կյանքով, մյուս կողմից՝ տոնականորեն զարդարված մարդու խրտվիլակը: Ահա այս պայքարն է, որ առկա է թե բազմաթիվ հոդվածներում, թե Չարենցի «էպիքական լուսաբացի» ծրագրային երկերում և թե նրա էպիգրամներում, որոնց հերոսներն են Ալազանը, Ն. Զարյանը, Հ. Մկրտչյանը և ուրիշներ:

Ահա Ալազանը.

«Որդի» բառն ասաց դասակարգի,
Ու ցանկանում ես պոետ դառնալ,—
Սրբի՛ր փսլնոտ բիթդ կարգին,
Թեկուզ գոմ մտնես և ոչ Պառնաս:—

(1928, ՉՖ, № 14)

Էպիգրամն ունի ծանոթություն, որի մեջ Չարենցը դատապարտում է Ալազանի հետևողական չանքերը՝ հանդիսանալու

«յուրաքանչյուր հերթական իշխանության» Ա՞ա և մեկ ուրիշը.

Ars poetica

(Մի երիտասարդ պոետի)

Կարո՞ղ ես դու՝ ինձ նման երգիր
Թեկուզ մազը Ալազանի,
Սակայն այնպես, որ երգդ ինձ
Ալազանից զանազանի.
Այնպես երգիր, որ այդ մազում
Ալազանը կանգնի իմ դեմ—
Եվ կրճեռավ իր գունազարդ,
Եվ ճայզեռավ՝ անգայն անդեմ...

(1929, ՉՖ, № 14)

1920-ական ԹԹ. վերջերին պահանջ զգացվեց վերականգնելու դասական գրականության ավանդույթները, որովհետև դրանցից արհեստականորեն կտրվելուց հետո՝ շատերն ընկել էին փակուղու մեջ և կորցրել գրականության պատմական զարգացման ճանապարհը։ Դա ևս տեղիք տվեց նոր բանավեճերի, որովհետև մի մասը պաշտպանում էր հայ հին գրականության ելակետ ավանդները, մի քանիսը ձեռքը մեկնել էին Թումանյանին, ուրիշներն էլ՝ արևմտահայ պոեզիային։ Բանաստեղծներից շատերը ինչքան որ ծայրահեղ էին անցյալի ավանդույթները ժխտելիս, նույնքան սխալաշատ էին նաև դրանք վերականգնելու շրջանում, և դա այն աստիճանի, որ ամեն ինչ հանգում էր կույր նմանության, երբեմն՝ նմանակման կամ պատճենահանման.

Ո՛ Վարուժան, Մեծարենց,
Ի՞նչ եք կերել երգազույն,
Որ Ալազան ու Նարեկ
Երգ եճ frջում ձեր ...ում։

(1935, ՉՖ, № 14, տես նաև՝ № 28)

Թերևս Չարենցը այստեղ չափից ավելի է ծայրահեղ, քանի որ Ալազանն ու Նորենցը մեծ ներդրում ունեն դժվար տարինեքին արևմտահայ պոեզիան վերականգնելու գործում։ Ամե-

Նայն հավանականությամբ Չարենցը ոչ թե այդ շնորհակալ գործը նկատի ունի, այլ՝ իր ժամանակակիցների ակնհայտ նմանակումները։ Ալազանին Չարենցն անդրադարձել է ևս երեք էպիգրամում, որոնցից երկուսում շարժի է ենթարկում նրա գրական ձիրքն ու հավակնությունները, նաև Պուշկինից կատարած թարգմանությունների որակը.

Հելիկոնում հայկազյան
Մա՞փ են տալիս ու պարում—
Շարթողահայրե Ալազան
Եվ դիցուհին իր — Մարոն...

(1935, ՉՅ, № 14)

Հելիկոնում հայկազյան
Այսօր փորսող ճնարով
Պավետ է այրե Ալազան—
Եվ դիցուհի է Մարոն։

(1936, 1. VI, ՉՅ, № 28)

ԱԼԱԶԱՆԻՆ

(Պուշկինյան հոբելյանի առթիվ)

Պուշկինն՝ հայացած fո խեղճ ճնարով՝
Այնճան է նման Պուշկինին իրոք,
Որճան Պուշկինի կնոջը —Մարոն...

(1936. III, ՉՅ, № 14)

«Ն. Զ.» վերնագրով 1927 և 1928 թթ. Չարենցը երկու էպիգրամ է հասցեագրել Նաիրի Զարյանին։ Տարիների ընթացքում երկու բանաստեղծների միջև գոյացել էին բավականին բարդ հարաբերություններ։ Դա առանձին մանրամասն խոսակցության նյութ է։ Այս էպիգրամներում Չարենցը իր տրակարծություններն է հայտնում Ն. Զարյանի խանդավառ դիրքորոշման հանդեպ, որը կարծեք մոռացել էր մոտիկ անցյալը։ Զարյանին ևս Չարենցը գնահատում է «Գրական դիրքերում» ամսագրի կոպիտ գործունեության շրջանակներում։ Դրա վկայությունն է էպիգրամներից մեկի առաջին քառատողը.

Հարսանիք է միշտ ճրա վեճ
Երգերում,
Կռիւներ է միշտ և ուռաներ
Նա գրում...

(ՉՖ, № 14)

Ալազանին, Զարյանին հասցեագրված էպիգրամների առթիվ շատ ուշագրավ մի մանրամասն է պատմում ինքը՝ Զարենցը, 1934 թ. մարտի 23-ի առ այսօր անտիպ օրագրային գրառման մեջ։ Ահա այդ հատվածն ամբողջությամբ.

Ես գրել էի մի էպիգրամ Ալազանի մասին.—

Եղել է Տերյան՝
Լուսեղ ու բարդ,
Վարդի պես բարյան,
Փարդի պես վարդ։—
Հիմա—Ալազանն է
Գանեար մեր,—
Այս խարազանը
Ինչ ծա՜ռ է, Տե՛ր...

Երբ ես այս էպիգրամը կարդացի Զարյանին, նա գտավ ինձ միանգամայն իրավացի։— Սակայն որոշ ժամանակ անց այս միևնույն էպիգրամը ես կարդացի Ալազանին՝ այն փոփոխությամբ միայն, որ հինգերորդ տողը փոխեցի՝

Հիմա Զարյանն է
Գանեար մեր...

Ալազանը ևս գոճ ժպտաց և գտավ, որ ես իրավացի եմ միանգամայն...

Իմ կարծիքն այն է, որ ուզում ես «Ալազան» ասա, ուզում ես «Զարյան»— միևնույնն է.—

Այս խարազանը
Ինչ ծա՜ռ է, Տե՛ր...

(ՉՖ № 144)

Միանգամայն արդարադատ վճիռ, որովհետև անկախ տաղանդի կշռից երկու դեպքում էլ Չարենցը գործ ուներ անհուսալի թվացող ձախլիկության և պրոլետգրականության դաժանակի հետ։ Այսինքն՝ կերպար-խորհրդանշանը նույնն էր։

Չարենցն առավել խիստ է այն տարիներին ասոցիացիայի քննադատի համարում ունեցող Հ. Մկրտչյանի (Քսպե.) դեմ։ Լինելով բավականին ձախլիկ և սխեմատիկ դատողությունների հեղինակ, նա ոչ միայն կոպիտ հարձակումներ էր գործում Չարենցի դեմ, այլև ըստ իր ըմբռնումների փորձում էր նրան բերել ճիշտ ճանապարհի։ Որպեսզի ասվածը մերկապարանոց չհնչի, խոսքը տանք հենց իրեն՝ Հ. Մկրտչյանին, որը «Նոր ուղի» ամսագրի 1932 թ. փետրվարյան համարում տպագրված «Խորհրդային Հայաստանի պոեզիան վերակառուցման շրջանում» հոդվածի մեջ Չարենցի «էպիքական լուսաբաց» ժողովածուի կապակցությամբ օգտագործում էր «իդեոլոգիական սխալներ», «ծայրահեղ ինդիվիդուալիստ», «իդեալիստական երկվություն», «սուբյեկտիվ իդեալիստ» արտահայտությունները և ապա այսպես բանաձևում իր միտքը.

Ստեղծագործական խնդիրներում պայմաներով սխեմատիզմի դեմ Ե. Չարենցը սայթակել է, նա ոչ միայն չի լուծել պոեզիայի ստեղծագործական շրջադարձի խնդիրը, այլև գլասիկների իդեալիստական ըմբռնումը փոխադրել է մեր պոեզիայի մեջ (ակնարկում է Պուշկինի ավանդույթներին հաներ— Դ. Գ.)։ Մեր պոեզիան պետք է ընթանա տրամագծորեն հակառակ ուղիով։

Հայ բանաստեղծին վարկաբեկելու համար հայ քննադատը սոսկալի խոսքեր է գրում նաև ռուս բանաստեղծի մասին.

Բանաստեղծը այս մեծակությունից ոչ միայն դարձ է ստացել դեպի Պուշկինը, այլև՝ պուշկինյան երկրորդ շրջանի ծայրահեղ անհատապաշտություններ և դա ոչ թե սոսկ ստեղծագործական դարձ է դեպի Պուշկինը, այլև իդեական հանճարեղ, հանճարեղ դեպի Պուշկինի պոեզիայի հասարակական անկումային տրամադրություններ *(էջ 141—148)։*

Այսքանից հետո հարց է առաջանում, թե ո՞ւմ ջրաղացին էր քննադատը ջուր լցնում և ո՞ւմ էր ծառայում՝ գրականու-

Բյա՞նը, թե՞ այն անհագուրդ աշխատող մեքենային, որ պիտի գլխատեր այդ գրականությունը։ Ահա այս տրամադրությունների և վիճակի արտահայտություն են Չարենցի էպիգրամները.

ՔՍԳԵԻՆ

Թեմա

Իբրև մեծ պատիվ՝ ինչ բնությունից տրված է լիզու—
Եվ ուրիշ ոչինչ։ Երբ մանուկ էիր լիզում էիր դու
Երևի շաքար։— Մեծացար—հիմա նաստուկ ես լիզում.
— Ի՞նչ տարբերություն...

Վարիանտ I

Հայրը, տեսնելով իր երեխային շաքար լիզելիս՝
Նայեց, մտածեց և ասաց որպես մի փիլիսոփա.—
Լիզի՛ր, սիրելի՛ս, քանի փոքր ես դու շաքար ու կոճֆեթ,—
Վաղը մեծացար— ո՞վ գիտե ինչեր դու պիտի լիզես...

Վարիանտ II

Հայրը, տեսնելով իր երեխային շաքար լիզելիս՝
Նայեց, մտածեց և ասաց որպես մի փիլիսոփա.
— Լիզի՛ր, սիրելի՛ս, դարձիր լիզելու դու նմուշ վարպետ
Եվ ամբողջ կյանքդ կդառնա շաքար... լիզի՛ր, սիրելի՛ս։—

Այս տողերը գրված են 1928-ին, երբ նոր էին երևում քննադատի ձախուխյան և ոչ ուղղամիտ ճանապարհով իր նպատակին հասնելու ախտանիշանները։ Չարենցի նույն տետրում պահպանվել է նաև մեկ ուրիշ էպիգրամ «Ք-ին» վերնագրով՝ գրված 1935-1936-ին.

Երբ կարդում եմ ես՝ ո՛չ բե ուղեղից
Այլ կարծես բորած ուրիշ մի տեղից՝
Հաղվածները ֆո,
Գարշ ճռռից դժգոհ՝
Ջեմ կարոդանում էլ ես ինձ զսպել,
Որպեսզի չասեմ.— «Սիրելի՛ Քսպե,
Այդման չե՛ն ուռի կերակուր ոսպե»։

(ՁՖ, № 14)

Ավելացնենք, որ գրական այս սուբյեկտներին նվիրված էպիգրամները («Աղոթք», «Մինյոն») տպագրվել են նաև վերոհիշյալ գրքերում՝ «Մինյոնում», ակնարկելով գրական մամուլի բարքերը, Չարենցը գրել է.

...Շառաչում է այնտեղ խարազանը,
Որպեսզի Չարենցին զսպե.
Խմբագիր է այնտեղ Ալազանը
Եվ բճնադատ է Քսպենե...

Ծառայամտությամբ և ոչ թե սկզբունքով ճանապարհ հարթելու արատավոր բարքերը Չարենցը քննադատել է նաև «Ա. Հախ.» էպիգրամում, որի հերոսը ժամանակի գրական մարդկանցից մեկն է՝ Աշոտ Հախումյանը, որը այնուհետև եղել է նաև նկարիչների միության քարտուղար.

Նա ճաշում է աչ ու ձախ,
Քամին որ կողմ որ տանի.
Եթե աչը չընդունեց
Ձախին էլ է պիտանի...
(1929, ՉՖ, № 14)

Չարենցը ծաղրում է որոշ գրողների ծախվածությունը, որոնք, սակայն, դրա դիմաց ոչինչ չստացան և ստորացան կրկնակի։ Այդ գրողները նրան երևում են «նաիրյան բոռեի» տեսքով.

Օ, հայրյաց «բոռ»-եր՝
Այնքա՜ն խուճացած,
Որ իբր <....> անգամ
Հարգանք չունեցամ։
(1. X. 1936, Ծաղկաձոր, ՉՖ, № 57)

Այս ընդհանուր անբարոյական մթնոլորտին գալիս է ավելանալու նաև դժգոհությունը գրական բարեկամներից։ Դա խոստովանություն է՝ արված «Մեր նոր ճորտերին» անտիպ բանաստեղծության մեջ (1935. 14. II, ՉՖ, № 14)։

Խոսքն ուղղելով Քե հակառակորդներին և Քե բարեկամ-
ներին, մահացու խոցված, նա գրում է.

...Դուք անասնական սարսափից սարսած՝
Վատառում եք իմն միությունից «ձեր»՝
Այսօրվա «Տնից» միակ գրական,
Դուք ելնում՝ անգամ ճառեր եք ասում,
Քե ինչո՞ւ է իմն էշել ճարկավար...
Ով չեք էլ, ավա՜ղ, հասկանում գոմ ար—
Գոռանալ—միայն կապանք եք հյուսում
Ով ձեր և մեր ողջ ճանճարի համար...
Օ, խե՜ղճ մարդուկներ,— օ, սառաքար
Գարշապար լիզող գերիներ Ասու
Դուք ոչ քե արդեն գոռ եք ու մարդ,
Այլ— ճառեր միայն ցնցաթավար,
Որ վերուստ տրված մարդկային <.....>
Գեսին եք Ասում, ինչպես <.....>
Ով ուրիշներին ու ձեզ համոզում,
Քե ինմս եմ էշում ինն Միությունից...

Ահա այս դժգոհությունն է, որ զայրույթի նոր ալիք է ծնում 1935 թ. նոյեմբերի 29-ին, իր իսկ առանձնահատուկ նշումով՝ Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի օրը։ Այդ առնական թվացող օրը խոր վրդովմունքով նա խոսք է ուղղում այս անգամ իր բարեկամներին՝ չակերտների մեջ խոսքն էլ վերագրելով ««Բարեկամներիս»», նաև՝ «Իմ «ընկերներին»».

«Ծուժաճանաչություն» ոգու մեզ այնպե՛ս ցրեց,
Որ դժվար քե հավաքվի մեր «բարուքը ճին»,
Բայց միայն ինձ է ճայտնի, մեկ էլ Ակսելին,
Քե սրանից ո՞վ շահեց և ո՞վ կարցրեց...
(ՁՖ, № 29, տես նաև՝ «Անտիպ...երկեր», էջ 530)

Մ Քնոլոգիի շիկացածությունը նրան մղում է ընդհանրացնելու խոսքը, նչքի առաջ ունենալով ոչ միայն իր ճակատագիրը, այլև՝ հայ հանճարի ողբերգական վիճակը։ Փրկված պատահիկներից մեկը մեզ այսպիսի տողեր է հասցրել.

Դրա համար է երևի ասել
Դեռ նահապետը գրի և երգի վայվայ,—
Որ չեն սիրում վարդաթերք պսակներ հյուսել
Պոետներին իրենց սեգ—մուսաները հայ...
(ՉՖ, № 125։ Տես նաև՝ «Անտիպ... երկեր», էջ 536)

Սա մտորումների այն շղթան է, որ ամբողջ 1930-ական թթ. պաշարել էր Չարենցին՝ գեղարվեստական մարմնավորում գտնելով բազմաթիվ բանաստեղծությունների մեջ, պոեմներում, ինչպես նաև՝ էպիգրամներում։

Գրական մարդկանցից ու գրական բարքերից բացի էպիգրամներում Չարենցը շարժի է ենթարկում նաև հանրապետության պետական ու կուսակցական որոշ գործիչների։ Նախ նա իր բավականությունն է հայտնում, որ գործի գլուխ կանգնած են իր իմացած մարդիկ։ Այդ էպիգրամը վերնագրված է «Ուզում եմ հավատալ».

Ուզում եմ հավատալ, որ լուրջ է,
Որ մի փաստ է սա իրական,
Եվ ոչ թե ֆանտաստիկ մի անուրջ է,
Որ կարծես և՛ կա, և՛ չկա,—
Որ ժողկոմ է Թաթոսը, Արսենը
Ժողտնտխորհ է, Հայկը—Չեկա։
Որ Հայկազը բագաժը դուրսել է,
Եվ գնում է արդեն դաղասիրա—
Եվ գենսեկ է արդեն Աղասին։
(1930, V. 7. ՉՖ, № 14)

Բայց այս բարեկամական մթնոլորտը արդեն իսկ թունավորված էր։ Իսկ շուտով իշխանության գլուխ են բարձրանում մարդիկ, որոնց նպատակն էր Բերիայի միջամտությամբ իրականացնել Ստալինի ծրագրերը՝ ահաբեկել ժողովրդին, ստրկացնացնել նրան, հալածանքների ենթարկել մտավորականությանը, մարդկանց տրամադրել իրար դեմ, մթնոլորտը թունավորել զրպարտանքներով ու մատնություններով։ Որոշակի հասցեներով ստեղծվում են չարենցյան ծուր էպիգրամները։ Ընդ որում, բանաստեղծի ավելի վաղ ունեցած կանխազգացողությունները գնալով հաստատվել են ու դար-

ձել վերչնական ու ճշգրիտ բնութագրություններ։ Ահա դրանցից մի քանիսը, որոնց Ջարենցը երբեմն կցել է տողատակի ծանոթագրություններ.

ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐ

(Հ. Կ.)

Աչխեռում պաճած մի-մի ռումբ,
Շինելի օձիքին–չռես ռումբ։—

1928

Eece Homo
(Ս. Լ.)

Նա ճամարձակ է, նա իճիճավստաճ,
Սովճարկոմը—իր տաճճ է ճամառում.
Նկեղեցական խորհրդում ճստած
Այդպե՞ս է արդյոք գործերը վառում...

1928

Ա. Մ.

Ջանի նա թեկուզ ֆանֆար պետական
Եվ բավականին աղմտա է ոգին,
Բայց...ունի նա մի մանկամասակ կին,
Որ...տալիս է այս ամենը նուճ*։—

---

* *Ավաղ, իր կարծիքով, քանզի Լրիտաւարդանում է արյունը*

ՍՐԿՈՒ ԱՅԱՔՍ*
(Ա. Հ. և Հ. Կ.)

Մեկը սարկավագ, մեկը դեռասաճ,
Մեկը խմբագիր, մեկը խմբռելետ,—
Սարկավագը մեզ շարական առավ,
Իսկ խմբապետը չարղեց ու թափեց...

1928

---

* *Տես Հոմերոսի «Իլիականը»։*

ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐ

(Հ. Գ.)

Ուղեղը սառ, ինչպես գործիք,
Կերպարանքը—մատնոցի։

1929

ՄԱՐԻՈՆԵՏԿԱ

(Հ. Կ.)

Ջարմանալի մի շնորհ
Կա թաղված նրանում.
Աչ ձեռը չի իմանում,
Թե ձախը ինչ է անում...
Ջարմանալի մի շնորհ
Կա թաղված նրանում:—

1929

ԲԱՆՆԱՀԱՅԱՆ

Խոժոռ հայացքով, ճակատը ճեղ,
Մազերը՝ խուզած մեխենայով,
Խոսում է որպես մուրհակատեր,
Կամ մութ վաշխառու՝ ներին հայող:
Չերկի՞ր է մանր պատերի տակ,
«Բայբուրդ» խաղացող ռեցիդիվի՞ստ...
— Ո՛չ,— բոլշևիկ է նա անաղարտ.
Ոսոխ «աշխատյան» գծի խարդախ—
Ո՛չ գաշնակ եղած, ո՛չ սպեցիֆիկ..

1929

Այս էպիգրամների հերոսները այն տարիների պետական եւ կուսակցական մի քանի գործիչներ են։ Եվ որպեսզի ըմբռնելի լինի Չարենցի խոսքի հիմնական շեշտը՝ սեղմ բնութագրով անուն առ անուն, ըստ դիրքի ու պաշտոնի և ըստ էպիգրամներում անունների հիշատակության հերթականության ներկայացնենք նրանց։

Թաբոս— *Թադևոս Գեղամի Մանդալյան (1901-1938)-1928—1936 թթ. աշխատել է ՀԽՍՀ բանգյուղտեսչության ժողկոմ, ՀԿ(բ)Կ կենտկոմի վերստուգիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ։*

Արսեն— *Արսեն Սեդրակի Եսայան (1898-1938)—1930-ին եղել է ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ։ Սպանվել է կուսակցական-պետական գործունեության։*

Հայկ— *Հայկ Պետրոսյան—1929 թ. նոյեմբերից մինչև 1930-ի մայիսը եղել է ՀԽՍՀ պետքաղվարչության (ՉԿԱ) նախագահ։*

Հայկազ, *այլ էպիգրամներում՝ Հ. Կ.*— *Հայկազ Արշակի*

Կոստանյան (1897—1938), 1928—1930 ԹԹ. եղել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար, այդ պաշտոնում նախորդել է Աղասի Խանջյանին։ 1931-1934 ԹԹ. Ղրիմի մարզկոմի առաջին քարտուղար։

Աղասի— Աղասի Ղևոնդի Խանջյան (1901—1936)— 1928-ի օգոստոսից ՀԿ(բ)Կ Կենտկոմի երկրորդ, 1930-ի մայիսից մինչև չարանենգ սպանությունը՝ առաջին քարտուղար։

Ա. Լ–ն ամենաշատ հավանականությամբ Սեմյոն Միքայելի Լազարյանն է (Սեմյոն Միխայլովիչ Լազարև, 1880—1959), որը 1925-1928 ԹԹ. եղել է Հայաստանի առողջապահության ժողկոմ, իսկ 1928-ի հունիսից եկեղեցական խորհրդի նախագահ։ Բացառված չէ, որ Չարենցը նկատի ունեցած լինի նաև Սարգիս Լուկաշինին (Սարգիս Լուկյանի Սրապիոնյան, 1883—1938), որը 1922-ից եղել է ԽՍՀՄ ժողտնտխորհի, ապա մինչև 1925-ը ժողկոմխորհի նախագահ։ 1925-1932 ԹԹ. աշխատել է Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ ժողկոմխորհում և ժողտնտխորհում։

Ա. Մ.–Ասքանազ Հարությունի Մռավյան (1886-1923)— 1921-1932 ԹԹ. եղել է ՀԽՍՀ արտաքին գործերի, 1923-1929-ին լուսավորության ժողկոմ, ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ։ Ունեցել է երիտասարդ կին՝ Հասմիկ Մինրզոյի Բարխուդարյան, որը ամուսնու մահից հետո մեկնել է Մոսկվա և 1930-ից Վախթանգովի թատրոնում աշխատել է որպես դերասան։

Ա. Հ.— Աշոտ Գարեգինի Հովհաննիսյան (1887—1972)— 1920-1921-ին եղել է ՀԽՍՀ լուսավորության ժողկոմ, 1922-1927-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար։

Հ. Պ.— Հովսեփ Համբարձումի Պողոսյան (1887—1938)— 1921-ից եղել է ՀԽՍՀ ժողկոմ, 1924-ից Հայկոոպի նախագահ, 1925-1928-ին՝ ՀԽՍՀ պետպլանի նախագահ, ժողկոմխորհի նախագահի տեղակալ։ 1928-ից աշխատել է Մոսկվայում։ Զբաղվել է գրական-հասարակական գործունեությամբ։

Բաննաիյան– Հովհաննես Գրիգորի Բաննահյան (1898-1938) —1928-ի հունիսից մինչև 1930-ի մայիսը աշխատել է որպես ՀԿ(բ)Կ Լենինականի գավառային կոմիտեի քարտուղար, մինչ այդ եղել է «Մաճկալ» թերթի խմբագիր։

Այս էպիգրամների առիթով անհրաժեշտ ենք համարում տալ նաև մի քանի այլ բացատրություններ։ «Համառոտ բնութագիր. Հ. Կ.» էպիգրամում «Շինելի օձիքում-չորս ռումբ» տողը նշանակում է, որ Հայկազ Կոստանյանի զինվորական համազգեստի օձիքի ամեն կողմում կան չորսական ռումբի ռազմական տարբերանշաններ։ Սա ընդունված էր այն տարիներին, մինչև ավելի ուշ օգտագործվեց ուսադիրը։

«Ուզում եմ հավատալ» էպիգրամում «Հայկազը բադաժը դարսել է ծով գնում է արդեն դաղասիրտ» տողը նշանակում է, որ Հ. Կոստանյանը ազատվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնից և աշխատանքի ուղարկվում Ղրիմ։

«Երկու Այաքս»[1] էպիգրամում Չարենցն ակնարկում է 1928 թ. կուսակցական կյանքի առկա պատկերը։

Չարենցը բավականին խիստ խոսքեր է հասցեագրել ժամանակին ղեկավար բարձր դիրք գրաված կուսակցական գործիչներից մեկին՝ Լևոն Արիսյանին։ Նրանից դժգոհությունն սկսվում է «Գիրք ճանապարհի» տպագրությունը 1933 թ. վերջերին արգելելու պատմությամբ։ Խանջյանը «Գիրքը...» քննադատել էր տպագրության։ Նրա արձակուրդի մեջ գտնվելու ժամանակ Արիսյանը և մեկ այլ ղեկավար կուսակցական գործիչ՝ Զ. Աշրաֆյանը հորինում են խանջյանական-ազգայնական խումբ հասկացությունը, Չարենցին մեղադրում այդ խմբին պատկանելու մեջ և հատուկ որոշմամբ կանգնեցնում «Գրքի...» տպագրությունը։ Չարենցը այդ մասին զայրույթով խոսել է Ստալինին և Մ. Շահինյանին 1933 թ. դեկտեմբերի

---

[1] Երկու Այաքս արտահայտությունը փոխաբերաբար նշանակում է անբաժան ընկերներ։ Մեծ Այաքսը՝ Սալամիս կղզու թագավորը, եղել է Հեղինեի ձեռքը խնդրողներից մեկը, մենամարտել Հեկտորի հետ, կռվել Աքիլլեսի դիակի համար։ Ոդիսևսը Արիդում հանդիպում է Այաքսի ստվերին։ Կա Այաքսի վեճ արտահայտությունը, որը փոխաբերաբար նշանակում է վեճ կենդի համար, նկատի ունենալով մահացած Աքիլլեսի դենքը, այսինքն՝ վեճ իշխանության համար։ Փոքր Այաքսը եղել է Լուկրիոսի թագավորի որդին՝ Մեծ Այաքսի ընկերը։ Տրոյայի գրավման ժամանակ անարգել է Աթենաս աստվածուհուն։ Վերջինս խորտակել է նրա նավը։ Օգնության հասած Պոսեյդոնը նրան նետել է ժայռի վրա։ Այաքսը մտածել է, որ ինքը փրկվել է աստվածների կամքին հակառակ։ Այդժամ Պոսեյդոնը սուզել է ժայռը և խորտակել Փոքր Այաքսին։

1-ին գրած նամակում՝ Ահա այս օրերին են վերաբերվում «վ. Ա.» վերնագրով հորինված մի քանի էպիգրամները, որոնցում իր հերոսին նա խարազանում է տարբեր հայեցակետերից՝ 1933 թ. նոյեմբերի 30-ին իրեն ազգայնականության մեջ մեղադրողի ամբոխին նա այսպիսի տողեր է գրել.

Նա չի՛ ճանդուրժում նախիյան լեզուն,—
Նա ռուսաց լեզվի դայլայլն է ուզում...
Զզռում է այսպես իր կտոր նացին...
Վելիկոդերժավ... այս որբ վաճեցին...

Անմիջապես Չարենցը պարզաբանում է, որ իր հերոսը ռուսական ոգու հետ էլ բացարձակապես կապ չունի, այլ կոչված է ապազգայնացնելու ամեն ինչ.

Եթե ճասկաճար գիք ի՛նքը՝ ցեկաճ,
Որ— Վանից փախած այս որբ արիկաճ
Ռուսական ոգուն այնճան է մոտիկ,
Որճան որ Վաճը... Նիժեգոռոդին...

Այնուհետև՝

Մեծացել է նա Վաճում,
Բայց... «ռախի» ճոտ է ճաճում...

Սրանց էլ հաջորդում են այսպիսի տողեր.

Ուտեզի՞ց եկավ և ո՞նց ընկավ
Աղասու ցեկաճ այս հյուրընկալ—
Եվ աչքը դրեց նրա նացին...
Վելիկոդերժավ... այս վաճեցին

Էպիգրամների այս «վ. Ա.» շարքը ուներ համապատասխան բնաբան՝

Նայեցեք աճա այս կրիայիճ,
Նա ակաճչներ է կարծում իրեն
Եվ աչ[illegible]— ընկեր <Ռերիայի>...

Չարենցը նրան չի ներում նաև այն բանի համար, որ ազգային կյանքի խնդիրներին խառնվում է նրա հրեա կինը՝ Մարիա Իզրաիլովնա Լոկշինան (ծն. 1900 թ.), որը 1934-1937 թթ. եղել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչը։ Մի անձնավորություն, որը ոչ Հայաստան էր ճանաչում, ոչ էլ հայի դարդ ու ցավ։ Էպիգրա-

Մը վերնագրված է ««Նրա» կնոջը», որի մեջ կան այսպիսի տողեր.

Դո՛ւստր Իսրայելի...
Դու պիտի արդյոք մեզ ամբաստանես
Մեր «ազգայնական» մեղքերի համար,
Չէ՞ որ դո ճոգին <....> լեցուն,
Չի՝ ո՛չ հայրենիք, ո՛չ լեզու ունես,
Որ գեր զգալո՛ւ ընդունակ լինես
Այն ամենը, որ սրբազան է ճար...
(1935, 9. IV, ՉՅ, № 14)

Այս նույն մտահոգությունները շարունակվում են նաև «Հերոս Լևոնին» գործում, որի մեջ կարդում ենք.

... Տասնհինգ թվին փախել է Վանից,
Քառնիկ արդեն «ոսոխ» է դարձել,
Ապա — ճա հրեա մի կին է առել—
Եվ դարձել հերոս մի գերազգային...
Գերազգային ։ նա արդ կատարյալ.
Եկել է սակայն իսրայելացի
Կնոջ հետ նա իր և հերոսաբար
Կռիվ է մղում ՀԱՅի բառացի
Ամեն ինչի դեմ՝ իբրև «ազգային»,
Կամ ազգայնական թույնի դեմ լեղի,—
Եվ ճպարտ նստած իր աճման գահին՝
Հսկում է, որ «հայն» ուղին չշեղի
Հեղափոխական գծից իր գծած...
(1935. IX. 11, ՉՅ, № 14)

Կան էպիգրամներ, որոնցում Չարենցը դիմել է ընդհանրացումների՝ կերպավորելով ոչ թե որոշակի մարդկանց բնավորության կամ վարքագծի առանձին կողմեր, այլ՝ ժամանակին բնորոշող բարոյահոգեբանական ամբողջ մթնոլորտը։ Ահա այդ բնույթի էպիգրամներից երկուսը.

X. X.
Գանգուր մազեր,
Գունատ ճակատ,—
Ան մատղեր—
Գեղ ճակատ:
(1931, ՉՅ, № 14)

ԹՆԻՔՈՒՄ ՏՂԱԴՐԱՆ ՄԻ ՊՈՐՏՐԻՒ ԱՌԻԹՎ

Պեմիդ վոխաւրեճ— նստուկդ էր պիտո
Այտեղ ճկարել-նստուկդ ճաստաքեստ:—
Չէ՞ որ մինչ հիմա նրանո՛վ ես դու
Թե՛ դիրք, թե՛ «անուն», թե՛ հաց վաստակել...

(1935, 9. IV, ՅՅ, № 14)

Ահա այսպես Չարենցը կռիվ էր տալիս ժամանակի ամեն տեսակի անարդարությունների և արատավոր բարքերի դեմ։ Նրա համար խոսքն իրոք զենքի ուժ ուներ, այն էլ էպիգրամի ժանրային հնարավորությունների մեջ, երբ կարելի էր անվրեպ կրակել և սերունդներին պահ տալ ժամանակի գրական և պետական «ջոջերի» դիմապատկերները։ Վերստին կրկնենք. այո՛, Չարենցը երբեմն դիմել է ծայրահեղությունների, գուցեև ինչ-ինչ բնութագրումների հարցում անարդարացի է, անգամ՝ կոպիտ։ Բայց եթե դատելու լինենք հավասարակշռության նժարով և հաշվի առնենք Չարենցի դեմ գործված մեղքերը, ապա կտեսնենք, որ բանաստեղծը համեմատաբար դեպս եղել է իր գրական տարերքի մեջ, չի խախտել խաղի օրենքները և իր հակառակորդի նման չի հարվածել գոտկատեղից ներքև։ Ուրիշ բան է, որ նրա խոսքը սուր է։ Այո՛, նրա հակառակորդների բախտը մի հարցում չի բերել. նրանք ակամա բոլոր ժամանակների ամենահզոր բանաստեղծներից մեկի ժամանակակիցն են եղել։ Իսկ գուցե դա նրանց բախտավորությո՞ւնն է, և շատ անուններ, որ ինքնաբերաբար պիտի մոռացվեին ժամանակի ընթացքում՝ Չարենցի կյանքի ու ստեղծագործության պատմությունը վերականգնելու առիթով երբեմն նաև պիտի մտաբերվեն։ Բոլոր դեպքերում Չարենցը եղել է բանաստեղծի իր դերում։ Դրա վկայությունն է նաև 1936-ին գրված և 1983-ին տպագրված նրա շատ բան ասող և ավելորդ բացատրական քաշքշուկից մեզ ազատող էպիգրամներից մեկը.

Օ, ո՛չ, ես իմ այս էպիգրամներով
Քացի չեմ տալիս իմ բնկերներին,
Օ, ո՛չ, ես իրըս եմ, ինքըս եմ օրերով
Եվ տարիներով «բնկածի» դերին

Սղել ենթակա և ընտելացել...
Ախ, դժբախտաբար, օրերին այն մութ
Ոչ թե յամբով եմ դուժ ինձ ճարվածել,
Այլ,— վատ եղբայրներ,— էշի ոռներով...

Ավելացնենք միայն, որ Զարենցի բերնե բերան տարածվող էպիգրամները դառնում էին վարակիչ: Շատ էպիգրամներ այսօր դեռևս անգիր հիշողներ կան: Իսկ որ ամենակարևորն է՝ բանաստեղծներից ոմանք հետևում են Զարենցի օրինակին: Գրականության պատմության գիտակը կնկատի, որ 1930-ական թթ. սկզբներին էպիգրամի ժանրը նկատելի աշխուժություն է ապրում՝ երևալով Ն. Զարյանի, Մահարու, Նորենցի, Տարոնցու ստեղծագործություններում: Ընդ որում՝ նրանք ևս ընտրում էին որոշակի իրական թիրախներ: Ահա, օրինակ, Ալազանի «Հիշողություն» էպիգրամը, ուր շատ ճըշգրիտ տրված է Ա. Ոսկերչյանի գրական կերպարը.

Ոսկերչյանին ասին.
— Բլուզ կարեճ՛,
Բայց ի՞նչ ձևի.
Ասավ.
— Ըստ ՌԱՊՊ-ի բանաձևի:

(ԳԹ, 1932, № 8, 10 մայիսի)

Ահա այսպես, իր էպիգրամների «զոհերին» անգամ Զարենցը հաջողությամբ տանում էր իր ետևից...

ՉԱՐԵՆՑ ԵՎ ԿՈՄԻՏԱՍ

Որպես ամբողջ հայ մշակույթի սրբացված մի անուն՝ Չարենցի համար Կոմիտասը խորհրդանշում էր հայ երգի ու հայ երգասանի ողբերգական ճակատագիրը։ Չարենցը Կոմիտասին տեսավ այն հոգևոր մաքառումների ճանապարհին, որի սկիզբը մեր պատմության, ոգու և ազգային բանի միասնությունն է։ Չարենցի համար այդպիսին էին Խ. Աբովյանը («Դեպի լյառը Մասիս»), Մ. Նալբանդյանը («Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում)։ Այս կերպարների մեջ, ժողովրդի անցած հոգևոր ճանապարհի և ազգային հանճարների ճակատագրերի ներծուլումով, Չարենցը տեսնում էր նաև իրեն՝ ընդհանրության հիմք ունենալով ժողովրդի մաքառումների, մաքառումներից ծնված երգի և բոլոր ժամանակների բանասաց-երգասանների կյանքի ողբերգական ուղին։ Ստեղծվում է հոգևոր ճանապարհի մի շղթա, որը մի կողմից հայ հին և նոր շրջաններդի գրականության ու արվեստի միջոցով խորանում է մինչև մեր գիտակցական գոյության սկիզբն ու ինքնաճանաչման ընթացքը, իսկ մյուս կողմից շարունակվում Չարենցի և նրա ժամանակակիցների գործունեությամբ ու պայքարով։ Այդ ճանապարհին կանգնած են Խորենացու Մատյանն ու հնագույն առասպելները, Սասնա տան ժողովրդական վեպը, միջնադարի հայ մանրանկարչությունն ու ճարտարապետությունը, Նարեկացին, Շնորհալին, Գրիգոր Մերենցը (Խլաթեցի), անանուն գրիչներն ու մագաղաթյա գրքերը, Սայաթ-Նովան, Րաֆֆին, Պատկանյանը, Ալիշանը, Դուրյանը,

Պեշիկթաշլյանը, Թրիմյանը, Վարուժանը, Սիամանթոն, Մեժարենցը, Արծրունին, Թումանյանը, Թամանյանը, Տերյանը, Իսահակյանը, Սարյանը Բակունցը, Մահարին, գրեթե բոլոր ժամանակակիցները՝ «Ով նա, ով լավ է, և նա, ով վատ»: Սա որոշակի նպատակի միտվող անընդմեջ մի ճանապարհ է, որի գաղափարական արժեկշիռն էլ ճշտում-ճշգրտում է Չարենցը: Այս հոգևոր շարժման մեջ նա ընդգրկում է նաև համաշխարհային գրականությունն ու արվեստը՝ Հոմերոսից ու Վիրգիլիոսից սկսած մինչև Դանթե ու Տասսո, Ֆիրդուսի, Խայամ ու Հաֆիզ, Լեոնարդո դա Վինչի ու Միքելանջելո, Բոսխ ու Ֆրագոնար, Պուշկին ու Բլոկ, Ուիթմեն ու Պո, Գյոթե ու Հայնե, Գորկի ու Մայակովսկի, ինչպես նաև տարբեր դարաշրջանների փիլիսոփայական ու դավանաբանական, գրական ու գեղագիտական ուղղություններ: Այս ձևով ազգային և համաշխարհային քաղաքակրթության անցած ամբողջ հոգևոր ճանապարհը Չարենցը դիտում է «իբրև միևնո՛ւյն մարդկության երկու տարբեր հասակ»:

Կոմիտասի կերպարը կերտելիս՝ այդ երկու հասակները Չարենցը տեսնում է մի կողմից հայ հոգևոր կյանքի ամբողջ պատմության և Կոմիտասի առաքելության ու ճակատագրի հարաբերության մեջ, մյուս կողմից՝ Կոմիտասի և իր: Այս ամենն առնչվում է հայ երգի պատմական ճակատագրի քննության հիմնահարցին, որ այս տարիներին «Կոմիտասի հիշատակին» պոեմի հետ մեկտեղ Չարենցն արծարծում է «Որպես գորշ, դեղին տերևներ...» տողով սկսվող և զգալի մասով անտիպ, «Մի ամայի վայրում, չգիտեմ որտեղ» տողով սկսվող, ամբողջովին անտիպ և այլաբանության սկզբունքներով հորինված պոեմներում: Սա այն արմատական գիծն է, որը գալիս է «էպիքական լուսաբացից», հասնում մինչև «Գիրք ճանապարհի» և շեշտված անցնում հետագա շրջանի ամբողջ ստեղծագործության միջով:

«Կոմիտասի հիշատակին» պոեմը, որ Չարենցն սկսել է գրել 1936 թ. մայիսի 30-ին և ավարտել նույն տարվա նոյեմբերի 30-ին՝ ստեղծագործական աղղակ է ունեցել Կոմիտասի աճյունը Երևան բերելու, նրան այցելելու և նրա սրբացած մարմինը 1936 թ. մայիսի 28-ին հայրենի հողին առնե

տալու անմիջական տպավորությունը։ Թե՛ տպագրված և հայտնի այս պոեմին, թե՛ Չարենց-Կոմիտաս կապին գրականագիտությունն անդրադարձել է տարբեր առիթներով։ Հրատարակվել են նաև այդ կապը կենսական փաստերով վավերացնող հուշեր (Գ. Մահարի, Ա. Մեսրոպյան, Խ. Սարգսյան, Ռ. Զարյան)։ Այս հոդվածի առիթը Գրականության և արվեստի թանգարանի Չարենցի ֆոնդում պահվող № 72 ձեռագիրն է, ինչը և հնարավորություն է տալիս լրացնելու Կոմիտասի հանդեպ Չարենցի հետևողական վերաբերմունքի որոշ բաց էջեր։

Այդ ձեռագիրը թերի է, բայց և, պահպանված մասով, մղումն է ենթադրելու, որ այն պոեմ է՝ նվիրված Կոմիտասին։ Ընդ որում՝ տաղաչափությամբ, կառուցվածքով և կշռույթով սա այնպիսին չէ, որ լրացնի «Կոմիտասի հիշատակին» պոեմը։ Ամենայն հավանականությամբ սա մի առանձին, ինքնուրույն ստեղծագործություն է։ Այս կապակցությամբ հիշենք Ա. Մեսրոպյանի վկայությունը, ըստ որի 1935 թ. աշնանը Չարենցը իրեն ցույց է տվել «իր մեկ ձեռագիր աշխատությունը՝ «Կոմիտաս-պոեմա» խորագրով»։ Ժամկետը նա չի շփոթում, որովհետև այդ հանդիպման օրը թվագրոմով Չարենցը նրան նվիրել է երկու նոր լուսանկար։ Հուշագիրը նաև նկարագրում է այդ ձեռագիրը.

«Այսօրվա պես թարմ կհիշեմ այդ գործը, իր արտաքին բոլոր մանրամասնություններով։ Գրասեղանի ձախ կողմը, խնամքով դասավորված, գրեթե արդեն ավարտած գործ մըն էր այդ, գրված կապույտ թանաքով, սպիտակ և ընտիր լայն թուղթի վրա։ Տեսնելով իմ հրճվանքս և զայն օր առաջ կարդալու փափագս, Չարենց ավելցուց. «Հույս ունեմ, որ շուտով կավարտեմ» (Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, էջ 341—342)։

Քանի որ հաջորդ պոեմը Չարենցը գրել է Կոմիտասի աճյունը հայրենիք տեղափոխելու կապակցությամբ, կարելի է ենթադրել, որ Ա. Մեսրոպյանի ակնարկած պոեմը Չարենցը գրել է Կոմիտասի մահից՝ 1935 թ. հոկտեմբերի 22-ից հետո։ Պոեմի գրության առիթով հուշագրի ակնարկած ժամանակը՝ 1935 թվականի աշուն և Կոմիտասի մահվան ժամա-

նակը համընկնում են, որը և իր հերթին երաշխիք է մեր ենթադրության համար։ Չարենցի ձեռագրի հետ ճշգրտորեն համընկնում է նաև «գրված կապույտ թանաքով, սպիտակ և ընտիր լայն թուղթի վրա» վկայությունը։

Բացի դա, մեկ անգամ չէ, որ և՛ հուշագիրները, և՛ հետազոտողները նշել են. «Կոմիտասին նվիրված գործը Չարենցը գրել է մի քանի վարիանտով» (Խ. Սարգսյան, Հիշողություններ վերոհիշյալ գիրք, էջ 345)։ Ամենևին բացառված չէ, որ այդ մի քանի տարբերակներից մեկը մեր ակնարկած թերի գործը լինի, որը, նվիրված լինելով Կոմիտասին և մնալով անտիպ, հուշագիրների տպավորության մեջ կարող էր միավորվել ընդհանուր նյութին և չմտապահվել որպես առանձին երկ։

Այս թերի երկը բնույթով նման է «Դիրք ճանապարհում» զետեղված «Մահվան տեսիլ» պոեմին, որը Չարենցը ավարտել է 1933 թ. մայիսի 4-ին։ Նախ, ընդհանուր է ոգին՝ ժողովուրդն ու ժողովրդի ցավով ապրող հանճարը ներկայանում են փրկության ճանապարհի որոնման ողբերգական դեգերումների մեջ։ Եվ ապա նույնն է տաղաչափությունը՝ տողաչափեր, տան կառուցվածք, հանգերի դասավորություն, հնչյունական կապակցումներ, նույնն է նաև տրամադրությունը, բառապաշարը, լեզուն, ոճը, պատկերի կառուցվածքը։ Սա էլ իր հերթին հուշում է, որ սերունդների մահվան տեսիլի ճանապարհին Չարենցը իրավացիորեն տեղ է հատկացնում նաև այդ տեսիլի վերջին զոհին, որը, Պ. Սևակի խոսքով ասած, «չմեռա՛վ, այլ՝ մահացա՛վ»։

Այդ ձեռագիրն սկսվում է ԺԲ քառատողից պահպանված վերջին երկու տողով, որին հաջորդում են ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ քառատողերը, ապա և՝ երկու պատառիկ։ Դրանցից ԺԳ, ԺԴ, ԺԵ քառատողերի կողքին Չարենցը դրել է + նշանը, հավանաբար դրանք համարելով վերջնական։ Այդ ենթադրությունը հաստատվում է նաև այդ տների մշակվածությամբ։ Ահա և ամբողջական պոեմից մնացած այն հատվածը, որի շուրջ էլ դառնում է մեր խոսքը.

ԺԲ

Լռությունն անհնչի է, որպես մարմարե անշարժ մի խաչքար՝
Մանրացած դագաղի վրա լեթարգիկ ճնով ճնածի:

ԺԳ

Լսում է անցորդը խրացած,— և արդեն՝ տագնապով ճչված՝
Ընթանում է— կույրի՜ նման ծեր, խլյեռով այնքա՜ն երեռուն.—
Ջառանցում է գտնել լեռնեռուս ձայների կորած մի աշխարհ,
Ձայների, որ չարդից ազատված՝ ապաստան են գտել ծերպերում:

ԺԴ

Քայլում է՝ զննելով հեռուն,— և արդեն՝ ոսկերի՜ց նրա մերկ,
Ոսկեր մատներից— մինչև արմատնե՜րը խոխով մազերի,—
Լռությունն է դժժում նրա մեջ— աշխա՜րհն է լռել նրա դեմ,
Որպես բիրտ բռունցքով խլացած, կամ մնռած մարգու լսելիք:

ԺԵ

Քայլում է մեռյալ դաշտերի և մեռյալ ձայների Մարգարեն
Քայլերով անեղ, լայնածիգ՝ լռության մտոկով ճչված:
Հայացքները որպես բևեռներ՝ խրելով հեռուն այն հարե՝
Դաշտերի Հիսուսի նման՝ նրա մեջ մանկությա՜ն պես նշված:

ԺՋ

Թայց եզերքն այս ցուրտ, անճաղատ,— ճարթավա՜յրն այս,
որ կոխում է նա
Իբրև տուն դարձող տարագիր— այսման հա՜մր էր արդյոք նա
առաջ...
Ո՜չ... Գյուղի հարերով ճչված, իբրև շուն՝ ծեծված անխնա,—
Փախչելով լսում էր և՛ երգ, և՛ ծիծաղ,— և՛ թռչնի բների շառաչ...

Ահա և երկու պատառիկը. էջի վերևում գրված է 40.

Կանգնեց դաշտերի մեջտեղում, հեռավոր լեռների ճանդեպ
Պապանձված աշխարհի, լռության դագաղի առջև իբրև սյուն,—
Ջմռսված դագաղի առջև,— լռության նաշի
Հանգել էր՝ մանկա՜ն տանջանքով...

Լռության դագաղի առջև իբրև հարացած մի Հիսուս,—
Մահախաշ հարացավ մի պահ մարմարե նաշի դեմ, որ արդեն
Պատանեված մանկում պատանեով նեչում էր ձայների մի նոր
Ղազարոս...

Ո՞ւմ համար են «Ձայների կորած մի աշխարհ», «Մեռյալ Ձայների Մարգարե», «Ձայների մի նոր Ղազարոս» արտահայտությունները: Մեզ թվում է՝ դրանց հասցեատերը Կոմի-

տաան է: Այդ ենթադրությունը հաստատվում է նաև շարադրքրանքի ընդհանուր բովանդակությամբ:

Այդ ենթադրության համար լրացուցիչ փաստարկ կարող է ծառայել նաև 1936 թ. հունիսի 7-ին նույն երկարաշունչ տողերի չափով ու ոճով գրված «էպիտաֆիան».

Ասա՝ Կոմիտասն է ճաճգչում՝ իբրև ճոպ ու աճյուն առնավետ:
Սի՛րտ մոխրացած, դարձած ճոպ՝ երբեմնի ոճոր ձայնածին:
Ա՛յր մանացու՝ աշխարհում ճա եղել է գոլիր, վարդապետ:
Այր մշտատև՝ ձայնապետ— ձայների արհա— ձայնագիր:

Այս տողերը Չարենցը համարել է վերջնական, ստեղծելով նաև երկու տարբերակ: Ընդ որում՝ նույն օրը Չարենցը գրել է դարձյալ Կոմիտասին վերաբերող «Տապանագիր» վերնագրով մի բանաստեղծություն ևս, իսկ նույն ամսի հունիսի 3-4-ին՝ «Քո աճյունին Կոմիտա՛ս» տողով սկսվող երկու ութնյակ: Ավելորդ չէ ասել, որ այդ ութնյակներն էլ գրված են «Կոմիտասի հիշատակին» պոեմի առաջին տարբերակի առաջին էջի երկրորդ երեսին: Սրան պետք է ավելացնել նաև «Ռեքվիեմ հայրենական» պոեմը, դարձյալ գրված ութնյակներով և, առանց անունը տալու, ըստ էության կերպավորելով Կոմիտասին: Սրանք «Կոմիտասի հիշատակին» պոեմի առանձին հատվածներ են, երբեմն էլ՝ տարբերակներ:

Բայց կա նաև մեկ այլ պատառիկ, որը ամենայն հավանականությամբ պիտի իր տեղն ունենա Կոմիտասին նվիրված մեր ակնարկած պոեմի քառատողերի շարքում: Այդ քառատողը գրվել է նույն այն թերթիկի վրա, ինչ վերոհիշյալ «էպիտաֆիան»: Ահա այն.

Եելաճեղ աչերով, բոպիկ, մռռուճդ ճողմով ցիրուցան՝
Չգեցած սևասև զգեստ, բզկտված փշերով ճազար
Անցնում ես փշերով այն ամա, դաբերով այնքա՜ն ծանոթ
Ով— մամուր ցորյաճի ճմաճ— գռում ես ճճչյուններ ճայրեճի...

Կոմիտասի կերպարը Չարենցին շատ է հուզել: Ըստ Ա. Մնացականյանի վկայության՝ Կոմիտասի հանդեպ Չարենցը անթաքույց սեր ու հետաքրքրություն է հանդես բերել դեռևս 1923 թվականից: Տարիների ընթացքում այդ սերն ու հետա-

քրքրությունն ավելի է բանձրացել։ Իսկ Կոմիտասի մահից և աճյունը Հայաստան տեղափոխելուց հետո՝ նրա միտքն անընդհատ աշխատել է այդ ուղղությամբ։ Ուշագրավ է և Ջարենցի ձեռագրերի մեջ պահվող այն թերթիկը, որի վրա բանաստեղծը նշել է «Կոմիտասի համար» պոեմի 15 հավանական վերնագիր՝ «Վերադարձի մահերգ», «Կոմիտասի հետ», «Ինքվիեմ հավիտենական», «Երգ մահվան և վերադարձի», «Հավերժական մահերգ», «Վերադարձ ու մահ», «Հայրենական հանճար», «Համայնացյալ աճյուն», «Համայնացյալ հող» և այլն։

Կոմիտասյան այս բարձրաձայն համանվագի շարքում առանձնահատուկ տեղ կունենար նաև մյուս՝ թերի պոեմը։ Ամենևին բացառված չէ, որ առաջիկայում հայտնաբերվեն այդ պոեմի նոր թերթիկներ և քիչ թե շատ ամբողջական պատկերացում տան այդ փլատակված դրական հուշարձանի մասին, որի պահպանված տողերը նրա բարձր արվեստի ու կատարելության վկայություն են։

ՀԱՅ ԵՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ ՀԱՅ ԵՐԳՉԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Ամբողջ ստեղծագործական կյանքում տարբեր առիթներով Չարենցն անընդհատ անդրադարձել է հայ երգի պատմական ճակատագրի քննությանը։ Դա եղել է անցյալն ու ներկան պատմական զարգացման մեկ ուղեգծի վրա տեսնելու հետևողական կողմնորոշում, որն արտահայտվել է ոչ միայն գրականության պատմությանն ու ընթացքին վերաբերող հոդվածներում ու ելույթներում, այլ՝ գեղարվեստական երկերում, ձևավորելով հստակորեն արտահայտված մտորումների մի շղթա։ Պատմության մի ծայրին Մովսես Խորենացին է, մյուսին՝ ինքը։ Նրանց միջև ամբողջ հայ դպրությունն է, հայ հանճարի ճակատագիրը՝ ենթարկված ժողովրդի պատմական ճակատագրին։ Դա հայոց Այբ-ի ու Բեն-ի անցած ամբողջ ճանապարհն է, որպես ազգային Բանի ճանապարհ, որպես ազգային Ոգու պատմություն։

Մտորումների այդ շղթան ձևավորվել է «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տողից սկսած՝ ծավալման հնարավորություններ ունենալով «Պոեզոզուռնա» գրքում, «Ռոմանս անսեր» և «Էլեգիա՝ գրված Վենետիկում» պոեմներում։ Այս տեսակետից հատկապես առանձնանում են «Էպիքական լուսաբաց» և «Գիրք ճանապարհի» ժողովածուները՝ «Ներբողներ ու խոհեր», «Տաղեր և խորհուրդներ», «Արվեստ քերթության», «Գիրք իմացության» շարքով, ինչպես նաև «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության»,

«Նորք», «Դեպի լյառը Մասիս», «Մահվան տեսիլ» պոեմներով։ Առանձնանում են նաև 1935-1937 թթ. ստեղծագործությունները՝ «Կոմիտասի հիշատակին», «Երբ բարձրանում է նա վեր», «Իմ Լերան աղոթքը» պոեմները, բազմաթիվ բանաստեղծություններ։

Գրականության և արվեստի թանգարանի Չարենցի ֆոնդում պահվում են ոչ քիչ թվով և առայժմ ամբողջապես կամ մասամբ անտիպ երկեր, որոնք այս տեսակետից լուրջ հետաքրքրություն են ներկայացնում։ Դրանցից կարևորագույնը «Որպես գորշ, ընկճող տերևներ...» տողով սկսվող պոեմն է, որ պահվում է 54 համարանիշով։

Այս երկի սկզբի 293 տողը «N. S.-ի հիշատակին» վերնագրով, իր մոտ եղած ձեռագրի հիման վրա, 1937-ին հրապարակվել է Ռ. Ղազարյանը (տես՝ ԳՔ, 13 հունվարի, № 3)։ ԳԱԹ ՉՖ պահվող ձեռագիրը (Ռ. Ղազարյանի ձեռքին եղածը, որն այնուհետև նա նվիրել է թանգարանին) հնարավորություն է տալիս, նախ, ճշգրտելու տպագրածը և ապա՝ ասպարեզ հանելու պոեմի թե՛ շարունակությունը, թե՛ բնագրային տարբերակներն ու սևագրությունները։ Հրապարակված հատվածի չափով պոեմի ձեռագիրը հիմնականում հստակ է և ընթեռնելի։ Շարունակության մեջ ինքնագիրը տեղ-տեղ դժվար ընթեռնելի է, տեղ-տեղ անընթեռնելի, քիչ չեն նաև քայքայված էջերը։ Թանաքով գրած ձեռագրի գծերը շատ տեղերում կորցրել են որոշակիությունը, բառերը լուծվել, ներծծվել են թղթի մեջ։

Պոեմը Չարենցի ձեռքով համարակալված է մինչև 28-րդ էջը։ Քանի որ 20-րդ էջի համարակալումը կրկնվել է, ուստի ամբողջությամբ համարակալված է 29 էջ, որից հետո էջահամար այլևս չկա։ Այդ համարակալված էջերի ընդգրկումով 456 տող ընդունել ենք որպես պոեմի հիմնական տարբերակ, իսկ մնացած էջերը (464 տող) զետեղել ենք «Տարբերակներ, բնագրային տարբերություններ, սևագրություններ» բաժնում, որ տրված է վերջում։ Պոեմի ամբողջացման նպատակով չհամարակալված էջերից կցել ենք վերջին երեք ութնյակները՝ 456-482 տողեր։ Այսպիսով՝ պոեմի բնագրերը կազմում է 482 տող։

Այժմ վերնագրի մասին։ Ռ. Ղազարյանը գրույցի ժամանակ պնդում էր, որ ինքնագիրն ունեցել է թերթիկ, որի վրա գրված է եղել վերնագիրը։ Դա մեզ միանգամայն հավանական է թվում, որովհետև Չարենցը սովորություն է ունեցել նոր սկսվող երկի մուտքի էջը գեղազարդել՝ վերնագրին կից նշել գրության վայրը, ժամանակը և այլ անհրաժեշտ տվյալներ։ Սակայն ԳԱԹ ՁՖ պահվող ձեռագիրը, որը եղել է մեր ձեռքի տակ, սկսվում է պոեմի առաջին տնից և բանաստեղծի թվագրումով առաջին էջն է։ Նպատակահարմար համարեցինք պոեմը վերնագրել առաջին տողով՝ «Որպես գորշ, դեղին տերևներ», քանի որ շապիկի դեր կատարող էջը, որի վրա պետք է գրված լիներ «N. S.-ի հիշատակին» վերնագիրը, մենք այդպես էլ չգտանք։

Պոեմը հիմնականում գրված է ութնյակներով, կան նաև շեղումներ։ Վերջնական մշակման հնթարկելիս՝ Չարենցը դրանք ամենայն հավանականությամբ կկարգավորեր։

Ինքնագրի երրորդ էջի կողքին, 48-րդ տողից հետո Չարենցը պոեմը թվագրել է.

«Ծաղկաձոր. 29-30-31-VIII, 1936
Երևան. 17. II.—1937»

Ի՞նչ է ասում Չարենցը այս պոեմով։ Ասում է, որ մեր ժողովրդի պես աշխարհով մեկ ցրիվ եկավ նաև մեր երգի հունդը, կորավ գնաց օտար աշխարհներում և անվերադարձ կորուստի մատնեց մեր ժողովրդի հոգևոր հանճարը։ Հայ հանճարի սաղմը մեր գոյության ներկայությունն է աշխարհում, ուստի և, պարտության մատնելով ժողովրդին, բոլոր ժամանակների բռնակալները աշխատել են ջլատել մեր հոգևոր միասնությունը։ Նրանք այրել են մագաղաթներ, ավերել տաճարներ, ժողովրդից խլել նրա լեզուն, հայորդիներին ծառայեցրել իրենց պետությանը, նրանց արվեստով ու գիտությամբ զարդարել իրենց։ Այսինքն՝ Հայաստան աշխարհի պարտությունները և բաժանումները հաջորդել է հանճարեղ այրերի «թալանը» և ժողովրդի հոգևոր միասնության ջլատումը։ Հողմը քշում է Հայոց երկրի հոգևոր սերմը, որ նրանք չընկնեն ու չամրանան «Հայրենի հողի վրա,— Այլ, իբրև դեղին տերևներ,

Թշնամի դաշտերում մեռնեն»։ Այս դիպքում Չարենցը ցույց է տալիս այն ողբերգությունը, երբ հայոց երգի սերմը քշում ու ոչնչացնում է ոչ միայն բռնակալը՝ օտար դաշտերի «Քամին», այլև՝ այդ բռնակալի ունեղական կատարածուն՝ «Հայրենի Հողմը»։ Եվ դա այն պահին, երբ թվում է, թե հայ երգիր թափառիկ ոգին աշխարհի հեռավոր ծագերից, բազմաթիվ գաղթօջախներից վերադարձել և հանգրվանել է իր հողի վրա. երբ վերջապես հայ խոսքը վերագտել է իր հայրենիքը։ Բայց և «Հայրենի սիրո՛վ հանցապարտ,— Հարազատ, սիրած հանդերի եռանդուն խանդո՛վ հանցավոր» նրանք աշնան տերևների նման «Ընկնում են, ընկնո՛ւմ... Եվ քշո՛ւմ է, քշում մեր մոլի Հայրենի դաշտերի քամին»։ Բոլոր հայ հանճարների մեղքը հայրենիքի սերն է, որովհետև այն, ինչ որ ունի բույր նախրյան՝ անմահ է պահում հայրենիքի գաղափարը, ուստի և՝ նրանք մատնվել են «Մահաշունչ, դժնի հողմերին»։ Չարենցն ասում է, որ մեր հանճարի ոգին իր վերադարձով ու մահով թեև իմաստավորում է հայրենի հողն ու ջուրը, բայց և ողբերգության մեջ ծիլ տվող այս խոհը ի սկզբանե «սևախոց» է, որովհետև այդ ոգին վերադարձել է, որ ապրի՛ ու ապրեցնի՛ և ո՛չ թե մեռնի, իսկ մեռնելիս՝ անգամ գերեզման չուննենա. «Եվ չունե՞ք անգամ փոս դուք հիմա՝ Եվ օտար եք հայրենի հողում...»։

Չարենցն ըստ ամենայնի կանխատեսում է իր և իր ընկերների մոտալուտ ողբերգական վախճանը։ Եվ դա պատահական չէ, որովհետև հայ հանճարի պատասպարտվածության մասին Չարենցը խոսում է՝ աչքի առաջ ունենալով հայ հոգևոր ուժերի հերթական սպանդը։ Հոկտեմբերյան հեղափոխության բոսորագույն կարմիրը Ստալինը վերածեց «արյունալիճ արյան» և արյունից շառագունած հառագայթն էր, որ քանդեց, «Յեցի նման մտավ ներս, Որ ուտի դարավոր մի միջուկ»։ Սա այս շրջանում Չարենցին համակած մտքերի ծավալումն է, ըստ որոնց Ստալինը «լափում է որձակը մտքի, Ջրկում մեղ հունդից ազգային»։ Եվ ապա՝ «Հելիկոնը մեր երգի ողջը տարան թիարան» և կամ՝ «Իջել է այսօր Հելիկոնն ամբողջ նախրյան երգի— ողջը թիարան»։

Աշխարհում երբևէ չեղած այս անլուր աղետի պահին Չարենցը բազմիցս դիմում է իր գրչակից ընկերներին, անգամ՝ գրական հակառակորդներին և նրանց կոչում ոգու ամրությյան։ Դրա հետ մեկտեղ նա հայացքն ուղղում է առանձին անհատների ճակատագրին և հայ երգի պատմական մաքառումների ուղին ու ներկա վիճակը պատկերում նրանց կերպավորող գործերում։ Ամեն մեկի մեջ առանձին Չարենցը տեսնում է նաև իրեն և իրենով վերաճշտում երկրի ու երգի ճակատագիրը։ Որպես նոր հերկերի սերմնացան՝ բանաստեղծը շատ ցավագին էր տանում ամեն մի արգելք, որ Ստալինը և նրա տեղապահներն ու կամակատարները իջեցնում էին ազգային երգի ճանապարհին։ Ուստի և՝ միջնադարից վերադարձած այդ հավատաքննչությունն ու ինկվիզիցիան

Այրում է երկաթով ու հրով,
Որպես ծիլ թշնամի արյան—
Ինչ երանգ ունի ճախրյան
Եվ կարող է վարակել սիրով...

Ըստ Չարենցի՝ ազգային ոգու դեմ ուղղված այս դավերը, որ մի դեպքում արտահայտվել է ազգային դպրոցները փակելով, մեկ այլ դեպքում՝ աքսորով ու զանահարությամբ, փորձվել է անցյալում, ցարերի ժամանակ և հիմա գործածության մեջ է մտնում անվրեպ կրակոցներով։ Համընդհանուր ցավի մեջ ուժգնանում են նաև անձնական կյանքի տագնապները. «Ծով ես էլ... Արդեն քար կացնով խոցված՝ Մնում եմ <արդեն> իմ հերթին»։

Այս պայմաններում հայրենի դաշտերի Հողմն ու Քամին «Գողերին է միայն բարեկամ», հանցագործին ու մարդասպանին։ Արյունով նվաճած իրական հայրենիքի փոխարեն այդ Հողմն ու Քամին հռչակում են մի նոր հայրենիք, որը ոչնչացնում է իրեն ստեղծող որդիներին ու հովանավորում գողին, մարդասպանին, կամակատարին և բոլոր նրանց, ովքեր հանուն մի կտոր հացի շատ արագ մոռանում են իրենց ինքնությունը, պարտության մատնում սերնդից սերունդ ժառանգած ոգեղեն ուժը։

Պոեմը գրված է նույն նյութի ու նույն տրամադրության

անընդհատ վերարծարծումներով՝ խորհրդանշաններ ունենալով Հողմը, Քամին, Հունդը, Սերմը, Աշնան տերևը, Հայրենի հերկը, որոնցից Հողմն ու Քամին երբեմն գրել է մեծատառ, երբեմն փոքրատառ։ Խորհրդանշանի է վերածվում նաև Երգը, լծակից ունենալով Երգասանի կերպարը։ Միահունն թվացող մտորումների շղթան իր մեջ ներառում է բազմանիստ կողմեր՝ ժողովուրդ և ժողովրդի պատմական ճակատագիր, հայ ոգի և հայ ոգու խաչելություն, ժամանակ և անհատ, Չարենցով կերպավորվող որոշակի բանաստեղծի ճակատագիր և այդ ճակատագրի դեմ գործող պետական անխափան մեքենա։

Բնույթով պոեմը խորհրդածական է, որ ընթացք է տալիս մռայլ ու ողբերգական տրամադրությունների։ Բայց համատարած այդ մահվան մեջ գալիս է մի պահ, երբ, աչքի առաջ ունենալով հայ հանճարի լույսը, հայ հանճարի թեև տրորված, բայց և տոկուն ուժը, Չարենցը նուրբ անցումով խոսքի մռայլ ողբերգը վերածում է գովքի և փառաբանում նահրյան հանճարի ինքնությունը.

Անձրեի, ցրտերի, ձոգի,
Տանջանքի, սովի, հարվածի,
Մեծության, դառնության, լացի
Բացերում կարծրացած, օ, ոգի՛...
Ս, ոգի, օ, սաղմ նահրյան
Հանճարի,— օ, ինքնություն,—
Աշխարհում չկա ո՛չ մի թույն,
Որ լուծեր հյուղեն fո արյան...

Օ, պի՛րկ, անձարի՛ր, անլույծ,—
Միացման շենքակա տարր,—
Տարամերժ, օ, տարր դու օտար,
Որ ճորդորել ես դարեր անդադար
Ինքնաբուխ, սեփական լույս...

Եվ ապա՝

Ես գովք եմ երգում fո անմահ
Ինքնությանն այդ բարձրաբերձ,
Որ, իբրև անխորտակ մի բերդ,
Դարձրեց մեզ—հավիտյան—մա՛րդ։—

Ես գավ եմ երգում մեր ազգիս,
Որ անկոր իմ հնությամբ կենդանի՝
Փորձությամբ կարծրացավ բանի—
Այնման պիրկ դարձավ ու տոկուն:

Թեև ոչ անմիջականորեն և ոչ էլ գրական բացահայտ ազդակներով, այնուամենայնիվ Չարենցը շարունակում է Ատոմ Չարխանյանի և Դանիել Վարուժանի հայրենի հրավերի մոտիվը, որի արտահայտություններն են հենց «Հայրենի հրավերն» ու «Հացին երգը»: Խոսքն ուղղելով մահվան մատնված աշնան տերևներին, այսինքն՝ իր երգակից ընկերներին, Չարենցն ասում է. «Նրանց մահն— անմահ հորովել է՝ Հայրենի հողի հրավեր...»: Այս մահը մահերգի ու սգերգի տրամադրություններով դառնում է ընդհանուր ողբերգի մի ծանր շառաչ և իրոնիկ շեշտով տրվում գովերգի: Ստալինյան ամբողջ մրզավանջը հառնում է իր տոնական ծափ ու ծիծաղով.

Ցնծություն է մաճն աշխարհում,
Հաղթական երթ է շրեղ,
Գալիքի ցնծալի շխերը—
Հոնդուռ ցոտերի միջով...
Փա՜ռք, օ, փա՜ռք, երիջով ու ճիչով
Դեպի մանը թռչող ընդառաջ
Սաղմերին...

Այսպես նյութի և տրամադրության անընդմեջ վերարծարծումներով, պատկերների կրկնադարձով, տողերի, առանձին արտահայտությունների ու բառերի կրկնաբերումով Չարենցն ստեղծում է ժամանակի երգը, դրա մեջ մեկտեղելով հայ երգի ու հայ երգասանի ճակատագիրը:

Գոհար տպագրության ենք ներկայացնում պահպանված մասերի ամբողջությամբ: 51 թերթ ներկայացնող ինքնագիրը, որը որոշ դեպքերում գրված է երկու երեսի վրա, ըստ էության անավարտ է և անշուշտ: Կարծեք թե վերջնական տեսքի բերված տների կողքին քիչ չեն նաև աշնպիսիները, որոնք սոսկ առաջին գրի արդյունք են:

Ձեռագիրն ընթերցել ենք մի քանի անգամ, ուշադրության

լարումով։ Շատ էջեր կարդացել ու վերստուգել ենք խոշորացույցով։ Մեր արտագրած օրինակները համեմատել ենք ինքնագրի հետ։ Բայց և այդքանից հետո ամենևին բացառված չենք համարում վրիպումները, որովհետև ձեռագիրը ոչ միայն անմխիթար վիճակում է, այլև խառն են Չարենցի կողմից չհամարակալած էջերը։

Սուրանկյուն փակագծերի մեջ նշված են՝ 1. անընթեռնելի բառերը <անընթ.>, 2. քայքայված բառերը <քայք.>, 3. ենթադրաբար վերականգնված բառերը, 4. այն բառերը, որոնք Չարենցը սկզբնապես գրել է, ապա ջնջել, բայց տեղը նոր բառ չի գրել, 5. բազմակետերով արտացոլվել են տպագրության համար աննպատակահարմար բառերը <.....>։

«ՈՐՊԵՍ ԳՈՐՇ, ԴԵՂԻՆ ՏԵՐԵՎՆԵՐ...»

Որպես գարշ, դեղին տերևներ,—
Ցրում է հողմը, ցրում—
Անդադար, սերնդե սերունդ—
Նախիյան երգի արևկեր,
Աներկիր հուսգը անմահ,
Որ վաղո՜ւց, իր հողից հեռու՝
Ե՛վ դարեր առաջ, և՛հիմա—
Քշվել է տաշեղի նման
Աշխարհի բոլո՜ր բացերում...

Եվ կրկին, որպես տերևներ,
Քշո՛ւմ է հողմը նրանց,
Որ չընկնե՛ն, նրանք չամրանան
Հայրենի հողերի վրա,—
Այլ, իբրև դեղին տերևներ,
Թշնամի դաշտերում մեռնեն...

Եվ ահա, ինչպես միշտ,— հիմա
Աշխարհի բոլոր կողմերից,
Ազատված հազար հողմերի
Ժանտաժանտ ուժից, մերձմահ
Հայրենի հողմերի ներքո—
Դաշտերում իրենց հարազատ—
Հայրենի հողմն է ահա ժանտ
Հալածում նրանց՝ բիրտ ու զազիր...

Թափվում են, թափվում անդադար՝
Հայրենի հողմերի ներքո—
Խեղճացած, նողկալի երգով՝

Հայրենի սիրո՛վ հանցապարտ—
Հարազատ, սիրած հանդերի
Խոնդուն խանդո՛վ հանցավոր—
Ընկնում եմ, ընկնո՛ւմ հանցագործ,
Ինչպես տերևներն այս դեղին...

Ո՛չ, պոետ,— Օ, ո՛չ,— Օ, ո՛չ.—
Ցնծագին երգով, շառաչով
Տերևներն այս՝ մահվան առաջող—
Նրանցից երջանիկ են ու ազգ,—
Նրանցից բյուրապատի՛կ առավել
Անվեհեր են այս չոր տերևները,—
Նրանց մահն— անմահ ճորավել է՝
Հայրենի հողի հրավեր...

Թռչո՛ւմ են հրանի զվարթուն
Խառնելու շրշյունն իրենց չար—
Հայրենի ծարավով տոչոր
Հողերին, շողին ու մարդուն,—
Ընկնում եմ ընդմի՛շտ սակայն դուի՝
Մեռնելու մանո՛վ անիմաստ,—
Ով— տխո՛ւր է ձեր երգը ճվաստ,—
Ով չունե՛ք անգամ փոս դուի հիմա՝
Ով օտա՛ր եմ հայրենի հանդում...

Ով էշո՛ւմ է, էշում մեր մոլի
Հայրենի դաշտերի համին
Դեռ ոխով ահեղ, թշնամի,
Ինչպես տեղդե՝ արյունից չերմոցի,—
Դեռ էշում է հուդերը բոլոր
Նախյան սիրո ու երգի,
Որ չընկնենք հայրենի հերկին՝
Սահմանված բերի՛ համար ևո՛ր...

Աննահանջ կամքով զրահավոր,
Աննկուն, անխոնջ ու դաժան՝
Համակված ոխո՛վ սրբազան
Ով անսահման ահով.—
Համակված աննուն սարսափով
Հայրենի սիրո ու երգի,—
Մահրո՛ւմ է ճող ու երկիր
Ցեցերի՛ց այդ՝ մահից խուսափող...

Համակված անանց սարսափով,
Ինչպես արնագույն լաթից
Յուներն են դժնում, մահատիպ,—
Մահացու սարսափի ապով—
Այրում է երկաթով ու ճրով.
Որպես ծիլ թշնամի արյան—
Ինչ երանգ ունի նախիյան
Նվ կարող է վարակել սիրով...

Ինչպես սև, զազիր զառանցանք,—
Ու պատում է նոգին մարդկային,—
Այդպես՝ ամեն մի դաժին
Ո՛չ քե ա՛յն է համարում հանցանք,—
Ու հանուն նողկալի փողի
Գլուխ է կտրում իմբր կացնով,—
Այլ— խաղցիկ զարծած խելացնոր—
Ու կտրած գլուխը գալի...—

Ա՛խ այդպես հիմա մեր Քամին,
Մեր Երկրի նոզմր սիրոլ—
Հայրենի ջուրն ու նողը սիրոլ
Դողերի՛ն է միայն թշնամի...
Բարեկված աչխարհի սիրով՝
Աչխարհի փրկարար Քամին—
Կաշո՞ղ է արդյոք իր սիրս
Տիեզե՛րքը փրկող նույգերով
Ընդունել— հին տանն իր սիրոլ
Մի զազիր հայմանդամի...

Համակված անհեղի ոխով
Պեպի ան, անասնական
Այդ սիրով վարակված, սակայն
Թաւերված «կատարյան» էոզով
Ոսոխներր բոլոր նողկալի,—
Հնձում է նաանգով անձիր
Հայրենիքն իր— հայրենի նա հնձյոլ.
Ու ցանի— հայրենիք մի գալիք...

Իր Երկրի հանդավար սիրով
Վարակված չլուներն այդ սակայն
Հրկիզում է նա— հանուն խակակա՛ն

Հեռացյալ սիրո ճակատին—
Հոչակում է նա դրան հակապիր—
. . . . . Հայրենիք...

Նվ ընկնում եմ, ընկնում անզգայր,
Ինչպես շուշբս— տերևներն աշնան,—
Հայրենի հանդերում բուսած
Ցաղուճներն հողմերին օտար...
Ընկնում եմ, ընկնում եմ անվերջ—
Նվ ծիլեր՝ դեռ նուրբ, նորընձա,
Նվ— արմատից հնձած—
Բարիներ՝ արդեն ասպամերձ...

Օ, այն չէ՛ սակայն զգրելի,
Որ ֆշում է այսօր մի հողմ,
Թշնամու նման, ամեն կողմ—
Մեր երգի նոր ծիլերն էլի՛:—
Այն ե՞րբ է եկել— հարազատ
Իր երկրի, կամ օտար կողմերի
Մահաչուճչ, դժնի հողմերից
Նահրյան Երգի սպմբ— ազատ...

Քշե՛լ է միշտ է՛լ նահրյան
Երգերի սպմբ բամին,—
Տեսել է նա անթի՛վ քշնամի,
Բայց ծաղկել է կրկին՝ բորբ ու բուրյան:
Քշվե՛լ է, արվել ոտնակոխ,
Խառնվել հրի ու փոշու,—
Բայց իբրև ոգի, իբրև շունչ,
Իբրև սպմ անմահ, ինքնագոհ,—

Պահպանվել է նա մի՛շտ ահմեռ
Իր նեբին ինքնուրյամբ անկոր,—
Ինչպես հունդն է պտուղի— անկոխ,
Քանի չի նեխել միչից դեռ...
Պահպանել է իր միջուկն— անեղծ,
Նվ պարձել դրանո՛վ միայն— հար
Բյուրավոր դժնի անհնար
Փորձանքների համար— անմեռ...

Ռնդրեհ ...

Բոցերում կարծրացած, օ, ոգի՛...
Օ, ոգի, օ, սաղմ նախյան
Հաճնարի,— օ, ինքնություն,—
Աշխարհում չկա ո՛չ մի թույն,
Որ լուծեր հյուլեն fո արյան...

Օ, պի՛րկ, աճնարի՛ր անլույծ,—
Միացման չեքակա տարր,—
Տարամերժ, օ, տարր դու օտար,
Որ ճարդել ես դարեր անդադար
Ինքնաբուխ, սեփական լույս...
Դարերի ծագից, ակունքից
Մինչև օրս հասած դեռ ասա
Օ, դու, նախյան սաղմ,—
Մի՞թե արդ վերջապես հասար
Քո ան<անընթ.> երկունքին...

Օ, հազար ճողմերի նախագ,
Օ, հազար ճողմերով տար,
Դաշտերում հայրենի և օտար
<Բյուրաբյուր> ոտիերով կոխած...
Դու եղել ես սաղմ կենդանի,
Ոգու ճունդ անկոխ ու անմահ,
Որ ծաղկում է բոցով անմար,
Հավիտյան՝ ինքն իր մեջ՝ անմահ,—
Ով ծաղիկ է տալիս,—
Ուր <անընթ.> Հողմը տանի...

Ես գովք եմ երգում fո անմահ
Ինքնությանն այդ բարձրաբերձ,
Որ, իբրև անխոտոր մի բերդ,
Դարձրեց մեզ— հավիտյան— մա՛րդ:—
Ես գովք եմ երգում մեր ոգուն,
Որ անկոր ինքնությամբ կենդանի՝
Փորձությամբ կարծրացավ fանի—
Այնման պիրկ դարձավ ու տոկուն:

Ես գովք եմ երգում նախյան
Պանծալի ոգուն հայրենի,
Որ ճրով կոփված հայրերից
Ժառանգել եմ ես՝ ճրի հետ արյան:
Ես գովք եմ երգում<ցնծության>՝
Հանուն ճոր, և՛ որդու, և՛ ճոգու,—
Նախյան բարձրաբերձ ոգուն,
Նախյան սաղմին անկոռնկոտ...

Թայց և գովք եմ երգում խնդավառ
Հաղմերին, համուռ, ճղճճին
Որ <ռտճակոխ> արին
Նախիյան սաղմճ անդադար:
Ես գովք եմ երգում վերջապես
Մանաշուճչ, վայրագ, ամեճի
Ուժերին Փորձության ու Մահի,
Որ մեր ոգին չափեց:—

Որ դարե՜ր, դարե՜ր, դարե՜ր,
Վայրենի՜, վայրա՜գ, բարբարո՜ս,
Տեսնելով, իբրև բարձր փառաս,
Մեր ոգու <անլնք.> ճանճարեղ,—
Խառնիխուռն, ինչպես ճորղաներ,
Հեպեղներ ամեճի, կործանող—
Խուժեցին ճաղմերի պես<տանող>—
Եվ ... անճետ կորան աշխարճում...

Ես գովք եմ երգում կործանիչ
Ուժերին վայրագ, ամեճի,
Որ ճերմուստ, սակայն, ամայի—
Դասատու են դառնում փորձաճճի:
Նվ երգում եմ գովք վերջապես
Նախիյան ոգուն ամեճի,
Որ <երկնումով> էր ոդչունում մռճին,
Որ պիտի իրեն կործաներ...

Եվ այն ո՞ր, այն ո՞ր կենդանի,
Սաղմավոր, սաղմով անմաճ
Ենդությամբ չեն դեպի մաճ
Ընթանում, իբրև ճանդեսի...
Այսպես չի՞ արդյոք մոլեգնած
Մառերի ցնծությունն այս աճա,—
Ցնծությամբ են թռչում դեպի մաճ
Տերևներն աճա շուրջս դեղնած...

Հնչելով ցնծության ծնծղաներ
Ցրելով տերևներն իրենց չոր—
Ցնծությամբ ծփածուփ ու ճիչով—
Հղում են կենսատու ընծաներ...
Ցնծագին, ամեճի, շոա՜յլ
Ցրում են սաղմերն իրենց բյուր
Աշխարճի կողմերը քոլոր,—
Որ երբ կարող են— աճեն...

Յնծություն է մանճ աշխարհում,
Հայրական երբ է շխեղ,
Գալիքի ցնծալի շխերք—
Հոնդուն ցրտերի միջով...
Փա՜ռ, օ, փա՜ռ, երիչով ու նիչով
Դեպի մանը թռչող ընդառաջ
Սաղմերիճ . . . . . .

Բայց դո՛ւք,— դո՛ւք,— շվարած,
Ձեր մանից առաջ մանացող,
Ինճնամերժ ծնության ճացով
Մանատիպ կյանքին ձեր վարած,—
Հայրենի նողմի այս մոլի
Ինրանդու եռանդուն թափով
Դետնահար փոված, անխոս
Օ, վերջին ճերկերի ծիլեր...

Օ, դուք,— դեռ այսպես խճամքով
Արմատախիլ շարած,
Դեռ դրանից առաջ
Մեր երգի ճնամյա, անկոխ
Հողերից բարձրացած, վերչին
Նախյան անադա՜րո երգի բերք,—
Այդ ե՞րբ, այդ ե՞րբ, այդ ե՞րբ
Գղտորեց ակունքը ձեր չինջ...

Որճան էլ ուշացած բերք
Հազարամյա ճունդի,
Որ տվել է դեռ երեկ անքիվ
Բարձրաբերձ վերձիգ երգի
Ուր, իբրև սերունդ երեկվա,
Մի գարուճք ընդամենճ առաջ—
Բարձրացել էին ի՜նչ կենսառատ
Երգիչներ՝ ոգով աճերկրա...

Հնամյա անտառում բուսած,
Արմատներ ձգած դարավոր
Մի կաղնու սաղմը մի օր,
Որճան էլ ճեռու,— ասա՛,—
Ասա՛ ինձ, անտառ հայրենի,
Կարո՞ղ է ծնած չլինել
Այդ սաղմը— և ոչ մի ճյուղ
Հայրենի անմահ ավյունից:

Կարո՞ղ է լինել մի սերունդ,
Որ հախարդ սերնդից հանկարծ
Չունենա ոչի՛նչ ժառանգած,
Իրե՛ւ ջիղ, արյուն ու ավյուն:—
Որհան էլ ուշացած
Տարածվել այնպես գետնամարշ,
Որ ոչ մի ցողուն չցանկա
Թեք մեջբը շոկել մի անգամ...

Տարածվում եմ, բնկնում եմ այդպես,
Թափվում եմ— այդպես չընչին—
Հայրենի հողմերի շնչից
Դուք աճա իմ շուրջը անվերջ...
Տարածվում եմ, փռվում եմ ինու,
Հանցապարտ ժպիտով խեղճ,
Որ ներքուստ կա դրված ձեր մեջ:

Եվ ա՛յդ է աճա,— աճա այդ
Խեղճությունն է եղել ձեր ներքին,
Որ թախիծ է ծուլում երգիս—
Եվ լցնում ոգիս տրտմությամբ:—
Եվ զարմանք է պատում, և անդուռ
Տարակույս ու կասկած անգամ,—
Թե ինչը ձեզ բերեց այնքա՛ն,
Որ դարձամ անկամ այդքան դուք...

Օ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ զարավար
Բացվել էր՝ ոգու ցեց խոցե,
Եր այդման հե՛շտ սողոցեց
Նախյան <ոգին>զրահավար,
Ձեր ոգու անկոխ ու անեղծ
Խճճությունն նազարամյա,
Որպես մաշկ մարմնի զառամյալ,—
Եվ, որդի նման, մտավ ներս...

Որպես հառագայթ աճառս՝
Նրա պես ամենա՛ւր թափանցող—
Այս կարմիր Հողմերի ցնցող
Ճառագայթն էր այդ, որ հանդեց
Նա ցեցի նման մտավ ներս,
Որ ոսի դարավար մի միջուկ,—
Բայց... գտավ այնտեղ միայն չուր,
Որ վաղուց ներված էր արդեն...

Հողմերի անճոռոզդող <fայf.>,
Որ ձեզ զգետնեց թափով,—
Օ, ինքն էլ տեսավ <fայf.>,
Որ ... միջուկ չունի ձեր հոգու
Եվ տեսավ, որ վաղուց արդեն ձեր
Ձեր անկոր թվացող ոգու
Նախյան հին միջուկում
<Սոսկ> չուր է եղխած մնացել:

Այդպես մարդ թարմ, անեղծ
Արտաքուստ կարմիր խնձորում
Կտրելուց հետո որդ <է> գտնում
Մինչև հոնդը նրա թափանցած:
Ախ, տեսեք, և դա բնական <է>,
Եվ որդերն անգամ այդ գիտեն,
Որ պիտի հուշդը ուտեն
Եվ ուզում են սպանել մի կյանք:

Բայց այդ ե՞րբ, այդ ե՞րբ, այդ ե՞ր
Թափանցեց մանկան որդը ձեր մեջ,—
Եվ երբ հե՛շտ այսքան գետնահարվեց,
Մենք տեսանք, որ վաղուց է նա եկել.
Քողարկված առողջ թվացող
Նախյան կարմրավուն կեղևով—
Թե ներքուստ, ավա՛ղ, թե ձևով—
Դուք ընկած եք խեղճ ճվոցով...

Բայց մի՞թե բոլորդ էլ ներքուստ
Ձեր հուշդով, միջուկով եղխած
<Պատկերներ եք միայն խակ...>
Պատկե՞ր և <այդ>, և թե այս
Հողմերի շառաչն աճարկու
Ջցնցեր— դուք <անրնթ.> դեպ երկիր
Ինչ կարող էիք <անրնթ.>
Հնամյա մեր <fայf.>...

Ախ,— այս է ահա զազրելի,
Եվ մանուց առավել մանչ,
Որ թափված եք շուրջս ձիմա
Նվոցով անասելի...
Որ անգամ <փորձում> եք ճչալ
Եվ հազիվ հողմից <ornor...>—
Դուք եք վարանում—
<fայf., անրնթ.>

Նվ մեռնում եմ դեռ չուշ չհաշած:

Ու դարձել է մթին զառանցանք
Ձեր նախկին ինճնությունն անգամ,
Ձե՛ր, ճեղց ձե՛ր խռճերում անգամ
Նվ թվում է այնտեղ անճանգանք,
Ու ճաշտ եմ ճանձնվում այնճան
Նվ անգամ <անը> ձեր աչին
Նման է թվում նրաշէի,
Ու ինճնությունը դեռ կա:

Բայց չէ՞ ար դուք երեկ դեռ կայիք,
Նվ անգամ գործերում ձեր ճանախ
Հանդում է նահրյան չանք
Նվ չնչում ձեր երգային:—
Շարճերում ձեր՝ հիմա ննձած,—
Դեռ կային նահրյան մի բանի
Բարձրաբերձ ոգով երգային
Դեռ բանի՛ բարդիներ բարձր:

... Ումանք կան դեռ, ումանք ճեռացան,
Լճեցին ումանք երգը ճերկի,
Մախեցին ումանք իրենց ձիրը
Նվ խեղկատակներ դարձան...
Եոպռոեց ումանց ձայնը վսեմ,—
Տվեցին ումանք ձիրը վերին—
Ընթացիկ ճով <...> ճոզմերի,—
Նվ ճացը նրանց— դարձավ սև...

<բայբ.> այդպես դարձավ ամայի,
<բայբ.> դարձավ անտառն ննամյա,
<բայբ.> վերչապես մնաց,—
<բայբ.> սաղմն անա այս ամենի,—
<բայբ.> անաղարտ <բայբ.>
<բայբ.> ճերկը <անընք.>,
Ուր բամին է շաչում բարձրանայն
Նվ երգում է գովք երկնային...

Նվ ես էլ ճին անտառի
Սրթազան պսակից բարձրացած,
Գագաթով ասաղերին հասած
Մի վերչին սոսի կեճդանի,—
Անա ես— միայնակ, բարձր՝
Ամայի անտառում ցցված՝
Կացնի հարվածից խոցված—

Սպասում եմ արդեն իմ ճերմին...

Ախ, ման՛ անգամ բարձրացավ
Սև կացինը, ար ինձ զգետնե,
Ես ո՛րտե՛ն ձգտեցին գտնել
Իմ երգի արմատները կարծր,—
Փխմացած ման՛ հարվածի,
Եվ կրծիից, և բնից խոցված—
Հայրենի ավյաւնով լցված—
Զրկարեց և ոչ մի կացին...

Օ, վաղո՛ւց, վաղո՛ւց, երբ դեռ
Խաղաղ էր ձեզ մոտ՝ ճերմակում,—
Իմ գլխին այս Հոդմն էր բնում,
Ձեր խղճուկ հովերի ճեա մեկտեղ...
Նա վաղո՛ւց է ձգտել ինձ խեղդել,—
Քայց կամ չի հասել գազաթիս,
Կամ՝ սարսած ուժից արմատիս՝
Դադկանձել է շարչս լկտի...

Եվ կանգնած եմ ես դեռ վեհ՝
Միայնակ ցցված հայրենի
Ձնառատում՝ լերկ. ամայի,—
Եվ Հոդմն է շաչում աճեղ,
Հեչում է հեռեձաձմբ խեղճ այեաեղ,
Եվ անկման մահերգը սև,—
Եվ երկու գեռևամարշ, ճնեմ
Յողուններ են շրշում անդեմ...

Եվ ահա, մահաբեր Հոդմերի
Հանգուն տենդիճ-թնդատաչ,—
Իբրև երգ հաղթության ու շառաչ,—
Բարձրանում է երաե<ց> «ուրմին»
Իբրև ո՛ր. կենսարտչիս, հատրող.
Հերշավող հայրենի երգի հիմն—
Ներաե ց ե՛րգն է շաչում հիմի
Գիների վրա ձեր դեռ թարթող...

Օ. դաւ, ա, դաւ, օ, դաւ,—
Մեծ հերկի վագրերի զարմեր.
Ու իբրև կենսունակ սերմեր,—
<Ձենցիֆ> խինդով հոնգաե...
Ուրեես Քա՛ոմ այն հին. պղծասեր՝
Մերկացդամ ձեր հոր մարմնին—
Իբրև մի պատմաւհան կարմիր—

Փախցի՛ր ձեր լուծումը սև...

Օ, հազա՛ր ասախից զազիր
Ձրամեներ հայրենի սերմի,—
Ձեր ինչի՞ն է փառքը երգի,
Երբ խռպոտ խոսում եք հազիվ...
Օ, ոչինչ, որ երկիները ձեզ
Չի տվել եշույլ տաղանդի,—

Օ, այդ ար, այդ որ սատանաճաճ
Բնությամբ իր որո՛ճ իրանիկ,—
Ձեզ դրեց հավատով խարիճ՝
«Հոգևոր» կոչում ստանալ...
Օ, չկա՛ր արդյոք ուրիշ,
Ոչ մի այլ ասպարեզ, ուր դուք
Հորդեք ձեր եռանդը աճդուլ,—
Դուճե ինչ ճրապուրիշ...

Ինչի՞ն է որդին ազբային
Լուսատեսք աչք, կամ ականջ,—
Լսելու ձայներ, որ չկան
. . . . . .
Երկնքի գոյությունն իր պահի՝
Իավական է որդին այդ երկի՝
Երկու անցք՝ մի փոքր մեկը ներս,
Իսկ մյուսը— ինչ լայն,—

Այդպես էլ գոյ <fայ.>
Էությյան համար ձեր պարշ—
Ի՛վ թեթև ավելի. և՛ պարզ—
Ով բավմիպրս չանավետ ուրիշ,—
Օ, չկա՛ր ասպարեզ արդյոք այլ,
Բայց՝ դնչիճ ավելի՛ ձեր վայել,—
Որ քե ձեր զոյությունը պահել.
Քե գոնել արևին <աներեր.>...

Միևնույն է այդ, քե մի կին
Աղոթեի. ևնիսած բիբանով՝
Հիացած մի օր իրանով՝
Համբուրեեր փոքր ամենին...
Ասում, բախտի կամքով արամիս,—
Պագուհի դառնար.— և օրենք
Հոչակեր, որ բոլորն համբուրեն՝
Հիացած բոլորով բիբանի...

<…>Այն սաղմի նման կենսակիր,
Որ անգամ կապտածի<ր> բոցում
Մնում է <կյանքինն> ու լեցուն—
Եվ կարող է բազմանալ կրկին,—
Ես—երգիչ Նաիրյան վերջին
Կենդանի, անկեզ հյուլե,—
Զեզ, որ ինձ այսպես եք ձուլել—
Զոհում եմ աճա ջերմը գրչիս:

Եվ ցավով, ավա՜ղ տխրությամբ
Թախիծով եմ նշում ակամա—
Մեռնելով հայրենի հողում,
Հայրենի ավյունն <անրնթ.> ողուն
Չի հասնի նոր կյանքի սակայն,—
Միայն այն նունդը թեկուզ
Բյուրապատիկ անգամ չարչարած
Եթե իմիճ է իր մեջ արդեն փուչ…

Եվ որքան են կրկնել անցյալում
Այս մանվաճ համեգը նոճա,
Որ այդպես— առանց փորձելու
Երգում են կրկին— անխալ…
Ախ եթե դու է՛լ, օ, սի՛րտ իմ,
Օրերիդ կարոտի դիմաց
Այնճան վարժ երգեիր fո վիշտը
Ինչպես տերևները այս մերձիմահ…

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ, ԲՆԱԳՐԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

49—131-րդ տողերի տարբերակներ, բնագրային տարբերություններ և սևագրություններ.

Եվ ճշում է, ճշում մեր մոլի
Հայրենի դաշտերի Քամին՝
Մաքրելու համար միասին,
Ինչպես տեղն՝ արյունից ջերմաղի,—
Նաիրյան ճունդերն այն բոլոր՝
Կարովի, ճանճարի, երգի—
Որ կարող են մի նիհ երկիր
Ա ր գ ե լ ե լ— ճերկի համար նոր…

Աճռելի, եռանդուն, դաժան,
Ամենի կամքով զրաճավար,
Համակված աճռելի աճով
Հայրենի սիրտ սրբազան,—
Համակված է ինչպես մի գազան
Արճավառ զգեստի <աներեր.>ով,—
Համակված զարհուրիչ տապով
Իր երկրի անցյալից սրբազան,

Համակված անսանձ սարսափով,
Ինչպես արնագույն լարից
Յուլե՛րն են տրվում սարսափի,—
Իր ամբողջ խեղճությյան թափով—
Այրում է երկաթով ու հրով
Փոխրագույն ծիլ կամ շյուղ ամենայն,
Որ ունի երանգ ճախրյան,
Եվ կարող է վարակել մեզ սիրով...

Որպես սև, զազրելի զառանցանք,
Որ պատում է ոգին մարդկային,—
Որպես աճեղ դանիճ,
Որ, իբրև մանացու ճանճանք—
Ճանաչում է ոճի՛րն այն միայն,
Որի ճեղինակն ճանճապարտ
Հանձնված է իր <կարմիր> կացնին,—
Չգիտեր այդպես Հողմը մեր այն—

Մեր երկրի մարդագործ այն Քամին
Որ երկրի Հողմն է սիրող—
Իր երկրի ջուրն ու հողը սիրող
Եվ անգամ պանծացո՛ղ այդ սիրով
Այդ— անասնական— սիրով
Վարակված մարդկանցից առավել
Ջազրելի ու սև թշնամի...

Մեր երկրի ճոնդուն այն Քամին,
Հայրենի մեր Հողմը սիրող
Հայրենի ջուրն ու հողը սիրող
Էակից վատթա՛ր թշնամի...
Աշխարհի փրկարար այդ Քամին
Կարո՞ղ է արդյոք սիրով
Ընդունել— հին տուճն իր սիրող
Ջազրելի ճաշմանդամին...

Օ, այդ չէ սակայն զգրելի,
Որ ֆշում է աճռելի մի ճողմ
Թշնամու նման ամեն կողմ
Մեր երգի նար ծիլերն էլի՛:—
Այն երբ է եղել հարազատ
Իր երկրի, կամ օտար կողմերի
Մահաշունչ, դժնի ճողմերից
Նահյան երգի ճերկը— ազատ...

Քշել է մի՛շտ էլ նահյան
Երգերի սաղմը— համին,
Տեսել է բյո՛ւր բշնամի,
Բայց բացվել է էլի— բո՛րբ ու բուրյան:
Քշվել է, արվել ռանկոխ,
Խառնվել նրի ու փոշու,—
Բայց իբրև ոգի, իբրև շունչ՝
Պահել է իր սաղմն ինքնագո:

Ամեհի կամքով զրահավոր,
Աճռելի, եռանդուն, դաժան՝
Բոբնկված սակայն սրբազան
Համայն օրերի ահով՝

91—107-րդ տողերի այլ տարբերակներ.

Հնամյա աճռելի ոխով
Դեպի սև, անասնական
Այդ սիրով ոգին սակայն,
Սպարված «կուսության» ոգով
Էակները բոլոր ճողկալի
Նա ճնճում է ձեռքով <անդոք>
Հայրենիքն իր— հայրենի ճնճի,
Որ ցանի— ցնծալի գալիք:

Իր երկրի հանցավոր սիրով
Վարակված ճունդերն այդ սակայն
Հնճում է նա ճաճուճ իրական
Հայրենիքի սիրտ...
Նշելով գարշանքի կնիք
«Հնացյալ սիրտ» ճակատին
<անրնք.> ես դրած ճակատիր
<անրնք.> ճակատին Հայրենիքի:

Ամեն կամքով զարավար՝
Ամեն, եռանդուն, դաժան,
Սակայն սիրտը լցրած սրբազան
Ամեն կամքով զրաճավար,
Աճռելի, եռանդուն, դաժան
Համակված որպես բիրտ մի զազան
Արճագույն թշնամու առաջ

Հնամյա երկիրն իր սիրող
Էակից աճռելի թշնամի

Եվ աճապաճական սիրով մարդկանցից առավել

Թայց պաճել է կենդանի մի շունչ
Ինչպես սաղմը մնացյալ
Թայց իբրև ազի, իբրև շունչ
Պաճել է իր սաղմը ինքնագոն:—

Ո, այն չէ՛ սակայն զազրելի,
Որ էշում է աճռելի մի ճողմ,
Ամեն խանդով ամեն կողմ
Մեր երգի տերևներն էլի՛,—
Եվ երբ է եղել հարազատ
Մեր երգին հայրենի Հողմերի,
Կամ օտար, դժեի կողմերից
Շառաչող

Ո, այն չէ՛ սակայն զազրելի,
Որ էշում է աճռելի մի ճողմ,
Թշնամու նման, ամեն կո՛ղմ—
Մեր երգի տերևներն էլի:—
Ո, ե՛րբ է եղել <հարազատ>
<Նախյան երգի սաղմերին>
Հայրենի կամ օտար Հողմերի
Վայրենի ճախճիրից ազատ...

Ո, երբ է եղել հարազատ
Հայրենի կամ
Կամ օտար թշնամի կողմերի
Մաճաշուճ ընտանի ճողմերից

Ո, ե՞րբ է եղել հարազատ
Իր երկրի կամ այլ կողմերի
Մաճաքեր դժնի ճողմերից
Նախյան երգի բերքը— ազատ...

Ø, այն չէ զազրելին սակայն,
Որ էշում է հայրենի մի ճոպ,
Շյուղերի նման ամեն կողմ—
Երգեր ու ծիլեր կուսական,—
Եվ ե՞րբ է եղել խժակամ՝
Հայրենի, կամ օտար կողմերի
Տարաժամ, դաժան ճողմերից
Մեր երգի սաղմը— ազատ...

Քշել է միշտ էլ նախյան
Երգի սաղմը, ճաճախ դարձած սա՛ր—
Ø, միշտ էլ— ճողմերից հազար,
Աշխարհի բոլոր կողմերում...
Քշվել է, արվել ոռնակոխ,
Խառնըվել հազա՛ր անաշունչ
Ճամփեքի չրի ու փոշու,—
Բայց հառնել է էլի՛—

Եվ հազար ճողմեր <.....>
Ոտքերով հազա՛ր գետնահար,—
Պահել են միշուկը նրա հար
Ե՛վ աճեղծ, և՛ անխառն, և՛ վառ...
Ընկել է — իբրև սա՛ղմ կենդանի,
Ոգու ճո՛ւնդ իբրև անմահ,
Որ իճճով է միայն անմահ,
Որ իճճո՛վ, իճճ իր մեջ է անմահ,
Որ ուզում է Հողմը տանի...

Ø, այն չէ՛ սակայն զազրելի,
Որ էշում է անոթելի մի ճոպ
Շյուղերի նման, ամեն կողմ—
Մեր երգի ծիլերն էլի՛:—
Այն ե՞րբ է եղել հարազատ
Իր երկրի կամ օտար կողմերի
Մահաշունչ, դժնի ճողմերից
Նախյան երգի շյուղն— ազատ...

Քշվել է մի՛շտ էլ նախյան
Երգի սաղմը, ճորածիլ կամ բացված...

176—207-րդ տողերի տարբերակներ.

Իսկ գովք եմ երգում նախյան
Պանծալի ոգուն հայրենի,
Որ պահել է ճունդն հայրենի

Կենդանի, ինչպես սաղմն արյան:
Եվ գովե՛մ եմ երգում ցնծալի
Հանուն ճար, և՛ որդու, և՛ հոգու՝
Նախրյան բարձրաբերձ ոգուն
Եվ սաղմին նրա պանծալի...

Եվ նա գովք է երգել անմահ,
Գովք՝ անմահ հողմերին ու համուն՝
Շռինդով է աղչունել բշնամուն,
Որ բերել է ուզում իրեն մահ...
Հիմնով է դիմել ընդառաջ
Նախրյան ոգին կենդանի—
Ամենայն փառությանց ու մանի,—
Եվ ճառնել է միշտ անմահ...

Ես գովք եմ երգում <ցնծության>
Հողմերին, համուն ու հրին,
Որ անվերջ ոռնակոխ արին
Նախրյան սաղմն անկիզուն:
Եվ գովք եմ երգում վերջապես
Մանաքեր, վայրագ, ամենի,
Մանաշուն, ներքուստ ամայի
Այն վայրի ուժերին գրչակեր,—

Որ դարե՛ր, դարե՛ր, դեռ դարե՛ր
Վայրենի՛, վայրա՛գ, բարբարո՛ս
Խուժադուժ, խառնակ <անկեք.>
<Հեղեղներ> ինչպես— սուղարև
Պատմության, կյանքի <բնության>
Ուժերի նման կործանող
Փորձեցին մեր ոգին ծաղր—
Կոփեցին մեր ոգին անմահ...

231—456-րդ տողերի տարբերակներ, բնագրային տարբերություններ, սևագրություններ.

Շյուղերին, որ ընկնում են հիմա
Եվ արտում ու...
Եվ թույնով, թախիծով, խեղճությամբ
Որ ընկնում եք <անից> նվալով
Եվ մեռնում եք— դեռ շունչ չփչած.—
Եվ ա՛յդ է անա, անա այդ
Խեղճությունն է անա ձեր ներքին,
Որ թախիծ է տալիս իմ երգին
Եվ լցնում ոգիս տխրությամբ...

Եվ զարմանք է պատում, և անհուն
Կասկածանք, <չվարանք> անգամ
Թե ինչը ձեզ բերեց այդ֊տեղ,
Որ դարձած անդնմ այդ֊տեղ դուք...

Ինչպիսի՞ այդ հողմ էր հրկեզ,
Որպիսի՞ <աննիմն ուժ>,
Որ— լուծեց այսպես ձեզ ներքուստ
Եվ զրկեց ձեր ոգին...

Հնամյա անտառում բուսած
Օ, հայրենի անտառում
Հազար, և հազար, և հազար
Տարիներ արմատներ ձգած
Որքան հյուղ արձակած
Մի կաղնու սաղմն,— ասա,—
Անտառի ծիլերն,— ասա,—
Ասա ինձ աշուն հայրենի
Կարո՞ղ են ծիլերն այդ մի՞թե
Չուներնալ կատակած իրենց մեջ
Չլինել և ոչ մի <աերնք.>:

Կարո՞ղ է հողմերի շնչից.—
Ուշացած արտն անգամ հանկարծ
Տարածվել այնպես գեռնահարշ,
Որ ոչ մի ցորուն չփորձի
Գոնե մեջքը շտկել մի անգամ...

Կարո՞ղ է սերունդը վերջին,
Որքան էլ աճեղ հողմերում
Չուներնալ ոչ մի...
Կա՞ սերունդ արդյոք, որ
Նախընթաց սերնդից հանկարծ
Չուներնա ոչինչ ժառանգած
Իբրև չիդ, արյուն ու ավյուն:—
Որ փչող հողմերից

Օ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ
Անռելի բացիլ էր զազրելի,
Որ որդի պես, ցեցի պես փորեց
<Նաիրյան ֆար ոգու>
Որպես բույլ, բարակ <աերնք.>

Նախրյաճ հազարամյա
Իճճուբյան զարմով զրահավոր
Ձեր ոգու կեղևճ <ահա>,
Իբրև մաշկ երբեմնի զառամյալ...

Օ, այդ ի՞նչ, այդ ի՞նչ զարավար
Մի բացիլ էր՝ ոգու ցեց բոցե,
Որ այդհաճ ճեշտությամբ սղոցեց
Նախրյան իճճուբյամբ զրահավոր...
Ոգու ոգուռումճ հազարամյա
Սղոցեց ճեշտությամբ, ճեշտ
Եվ ուրդի նման մասվ ճերս,
Ինչպես մաշկ մարմնի զառամյալ...

Որ ինչպես ճիճ մրգի մեջ
Սողոսկած ուրճ ամեճից
Նախրճառում է ճուճդը

Ինչպես ճիճ ճեխած մրգի մեջ
Սողոսկած ուրճ ճաճճառեղ
Ամեճից առաջ— աճեղծ
Հաւճգերճ է կրծում

Այդպես մեճ երբեմն կարմիր
Պեռ աճեղծ բվացող խճձուռում
Կարելուց ճետո— խուռուճկ
Սողոսկած ուրդի ճետ ճաճկարծ

Օ, ցեցի նման աճարկու,
Բացիլի նման մի աճռես
Դա ճողմի սաղմճ է աճկեզ,
Որ կրծեց զրաճը ձեր ոգուս...
Եվ— ցեցի նման մտած ճերս,
Ինչպես ճիճ մի մրգի միջուկ,
Որ վաղուց դարձել է չուր...

Նա ցեցի նման մտավ ճերս՝
Փճուռելով դեռ աճեղծ մի միջուկ.—
Բայց... դարձել էր ուրճեճ պղտոր չուր
Ձեր ոգու միջուկճ ուրճեճ եղծ...

Եվ տեսավ, որ վաղուց ուրճեճ ձեր՝
Ձեր աճկար կարծրացած ոգու լոկ
Ուրճեճ չուր դարձած միջուկով—
Կեղևճ է նախրյաճ մճացել...

Եվ... մգլած մրգերի նման,
Որոնց մեջ սաղմն անգամ ինչ՝
Վաղուց է արդեն փչացել,—
Ընկնում եմ դուք խեղճ, ճալոով...

Որպես ճառագայթ անտես,
Նրա պես— ամենուր թափանցող—
Այսօրվա հողմերի հանդող
Ճառագայթը ձեր ոգին հանդեց:
Նա ցեցի նման մտավ ներս,
Որ ուսի ինչ մի միջուկ,—
Բայց... գտավ այնտեղ միայն ջուր,
Որ վաղուց նեխած էր արդեն...

Եվ ե՞ս էլ՝ միևնույն անտառի
Սրբազան խորհից բարձրացած,
Գագաթով աստղերին հասած
Մի վերջին սոսի կենդանի,—
Արդ ես էլ, միայնակ բարդի,
Ամայի անտառում ցցված՝
Արդեն ճար կացնով խոցված՝
Մնում եմ <արդեն> իմ ներքին...

Ախ, հանի՛ անգամ բարձրացա<վ>
Այդ կացինը, որ ինձ զգետնե,—
Եվ որո՞ւ փորձեցին գռնել
Արմատները երկիս կարծրացած,—
Դիմացած հանի՛ ճարվածի՝
Եվ սրից, և բնից խոցված՝
Հայրերիս ավյունով լցված՝
Չրկտրեց և ոչ մի կացին...

Ով ընկնում, ընկնում են կրկին,
Ինչպես տերևներ աշնան
Հայրենի ներկերում <իրենց>
Ցողուններ հայրենի երգի...
Ով ընկնում են, ընկնում կրկին
Եվ դեռ ճարք չյուղեր ճորընծա
Եվ տոկուն արմատից ճնծած
Ցողուններ բարձրարուն ու հին...

Եվ այդ ո՞ր, այդ ո՞ր սաստկան
Բնությամբ այդման իրոնիկ,—
Ձեզ հրեց դառն այս օրին
Հոգևոր կոչում սառնալ...

<Որ մի կին> ճեխած բերաճով՝
Ճճատամ, բարախակալ
Կենդանի կին իբրև կույս դարեկաճ
Համբույրներ սփռե վճարով...

Միևնույնն է, թե ճեխած բերաճով,
Թարախոտ մի կին հանկարծ
Ապրելու համար ցանկա
Համբույրներ վաճառել բատրոճում...

Ինչի՞ն է որդին ապրային
Լուսատեսք աչք, կամ ականջ,
Լսելու ձայներ, որ չկան
Աղբակույտի
Որպես <զի> գոյությունն իր պանի
Թավականն է որդին այդ եղկ
Երկու անցք միայն՝ մեկը բիչ ճեղ,
Իսկ մյուսը— ավելի...

Այդպես էլ դատ: Այո՛:— Ով ի՞նչ.
Գոյության համար ձեր գորշ
Գուցե ավելի և՛ պարզ,
Ե՛վ բազմիցս չտեսված գուցե—
Արդյոք այլ ասպարեզ չկա՞ր,—
Գործ՝ դնչի՛ն ավելի ձեր վայել,—
Որ թե ճեշտ, թե կուշտ ձեզ պահեր՝
Ով այլոց գոնե միտք չըզար:

Պեռ առաջ, վաղուց,— երբ դեռ
Խաղաղ էր <վարը> ճերմակամ,—
Իմ գլխին այս ճաղմն էր ճևում
Ձեր խղճուկ կանչերի ճեմ մեկտեղ...
Նա վաղո՞ւց է ձգտում իննձ խեղդել,
Բայց կամ չի ճասել գազաքիս,
Կամ փորել է <անընք.> արմատիս՝
Կաղկանձել մերթ «կիրթ», մերթ լկտի...

Ով գտնե
Խոպոտեց չինչ ձայնը ճոցա
Ով տաղանդը անգին— գանից,,—
Հոդմերի պես բերի, որ չտեց
Ով ոչ մի վսեմ երգի ճանճար:
Մարեցին իրենց ձիրը վերին
<անընք.> ճովերին

Կանչելով զոհերիկ հանգեր
<անբնթ.> անգետ

Ոմանք կան դեռ, կամ անցել են արդեն
Լրեցին ոմանք ճերկը երգի, ,
Սախեցին ոմանք <ձիրը վերին>
Եվ խաչակիր դարձան...

Եղծեցին իրենց ձիրը վերին

Իսկ դո՞ւք— իսկ դուք,
Մեր ճերկի զազրելի զարմեր,
Որ միայն <անբնթ.> սերմեր
Սփռեցիք ձեռքով ձեր ստուկ—
Քամո՛ւ պես ծախու, պիղծ ասես՝
Մերկանգամ ձեր ճոր մարմնին
Իբրև մի պատմուճան կարմիր
Փռեցիք յուրտերը ձեր սև:

Ո, հազար վախից զազիր
Պղծողներ հայրենի ճերկերի,
Ձեր ինչի՞ն էր փառը երգի,
Երբ խոսել եք անգամ հագիվ:
Այդ ոչինչ, որ երկիրը ձեզ
Չի տվել ճշույլ տաղանդի,
Մարդկային խիղճն եք
Վաճառում <անբնթ.> դեռ...

Այնինչ, միևնույնն է դա.
Որ նեխած, պիղծ, զարշահոտ
Բերանով այդ կինճ աշխարհում
Դառնալով թագուհի հանկարծ,—
Յանկանար ողջեսգի բոլոր
Հպատակ այրերն իր երկրի
Պարտադիր կերպով համբուրեն
Ամենայն ճերթով
Շրթունքներեն իր
Եվ անա,
Որ բոլորըս, իբրև օրենք,
Պարտավոր ենք նրան համբուրել՝
Ջմայլված բույրով բերանի...

Ոչ. համբույրն այդ կնոջ առավել
Կլինի նման ձեր դերին,
Երբ կամրով մի վերին

Թագուհիճ գառնար ես մեր—
Եվ, բեյալ անա երանից՝
Պարա եճ ճոչակել օրենճ,
Որ բոլորը երաճ ճամբաւրեճ
Ջմայլված բայրից բերաճի

Սակայն մեր այս <գարշ> բերաճով
Թագուհին ճեֆիաք է եբի,—
Կեճդանի՛ եճ այսօր գուճ դեռ
Իվ երգում եճ երգեր ճարանոր
Եվ մինչդեռ այն գարշ
Թագուհու ճամբայաւով գարշ
Ձեր երգած երգն ստարամարշ
Ջմայլում են...
Եվ նրա ֆոռ— արամիա
Նախարարն ճոչակեց օրենճ,
Որ բոլորս երաճ ճամբաւրենճ՝
Ջմայլված բայրով բերաճի...

Նրանից չի՞ արդսոճ <կարաժ՝>
Նրանից... հինգ դար առաջ
Չէ՞ որ <անդնթ.>— մոգն՛ր՝
Նա տեսել է անցյալն ու գալիքը—
Միճչ կատարումն աչխարհի
Օ, մի չճչիճ խաղալիճ
Այդ ճաճճարի ճամար էր

Բայց չէ՞ որ դուճ երեկ դեռ կայիճ,—
Եվ անգամ գործերում ձեր ճանախ
Հճչում էր ճաիրյան չանճ,,—
Եվ <աճերեր> ձեր շճչում երգային
Եվ կայիճ գեռ երեկ ձեր մեջ
Արդեճ այր դարձած բարձրաբերձ—
Ե՛վ ոգով. և՛ շճչով աճեղծ
Նաիրյան բարդիներ ածող...

476-րդ տողի սնագրություն.

Մանացու այս երգը ճոմա

ՉԱՐԵՆՑ ԵՎ ԳՅՈԹԵ

Չարենցը Գյոթեի հետ գրական երկխոսության մեջ մտավ իր ստեղծագործական կյանքի հասուն շրջանում՝ «Գիրք ճանապարհի» ստեղծման և դրան հաջորդող տարիներին։ Նախկինում, երկու էպիգրամի բացառությամբ, գերմանացի բանաստեղծը Չարենցի գրական կյանքում ակնհայտ ներկայություն չի ունեցել։ Այդ երկու էպիգրամներում՝ «Ֆաուստ (Թեմա։ Սևագրություն)» (1928) և «Մեֆիստոֆել» (1929) հայտնըվում են Գյոթեի հանրահայտ ստեղծագործության երկու հիմնական կերպարները։ Ֆաուստի կերպարի լրջությունը Չարենցը դնում է էպիգրամի շարժի մեջ և այդ ընթացքում բացահայտում իրեն ու իր ժամանակը.

Չէի՜ր ձանձրանա դու գիտությունից,
Չէի՜ր ձանձրանա սիրուց ու կյանքից,
Թե ունենայիր բշնամիներ մեծ,
Թե նրանց շարքում գեթ մեկը լիներ
Մոֆիդ հավասար... Այժմ դո՛ւ ես լոկ
Միակ բշնամիդ... Ու ձանձրանում ես։—

Իսկ Մեֆիստոֆելը իր հերթին է խոսք ուղղում բանաստեղծին և նրան ապրելու դասեր տալիս.

Եվ ասաց նա ինձ. «Լսի՜ր, լսի՜ր.—

Ափերից ճոռոգող fո էներժին,
Որ տալիս ես դու գինու, կանաճց,—
Տո՛ւր անպարտելի խոսքիդ, գրչիդ,
Դարձու այն մալդ, բույն ու բանակ...»—

Եվ ես ասացի.— լսո՛ւմ եմ, սի՛ր։—

Ուրեմն՝ նախամուտքն ու գործող անձինք արդեն կային։ Կար Գյոթեն, կար Ջարենցը որպես գրական կերպար և կային Ֆաուստն ու Մեֆիստոֆելը, բայց լուրջ խոսակցությունն առջևում էր, որն էլ ծավալվում է «Գիրք ճանապարհիցս սկսած։

«Գիրքը ...» բացվում է «Պատասխան Գյոթեին» ուղերձով, որով և ընթացք է առնում երկու բանաստեղծների բուն երկխոսությունը։

«Պատասխանի» շարժառիթը Գյոթեի քառատողերից մեկն էր, որը ևս Ջարենցը թարգմանել և «Գյոթեից» վերնագրով վետեղել էր իր գրքում.

Բարեկա՛մ, անխախտ ճասկացիր դու սա.—
Դառում, ուր Ոգին ու Միտքն են ճարդում—
Լոկ առաչնորդվել կարող է Մուսան,
Բայց ինքը արդեն չի՛ առաչնորդում։—

Թարգմանությունը կատարվել է 1932 թ. հոկտեմբերին, որից հետո՝ 1933-ի ապրիլի 14-ին գրվել է «Պատասխանը»։ Ընդ որում՝ Հ. Կոջոյանի հրաշալի նկարագարդումով այն կարծեք յուրովի իմաստավորում է Ջարենցի դիմանկարը, որով և բացվում է գիրքը.

Օ՛,Ոլիմպացի՛, այս աշխարճում երբ
Չեն լինի Ոգու տերեր ու ճորտեր—
Կճնճե կրկին քազմաբեղուճ քեռ,
Եվ կրկի՛ն, կրկի՛ն ուղիներում մեր
Երգի դիցուճիճ մեզ կառաչնորդե։—

Գյոթեն բանականության առաջնորդությամբ է տեսնում Մուսայի առաքելությունը՝ ճշգրտորեն արտացոլելով ռացիոնալիզմի դարաշրջանի բուն էությունը։ Ջարենցը Ոգու ազատության մեջ է վերագտնում Մուսայի առաջնորդությունը։ Սա Ջարենցի համար սկզբունքային դիրքորոշում էր, որովհետև կանգնած էր 1937 թվականի մեծ արհավիրքի առաջ։ Եվ եթե նա հեռանար Մուսայի առաջնորդությունից, ուրեմն՝ պիտի զիջեր նաև բանաստեղծի իր դիրքը, կորցներ պայքարի իր զենքը, մոռանար իր դերը նոր հավատաքննության պայմաններում։ Այդ իսկ պատճառով այս տարիներին Ջարենցը մեկ

անգամ չէ, որ անդրադարձել է իր Մուսային և փառաբանել նրան։ Դեռևս 1929 և 1930 թթ. գրած «Մուսային» վերնագրով երկու բանաստեղծություններին («Նախ՝ աղջիկ էիր դու մի հառաչակ», «Ահա կրկի՛ն ինձ հետ ես...») գալիս են ավելանալու նորերը՝ «Իմ Մուսային», «Քույր իմ քարե... (ռոնդո իմ Մուսային)», գրված 1937 թ. մարտի 7-ին։ Դրանցում իր Մուսային Չարենցը համարում է «միակ բարձր Ղեկավար» և խնդրում՝ «Ղեկավարի՛ր լոկ դու ինձ արդ»։ Շարունակելով սկսված երկխոսությունը՝ Չարենցն ընդունում է Մուսայի առաջնորդությունը, և դա վերստին կրկնում իր կյանքի ամենաողբերգական շրջանում, երբ ինքը ամենածանր պայմաններում անգամ մազաչափ չդավաճանեց իր ներշնչանքի Աստծուն։ Այսպիսին էր Մուսայի հանդեպ ունեցած վերաբերմունքը, որի վկայությունը հիշյալ ռոնդոներից հատկապես այս մեկն է.

Մաքուր իմ սեր, միա՛կ իմ զեն,
Միակ իմ ճար, իմ սար, իմ զարդ,—
Հարս իմ լուսե, քույր իմ հպարտ,—
Իմ անաղարտ սիրո հույզեր,—
Ո՞ւյս իմ կյանքի, ճո՞ւյս իմ զվարթ...

Ամեն վայրկյան ու ակնթարթ
Դո՛ւ ես միայն ինձ հետ կիսել
Թե՛ վիշտ, թե՛ վերք, թե՛ երգ, թե՛ վարդ,—
Մաքուր իմ սեր։—

Ինչպես անգետ մանկան համար
Թռիչք ու վազք, ու կարուսել,—
Ինչպես երգչին՝ ճմուռ ճնար,
Ջարախարիճ անկար սուսեր,
Ի՛մ զեն, ի՛մ սար, իմ ճո՛ւր անմար,—
Անճառ իմ սեր...

Գյոթեի հանդեպ Չարենցի վերաբերմունքը հետևողական էր և լուրջ։ Իր դիրքորոշումը ճշգրտելուց հետո՝ տարբեր առիթներով նա անդրադառնում է իր մեծագույն նախորդի ստեղծագործական ու մարդկային նկարագրին։ Չարենցը շատ բարձր է գնահատում նրան՝ Թումանյանին նվիրված քառատո-

ղևրից մեկում Դյոթեի անունը հավասարի իրավունքով դնելով Հոմերոսի կողքին։ Իսկ նրա հանդեպ ունեցած վերաբերմունքը բացահայտում է «Գիրք ճանապարհի» ժողովածուի «Գիրք իմացության» շարքի «Դիստիքոսներ» բաժնում։

Դիստիքոսի ժանրը Ջարենցը վերցրել էր Դյոթեից, թեև հայտնի են նաև այլոց, այդ թվում նաև Շիլլերի դիստիքոսները։ Ջարենցի ներշնչանքի ակունքը սրոշակիորեն Դյոթեն է, որի «Տարվա չորս եղանակ» դիստիքոսների «Գարուն» ենթաշարքից էլ նա վերցրել է իր հիշյալ բաժնի բնաբանը՝ «Դիստիքոսնե՛ր, համարձակ առա՛ջ»։ Այստեղ ևս Ջարենցը շարունակում է սկսված երկխոսությունը՝ ակնարկելով բանաստեղծի ու նրա միջավայրի կապը և ապա՝ բանաստեղծ ու պետական ծառայող անհամատեղելի թվացող վիճակը։ Այդ նպատակով Ջարենցն առանձնացնում է աստվածային հանճարը գայթակղության ենթակա երկրային մարդ արարածից և նրան շողոքորթ սիրով կամ հալածանքի խարազանով ոչնչացնող միջավայրից։ Ասվածի վկայությունը 22-րդ դիստիքոսն է.

Քո ճանճառո՛վ բարձացար դու դարից fo, կյանքից, հեզանի՛ց իսկ.—
Ո՞նց fo ոգին չմեռավ— եղկ ու չեչին վայմառում։—

Վերստին Ոգի և այս անգամ արդեն ստեղծագործական ազատության ու գաղջ միջավայրում թռիչք պարգևող ոգի, որը, սկսված երկխոսության տրամաբանությամբ, ամեն ինչից վեր է դասում Մուսային։ Ստեղծագործ հանճարի և պետական ծառայողի բախումը աստիճանաբար սրվում և ակնհայտ է դառնում 27-րդ դիստիքոսում.

«Ո՛չ կա միջուկ առանձին, ո՛չ կեղև— դրանք միասին են».—
Դա՞շնէին սակայն իրար հետ— fo կեղևն ու միջուկը, Վարպե՛տ։—

Ջակերտների մեջ վկայաբերելով Դյոթեի «Ֆիզիկոսին» բանաստեղծության տողը՝ Ջարենցն ակնարկում է այն անհամապատասխանությունը, որը կարող էր լինել հանճարեղ բանաստեղծի և արքունի գաղտնի խորհրդականի միջև։ Անհաբիր այս վիճակը 28-րդ դիստիքոսում նա համարել է «սի-

գիֆյան աշխատանք», երբ հակադրվում են դաշնության ձգտումը և շրջապատի անդաշնությունը։ Այս վիճակը Չարենցը հատկապես սուր էր զգում՝ կապված իր օրերի ու շրջապատի հետ, նկատի ունենալով մի կողմից իր և յուրայինների ընդդիմադիր ոգին՝ ուղղված ստալինյան վարչապետության դեմ, իսկ մյուս կողմից հաճոյակատարների հաշտ խմբերը՝ ի փառաբանություն նորընծա միապետի։

«Չանազան բանաստեղծություններ և թարգմանություններ» շարքում Չարենցը զետեղել է Գյոթեից կատարած մի քանի թարգմանություններ՝ «էլեգիաների» «Հռոմեական էլեգիաներ» բաժնի հինգերորդ բանաստեղծությունից մի հատված («Չգում եմ խնդուն՝ դասական հողով եմ կրկին ներշնչվել ես»), «Անակրեոնի գերեզմանը», «Թափառականի գիշերային երգը» (երեք տարբերակով), «Վենետիկյան էպիգրամներից» հինգերորդը («Ես պառկեցի գոնդոլում...»), «Մատրովակ», «Երգ և քանդակ», «Պինդ և ամուր» բանաստեղծությունները։ «Երգ և քանդակ»-ում Գյոթեն խոսում է ստեղծագործ մտքի անսահման հնարավորությունների մասին, երբ պոետը ձեռքով կարող է «բռնել հոսուն բնությունը», հարկ եղած դեպքում կարծրացնել ջուրը, միայն թե մաքուր լինեն նրա ձեռքերը։ Այսինքն՝ եթե այդ ձեռքերը մատնագիր չեն հորինում և զրպարտագիր չեն բազմացնում։ Գյոթեի բանաստեղծությունը Չարենցի համար ուներ խորապես արդիական իմաստ, որովհետև արտացոլում էր այն, ինչ կատարվում էր իր կողքին։

Նշված գործերը Չարենցը թարգմանել է 1933 թ. մայիսի 17-21-ին։ Ավելացնենք, որ մինչ այդ, 1932-ին Գյոթեի մահվան 100-ամյակի առթիվ, որ նշվում է հանրապետությունում, երկու տարբերակով թարգմանել և տպագրել էր «Ֆաուստի» «Երգ լվի մասին» հատվածը։ Ամենայն հավանականությամբ այդ հատվածն էլ Չարենցին ներշնչել է մի քանի տարի անց դրելու իր «Կար մի պոետ միամիտ» տողով սկսվող պոեմը։ Ընդհանրությունն ակնհայտ է. Գյոթեի լուն չքանշանակիր միհիստր է՝ «Պալատում ամբո՛ղջ նրա ցեղը դառնում է թե՛ հայտնի, թե՛ մեծ»։ Չարենցի պոեմի տարականը ևս ազդեցիկ «դեմք» է, որ, բեղերը սրած, զինվորական խրոխտ քայլվածք

քով պտտվում է միամիտ պոետի շուրջ բոլորը և մխիթարանքի խոսքեր ասում նրան։

«Գիրք ճանապարհի» գրութ յան-տպագրութ յան օրերին է վերաբերվում Չարենցի խոստովանութ յուններից մեկը, որ վկայակոչում է հուշադիրը.

Չեսի թագավորութ յան մասին մեծ պոեմ եմ գրելու՝ մի փիլիսոփայական, մի փիչ գյոթեական, մարդկային ոռոնող մտքի ու ոգու խորհուրդները բացահայտող, որպես ստեղծագործական ծրագիր ճայտնում էր նա։

(Ս. Կուրտիկյան, Մի ժամ Եղիշե Չարենցի հետ.— Հուշեր Եղիշե Չարենցի մասին, էջ 428)։

Չարենցի այս հղացման արձագանքները կան «Հերոսի հարսանիքը» դրամատիկական պոեմում, «Եվ որքան տխուր է իսկապես» տողով սկսվող անտիպ երկում, որի մասին խոսք կլինի ստորև։

Չարենցը Գյոթեին անդրադարձել է նաև «Գիրք ճանապարհիից» հետո, իր կյանքի ամենածանր օրերին։ Ամենայն հավանականութ յամբ նա ցանկացել է թարգմանել «Ֆաուստը», որից երկու հատված հայերենի է վերածվել 1936-ին։ Այդ հատվածները «Ֆաուստի» առաջին մասից են։ Չարենցի ֆոնդում պահպանվում են ինչպես այս, այնպես էլ «Նախախաղ թատրոնում» գլուխների տողացի թարգմանութ յունները, որ կատարել է Երևանի համալսարանի դասախոս, Գերմանիայում բարձրագույն կրթութ յուն ստացած Ս. Մանուկյանը։ Ասենք նաև, որ Չարենցի գրքերի մեջ պահվում են Գյոթեի երկերի գերմաներեն և ռուսերեն առանձին հրատարակութ յուններ, որոնց շատ էջերի արանքում Չարենցը դրել է նշաթերթեր։ Չարենցի ֆոնդում պահվում է նաև Գյոթեի մի նկար, որը իր կրտսեր բարեկամին է նվիրել Ա. Իսահակյանը։

Չարենցը փորձել է նաև գեղարվեստորեն մարմնավորել Գյոթեի և նրա ստեղծագործութ յան գլխավոր հերոսի՝ Ֆաուստի կերպարները։ Ֆաուստը՝ «ըստ Գյոթեի, երկար մորուքով, մազերով, բարձրաճակատ և արի» կերպավորվել է Չարենցի կյանքի վերջին տարիներին գրած «Հերոսի հարսանիքը» դրամայում, որի ավարտուն տարբերակից, դժբախտաբար, մնացել են սոսկ պատառիկներ։

Կերմանացի մեծ բանաստեղծի ու մտածողի գեղարվեստական կնքպարի ստեղծմանն է նվիրված ԳԱՖ ՉՖ 108 համարանիշով պահվող պոեմը, որն առ այսօր մնացել է անտիպ։ Ինքնագիրը թերի է, համարակալումն սկսվում է 6-րդ էջից և հասնում մինչև 14-րդ էջը։ Գրել է նեղ, փոքրիկ թղթերի վրա, կապույտ թանաքով, երկու երեսին։ Համարակալման մեջ Չարենցը թույլ է տվել վրիպումներ՝ 10 և 11-րդ էջերի համարակալումները կրկնվում են, իսկ 12, 13, 14-րդ էջերի երկրորդ երեսները համարակալված չեն։ Էջերի տողաքանակը տատանվում է 17—24-ի միջև։ Եթե ընդունենք, որ յուրաքանչյուր էջում միջին հաշվով կա 20 տող, ուրեմն պոեմից պակասում է մոտավորապես 5 × 20 = 100 տող։ Դա թեև քիչ չէ, բայց և պահպանված մասով պոեմը բավարար պատկերացում է տալիս Չարենցի մտահղացման և իր առջև դրած խնդրի լրակատարման չափի մասին։

Պոեմն անթվակիր է։ Կարելի է ենթադրել, որ գրվել է 1936 կամ 1937 թվականին։ Դուցե այն օրերի արգասիք է, երբ թարգմանում էր «Ֆաուստի» նոր հատվածները։

Այն տեսքով, ինչպես որ պահպանվել է՝ պոեմն ըստ ամենայնի առաջին գրի արդյունք է։ Կան ջնջված, վրան կամ էջի կողքին գրված տողեր։ Երբեմն դժվար է գտնել էջի կողքին գրված տողերի տեղը, քանի որ չկան սլաքներ, իսկ իմաստային անցումը այնքան էլ հստակ չէ։ Շարադրանքի մեջ երբեմն բացակայում են ներքին կապերը, անցումները, կան անրնթեռնելի բառեր։

Պոեմն սկսվում է հանճարեղ գրողի և պետական պաշտոնյայի դիրքերի հակադրումով։ Մի կողմում երգի «արքան է, մյուսում՝ «խղճուկ մինիստրը»։ Չարենցը Գյոթեին համարում է «վերջին ոլիմպացի», որի համար, սակայն, անհարիր է «ոգու ողջ խոյանքին տիրող» նրա վիճակը։ Այնուհետև Գյոթեն գնահատվում է որպես տիեզերքի գաղտնիքներին հասու փիլիսոփա։ Քննելով իր հերոսի պետական և պոետական վարքը՝ Չարենցը մի շրջադարձով վերաճշտում է իր վերաբերմունքը և ապա խոսքը շարունակում այս ոգով.

Ս. թեշ եմ ասում... Արզարև,—
Այդ վերջին ոլիմպացին
Ոչ միայն պետ ճանեարեղ—
Այլև «այր» էր— անշափ խելացի...

Գալիս է Գյոթեի իրատես ու շրջահայաց դիտողականությունը, գիտական փորձերը բնութագրելու պահը, և Չարենցը. կայսրինը կայսրին մատուցելուց, այսինքն՝ պաշտոնյա Գյոթեի մասին իր կարծիքը հայտնելուց հետո, հասնում է Աստծունը Աստծուն վերադարձնելու անհրաժեշտությանը։

Ազգային և համրային կյանքով իմաստավորված կենսափրկական ժանրը Չարենցի տարերքն է, որի ներշնչանքը ժամանակի ընթացքում ծնունդ է տվել գրական և մշակութային գործիչներին նվիրված ոչ քիչ թվով երկերի՝ «Չարենց-նամե», «Անակնկալ հանդիպում...», «Դեպի լյառը Մասիս», «Կոմիտաս», «Հիշատակին», «Գովք Արուսին» և այլն։

Չարենցը Գյոթեին մարմնավորել է նույն այն սկզբունքով, որով վերջինս կերտել է Ֆաուստի կերպարը։ Մեծ բանաստեղծը երևում է աշխարհի առեղծվածները մեկնելու բնագետի ու փիլիսոփայի իր հարցասիրություններով։ Նրա մտքի առջև ծավալվում է տիեզերքը, բացվում է բնության աշխարհը՝ բույսերով, կենդանիներով, ջրերով ու քարերով, բազմազան երանգավորումների մեջ ծիածանվում են աշխարհը դեղազարդող գույները։ Չարենցը նկատի ունի այն, որ Գյոթեն գույների տեսության և շատ այլ հարցերի մասին գրել է առանձին աշխատություններ, գիտականորեն զննել տիեզերքը։ Եվ, ընդհանրապես, ըստ Էքերմանի, Գյոթեն իր գիտական հայտնագործությունները երբեմն ավելի բարձր էր դասում, քան՝ գեղարվեստական ստեղծագործությունները։ Եվ հաճախակի կրկնում էր, որ իր գիտական աշխատանքները այնպես չեն գնահատված, ինչպես հարկն է։ Այսքանով հանդերձ, Գյոթեն միշտ հետամուտ էր մարդու ներքին էության ճանաչողությանը, որը, ինչքանով ճանաչելի էր, ինչպես բնության աշխարհը. նույնքանով էլ անճանաչելի էր իր անկրկնելի անհատականությամբ և փոփոխական էությամբ։ Եվ դրա համար ոչպես ճանաչողության բարձրագույն նպատակ մնաց մարդը։

Պոեմը Չարենցը գրել է ազատ, հոլանուտ ներշնչանքով,

անմիջական պոռթկումով՝ առանց իրեն կաշկանդելու հանգ ու չափի պարտադիր «բռնությամբ»։ Գրել է, դարձյալ պահպանելով ներքին հոգևոր կապը մեծ բանաստեղծի հետ և անգամ մի տեղ խոստովանել, որ ահա Գյոթեն այսքան բան գիտե, իսկ ինքը՝ ոչ։ Կարելի է ենթադրել, որ աշխարհաճանաչողության անհագուրդ պահանջն է նրան հաղորդակցել Գյոթեին ու նաև հնարավորություն տվել վիճելու նրա հետ, բայց և առավել չափով՝ հիանալու նրանով։

Առհասարակ դասական ժառանգության, մասնավորապես Գյոթեի ստեղծագործության հանդեպ Չարենցի ունեցած վերաբերմունքը նկատվել ու գնահատվել է դեռևս 1936 թ.։ «Չարենցը և կլասիկ պոեզիան» հոդվածում Ս. Հարությունյանը գրում էր.

Պատահական չէ, որ հանճարեղ Դանթեին հաջորդում է կուլտուրական հսկա Գյոթեն: Գյոթե և Չարենց— դարձյալ մի չափազանց հետաքրքրական պրոբլեմ: Հատկապես վերջին տարիներին, երբ այնքան լայնացավ ու խորացավ Չարենցի պոետական ստեղծագործության ճուռը, նա խոշոր տեղ է հատկացնում Գյոթեին (ԳԹ, 1936, № 4, 12 փետրվարի):

Ահա այս հետաքրքրությունների ծնունդ էր նաև նշված անտիպ պոեմը, որը պահպանված ծավալով (290 տող) ներկայացնում ենք տպագրության։

«ԵՎ ՈՐՔԱՆ ՏԱՈՒՐ Է ԻՍԿԱՊԵՍ...»

Եվ որքա՜ն տխուր է իսկապես,
Եվ որա՜ն է անիմիճ մեր «արճեստը»,
Որ անգամ մեր արհան մեծամեծ
Դառնալու <է> խղճուկ մի «միհիստր»,—
Անգամ հա,— անգամ անայլայլ
Այդ ... «վերջին ոլիմպացին»,
Որ գոնե հանուն իր այդ <անվան>—
Լինելու էր այնհան խելացի,—
Որ տալով անգամ <կեսարին>,
Ինչ կեսարինն է,— օ, կյանք,—
Գոնե իմիճ իր մեջ անհարիր,
Անդրվելի պահեր— անգամ
Եթե ոչ «գլոռնի» երգահան,
Գոնե մեծ գիտուհի, հանճարեղ—
Ստացողի՛ գոնե իմիճակյանի
Վեճությո՛ւնն ու պարծանիճ արդարև:—
Եվ որա՜ն է անհարիր իրոմ
Ոլիմպյան այդ չարաբաստիկ
Ոգու ողջ խոյանիմին տիրող
Ախ իրոմ ուշացած, վերջին
Այդ ոլիմպացին,—
Ջնայած տիեզերիճ ընդգրկող
Իսկապես որ անհուն իր ոգուն,—
Ջրնայած աշխարհի ու կյանքի
Ցարին ու Բարուն հավասար,
Նո՛ւյն անկիրք ոգով, հազա՜ր
Իր ոգու վեճությամբ.....,—
Ջրնայած ոլիմպյան ամբողջ

Խաղաղությամբ անկիրճ ու աննուն
Ն՛վ միկրո— և՛ մակրոկոսմ
Հավաաա՞ր <անընք.> է
Ոլիմպյան իր նմայուն ոգուն,—
Գոնե այր սրտին է ինչպես
Վայելում պետական, եթե ոչ
Պռեսական չնչին ու անգո,—
Հանուն իր <անընք.> այր գոնե՝
Գոնե այր— լեգենդ դարձած դեռ
Կհնարենք ոգով— ոլիմպյան
Խաչված ոգու վեճափառ
Վարքն— աչիից չգցելու համար,—
Նա պիտո է, որ այս հասկանար՝
Իր այր— եթե ոչ իբր պռետ,—
Հանուն իր վարքի այդ գոնե,—
Նա պիտո է, որ գոնե ֆիշ,
Գոնե լավ պահերին պատշաճ՝
Իբրև այր գիտուն ու երգիչ,
Որ՝ հայարտ հաննարով երգի—
Ով դրանով լոկ— այլ շատ
Իր շուրջը նեմող այրերի
Գործերին գոնե հավասար—
Ցգալու իրեն և՛ այր,
Ն՛վ— նրանց չափ գոնե— դեկավար՝
Օգտակար երկրին հայրենի...
Ո, ինչ եմ ասում... Արդարև,—
Այդ վերչին ոլիմպացին
Ոչ միայն պռետ հաննարեղ—
Այլև «այր» էր— անչափ խելացի...
Նա գիտեր, որ պիտո է հացին
Իբրև հաց նայել— և չրին,—
Իբրև չաւր... որ հացից բացի—
Կա նաև կացին ու կարտո,
Ով վառող կա— հացին խանգարող,
Ով արոտ կա— օգտակար հացին...
Նա գիտեր, սրանցից բացի,—
Որ— կա կարիք և կա սեր,—
Որ— կան կրեր կյանքում սև,
Ով կան հուզեր երկնածին...
Նա գիտեր,— ոլիմպացին,—
Որ— կա կշիռ, կա նժար,—
Որ— կշիռ է— այն, որով fար,
Կամ պղնձե, կամ այլ՝
«Քար» անվանվող fարերով

Շուկայում կոպիտ, օգտակար
Իր կյանքի նման ծանր, համբերող
Բարիճներ է չափում գյուղացին:
Իսկ նժարը...— Մի՞թե չգիտեք.—
Թե չգիտեք— իմացիք.—
Նժարը— վերև է, կապո՛ւյտ,
Նստ, աննկիր եքեռում.—
Աստղաբույլ է ճեռու— նժարը:—
Կարելի է տեսնել գիշերով:—
Նժարը վար բերելն— աննման է:
(Այնման փոքր է ճենց իմը՝ մեր աշխարհը...)
Հիմարն է միայն, որ ճեռուն
Հառելով աչքերով երերուն—
Նրազում է— իչեցնել նժարը,—
(Այդ հիմարը կարծում է երևի,
Թե խելքն են նրանով կշռում,
Որ չգիտեն հիմարն ու խելացին...)
. . . . . .
. . . . . .
Մենք առանց նժարն այդ ճեռու
Երկնքից գետին բերելու—
Ով առանց կշրռելու, իհարկե,—
Կարող ենք անսխալ ասել,
Որ Իրոք վերչին ոլիմպացին
Ոչ միայն ճաննարեղ էր ամպածին,—
Այլև այր էր— անշա՛փ խելացի...

Այն ամենից բացի, որ ասինք,—
Նա գիտեր, իբրև այր խելոք,—
Համարյա այն ամենն իրոք,
Ինչ որ կա աշխարհում,— հազիվ,
Օ, հազիվ թե մնացած լիներ դուրս
Ուղեղից հաննարեղ ու լուրջ
Միայն մանր մանրուքն ավազի...
Սկսած ծովերի ավազից,
Ծովերի չրից և չրում
Բնակվող բազում, անհաշիվ
Ձկներից, օձերից, բույսերից
Ով այլ մանր ու մեծ, շեղ ու շիլ
Անասուններից,—
Մինչև ծիրն ճեռու աստղերի,
Դեպի վեր անվերջ և անվերջ վար,—
Կենդանյաց, անասնաց, բույսերի,
Քարերի, մետաղաց,— և այլ

Ամենայն ինչին բյուրանքիվ,
Իրեն ամենայն և իրոց
Մեջն ու կեղևն անբաժան,—
Եվ ուժերն ու կշիռն իրերաց,
Եվ հատնում անհատնում գոյի,—
Եվ անգամ հայերի ու վրաց
Հայրենյաց լեռներն,— ու Նոյի
Տապանի տեղն անգամ գիտեր
Հանճարեղ իմաստուն այրն անհուն,—
Հանճարեղ պռետը— և— նույն պահուն՝
Այր վերջին— անշափ խելացի՛
Հանճարեղ ոլիմպացին...
Այրն անգամ պետական—
Սև համազգեստ հագած,
Կրծքին՝ շքանշան,
Եվ ժապավեն կապույտ՝ մշտական
Ճշգրտությամբ կապած,—
Այս բոլորն, այո՛,— բայց ո՛չ,—
Ո՛չ բոլորն իհարկե, այլ միայն
Ինչ պիտանի էր լայն
Երկրային, ծանր իր ծիր <ին>,
Ոչ ուղիղ—էլիպսային,
Այլ— առանց ոլորվող,— այլ շատ
Սուրանկյուն կտրտված,—
Տրբեմն— իրարից հատված
Եվ մոտ չեկած էլ իրար
Իր ծիրերի կտրած գծերով,—
Ոտպիսի՛ հետ, բացերով,
Բնության մեջ— լեռներ ծնող,
Իսկ հանճարեղ պռետի ծիրում
Ինչպիսի՛ ոգու կայծակներ
Եվ ծագեր, և— <անընդ.>:
Անվոր բացերում է
Որ հղում է ոգին— հուրին իր՝
Մնված բացերում
Այդ— ընթացի չտրված՝
Մայրերը իրարից հատված
Եվ մոտ չեկած էլ իրար <.....>...
Բայց— իրերից բացի այդ բոլոր,
Քարերից, բույսերից, մետաղից,
Հատկություններից ամենայն աղի,—
Գոյությից բացի <զարտ>ուղի՝
Միրերով, էլիպսերային
Կաքե ծիրուց աստղային—

Աստղերի՜, մոլորված, համատեղ—
Համ— հյուղեռսության, որ կոչի՝
Հազմ սաղմնային հյուղոսի՝
Կամ— տիեզերական փոշի,
(Կամ՝ աստղային սաղմերի դուման) —
Այս ամենի ձևերից,—
Սաղմնային վիճակից մինչև մաճ,—
Եվ կրկին մինչև ևո՛ր առնչական
Նոր ոզորում ու եռում և՛ բազում,
Ե՛վ բազում, և՛ բազում,—
Եվ անթիվ, և՛ անա, և անվե՛րջ
Գեությանց ձևերից բացի,
Որ գիտեր Դյոթեն,—
(Որ գիտեր ո՛չ միայն հանճարեղ
Բանաստեղծն ու գիտունն անպարփակ),—
Այլև— ճիմնականում— գիտեր
Բնության մեջ լեռանց
Հայկական Պարեր, շղթաներ ու Ալպեր:
Երբեմն վեզուվներ ծնող,—
Բոլոր ընդհարումն իր ծիրի,
Ընթանում էր ոլով նա միշտ,—
Ո՜վ գիտե— ոզում հանճարեղ
Ի՞նչ հրաշքներ է ծնում...
Ոճ, ոզու ոլոիսի՜ կայծակներ, և բոցեր, և ծագեր ծոող
Քրեր են հուշում և անդունդ ընդհարումներն այս ծիրի,—
Այս բացեռում է անա՝ կոլրված և չեկած էլ մոտիկ՝
Այս բացերի վրայով իր ճոռոզ ծիրը գծող
Անդունդներում է անա, որ հանճարեղ ոգիները,—
Եվ փոշի՜ աստղային՝ ապագա անմահ երգերի ոսկե սաղմ—
Եվ— արդեն վա՜ռ աուներ,— և երբեմն անգամ ամենի
«Ֆաուստի» հղացման նման— Տիեզերքներ են կեզ...
Այս բոլորն անա,— այս ամենը,— և էլի կրկին ու կրկին
Այլ բազմաթիվ, և բազում, և բազում, և բազում, և բազում—
Գոյությանց ձևերից բացի,
Որ գիտեր Դյոթեն,—
Եվ գիտեր— մասամբ— ո՛չ բոլորը
(Ո, ինարկե, լոկ այն, որ հարկավոր է
Եվ— իրոք անշափ խելացի
Վերջին ոլիմպացին,—
Իսկ ես չգիտեմ...):
Ուրեմն՝ կյանքի, բնության,
Տիեզերքի ամբողջ մեծ,
Տիեզերքի և՛ փոքր,—
(Ա՛յնքան անսահման ոճնությամբ)

Նայն ճանճարեղ, ստեղծիչ՝
Ով գինող— և գինված <գճճարով>
Ոգու աճման թափով
Ամենայն ինչ էճնող, շոշափող—
Ով տեսնող իր մեջ բնությունը,—
Ով—ոգո՛ւց իր բնության մեջ թափվող—
Անեզրական տաղով այս ոգին...
Ով աճա—տիեզերի
Թե մանրամանր, թե մեծ,—
Ե՛վ դեպի վար, և՛ դեպի վեր,—
Ինչ որ գտավ անվեճեր
Մե՞ծ խռճերի և երգի
Եվ մանրագույճ կրի
Հանճարեղ պոեմճ այդ աճման,
Ով—պետական այրճ .....—
Էլ չասեմ,
Թե ի՞նչ մեծության, իսկապես...
Նախ՝ հանճարեղ մտածողը
Ով գիտուճը այդ հանճարեղ—
Ինչ որ տեսավ ու ճարեց՝
Բայց ասողերից մինչև ճողը՝
Բնությունը մեռճող և կյանքը՝
Բույսերի, անասճոց,—մ ա ր դ ու
Homo sapiens կաշվածի
Կյանքը մինչև բազմաթույճ,—
Ի՛նչ որ տեսավ՛ ու հայեց,
Ինչ որ զննեց ու նայեց,
Ինչ իր մտով շոշափեց,
Ինչ կշրռեց ու չափեց,
Սաղմ, գոյություճ, կյանքի չուճչ,—
Մեղկ հայելիից մինչև չուճ,—
Ով մինչև կապիկ,—
Բայց, ընտրություճ, տագնապի
<անրնթ.>,— և ամեճ
Տեսակների մանր ու մեծ
Ով վիթխարի, և անտես
Բույլն ամբողջ,— միայն մեր՝
Մարդու կյանքից բացի,—
Նա ճանաչեց,— բառացի
Ձրհասկացած միայն դուք,
Որ չմնաց ոչինչ դուրս
Նրա մտից ու աչքից.—
Ջեճք հավատա ճրաչքի,
Ջէր հավատում ինչպես և

Ինքը, ար լոկ միայն սե
Գույնից բռնած ճասավ մինչ
Սիածանի չերմ ու ջինջ
Գույների քույրը երբեք.—
Եվ ճասկացավ, թե արփին,
Եվ արեգն ու ամբողջ
Տիեզերի դեմքը աղջ
Այսման գունեղ, նմայիչ
Գույնով ներկում ամեն ինչ,
Դարձնում վառ ու տարբեր,
Ինչպես շռայլ մի վարպետ
Ա՛յլ երանգով ներկում ճոր,—
Եվ նմայված մեծ գույնով
Աննաչվելի երանգի
Նար ենք տեսնում ամեն օր՝
Գույների քարք ճոսանքի,
Ինչպես ուժի. երանգի
Հոդմ գունագեղ ու անգին...
Կա՞ ավելի մի զարհուր
Քան, քան հանկարծ աչխարհում
Մեր աչերի քաղաքում
Թիթղե այն անիուն ու ա՛ղքոյլ
Զրցոլանար հանկարծ էլ--
Եվ մեր առաջ տարածվեր
Միապաղա՛ղ. միագույն
Սև. կամ սևից մի ինչ գորշ՝
Ինչպես ծխածի աճորդ—
Մի տիեզերք հանկարծ մութ
Եվ չլիներ էլ կապույտ
Գույնն աչերի մանկական,
Կարմիր դրոշ, ոսկե ծամ,—
Եվ մանուչակ՝ գեղնցիկ.
Գույնով ինչպես մանուչակ,—
Եվ շուշանի՛ գույն շուշան,—
Եվ մեխակի՛ գույն մեխակ,
Եվ բազմաբույր երեխա՝
Ե՛վ ամենի աչխարում
Նար գույների մի գարուն,—
Եվ ամենի չրթերին՝
Գույն՝ շնորհված և իրեն,—
Եվ—ամեն մար գարգարած
Գույնը մանկան իր սիրած:

ՉԱՐԵՆՑ ԵՎ ՍՏԱԼԻՆ

Երկրի ու պատմության, մարդու և ժողովրդի ճակատագրի հանդեպ ունեցած մտահոգությունը, քաղաքացիական պատասխանատվությունը ժամանակի ու սերունդների առջև՝ նղիշե Չարենցի պես ստեղծագործական բուռն ու անմիջական խառնվածքի տեր գրողին ինքնաբերաբար և անհրաժեշտաբար թույլ չէին տալու շրջանցել, առավել ևս անտարբեր անցնել երկրի, պատմության, մարդու, ժողովուրդների, սերունդների ու ժամանակի բախտը տնօրինելու կոչված այնպիսի մի «չլռսված» գոյության, այնպիսի մի ահավոր երևույթի կողքով, ինչպիսին էր Իոսիֆ Ստալինը։ Դա ւ յդպես է, որովհետև Չարենցի հետաքրքրությունների շրջանակներում էր թե՛ ամբողջ աշխարհը՝ Չինաստանում ծավալված դեպքերից մինչև Իսպանիայում բռնկված քաղաքացիական կռիվները և թե՛ խորհրդային երկիրը՝ ըղձյալ այգեբացից սկսած մինչև կառուցման թափը, ապագայի ծրագրերը, մինչև իր իսկ արյունով շառագունած «արյունալից կեսօրը»։ Այս ամենի կենտրոնում որպես ժամանակի ու պատմության միահեծան տեր ու տիրակալ կանգնած էր Ստալինը։ Չարենցն էլ իր հերթին սովորություն ուներ խոսք ուղղելու երկրի ու հանրապետության ղեկավարներին, գեղարվեստորեն պատկերելու նրանց կերպարները, միաժամանակ՝ նրանց հետ մեկտեղ վերահմաստավորելու իր պատմական ժամանակի էությունը։ Հիշենք հեղափոխության առաջնորդին նվիրված բազմաթիվ պոեմներն ու բալլադները, հանրապետության ղեկավարներին՝ Մյասնիկյանին, Խանջյանին ձոնված բանաստեղծությունները։

1920-ական թթ. վերջերից սկսած՝ Ստալինը երկիրը տարավ միաձծության ուղիով, որպեսզի ավելի հեշտ լիներ այն ղեկավարելը։ Միապետ անհատ «ձեռնադրվելու» ճանապարհին նա զտում կատարեց կուսակցական բարձր ղեկավարության մեջ։ «Ժողովրդի թշնամիներ», «արտասահմանյան գործակալներ» հորջորջելով՝ Ստալինը և նրա վարչական ապարատը շարքից հանեց բոլոր նրանց, ովքեր սոցիալիզմի կառուցումն ու երկրի շինարարությունը նույն կուսակցական դիրքերից պատկերացնում էին այլ կերպ։ Ընդ որում, այդ այլ կերպ մտածողներին հանդուրժել և դժվարին պայմաններում նրանց հետ աշխատել էր Լենինը՝ հեղափոխության, արտասահմանյան ինտերվենցիայի, քաղաքացիական կռիվների, տնտեսական կյանքի հիմնական խնդիրները քննարկելով նրանց հետ և մտքերի ազատ փոխանակության պայմաններում հանգելով վերջնական վճռի։ Այսինքն՝ կուսակցական աշխատանքում Ստալինը վերացրեց մտածողության ազատությունը, քանի որ վախենում էր ստեղծագործական մրցակցությունից և առաջնությունը տվեց կամայականությանը, ապա և՝ բռնի ուժին։

Նույն կերպ ստեղծագործական մրցակցությունն ու ազատությունը նա վերացրեց երկրի տնտեսության ու մշակույթի տարբեր ոլորտներում։ Գյուղատնտեսության մեջ՝ անհատական տնտեսությունների ոչնչացմամբ և արտադրող հիմնական ուժերի արտաքսմամբ նա զարկ տվեց կոլեկտիվ շարժմանը, որը տարիների ընթացքում երկիրը հասցրեց ծայր աստիճանի աղքատացման։ Արդյունաբերության մեջ՝ տնտեսական զարգացման այլ ճյուղերի անտեսմամբ նա առաջ մղեց ծանր ինդուստրիան, իսկ թեթև արդյունաբերության բացարձակ անտրակությունը շարունակվում է առ այսօր։ Մշակույթի ոլորտում, ինչպես գյուղատնտեսության մեջ, նա վերստին դիմեց կոլեկտիվացման։ Արդյունքը եղավ ստեղծագործական խմբակցությունների միավորումը առանձին միությունների մեջ։ Արտաքուստ սա դրական տպավորություն կարող է թողնել, բայց ըստ էության այսպես չէ, որովհետև Ստալինը շատ գիտակցված ձևով վերացրեց գեղարվեստական մտածողության ազատությունը, բազմազանությունը և ստեղծագործական

մրցակցությունը։ Հայտնի է, որ Լենինը հավանություն էր տա-
լիս գրական-մշակութային բազմապիսի խմբակցությունների
գոյությանն ու ազատ պայքարին։ Միայն 1917—1925 թթ.
Ռուսաստանում գործում էին երեք տասնյակից ավելի գրական
խմբակցություններ։ Բազմազանություն էր տիրում նաև Հա-
յաստանում՝ «Երեքի» խումբը, Հայաստանի պրոլետարական
գրողների ասոցիացիան, «Նոյեմբեր» միությունը, Հայ աշխա-
տավորական գրողների միությունը՝ «ուղեկիցներով» հան-
դերձ, Հայ գրական ընկերությունը և այլն։ Ընդ որում՝ յուրա-
քանչյուր խմբակցություն ուներ իր գաղափարագեղագիտա-
կան կողմնորոշումը, ուներ իր պարբերականները, հրատարա-
կությունները։ 1920-ական թթ. կեսերից, այս խմբակցու-
թյունները աստիճանաբար միավորելով, Ստալինը հասավ
1932 թ. ապրիլի 23-ի Համկ(բ)Կ կենտկոմի որոշմանը՝ ըստ
որի վերացվում էին բոլոր խմբակցությունները և ստեղծ-
վում էր գրողների միասնական միություն, այլ կերպ՝ գրա-
կան կոլխոզ։ Կուսակցական ապարատի օրինակով այդ միու-
թյուններին նշանակվեցին միանձնյա ղեկավարներ, որոնք
արդեն ստիպողաբար պիտի կատարեին Ստալինի հրամանա-
ները և գրողների հավաքական ջանքերը նպատակամղեին
նրան գովերգելու գործին։ Իսկ չկատարուն ու ազատ մտա-
ծողը, ինչպես կյուղում, այնպես էլ գրականության մեջ, պի-
տի կուլակաթափ արվեր և աքսորվեր կամ կանգներ գնդա-
կահարության պատի տակ։

Ահա Չարենցը Ստալինին անդրադարձավ այս համընդհա-
նուր կոլեկտիվ շարժման պայմաններում, որը, ինչպես ասա-
ցինք, համահարթեց բոլոր կարծիքները (և ոչ թե տարաձայ-
նությունները, ինչպես սովոր էինք ասել), իր օրինակով ամե-
նուր դրության տեր կարգելով միապետ-կառավարիչների։
Ահա հենց այստեղ էլ սկսվում է Չարենցի հակադրությունը
երկրի ղեկավարի գործելակերպին, որը և, աստիճանաբար
խորանալով, հասնում է ճակատագրական բախման։

Բախման սկիզբը «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» պոեմն է, Չա-
րենցի բնորոշումով՝ ինտերմեդիա (միջարար)։ Այն պիտի
տպագրվեր «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ (1933)։

Բայց գրքի պատրաստի տպաքանակը կալանքի է վերցվում, Չարենցը ստիպված պոեմը փոխարինում է այլ գործերով, որից հետո՝ 1934-ին լույս է տեսնում «Գիրք ճանապարհի» երկրորդ տարբերակը։

Պոեմում Չարենցի նպատակն էր այլաստացության միջոցներով պատկերել երկրի ղեկավարության մեջ տիրող վիճակը։ Այդ դրամատիկական պոեմը Չարենցն անվանել է ինտերմեդիա, որովհետև «Գործողությունը կատարվում է Մեծ Հեղինակի եռմահու թատերության ներկայացման ժամանակ, երրորդ արարից հետո, ընդմիջումի ընթացքում, փակ վարագույրի առաջ»։ Ընդ որում, երրորդ գործողության սյուժեն եղել է հեղափոխության հաղթանակը, Լենինի մահը և նրա գործը շարունակելու կոչված «վճռական» մարդկանց գործունեությունը։ Վճռական մարդիկ Ստալինը և Տրոցկին էին։ Ըստ այդմ էլ ասպարեզ է տրամադրվում ինտերմեդիայի գործող անձանց, որոնք են՝ Մեծ Հեղինակը (Լենին), Թատրոնի տնօրենը (Ստալին), Հերոսը կամ Գլխավոր Անձը (Տրոցկի), որոնց գործունեությանը անմիջականորեն հետևում, նաև մասնակցում են Հանդիսականները (ժողովուրդ)։

Դա վկայում է նաև Չարենցը։ Ահա հուշագրի խոսքը։

Եթե կուզեք խոսել պատմական անալոգիաների մասին, պարզաբանում էր Չարենցը իր ստեղծագործությունների իդեան, ապա Պյեռոյի կերպարը զուգորդվում է Տրոցկու կերպարի հետ, իսկ կոնֆորտների երթը՝ պրոլետարական հեղափոխության մասսայականության սկզբունքի անպարտելիությունն է։ Այսպես էին նրա խոսքերը, ես դա լավ եմ հիշում։

Միջանկյալ ասենք, որ հուշագիրը ուշագրավ մանրամասն է հաղորդում նաև այս դրամատիկական պոեմի բեմադրության մասին.

Չարենցի պոետական մտահղացման մեջ դեր է խաղացել այն ժամանակ արդեն կառուցվող օպերայի թատրոնի շենքի նախագիծը։ Թամանյանի սկզբնական նախագծի համաձայն, ինչպես պատմում էին, բեմը այնպես պետք է կառուցված լիներ, որ հատուկ մուտքերով երկու կողմից հանդիսատեսի առջևով կարողանային շարանցել ցուցարարները, զորական մասերը, նույնիսկ այրուձին։ «Ախիլլե՞ս, թե՞ Պյե-

ռռ»-ի եզրափակիչ տեսարանը հնարավորություն էր տալիս այդպիսի երթ ցուցադրել:

(Վ. Կիրպոտին, Հանդիպում Եղիշե Չարենցի հետ.— Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, էջ 294):

Չարենցն արդեն իսկ կանխատեսում էր այն աղետը, ինչը իր միահեծանությամբ երկրի ու ժողովրդի գլխին պիտի բերեր Ստալինը՝ կուսակցության շարքերից հեռացնելով շատ ու շատ ազնիվ մարդկանց:

1927 թ. դեկտեմբերին գումարված Համկ(բ)կ 15-րդ համագումարում որպես օպոզիցիայի ներկայացուցիչներ դատապարտվեցին Տրոցկին, Զինովևը, Կամենևը: Նրանք հեռացվեցին կուսակցությունից: 1929-ին Տրոցկին աքսորվեց ԽՍՀՄ-ից: 1928 թ. սկսած Ստալինը նոր պայքար ծավալեց այս անգամ արդեն աջ թեքման դեմ՝ թիրախ ունենալով Բուխարինին, Ռիկովին և ուրիշների:

Ահա երկրի քաղաքական կյանքում տիրող այս վիճակը նկատի ուներ Չարենցը, երբ 1929—1933 թթ. գրեց իր այս արժանահիշատակ երկը: Հեռապատկերի մեջ պարզ ուրվագծվում էր, որ կուսակցական կադրերի «մաքրագործումից» հետո՝ Ստալինը պիտի անցներ ժողովրդական զանգվածների զտմանը:

Չարենցը ներկայացնում է հետևյալ պատկերը. ըստ Հերոսի՝ Թատրոնի Տնօրենը խմբագրել է Մեծ Հեղինակի երկը և այնտեղից կանխամտածված ձևով չնչել Հերոսին հատկացված դերը: Այսինքն՝ Ստալինը վերափոխել է Լենինի ցուցումները և ասպարեզից հեռացրել որոշ գործիչների: Այս երկի պահպանված տարբերակի միակ էջի վրա պոեմի նախնական վերնագիրը եղել է «Ընթացքը և ուղին» (ԳԱԹ, ՋՖ, № 17): Ինքնին շատ որոշակիորեն հասկանալի է, որ խոսքը երկրի ընթացքի և ուղու մասին է, որը «Պատմությունն է մեր հերոսական գոյամարտի», ինչն էլ ինտերմեդիայի սյուժեն է: Չարենցը ցույց է տալիս, թե ինչպես Թատրոնի Տնօրենը բռնի ուժի դիրքերից և երեսպաշտությամբ համոզում է Հանդիսատեսներին, որ Հեղինակը Հերոսին ոչ մի դեր չի հատկացրել իր թատերգության մեջ, և որ ինքը անշեղորեն հետևել է Հեղինակի երկին.

Կա՞ արդյոք մեկն այստեղ, որ մեզ ասի, թե մենք
Դավաճանել ենք մեր Հեղինակի ոգուն
Գեթ փոքրագույն չափով,— որ գեթ մի փոքր
Շեղվել ենք ընթացքից նրա գործի:

Այս ճնշման պայմաններում աստիճանաբար ստեղծվում է նաև Թատրոնի Տնօրենի հանդեպ ձևավորվող պաշտամունքի մթնոլորտը, երբ հանդիսականները, առանց բանի բուն էությունն իմանալու, անդիտակցաբար ձայնակցում են.

— Ո՛չ մի թերի չկար:— Հոյակա՜պ էր ամբողջը:
— Միանգամա՛յն բխում էր Հեղինակի ոգուց:
— Հոյակապ է երևոյթ արուն առանձնապե՛ս:—
... Դեռ չէ՛ր փայլել երբեք Հեղինակի ճաճանչը
Այսման վսեմ ու չինչ պայծառությամբ...

Բայց ահա սողոսկում է նաև կասկածը: Հայտնվում է Հերոսը, որն իրեն համարում է Թատերգության «կենտրոնական» անձ: Նա ունի նաև իր պաշտպանը (Տարիքոտ Հանդիսական), որն ասում է. այս երկում «Իր սեփական ձեռքով Մեր Տնօրենը մեծ շտկումներ է արել», նաև՝ «Հերոսը ճիշտ է»: Ապա նա վկայում է, որ ինքը տեսել է Հեղինակի ձեռագիրը, այսինքն՝ բնօրինակը, ուր, իրոք, Հերոսին հատկացված է եղել «կենտրոնական մի դեր»: Այնուհետև՝

Եթե անգամ թողնենք ձեռագիրը մի կողմ
Եվ ելնենք երկի բովանդակությունից—
Ապա ասենք պիտի, որ ամբողջը
Աղավաղված է և մեր Վարպետի
Ծրվածքների հետ այլ— առնչություն չունի:

Այսպես Ջարենցն ասում ու պնդում էր, որ կյանքը նախանշված հունով այլևս չի ընթանում և որ «չարիքների արմատը» Ստալինն է: Այսքանից հետո բանաստեղծը ասպարեզ տրամադրում է Հերոսին, որը քննադատում է Թատրոնի Տնօրենին այն բանի համար, որ նա Հեղինակի «հանճարեղագույն ողբերգությունը» վերածել է մի ծիծաղելի «ֆարսի», «անգույն ու դիմազուրկ» դարձրել նրա երկը, հերոսական պաթոսի փոխարեն «խրտվիլակներ է ասպարեզ հանել,— եվ մեր Վարպե-

տի հղացումն այսպես խայտառակաբար հիմքից կործանել»։ Եվ ապա՝

Ի՞նչ տեսամ այսօր բեմի վրա դուս.—
Մարդկային մի հոծ, անդեմ բազմություն,
Որ չնչին, գաճաճ առաջնորդների
Ղեկավարությամբ, անխմաստ ու կույր,
Ինչպես մի նախիր— գնում է անմիտ
Ինքն էլ չգիտե, թե ինչո՞ւ և ո՞ւր...

Ահա այսպես որպես Աքիլլես ծնված Հերոսը Թատրոնի Տնօրենի եռանդուն ջանքերով վերածվում է թատերական ընդմիջումների խեղկատակ հերոսի, այսինքն՝ Պյերոյի։ Ահա թե ինչի վերածեց Ստալինը բոլոր նրանց, ում հետ միասնաբար պիտի կառուցեր երկիրը։ Ու թեև երկն ավարտվում է Թատրոնի Տնօրենի հաղթանակով, բայց դա արյունալի հաղթանակ է, քանի որ բանակը ոտքի տակ է տալիս Հերոսին, որը թատերգության վճռական արարից (այսինքն՝ 1937 թվականի արյունալի սպանդից) առաջ ջանում էր ճշգրտումներ մտցնել հետագա գործողությունների մեջ։

Թատերգության մեջ մի պատանի նորաթուխ Պյերոյի վրա բալլադ է հորինում և ծաղրում նրան։ Այդ բալլադի նախնական տարբերակը, որը անտիպ է և ունի «Դերասան բարեկամիս» վերնագիրը, գտնվում է այսպես կոչված «Սև տետրում» (ՉՖ, № 14) և գրված է 1928 թ. մարտին։ Ահա այն.

Հերոս— մի գեռ,
Այսօր— Պյեռո՛,—
Պյեռո՛,
Պյեռո՛,
Պյեռո՛,—
Մի իսկական Պյեռո՛!...

Իսկ թե ո՞վ էր Պյերոն, գիտեին բոլորը։ Հիշեցնենք, որ Պյերոն գործող անձ էր եվրոպական միջնադարյան թատրոններում։ Պյերոն, ինչպես նաև Առլեքինը և գեղեցկուհի Կոլոմբինան համարվել են իտալական ժողովրդական կատակերգության խեղկատակներ։ Ի դեպ, Հովիկ Պողոսյանի վկայությամբ Մ. Գորոդեցկին սրանց է նմանեցրել Ա. Բլոկի

«Տասներկուսը» պոեմի հերոսներին՝ Պետյային, Անդրյուխային և Կատյային (Արձագանք, 1978, էջ 35)։

«Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» երկի հետ կապված պատմությունն ավարտելուց առաջ, ասենք, որ Չարենցի ֆոնդում 17 համարանիշով պահվում է ոչ միայն պոեմի սկզբի առաջին էջը, այլև՝ ռուսերեն թարգմանությունը, որն սկսվում է 28-րդ էջից։ Ամենայն հավանականությամբ եղել է ամբողջական թարգմանություն, ինչը, իրեն արդարացնելու համար, բանաստեղծն ուղարկել է վերին ղեկավարություններին (ՀԿ(բ)Կ Կենտկոմ, Բերիային, Ստալինին)։

Իսկ այն, որ Չարենցը անհրկյուղ համարձակությամբ է գնահատել իր այդ երկը և նույնիսկ մտածել ռուսերեն թարգմանության մասին՝ վկայում է հուշագիրը.

Ես Չարենցի տանն էի այն օրը, երբ ռուս բանաստեղծ-թարգմանիչների մի խումբ հյուր եկավ նրան։ Այստեղ էր նաև ճնշադատ Վանանդեցին. երբ թարգմանիչները ծանոթանում էին բանաստեղծի գրադարանին՝ Գ. Վանանդեցին Չարենցին հարցրեց, թե ո՞ր գործերը կցանկանար թարգմանության տալ։ Չարենցը պատասխանեց.

— Թող հենց «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» թարգմանեն, տեսնենք ի՞նչ հակագաղափարական բան կա դրա մեջ։

(Հ. Խանդամուր, Եղիշե Չարենց.— Հուշեր Եղիշե Չարենցի մասին, էջ 413)։

Այնուհանդերձ, «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» պոեմի հետ կապված բարդ պատմության մեջ է ներքաշվում թե՛ «Գիրք ճանապարհի» ժողովածուն, թե՛ Չարենցի անունն ու ամբողջ գործը։ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությունը 1933 թ. նոյեմբերի 14-ին հատուկ որոշումով արգելում է գրքի հրատարակությունը և հարց հարուցում Չարենցին հեռացնելու Պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչի պարտականություններից (տես՝ Խորհրդային Հայաստան, 1933, 18 նոյեմբերի, № 267)։ Գրքի հետ կապված պատմությանը տեղեկանում է Բերիան և այդ կապակցությամբ ընդունում Չարենցին։ Մատնությունը հասնում է Ստալինին։ Անելանելի կացությունից ելք որոնելու նպատակով Չարենցն ստիպված նամակ է հղում Ստալինին, իսկ 2 օր անց՝ 1933 թ. դեկտեմ-

բերի 1-ին նույն նամակը հասցեագրում Մ. Շահինյանին։ Նամակում, որը հրապարակված է «Պատմա-բանասիրական հանդեսում» (1987, № 2), Չարենցը «Գիրք ճանապարհին» համարում է մի գիրք՝ գրված «մեր ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի մասին»։ Հակախանջյանական ուժերը, որոնք այդ օրերին ցանկանում էին Հայաստանում հեղաշրջում կատարել, Չարենցին համարելով Խանջյանի շրջանակի մարդ, ջանում են նրան ևս շարքից հանել՝ վերոհիշյալ որոշման մեջ նրա գիրքը բնութագրելով «հակահեղափոխական, տրոցկիստական զրպարտություն կուսակցության դեմ, կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի դեմ, հայկական մարտնչող նացիոնալիզմ» արտահայտություններով։ Մ. Շահինյանին հղած նամակում, արտահայտվելով իր շուրջն ստեղծված այս ծանրագույն կացության մասին, Չարենցը գրում էր. «Պատկերացնո՞ւմ եք, արդյոք, թե ի՞նչ ապրումներ պիտի ունենայի այդ օրերին. չէ՞ որ ես կարող էի սպանել և՛ ինձ, և՛ իմ ընտանիքը, խելագարվել,— և ես զարմանում եմ՝ ո՞նց դա ինձ հետ չպատահեց»։ Չարենցը խոսում է նաև այդ օրերին մտավորականությանը պաշարած վախի ու ահաբեկման մասին և այս նամակը համարում փրկության աղդանշան՝ SOS!

Ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ Ստալինը ստացել է Չարենցի նամակը (բնավ բացառված չէ, որ այն հայտնաբերվի ԽՄԿԿ կենտկոմի արխիվում)։ Դրա վկայությունն է նաև Կրեմլում 1935 թ. դեկտեմբերի 30-ին Հայաստանի աշխատավորության պատվիրակության ընդունելության ժամանակ Չարենցի հանդեպ Ստալինի ցուցաբերած ուշադրությունը։

Ուրեմն՝ բանաստեղծի և միապետի հեռակա ծանոթությունն արդեն կայացել էր։ Թվում է, թե դա կարող էր շոյել բանաստեղծի փառասիրությունը և հեշտացնել նրա կյանքը։ Մի կարճ պահ այդպես էլ լինում է, բայց հետո կատարվում է ճիշտ հակառակը՝ խորանում է Չարենցի ընդդիմությունը ղեկավարի հանդեպ և գնալով սեղմվում է նրա պարանոցին նետված օղակը, որի ծայրը Ստալինի ու Բերիայի ձեռքին էր։

Հիշյալ նամակում Չարենցը նշում է, որ «Գիրք ճանապարհում» Ստալինին նվիրել է հինգ գործ։ «Աքիլլե՞ս, թե՞ Պյե-

րոյից» բացի հավանաբար նա նկատի է ունեցել «Դալիքի որմնադիրները», «Համայնական դաշտերի սերմնացանները» պոեմները, «Պատմությունը տվել է մեզ» ռուբային և 16-րդ դիստիքոսը։ Դրանցում հիշատակված չէ Ստալինի անունը, պարզապես խոսք է ասվում՝ ուղղված Առաջնորդին, Ուսուցչին, Ղեկավարին, ինչն, ըստ ամենայնի, կարելի է հասկանալ ընդհանուր ձևով։

«Գրական թերթի» 1934-ի առաջին համարը բացվում է Ստալինի և Լենինի մեծադիր նկարներով (հենց այդ հերթականությամբ) և Չարենցի «Ղեկավարին» քառատողով, որը «Անվերնագիր» վերտառությամբ ներմուծվել է «Դիրք ճանապարհի». «Մե՞ծ է մեր դարն, ինչպես օվկիան և օվկիանում այդ անհուն, Որպես արև անեզրական— քո անունն է բարձրանում...»։ Այստեղ ևս Չարենցն ակնարկում է «Հանճարեղ Ղեկավարին»՝ որոշակիորեն չտալով նրա անունը։

Դիկտատորի դեմ սկսած անհավասար կռվում՝ վստահ իր ճշմարտությանը, նաև գիտակցելով ծանր պարտության հնարավորությունները, Չարենցը իրեն հաղթանակ է ապահովում դալիք ժամանակների մեջ։ Այս ընթացքում Չարենցը պայքարի երկու ճանապարհ ընտրեց՝ ողբերգականորեն ավելի ընդգծելով իր հոգեբանական դրաման։ Մի կողմից նա արտահայտեց իր անթաքույց ատելությունը Ստալինի և ստալինիզմի դեմ, մյուս կողմից առերես կարծեք թե փորձեց ձայնակցել ժամանակի երգասանների խմբերգին, ներքուստ դարձյալ չկարողանալով թաքցնել իր ահագնացող հակակրանքը։ Թվում է, թե նացիոնալիզմի մեղադրանքով նրա դեմ անընդմեջ ուժեղացող հալածանքներից ազատվելու և ընդհանրապես կյանքը փրկելու համար բանաստեղծը իր բոլոր ժամանակակիցների պես նաև ստիպված էր դիմելու այդ քայլին, մանավանդ որ դրա համար կար հարմար առիթ։ Այն էլ ինչպիսի՜... Շատերը կերազեին, որ վիթխարի երկրի ղեկավարը հիշեր իրենց, հետաքրքրվեր իրենց ճակատագրով։ Եվ դա այն օրերին, երբ, չափ ու սահման չճանաչելով, ծաղկում էր անհատի պաշտամունքը։

Կրեմլում հայ պատվիրակության ընդունելության ժամանակ Չորյանի ելույթն ընթանում էր այս ոգով.

Այժմ հայ գրականության մեջ հոռետեսության և անկումայնության նշույլ անգամ չկա: Ինչպես Հայաստանի ժողովուրդը, այնպես էլ Հայաստանի գրականությունը զարգացան մեծ Լենինի և մեծ Ստալինի ազգային հաղթականության շնորհիվ (բուռն ծափահարություններ, բոլորը ոտի են կանգնում): ...Կուսակցությունն ու կառավարությունը բացառիկ հոգատարություն են ցուցաբերում մեզ: ...Թույլ տվեք ինձ հայ խորհրդային ինտելիգենցիայի անունից ուղա գոչել քնկ. Ստալինին և կառավարության անդամներին (բուռն ծափահարություններ, ուռաներ, բոլորը ոտի են կանգնում):

Այս խանդավառության մեջ Ստալինը հանկարծ հարց է տալիս Զորյանին.

Ստալին — Ինչպե՞ս է ապրում գրող Չարենցը:

Զորյան — Ոչինչ:

Ստալին — Նրան կարծեմ նեղացնում են:

Զորյան — Նա այժմ իրեն հրաշալի է զգում:

(ԳԹ, 1936, № 1, 10 հունվարի)

Այս տոնական և հագեցված իրավիճակում ինչպե՞ս հանկարծ Ստալինը հիշեց Չարենցին, այն էլ բանաստեղծի վիճակի ճիշտ բնութագրով, որին Զորյանը տալիս է հավուր պատշաճի, բայց ոչ ճիշտ գնահատական: Ուրեմն՝ Ստալինին ուղղված Չարենցի նամակը և հեռագիրը, Բերիային ուղղված դիմումները տեղ էին հասել: Եվ Ստալինը հարմար պահը գտավ, մարդուն ոչնչացնելուց առաջ, վերստին ուշադրություն ցուցաբերել նրա հանդեպ և աշխարհին ի տես ժպտալ:

Չարենցը, իհարկե, մարդկայնորեն հուզվեց այս ամենից: Քիչ բան չէ, նրանով հետաքրքրվում էր երկրի ղեկավարը և շրջապատի վերաբերմունքը նրա հանդեպ սկսվում է թեքվել դեպի դրականը: Չարենցը անմիջապես նշանակվում է Պուշկինի մահվան 100-ամյակի կապակցությամբ ստեղծված համառաշետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ, որի մեջ մտնում են բազմաթիվ անվանի գրողներ, արվեստագետներ, բարձր դիրք գրավող կուսակցական ու պետական

գործիչներ։ Տպագրվում են Ջարենցի լուսանկարները, նրա ստեղծագործությունը դրվատող հոդվածներ։ Ջարենցը մի պահ մտածում է, թե երևի եկավ իր կյանքի շրջադարձային պահը։ Այդ օրերին էլ նրան է այցելում հանրապետական «Կոմունիստ» ռուսերեն թերթի թղթակիցը և բանաստեղծից խոսք խնդրում իր հասցեին Ստալինի արած արտահայտությունների համար։ Այդ նյութը տպագրվել է «Առաջնորդի ուշադրությունը իմ հոգին լցրեց մեծագույն ուրախությամբ և երախտագիտությամբ» վերնագրով։ Նյութի ճակատը զարդարում է «Ղեկավարին» քառատողի ռուսերեն թարգմանությունը և Ջարենցի մտախոհ լուսանկարը՝ գլուխը մի կողմի վրա թեքած, աչքերի տակ խոր ու տառապագին կնճիռներ։

Առաջնորդի վերաբերմունքը բանաստեղծը գնահատում է որպես բացառիկ մի բան, որովհետև իրեն զգում է օվկիանոսից օվկիանոս ձգվող երկրի 170 միլիոն բնակիչներից մեկը, որն արժանացել է նման ուշադրության։ Ըստ Ջարենցի՝ բոլոր ազնիվ մարդիկ «բոլոր նրանք ոչ միայն լիակատար իրավունք ունեն իրենց արդար աշխատանքով վաստակելու առաջնորդի անմիջական ուշադրության հնարավորությունը, այլև նրանք բոլորն արդեն գտնվում են նրա ուշադրության կենդանի կոնկրետ շրջագծում այնքանով, որքանով, արդեն ներգրավված են հեղափոխական ամենօրյա պրակտիկայի մեջ ...»։ Այդ վերաբերմունքից իր ամբողջ ստեղծագործությամբ Ջարենցը խորին պատասխանատվություն է զգում երկրի ու ժողովրդի հանդեպ և իր խոսքն ավարտում այսպես. «Հույս ունեմ, որ իմ հետագա ամբողջ աշխատանքով որպես սոցիալիզմ կառուցող հրաշալի երկրի պոետ ու քաղաքացի կկարողանամ արդարացնել իմ հանդեպ ցուցաբերված այդ բացառիկ ուշադրությունը» (Коммунист, *1936, № 16, 20 հունվարի*)։

Ինչո՞վ պիտի Ջարենցն արդարացներ այդ բացառիկ վերաբերմունքը, եթե ոչ իր գրչակիցների նման պոեմներ ու բանաստեղծություններ ձոնելով նրան։ Ջարենցը դիմում է այդ քայլին և ևս մի պահ արտաքուստ պահում փոխադարձ հարգանքն ու պատասխանատվությունը։ Արդյունքը լինում է

«Երրորդ այգաբաց» բանաստեղծությունը, գրված այն օրերին, երբ քննարկվում էր ստալինյան սահմանադրության նախագիծը: Ահա այդ բանաստեղծությունը՝ տպագրված «Գրական թերթի» 1936 թ. հունիսի 20-ի № 15-ում.

ԵՐՐՈՐԴ ԱՅԳԱԲԱՑ

Ժողովուրդների իմաստնագույն առաջնորդին
և ամենամեծ բարեկամին
Իոսիֆ Ստալինին
նաիրյան պոետից՝
ներքոդ նվաստագույն և խոսք պոետական
Խարիղայից նոր Սահմանադրության նամար:

Ա

Երեք այգ է ցոլացել նայրենիքի վրա մեր.—
Երեք անմար արշալույս— տիեզերի նամար ողջ:—
Այգն առաջին... Նա շաչեց իբրև բոցե Հոկտեմբեր—
Որ արյունով նվաճեց նոր գոյության նամար նող:

Բ

Այգը երկրորդ... Դա մեր մեծ Ղեկավարի պողպատե
Ձեռով վառած Այգն էր բոր, որ դաշտերի վրա նոր
Փռեց, որպես նյուղերի երչանկություն մշտատև՝
Համայնական ներկերի բեղուն բերքով փառավոր...

Գ

Այգը երրորդ... Անա՛ նա:— Բացվում է նա ոսկերիզ՝
Նո՛ւյն նանճարի խորնուրդով՝ ոգիների վրա մեր...
Այդ— կրկնակի անկաշկանդ խորնրդային ազգերի
Հառնած ոգի՞ն է կանչում աշխատաճի նանճարեզ...

Դ

Օ՛, մեր ոգու, մեր նողի, մեր սրտերի— և նամայն
Հայրենիքի վրա մեծ— Այգաբացեր մեր երեք,—
Դուք իրարից եք սերել, նո՛ւյն աշխ անմար
Բռնկումներն եք՝ նրա նանապարնին անեզերք...

16 նունիսի, 1936 թ.
Երևան

Չարենցը կարծեք գնում է զիջման, չանալով արդարացնել «ուշադրությունը»։ Սկսում է առաջնորդի կյանքի մասին պոեմ գրել։ Նրան բնութագրելու համար ստեղծում է՝

Ասպետ ես դու, Խոսեբ, առանց աճի,
Կորա, խոփ դեռ խոպան ապագայի...—

Երկտողը՝ երկրորդ տողի մշակումով գրի առնելով 38 տարբերակ։ Բայց և սթափության պահը արագ վրա է հասնում և վերականգնում նրա քննական հայացքը իրականության հանդեպ։ Վերոբերյալ երկտողի առաջին տողի տարբերակը նա նաև բերում է առանձին և կցում այսպիսի գաղտնագիր.

Իբրև հեղափոխության միակ ասպետ
ԼԳՅԶՏ ՂՉՃԲՔՉՄՓԺՉՐՇ ԺԼՐՀ ԲՎՉՉՐ...
(ՉՖ, № 85)

Ի՞նչ է հուշում այսքան խժալուր բաղաձայն հնչյունների կուտակումը և ինչի՞ արդյունք է այն։ Ըստ ամենայնի դա հոգեբանական ընդվզում է ճնշմամբ պարտադրվող, էությամբ անընդունելի երևույթի դեմ, որն այս դեպքում արտահայտվել է չարություն և աններդաշնակություն արտահայտող հատուկ գեղարվեստական հնարանքով, ինչը բաղաձայնույթն է։ Ինչպես առաջիկայում կտեսնենք՝ այդ միջոցին Չարենցը նախապատվություն է տվել նաև Ստալինին նվիրված այլ գործում, ուր հնչյունական աններդաշնակությանը (կակոֆոնիա), ավելանում են նաև բառերի մեջ ներծծված թունավոր գույները։

Առաջնորդերգության բնույթի երկերը, որոնք կարող էին նրան փրկել նոր հալածանքներից, այդպես էլ մնացել են նրա թղթերի մեջ, որպես սևագրություններ ու գրառումներ։ Այսինքն, հրապարակավ չկարողանալով արտահայտել իր կասկածանքներն ու մտահոգությունները, Չարենցը նաև այդուհետև գոհունակության խոսք չի ասում։ Այսինքն, կարճ զինադադարից և փոխադարձ ռևվերանսներից հետո արդեն լուռ ու թաքուն շարունակվում է ատելությունը, որը պիտի ավարտվեր մեկն ու մեկի կործանումով։

Ահա, սա՛ է իրական պատկերը. չպետք է անհարկի խրթնաբանել բանաստեղծին, պարզեցնել և հեշտացնել նրա հոգեբանական ծանր դրաման, որն աստիճանաբար վերածվում էր ողբերգության։ Ուստի պիտի փորձենք Չարենցի ֆոնդում պահվող զանազան նյութերի քննությամբ և հրապարակումով ներկայացնել ամեն ինչ այնպես, ինչպես եղել է։

Ասացինք, որ Չարենցը քննադատել է և՛ Ստալինին, և՛ ստալինյան վարչակարգը, և՛ ստալինիզմը կենսագործող հայ ղեկավարներին, և՛ այս բոլորի համատեղ ջանքերով ստեղծված ժամանակաշրջանը, ուր իրենց լավ էին զգում միայն մատնիչները, դավաճանները, հարմարվողները, կամակատարները և դահճին միակ հայր ու արեգակի երկվորյակ համարվողները։ Չարենցի «Սև տետրում» վկայված են քառյակներ, որոնցում բանաստեղծը հստակ ուրվագծերով ներկայացնում է մղձավանջային այն մթնոլորտը, որը կոչված էր կործանելու ոգին, մարելու հանճարի լույսը։ Ահաբեկումն սկսվում է մարդկանց լարելով միմյանց դեմ, նրանց մեկուսացնելով շրջապատից, հետո դատապարտելով տնային կալանքի, ապա՝ բանտարկության, այնուհետև՝ սպսորի կամ դնդակահարության։ Այդ ամենի նախերգը 1934-ին գրված այս անտիպ բանաստեղծությունն է.

Երբեմ չի եղել այսման միայնակ
Մարդը իր կյանքում ու շրջապատում.
Որման այս վախմ արեգակի տակ.
Երբ կառուցում եմ կարծես աշխատանում
Այնպիսի՛ մի կյանք, որ սիրտը մարդու
Մարդկանց հետ պիտի՛ լինի զվարթուն...

Ուրեմն, մենությո՛ւն պահին, երբ թվում է, թե բոլորը միասին են։ Այս զգայողությունն է, որ խորանում է անմիջապես այս բանաստեղծությունից հետո գրված հինգ անտիպ քառյակներում.

Ինչպես կացնավ՝ բաժանեցին մեզ աշխարհից ու մարդուց,—
Ձնշեց ոգին մեր մարդկային, որպես անսիրտ մի արդուկ,—
Բռունցքն այս չոր, որ պիտի նոր խոսք ու ցնծալ մեզ բերեր,—
Նվ հեռացավ, անդառձ անցավ հերոսությունը գվարթուն։

1934 թ. փետրվարի 2-ին գրված այս անմշակ քառյակի երկրորդ տողը ունի այսպիսի տարբերակ՝ «Ծկավ բռունցք մի պետական ապարատի՝ ձեռքին առած մի արդուկ»։ Այնուհետև՝

Որքան խորհեմ եմ թափանցում ու հեռուները դարի,
Այնքան ինչ եմ լույսով մեր նոր տեսնում խորհում խավարի
Ու անցյալի ճուռն եմ մեր նոր լապտերներում (անընթեռնելի),
Որ նրանով գոնե հեռվում աչքս մի քանն նշմարի...

1935—1936

Այսքան դաժան, զարհուրելի և այսքան մութն ու անդուռ
Դեռ չի տեսել իր ապագան հանճարի լույսը մարդու,—
Մեր նոր լույսով՝ ո՛չ մի նույսով, ո՛չ մի շրեղ երազով
Չի՛ վառվում այն, ինչ պիտի գար Երգ ու տաղով զվարթուն:

1936. 23. IX.

Ոչ մի Փրկիչ դեռ չի եկել այս նոր Փրկչից մեր բացի՝
Առանց սիրո ու հերումի, հանուն ջրի ու ճացի:—
Չի՛ պատկերել այնպես անփայլ մարդկությունն իր Փրկչին դեռ՝
Իրև մի Նեռ՝ խաղցած, աննեռ— ձեռին կարմիր մի կացին:

1936. 23. IX.

Որքան խորն եմ զննում հեռուն մեր նոր լույսով ես այսօր՝
Գալիքն այնքան մութն եմ տեսնում՝ շառագունած այդ լույսով.
Ու անցյալի մեծ ջահերի ճուռն եմ վառում ես իմ մեջ,
Որ չարհավրեմ— և խավարում տեսնեմ ճշույլ գեթ նուռս:

1936. 23. IX. Երևան

Սա հոգեբանական կործանման ընդհանուր պատկերն է, որը գնալով ավելի է որոշակիանում։ Դարձյալ «Սև տետրում» զետեղված «Աղջիկ է նա մի նրբին...» տողով սկսվող անավարտ և անտիպ պոեմում այս օրերը նա համարում է «անասնական»՝ գալիքում հուսալով պայծառ ժամանակներ։ Այդ օրերի մասին են այս դառը տողերը, պահպանված նույն տետրում.

Լեցուն է սիրտս լացով,
Թսկարդ է բախտը հինում.
Ըղգիտեմ ո՞ւր եմ գընում
Վաւանմով, մթին կասկածով...

Ինձ խարում, ինձ դավում են քերելս,
Ինձ տանում են գուցե դեպի մահ.
Ախ, դատարկ է շուրջս, ամա,—
Եվ դաճիճ են դարձել բեկերներս...
1935. 13. IV. Թիֆլիս

Այս բանաստեղծությունը գրված է գրեթե մեկ ամիս անց այն բանից հետո, երբ նրան վտարեցին Հայաստանի գրողների միության շարքերից և ուղիղ երկու տարի անց այն դիմումից հետո, որով նա ցանկություն էր հայտնել մտնել Հայաստանի խորհրդային գրողների միության մեջ։ Այսպիսով Չարենցի «ընկերները»՝ Ս. Զորյանը, Մ. Զանյանը, Ա. Վըշտունին, Գ. Մահարին, Սիրասը, Ա. Բակունցը, Դ. Դեմիրճյանը, ընդ որում՝ Զորյանը, Դեմիրճյանը և Զանյանը կրկնակի ելույթով հարգել էին 1935 թ. մարտի 8-ի հայտարարություն-դիմումը։ Սիրասն իր ելույթում ասել է. «Չարենցի այս դիմումը շարունակությունն ու խորացումն է այն հակահասարակական, ինչպես նաև ազգայնական տենդենցների, որ նա արտահայտել է անցյալում իր ելույթներում և գրական գործերում։ ... Չարենցը չի կարող լինել խորհրդային գրողների միության անդամ»։ Նույն ոգով խոսում են նաև մյուսները, բացի Դեմիրճյանից ու Զորյանից, որոնք, համենայն դեպս, Չարենցին փրկելու ուղիներ են որոնում։

Ընդունվում է որոշում, որով Չարենցի հայտարարությունը որակվում է որպես «քաղաքական մի փաստաթուղթ, որը արտահայտում է մեր դասակարգային թշնամու պրովոկացիոն կրպարտիչ դիրքը հանդեպ խորհրդային իշխանության», որով Չարենցը, իբր, հերքում է փոքր ազգությունների գրականության ու մշակույթի զարգացումը և անվանարկում է այն։ Վարչությունն արձանագրում է, որ այդ հայտարարությամբ Չարենցն ավելի է խորացնում «իր կողմից մի շարք առիթներով արտահայտած ռեակցիոն նացոնալիստական, ինչպես և հակահասարակական տեսակետները»։ Վարչությունը դատապարտում է Չարենցին և նրան միաձայն հեռացնում գրողների միությունից։ Այս փաստին Չարենցը դեռ հաճախակի պիտի անդրադառնար և բանաստեղծություններում և այլ առիթներով ցավով հիշեր իր «ընկերների» արարքը։

Իսկ ի՞նչ էր գրել Չարենցը իր այդ հայտարարության մեջ՝ նկատի ունենալով իր շուրջն ստեղծված անասելի ծանր կացությունը։ Գրել էր.

Ինչպես երևում է փոթր ժողովրդի գրողը չի կարող ապրել միայն գրական աշխատանքով։ Քսան և հինգ տարի գրականությամբ զբաղվելուց հետո ահավասիկ տեսնում եմ, որ չեմ կարող ապահովել միջին կուլտուրական կենցաղ՝ ծառայելով գրականությանը։ ...Պետհրատը մերժում է տպագրել ևոր ժողովածու՝ պատճառաբանելով թղթի և հերթի բացակայությամբ։ ...Ուրեմն ի՞նչ անել։ ...Ապրել միայն թարգմանական կամ խմբագրական աշխատանքո՞վ։

Չարենցը նույնիսկ դրան է համաձայն, բայց և դա՛ էլ է ահմանափակված և հավասարապես բաշխված բոլոր գրողների վրա։ Շատ դառն ու ողբերգական շեշտով է Չարենցը շարունակում խոսքը. «Փոքրիկ իրականության մեջ չի կարելի ունենալ «մեծ» պրետենզիաներ։ ...Փոքր ժողովրդի գրողը չի կարող ապրել գրականությամբ, մնում է, որ նա ձեռք բերի այլ մասնագիտություն և ապրի նրանով»։ Ահա այսքանից հետո է, որ Չարենցը պահանջում է. «Խնդրում եմ կրկին՝ չտալ դիմումիս քաղաքական իմաստ և այսօրվանից չնչել իմ անունը գրողների ցանկից։ Թերևս ես կարողանամ ավելի օգտակար լինել խորհրդային կուլտուրայի այլ ասպարեզներում և, միևնույն ժամանակ, ստիպված չլինեմ զբաղվել գործի ն հասույթի մուրացկանությամբ»։ Եվ չնչո՛ւմ են նրա անունը հայ գրողների կազմից։

1935 թ. մայիսի 11-ին Չարենցը մի դիմում է հղում Անդրեևկրկոմ, Բերիային և, ընդունելով իր սխալները, խնդրում իրեն վերականգնել գրողների միության շարքերը։ Ահա այդ դիմումը.

В ЗАККРАЙКОМ ВКП(б)—тов. БЕРИЯ
От Егише Чаренца

ЗАЯВЛЕНИЕ

В литературно-общественной работе, к которой я имел отношение в последние годы, мною допущен ряд грубейших ошибок, ярчайшим примером которых может служить мое последнее заявление в Союз писателей Армении о моем уходе из корпорации писателей, (в которой) я фактически ставлю себя в положении человека, демонстративно декларирующего враждебное отношение не только к отдельным руководителям советской литературы в Армении, но и всей системы руководства, существующей у нас, в Армении.

Нахожу, что такое отношение к руководству ни в коем случае не должно было иметь место со стороны писателя, который имеет претензию на звание писателя с о в е т с к о г о, т. е. писателя, который прежде всего является одним из борцов за великие идеи Ленина-Сталина, который, помимо того, что является человеком определенной профессии, прежде всего есть гражданин великой родины трудящегося человечества. Единственное оправдание, которое может отчасти сгладить мою вину, это, может быть то, что в своем т в о р ч е с т в е, т. е. самой ответственной части моего общественного бытия, я не только не позволял себе стать в позицию, враждебную к системе наших дней, но всячески старался всей силой моих способностей быть выразителем этих идей в нашей художественной литературе, что и доказывается как всеми моими писаниями за последние 15 лет, так и жесточайшим враждебным отношением заграничной армянской контрреволюционной прессы ко мне, как к писателю.

Имея ввиду эту основную для писателя часть его общественной деятельности— именно творчество, я и прошу относиться снисходительно к моим грубейшим

ошибкам не литературного характера и восстановления меня в семье советской литературы, дать возможность в дальнейшем не только исправить свои ошибки, но и всячески, войдя в общее русло советской литературно-общественной работы, посвятить все свои силы революционной практике советской страны, в области литературы и культуры, как один из рядовых работников великой литературы советской родины.
11.V.. 35 г.

Егише Чаренц

(ՉՖ, № 163)

Ըստ երևույթին Բերիան միջամտել է գործին, քանի որ նույն՝ 1935 թ. հունիսի 6-ին Չարենցը վերականգնվում է գրողների միության կազմում։

Շրջապատից ունեցած դժգոհությամբ նույն օրերին Չարենցը նաև հեռագրել է Մոսկվա, Կրեմլ, Ստալինին և խնդրել իրեն պաշտպանել «մշտատև, անընդմեջ, իրական ոչ մի հիմք չունեցող անելանելի թունավորումից»։ Ահա այդ հեռագրի բնագիրը.

МОСКВА, КРЕМЛЬ, СТАЛИНУ

Прошу Вашей отеческой защиты от перманентной нескончаемой, не имеющей реального основания безвыходной травли...

Прошу вашей защиты и заступничества, как величайшего отца и учителя, вождя и друга в частности тружеников литературы...

(ՉՖ, № 167)

Վերին մարմիններին ուղղված այդ գրությունները առժամանակ կարծես թե խաղաղեցնում են Չարենցի շուրջ տեղում եղած վերաբերմունքը, թեև նա, մինչև իրենով Ստալինի հետաքրքրվելը, կազմակերպված ձևով դուրս է մղվում գրականությունից։ Նա չի ներգրավվում Լենինգրադ և Մոսկվա

մեկնող հայ գրողների պատվիրակության կազմում, ազատվում է աշխատանքից և մեկուսացած կյանք վարում տանը։

Իր հանդեպ առաջնորդի դրսևորած ուշադրությունից հետո, ավելի որոշակի 1936 թ. օգոստոսին է վերաբերում Զաբեևցի երկրորդ հանդիպումը Բերիայի հետ։ Եվ ի՞նչ, և ա՛յն, որ դրանից հետո արդեն վերջնականապես վրա է հասնում օրհասական ողբերգությունը, խորանում քաղաքական բանտարկությունը և է՛լ ավելի է սեղմվում նրա կոկորդին նետված օղակը։ Բանաստեղծի զայրույթը դառնում է մոլեգին մի ճիչ և հայրական հոգատարության կոչված ղեկավարին հասարում «բթնդեմ մի իդիոտ», որի «օծյալ քրմապետերը» հրկիզել են, տանջել ու խարազանել ճիշտ այնպես, ինչպես միջնադարյան հավատաքննության ժամանակ։ Դրա վկայությունից մեկն է շատ քայքայված ձեռագրերից մեկը՝ անմշակ, անավարտ այս տողերով.

Ցնծություն է, ծիծաղ
Եվ<.....> և ճարյուր հիսուն միլիոն մարդ
Կարուսել են նստել <.....>
Եվ վերևում ժպտացող մի իդիոտ <.....>:

Խնկում է կարծես վիբխարի մի դի հոտած,
Զարհբաք տարածված մեկ ու կես միլիոն մարդ
Փառք են խնկարկում ինչպես իրենց այդ
Եվ վերևից ժպտում է բթադեմ մի իդիոտ:

Բարձրանում է փոթի, ոսկորի, բթի հոտ,
Գետնամարշ տարածված ճարյուր հիսուն միլիոն մարդ
Աղոթում են <.....> աստծուն անլեզուիատ
Եվ ժպտում է վերից բթադեմ մի իդիոտ...
Հայացքն ճառած վեր...

Մի՞թե անվամբ Ռո այդ— ճրկիզել են, տանջել,
Խարազանել— անգամ Ռրմապետերդ օծյալ,
Ճարդն է եղել սակայն Ռո Ռրմապետը
Եվ մարդն է նույն՝ իր նենգ <.....>

(ՉՖ, № 66)

Բանաստեղծությունը գրվել է 1936 թ. դեկտեմբերի 9-ին, այսինքն՝ ստալինյան սահմանադրության ընդունումից մի

քանի օր անց՝ Նվ 150 միլիոն մարդու գետնաքարշ պաշտամունքը, ուղղված երկրի ղեկավարին, այդ առթիվ էր։ Այնպես որ, եթե մի ձեռքով Չարենցն ստիպված ողջունում էր այդ սահմանադրությունը, ապա մյուսով չնչում էր դա և, կյանքը տանուլ տալու վտանգի տակ, ասում ճշմարտությունը։

Ստալինի կերպարը Չարենցի համար դառնում է ամբողջ երկիրը կործանման տանող չար ուժի՝ Նեռի խորհրդանիշ։ Չարենցը նրան համարում է դարերի կործանարար ուժերի ծնունդ՝ սերված Ներոնի ժամանակներից և ժառանգած ցարական բոլոր ինքնակալների վատթար հատկանիշները։ Ընկերավարական կարգերի անունից խոսողը դառնում է համայն երկրի միահեծան դահիճ։ Դրա վկայությունն է և այս օրերին գրած հետևյալ բանաստեղծությունը.

Բարձրավիզ կոշիկներ ճագին՝
Մի ոտը Կրեմլի վրա ծաճր,
Մյուսը Ուրալի վրա,
Գլուխը ամպերին հասած,—
Ձրպես ամենի մի ուրձան,
Կոլոսի նման բարախորհուրդ
Ծառացել է կերպարանքը նրա.—

Չարհուրելի երևույթ չեղյալ
Աշխարհում օրից առաջին։
. . . . . .
Աշխարհի վեցերորդ մասում,—
Ջինգիսկան պարսպից մինչև
Սևծովյան ափերը չերմ—
Սառուցյալ օվկիանոսից մինչև Մասիս—
Այս անծիր եզերքի վրա
Փռվել է սովերը նրա
Եվ երկիրը կռում է ճագիվ...

Հակա առաչնո՞րդ Մարքսին ճավասար,
Մտածո՞ղ, փրկի՞չ աշխարհանման...

Ո՛չ, աշխարհացուցց կատակլիզմների
Հաճճարեղագույն խոհարար է սա...
Ո՛չ, անծայրածիր մի ամբողջ երկիր
Մի արջի նման պարացնող է սա...
Ինքնակալության ժառանգորդն է սա...

Ո՛չ, ոուս ցարերի՝ Իռիանճ Անեզի,
Ե՛վ Պետրոս Մեծի, և՛ պորփյուրակիր
Նիկոլաևների— վերջին իճիճակալ
Ժառանգորդն է սա...

(ՉՖ, № 118)

Հնար լինելու դեպքում բանաստեղծը դաշույն կխրեր այդ երևևէ չեղյալ դահճի սիրտը։ Բայց և, առանց իր մտքից ետ կանգնելու, դաշույնի փոխարեն հեռվից հեռու նա միապետի վրա է արձակում իր խոսքի նետերը։ Եվ նորից արծարծվում է նույն հարցը՝ թե, ի վերջո, ո՞վ է սա, ո՞վ է սրան տվել այսքան անսահման իշխանություն.

Հոտ է գալիս կրկին արյան
Այս վարպետի եփած ճաշից։—
Վնո՞ւխ է սա ճճադարյան,
Շառավի՞ղն է Շահ-Աբասի,
Որ նախաոր խանդով լեցուն՝
Ցարերի գահն եյած ճազիվ...
<.....> Հրդեհների ճուրճուր բոցում
Նո՞ր «Ջաբուլգան» է կառուցում...

(ՉՖ, № 117)

Ցարերի գահը նա դարձնում է ֆայտոն, և ուր որ պատահի, տրորում իր ճամփին ամեն բան և համայն երկիրը դարձնում արյան բաղանիք։ Առաջնորդին խնկարկող անխոհեմ հայրերի աչքի առաջ սրի է քաշվում նորընծա սերունդը, անեծք է կախվում նաև վաղվա օրվա գլխին.

— Օ՛, մանկիկնե՛ր մեր լույս,
Ձեր հայրերի՝ ձեր խեղճ ծնողների նման
Ե՞րբ են եղել, օ՛, ե՞րբ,— մեր նախնիներն ինմար
Եվ զավակներ սնել, որ գլխատվեն հլու...

— Օ՛, մանկիկներ մեր սուրբ ու նրբադեմ,
Որ . . . . . .
Իսկ ձեզ համար նոճա արդեն սրում են սուր,
Որ մի գիշեր անլույս ձեզ գլխատեն։
— Օ՛, մանկիկներ՝ պատկած մարտերում—
Ձեր հայրերի հիմար հասունության ներքո,—
Որ ձեզ համար իրենց հիմարության երգով
Եվ սեփական ձեռքով— քախտ են կռում հլու...

(ՉՖ, № 67)

Այս պայմաններում Չարենցն ամեն օր վերջին հրաժեշտ էր տալիս կյանքին, ընդ որում, հրաժեշտ՝ պատերազմող ղինվորի պես, որը կարող էր ընկնել ամեն վայրկյան։ Պայքարի մեջ մեռնելը երջանկություն է և հանուն արդարության ու ճշմարտության մղվող պայքարի՝ արժե, որ մարդ ծնվի ու աշխարհ գա։ Այս գիտակցությունը Չորենցն ուներ։ Բայց և մենության դառնապատիր պահերին շատ ծանր էր տանում ամեն բան։ Դեռևս 1936 թ. հունիսի 5-ին, «Գիրք ճանապարհի» առաջին տարբերակը նվիրաբերելով իր դուստրերին, այսպիսի տողեր էր գրում. «Իմ անգին բալիկներին՝ Արփենիկ Չարենցին և քրոջը՝ Անահիտին-«Ադոկին», իրենց դժբախտ հորից՝ Նաիրյան պոետ Ծղիշե Չարենցից» (գիրքը պահվում է Չարենցի ֆոնդում)։ Ահա այս զգացողությունն է, որ տարեվերջին գրած բանաստեղծություններից մեկում վերածվում է մահվան անդորր բերող այսպիսի տողերի.

Եվ ես էլ ինչ մնաց ցանկանալու կյանքում
Կարոտաձար իմ սիրտ և խռճախոց.
— Մանու հանգիստ միայն, անվախճան քուն,—
— Կամ անավարտ մի կյանք, խոնջեճ անխոռ։
(ՉՖ, № 68)

Բանաստեղծությունը գրված է 1936 թ. դեկտեմբերի 10-ին, այսինքն՝ սահմանադրությունը երկրի կողմից ցնծերգով ընդունելուց մի քանի օր հետո։ Չարենցն զգում էր, որ դրանով ամրապնդվում են դահճապետի դիրքերը և, ընդհակառակը, թուլանում իր և իր նմանների ապրելու և պայքարելու հնարավորությունները։

Այսքանից հետո է, որ գալիս է ահավոր սարկազմը և էպիգրամների հզոր վարպետը ծաղր ու ծանակի է ենթարկում «Թիֆլիսցի նեղճակատ կինտոյին»։ Այդ կինտոն նաև սարդի ճակատով է, որ արևներ է մորթում, որ նշանակում է՝ «վախում է ոբձակը մտքի, Չրկում մեզ հունդից ազգային»։ Ինչպես՝ միջնադարյան կացնի հարվածներով իջնում է նաև «ազգի երեկոն»։

Սաղր ու ծանակն ավելի է սրվում «Կար մի պոետ միամիտ...» տողով սկսվող անտիպ պոեմում և վերածվում սարկազմի։ Սարդի ճակատին գալիս են փոխարինելու ոչնչի եր-

կու գլխավոր հերոսներից մեկի՝ Տարականի բեղերը։ Միամիտ Պոետին ընկեր է դառնում Տարականը, որը «Ուներ բեղե զինվորական ևվ քայլվածք ահեղ»։

Պոեմը Չարենցը ամենայն հավանականությամբ գրել է 1936 կամ 1937 թթ., տնային մեկուսացման պայմաններում, ինչպես ինքն է ասում՝ «Քշված սենյակն իր ազատ, լուռ ու միայնակ»։ Այդ պայմաններում արտաքին աշխարհի հետ միակ կապն ստեղծում է ... Տարականը, որը և վերածվում է խորհրդանշանի՝ այլաբանորեն ակնարկելով Ստալինին և նրա ստեղծած բարքերը՝ լրտեսներ, քննիչներ, ահաբեկիչներ և այլն։ Խորհրդանշան է նաև 20-ամյա միամիտ Պոետի կերպարը, որն իր հերթին արտացոլում է Չարենցի և նրա նման դատապարտվածների վիճակը։ Սա իսկը և իսկը բանաստեղծի և միապետի հարաբերությունն է՝ հիմք ունենալով արդար ու մաքուր բանաստեղծական ճակատագրի և քստմնելի միջատի վերածված բռնակալի բախումը։ Ամեն ինչ ըստ ամենայնի իրական է՝ միայնակ ու հալածական պոետի ճակատագիր, հալածանքներ ու հարցաքննություններ, մեկուսացում ու անապահով կյանքի մղձավանջ։ Այս իրադրության մեջ Տարականն անգամ բարեկամանում է Պոետի հետ՝ արժանանում երգով մեծարվելու պատվին (հիշենք Ստալինին ձոնված քանաստեղծությունները)։ Կասկածանքի ու տխրության ժամին Տարականն իր հերթին մխիթարում է Պոետին և անգամ մտահոգվում նրա ճակատագրով (հիշենք Կրեմլում հայ պատվիրակության ընդունելությունն ու Ս. Զորյանին Ստալինի տված հարցերը)։ Գրոտեսկային ծայրահեղացումով, որը, սակայն, ժամանակի ճշմարիտ պատկերն է, Չարենցը պատկերում է իր ու իր նմանների կյանքի ողբերգությունը, երբ Տարականը և՛ Պոետի «արտակիցն» էր, և՛ հատակի տակից պաղտնի հսկողն ու լրտեսողը։

Անթվակիր և անվերնագիր լիներով՝ պոեմը նաև անավարտ է ու անմշակ։ Ներկայացվող հատվածները գրել է թանաքով, նեղ էջերի վրա։ Կան նաև մատիտով գրված տներ, որոնք սակայն նախնական սևագրություններ են։ 1—11 թվարկում ունեցող տները լրացվում են 1—7 թվարկում ունեցող տներով։ 1—7 թվարկման հերթականությունը ձեռագրում խախտված է (կրկնվում է 3 համարանիշը)։ 1—11 հատված-

Ժի 12 թվագրված, բայց չգրված տունը ենթադրել է տալիս, որ պոեմը պիտի շարունակվեր։ Ինքնին դա հուշում է նաև պոեմի բովանդակությունը։ Ահա այդ պոեմը, որը Զարենցի ֆոնդում պահվում է 114 համարանիշով։

ԿԱՐ ՄԻ ՊՈԵՏ ՄԻԱՄԻՏ...

1

Կար մի պոետ միամիտ,
Քսան տարեկան։
Նա մի խոռխոռ տարականի
Դարձավ ... բարեկամ։

2

Տարականն էլ սովորական
Հո տարական չէ՞ր։—
Ուներ բեղեր գինովորական
Եվ խլլված ճնշեղ։

3

Հաճում էր նա բեղերն իր երբ
Մութ ճտակի տակից,—
Պաղ է պատում պոետին մեր
Կամ ահ մթագին։—

4

Ընտելացավ ճեռզճեռն
Նրան պոետն անմիտ,—
Անգամ երբեր նա գեռեղեց՝
Ջռնված Տարականին։—

5

Սիրում էր մեր պոետը իր
Կասկածների ժամին
Լսել արթած իր սիրալիր
Եվ ժիր բարեկամին։

6

Երբ կասկածանքն էր տոչորում
Նրա սիրտը փափուկ,—
Բարեկամի առչև էր լոկ
Նա իր սիրտը բափում։—

7

Կանչում էր նա ձայնով բեկբեկ
Բարեկամին խռխռտ,—
Երբ տխրությունն էր ճուսաղբեկ
Խեղդում ոգին իր ողջ:

8

Հանում էր իր բեղերը սուր
Հատակի տակից
Եվ առնական ճուսաղբում
Իր թույլ բարեկամին:

9

Ցնցում էր իր բեղերը սուր
Որպես երկու տեգ.—
Սիրտ էր տալիս, խրախուսում.
«Չընկճվե՛ս երբեք:—

10

Դու անկում ճանճար ունես,
Տրված է ինձ գրիչ,—
Աշխարհը ողջ սիրում է ինձ՝
Գերված ո՛ն երգերից—

11

Եվ վերջապես՝ ունես ինձ պես
Բարեկամ ար՛ի,—
Էլ մինչև ե՞րբ դու ճամբեռես՝
Հարվածներից չարի...»:

12

. . . . . , .

1

Կար մի պոետ միամիտ...
(Էլ ինչ պոետ,— եթե
Միամիտ չէ;— և մի իիչ
Խելոք ... թեթև ...):

2

Սակայն հայտնի է, որ մեր
Աննոդոդող գառում—
Պիտո է կա՛մ աներեր
Ժառանգել վերուստ:—

3

Տված է ձիրք հանճարեղ
Մեր պռնտին միայն,—
Եվ <անընդ.> անարև՝
Ի նզսերով ունայն:

4

Քշված սեղ՝ակն իր ազատ,
Լուռ ու միայնակ,—
Երգ էր միայն նա գրում
Եվ տխրում էր նա:

5

Բաց էր սակայն աշխարհի
Եվ բնության հանդեպ
Սիրտը նրա, որպես մի
Առազաստ անբեծ:

6

Լիճն է հեռու և մոտիկ
Հաղմերով կյանքի
Եվ հանճարեղ իր ոգին,
Եվ նրա սիրտն անգին:—

7

Ջկար կյանքում մարդկային
Եվ ոչ մի ճնշյուն,
Որ չճնշեր, իբրև ճիմն,
Նրա սրտում խկույն...

Չորրորդ և յոթերորդ տներն ունեն նաև այսպիսի տարբերակներ.

4

Քաշված անկե իր աճեույս
Միայնակ ու մոայլ՝
Նա դիզերում էր աճեույս...

7

Չկար կյանքում մարդկային
Եվ ոչ մի ճառաչ,
Որ չճնշեր, իբրև հիմն,
Նրա ոգում...

Ահա, այս վերաբերմունքի մեջ է ճշմարտությունը: Բայց Ստալինի դիմակը պատռելով, նրան ինչպես հարկն է ճանաչելով և ճանաչելի դարձնելով, Չարենցը նաև ահաբեկված էր հրեշի ոճրագործություններից և, ինչպես ակնարկում է պոեմում, փորձում է նաև նրան երգեր ձոնել: Բայց մի ձեռքի գրածը մյուս ձեռքը չնչում է: Այսպես է՛լ ավելի է ծանրանում նրա ողբերգական վիճակը, որովհետև բոլորը միաբերան օվսաննա էին երգում հրեշին, շքանշաններ ստանում և ապահովագրում իրենց կյանքը, իսկ ինքը ոչ միայն փշե պսակը գլխին և իր իսկ խաչը շալակած է գնում դեպի Գողգոթա, այլև ուզում էր Պիղատոսին հենց Պիղատոս ասել, որը Հիսուսին թողած ավազակ Հեսու Բարաբբային ազատեց կալանքից: Հնամենի այս պատմությունը նորոգվում է նորից ու նորից...

Ասացինք, որ հալածանքներից ազատվելու և կյանքը փրկելու հույսով նաև իր հանդեպ առաջնորդի ցուցաբերած վերաբերմունքն արդարեցնելու համար Չարենցը մի պահ փորձեց տուրք տալ օրվա պահանջներին: Արդյունքը եղավ այն, որ 1936-ի օգոստոս-հոկտեմբեր ամիսներին նա սկսեց գրել մի վիթխարի պոեմ և այն երկար ու բարակ վերնագրեց «Թուղթ Իոսիֆ Ստալինին... Նվիրեն Չարենցից...»: Միայն վերնագիրն ընդգրկում է 52 բառային միավոր: Թեև անկիրք, բայց և հետևողականորեն Չարենցը շարադրում է Առաջնորդի կյանքը՝ մանկությունից սկսած: Նրա հերոսը տեսնում է անհավասարություն ու շահագործում և ներքուստ հասունանում վաղվա առաքելությունների համար: Հետո նրա հերոսը սերտում է Ռուսթավելի և անգամ հանգավոր տողեր շարադրում: Ով հենց այդ պահին իր դժբախտ ու մեծ ժողովրդի անաբատ կաթով սնված բանաստեղծը, ժողովրդի անունից խոսող նահրյան աշխարհի երգիչը, որը երգել է դժնի օրերի տառապանք և ժողովրդի զարթոնք, ահա այդ հնամյա աշխարհի գուսանը,

ինչպես իրեն Չարենցը դիմում է այս պոեմի «Ուղերձում», սթափվում է մի պահ իր ներքողյանից ու գովքից և, վերագրտնելով իր հնամյա ցեղի դարերով հնչած ձայնի արդարությունը, մարգարեաբար գրում.

Հպարտ է և քիրտ՝ դահի՛ճ աճեներդ
Բանաստեղծական արվեստի մուսան.—
Արհաեերն են երբ մկրտվում գուսան՝
Լավագույն դեպումը— դառնում են... Ներոն:—

Դեռ չի պատճել կյանքում մարդկային,
Որ լպիրշ մի այր ձեռքերով իր պիղծ
Երգի սրբազան հնոցում թխի
Գործության նացեր՝ և թուհոտ, և հին...

Մաքուր ձեռքերով կարելի է լոկ
Մերձենալ երգի աստվածուհուն մերկ.—
Եվ այն է միայն անմահ դառնում երգ,
Ինչ իղձ է անմեղ, անարատ ցնորք...

Տերյանի տողերը քիչ վերափոխելով՝ պոեմին Չարենցն այսպիսի բնաբան է դրել՝ «Յուրտ հոկտեմբերն է բախում իմ դուռը Եվ աղմկում է հողմը գիշերս»: Բնական է, որ այս տրամադրությամբ, ինչքան էլ իրեն գովերգի կոչեր, Չարենցը չէր կարողանալու դեմ գնալ սրտի ձայնին: Այս երկվությունը անընդմեջ ուղեկցել է նրան: Բնորոշ մեկ այլ օրինակ՝ Ստալինին գրած դիմումի այն ինքնագիրը, որի վրա մշակել է ստալինյան հալածանքների զոհին՝ Ա. Խանջյանին նվիրված սոնետների շարքի առաջին սոնետի առաջին տողերը՝ «Նա պառկած էր նախկին սեղանատան միջում ... Իր դագաղում փայտյա ...»: Կրկին իրար կողք են կանգնում զոհն ու դահիճը և ինչքան էլ դահիճը զարդարվի, միևնույն է՝ նրա ձեռքերը արյունոտ են: Նույն այս պատկերն է նաև անտիպ հետևյալ բանաստեղծության մեջ, ուր, ոչնչացնելով ճիվաղին, կարծիք չանացել է դրական անցում կատարել, բայց զգալով, որ չի ստացվում, թողել է կիսատ.

Նրա որդի զարմանալի
Խղճուկ ճարճի մի ոդերմուկ,—
Էր ճա մանուկ մեծագլուխ,

Աչխեարը սև ու գեմբը բուխ,
էր նա մանուկ մի հասարակ,
Միայն աչխեռն էին կրակ,
Եվ որ ..... էր հակառակ—
Մատներ ուներ նեղ ու բարակ,
Մոմանման մատներ բարակ,
Դեղին ու նուրբ...

(ՉՖ, № 106)

Տակը ռուսերեն գրել և չնչել է հետևյալ տողերը. «Այս ոճը լավ է և համապատասխան։ Եվ որպես սկիզբ վատ չէ»։ Ի՞նչ է ակնարկում սրանով Չարենցը։ Ըստ էության՝ շատ կարևոր միտք, որն ակնհայտ է այս և դրական շեշտով գրված բանաստեղծություններում՝ «Հիմն Ղեկավարին», «Ներբող Առաջնորդին» (ՉՖ, №№ 40, 93)։ Առաջինը գրված է 1936-ի հունիսի 20-ին, երկրորդը՝ 1937-ի հունիսի 12-14-ին։ Առաջինը կից գրությամբ հասցեագրել է Ա. Խանջյանին, որը բառացիորեն մի քանի օր հետո՝ հուլիսի 9-ին պիտի դառնար Ստալինի հերթական զոհերց մեկը և Ա. Ամատունուն, որը պիտի դատեր Խանջյանին, և ինքն էլ մի քանի ամիս անց դատվեր Բերիայի գործակալների ձեռքով։ Ահա այդ գրության սկիզբը. «Աղաբի՛, Ամատունի՛! Եթե իմ տեքստը անցնի՝ խնդրում եմ Ղեկավարի անունը գրել տաք Իոսիֆ և ոչ Քե Հովսեփ»։ Ամենայն հավանականությամբ հիշյալ հայ ղեկավարները Չարենցին հորդորել են գրել այդ բանաստեղծությունը, որպես փրկության «խնդրագիր»։ Բայց, ինչպես ասում են, շաբաթն ավելի շուտ եկավ, քան՝ ուրբաթը։

Մի պահ Չարենցն ընկնում է մտավոր լկականքի մեջ։ Ի՞նչ անել, ի վերջո՝ լինե՞լ, թե՞ չլինել։ Արդյունքը լինում է մի բանաստեղծություն՝ գրված «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» տետրապտիքոսի հանգույն։ Բանաստեղծության տարբերակներից մեկում (ՉՖ, № 112) կարդում ենք.

Ինչպես ճնում վկան այն՝ Նաբեկացին
Հղում էր խոսքն իր խոր՝ իր արաչին անտես,—
Հղում եմ խոսքն իմ խոր՝ սրտիս խորից այդպես
Ոչ մի փրկչի ուրիշ,— Առաջնորդից բացի։
Մի՞թե իրոք այսօր ես դուրս մնացի
Քո արեից, երկրից, ժողովրդից աննզոր,—

Չէ՞ զառանցանէ արդյոք սա.
Առաջինն ո՞վ երգեց գովքը Այգաբացիդ։

Ցնծությամբ է համայն հայրենիքում իմ ևս,
Հղում է սերն իր ինձ ժողովուրդը խնդուն.
Մի՞թե պղծում եմ այն ես իմ ճիմնով...

Չէ՞ որ ինդում է ևս՝ իմ խնդությունը ևսկա,—
Նվ կքնդա ընդմիշտ,— և ոչ ոք չի խեղդի
Իմ մեջ խնդուն ես ճիմնը բանի ես կա՛մ։

Ի՞նչ առաջնորդի մասին է խոսքը և ի՞նչ հիմնի։ Հեղափոխության՞ն առաջնորդի, թե՞ նրա հաջորդի։ Նվ ի՞նչ հիմն է դա՝ հեղափոխությա՞ն, որ երգեց նաև ինքը, թե՞ անհատին փառաբանող, որ հարկադրաբար գրեց ու տվեց հանրապետության ղեկավարներին։ Չարենցն ըստ էության համադրել է երկու եզրերը՝ արանքում էլ ավելի ընդգծելով իր ողբերգությունը։ Թվացյալ տոնահանդեսի մեջ Չարենցն ավելի տապալգին կերպարանք ունի, որովհետև պատմությունից այնպիսի մեկի դուրս մնալը, որպիսին ինքն էր՝ Այգաբացի առաջին երգասանը, առնվազն տարօրինակ էր հենց պատմության տրամաբանության տեսակետից, բայց և օրինաչափ՝ պատմության ղեկը ժամանակավորապես իր ձեռքում պահող դահճապետ-միապետի տեսնակյունից։ Այս բանաստեղծությամբ Չարենցը վերջնականապես ըմբռնում է պահի տրամաբանությունը, գիտակցելով, որ արյունոտ խինդի ու ցնծության շղարշի տակ դահիճներն իրենց կացինն են սրում։ Քողարկված ոճիրը նաև քողարկված բողոքի ձայն է հաստնացնում, որ Չարենցը թաքցրել է հենց վերոհիշյալ երկու բանաստեղծություններում։ Այդ կապակցությամբ վերստին անդրադառնանք նրա ակնարկին՝ արված նյութի և ոճի համապատասխանության առթիվ։ Դա վերաբերում է նրան, որ Չարենցը երբեք մարդկային խոր հատկանիշներով հոգեբանորեն չի գնահատել դիկտակտորին։ Նվ անգամ այն դեպքում, երբ ինքն իրեն ստիպել է դրական խոսք ասել նրա հասցեին, ապա դա հիմնականում եղել է չեզոք դրական՝ հենված արտաքին հատկանիշների պատկերման, հեղափոխական բո-

վանդակությունն ունեցող ընդհանուր բնույթի արտահայտությունների ոճավորման վրա։ Ընդ որում՝ Չարենցը երբեք չի տալիս նրա անունը, այլ դիմում է ընդհանուր արտահայտություններով։ Եվ որ ամենակարևորն է՝ գրանիտյա սառը փայլի տակ Չարենցն անընդհատ զգացրել է վարագուրված դաժանությունը։ Բացահայտ դա նա չէր կարող անել, ուստի՝ դիմել է այլաբանության՝ պատկերների մեջ կուտակելով նսեմ հատկանիշներ և ստոր կրքեր արտահայտող այնպիսի բառեր ու բառազուգորդություններ, որոնք նրա ստեղծագործության մնացած էջերում երբեք այդքան կողք-կողքի ու խտացած չեն։ Ահա նմուշներ առաջնորդին ձոնած ներբողի բառապաշարից, որոնք անդրադարձ ձևով են հասցեագրվում նրան, ում դրական խոսք է ասվում, որը պիտի չասվեր կամ հակառակն ասվեր. ցասում, դժնի, բիրտ, ռազմաշունչ հողմ, ահեղ թշնամանք մահացու, մահ ես սփռել, զազիր, ուխտադրուժ, դավաճան որդեր։ Սա այն վերաբերմունքն է, ինչ նկարչության մեջ արտահայտվում է թունավոր գույների կուտակումով։ Սա նաև այն վերաբերմունքն է, երբ դահճի արտաքին խաղաղ կերպարանքի տակ հյուսվում են օձերի խրձեր... Ահա այսպես է բանաստեղծը վրեժ լուծում իր թշնամուց, որը իսկը ժողովրդի թշնամին էր։

Ստալինյան ծանր մղձավանջը Չարենցին պաշարել էր վերից վար՝ բարձրագույն ղեկավարից մինչև հանրապետության գավառական ղեկավարները։ Քանի Խանջյանը կար՝ Չարենցը համեմատաբար ապահով էր, թեև չէր մոռացվել «Գիրք ճանապարհի» հետ կապված պատմությունը։ Բայց Խանջյանի սպանությունից հետո նրա վիճակը դարձավ օրհասական։ Ահա հոգեբանական այս վիճակում են գրվել տեղական ստալինիկներին բնութագրող նրա էպիգրամներն ու բանաստեղծությունները, որոնք ժողովված են «Սև տետրում»։ Ահա դրանցից մի քանիսը.

...

Մաեր, ղեկիմ,
Գանգի միջին—
Երկու բզեզ,
Երկու ոչիլ..
Ուրիշ— ոչինչ...

...

Գանաճ բզեզ,
Հայացքը ճեզ,
Տանջում է մեզ
Բարեհաս պես..
1935. IV. 30.

«Եղբայրների» աճից
Հազիվ պրծած մաճից
Ողորմելի դաճից...

Չարենցը ամեն կերպ շարունակում է կյանքի ու ապրելու ուղիներ որոնել, բայց և ապարդյուն: Մտալինյան մղձավանջի մեջ օրըստօրե մոտենում էր մահը: Ու նորից ծնվում են տողեր. «Մտքերս մուխ են, Մտքերս՝ մահ են» (ՉՖ, №87): Հետո գալիս են անհուսության ու հեռացումի նոր խոսքեր.

Այս ամեհի օդի մթնոլորտում ճնշող
Սավերներ են չրջում օրհասական,—
Եվ անցյալի մռայլ <անընթեռնելի> ճնշում
Ծալ , ինչպես ինձ մի երգ հերոսական...

(ՉՖ, №87)

Ինչ–որ ճույս էր,
Ինչ–որ լույս էր՝ մնաց բերի.
Իմ խեղճ ճոգիս
Այս վանդակում մնաց գերի:
Ապրեմ ճույսով,
Վառվռա լույսով, իմ սիրելի,
Տեսնեմ վաղը
Կամ ապագան ի՞նչ կբերի:

(ՉՖ, № 98)

Հետո գալիս են խոհի առաջին ազդակով գրված, բայց դեռ բանաստեղծություն չդարձած տողեր. «Ոչ մի դարում դեռ մարդն այսքան գետնատարած Որքան հիմա Դեռ չի եղել այսքան աստրաքարշ, անդեմ» (ՉՖ, № 105): 1936 թ. Չարենցը կազմել է մի «Աղոթագիրք», տակը ձեռքով խաչ նկարել, գրել «Ե. Չ.— 1936— Երևան», իսկ ճակատին գեղազարդել Տերունական աղոթքի տողերը. «Հաշա մեր հանապազօրյա տո՛ւր մեզ այսօր» և ապա շարադրել.

Օ, լռություն ընտանի և մենություն խնկաճոռ,
Կաքեղի լույս կապտավուն և Տիրամոր դեմ չռված
Գիշերային ճսկումի ժամ՝ աղոթքով բարբոսուն...
Օ, մենություն ընտանի և լռություն բարբառող...
(ՉՖ, №№ 124, 125)

Իսկ մնացյալը մոխիր է, այրված մի կյանք՝ ձեռագրերի փըշրանքների տեսքով, որ կարծես աճյունափոշի լինի: Փշրանքների վրա դեռ աղոտ կարդացվում են առանձին բառեր ու արտահայտություններ՝ «սարսափահար», «Սիրտ իմ անկոր», «Դեպի անդունդ»...

Այսպես դեպի անդունդ գլորեց Ստալինը մարդկանց: Վերջին պահին, անդունդի եզրին կանգնած, Չարենցը գրեց.

<Հոգով> ուրախ եմ... և տխուր,
Մտքով տարբեր ու տարօրինակ,
Աշխարհը ցուրտ է, և՛ դաժան, և՛ բիրտ է,
Մարդիկ անկիրթ են, իսկ ես— մենակ...

Օ, անկիրթ են մարդիկ բոլորը՝
Ե՛վ նա, ով լավ է, և՛ նա, ով վատ,
Ե՛վ նա, որ նոր է տեսնում իր օրը,
Ե՛վ նա, որ մեռնում է արդ:

Կարծես թե սուտ է եղել Հոմերը,
Ե՛վ իմը՝ Հիսուսը, և՛ իմը՝ Աստված,
Ե՛վ իմը՝ Կանոը, Գյոթեն ու Թենը,—
Ե՛վ այն ամենը, ինչ կա ասված:

Կարծես մեր կյանքը միայն եղել է
Ահև, զառուձ ու զառնաճ բողբոջ,
Եվ իզուր է մարդը մի օր շեղել իր
Ուղին շավղից ու ճամփից դողդոջ:
17. V. 1937 (ՉՖ, № 92)

ԵՐԿՈՒ ՁԱԿԱՏԱԳՐԵՐԻ ԲԱԽՈՒՄ

«Թուղթ... Եղիշե Չարենցից» վերնագրված ստեղծագործությունը բավականին ծավալուն պոեմ է։ Ներկայացվող տարբերակը, որ պահվում է ԳԱԹ ՉՖ (№ 52), անավարտ է և անմշակ։ Վերնագիրը երկար է՝ 52 բառային միավոր։ Ունի երկու մաս՝ «Ա. Ուղերձ», «Բ. Վիշտը պոետի»։ Գրել է ձեռքով պատրաստած կարմրակազմ տետրում։ Տետրի առաջին էջը գեղազարդված է այս տողերով.

Ձեռագիր
1936. VIII 23—24
Մաղկաձոր
Ս. Հ. Գ. Միություն
Հանգստի Տուն

Այնուհետև՝

1 հոկտեմբեր 1936
Երևան
...Ցուրտ հոկտեմբերն է բախում իմ դուռը
և աղմկում է հողմը գիշերս...

Տերյանի այս տողերը բնագրում քիչ այլ են՝

Ցուրտ հոկտեմբերն է ծնծում իմ դուռը
և աղմկում է հողմը գիշերս...

«Ուղերձը» ամբողջությամբ տպագրվել է «Ընտիր էջեր հայ գրականության» (Երևան, 1946) ժողովածուի մեջ, այնուհետև չորս քառատող հրատարակել է Անահիտ Չարենցը (տես՝ Եղիշե Չարենցի ինքնագիր տետրակները.— Սովետական գրականություն, 1982, № 10, էջ 129)։

Պոեմը Չարենցի ողբերգական կյանքի շատ ցայտուն մի վավերագիր է։ Հարցաքննությունների ու հալածանքների ճնշման ներքո և փրկության հույսի ակնկալիքով նա այս «Թուղթը» հղել է Ստալինին։ Բայց և Չարենցը խորապես ճանաչում էր նրա ճիվաղային էությունը և այս շրջանում գրած շատ գործերի մեջ նրան համարել է 150 միլիոն ժողովրդի վրա վերևից ծիծաղող «բթադեմ մի իդիոտ», ցարերի գահին բազ-

մած «նեղճակատ կինտո», մեր ազգային հումդի «որձակը լափող» «սև կառքի կառապան» ու «հարճորդի»։

Նյութը երկու ճակատագրերի բախումն է՝ պոետի ու ղեկավարի։ «Ուղերձում» պոետը խոսք է ուղղում ղեկավարին։ Բ մասում պատկերված է ղեկավարի կյանքը և պոեզիայի «կյանքը»։ Այդ մասին Չարենցը խոսում է Ստալինի գրական փորձերի առիթով։ Այստեղ բանաստեղծը իր հզոր տարերքի մեջ է։ Աշխարհի կառուցման գործում նա ամենայն արժանապատվությամբ առանձնացնում է պոեզիայի վիթխարի դերը։ Շատերն են երազել մուսաների մտերմությունը, բայց քչերն են վայելել նրանց հովանավորությունը։

Ակնարկը թեև քողարկված, բայց որոշակիորեն ուղղված է Ստալինին, որը 1895-1896 թվերին, 15-16 տարեկան հասակում Ի. Ջ-շվիլի, Սոսելո ստորագրությամբ «Իվերիա», «Կվալի» թերթերում տպագրել է քնարական բնույթի վրացական ընդգծվածությամբ բանաստեղծություններ։ Ահա այսպես՝ «Մուսաների անեղծ ընկերությամբ» Չարենցը վրեժ է լուծում Ստալինից, որը բռնակալի թաքնված էությամբ փորձել է դառնալ պոետ, բայց՝ ապարդյուն։ Այդ վրեժի հաստեատերերն են նաև նրանք, ովքեր զենքով ու դաժանությամբ տնօրինել են պոետների բախտն ու ճակատագիրը։ Այսպիսով՝ ղեկավարի ժամանակավոր և անցավոր փառքի հանդեպ Չարենցը դնում է պոետի հավիտենական փառքի ու անմահության հաղթանակը։

Պոեմի երկու մասերից ստորև տպագրվող հատվածները վերաբերվում են իր իսկ՝ Չարենցի բանաստեղծական ճակատագրին և պոեզիայի «կյանքին»։

Քառատողերը Չարենցը համարակալել է հռոմեական թվերով։ «Ուղերձում» դրանք ճիշտ են, իսկ Բ մասում հերթականությունը խախտված է՝ Չարենցը երբեմն կրկնել է նույն համարանիշը։ Տպագրության ներկայացվող հատվածներում հռոմեական թվակարգով թողել ենք Չարենցի կատարած համարակալումը, որ նա արել է տների ձախ կողմում, իսկ վերևից արաբական համարանիշով կատարել ենք նոր համարակալում։

ԹՈՒՂԹ... ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻՑ

Ա

ՈՒՂԵՐՔ

I. Իբրև Նաիրյան երկրի բանաստեղծ,
Որ՝ նպարտ իրեն ճղած ճավատով,
Ով սնված միայն ռնարատ կաթով
Իր ժողովրդի և՛ դժբախտ, և՛ մեծ,—

II. Իբրև նահիրյան աշխարհի պսեհ,
Որ դեռ չի լսել իր ժողովրդից
Ռասֆ կշտամբանքի,— որ, իբրև որդի,
Հաշտ է ոգևին եղել նրա հետ,—

III. Իբրև նահիրյան աշխարճի երգիչ,
Որ տառապանքն է իր երկրի երգել
Սրերին դժնի,— և խի՛ղճն անարգել,
Երբ խնդուն թնդաց երկիրն իր երգից,—

IV. Իբրև ճճամյա աշխարճի գուսան,
Որ առաչինն է ավետել կյանքում
Իր ժողովրդի զարթոնքը խնդուն,
Երբ.ճո՜ր էր ծագել այգը Հյուսիսյան,—

V. Եվ իբրև նվաստ բերթող վերջապես
Եվ նվաստ բարգման իր ժողովրդի
Դարերով խոցված ճանճարեղ սրտի,
Որ ծծում է արդ խինդդ կենսաբեր

VI. Լենինյան հրով ու ձեռքով ֆո պիրկ
Հավիտյան վառված այս արեգակի,
Ճրի լուսացայտ շողերի ակին
Կյանքի ենք կոչում և՛ կռռով, և՛ ձիրք,—

VII. Իբրև հայրենի երկրի երգախոս՝
Դիմում եմ երկրիս անունից աճա—
Քե՛զ, ստեղծագործ մարդկության վաճա՛ճ,
Քե՛զ, ճաքածակաճ ազգերի փարոս,—

IX. <.....> Իմ երկիրն ու իմ ժողովուրդն համայն,
Ժողովուրդն իմ այն, որ դարեր բազում
Փրկության շողշող այգ էր երազում
Ստեղծագործական իր երթի համար,—

X. Իմ ժողովրդի անունից անա,
Որ ես պատգամին ելած ընդառաջ
Կերտում է արդեն իր բազմաշտաւշ
Երթը՝ աշխարհում իր արևահամ,—

XII. Դիմում է անա ուղերձով նվաստ
Ժողովուրդների պողպատյա մարդուն
Նախրյան երկրի բանաստեղծն արքուն՝
Ո՛չ իբրև միջնորդ, այլ պոետ լոկ պարզ։—

XIII. <. . . . . .>
Արդ ինչ է դիմում ուղերձով իր այս—
Հայրենի երկրի տաղերգուն նվաստ՝
Իր պոետական անաղարտ խոսքով...

22—23. VIII.
Գիշեր—Առավոտ—Ցերեկ
Ծաղկաձոր
Խ. Գ. Հ. Տուն

ՎԻՇՏԸ ՊՈՆՏԻ

56

LVI. Այն ճեռու օրից, աշխարհում երբ դեռ
Առաջին անգամ պատանի մի վառ՝
Խոցեր փորելով մատների համար՝
Դողդոջ եղեգից սրինգ է շինել,—

57

LVII. Եվ վառված տապով պատանեկական՝
Հպել է եղեգն իր շրթունքներին,
Որպեսզի հնչուն իր երազներին
Արձագանք ճիճե խանդով կուսական,—

58

LVIII. Առասպելական, ճեռու այն օրից,
Մինչև գործնական օրեն այս ներկա—
Աչքիվ տարիներ և դարեր երկար,
Մինչ եղեգն այն պարզ դարձել է գրիչ,

59

LIX. Դարձել է առաջ գրիչ փետուրե,
Ապա պողպատյա անկար գրչածայր,
Մինչև որ փայլուն «ինճճահոս» դարձած
Հասեր ևս անվերջ և ամենուրեք,—

60

LX. Դողդոջ եղեգից մինչև այս օրվա
Գրիչն ինճճահոս,— անհաշիվ դարե՜ր,—
Եղե՞լ է կյանքում մի այր արդարև,
Որ պատանեկան հույզերով վառված—

61

LXI. Գեթ մի պահ, գոնե ակնթարթ մի վեհ
Չի՛ առել եղեգ, փետուր կամ գրիչ,
Որ ասպետական ներքողներ գրի
Իր երազների տենդին ի նվեր...

62

LXII. Պատանեկական հույզերով վառված
Մարդկության ծագից մինչև այս րոպեն
Դեռ չի՛ եղել սիրտ, որ չըտրոփե
Երգի տագնապով ... Հերալկիտից — Մարֆս,

63

LXIII. Վայրի շամանից մինչև էդիսզոոն,
Դեռ չի՛ եղել մարդ, որ կյանքում գոնե
Չլինի զրած մի անմիտ սոնետ,
Իր անդեմ իղձին նվիրված մի ձոն...

64

LXIV. Հախուռն օրերում պատանեկական
Գրել եմ անմիտ ճանգավոր տողեր
Մարդկային կյանքի բոլոր ճանճարեղ
Ասպետներն՝ անկախ իրենց «իսկական»

65

LXV. Գործից հետագա ... Բռնապետ արմա,
Թե-ասպետական տենչերի հերոս,—
Մարկոս Ավրելիոս, կեսար, թե Ներոն,—
Իշխան բազակիր, թե մշակ չարքաշ,—

66

LXVI. Բոլո՛րն էլ իրենց կյանքում բազմահուն
Գեթ մի պահ, գոնե վայրկյան մի լուսե
Ծղել են պռետ, բանաստեղծ վսեմ—
Ջեն շանել բեկուզ ո՛չ փառ ա՛չ անուն...

67

LXVII. Գրել եմ տողեր բանաստեղծական,
Հանգավոր խոսքեր հաճախ անիմաստ,—
Ամեն ոք կյանքում իր բախտի դիմաց,
Որ <անընթեռնելի> իրև <անընթեռնելի>

68

LXVIII. Համբուրել է սուրբ երգերի Մուսան
Բոլոր պատանի չրթերն անխտիր,—
Ամե՛ն ոք՝ կյանքի վայրկյանին ընտիր՝
Զգտել է լինել հանճարեղ գուսան...

69

LXIX. Ամե՛ն ոք, կյանքի երերուն պահին,
Գեթ մի լուսավոր ակընթարթ կյանքում,—
Նտռել է գոնե գիշեր մի անուն՝
Զեռին գրչակոթ մի գուսանային...

LXX. Գրել են չնչին առաճավարճեր
Պատանեկական ճոպզով առնացի
Ե՛վ Ալեքսանդրը Մակեդոնացի,
Ե՛վ Կալիգուլան՝ արյան աճօրեն:—

LXX. Փորձել է անմահ աղբերգություններ
Հարինել մի օր Բռնապարտը բիրտ,—
Բայց չի <զմայլվել> և ո՛չ մի դպիր
Նրա հանճարի փնչեր<ն> այդ գունեղ:

LXXI. Հպա՛րտ է և բիրտ՝ դահի՛ճ աննեղոզ
Բանաստեղծական արվեստի Մուսան.—
Արյաներն են երբ մկրտվում գուսան՝
Լավագույն դեպքում — դառնում են... Ներոն:—

LXXII. Դեռ չի՛ պատահել կյանքում մարդկային,
Որ լսած մի այր ձեռքերով իր պիղծ
Երգի սրազան ճնճղում թխի
Գործության հացեր՝ և՛ բուռոտ, և՛ ճիճ...

LXXIII. Մամուռ ձեռքերով կարելի է լոկ
Մերձենալ երգի ստվածուհուն մերկ.—
Եվ ա՛յն է միայն անմահ դառնում երգ,
Ինչ իղձ է անմեղ, անաղարտ ցնորք:—

LXIV. Եվ այսպես՝ մարդու կյանքում ընդլուսնյա
Սերնդից-սերունդ, անճաշիվ դարեր
Ամեն պատանի իր ուսերն է տարել
Եվ ծանրկ խաճարճել, իբր այր ու գուսան,

LXXI. Երգերի անմահ դիցուհու առջև...
Ով չեմ ճանաչում ես այր այնպիսի,
Որ աշխարհային իր կյանքի կեսին
Ո՛չ երգ է գրել և ո՛չ հառաչել...

77

LXXII. Լ ե ի ն է կարծեմ, կյանքում միայնակ
Մա՛ղե այն բացառիկ, որ <կյանքում իր ազչ>
Ո, չի՛ էլ գրել ճանգավոր մի տող,—
Թեկուզ ... ո՞վ գիտե ... Արդյո՞ք մի անհայտ

78

LXXIII. Ո՛չ մի մատյանում չընշված գիշեր
Չի՞ եստել նա էլ առով բարբոքուճ—
Ով ... պատանեկան հույզերի շաղում
Հոլովել և՛ «կույս», և՛ «լույս», և՛ «ճուշեր»:

79

LXXIV. Անհա՛յտ է, և՛ մութ, և՛ խտրմնելի
Հանցագործության նման անհեռուզ—
Ոտանավորյալ զեղումներ գրող
Տագնապը մարդու,— և խոստումնալից

80

LXXV. Բանաստեղծական պատանի՛ն ահզամ
Պահում է իրև հանցագործություն,
Իր զեղումների <տարերքը> թաքուն,—
Ինչպես ոտքը ծուռ — մի խեղճ հաշմանդամ...

81

LXXVI. Առեգակնային աշխարհում սակայն
Կա՞ արդյոք վսեմ տեղչանք սրելի,
Քան արթազնագույն զգացմունքներին
Առնագանի տվող երգը կուսական...

82

LXXVII. Եվ տիեզերքի երթում կուսական
Եղե՞լ է արդյոք առավել վսեմ
Կոչում՝ քան պայծառ, և՛ վեհ, և՛ լուսե
Կոչումն անխարդախ երգչի դասական:

83

LXXVIII. Եվ — ինչպես խավար գիշերի գրկում,
Մռայլ երկնքում կայծակը ցոլաց,
Նշում է ուղին իր երկնասլաց՝
Լուսավոր ընթա՛ցքն իր տիեզերքում,—

84

LXXIX. Այդպես չի՞ արդյոք կյանքում մարդկային
Սերունդից սերունդ, դարերից դարեր—
Միայն պոետի երգն արևաճառ
Նշում մեզ ընթացք առեզակնային...

85

LXXX. Եվ արդյոք այդ չէ՞ պատճառը, ու մեր
Մարդկային կյանքում և՛ մութ, և՛ դժվար—
Ամե՛ն մի նոտեկ իր ուղին ճշված
Արևել փոռնում գեթ վայրկյան մի վեհ

86

LXXXI. Երգով, հանգավոր խոսքով անխմաստ,
Հախուռն հաղթողի բացով շիկահեր—
Եվ ևո՛ր երազում ասպղեր ու չահեր՝
Երկրային ուղի՝ կամ վե՛ճ, կամ ճվա՛սա...

87, 88, 89, 90, 91, 92
LXXXII, LXXXIII,
LXXXIV, LXXXV,
LXXXVI, LXXXVII

<. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .>

LXXXVIII. Եվ — ելու կյանքի օրենքին անեղծ՝
Երբ մշտաբորբոք ամե՛ն պատանի՝
Գրելով անմեղ սիխ մի բանի—
Տենչում է դառնալ անման բանաստեղծ,—

94

LXXXIV. Մայրենի ճնշուն, <անընթեռնելի> բառառով
Երազանքներիդ չուն առնում ես գրի,—
Մինչ անսանձելի ճողմը մոխրիդ
Թռչում է խուցիդ պատերից խոռվ—

95

LXL. Դեպի ճողմային օրերի հեռուն,
Քոքորիկների օվկիանը գալիք —
Եվ, լռանաչալով ալիք առ ալիք,
Էլ ոչ մի տողում չի տեղավորվում

96

LXLI. Հույզերիդ շռայլ ճողմը զազգած,—
Եվ, շպրտելով տետրակը մի կողմ՝
Երազում ես դու — իսկակա՛ն մի ճողմ,
Իսկական բռիչք՝ և ո՛չ երազած...

97

LXLII. Սակայն օրերից այդ պատանեկան,
Որոնք էլ անմեղ, որոնք էլ չնչին—
Մնում են մի բորբ, պատանի գրչի
Տողեր հանգավոր և անապակած...

98

LXLIII. Ամենևս ենք եղել 14 տարեկան,—
Ինչպես վերևի տողերում ասիմ՝
Ցկա և՛ մի մարդ, որ <անհաղթասիրտ>,
Ցլիճի պռնա գեթ բորբ մի վայրկյան—

LXLIV. Պատանեկական օրերում իր կեզ...
Ամենքն են, այո, օրերին այդ վառ
Եղել գեր մի պահ հանգի սիրահար—
Ե՛վ Ակվինացին, և՛ Մարկս, և՛ Էնգելս...

100

LXLV. Եվ այս է ահա, ահ ձգտում եմ ես
Ամենից առաջ իմ «Քղքում» ասել.—
Բոլո՛րն են կյանքում սոնետներ հյուսել,—
Բայց պոետական գործի ասպարեզ

101

LXLVI. Ավերներ են միայն մտել վերջապես,
Իբրև հայզերի պատանեկական
Ջեզուե, աճառոշ բույրը դյուրական
Դարձրած ուղի և գործ կենսաբեր...

ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրականության և արվեստի թանգարանի Չարենցի ֆոնդում 119 համարանիշով պահվում է «Մի ամայի վայրում, չգիտեմ որտեղ...» տողով սկսվող մի պոեմ, որն առ այսօր մնացել է անտիպ: Պոեմը այլաբանություն է 1930-ական թթ. դժոխային ժամանակների մասին: Այն մասին, թե ինչպես էին մատնություններով ու զրպարտություններով մարդկանց հանել իրար դեմ, թե ինչպես էր խաթարվել բնականոն կյանքը, քանզի գիշատչական վայրագությունները արդեն ինքնակործան ընթացք էին ստացել՝ տեսակն սկսել էր տեսակին հոշոտել: Ինչպես պոեմում է ասված՝ դեռ ոչ ոք չէր տեսել «Որ վագրը վագր ուտի, իսկ գայլը՝ գայլ»:

Չարենցն ստեղծում է գործողության պայմանական միջավայր՝ մի անծանոթ ու ամայի տեղ, ուր կյանքը վերածվել էր գազանանոցի: Գազանանոցը այդ տարիներին երկրում տիրող վիճակի խորհրդանիշն է՝ իրական համարժեքներ ունենալով երկրում գնալով շատացող համակենտրոնացման ճամբարները: Ինչպես այդ ճամբարներում, այնպես էլ Չարենցի ակնարկած գազանանոցներում հանկարծ այնպես է պատահում, որ բոլորն սկսում են մեկը մյուսի դեմ «մեղք ու հանցանք բարդել»: Դրան էլ հաջորդում է ահն ու սարսափը և ամեն մի կենդանի, կործանումից փրկվելու համար, առանձնանում է իր «ծակում»: Այդ պայմաններում ամենահասարակ մտերմությունն անգամ նրանց համար դառնում է «միֆ»: Այսպես իրենց կյանքի կեսօրին նախ իրենց քնակարաններում, հետո արդեն բանտախցերում մեկուսացված էին բազմաթիվ անմեղ մարդիկ, նրանց հետ մեկտեղ՝ նաև Չարենցը:

Քանի որ պոեմի պայմանական միջավայրը գազանանոցն

է, բնական է, որ գործող «հերոսներն» էլ պիտի գազանները լինեն։ Բայց այստեղ էլ ամեն ինչ խառնվել է իրար, որովհետև գազանների արքան այլևս առյուծը չէ։ Իսկ առյուծն էլ պոեմում բանաստեղծի խորհրդանշական երկվորյակն է։ Դա այդպես է, քանզի «Առյուծը մեր սիրած մոմռում էր փառավոր ոտանավորն իր գրած»։ Բայց կյանքի այս նոր պայմաններում և ըստ գազանանոցի օրենքների՝ միայնակ մնացած առյուծն այլևս իր ուժի ու հեղինակության տերը չէ։ Քանի օրենք կար, որ իրար չուտեն, առյուծը գիտեր իր անելիքները։ Իսկ հիմա շուն ու ճանճ «սինկլիտ» կազմած նրա հարցն են քննում և, քարկոծելով «զտարյուն» կենդանուն, հեռացնում ամբիոնից։ Այդ պահին կատաղությունից պոռթկում է նա և ընդվզում իրեն «ձեռաց» շարքից հանելու փորձ անողների դեմ։ Բայց դա ապարդյուն զայրույթ է, քանի որ նրա ճակատագիրն արդեն իսկ որոշված է։

Տեղ-տեղ Չարենցը չի դիմանում ընտրած այլաբանության ձևին և տողերի արանքում իր ահարկու զայրույթն է թափում շրջապատի առանձին իրական անձանց գլխին։

Այս ամենով պոեմը 1930-ական ԲԲ. մեր կյանքի ճշգրիտ վավերագիր է և ունի թե ինքնակենսագրական և թե պատմահասարակական կարևոր արժեք։

Պոեմը Չարենցը գրել է մի շնչում, միանգամից և ամենայն հավանականությամբ այն ուրվագիր է ապագա մշակման համար։ Անմշակ լինելով, այն անավարտ է։

Ինքնագիրը լոթ էջ է։ Գրված է կապույտ թանաքով, փոքրիկ, նեղ թղթերի վրա։ Հինգ էջ գրված է թղթի երկու երեսին։ Ամեն երեսին տողերի քանակը տատանվում է 11—16 և 22—27-ի միջև։ Էջերի համարակալումը խառն է և անհստակ, որն էլ շարադրանքի դասավորության հարցում ստեղծում է առանձին դժվարություն։

Չարենցի ողբերգական մահից հետո այլևս ոչ ոք այդ պոեմը չի մշակելու և չի ավարտելու։ Պահպանված վիճակում իսկ այն միանգամայն արժանի է տպագրության և գալիս է լրացնելու ոչ միայն մեծ պոետի ստեղծագործության 1936. 1937 թվականների բաց էջերը, այլև մեկ անգամ ևս գալիս է ի ցույց դնելու այն տարիների ամբողջ ողբերգությունը։

ՄԻ ԱՄԱՅԻ ՎԱՅՐՈՒՄ, ՉԳԻՏԵՄ ՈՐՏԵՂ...

Մի ամայի վայրում, չգիտեմ որտեղ,
Ուր կյանքը գազանանոց էր դարձել,
Ուր, չգիտեմ ինչու էլ, թե ինչ պատճառով
(Քանզի կեր կուենեար ամեն մի ճարող) —
Եղավ այնպես ճանկարծ, որ իրար դեմ
Սկսեցին այնքա՜ն մեղ ու ճանցաճ բարդել,—
(Սակայն— չրմռռանամբ — որ ամեն մի գազան
Ապրում էր այլ տեսակի մսով,—
Եվ միեչև այդ չէր տեսել անգամ չախկալը,
Ու վագրը վագր ուտի, իսկ գայլը՝ գայլ):—

Բայց աճա, աճա, աճա—
Պատահեց այնպես—
Որ վերացավ աճ ու մահ՝
Գազանների մեջ,—
Սկսեցին անխնա
Իրար ուտել ,—
Իսկ իրենց կերն առաչվա
Սկսեց ճոտել...

Թե ի՜նչ կարող է ճեռնել այսառիցց՝
Կարելի է գլխի ընկնել այս տեղի<g>:

Ջանցած տարի մի բանի—
Այդ վարում արդեն
Ամեն մի — կենդանի—
Ուներ իր դեմ—
Բոլո՛ր, բոլո՛ր մնացած
Կենդանիներին,
Ա ն կ ա խ:
Հետևաճեռվ այս բանի
Անասում այդ, կամ սարում,—

Ցուրաքանչյուր կենդանի
Առանձնացավ իր ծակում,—
Վախենալով իրարից,
Առելով իրար–
Մի՛ դարձրին, ճիրավի,
Ամենա — հասարակ—
Մտերմությունն իրար հետ,
Բարեկամական
Կապերն այն մեծ,
Որ տեր էին տիրական—
Մինչ այդ՝ դեռ այն ժամանակ,
Երբ զազաններն իրարու
Գեղմ
Ուտում էին մենակ,
Եթե ասենք — արուն—
Ջանգակներով ծանրաբեռն
Իր սիրելի էգին
Պիտի սնուցի բերեր
Գիշերը կամ ծեգին—
Էգն էլ դրան արիստուր—
Կողը կբռներ
Արուին յուր—
Բաւարելով բոլոր մսե,—
Եթե միայն իրիկվա
Իր վերադարձին
Արուն բերեր հոշոտված
Միս — ամենայն առաջ
Բարի իրա—առյուծի,
Կամ — ագվես է եթե—
Բարի ի ր տեսակի մսից,—
Մնացածը —
Նույնն է,— այո՛,— որ ժամին,
Երբ էլ բերեր
Իր սիրեցյալ ձագերին
Նա՛ խոշտանգված կեր,—
Էգ տիրուհին կրճդուներ
Ամենամեծ խինդով
Եվ ձագերին կրտաներ
Արու — ճարճատի մոտ՝
Սանտիմենտալ զազանի,
Որ ձագերի լորձունքով՝
Անգամ Ալազանի
..... ամենամ...

Կայեն

Բայց — ասացինք սկզբում
Ինչպես արդեն մենք,—
Տիրեց մի նոր սկզբունք
Այդ, որ չգիտենք —
Ո՞ւր գռնվող վայրում,
Որ անառառում,—
Սակայն — գիտենք, որ այնտեղ
Ապրում էր մի զառյուն
Առյուծ:—

Դա առյո՞ւծ էր իւկական
Ոսկե՞ բաշով,—
Թրչած նավ է սոսկական
Համեմատենք թե սրան—
Մի սևաթաշ Աշտա:—
. . . . . .պատմաբան...

Առյուծն այդ շեկ՝ դեռ առաջ
Այդ նոր օրերից՝
Թե ձայնով բարձրաշառաչ,
Թե իր բաքերի
Մեջ գռնվող ճանկերով
Եվ ճանգիրով մոռոցի—
Ե՛վ արքա էր, և՛ ճերոս
Այդ ... չգիտեմ որ—
Ա ն ա ռ ի կամ փ ո ղ ո ց ի:
Քանի օրենք էր դեռ՝
Իրարու չուտել,
Այլ — իրարու տեղ—
<Քարայծերի> ուտել,—
Մոնչում էր ոսկեբաշ
Առյուծն այդ վայրում,—
Եվ .....

Բայց մի տխուր առավոտ,
Երբ առյուծը մեր սիրած
Մոմոում էր փառավոր
Ոտանավորն իր գրած—
Մեռավ հանկարծ—... (օ, անգամ
Չճավաստաց աչխերին) —
Մեռավ սակայն, որ ... անկար
Մի տառ չնիկ—,

Հոտոտում է աճա մի
Վազրաճամ ... և ի՞նչ.—
Օ, ոչ, դե չէ՛, վագրամիճ
Անգամ ... ժպտում է չինչ:
Այդ պահին ճանճ էր մի մեծ
Նստել նրա թաթին,—
Եվ փնչալով թոցրեց
Որ նա կեղտոտ այդ լեշին—
Առյուծը մեր ոսկեքաշ՝
Վրդովմունքից խելագեղ—
Ուզեց թռչի սոսկաբաց,
Մանուկ ու ալեհեր—
Ջվարթացող, շեացող
Այդ սինկլիտի վրա,
Սակայն ... անե՞դ.ռարով
Խփեցին նրան...
Հետո մոռացը նրա,
Նրով առաջ ճարքած—
Հաշվում էին նրանք

. . . . . .

Սանմանեցին մի մոռաց՝
Ուղղված սինկլիտի դեմ,
Մի խոպոպին խոպոց
Մի սինկլիտ ..... ,—
Վերաբերում է ին,
Նրա թաշին՝
Որոշեցին, գրեցին,
Որ իրենցից
Ամեն մեկի կաշին՝
Լինի կաուռ ճա, թե
Ճերմակ մկան ձագ—
Պայմանով, որ առե
(Տխմարությանն անցած,—
Այսինքն այն՝ որ տարբեր
Տեսակների ուռելու
Ժամանակ էր անքեր,
Առելու) —
Չէ՛, կրներիք.—
Ո՞վ էր — ինչպե՞ս — ո՞ւմ առակին՝
Երկո՞ւ, թե՞ երեք,—
Էլ ո՛չ ոքի համար սա
Արգելված բան չէ,—
Եվ ո՛չ ոք էլ բաղ սրա
Պետ չըմեղանչե...

. . . . . .
<Առյուծը մեր ոսկեքաշ
Վրդովմունքից անզոր>
Շուռ եկավ — նայեց,—
Եվ ... չռնչը պահեց.—
Հրապարակն այն, որ միշտ՝
Իրենց կարգով, սարֆով—
Ամեն գազանն իր
Բարֆով,—
Երեխասներ էլ ու բաց
Աստղերին տալիս,—
Զզվել էր, ինչպես բաց
<.....> ճողկալի,—
Ինչո՞ւ.— ասենք պարզ,
Երկու խոսքով.—
էլ ո՛չ փեշա կար, ո՛չ ճարս,
Ոչ էլ ... ոսկով
Գնած շիշերդ, կամ ախկին,—

Արդեն մեզ ճե՛տ է, մեր մեջ,—
Մեզ ճարազատ
էլ գրանից հետո — ում
Ուզում է ճանկե՛...
Առյուծն առաջ եկավ ինչ—
Ամբիոն չրթողին,—
Եվ խեղդելով ահագին
Իր ձայնի դողը,—
Փորձեց վայրկյան մի գոնե
Խելքի բերել նրանց...
— Ո՞ւմ եք ուզում ֆ...ել!—
Այն էլ... ձեռաց...—
Եթե կռծել, գոռալ լոկ,
Կամ մռնչալ ագեռաբ—
Ջեզ բոլորիդ իմ խելոք
<. . . . . .>

ԱՂԵՏԱԼԻ ՕՐԵՐԻ ԳԱՂՏՆԱԳՐԵՐ

Չարենցի կյանքի և ստեղծագործության վերջին տարիները անընդհատ նորանոր ծալքեր են բացում՝ կապված նորահայտ վավերագրերի հետ։ Օրըստօրե ճշգրտվում է նրա կյանքի տարեգրությունը, մարդկային հարաբերությունների շրջանակը, խոհերի ու մտորումների շղթան։

«Հիմնականից հիմնականը» գրառումը գրոլն արել է կյանքի վերջին տարիներին։ Դա հարցերի մի խումբ է ժամանակի գրական-քաղաքական անձանց հետ ունեցած առընչությունների մասին։ Գրառումների այդ սեղմ, բայց շատ տարողունակ շղթան ծանր ապրումների արդյունք է, հոգեկան խռովքի արգասիք։ Կանխազգալով իրադարձությունների աղետալի սրումը և իր վիճակի ծանրացումը, իր շուրջ ստեղծված գրական և քաղաքական բարդ հանգույցները ի հայտ բերելով, նա ջանում էր հետագա ժամանակներին ու պատմությանը պահ տալ իր ճշմարտությունը։

«Հիմնականից հիմնականը» գրառման ինքնագիրը մեջտեղից ծալած, եզրերից քայքայված, դժվար ընթեռնելի չորս թերթ է։ Առաջին գիր է՝ լրացումներով, ուղղումներով, միասնական տեսքի չբերված համարակալումներով։ Գրված է թանաքով։ Պահվում է Չարենցի վերջին տարիների ձեռագիր ժառանգության փրկիչ, այդ առումով հիրավի մեծ երախտիքի արժանի նկարչուհի Ռ. Ղազարյանի անձնական արխիվում, որը և այն տրամադրեց մեզ՝ վերծանելու, ուսումնասիրելու և հրապարակելու համար։

Հեշտ չէր բացահայտել այդ նշումների ամբողջ տարողությունը։ Մանավանդ որ ամեն ինչ ասված է սեղմ ու թռուցիկ ակնարկներով։ Բայց և այն ամենը, ինչ հնարավոր եղավ պարզել՝ լույս է սփռում նրա վերջին տարիների կյանքի ու գործունեության քիչ հայտնի կողմերի վրա։

Նախ ներկայացնենք բնագիրն այնպես, ինչպես պահպանվել է և ապա տանք անհրաժեշտ ծանոթագրություններ ու մեկնություններ։

ՀԻՄՆԱԿԱՆԻՑ ՀԻՄՆԱԿԱՆԸ

Իմ բոլոր նյութերն ու մտքերն ունեն ՄԻՄԻԱՅՆ ԳՐԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ անցուդարձի բնույթ, որից և ես եզրակացնում եմ մնացածը:

Ձրույցից առաջ ճշտվում է Ակոպովի, Արխյանի և Աւոյի վկայությամբ՝ իմ դրույքը կենտկոմում՝ «բանի դեռ չի վերացված «двурушник»-*ությունը և այլն*»

5 ԱՐԱՄԱՅԻՍԻ ՆԱՄԱԿԸ

ա) Ֆակսիմիլեն:
բ) «Ձախերի» խնդիրը:
գ) Ալազանի և Վշտունու ճարցը:
դ) Ակսելի ճարցը:
ե) Եղե՞լ է արդյոք կապ Աղասու և սրանց միջև:
զ) Ո՞վ է ԿԱՐԳԱԴՐԵԼ ԽՈՒՋԱՐԿԵԼ ԻՆՁ:

I

ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ՝
ԳԱՐԱՆՏԻԱ, ՈՐ ԳՈՐԾ ՈՒՆԵՆ

Կարող եմ պառկել Ա–ու մոտ:

ԳՐՈՂԻ ՀԵՏ — ՁՐՈՒՅՑ և ոչ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ:
ԵՐԿՐՈՐԴ՝ զարանտիա, որ...

1) Դվուրուչնիկությունը եղել է սխտեմ— և սա է եղել ՀԻՄՆԱԿԱՆ արատը.— ՄԱՔՐԵԼ ավգյան ախոռները:

2) կուլտ. շինարարությունը— որպես ԿՈՒՍԱԿՑ.–ՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՐՍ— և ոչ թե առանձին «բաչերի» ԳՈՂՈՒՆԻ, ՎԱՀԼԻԿ, ՈՂՈՐՄԵԼԻ «ԽՄԲԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

3) բայց — արդյո՞ք կուրսը չի՞ «ձախանա» ՎՌԻԼԳԱՐ ԻՄԱՑՏՈՎ:

Իմ գրույցը չի օգտագործվում ԴՐԱՆՑ դեմ՝ իբրև «следственный материал».

ԵՐԲՈՐԴ՝ գրույցը տեղի է ունենում ԱՌԱՆՑ վկաների, իբրև ոչ պաշտոնական մտերիմ փոխանակում,— և ՈՉ ՄԻ ԴԵՊՔՈՒՄ չպետք է դառնա կենտկոմի բյուրոյի կամ fառտուղարության ընդունության առարկա՝ իբրև ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ընդունության ենթակա նյութ:

Եթե ՄԱՐՏՅԱՆՆ է ճերսը...

IV. Օգտագործենք— դեռ ճետեն՝ բարի ասուս էլ տաճ ոաթ տակ. ԿՐԿՆԱԿԻ անկում:

Թե մնա... գնալ Աղասու մոտ::

ա) Ալազան

բ) Ախսել

գ) Թռաստամատ

կա՞ կապ սրանց միջև

դ) Վշտանուշ դերը

ե) «Զախերի» բլոկը— Ստ. Զորյանի և ընկ.-ի ճետ—

զ) Ստ. Զորյանի խնդիրը՝ իմ նախազգուշացումները. կապը <խմբակի> և Թ. Ա–ի ճետ:

է) Նրան և Սիմ. Հակոբյանին դելեգացիայի մեջ մտցնելու խնդիրը:

ը) Ն. Զարյանի «չfաճչանի» խնդիրը:

թ) Ն. Մակինցի կապը Թ. <Ա–ի> ճետ:

V.

ԻՄ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՐՀՈՒՐԵԼԻ Է

ա) «Զախերի» վերաբերմունքը

բ) Ալազանի և ընկ. վերաբերմունքը

գ) Աղասու երկդիմի «——»——

դ) Ո՛չ մի խորհրդատու և բարեկամ:

ե) «Կուսակցական» fրակցիա և «անկուսակցական» գրող:

զ) «Իմ» գրական խմբակի դաշինքը Ալազանի խմբակի ճետ:

է) «Դաշինքի» փլուզումը

ր) «Իմ» խմ–ի փլուզումը. Ա–ի պրովոկացիոն դերը:
ռ) Հ. Մ–ի դաճոսը— և իմ «ԸՆԿԵՐՆԵՐԻ» պրովոկացիան:
ժ) Հարաբերություններիս խզումը Ակսելի հետ:
ժա) «Գործիս» ընթացքը— ՄԻԱՁԱՅՆ ՎՏԱՐՈՒՄ միությունից. ԲԱՑԱՐՁԱԿ օստրակիզմ գրողների կողմից. Աղաստա մեկուսացալը. Մ–ու ընթացքը. վերջին սպառնալիքը. հեռագիր Ստալինին և Գորկուն. զրույց Բերիայի հետ. «Զրույց» կենտկոմում Աղաստա նախագահությամբ:
ժբ) Դրանից հետո ԿՐԿՆԱԿԻ պրովոկացիա. օստրակիզմ— մինչև Ստալինի խոսքը. Ալազանի մոտենալը— և կրկին օստրակիզմ:

Չարենցը պարզ ու որոշ ակնարկում է իր կացության, իր հանդեպ ընկերների ու հանրապետության ղեկավարության դրսևորած վերաբերմունքի մասին; Եվ դա քաղաքական բանսարկությունների այն պայմաններում, երբ գործում էր երկերեսանիության ու քծնանքի, զրպարտության ու մատնության ստալինյան մեխանիզմը:

Գրառումները գրողը խմբավորել է առանձին հարցերի շրջանակով, նշել անուններ, արտահայտել իր վերաբերմունքը: Հիմնականում հիշատակվում են ծանոթ գրական դեմքերի և կուսակցական գործիչների անուններ: Հարցադրումների շրջանակն ընդգրկում է 1935—1937 թվականները: Այդ ենթադրության համար կան ցայտուն արտահայտված նշանակետեր. Չարենցի հեռացումը գրողների միությունից 1935 թ. մարտի 11-ին, նույն տարվա դեկտեմբերի 30-ին Ստալինի խոսքը նրա հասցեին, այդ խոսքին հաջորդած դրական արձագանքները, այնուհետև՝ հալածանքների սաստկացումը: Նկատի ունենալով «Կարող եմ պահել Ա-ու մոտ» ակնարկը, ուր «Ա-ու մոտ»-ը ամենայն հավանականությամբ պիտի նշանակի «Աղամու մոտ», կարող ենք ենթադրել, որ այն հաջորդում է Խանջյանի սպանությանը և գրված է ոչ շուտ, քան 1936 թ. հուլիսի 9-ը: Ամենայն հավանականությամբ այս նշումներն արված են 1936 թ. հոկտեմբերի 13-ին, երբ Ամատունին Չարենցին կանչել էր զրույցի: Հիշենք, որ դրան նախորդել էր 1936 թ. սեպտեմբերյան պլենումը, ապա և՝ հոկտեմբերի 2-ի Երևանի կուս-

կազմակերպության քաղաքային ակտիվի ժողովը, որոնցում Ամատունին դատապարտել էր ոչ միայն Խանչյանին, այլև հայ մտավորականության, այդ թվում գրողների, մի նկատելի մասին։ Արդեն կալանավորվել ու հարցաքննու. թյան էին ենթարկվում Ն. Ստեփանյանը, Ա. Բակունցը, Դ. Տեր-Սիմոնյանը, Գ. Մահարին, Վ. Թոթովենցը, Գ. Վանանդեցին, Վ. Նորենցը, Մ. Արմենը, Ալազանը և ուրիշներ։ Հետաքննության տակ էր նաև Չարենցը։ 1936 թ. սեպտեմբերի 24-ին ՆԳԺԿ-ն նրանից գրություն է վերցնում՝ ըստ որի հետաքննության պատճառով նա չպետք է բացակայեր քաղաքից։ Չենք բացառում նաև, որ այս «Հիմնականից հիմնականը» գրառումը Չարենցը արած լինի հերթական հետաքննության կապակցությամբ։ Իսկ այդպիսիք կատարվել են ոչ միայն նրա ձերբակալությունից հետո, որի հրահանգը տրվել է 1937 թ. հուլիսի 26-ին, այլև դրանից առաջ։

Սկզբից ևեթ ակնարկելով, թե «Իմ բոլոր նյութերն ու մտքերն ունեն միմիայն ԳՐԱԿԱՆ–ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ անցուդարձի բնույթ, որից ես եզրակացնում եմ մնացածը» և ուշադրություն հրավիրելու համար մի գծով ընդգծելով «միմիայն»-ը, երկու գծով՝ «գրական-հասարակական»-ը, նա միանգամից ուզում է ասել, որ այդ զրույցին չպետք է տալ քաղաքական երանգավորում։ Այս մտավախությունը նա հայտնում է նաև հետագա շարադրանքի մեջ։

Զրույցն ըստ ամենայնի եղել է հույժ կարևոր և պետք է անցներ առանց վկաների ներկայության։ Այս կապակցությամբ սակայն ասենք, որ Ամատունու հետ Չարենցի 1936 թ. հոկտեմբերի 13-ի հանդիպմանը ներկա է եղել այն ժամանակվա գրողների միության քարտուղար Գ. Աբովը։ Զրույցը պետք է կրեր «ոչ պաշտոնական մտքերի փոխանակման» բնույթ, բայց և առիթ է ծառայել դառնալու Կենտկոմի բյուրոյի կամ քարտուղարության քննարկման նյութ, ինչի դեմ էլ կտրականապես առարկում է գրողը։ Նրա մտավախությունն այն էր, որ հանկարծ այս զրույցը չվերածվի հարցաքննության և օգտագործվի որպես հետաքննչական նյութ, վկայություն և ուղղվի «դրանց»՝ ամենայն հավանականությամբ ձերբակալված մտավորականների ու գրողների դեմ։ «Ոչ մի դեպքում»,— արձանագրում է նա և ապա շարունա-

կում. «Օգտագործեն— դեն նետեն՝ բարի անունս էլ տան ոտի տակ. ԿրկնԱկի անկում»։

Չարենցի նշումներն առանձին կետերով խմբավորված են որոշակի հարցադրումների շուրջ։ Հարցերի այդ խմբերն ունեն իրենց խորագրերը՝ 1. «Արամայիսի նամակը» (6 հարց), 2. «Կարող եմ պահել Ա-ու մոտ» (3 հարց, 2-րդ կետի 3 ենթահարցերով), 3. «Թթե Մարտյանն է հերոսը» (9 հարց), 4. «Իմ դրությունը զարհուրելի է» (12 հարց)։

Հարցերի առաջին խմբում ակնարկվում է. «5 Արամայիսի նամակը» և դրա հետ կապված ինչ-ինչ խնդիրներ պարզելու համար թվարկվում առանձին մի կետ. «ա) Ֆոկսիմիլեն»։

Հարցի պատմությունը հետևյալն է. 1935 թ. օգոստոսի 2-ին (5-ը 1935 թ. է նշանակում) Ա. Խանջյանի տնտեսակոն, գաղափարախոսական սխալների մասին Ա. Երզնկյանը նամակ է հղում Համկ(բ)կ կենտկոմ և Անդրերկրկոմ։ Այդ նամակի վերաբերյալ ընդունվել է Անդրերկրկոմի որոշում, որի ֆակսիմիլեն այդ տարիներին բազմացվել և տարածվել է Հանրապետությունում։ Չարենցը ակնարկում է ահա այդ ֆակսիմիլեն։

Գաղափարախոսական ոլորտի աշխատանքների մասին Երզնկյանն այն կարծիքին էր, որ Խանջյանի «քաղաքականությունը խիստ արգելակում էր այդ բնագավառի «զարգացումը» և որ նա «անսկզբունք» է։ Որպես օրինակ նշում է Չարենցի հանդեպ Խանջյանի ցուցաբերած երկդիմի վերաբերմունքը։ Ասում է, որ «Գիրք ճանապարհի» ժողովածուն Չարենցը նախապես «կարդացել էր ընկ. Խանջյանին և վերջինիս կողմից այն հավանության էր արժանացել որպես հանճարեղ ստեղծագործություն։ Այդ գրքի մասին ընկ. Խանջյանը նույնիսկ գրեց արտասահման, Փարիզ, հայ ռամկավարների կենտկոմի նախագահ Արշակ Չոպանյանին, որը և ընկ. Խանջյանի նամակը հրապարակեց իր օրգանում։ Այդ նամակում բանաստեղծ Չարենցի գիրքը ընկ. Խանջյանի կողմից գնահատվել է «որպես հայ գրականության գագաթ»»։ Այնուհետև Երզնկյանն ասում է, որ, լույս տեսնելուց հետո, հասարակական կարծիքի ներգործությամբ «Խանջյանը հանդես եկավ այդ գրքի սուր քննադատությամբ»։ Երզնկյանը

ճիշտ է, այդպես էլ եղել է։ Խանջյանը և՛ ըստ ամենայնի նպաստել է Չարենցի գրքի տպագրությանը, և՛ պաշտոնական զեկուցումներում քննադատել այն։ Այսինքն՝ մի կողմից ջանացել է օգնել ու պաշտպանել Չարենցին, մյուս կողմից, թերևս տակտիկական նկատառումներով, քննադատել նրան։ Խանջյանի վերաբերմունքի այս երկվության մասին ակնարկել է նաև Չարենցը։ Այդ վերաբերմունքը Երզնկյանը ցույց է տալիս մեկ այլ փաստով ևս։ Խանջյանը Չարենցին բնութագրելով որպես «հայ խորհրդային գրականության հիմնադիր և ամենախոշոր ներկայացուցիչ», «ոչ ոքի թույլ չտալով քննադատել նրա ստեղծագործությունները», այնուամենայնիվ, երբ Չարենցը դիմում է հեռանալու գրողների միությունից և հարձակումներ է թույլ տալիս Հայաստանի կոմկուսի կենտկոմի քաղաքականության դեմ՝ Խանջյանի հրահանգով նրան հեռացնում են ՀԳՄ շարքերից և անգամ «քիչ էր մնում ձերբակալեին նրան»։ Այնուհետև՝ բանը հասավ այնտեղ, որ իր դիմումի վերաբերյալ բացատրություն տալու առթիվ կենտկոմ մտնելիս Չարենցը ենթարկվեց խուզարկության։ Սա ևս իրողություն է, որի մասին ցավով ակնարկել է նաև բանաստեղծը։ Այդ դեպքն առաջացրել է հասարակայնության զայրույթը։

Խանջյանի և Չարենցի հարաբերությունների մեջ թերևս դեր է ունեցել այն հանգամանքը, որ հայ գրողը մի խումբ մտավորականների հետ ջանում էր պաշտպանել Ս. Տեր-Գաբրիելյանին, որը հակամարտության մեջ էր Խանջյանի հետ և 1935-ի փետրվարին հեռացվել էր ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի պաշտոնից։ Չարենցը և մյուսները ամեն կերպ ջանում էին նրան վերականգնել իր տեղում, բայց ապարդյուն։ Թերևս այս հանգամանքը կարող էր աղդել Խանջյանի և Չարենցի հարաբերությունների վրա։ Ասենք նաև, որ Խանջյանի դեմ ուղղված նամակում Ս. Տեր-Գաբրիելյանին պաշտպանում էր նաև Երզնկյանը (վերջինիս նամակի պատճենը տես՝ ՀՀՇԿՊԱ, ֆ. 571, ց. 5, գ. 207, թ. 12--21)։

Ինչպես երևում է Երզնկյանի նամակից՝ Չարենցի հարցը դրանում շոշափվել է բավականին հանգամանորեն։ Այդ նամակի առթիվ ՀԿ(բ)Կ կենտկոմը տեղեկանք է ներկայացնում Համկ(բ)Կ կենտկոմ և Անդրերկրկոմ, ըստ որի՝ Հայաստանի

ղեկավարության վերաբերմունքը դեպի այդ տաղանդավոր գրողը եղել է այնպիսին, որ նրան չվանենք մեզանից, չտանք թշնամիների ձեռքը։ Բայց երբ նա շատ խորացավ իր մոլորություններուի մեջ և դիմեց հեռանալու գրողների միության կազմից՝ մենք նրան հեռացրեցինք։ Իր սխալները ընդունելուց հետո՝ նա վերականգնվեց գրողների միության շարքերում։ Նրա հանգիստ աշխատանքի համար «ստեղծվեցին բոլոր պայմանները» (Մլի ՀՄԿԱ, ֆ. 4, ց. 2, գ. 2637, թ. 64—65, ռուսերեն)։

Չարենցի հարցադրումն, ահա, ունի այսպիսի պատմություն։

Հաջորդ հարցը ձևակերպված է այսպես՝ «բ) «Ձախերի» խնդիրը»։ Ձախերի մասին Չարենցն ակնարկում է նաև հետագա շարադրանքի մեջ։ Նա նկատի ունի և՛ քաղաքական, և՛ գրական ձախերին։ Կուսակցական ղեկավարության մեջ այդպիսի համբավ ունեին Բերիայի դրածոներն ու կամակատարները՝ Լ. Արիսյանը, Ս. Ակոպովը, Խ. Մուղդուսին, Ա. Ամատունին, Գ. Ծատուրովը, քիչ ավելի վաղ՝ Զ. Աշրաֆյանը, որոնք դեռևս 1933 թվականին ցանկանում էին հեղաշրջում կատարել Հայաստանում և հեռացնել Խանջյանին։ «Ձախերի» մեջ Չարենցը հատկապես չէր սիրում Արիսյանին, որը որոշակի դեր էր կատարել «Գիրք ճանապարհի» տպագրությունը ձախողելու, ապա և՝ Ա. Խանջյանի և Ս. Տեր-Գաբրիելյանի համաձայնության դեպքում անգամ ձգձգելու գործում։ Չարենցը նրան հասցեագրել է սպանիչ էպիգրամներ։ Իսկ 1935 թ. բանաստեղծը մեղադրվել է նրա դեմ ահաբեկչական գործունեություն ծավալելու մեջ և նույն տարվա փետրվար-մարտ ամիսներին ենթարկվել հարցաքննության։ Այդ ուղղությամբ հարցաքննվել են նաև ուրիշները և տվել վկայություններ։

«Ձախեր» կային նաև գրողների մեջ, որոնք գեղարվեստը տանում էին դեպի գռեհիկ սոցիոլոգիզմ, դեպի սխեմատիկ ըմբռնված սոցիալիստական ռեալիզմ, դեպի պարզունակ պրոլետարականացում։ Այդ կողմնորոշումը որոշակիորեն արտահայտվել է Հ. Հակոբյանի, Ա. Վշտունու, Ն. Զարյանի, Ն. Դաբաղյանի, մինչև «դարձի գալը»՝ նաև Ալազանի, Վանանդեցու գործունեության մեջ։

Այս ընդգրկման մեջ Չարենցը առանձնացնում է «գ) Ալազանի և Վշտունու հարցը»։ 1920-ական թթ. Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի կազմում գործելով համատեղ, հետագայում նրանք հեռացան իրարից։ Նախ, նրանք գժտվեցին իշխանության համար մղվող պայքարում և ապա, Ալազանը 1933 թվականից իր շուրջ համախմբելով վ. Նորենցին, Գ. Սարյանին, Ս. Տարոնցուն և էլի մի քանիսի, հարեց չարենցյան գծին։ Ահա գրողների այս նախկին և հետագա գործելակերպը և դրանից ածանցվող հետևանքներն էլ նկատի ուներ Չարենցը։

«դ) Ակսելի հարցը». սա առնչվում է գրական ու մարդկային շատ բարդ հարաբերությունների հետ և առանձին ծավալուն խոսակցության նյութ է։ Բայց և այս առիթով ասենք որոշ բաներ, մանավանդ որ իր գրառման մեջ Բակունցի հարցը Չարենցն արծարծում է մի քանի անգամ՝ մե՛կ ցանկանալով պարզել նրա և Ալազանի ու Դ. Տեր-Սիմոնյանի կապը, մե՛կ արձանագրելով իր հարաբերությունների խզումը նրա հետ։ Նախկին ընկերները՝ Չարենցը և Բակունցը, որ դեռևս 1920-ական թվականներից համատեղ անցել էին գրական բուռն պայքարի ճանապարհ՝ կյանքի գնով անգամ կռել-կոփելով նորագույն շրջանի հայ գրականության մայրուղին, 1934 թվականից սկսած սառչում են մեկը մյուսի հանդեպ։ Լեզվի հարցերին նվիրված ասուլիսում Չարենցը շրջանցում է Բակունցին՝ նախապատվությունը տալով Դեմիրճյանին։ Գրողների միությունից հեռացնելիս՝ Բակունցը չի պաշտպանում Չարենցի դատը։ Հետո հարցաքննությունների ու խոշտանգումների պայմաններում նրանց ամեն կերպ ուզում էին հանել իրար դեմ։ Բայց և ամենածանր ու դժվարին պահերին անգամ Չարենցը շատ բարձր է գնահատել իր ժամանակակցի տաղանդը և այնամոք ցավ ապրել իրենց կապի խզման համար։ Ապացույցը 1936 թ. հոկտեմբերի 14-ի գիշերը Չարենցի գրած «Ա. Բ.-ին» հրաշալի բանաստեղծությունն է, որի ազդակը նույն թվականի նույն ամսվա 6-ին Ամատունուն և Մուղդուսուն Բակունցի հասցեագրած ահավոր ողբերգական գիմումն է։ Բակունցը շարունակում էր ապրել Չարենցի գրական կենսագրության մեջ։ Միայն թե հավատարմությունն ու վստահությունը զնդաններում փորձության էր ենթարկվում։

Հաջորդ հարցերը՝ «ե) Եղե՞լ է արդյոք կապ Աղասու և սրանց միջև», «զ) Ո՞վ է կարգադրել խուզարկել ինձ» նպատակ ունեն բացահայտելու Չարենցին գրողների միությունից հեռացնելու հանգույցը և նրա հանդեպ այդ տարիներին ղեկավարության կողմից կիրառվող վերաբերմունքը: Չարենցն ուզում է իմանալ, թե իր հեռացման կապակցությամբ ի՞նչ կապ է եղել Խանջյանի և Բակունցի, Ալազանի ու Վշտունու միջև: Այս հարցաշարությունը նրա մեջ սրված էր, որովհետև այդ ընթացքում կատարած մի ծանր դեպք խորապես զայրացրել էր նրան: 1937 թ. մայիսին Ամատունուն հղած գրություններից մեկում, խոսելով իր արարքների մասին և դրանք բացատրելով «ինֆորմացիայի լիակատար բացակայությամբ», Չարենցը ընթացք է տալիս իր մտքերին և ասում, որ դա «շատ հաճախ պատճառ է ծառայել ինձ նման գոնե երեվութային ինֆորմացիայից զուրկ մարդկանց՝ ընկնելու այնպիսի տեղեր, որ մեր մտքովն իսկ չէր կարող անցնել երբևիցե... Այս կապակցությամբ ինչ չարժե միմիայն Կենտկոմի պահակատանը 1935 թվին ինձ խուզարկելու դեպքը...» (ԴԱԲ, Չարենցի ֆոնդ, № 166): Չարենցը վերստին ակնարկում է գրողների միությունից իր հեռացնելու իրողությունը, երբ 1935 թ. մարտի 8-ին իր հեռացման կապակցությամբ ՀԿ(բ)Կ Կենտկոմին հասցեագրել է «Հայտարարություն», իսկ հետո՝ նույն թվականի հունիսի 6-ին, նույն միության շարքերում վերականգնվելու առթիվ, ընդունվել նույն Կենտրոնական կոմիտեում: Ամենայն հավանականությամբ բանաստեղծին խուզարկել են այդ ընդունելության օրը, որ-վհետև, ինչպես ասացինք, այն մտայնությունն էր տարածված, թե Չարենցը պիտի սպանի Արիսյանին, որը Կենտկոմի պատասխանատու աշխատող էր: Գրողների միության և վարչության կազմում Չարենցի վերականգնման փաստաթուղթը ստորագրել են Ս. Զորյանը, Դ. Դեմիրճյանը, Ա. Բակունցը և Դ. Տեր-Սիմոնյանը:

Հարցերի երկրորդ խմբում Չարենցը որոշակի ձևակերպումներ է տալիս իրեն սկզբից ևեթ պաշարած մտահոգությանը. «Ամենից առաջ՝ զարանտիա, որ գործ ունեն գրողի հետ— զրույց և ոչ հարցաքննություն»: Այնուհետև գրողն արձանագրում է ժամանակի ամոթալի բարքերը և գա-

չիս այն համոզման, որ երկերեսանիությունը եղել է գործունեության «սիստեմ» և ոչ թե «հիմնական արատ»։ Ըստ այդմ նա խնդիր է դնում մաքրելու ժամանակի բարոյական աղբը։

Չարենցը եղել է ավերակներից հարություն առնող իր երկրի գրական-մշակութային կյանքի առաջին կառուցողներից մեկը։ Այդ կարևորագույն գործի հանդեպ նա մշտապես պահանջել է պետական մոտեցում և պետական վերաբերմունք։ Բայց, դժբախտաբար, միշտ չէ, որ այդպես է եղել։ Ավելին, պետական հոգատարության առավել չափով արժանացել են նրանք, ովքեր պրոլետկուլտի գաղափարներով քանդել են ազգային գրականության հիմքերը։ Ահա, Չարենցը պահանջում է, որ «կուլտուրական շինարարությունը» կատարվի պետական-կուսակցական դիրքերից և ոչ թե վերածվի «առանձին» «քաջերի» գողունի, վախլիկ, ողորմելի «խըմբապետության»։ Միաժամանակ նա նաև այն տագնապն է ունեցել, որ համանման վերաբերմունքի դեպքում «պետական կուրսը» «վուլգար իմաստով» կարող է ձախանալ, ինչը և ցավալի իրողություն դարձավ 1930-ական ԹԹ. ընթացքում։ Այդ գոհիկ ձախության դեմ կռվողը դեռևս 1920-ական ԹԹ. սկզբներից հենց ինքն էր՝ Չարենցը, նրա հետ մեկտեղ նաև համախոհները, որ 1925-ին միավորվեցին «Նոյեմբեր» միության մեջ (Բակունց, Մահարի, Արմեն և ուրիշներ)։ Շուրջ 15 տարի Չարենցը և մյուսները բուռն պայքարի մեջ առաջ տարան իրենց գիծը, բայց և բոլորն էլ կործանվեցին, որովհետև նրանց կողմնորոշումը պետականորեն համարվեց «թշնամական», «հեգեմոնալիստական», «հակահեղափոխական», «սպեցիֆիկյան», իսկ իրենք էլ հայտարարվեցին ժողովրդի շահերի դավաճաններ։ Ուստի՝ Չարենցը ճիշտ էր, որ մի կողմից պետական հովանավորություն էր պահանջում լուրջ գործի հանդեպ, իսկ մյուս կողմից՝ տագնապում, որ այդ հովանավորությունը կգոհկացնի ամեն ինչ և ասպարեզը կտա ջարդարարներին։

Հարցերի երրորդ խմբի սկզբում հիշատակվում է Վ. Մարտյանի անունը, որը Չարենցի հակառակորդներից էր։ Չարենցի կողմից այս գրառումն անելու ժամանակ Մարտյանը ձերբակալված էր որպես Ն. Ստեփանյանի խմբի մասնակից։ Եվ դա այն դեպքում, երբ ինքը՝ Մարտյանը, մատնարար

ու զրպարտագիր է գրել Ստեփանյանի դեմ։ Բայց և ինքն էլ է ներքաշվել այդ գործի մեջ և ընկել իր փորած փոսը։ Դրա համար էլ Զարենցը երգիծաբար ասում է՝ «Եթե Մարտյանն է հերոսը»։ Մարտյանը հերոս չէր կարող լինել, հերոսը Ն. Ստեփանյանն էր, որն աշխատել էր որպես լուսժողկոմ, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի դիրեկտոր և, իր շուրջ համախմբած Զարենցին, Բակունցին և մյուս առողջ ուժերին, պայքարել հանուն ազգային արժանապատվության և Ստալինին ու Բերիային այդ տարիներին ենթարկել այնպիսի քննադատության, ինչը միայն վերջերս ենք մենք անում։

Գրառումների այս խմբի մեջ այսպիսի մի տող կա. «Թե մնա... գնալ Աղասու մոտ», որին հաջորդում է կրկնակի վերջակետ, որպես կյանքի ավարտի խորհրդանշան։ Զարենցը ծանր ապրումների մեջ էր, մտածում էր հարցաքննության բնույթ կրող զրույցի մասին, ինչը կարող էր արատավորել իր պայծառ անունը։ Այդ ցավից նա մտածում էր «գնալ Աղասու մոտ», այսինքն՝ հեռանալ այս աշխարհից։ Նույն ակնարկը, ինչպես ցույց տվեցինք, կա նաև «Կարող եմ պառկել Ա-ու մոտ» արտահայտության մեջ։

Այս ծանր ու անհավասարակշիռ հոգեկան ապրումների մեջ նրան վերստին սկսում են մտատանջել գրական մարդկանց հարաբերությունները ու առնչությունները։ Նա շարունակում է քրքրել այն կծիկը, որը հյուսված էր իր շուրջ։ Յանկանում է հստակ ըմբռնել, թե ի՞նչ կապ կարող է լինել Ալազանի, Բակունցի և Տեր-Սիմոնյանի միջև, որոնք 1936-ի հուլիս-օգոստոսից արդեն մեկուսացված էին։ Ի՞նչ դեր ունի այդ հարցում Վշտունին, որը հակառակ դիրքորոշման ներկայացուցիչ էր։ Ի՞նչ առնչություն ունի «Ձախերի» բլոկը Ս. Զորյանի և ընկերների հետ։ Ի՞նչ կապ կա վերջինիս և (ամենայն հավանականությամբ) իրենց խմբակի ու Թ. Ա.-ի միջև։ Եվ կարևոր մի միջադեպ. «Իմ նախազգուշացումները»։ «Ձախերի բլոկ» և Ս. Զորյանի կապ ասելով՝ Զարենցը հավանաբար նկատի ուներ գրական հարաբերությունների մի շղթա, որը իր սրտով չէր։ Դեռևս 1933 թ. Վշտունու հետ մեկտեղ Զորյանը հանդես էր եկել Զարենցի կազմած 7-րդ դասարանի դասագրքի դեմ, այնտեղ գտնելով վրիպումներ ու սխալներ (տես՝ «Գրական թերթ», 1933, № 17, 20 հոկտեմ-

բերի)։ Իր օրագրային նշումների մեջ Չարենցը վերապահությամբ է խոսել Զորյանի հասցեին։ Եվ ահա, ճակատագրական պահին Ստալինի մոտ Զորյանն է կարծիք հայտնում Չարենցի մասին։ Մտքի ընթացքն ընդգրկում է հարցերի նոր շրջանակ՝ կապված Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի կապակցությամբ Մոսկվա մեկնած և 1935 թ. դեկտեմբերի 30-ին Կրեմլում ընդունելության արժանացած պատվիրակության կազմի հետ. «է) Նրան և Սիմ. Հակոբյանին դելեգացիայի մեջ մտցնելու խնդիրը, ը) Ն. Զարյանի «շքանշանի» խնդիրը»։ Պատվիրակության մեջ Զորյանին և Հակոբյանին մտցրել էր Խանջյանը, և Չարենցը դա լավ գիտեր։ Տպագրվեցին նաև Չարենցի վերաբերյալ Զորյանի չափից դուրս զուսպ պատասխանները Ստալինի հարցումներին։ Այսինքն՝ Չարենցի համար ամեն ինչ պարզ էր։

Անհարկի չէ ասել, որ Ն. Զարյանին Լենինի շքանշանով պարգևատրելու իրողությունը ժամանակին մեծ դժգոհություն է առաջացրել հայ մտավորականության մեջ։ Իր «Ո՞վ եմ ես» անտիպ ինքնակենսագրական-բացատրագրում այդ մասին խոսել է նաև ինքը՝ Ն. Զարյանը։ «Ինչպե՞ս ես ստացա շքանշանը։ Խանջյանի՞ շնորհիվ, թե՞ Խանջյանի գլխի վրայով»,— հարցնում է նա ու ինքն էլ պատասխանում՝ գլխի վրայով, որովհետև պատգամավոր չի եղել, ոչ պաշտոնական կերպով է մտել Կրեմլ և «Ստալինն» բանաստեղծության համար արժանացել շքանշանի։ Զարյանը ամեն կերպ խուսափում է Խանջյանից և չանում նրան վարկաբեկել, որովհետև վերջինս արդեն սպանված էր և նրա կողմից հովանավորված լինելը մահացու հետևանք կարող էր ունենալ։ Այդքանից հետո Զարյանը շարունակում է. «Բայց ինչպե՞ս ընդունեցին ինձ պարգևատրումից հետո։ «Խորհրդային Հայաստան» կենտրոնական թերթը այդ առթիվ գրեց միայն երկու տող, թե ես, իբր, չանում եմ գրող լինել և ակնհայտորեն ակնարկում էին, որ ես արժանի չէի շքանշանի։ ... Իսկ Ազատ Վշտունին, ասում են, կատաղորեն պատառ-պատառ է արել թերթի այն համարը, ուր զետեղված էր Համկգկ (ВЦИК) որոշումը իմ պարգևատրման մասին» (ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4, ց, 2, գ. 2697, թ. 78—104)։

Այս կապակցությամբ ասենք, որ Ն. Զարյանի պարգևա-

տրումից շատ դժգոհ էր նաև Չարենցը և դա համարում էր անարդարացի որոշում։ Ե՛վ Չարյանից, և՛ Վշտունուց ունեցած իր տարիների դժգոհությունը Չարենցը արտահայտել է տարբեր առիթներով։ Դրա վկայությունն է այս անտիպ «դիֆերամբը»՝ գրված 1936-ի սեպտեմբերին, ուր նա միատեղել է գրական նախկին համախոհներին, որոնք այդ ժամանակ հեռացել էին իրարից.

ԴԻՖԵՐԱՄԲ ԱՋԱՑ ՆԱԻՐՈՒՆ

O, փառ fեզ, ճարգաճ սրբազան
Երկիր լուսացայտ ճայերի—
Վշտունու նման— ազատ,
Չարյանի նման — նախիրի...

Մոսկովյան պատվիրակության շրջանակներում Չարենցին հետաքրքրում է նաև Ն. Մակինցի և Թ. Ա.-ի կապը։ Բացենք այս հանգույցը ևս։

Նշան Մակինցը Մակվեցի էր, ծնված 1896 թ.։ Հասակակից ու հայրենակից էր Չարենցին։ ՄԿԿ անդամ էր 1921-ից։ Եղել է Բասարգեչարի շրջկոմի քարտուղար, 1927—1931 թթ.՝ ագիտհրատի դիրեկտոր, այնուհետև՝ լուսժողկոմի տեղակալ, 1934—1937 թթ.՝ կուսհրատի վարիչ։ Ձերբակալվել է 1937 թ. հուլիսի 15-ին, գնդակահարվել 1938-ին, արդարացվել 1954 թ. հուլիսի 21-ին։ Նրա և Թ. Ա.-ի, այսինքն՝ Թադևոս Ավդալբեգյանի միջև կարող էր լինել այն կապը, որ վերջինիս թարգմանած «Կապիտալի» 1-ին հատորը տպագրել էր կուսհրատը, որի դիրեկտորը, ինչպես ասացինք, Մակինցն էր։ Մակինցի ձերբակալությունից մի քանի օր անց՝ հուլիսի 24-ին ձերբակալում են նաև Ավդալբեգյանին։

Մակինցի և Չարենցի ծանոթությունն սկսվել էր 1927 թ.։ Իսկ 1935 թ. փետրվարի 20-ին Մակինցին հարցաքննել են Չարենցի քաղաքական հայացքների և մարդկային նկարագրի վերաբերյալ։ Նույն թվականի փետրվարի 5-ին, 25-ին հարցաքննվել է նաև Չարենցը։ Մակինցը եղել է մարդկանց այն շրջանակի մեջ, ովքեր համախակի են հանդիպել Չարենցի բնակարանում։ Չարենցը, ինչպես ասել ենք, մեղադրվել է Արիսյանի դեմ ահաբեկչական գործունեություն ծավալելու մեջ։ Ահա սրանից հետո է, որ նույն թվականի մարտի 8-ին

դիմել է հեռանալու գրողների միության շարքերից։ Նաև դեպքերի այս հանգուցում է, որ նրա դիմումին տալիս են քաղաքական երանգավորում և լրացուցիչ հարցաքննության են-թարկվում նույն թվականի մարտի 22-ին և 23-ին։

Նշված հարցաքննության ժամանակ և համանման այլ առիթներով Ն. Մակինցը Չարենցի մասին նպաստավոր կարծիք չի հայտնել։ Նրա մարդկային նկարագիրը համարել է արատավոր, իսկ քաղաքական հայացքները՝ անկայուն։ Նա ասել է նաև, որ Չարենցի հայացքների մեջ նկատել է «նացիոնալիստական տարրերի առկայություն», որ նա 1935 թ. փետրվարի 10-ին իր տանը հավաքված մտավորականների ներկայությամբ, ուր իրենից բացի ներկա են եղել նաև Ա. Բակունցը, Ն. Ստեփանյանը, Վ. Թոթովենցը, Ալազանը, Վիվանը, Մ. Գևորգյանը և ուրիշներ, ասել է՝ մի՞թե խորհրդային ճանապարհը միակն է հայ ազգի զարգացման համար, և որ նա խոսել է Լ. Արխայանին սպանելու մասին։ Մակինցի այս ցուցմունքին Չարենցը տեղյակ է եղել և 1935 թ. փետրվարի 25-ի հարցաքննության ժամանակ ժխտել իր դեմ ուղղված մեղադրանքները, ասելով նաև, թե հնարավոր է, որ բորբոքված ժամանակ ինքն օգտագործած լինի «տաս սատկացնես» արտահայտությունը՝ նկատի ունենալով իր դեմ Արխայանի արած ստորությունները։

Այս ամենի արձագանքն է 1935 թ. ապրիլի 14-ին Չարենցի գրած մի բանաստեղծությունը (ԳԱՔ, ՉՖ, № 14), որի կողքին ինք գրել է. «Ուրեմն այսպե՞ս... Իբրև «տեռորիստ» Սևա այդ տագնապալի օրերի չափածո վավերագիրը.

Կոչված եմ աճա այսօր ես Ջեկև...
Կարծես թե ուրիշ ճերմուկաճ չկա,
Որով «օրենքից դուրս» ճամարեճ ինձ...
Մատճում է մի «ճին բարեկամ» Մակինց,
«Գրողները» ինձ «դուրս են շպրտում
Գրատամատյան Գրական Տնից»...
Իսկ վերից խանչյանճ իմճն է ճոխտրտում,
Թե ինձ «կճանի իմ ճիմար ճնից...»

. . . . . .

Էճ, վաղո՞ւց եմ ես «ճնից» արթնացել,—
Աղդ դո՛ւմ եմ, ավա՜ղ, ճնած մնացել...

Հարցերի շուրջը և վերջին խմբում Չարենցը արձանագրում է իր դրության զարհուրելիությունը և վերստին ճշտում կուսակցական և գրական առանձին մարդկանց ու խմբավորումների վերաբերմունքն իր հանդեպ։ Ու նորից «ձախերի» վերաբերմունքը, Ալազանի և ընկերների վերաբերմունքը։ Խանջյանի դիրքորոշումն այս դեպքում նա համարում է երկդիմի, քանի որ իր նման գրողը 1935 թվականին չներգրավվեց ո՛չ մոսկովյան, ո՛չ էլ լենինգրադյան պատվիրակությունների կազմում, չարժանացավ բարի խոսքի, իսկ շքանշանն էլ տրվեց Չարյանին։ Ահա այս պայմաններում գրողն իրեն զգում է խորապես միայնակ ու հալածական՝ «չունենալով ո՛չ մի խորհրդատու և բարեկամ»։ Այս վիճակի շարունակությունն է «ե) «կուսակցական» ֆրակցիա և «անկուսակցական» գրող» ձևակերպումը։ 1926 թ. սեպտեմբերի 5-ի կրակոցից հետո Չարենցի դեմ քրեական գործ հարուցելու պատճառով նա հեռացվում է կուսակցության շարքերից ու այլևս չի վերականգնվում։ Այդ ընթացքում նա զրկված էր մասնակցելու գրողների միության կուսակցական ֆրակցիայի այն ժողովներին անգամ, որտեղ քննարկվում էին իրեն վերաբերող հարցեր։ Այս մասին մեկ անգամ չէ, որ նա բողոքել է, բայց անօգուտ։

Զ—ժ կետերում Չարենցը նկարագրում է ժամանակի գրական խմբակցությունների հարաբերությունները։ «Իմ գրական խմբակ ասելով՝ նա նկատի ուներ «Նոյեմբերի» կորիզը, որը քաղաքական մեղադրանքներով հալածվում էր այդ օրերին։ Ալազանի խմբակի մասին արդեն ակնարկեցինք և ասացինք, որ 1933 թ. հետո այն հարում էր չարենցյան գծին։ Բայց դա ունի նաև հին պատմություն, երբ 1926-ին միավորվեցին «Նոյեմբերն» ու ասոցիացիան, իսկ քիչ ավելի ուշ ուղեկիցների հետ ստեղծեցին ֆեդերացիայի, Չարենցի ասած «դաշինքը»։ Այդ դաշինքը հետագայում թեև փուլ եկավ և ծայր առավ գրական պայքարի նոր փուլ, բայց և 1933-ից հետո ամրապնդվեց և ձեռք բերեց ներքին նոր բովանդակություն։

Ինչպես Չարենցն է նշում՝ քայքայվեց նաև «իր» խումբը։ Այդ գործում, ըստ նրա, դեր է ունեցել «Ա-ի պրովոկացիոն դերը», «Հ. Մ.-ի դանոսը» և իր «ընկերների» պրովոկացիան։ Սա ևս բարդ գաղտնագիր է։ Ո՞ւմ նկատի ուներ

Չարենցը «և-ի պրովոկացիոն դեր ասելով»։ Կարծում ենք խոսքը այս դեպքում իր խմբի անդամների և համակիրների (Ակսել, Արմեն, Ալազան) մասին չէ։ Այդ և-ն կարող է լինել Աբուլը, Արիսյանը, Արտաշես Ոսկերչյանը, որոնց աննպաստ գործունեությունը Չարենցի և նրա համախոհների հանդեպ հայտնի է։ Եղածին ավելացնենք մի նորահայտ փաստ ևս՝ կապված Ա. Ոսկերչյանի գործունեության հետ։ Պահպանվել է Չարենցի 1933, նոյեմբերի 28 թվակիր անտիպ նամակը՝ հասցեագրված ՀԳՄ կազմկոմիտեի նախագահ Դ. Տեր-Սիմոնյանին, որի մեջ նա իր զայրույթն է հայտնում Ա. Ոսկերչյանի դեմ, քանի որ վերջինս մի առիթով ասել է՝ «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» ինտերմեդիան «գրված է ոչ թե իմ (Չարենցի՝ Դ. Ֆ.) կողմից, այլ մի ամբողջ «գաղտնի կազմակերպության», որ կոլեկտիվ կերպով է դրա ներքևը դրված 1929—1933 դատան։ Որ այն գրողների մի խմբակի կողմից մի դավադրություն է խորհրդային իշխանության և կոմ. կուսակցության դեմ» (ՄԼի ՀԿՄԱ, ֆ. 1346, ց. 1, գ. 1, թ. 1)։ «Պրովոկացիա՞» է սա. հիարկե։

Ո՞վ է Չարենցի ակնարկած Հ. Մ.-ն («Հ. Մ.-ի դանոսը»). Հարություն Մկրտչյա՞նը, Հովհաննես Մերկյա՞նը, Հովիկ Մելիքյա՞նը։ «Դանոս» ասելով՝ ի՞նչ նկատի ունի Չարենցը։ «Էպիքական լուսաբացի» դեմ Հ. Մկրտչյանի գրած խիստ բացասական գրախոսությո՞ւնը, նրա շատ աննպաստ դիրքորոշո՞ւմը իր հանդեպ, թե՞ գրական հակումներ ունեցող Հ. Մերկյանի պահվածքը, որը խմբագրական աշխատանք էր կատարում մամուլում («Հարվածային բանվոր», «Սպորտ»)։ Իսկ Հ. Մելիքյանը կենտկոմի կողմից մասնակցել էր գրողների միության 1935 թ. մարտի 11-ի այն ժողովին, որտեղ Չարենցին հեռացրել էին միության շարքերից։ Դժվարանում ենք վերջնական ու միանշանակ լուծում տալ այս գաղտնագրերին։ Դրա համար պահանջվում են լրացուցիչ մանրամասներ։

Ավելացնենք, որ Չարենցը հիասթափված էր նաև իր նախկին համախոհներից և ընկեր բառն էլ առնում է չակերտների մեջ։ Դրա վկայությունն է նաև մեկ այլ գրառում՝ արված 1935 թ. (տես՝ ԴԱԲ, Չարենցի ֆոնդ, № 146, նաև՝ Ան-

տիպ և չհավաքված երկեր, էջ 44)։ Ինչ-որ մի էական ավերիչ բան համենայն դեպս անցել էր նրանց միջով։

Ժամկետը Չարենցի «գործի» հետագա ընթացքն է. «Միաձայն վտարում Միությունից»։ Վտարողների մեջ, ինչպես ասացինք, ոչ միայն հակառակորդներին էին, այլև՝ բարեկամները։ Սրանից էլ նա ոտքի էր հանված։

Սրան էլ հաջորդում է հետագա դեպքերի արձանագրությունը։ Երկրում տիրող քաղաքական լարված մթնոլորտում Հանջյանը, որը, անկախ ամեն ինչից, Չարենցի և նրա համախոհների հովանավորն էր ու պաշտպանը, աստիճանաբար մեկուսանում է բուն գործունեությունից։ Օրհասական սպառնալիքը կախվում է Չարենցի և մյուսների գլխին։ Այս պայմաններում իր վիճակի մասին նա հեռագրում է Ստալինին ու Գորկուն։ Պահպանվել է Ստալինին հասցեագրված հեռագրի օրինակը (տես՝ ԳԱՔ, Չարենցի ֆոնդ, № 167)։ Գորկուն ուղղված հեռագրի ինքնագիրը կամ պատճենը մեզ չհաջողվեց գտնել։ 1935 թ. մայիսի 11-ին Չարենցը հեռագրել է նաև Բերիային (տես՝ ԳԱՔ, Չարենցի ֆոնդ, № 163)։ Վերջինիս հետ Չարենցը նաև հանդիպել է ու զրուցել։ Դրանից հետո նա մի նոր զրույցի է հրավիրվել ՀԿ(բ)Կ կենտկոմ և ապա նոր միայն վերականգնվել միության շարքերում։ Այս վերջին զրույցը նա առնում է չակերտների մեջ՝ ամենայն հավանականությամբ ակնարկելով դրա հարցաքննչական բնույթը։

Դրանից հետո Չարենցի վիճակը ոչինչով չի բարելավվում։ Ընդհակառակը՝ սպառնալիքներով ու ճնշմամբ նա հեռացվում է աշխատանքից և մեկուսացվում։ Վիճակը մի կարճ ժամանակ բարելավվում է Զորյանին ուղղած Ստալինի հարցումից հետո. «Ինչպես է ապրում գրող Չարենցը... Նրան կարծեմ նեղացնում են» («Գրական թերթ», 1936, № 1, 10 հունվարի)։ Դրանից հետո տպագրվում է Ալազանի հոդվածը, որի մեջ դրական շեշտ կար Չարենցի հանդեպ։ «Ալազանի մոտենալը» ասելով՝ Չարենցը հենց այդ հոդվածը նկատի ունի (տես՝ «Գրական թերթ», 1936, № 2, 20 հունվարի)։ Այս դրական վերաբերմունքը ևս մեկ-երկու արտահայտություն է ունենում, որից հետո դալիս է «կրկին օստրակիզմ», այսինքն՝ հալածանք մամլոյի գիշերվա օրհասականությամբ։

Ահա գրառումների այս շղթան, որ Զարենցը վերնագրել է «Հիմնականից հիմնականը», ի մի է բերում նրա կյանքի վերջին տարիների հանգուցային փուլերը, որոնք ներքին թելերով բացում են ժամանակի գրական-քաղաքական կյանքի ամբողջ պատկերը Այսպես է՝ մեծերի կենսագրության մեջ ամբողջ ժամանակն է արտացոլվում, ճիշտ կլինի ասել՝ դարաշրջանը։

ՋԱՐԵՆՅԸ ԱՄԱՏՈՒՆՈՒ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻՆ ԿԱՄ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՐԱՐԸ

Ամբողջ երկրում, ինչպես նաև Անդրֆեդերացիայում տիրող քաղաքական կյանքի օրավուր աճող լարվածությունը թերթերի էջերից գուժում է առաջին զոհերի անունները։ 1936 թ. հունիսի 9-ին, Թիֆլիսում Բերիայի սադրանքների զոհ է դառնում Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը։ Սպանդարյանից, Շահումյանից, Մյասնիկյանից հետո Խանջյանը հաջորդ ամենամեծ կորուստն էր, բայց ոչ վերջինը։ Անդրերկրկոմի և Հկ(բ)կ կենտկոմի հաղորդագրության մեջ հայտնվում է Խանջյանի մահվան մասին, որը, ըստ նրանց պաշտոնական կեղծ վարկածի, տեղի է ունեցել «ինքնասպանության ակտի հետևանքով»։ Այնուհետև, այդ ակտը դիտելով որպես փոքրոգության արտահայտություն հատկապես կուսակցական աշխատողի համար, ավելացվում է. «Ընկ. Խանջյանը վերջին ժամանակներս իր աշխատանքի մեջ մի շարք քաղաքական սխալներ էր թույլ տվել, որոնք արտահայտվել էին նացիոնալիստական ու հակահեղափոխական-տրոցկիստական տարրերի մերկացման գործում բավարար զգաստություն չցուցաբերելու մեջ»։ Վերջում էլ կա պաշտոնական կեղծիքը մատնող մի արտահայտություն, ըստ որի Խանջյանի վիճակը «սաստկանում էր նաև տևական հիվանդությամբ՝ ծանր տեսակի տուբերկուլյոզով»։ Պատմագրությունը արդեն իր ճշգրտումներն է անում այս հարցում, իսկ այն, որ Խանջյանը Ստալինի և՝ Բերիայի հերթական զոհն էր՝ դա արդեն անառարկելի է։

Խանջյանին փոխարինելու է գալիս Ամատունի Սիմոնի Ամատունին (Վարդապետյան)՝ ծնված 1890 թ. Գանձակում և գնդակահարված 1938-ի հուլիսի 28-ին։ Ամատունին պատահական թեկնածություն չէր։ Նա անցել էր անհրաժեշտ ճանապարհ և սլացել իր օրվան։ 1922—1923-ին նա եղել է Հայաստանի կոմերիտմիության առաջին, իսկ 1923—1925-ին՝ Համլկնմ Անդրերկրկոմի քարտուղար։ 1926—1928-ին ուսանել է Մոսկվայի կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում և ապա անցել կուսակցական աշխատանքի։ Վարել է ՀԿ(բ)Կ կենտկոմի (1928—1930), Անդրերկրկոմի (1931—1934), Բաքվի քաղկոմի երկրորդ (1935) և ՀԿ(բ)Կ կենտկոմի երկրորդ (1935—1936) քարտուղարի պաշտոնները։ ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար է ընտրվել Հայաստանի կոմունիստական կուսակցության 1936 թ. սեպտեմբերյան պլենումում և այդ պաշտոնից մեկուսացվել ու զնդան նետվել ուղիղ մեկ տարի անց։ Խանջյանից հետո մինչև հանրապետության առաջին դեմք ընտրվելը՝ նա կատարել է առաջին քարտուղարի պարտականությունները։ Աշխատանքային անցյալ տարիների ընթացքում նա նվաճել էր Բերիայի վստահությունը, իսկ 1933-ից վերջնականապես ընկել էր նրա ճանկը։

Այս փոփոխությունը հայ մտավորականներից շատերի ու նաև Ջարենցի համար ունենում է ողբերգական հետևանքներ։

Ջարենցը թեև խորապես հարգում էր Խանջյանին, բայց և ուներ որոշ դժգոհություններ։ Մեկ անգամ չէ, որ հատկապես 1934—1936 թթ., տուրք տալով Բերիայի անմիջական դրդումներին, Խանջյանը Ջարենցին, Բակունցին և ուրիշների մեղադրել էր նացիոնալիզմի մեջ։ Այդ պայմաններում Ջարենցը նաև մեկուսացվել էր բուն դրական կյանքից, չէր ընդգրկվում գրական պատվիրակությունների կազմում, առանձնապես նպաստավոր չէր նրա հանդեպ գրողների միության ունեցած վերաբերմունքը։ Իսկ մեկ անգամ 1935-ին Կենտկոմի պահակատանը նրան խուզարկել էին և ավելի տրորել նրա վիրավորված ինքնահարգությունը։ Առավել չափով Ջարենցը խոչված էր այն բանից, որ իրեն Լենինի շքանշան շնորհելու փոխարեն, այն տվել էին Ն. Ջարյանին, որը Խանջյանի միջնորդությամբ էր թափանցել Կրեմլ, առաջնորդի առ-

չև արտասանել «Ստալինին» բանաստեղծությունը և մի քանի օր անց արժանացել բարձրագույն պարգևի։ Այդ կապակցությամբ 1937 թ. հունիսի 1-ին Հ(բ)Կ կուսկոլեգիայի անունով Չարենցը գրել է մի շատ զայրալից դիմում, որի մասին դեռևս խոսք կլինի։

Այս մասնակի դժգոհություններով հանդերձ, Չարենցը շատ ծանր տարավ Խանջյանի սպանության լուրը, ըստ ամենայնի գիտակցելով, թե դրանից հետո ին՝ կարող է սպառնալ և՛ իրեն, և՛ իր գրական համախոհներին։ Խանջյանին նվիրված «Նաիրյան դոֆին» շարքի «Իմաստություն» սոնետի տակ 1936 թ. նոյեմբերի 11-ին Չարենցը գրել է. «Սա 8-րդ սոնետի վերջնական տարբերակն է» և ապա ավելացրել. «Так кончается А. Х-ян и начинается *իսկական* բոլշևիկյան ստալինյան հայ *ղեկավարություն*» (ՉՖ, № 14)։ Իսկ այդ սոնետում Չարենցը մահացու դառնությամբ է խոսում բոլոր այն քաղաքական ղեկավարների մասին, որոնց «իմաստությունը» մարդկանց ասպարեզից վերացնելն է.

Իմաստուն է միայն **ф**ш**ռ**ш**ղ**ի**ն**ե**ր** **ճ**ա**ր**թ**ռ**ղ
Բ**ո**լշևիկյա**ն** կ**ո**գ**ռ**ա**ռ**ա**ր** այն **ե**ր**ջ**ա**ն**ի**կ,
Ո**ր** **ե**զ **թ**ա**ղ**ե**ց** **ի**ր**ե**ն **դ**ա**վ**ա**ճ**ա**ն**ի**։

Մեկ այլ առիթով էլ Չարենցն արել է այս գրառումը. «Խանջյանը մեր վերջին հերոսն էր, որին սպանեց Բերիան» և 1936 թ. հուլիսի 18—19-ի գիշերը «Քաոմնելի» վերնագրված սոնետում այդ զգացությանը տվել գեղարվեստական այսպիսի մարմնավորում.

Ընկած ես դու, Հոգի՛ս, զրոսանքի համար
«Բարեկամի» կանչով անտառ տարված—
Եվ — լկվելուց հետո — դաշունահար արված
Մի մոլորված մանկան մեռած մարմնի նման...

Նույն օրերին, ավելի ստույգ՝ հուլիսի 17-ի գիշերը նա գրում է «Չառանգանք» վերնագրով մի բանաստեղծություն և նկարագրում Խանջյանի սպանությանը հաջորդող վիճակի ամբողջ ողբերգականությունը.

Թվում է վայրկյանից այն սև՝
Հուլիսի 9-ից՝ միշև
Անա այս վայրկյանը երազ,
Զառանցանք, որ դեռ չի անցել:
...Գուցե ես դեռ չե՞մ արթնացել
Դեռ տևում է գուցե զառանցանքը.
Ավելի է դաժան արդյոք կյանքը,
Որ սարսում եմ աչքերս բացել—
Եվ ի՞նչ եմ սեղմում կոկորդում
Հնկեկանմ ն, ֆ.ֆիլ ն, լ—ց ն ·
Արդյո՞ք, երբ է գալու առավոտը
Եվ ճեռու է արդյո՞ք...

Զառանցական այս վիճակը իրական էր ամեն ինչով: Համատարած մի մղձավանջ սև գիշերվա պես իջել էր երկրի վրա: Խանջյանից անմիջապես հետո «մերկացվեցին» Ներսիկ Ստեփանյանի և Ակսել Բակունցի, այսպես կոչված, «խմբերը» և սկսվեցին մահացու հալածանքները: Ջարենցը այդ ամենը տեսնում էր այդ ամենին արձագանքում բանաստեղծություններով ու պոեմներով և անգամ տագնապ հայտնում, թե ինչո՞ւ է ինքը ազատության մեջ, երբ իր բոլոր ընկերները զրկված են նեռված: Ջարենցի անունը ժամանակավորապես դուրս էր թունավոր քննադատությունից, որովհետև հանրության հիշողության մեջ դեռ թարմ էին ընդամենը մի քանի ամիս առաջ՝ 1935 թ. դեկտեմբերի 30-ին Կրեմլում նրա վիճակով հետաքրքրված առաջնորդի «մտահոգ» հարցումների արձագանքները:

Կյանքի կամ մահվան օրեր էին: Չիջումներ չկային: Եվ Ջարենցը, ճանաչելով Ամատունուն, նաև հստակ պատկերացնելով իշխանության գլուխ բարձրանալու նրա հնարավորությունները ու հանգամանքները, այնուամենայնիվ, որոշեց սկզբնապես ոչ թե առճակատման գնալ նրա հետ, մանավանդ որ դրա առիթը դեռևս չկար, այլ նրան ընդունել իր իսկ պաշտոնում որպես հանրապետության նոր ղեկավարի և նրա հետ կապել փրկության հույսերը: Ունե՞ր այս իրավունքը Ջարենցը: Թերևս, այո: Ամատունուն նա ճանաչել էր նախապես, գիտեր, որ նա ժամանակին մտերիմ է եղել Աշոտ Հովհաննիսյանի հետ, մի մտերմություն, որն էլ նրա կործանման առիթ

գարձավ։ Չարենցը մտածում էր, որ Թեև, այո, Ստալինի գիտությամբ Բերիան իր չարդարար կադրերով էր լցնում Հայաստանը, որոնց առաջին հատկանիշը ապազգային նկարագիրն էր, բայց և հոգու խորքում հույս էր փայփայում, որ այդ մարդիկ՝ այս դեպքում Ամատունին, ամեն ինչով չէ, որ վերջնականապես կորած են իրենց ժողովրդի համար։ Այդ հույսը մի կարճ ժամանակ փրկության ուղիներ է նախանշում։

Ասացինք, որ Ամատունուն Չարենցը գիտեր վաղուց։ Դեռևս 1929-ին ապագա ղեկավարին նա Թեթևակի երգիծել էր իր էպիգրամներից մեկում.

էպիգրամ

(Նրա II հոդվածը կարդալիս)

Ինչո՞ւ է զրում Ամատունին.
Դե, որովհետև — նա մատ ունի*
Եվ մոխի վսեմ գազաթ ունի։—

---

* Գրչի իմաստով։

(ՉՖ, № 14)

Այս կսկիծը կարող էր նույնիսկ մոռացած լինել ինքը՝ Չարենցը, որովհետև այն գրել էր տեսորներից մեկի մի անկյունում ու դրել մի կողմ։ Իսկ հիմա արդեն ժամանակներն այլ էին, վերանայվում էին ոչ միայն երեկվա հարաբերությունները, այլև վերջնականապես ճշգրտվում էին կենսական հարցեր՝ մարդը պիտի ապրի՞, թե՞ ոչ, զրպարտությունները նրան անպայման պիտի կործանե՞ն, թե՞ կասեցվեն վերահսկող մի ուժի կողմից։ Հայաստանի նախորդ ղեկավարները՝ Մյասնիկյանը, Խանջյանը բարձր էին գնահատել Չարենցին, պաշտպանել հարձակումներից, թիկունք եղել։ Ահա այդ նույն վերաբերմունքով էլ բանաստեղծը խոսք է ուղղում հանրապետության նոր ղեկավարին և իր հարաբերությունները նրա հետ դնում ամենաբարձր հիմքերի վրա։ Ամատունու իշխանության գլուխ բարձրանալը բանաստեղծը ողջունել է մի պոեմով, որի մեջ Թեև կա ժամանակի պարտադիր և ըստ ամենայնի անցանկալի ներկայությունը՝ այսինքն ստալինյան

օրերի կնիքը, այնուամենայնիվ այդ անտիպ ոտոմր վկայությունն է այն բանի, որ ամենածանր պայմաններում անգամ Չարենցը չանացել է չկորցնել հավատը իր ժողովրդի վաղվա օրվա հանդեպ և մտքից հեռու վանել այն կանխազգացողությունը, թե խանջյանի ողբերգությամբ ողբերգության պիտի դատապարտվեն նաև մյուսները։

Պոեմի պահպանված բնագիրը, որն սկսվում է «Կապված դաշինքով ռնապական...» տողով, մեքենագրված առաջին օրինակ է, ծավալը 5 էջ, կան թանաքով արված Չարենցի ուղղումները։ Պոեմը անվերնագիր է, հավանաբար բացակայում է անվանակիր առաջին էջը։ Թղթերը նշրերից քայքայված են, այդ իսկ պատճառով ներքևի մեջտեղի մասում համարակալումը երևում է շատ աղոտ։ Պոեմը նաև անթվակիր է։ Ամենայն հավանականությամբ գրված պետք է լինի 1936-ի հոկտեմբերին։ Այդ ենթադրության համար հիմք է ծառայում Հկ(բ)կ կենտկոմ՝ Ամատունուն ուղղված Չարենցի մի «Բացատրագրության» պատառիկը, որի մեջ կարդում ենք.

Հարգելի ընկ. Ամատուն!

Թույլ տվեք ասել մի քանի խոսք այն շշմեցուցիչ տպավորության մասին, որ թողեց իմ վրա Ձեր վերջին ընդունելությունը ինձ հետ հոկտ. 13-ին, կենտկոմում, Ե. Գ. Միության բարեուղար ընկ. Աբովի ներկայությամբ...:

(ՉՅ, № 166)

Սրանից հետո դեռ նորանոր գրություններ պիտի Չարենցը հղեր Ամատունուն և նրա հետ մտներ բարդ խոսակցության մեջ, բայց ահա այդ ընթացքում գրում է հիշատակված պոեմը՝ ի պատասխան առաջին քարտուղարի իր վրա թողած «շշմեցուցիչ տպավորության»։ Ահա այդ պոեմը.

ԿԱՊՎԱԾ ԴԱՇԻՆՔՈՎ ԱՆԱՊԱԿԱՆ...

Կապված դաշինքով անապական
Ամենից առաջ արևակամ
Ռուս ժողովրդի ազգն անհուն,
Որ հանճարներով հազարանուն,
Մփոփով, որպես անափ օվկիան—
Տվել է հանուր կյանքին մարդկան

Հանճար մեծագույն անեզրական,
Որ տառածելով իբրև ուկան
Հանճարն իր մեծուր, անապական —
Որպէսզի համար մարդկանց համար
Կյանք նուաշալի, և լույս, և վառ,—
Ստեղծեց դաշինքն այս իրական
Ժողովուրդների երկրի համայն...

Կապվելու ենք մենք ապա ընդմիշտ,
Կապված ենք ինչպես եղել դարեր,—
Դաշինքով անխախտ և աներեր —
Այն ժողովրդի երթին, որ միշտ —
Եղել է եղբայր և բարեկամ
Հնամյա երկրին նահրականի,—
Դաշինքով այնքան նվիրական...
Ժողովրդին այն, որ տևական
Եղել է եղբայր և բարեկամ
Մեր դժբախտ երկրի նահրական.
Կապիր մեր ոգին սիրով արդի,
Քանզի նահրյան այս եղկ, այս խեղճ
Ծեգերումն — ենուց ինքնապատյան —
Որ «Վարդան Մեծից» մինչև Մարտյան
Սև ճարտության են մգել լոկ մեզ,—
Ավելի է ժանտ ու արճանուն,
Ավելի գաժան չարիք իրաք,
Քան նպատակավոր տարինքերով
Մեր ժողովրդին սիրավ, նրավ
Խոշտանգող աներեն նպատակուն...
Ելիր–այն վսեմ, այն սրբազան
Հավատքով, որ արդ տրված է ինձ —
Ընդդեմ ինքնանուն նուինք այդ սև —
Եվ ինձ փառք կերպ երգիս մատան...

Հղում եմ ես իմ ուղերձը ինձ
Լցված հավատով լոկ այդ անուն,—
Որ եկել ես դու երկրիս տալու
Լայնանուն ընթացք արևակեզ,—
Ընթացք լենինյան, որ պիտի մեզ
Բյուր փորձաքարերից ընդմիշտ փրկե...
Ընթացք լայնանուն, անհուն, նպատակ,
Եվ խոհ, և դաշինք անգրկելի,
Որ կապելու է ուղին երկրիս,
Պարերով չեղված ուղին երկրիս
Համայն մարդկության Հայրենիքին —

Մեր աճման, մեր լայն Հայրենիքին —
<. . . . . .>

... Տարել են մինչ արդ պետերը մեզ,
Մեր ճախրական պետերը մեծ—
Սկզբի օրից մինչև հիմիկ
Լենինյան պայծառ օրերն այս վես,—
Տարել են մեր հին պետերը մեզ
Առաքետներով և մութ, և ճեղ,
Ինչպես ճախրյան խղճուկ ուղեղ...
Եվ բերել են մեր գլխին հավետ —
Հազար փորձություն, հազար աղետ:—

Հավատում եմ ես, Ամառուհի՛,
Որ դու գնալով մեր աճմոդդոդդ
Ժողովուրդներին առաջնորդող
Գոդպատե Մարդու կամքով աճդող՝
Նրա օգնությամբ ու խորհուրդով —
Կապելու ես մեր երկիրն ինձող
Համայն աշխարհի և հին, և նոր —
Անեսսան կամքով կովի ինձող
Ժողովուրդների երբին ճաղթող...
Ինչպի՛ վսեմ և վեճաշուճ
Երբ՝ արված այսօր քե fեզ, քե fո
Երբակիցներին, որ fեզ ճեռ սթդ
Կոփում են և՛ կյանք և՛ երբ ճպարտ՝
Մեծ Առաչնորդի ձեռի ճերfո...

Եվ ասում է արդ, Ամառուհի,
Գոհում իր աչերդ շրթերով fեզ.—
Առաչնարդ ես դու, երբ ճաճես
Ժողովուրդն իմ — այս խղճուկ ճուճից.—
Այս ճուճից՝ ճնուց ճախրական
Իմ ժողովրդի առչև փորած
Իրև գոյության միակ երակ —
Եվ գալիճաքեր, և իրական...
Այս ճուճից ճերփակ, անգուռ, աճել,
Այս ճախրական աճնուկ երբից,
Որ ճախրական հազար երգիչ
Ներբողել են ճար, փառաբանել...

Իրև մի ճարեկ երբի Մովսես՝
Կանգնի՛ր լեճինյան գրով աճհաչտ՝
Եվ — ատալինյան — իրև մի վաչա —

Տա՜ր համայնական երթով դու մեզ...
Ս,, Ամատունի սիրով աճեղծ,
Հին, հազարամյա սիրով այն մեծ,
Որ ժողովուրդս — սրտով անկեղծ
Կրել է դարեր իր կրծքի մեջ —
Նվ կրում է արդ, իբրև ավանդ
Դարերը այդ հին,— այսօր կրկին
Բարբոխիր ճրով, սիրով նախկին
Այդ դաշնությունը, որ մեր երկինն
Սիրելի է, բան հազար երգի
Ջերմ մտերմություն արևային:—

Ջարենցի ֆոնդում մի ամբողջ թղթապանակի մեջ 166 համարանիշով պահվում են Ամատունուն հասցեագրված «Բաց նամակի» տարբերակներ, այդ առիթով բանաստեղծի արած առանձին գրառումներ և այդ «նամակի» ռուսերեն թարգմանությունը։ Այդ ամբողջ նյութը զգալի չափով ընթեռնելի է, էջերի դասավորության հերթականությունը՝ ճիշտ, իսկ մասամբ էլ այդ էջերը խառն են, քայքայված ու անընթեռնելի։ Ինչ որ հնարավոր եղավ պարզել այդտեղից և վերականգնել առանձին միավորների շարադրանքի ամբողջությունը՝ լույս է սփռում Ջարենցի ողբերգության փակ ծալքերի վրա և ի հայտ բերում մի անսպասելի ծանր պատկեր, երբ գրողն ստիպված է եղել «ինքնաքննադատաբար» շարադրելու իր «մեղայական խարտիան»։ Ջարենցը այդպես էլ բնորոշում է իր գրություններից մեկը։

Ամեն ինչ ներկայացնենք հերթականությամբ։

1936 թ. սեպտեմբերին Ամատունին ընդունում է գրողների միության ժողովի «Ողջույնը», որի մեջ ասվում է, թե «տրոցկիստական-նացիոնալիստական գործունեության համար գրողների միության շարքերից հեռացվում են Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Բակունցը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը, Գ. Վանանդեցին, Գ. Մահարին, Վ. Թոթովենցը։ Իսկ նույն թվականի հոկտեմբերի 2-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի սեպտեմբերյան պլենումի արդյունքների մասին Ամատունին է հանդես գալիս Երևանի կուսակցական կազմակերպության քաղաքային ակտիվի ժողովում և Ա. Խանջյանի գլխավորությամբ հայ մտավորականությանը մեղադրում «նացիոնալիստական-ուկլո-

նիստական-սպեցիֆիկյան» շեղման մեջ։ Թե որքանով էր Ամատունին անմիջականորեն մասնակցում անմեղ մարդկանց դեմ ուղղված այդ մահացու բանադրանքներին, երևի թե ժժվար չի լինի պատասխանել, քանի որ ամեն ինչ կատարվում էր նրա վարչապետության օրոք։ Բայց և զուգահեռ հարց է առաջանում՝ կկարողանա՞ր արդյոք Ամատունին, ղեկավարի իր բարձր դիրքն օգտագործելով, կանխել դրանք։ Կարելի է որոշակիորեն պատասխանել՝ ո՛չ, չէ՛ր կարողանա, որքան էլ ցանկանար, որովհետև այդ ամենը ղեկավարում էին Ստալինը և Բերիան, իսկ Ամատունին սոսկ ժամանակավոր գործիք էր նրանց ձեռքին։ Իր տխրահռչակ զեկուցման մեջ՝ «Փոշիացնել, հողմացրիվ անել ժողովրդի թշնամիներին» Բերիան արդեն ասել էր իր խոսքը։ Հիմա Ամատունուն էր մնում սոսկ դա տեղում հիմնավորել և մանրամասնել։

Մեզ հետաքրքրող հարցից շատ չշեղվելու նկատառումով, ասենք, որ քննադատվողների, ապա և հալածանքների ենթարկվողների այս առաջին խմբի մեջ Չարենցի անունը դեռևս չկար։ Տաղնապալի լուրյունը խզվում է 1937 թ. ապրիլին և ողբերգական հետևանքների հասցնում գրականագիտության դոկտոր Վ. Կիրպոտինի «Ստեղծագործական ոգևորությամբ դեպի նոր հաղթանակներ գրականության ֆրոնտում» զեկուցումից հետո, որը լսվել է 1937 թ. ապրիլի 17—21-ին գումարված հայ գրողների ընդհանուր ժողովում։ Հինգ օր շարունակ վեց անընդմեջ նիստում ասվել են ծանրագույն խոսքեր։ Չարենցը չի մասնակցել այդ ժողովին, բայց տեղյակ է եղել դրա ընթացքին։ «Գրական թերթը» 1937 թ. ապրիլի 23-ի և մայիսի 1-ի համարներում (№№ 12, 13) այդ կապակցությամբ տպագրել է ծավալուն հաղորդագրություններ։ Իր զեկուցման մեջ մասնավորապես Չարենցի մասին Կիրպոտինը հետևյալն է ասում.

... նա, ով կոնֆլիկտի մեջ է մտնում ժողովրդի հետ, ով գնում է նրա թշնամու բանակը — նա կանգնում է վտանգավոր ուղու վրա։ Եվ ահա այդպիսի վտանգավոր ուղու վրա է գտնվում այժմ — այդ մասին պետք է ասել ամբողջ ձայնով — Չարենցը։

Այնուհետև Կիրպոտինն անցնում է Ջարենցի ստեղծագործական զարգացման քննությանը՝ ամեն կերպ չանալով սևայնել բանաստեղծի պայծառ ուղին կամ նսեմացնել նրա տաղանդը։

Ջարենցը որպես պոետ,— շարունակում է նա,— իր ստեղծագործությունն սկսեց հուսահատության երգերից։ Նրա առաջին երգերը լի էին խավարով։ Նա կապված չէր հեղափոխական շարժման հետ... Նրա առաջին երկերի մեջ հուսահատության նոտաներ, մանվան թախծի նոտաներ են հընչում։ Երբ սկսվեց իմպերիալիստական պատերազմը՝ նա բռնկավ նացիոնալիստների բանակը։ ... Նա տեսավ կոտորած, միմյանց անողոք ոչնչացում, սարսափներ... Ջարենցը սարսափեց և հեռացավ, նա գնաց հեղափոխության կողմը ... և ոչ թե միայն Ջարենցի տաղանդն էր, այլ հենց նրա հեղափոխության կողմն անցնելն էր, որ ստեղծեց նրա ստեղծագործության հաջողությունը, փառք բերեց նրա համար։ Միայն տաղանդը, միայն ձիրքը — դեռ ոչինչ չեն կարող անել ... Սակայն բանաստեղծ Ջարենցը գովաբանելով հեղափոխությունը, նրա հետ ձուլվեց ոչ մինչև վերջ։ Նա ռադիկալ ինտելիգենտ էր, անցած հեղափոխության կողմը և ոչ թե մի մարդ, որը լիովին ձուլվել էր պրոլետարիատի շարքերի մեջ։

Սրանք դեռևս զեկուցման Ջարենցին վերաբերող հատվածի նախադրության մասերն են։ Շարունակությանը ևս պետք է անդրադառնալ՝ ոչ միայն պատկերացում կազմելու Ջարենցին վերագրվող մեղադրանքների մասին, այլև՝ այն նպատակով, որպեսզի պարզ դառնա Ամատունուն հղած Ջարենցի գրությունների շարժառիթները և գործողությունների ուղղվածությունը։ Հետևենք Կիրպոտինի մտքերին.

Նա հեղափոխությունը հասկանում է ոչ որպես օրինաչափ մի պրոցես, նախապատրաստված մարդկության նախորդ պատմության ընթացքով... Ջարենցի համար հեղափոխությունը կատարում է դիմազուրկ մասսան։ ... Հետագայում Ջարենցն ընկնում է հակահեղափոխական նացիոնալիստների ազդեցության տակ։ Մենք անձամբ գիտենք նրա «բարեկամներին», որոնք ազդում էին նրա վրա — դրանք էին Բակունցը, Խանջյանը և ուրիշներ։ Նա ստեղծում է մի գիրք

(«Գիրք հանապարհի»), ուն ամբողջովին գրված է որպես նայ գրականության «ազգային հատկանիշների խտացման» թեորիայի առաջնայնություն: ... Չարենցը չի ցանկանում ճնշադատարար վերաճայել նիներ՝ այսօրվան օգնելու համար, նա ցանկանում է, որ այսօրվա վրա կնիք դնեն մեռելները (ակնարկում է «Ոտքեր մեր հանճարեղ վարպետներին» բանաստեղծությունը՝ Դ. Գ.), նա ցանկանում է մեր այսօրվա գրականությունը վերածել որոշ չափով «բանգարանային» գրականության, այնպիսի գրականության, որը ձայնակցում է անցյալի գերեզմաններին և ոչ թե ժողովրդական կյանքի կենդանի հորձանքին: Եվ բնորոշ է, որ Չարենցի ստեղծագործության այս շրջանում ոլիներ չկան դեպի կենդանի ժողովրդական ստեղծագործությունը, որը Հայաստանում հորդում է անսպառ հորձանքով, որ ստեղծում է այնպիսի շեղհներ, ինչպես «Հեֆիաթը Լենինի մասին» (ակնարկում է Սարմենի «Լենին հսկան»՝ լույս տեսած 1937-ին, ինչպես նաև բազմաթիվ աշուղների անհավեստ մշակումները՝ Դ. Գ.):

Այսքանից հետո կիրպոտինը հանգում է մահացու եզրակացության՝ «Չարենցի ձեռքից բոնեց թշնամին» և անիմաստ խրատաբանության.

Խորհրդային հասարակությունը... իր բոլոր օղակներում ճիանալի համբերություն ու մեծահոգություն ցուցաբերեց դեպի Չարենցը, Չարենցը պետք է ինքը հասկանա, որ նա դեռ կարող է դուրս գալ լուսավոր ուղի, կարող է միանալ իր ժողովրդին և այն ժամանակ նրա ստեղծագործությունը կստանա նոր թոիչք, նոր խթան:

Չարենցի դատավճիռը կայացված էր, թեև տարիներ անց նույն կիրպոտինը բավականին անհոգությամբ պիտի հուշեր դրներ նրա մասին և ինքն իրեն հակասելով ասեր՝ Չարենցը իրեն հաստատելու կարիք չուներ, «նա հաստատված էր իր ստեղծածով»: Ապա՝ «Չարենցն ամբողջովին կլանված էր արդիականությամբ ... Չարենցը անցյալին էր դիմում նրա համար, որպեսզի ավելի լավ հասկանար այժմեականությունը»: Եվ այս ամենը արդեն մեղքը ուրիշի վրա դնելով՝ «Չարենցին մեղադրում էին անցյալի իդեալականացման մեջ», «Չարենցին մեղադրում էին պեսիմիզմի մեջ», «նա

Բերիայի և նրա կամակատարների զոհը դարձավ» (Հիշողություններից Եղիշե Չարենցի մասին, էջ 292—296)։ Նորից կրկնենք՝ այդ կամակատարներից մեկը հենց ինքը՝ կիրպոտինն էր, որին 1937 թ. հայ դրողների ընդհանուր ժողովում հետևեցին նաև մյուսները։

Ժողովի երրորդ օրը ելույթ է ունեցել Հ. Քոչարը.

Խոսելով Չարենցի, Բակունցի և մյուսների «նոյեմբեր» խմբակի մասին, ընկ. Քոչարը շեշտում է, որ այդ խմբակը տարել է ճացիոնալիստական, սպեցիֆիկյան հաղաֆակաենություն ոչ միայն հրապարակային ելույթներում, այլ նաև գեղարվեստական գրականության մեջ։ Նա գտնում է, որ չնայած իր մի շարք հեղափոխական պոեմներին, այնուամենայնիվ Չարենցը հետևողական հեղափոխական գրող չի եղել։ Չարենցը ոչ մի լուսավոր էջ չի գտնում մեր ժողովրդի ողջ պատմության մեջ... Ընկ. Քոչարը բերում է մի շարք փաստեր Չարենցի գրքից, որոնք ցույց են տալիս նրա ճացիոնալիստական հանցանքները։

Ձայնը տրվում է Ա. Ոսկերչյանին.

Խոսելով Չարենցի մասին, ընկ. Ոսկերչյանը գտնում է, որ ընկ. Կիրպոտինը չափազանց ճիշտ կերպով տվեց Չարենցի գնահատականը։ Չարենցը մեծ հանցանքներ է գործել ժողովրդի նկատմամբ, նա մասնակից է եղել հակահեղափոխական ճացիոնալիստների գործունեության, մեր կառավարությունը մեծաճոգի գտնվեց նրա հանդեպ, նրան ճնարավորություններ են տրված, որ ուղղի իրեն, այժմ մնում է, որ Չարենցը ինքնովին վերաճայի իր գործունեությունը, երբ միայն ուզում է վերադառնալ դեպի խորհրդային գրականությունը։

Երրորդ օրը վերստին ելույթ է ունենում Կիրպոտինը և հաստատակամորեն պնդում իր ասածը.

Չարենցը կանգնել է ճացիոնալիստական ուղու վրա։ Խորհրդային կառավարությունը ամենահամբերատար վերաբերմունքն է ցուցաբերել նրա հանդեպ։ Սակայն Չարենցը դեռ համապատասխան եզրակացություն չի արել մղ բոլորից։ Նա նույնիսկ չմասնակցեց ժողովին և լռություն պահպանեց։ Այժմ միայն Չարենցից է կախված, թե արդյոք նա կվերա-

դառնա դեսի Խորհրդային գրականությունը՝ մինչև վերջ գիտակցելով իր հանցանքները:

Նկատի են ունենում էլի շատերը, իսկ ամփոփիչ խոսք ասող պաշտոնական անձ, «Խորհրդային Հայաստան» թերթի արվեստի և գրականության բաժնի վարիչ Վ. Ղազանչյանը իր խոսքին տալիս է նոր բովանդակություն.

Չարենցի մոտ կա նաև բուխարինովշչինա, ինչպես Բուխարինը մի ժամանակ ռուս մեծ ժողովրդին նամարում էր օբլոմովշչինա, այդպես Չարենցը, Դր. Սիմոնյանը, Վանանդեցին աշխատում էին մեր լուսավոր անցյալի էջերը մթնեցնել: Նրանք ամբողջովին ուզում էին ժխտել մեր անցյալը:

Ահա այսպես գրողների ընդհանուր ժողովը, ուր ելույթ ունենցել ավելի քան քառասուն հոգուց, Չարենցի անունը մտցնում է այն ցուցակի մեջ, որի մեջ մտածները արդեն մեկուսացվել էին բանտախցերում և ենթարկվում էին ծանր հարցաքննությունների:

Ապրիլի 25-ին Կիրպոտինը մի զեկուցում էլ է կարդում երևանում, այս անգամ անասնաբուժական ինստիտուտի դահլիճում: Երեք ժամ տևած բանախոսության մեջ ժամանակակից գրողներից նա խոսել է Վշտունու, Զարյանի, Սարյանի մասին, որոնք, ըստ նրա, հաջողությամբ դրում են «ժամանակակից թեմաների մասին»: Չարենցին նա այլևս չի անդրադարձել՝ նրա հարցերը համարելով լուծված:

Ահա այս ամենից հետո է, որ ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ամատունու անունով Չարենցը շարադրում է իր «Բաց նամակի» տարբերակները և դրանք լրացնող գրառումները: Երկրնտրանքի ճանապարհ չունենալով և անընդմեջ ենթարկվելով հարցաքննությունների ու հետապնդումների՝ Չարենցը հանրապետության ղեկավարի ու հանձին նրա ամբողջ ժողովրդի առջև հանդես է գալիս «քաղաքական անվերապահ հաշվետվությամբ», մտածելով, որ անկեղծ զրույցով հնարավոր է հասնել փոխըմբռնման: Նույնիսկ բանը հասնում է այնտեղ, որ իրրև զեկուցում հրապարակված Կիրպոտինի «մահախոսականը» նա համարում է «աններելի չափով մեղմացրած» դատավճիռ կամ այլ կերպ՝ «լիքերալ վերաբերմունքի սահմանակցելու չափ բարեհոգի վերաբերմունք...»: Չարենցը բանաստեղծի իր միամտությամբ կարծում էր, թե

այդպիսի «ինքնաքննադատությունը» կթեթևացնի իր վիճակը, մանավանդ որ ղեկուցմանն վերջում կիրպուռիներ, ինչպես նաև որոշ ելույթ ունեցողներ, նրան դեռևս փրկության հնարավորություններ էին տալիս։ Եվ Չարենցն էլ «ինքնաքննադատաբար» չանում է «ուղղվել»։ Այնինչ, դա ըստ էության այլ բան չէր, քան երբ դանակոծությամբ մարդկանց ստիպում էին ստորագրել քննիչի կողմից իրենց և այլոց դեմ կազմված ցուցմունքները, դրանով իսկ «ինքնաքննադատաբար» օրինականացնելով իրենց մահվան դատավճիռը։

«Քաղաքական ղեկավարին և ընկերոջը»՝ Ամատունուն հասցեագրած «Բաց նամակում» Չարենցը դիմում է ամեն տեսակի մտավոր մանևրումների՝ ապացուցելու, որ ամենևին էլ բացառված չեն իր հնարավոր գրական վրիպումները, որոնք չգիտակցված ձևով կարող է հանգեցրած լինեն քաղաքական շեղումների։ Դա մահվան օղակի մեջ ընկած մարդու, բանաստեղծի, ճշմարիտ հայրենասերի բարդ ու լարված մտորումների շղթա է՝ գրված «ֆիզիկական և ինտելեկտուալ ուժերի սպառման կատաստրոֆիկ աստիճանի» պայմաններում, «հուսալքված հոգեբանությամբ և մտածելակերպով»։

Չարենցը գիտակցում է, որ մահվան հրդեհը բռնկվել է ոչ միայն Հայաստանում, ոչ միայն տեղական ղեկավարության կողմից, այլ որ այն համամիութենական երևույթ է։ Ալեհետ ընդգրկման չափերի լայնության ուրվագծմամբ մի պահ թվում է, թե մեծանում է փրկության հնարավորությունը, մի պահ թվում է, թե հեռանում է վտանգը։ Բայց ամենևին էլ այդպես չէր, մահվան ոստայնները հյուսված էին ամենուր։

Չարենցը կարծեք չանում է ըմբռնել պետական չարդարար մեքենայի անհրաժեշտության կարևորությունը, որի դեմ ոչ միայն սխալ է ամեն մի ընդդիմություն, այլև պարզապես անհնար է ամեն մի բողոքարկում, որովհետև այդ ամենն առանում է «հակահեղափոխական քայլի բնույթ»։ Այդ իսկ պատճառով անհնարին էլ դառնում խոսել «կլասակցական հիմնական գծի» սխալների մասին, մատնանշել համապատասխան չափանիշներով կատարվող «շեղումներն ու թեքումները»։ Այստեղից էլ գալիս է հարցի անհատական ընկալման

և պետական-պաշտոնական դրվածքի բախումը, ինչն էլ Զարենցը դարձնում է մտորումների առիթ, իր «հիմնական սայթաքումների քար» համարելով «հասարակական մարդու կատարած յուրաքանչյուր ակտի սեփական պատկերացման և օբյեկտիվ նշանակության միջև տարբերություն չտեսնելը»: Սուբյեկտիվ ընկալումը նրան մղել է շտկելու կուսակցության գիծը, իսկ օբյեկտիվ վիճակը եկել է շտկելու այդ գիծը շտկելու հավակնություն ունեցողին: Այսինքն, Զարենցը ներքոնեն հասկացնում է, որ այս ողբերգական շրջադարձը մտածող անհատի և որոշակի օրենքներով գործող պետական մեքենայի բախում է: Այսինքն՝ դրված է մտքի կամ ուժի հարցը, որը երկու լուծում ունենալ չի կարող, որովհետև մտքի ուժը բնագատված է իշխանության ուժով: Այդ բախումը միայն ողբերգություն է ծնում և ժամանակավոր հաղթանակի տերը, ավա՛ղ, միշտ էլ բիրտ ուժն է: Հանցանքը, այն էլ հակապետական երանգավորմամբ, վերագրվում է սուբյեկտիվ ընկալումներին, որովհետև հակառակը պնդելը դառնում է անհնարին:

Ով այս դեպքում է ահա, որ մարդը կանգնում է իր համոզմունքների դեմ և արտաքուստ, հանուն ընդհանուր «օբյեկտիվ» շահերի, զոհաբերում իր միակ «սուբյեկտիվ» շահը: Ուստի՝ «ճիշտ հասկանալ այս — նշանակում է ինքնականում վերացնել սեփական քաղաքական սխալների ու սայթաքումների գիտակցելուն խանգարող կարևորագույն սուբյեկտիվ արգելքները»: Այսքանից հետո Զարենցը վկայակոչում է իր անմեղության ապացույցներ, գրելով՝ «...Էապես խաբվող կողմը միմիայն ինքս եմ եղել,— և գրող անգամ չարժե քաղաքական օբյեկտիվ առումով, որ այս տխուր կոնֆլիկտը հետևանք է եղել սուբյեկտիվ անշահ (օ, իհարկե) կուրության... Դրանից միակ տուժողը, ինչպես ցույց է տալիս իմ հասարակական տասնամյա կացության ողբերգական վիճակը,— միմիայն ես եմ եղել...»:

Զարենցը նաև խոսում է իր գրական հասարակական վիճակի մասին՝ պաշտոնապես իրեն սահմանագծելով և՛ գրական, և՛ հասարակական միջավայրից: Իրականում նրա վիճակը իրոք այդպես էր: 1935-ից սկսած նա երբեք եռանդուն

մասնակցություն չէր ունեցել ո՛չ գրողների միության աշխատանքներին, ո՛չ էլ հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին։ Պատճառներից առաջինը նրան պարտադրված արհեստական մեկուսացումն էր և իր զբաղեցրած պաշտոնից հեռացումը։ Դրան էլ նկել էր ավելանալու առողջական վիճակի ծանրացումը, որը ոչ միայն ֆիզիկական թուլության հետևանք էր, այլև, գլխավորապես, հոգեկան։

Խլում էր առաջացել նրա ու գրական համախոհների միջև, որոնցից մի քանիսը մասնակցել էին իրեն գրողների միությունից վտարելու նպատակով հրավիրված ժողովին և անգամ իր դեմ սուր ելույթներ ունեցել։ Դրան նախորդել էր 1934 թ. լեզվի դիսպուտը, երբ Չարենցը գրական լեզվի զարգացման նախապատվությունը վերապահել է Դեմիրճյանին և ոչ թե Բակունցին, Մահարուն կամ Արմենին։

Ահա այս պայմաններում է գրվել Չարենցի «Բաց նամակը», որի բնագիրը հրապարակում ենք մասնակի կրճատումներով։

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅԱՍՏ. ԿՈՄ. ԿՈՒՍԱԿՑ. (բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԸՆԿ. ԱՄԱՏՈՒՆՈՒՆ

Հարգելի ընկ. Ամատունի։

Թույլ տվեք հանձին Ձեզ՝ հրապարակային անկեղծ խոսքով ներկայանալ հայ խորհրդային ժողովրդի և խորհրդային հասարակության առաջ խաղաղական անվերապահ հաշվետվությամբ, իբրև վաղուց ճետե, մեծագույն համբերությամբ և հոգատարությամբ խորհրդային ժողովրդի և իշխանության կողմից <վերջնական պատասխանատվության կոչված> պոետ ու խաղաղացի՝ կիրառել ճնարավոր ու լավագույն ամենայն միջոց ու ճնարավորություն՝ փրկելու հայ խաղաղական-հասարակական կատաստրոֆից, բերելու ուղիղ ճանապարհի վրա, ընդունակ դարձնելու իմ խաղաղական-գրական սխալներն ու սայթաքումները գիտակցելու միջոցով գտնելու ճետագա խորհրդային գրական-հասարակական կյանքին ու աշխատանքին կապվելու ուղիներ ու ճնարավորություններ։ —

Ճիա թե ինչու, ընկ. Ամատունի, ինձ համար այսօր, իմ

գրական-հաղաքական-հասարակական գոյության համար ավելի քան նշանակալից այս հայլն անելիս՝ իմ հոգևոր տեսողության առաջ չի կարող չնայնանալ Ձեր՝ հաղաքական գերագույն ղեկավարի դիրքը՝ իմ խորհրդային ժողովրդի անհուսորեն բարյացակամ, համբերատար վերաբերմունքի բարձրագույն կրողի, մարմնավորողի անխառն կերպարանքին,— ստեղծելով ինձ համար անգնահատելի պատեհություն՝ դիմել իմ խորհրդային ժողովրդի բոլոր լավագույն կողմերն իր մեջ մարմնավորող մի կոնկրետ, միևնույն ժամանակ երկրի հաղաքական գերագույն ղեկավարի բարձր հեղինակությունը կրող՝ մարդու, հաղաքական ղեկավարի ևրկերոջ:

Այս ամենից հետո՝ գիտակցելով այս ամենը՝ որպեսի պարոյական պարտավորություն պետք է զգա մեկը՝ իր յուրաքանչյուր խոսքի, յուրաքանչյուր արտահայտության համար,— պարզ է իմ՝ ինձ: Իմ ֆիզիկական և ինտելեկտուալ ուժերի սպառման կատաստրոֆիկ աստիճանի պատճառով, դժբախտաբար, ես չկարողացա հետաքրքրությունից զուրկ եմ մանրամասն կանգ առնել, կամ կոնկրետ հետության և վերաքննադատության ենթարկել իմ հաղաքական-գրական նույնիսկ ինքնական, կոնկրետ սխալներն ու սայթաքումները: Թողնել<ով> այդ ավելի պատեհ առիթների, այժմ ես իմ հաղաքական անհետաձգելի, արդեն իսկ ուշացած պարտքն եմ համարում ասել իմ հրապարակային սպառիչ, սկզբունքային անվիճելի խոսքը հաղաքական հիմնական, հանգուցային կարմնորոշման նշանակություն ունեցող խնդիրների մասին: —

ԱՄՆԱԿԱՆԸ:

Իմ գրական-հաղաքական ողջ կոնցեպցիայի վերաքննադատության սկզբունքային խոսքության, հաղաքական կոնկրետ բովանդակության և որակային կշռի մասին թերևս կարելի լինի պատկերացում տալ հետևյալ ձևակերպումով.—

Ըհկ. Կիրպոտինի ելույթում՝ իմ հաղաքական և գրական սխալների և մեղքերի մասին տրված գնահատականը՝ իր հա-

պատմական կոնկրետ բովանդակությամբ վերաբերմունքից ամբողջ առումով,— ներկայումս ես զանում եմ ոչ միայն նիշտ և հաղթականապես անվիճելի,— այլև առավել, քան կարելի է պատկերացնել հաղթական ներկա սիտուացիայում,— անհերելի չափով մեղավոր, ԱՅԼԴԵՊՔՈՒՄ՝ լիբերալ վերաբերմունքի սահմանակցելու չափ բարեհոգի վերաբերմունք...

Եվ սա ոչ թե ֆրազ է, այլ իմ մեջ վերջնականապես, բավականին դժվար, ցիվանդագին, դանդաղ վերագնահատական ներքին պրոցեսից հետո անդրդվելի դարձած համոզմո՛ւնք:

Ոչ միայն իմ հանդեպ հարուցված մեղադրանքի, այլև վերջին ողջ շրջադարձի հաղթական իսկական իմաստն ու նշանակությունը ինձ համար պարզվեց չափազանց դանդաղ, օրըօրին, գերազանցապես շրջադարձի սկզբից մինչև օրս և՛ մեզ մոտ (խ. Հ.-ում), և՛ առավելագույն չափով — իսրհրդային ողջ միության մեջ տեղի ունեցող, հետզհետե բացվող դեպքերի և փաստերի անդրդվելի տրամաբանության հարվածների ներքո: — Գլխավոր նախապայմանը, որ ինձ խանգարում է հասկանալ այդ շրջադարձի հաղթական իսկական նշանակությունն ու դերը,— այն էր, որ Ն. Ստեփանյանի ձերբակալությունից սկսած և Ա. Խանջյանի ինքնասպանությունից հետո գլխապտույտ արագությամբ ընթացող շրջադարձը՝ սկզբից ևեթ մինչև որոշ մոմենտ (որի մասին առանձին)— ինձ պատկերանում էր, իբրև զուտ տեղական, ներհրդային Հայաստանի հասարակական–հաղթական կոնկրետ իրադրությամբ սահմանափակվող հաղթական երևույթների շղթա՝ հաղթական–հասարակական իր կոնկրետ նախապայմաններով ու ընթացքով:—

Նկդրի նման պատկերացումը՝ երևույթի կոնկրետ էլեմենտները հաղթական գնահատման տեսակետից ինձ համար նշանակում էր ոչ բոլոր դեպքերում սկզբունքորեն ընդունելի համարել կատարվող փաստերը:— Ավելի որոշակի ասած՝ ինչպես միշտ, այնպես էլ այս դեպքում,— խնդրի նման պատկերացումն ինձ համար հաղթականապես նշանակում էր կատարվող շրջադարձի ոչ բոլոր փուլերն ու կոնկրետ էլեմենտներն անապելիացիոն

կերպով ընդունել իբրև խորհրդային իշխանության կուսակցական Գերագույն Միութենական Ղեկավարության հիմնական գծից բխող, բաղմականապես պետական ակտեր.—

Կոնկրետ իմաստով այս նշանակում էր, որ եթե կատարվող շրջադարձի, իբրև բաղմական ճիշտ կուրսի, իմաստն ու նշանակությունը ինձ համար վեր էր ամենայն տարակույսից, ապա դրանից դեռ չէր բխում, որ շրջադարձի ընթացքում տեղի ունեցող ամեն մի կոնկրետ դեպքը ինձ համար անտարակույս կերպով կարող էր ունենալ նույնպիսի անտարակուսելի նշանակություն,— այսինքն բաղմական այնպիսի մի ակտ, որ խորհրդային իշխանության կամ կոմունիստական կուսակցության հիմնական գծի առումով իր անառարկելի նշանությամբ բացառում է որևէ ապելիացիայի տեղիք, անիմաստ է դարձնում ամեն մի նման ապելիացիա՝ հակախորհրդային բայլի բնույթ ստանալու չափ անընդունելի: — Ինչպես, օրինակ, կամ բացարձակ տխմարություն, կամ հակախորհրդային միտում ունեցողը միայն կարող է գերագույն ապելիացիայի ենթակա ակտ համարել — տոոցկիստական գործունեության համար համապատասխան բեսկան օրենքով նանված դատավճիռը:—

Պարզ ասած, նման մտածելակերպը ոչ այլ ինչ է, եթե ոչ— (տարբեր պետերում տարբեր չափով, սակայն նման-յա թե բոլոր դեպքերում էլ վնասակար)— ինչ-ինչ պատճառներով մարդու մեջ ստեղծված հավակնություն, կամ մտայնություն՝ կուսակցական հիմնական գծին տեղական ղեկավարությունից անգամ լավ տիրապետած լինելու իմքնագգացումով՝ իրենց իրավասու կամ ընդունակ համարել նշելու կոնկրետ ղեկավարության կոնկրետ սխալները,— անգամ շտկել կուսակցական հիմնական գծի կիրառման ընթացքում թույլ տված շեղումները կամ թեքումները...

Քաղաքական—նասարակական կառուստրոֆի՞ է հարկավոր արդյոք հասնել, հասկանալու, գիտակցելու համար այս մտածելակերպի, նասարակական այս մտայնության,— մանավանդ խորհրդային իրականության մեջ քաղաքական այս հոգեբանության— լավագույն դեպքում— կասկածելի բնույթը: Տարիներ շարունակ,

համարյա մի ամբողջ տասնամյակի ընթացքում ներկ ենք այս մտայնության հետևանքով, գոնե սուբյեկտիվորեն գերազանցապես միմիայն այս հոգեբանության հետևանքով— բազմաթիվ ու անվերջ, պարբերաբար, անխուսափելի հետևողականությամբ քաղաքական—հասարակական—գրական սայթաքումների և, մանավանդ, քաղաքական իրական կյանքում անվերջանալի փորձանքներից հետո իսկ, մինչև հասարակական կյանքից հետզհետե վտարված վերջնական կատաստրոֆի հասնելով էր միայն, որպեսզի կարողանայի հասկանալ քաղաքական կյանքի ու պայքարի <ողջ> էության և տարրական պայքարների մասին որևէ պատկերացում ունեցողի համար ոչ մի գաղտնիք չկազմող, սակայն քաղաքական-հասարակական ամեն մի գործչի համար, անգամ հասարակական կյանքով ապրող ամեն մի սովորական քաղաքացու համար աչքի պես անհրաժեշտ մի ուճակության համարյա թե կատարյալ բացակայությունը իմ հուսալված հոգեբանության և մտածելակերպի մեջ,— իմ հասարակական մտածելակերպի կամ տեսողության հիմնական դեֆեկտը,— իմ հասարակական կյանքի բավականի<ն> երկար ճանապարհին իմ ավելի քան հաճախակի սայթաքումների և շեղումների <ի> հիմնական սայթաքման քարը,— որը ոչ այլ ինչ է, քան հասարակական մարդու կատարած յուրաքանչյուր ակտի սեփական պատկերացման և օբյեկտիվ ճշմարտության միջև տարբերություն չտեսնելը:

Այս է ահա վերոհիշյալ քաղաքական մտայնության, այսինքն՝ կուսակցական հիմնական գծի տեսակետից տեղական ղեկավարության կոնկրետ գործունեության մեջ «սխալներ» ու «թերումներ» փնտրելու սուբյեկտիվ— հոգեբանական պատճառը:— Անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ իմ դեպքում, տվյալ կոնկրետ դեպքում, և այն էլ ներհոգեյալ վերաբերմունքով է միայն, որ ես համարում եմ այդ սուբյեկտիվ պատճառ՝ իդեական անհրաժեշտ բնույթ ունեցող հանգամանքի իմաստով:— Ինչևէ՝ լավագույն դեպքում— դա

լոկ սուբյեկտիվ նշանակություն ունեցող մի հանգամանք է, որ ես նշում եմ այստեղ լոկ բացատրական նկատառումներով:— Ցանկանալ տալ դրան օբյեկտիվ արտահայտման իմաստ,— նշանակում է իմ կողմից կատարել նույն ճակատագրական սխալը, որ տարիներ շարունակ հասցրել է ինձ քաղաքական-հասարակական բազմաթիվ սխալների:—

Ի՞նչ է նշանակում սակայն չհասկանալ հասարակական քայլերի սուբյեկտիվ նպատակադրման և օբյեկտիվ դերի տարբերությունը,— կամ, որ նույն դրույթի տարբեր արտահայտությունն է՝ հավանականություն ունենալ «գիծ շըտկելու» (որ սուբյեկտիվորեն ենթադրում է սեփական անխախտականություն)— ո՞րն է սրա սոցիալական և քաղաքական ընդհանուր, իսկական օբյեկտիվ իմաստը,— անկախ այս կամ այն դեպքից, իբրև քաղաքական օբյեկտիվ կատեգորիա՝ խորհրդային պայմաններում:—

Ճիշտ հասկանալ այս— նշանակում է հիմնականում վերացնել սեփական քաղաքական սխալների ու սայթաքումների գիտակցելուն խանգարող կարևորագույն սուբյեկտիվ արգելքները:

Գոնե ինձ համար այստեղից սկսվեց իմ սխալների և սայթաքումների գիտակցելու պրոցեսը: Մի շարք օբյեկտիվ դեպքերի [illegible] հետևանքով,— որին զուգադիպեցին ընկ. Ստալինի ելույթները, որ անմիջապես առնչություն ունեն այս խնդրի հետ,— ինձ համար անկասկածելի դարձավ վերոհիշյալ մտայնության և հոգեբանության իսկական իմաստը,— դրա իսկական սոցիալական-քաղաքական բնույթը, որ ոչ այլ ինչ է, քան—

Խորհրդային հասարակության դասակարգային բազայից կտրված,— լավագույն, իդեական անձնշան մարդկությանդեպքում,— սոցիալական խախուտ, մանրբուրժուական խավերից ելած ինտելիգենտային տարրերի՝ առաջին կոնկրետ դեպքերում տարբեր ձևերով և տարբեր հանգներով արտահայտվող— հիմնականում, քաղաքականապես միևնույն ԱՆՎՃՌԱԿԱՆ, թերահավատ, իր համար բոլոր

դեպքերում վերապահումների ճնարավորություն ապահովող ըստ էության, քաղաքական իր օբյեկտիվ նշանակությամբ ու կատարած դերով— ամեն մի պատեհ առիթով հակախորհրդային պասիվ խավերին սանձահամերձվող— բոլոր դեպքերում այդ տենդենցն ուզարգացմանը թթացող ունեցող քաղաքական-գաղափարախոսական մթայնություն:—

Սրանով, ենթադրում եմ,— հիմնականում ԱՍՎՈՒՄ Է ԱՄԲՈՂՋԸ:

Մնացածը — սուբյեկտիվ երանգավորում է սոցիալ-քաղաքական ընդհանուր կատեգորիայի պատկանող մի առաջին դեպքի կենսագրական մանրամասնություն:

Առողջական ներկա վիճակում ինձ համար մատչելի ինտելեկտուալ աշխատանքի սահմանափակ հնարավորությունը չափազանց դժվարացնում է հետևողական կերպով բնեելու, առարկայական կոնկրետությամբ նշտելու և վերլուծելու խընդիրը՝ հարկ եղած խորությամբ և ծավալով:

Ուստի ես լարում եմ բոլոր ուժերս՝ գոնե նշել կարողանալու համար էականն ու կարեվորը:

Ամենահարգելի րնկ. Ամատունի՛:

Խնդրում եմ ամենից քիչ սպասել ինձանից, իմ ներկա գրության մեջ, առարկայական հետևողականություն և շարադրական կատարելություն:

Դուք ինձանից առավել, ոչ միայն այդ, այլ միշտ,— քաղաքական խնդիրներում գերադասել և գերադասում եք իմաստը, բովանդակությունը,— ձևին կամ ձևակերպման սիլլոգիզմային զգեստին: Ուստի ես շարունակում եմ՝ ի նկատի ունենալով էությունը,— և ոչ թե ձևը:—

Հասարակական մարդու յուրաքանչյուր ակտ սուբյեկտիվ և օբյեկտիվ նշանակության միջև հավասարության նշան դնելու, տարիներ շարունակ դրանց միջև եղած տարբերության պատճառով, կամ այդ տարբերությունը չտեսնելու և չգիտակցելու հետևանքով քաղաքական բազմաթիվ և աե-

վերջնալի փորձությունից հետո — հասած, անվավասիկ, վերջին կատաստրոֆի,— միևնույն ժամանակ այս կատաստրոֆիկ վիճակում միայն ըմբռնելով, գիտակցելով նույն այդ հոգեբանությունից բխող՝ դրա մյուս ձևերն հանդիսացող,— մեր հասարակական կյանքում ինձ համար աննահանջելի թվացող՝ երկրի ղեկավարության որևէ ակտի անընդունելիությունը սուբյեկտիվորեն կոմունիստական կուսակցության Գերագույն Ղեկավարության հիմնական գծին չհամապատասխանող ՏԵՂԱԿԱՆ աղավաղում համարելու հնարավորության իլլյուզիայի խաղաֆական բուն իմաստն ու տենդենցը գիտակցելուց հետո միայն ես կարող էի խաղաֆական բովանդակ կոնկրետությամբ և ճշգրտությամբ տեսնել ու գնահատել բոլոր այն խնդիրները, խաղաֆական, հասարակական կամ գրական երևույթներն ու դեպքերը թե անձնապես իմ, թե իմ շրջապատում գտնվող մարդկանց ու հասարակական տարրերի գործունեության ամբողջական իմաստն ու բուռն, որ մինչև օրս ինձ պատկերացել են միանգամայն տարբեր գունավորությամբ:

Առանց այս նախապայմանի անհնարին էր իմ խաղաֆական-հնարավորական կեցվածքափոխությունը:— Ինձ համար վճռականը— ամենադժվարինը— իմ վերոհիշյալ հասարակական տեսողության դատոլնիզմի (երևի պետք է լինի դալտունիզմի— Դ. Գ.) օրգանական վերանումն էր:—

Մինչև օրս ես ենթադրել իսկ չէի կարող, որ իմ ճնշադատած, իմ կողմից անընդունելի, սխալ համարվող դեպքերն ու երևույթները այդպիսի գնահատության են արժանացել ոչ թե կոմունիստական կուսակցության վերին ղեկավարության հիմնական գծին չհամապատասխանելու պատճառով (ինչպես սուբյեկտիվորեն համոզված եմ եղել մինչև օրս)— այլ պարզապես նման պատկերացման ինձ համար օբյեկտիվորեն իմ հասարակական-խաղաֆական սխալներն ու տատանումներն արդարացնելու միջոցներից լավագույնն էղել, որ իմ սխալների ու տատանումների իսկական սոցիալական-

ֆաղամական գույները դասակարգային բնազդի դրդմամբ յուրացնելու,— առաջին միմիկրիայի հետևանք է եղել և էապես խաբվող կողմը միմիայն ինքս եմ եղել,— և գրող անգամ չարժե ֆաղամական օբյեկտիվ առումով, որ այս տխուր կոնֆլիկտը հետևանք է եղել սուբյեկտիվ անշահ (օ, իհարկե) կուրություն... Դրա հին միակ առաջորը, ինչպես ցույց է տալիս իմ հասարակական տասնամյա կացության ողբերգական վիճակը,— միմիայն ես եմ եղել— և դրանում է կայացել իմ հասարակական բախտի և գրական-սուբյեկտիվ պատկերացման միջև առաջացած հակասության ինքնական պատճառն ու օբյեկտիվ հնարավորությունը: Համեմայն դեպս— «լավ է ուշ, քան երբեք»— ասում է ժողովրդական առածը,— և ինձ մնում է միայն անցնել իմ ֆաղամական այս տեսողության (այսինքն ուշացած) կոնկրետ հետևանքներին:

Ինչպես հասունացած այրն է հայում մանկական ոազմախաղին,— այնպես ինձ ներկայումս հեֆիաթային նաիվ պատկերացում է թվում իմ ֆաղամական պատկերացումների ողջ մանկունակ աշխարհը, որ ժամկետային տևողությամբ բռնում է... ավելի քան տասնամյա տարածություն...

Բայց ես կանգ եմ առնում միմիայն իմ ֆաղամական մանկապատումի վերջին— համարյա ֆինալային դրվագի վրա, սահմանափակելով խնդիրը տվյալ կոնկրետ շրջանով:

Ում ինչ— իբրև ֆաղամական օբյեկտիվ հանգամանք,— ի՞նչ նշանակություն և դեր կարող էր ունենալ, ասենք, այն հանգամանքը,— որ ես սհավասիկ երեք տարուց ավելի է, որ ֆաղամականապես, գրական, անգամ կենցաղային առումով սահմանագծվել եմ <.....>, ե՞րբ, որտե՞ղ, հասարակական ո՞ր կոնկրետ ակտով է, որ օբյեկտիվ նշանակություն և բնույթ է ստացել այդ,— և, որպես այսպիսին՝ կարող էր թե՛ ժամանակին, թե՛ այժմ ունեցած լինել և ունենալ որևէ ֆաղամական օբյեկտիվ նշանակություն մեր իրականության համար:—

Եվ այսպես — շարունակ: —

Որ այս ամենը բաղաքական անձնական ողբերգություն կարող է լինել մի անձնավորության համար,— ավելի վատ նենց այդ անձնավորության համար,— բայց որ հասարակական առումով, անկախ ֆո «բարի ցանկությունից» որոնցով, ինչպես հայտնի է, սալահատակված է դժոխքը,— դու պարտավոր ես հաշիվ տալ ֆո հասարակական գոյության օբյեկտիվ հանգամանքների կապակցությամբ,— այս արդեն որոշակի է, իբրև շատ կոնկրետ բաղաքական–հասարակական հանգամանք.— որոնց հանդեպ դուք դեռևս չեք բարեհաճել ակնարկել անգամ ձեր վերաբերմունքի մասին և ոչ մի խոսքով:—

Տխուր է,— բայց փաստ է:—

Ամենահարգելի բնկ. Ամատունի՛:

Ես, հիմնականում, նենց այս նպատակադրությամբ եմ նախընտրել հանձին Ձեզ, Ձեր արբիտրային միջնորդությամբ, հանձնել իմ «մեղայական խարտիան» խորհրդային հասարակության և բովանդակ ժողովրդի հայեցողությանը, որովհետև Դուք Գերագույն Դատավորի հանգամանք ունենալուց բացի՝ լավագույն կերպով տեղյակ եք իմ խնդրի բոլոր կողմերին, ուստի և կարող եք լավագույն հեղինակությունն հանդիսանալ իմ բաղաքական–հասարակական կողմնորոշման խոտությունն ու դիպլոգոնային ծավալն անխախտական կերպով ուշքի բերելու համար: —<.....>

Սի՞թե խորհրդային ամենալայն հասարակության համար գաղտնի՞ք է, թե ի՞նչ փոխհարաբերություն է սահեղծվել ֆոն<ե> վերջին մի բանի տարիների ընթացքում իմ և այդ մարդկանց միջև (Զարենցը նկատի ունի գրողների միությունից իրեն հեռացնողներին՝ Դ. Դ.) — գրական — հասարակական–բաղաքական և անգամ կենցաղային իմաստով,— մի՞թե կարող է գոնե խորհրդային գրական հասարակայնության համար գաղտնիք հանդիսանալ այն զարհուրելի, բառացի իմաստով անգամ խտմնելի հասարակական–բաղաքական հալածանքն ու օսարկիզմը, որի հետևանքով ավելի բան երեք տարի է անա, որ ես միանգամայն դուրս եմ շպրտված հասարակական–գրական ասպարեզից,— կարո՞ղ է արդյոք գաղտնիք հանդիսանալ խորհրդային գրականու-

թյան ասպարեզից ինձ կատարյալ վտարման ենթարկելու փաստը <....> վերջին երեք–չորս տարիների ընթացքում, երբ իմ խորհրդային ժողովրդի աչքերի առաջ, օրը ցերեկով, ճնշավոր դարձավ անգամ այն խելագարության նման անհեթեթը, խորհրդային իշխանության անունից և խորհրդային նույն այդ իշխանության ժողովրդի պատկերացմանը անհնարին, խորհրդային իշխանության հանդեպ միմիայն դաշնակցական պրովոկացիայի իմաստ ունեցող փաստը,— երբ առանց որևէ բացատրության, խորհրդային հասարակայնությանը ոչ մի բացատրություն չտալով ինձ վերագրվող ոչ թե գրական, այլ կոնկրետ — ֆաղաֆական հանցանքի ենթադրական պատճառով,— օրը ցերեկով դուրսենշպրտում Գրողների Միությունից <.....> և արժանի անդամ չեն համարում, որ ճվաստս մասնակցեմ, իբրև սոսկ խորհրդային պոետ, հայկական պոեզիայի դեկադային՝ Մոսկվայում, Խորհրդային Միության Մայրաֆաղաֆում... Ե՞րբ է տեղի ունեցել այս ակտը և ո՞ւմ «օրհնանֆով»... Այս ամենից հետո ո՞վ է ինձ հովանավոր,— ես մոռեցում եմ իմ կյանքի շլացմանը...

(ՀՖ, № 166)

«Նամակն» այստեղ ընդհատվում է: Բայց և ամեն ինչ արանով չի ավարտվում: Ջբավարարվելով դրանով՝ Չարենցը գրում է մի նոր «բաց նամակ» և բացատրության բնույթ ունեցող այլ գրություններ, որոնք թեև բովանդակությամբ նման են առաջինին (և այսպես էլ պիտի լինի), բայց շարադրանքով տարբեր են և վերստին արժանի հրապարակման:

Վեր կանգնելով մեկ-երկու մանր-մունր մեղադրանքներից, «փաստական մեղադրական մատերիալներից», որոնք վկայաբերվել են Կիրպոտինի զեկուցման մեջ, անգամ չանդրադառնալով դրանց և մի կողմ թողնելով մի քանի բանաստեղծությունների ու կենցաղային ինչ-ինչ հարաբերությունների հետ կապված պատմությունները՝ Չարենցը վերստին խոսում է իր մասին, բայց և այս անգամ ավելի ճշգրիտ զգացնելով իր գրական արժեքը: Չարենցը իր մասին խոսում

է որպես «խորհրդային բովանդակ երկրի և ժողովրդի մեծագույն և ամենաժողովրդական պոեմի բարձր կոչումին ու բախտին» արժանացած մի հեղինակություն, որից սակայն հեռու է «ինքնագոհության կամ ինքնամեծարանքի խեղճ շահախնդրությունը»։ Ժողովրդական ուշադրության, սիրո և հարգանքի արժանանալու այս «բարձրագույն և, ավա՜ղ, ողբերգական բախտը» Չարենցին կանգնեցնում է մեծ ճշմարտությունների լեզվով, 25-ամյա վաստակի պատասխանատվությամբ խոսելու անհրաժեշտության առջև՝ իր «մեղայական խարտիային» ավելացնելով ժողովրդի առջև տրվող «կյանքի և մահու հաշվետվությունը»։

Բանաստեղծը վերստին ջանում է կողմնորոշվել հանրապետության կյանքում և ամբողջ երկրում կատարված վերջին ամիսների քաղաքական բարդ շրջապտույտների մեջ, որոնք, ըստ նրա, «դրսի» աչքով նայելիս, թողնում են «արտառոց և անճապաղալի (միևնույն ժամանակ՝ անսպասելի») տպավորություն, որոնք հետևանք են «պատահական», «ներքուստ չպատճառաբանված», ինչ-որ «կամայական ուժերի» գործունեության։ Հետագա գրություններում մեջ պիտի տեսնենք, որ Չարենցը իրեն հենց դրսի աչք էլ վերապահում էր՝ նկատի ունենալով իր մեկուսացվածությունը բուռն հասարակական—քաղաքական կյանքից, ինչպես նաև «ինֆորմացիայի» բացակայությունը։ Իսկ «ներսի» աչքը, որ այդ իրականության հայելին է, արտացոլում է քաղաքական սուր պայքարի ընկալությունը, որոնք մի նոր շրջափուլ են խորհրդանշում խորհրդային հասարակարգի պատմության մեջ։

Չարենցը կարծեք մի պահ փորձում է մի կողմ դնել «սուբյեկտիվ» ընկալումները և այդ նոր, չեղյալ իրավիճակին նայել «օբյեկտիվ» ընկալումների դիրքերից, որը և նրան վերըստին կանգնեցնում է ողբերգական կացության առջև, որովհետև այդ նոր շրջադարձը միայն արյուն էր հեղում։

Ներկայացնում ենք «Բաց նամակի» այս տարբերակը ևս, որը դարձյալ անավարտ է։

Հարգելի ընկ. Ամատունի՛:

Թույլ տվե՛ք ձեզ իմ խաղաղական հաշվետու խոսքը ասել խորհրդային հասարակայնությանն ու խորհրդային բովանդակ ժողովրդին այն ամենի մասին, որ իբրև վերջին տարիների ընթացքում իմ կողմից թույլ տրված գրական—խաղաղական սխալների և սայթաքումների խնդիր՝ նրապարակայնորեն առաջին անգամ դրվեց խորհրդային հասարակայնության և ողջ ժողովրդի առջև ընկ. Կիրպոտինի ելույթի ինձ վերաբերող հատվածով՝ խաղաղական սպառիչ գնահատականով և «մեղադրական եզրակացությամբ»: Իհարկե, միամտություն կլիներ կարծել, որ մինչև ընկ. Կիրպոտինի ելույթը խորհրդային հասարակայնության անգամ ամենայայն շրջանների համար գաղտնիք էր ճանդիսանում իմ խաղաղական կրիզիսային վիճակի փաստը, կամ, անգամ՝ ինձ այդ կրիզիսի առջև կանգնեցնող խաղաղական պատճառների հիմնական բնույթը:— Այսպես կարծել— նշանակում է ոչ միայն շատ պրիմիտիվ պատկերացում ունենալ խորհրդային հասարակայնության ամենալայն խավերի խաղաղական ակտիվիստների և հասունության մասին,— այլև միանգամայն սխալ պատկերացում ունենալ իմ մինչայժմյա խաղաղական կրիզիսային վիճակի **խաղաղական իսկական բովանդակության և ծավալի** մասին:

Մի՞թե առաջադրված խնդրի խաղաղական ողջ բովանդակությունն ու էությունը— այն **կոնկրետ մեջբերումների** ու խաղաղական-հասարակական մի-երկու մասնակի **կապե՛րների**, որ իբրև **փաստական մեղադրական** մատերիալ բերվեցին հիշյալ հրապարակային ելույթում և այդ կոնկրետ առումով թերևս նորույթ, կամ «գաղտնիք» խորհրդային հասարակայնության գուցե և մեծամասնության համար:—

Իհարկե,— ոչ:— Խնդիրը այդ մակարդակի վրա դնել,— ամենից առաջ ինձ համար կնշանակի կոծկել ամբողջ խնդիրը,— ելնելով, իհարկե, անձնական

հետատումներից խորհրդային հասարակայնության և ողջ ժողովրդի առջև **ֆաղաֆական մեծագույն խընդիրը** (որով և պայմանավորված է խորհրդային հասարակության և այդ՝ ողջ ժողովրդի հետաքրքրությունը դեպի այն և, մանավանդ, **վերաբերմունքը**)— հանուն, թերևս, անձնական գծուծ շահերը,— զրկել հասարակական ամենաէական բովանդակությունից,— իդեալ դարձնել մի խորհրդային գրողի մի հանի բանաստեղծություններ և ինչ-որ կենցաղային հանդիպումների համար պատասխանատվության կանչվելու համարյա թե դատական՝ բուռ օրենքի կետերի ճնշության առնվելիք և լուծվելիք խնդիր:

Ո՛չ, րնկ. Ամատունի: — Անպատվաբեր և անպատեհ կլիներ չնչելի առաջադրման այս մակարդակը ոչ միայն խորհրդային պոետի և ֆաղաֆացու համար,— այլև ամեն մի խորհրդային, շարֆային ֆաղաֆացու համար, որ ունի խորհրդային ֆաղաֆացու գոնե սուբյեկտիվ իմֆնագիտակցություն: —

Առավելագույնս անարժան և եղկելի կլիներ այդ մասնավորապես ինձ համար,— այսիմֆն ֆասնիմֆգամյա գրականհասարակական ուղի անցած մի պոետի ու ֆաղաֆացու, որ միմիայն խորհրդային պոետի ու ֆաղաֆացու իր ֆասնամյա աֆնությամբ, չնայած իր բազմաթիվ սխալներին և սայթաֆումներին, այնուամենայնիվ կարողացել է հասնել իր խորհրդային բովանդակ երկրի ու ժողովրդի մեծագույն և ամենաժողովրդական պոետի բարձր կոչումին ու բախտին:

Ողորմելի հացկատակի ու միմոսի մտոով միայն կարող է անցնել հասարակական կյանֆի այսպիսի պահերին իմֆնագոհության կամ իմֆնամեծարանֆի խեղճ շահախնդրությունը:—

Ում համար լոկ անձնական գծուծ հասույթի պարագիտային նղնիմ զառանցանֆ է եղել ժողովրդական ուշադրության, կամ առավել ևս՝ սիրո և ճարգանֆի արժանանալու բարձրագույն և, ավա՛ղ, ողբերգական բախտը,— նա միայն կարող է ընդունակ լինել իր ժողովրդի առջև կյանֆի և

մաճու հաշվետվության կոչված անուղղելի պահին՝ զբաղվել էժան հացկատակությամբ:

Ի ս կ ո վ ի ս կ ա պ ե ս բախտ է ունեցել արժանի լինելու իր ժողովրդի ուշադրությանը,— նրա համար խոսել ներկա վայրկյանիս այդ մասին— հնչանակում է խոսել միայն և միայն այն գերագույն և անկրկնելի պատասխանատվության մասին, որից կախված է ըն մ ի շ ո ւ ի ր ա մ բ ո ղ ջ կ յ ա ն ք ի գործն ու վաստակը,— ի ր հ ա ս ն ի ն գ ա մ յ ա ն դուլ տ ե ն ո ւ թ յ ա մ բ ի ր ժ ո ղ ո վ ր դ ի ա ն ս խ ա լ ա կ ա ն ն ժ ա ր ո վ չ ա փ ա ծ ո ւ կ շ ռ ա ծ ո ւ շ ա դ ր ո ւ թ յ ա ն և հ ա ր գ ա ն ք ի պատուղը:

Ո՛չ թե պատահական ոմն՝ իմ ժողովրդից անկախ, իրև առանձին բախտախնդիր և արկածախնդիր՝ պատահական շավղով և պատահական ժամին, տեսնելով մեծ խառույկներ՝ Հոկտ. հեղափոխության երթին միացած խղճուկ թմբկաձար,— այլ՝ իմ ժողովրդի հետ մեկտեղ՝ իմ ժողովրդի գոյության պատմական ամենաանել ժամին, իրև փրկության միակ փարոսի՝ անվերապահ կերպով հարելով Հոկտ. հեղափոխության պատմական լայն ֆառուղուն,— անսալով նոր մարդկության մեծագույն առաջնորդների <.....> փրկաբեր ձայնին, որ այն անխուսափելի մահվան և մղձավանջի ժամին հնչեց իմ ժողովրդի համար, իրև միակ փրկության և վերածնության համբավաբեր,— անավասիկ իրև այդպիսին,— իրև իմ ժողովրդի հետ միասին Հոկտեմբերյան հեղափոխության կ ե ն ս ա պ ե ս միակ, անվերապահ և անառարկելի կյանքի և մահու ուղի ելած մարտիկ ու պոետ, որ հետագա խորհրդային ֆանամյա ճանապարհի՛ն միայն, իմ ժողովրդի հետ միասին և մեկտեղ՝ ա յ ն չ ա փ ո վ, ո ր չ ա փ ո վ, ո ր իմ խ ո ր հ ր դ ա յ ի ն ժ ո ղ ո վ ր դ ի ն հ ե տ մ ե կ տ ե ղ — շահելով պոետական համբավ և ֆաղաֆացու անուն,— այսօր, այս վայրկյանիս, կարո՞ղ եմ արդյոք ես՝ կոչված պատասխանատվության իմ մ ի ա կ ժ ո ղ ո վ ր դ ի կ ո ղ մ ի ց,— խաբել նրան՝ կոծկելով ֆաղաֆական ն ի մ ն ա կ ա ն խնդիրները— իմ գրական-ֆաղաֆական մի ֆանի սխալների և սայթաֆումների առանձնակի խնդրով,— և, ձեռնալով պատասխանատու միմյանց այդ սահմաններում— դատական ճշնության ենթակա ն ո ղ ի մ ի ն ֆ ն ա պ ա շ պ ա ն ու-

թյան ճարցի վերածել այն, ինչ և՛ ինձ համար,— և՛ խորհրդային ժողովրդի քաղաքական բարձրագույն իղեկավարության համար,— և՛ թե բովանդակ հայ խորհրդային ժողովրդի համար ամենից առաջ քաղաքական կողմնորոշման խնդիրն է,— քաղաքական ճիմնական խնդիր, որի մասին ես պատրաստ եմ ասել իմ որոշակի, աճիոծկելի, քաղաքական անվերապահ խոսքը, եթե կամենում եմ մնալ նրա համար որպես <անընթ. բառ.> պոետ ու քաղաքացի:

Ճավաստիկ, այսպես է դրված խնդիրը և ինձ, և, անկասկած,— խորհրդային հասարակայնության առաջ:— Եվ խնդրի այս առումն է, որ ինձ բարոյական իրավունք է տալիս, ընկ. Ամատունի, հրապարակային խոսքով դիմել Ձեզ՝ իբրև խորհրդային հայ ժողովրդի քաղաքական-հասարակական բովանդակ ճեղինակությունը կրողին,— ասելու համար իմ ասկնյծ <.....> քաղաքական խոսքը խորհրդային հասարակայնությանն ու ժողովրդին,— այսինքն՝ հանձնելու իմ քաղաքական բովանդակ մտաժողովը<ը> խորհրդային ժողովրդի վերջին և վերջնական հայեցողության:—

Թույլ տվեք, ընկ. Ամատունի, արտահայտել սահմանափակվել ճարցադրման բնույթին վերաբերվող մեր նախնական դիտողություններ և անցնել կոնկրետ խնդրին:

***

Վերջին 8—10 ամիսների ընթացքում խորհրդային Հայաստանի քաղաքական—հասարակական կյանքում տեղի ունեցած դեպքերն ու իրադարձությունները «դրսից» նայելիս, այնքան են առաստաղ և անհասկանալի (միևնույն ժամանակ՝ անպատելի)— որ կարող են թվալ պատահական (այսինքն՝ ներքուստ չպատճառաբանված) կատակիզմի, կամ ինչ-որ կամայական ուժերի հետևանքով տեղի ունեցած և այժմ էլ շարունակվող դեպքեր ու երևույթներ:—

Այսպես կարող է թվալ մեզանում տեղի ունեցած քաղաքական տեղաշարժը ոչ միայն աշխարհագրական իմաստով դրսից նայողին,— այլ, իհարկե, ամենից առաջ քաղաքա-

կան իմաստով խորհրդային ամբողջ Միությունն հասարակական-հասարակական կյանքի իմաստին ու դիալեկտիկային անհաղորդ, անհարիր, կամ պարզապես թշնամի այն ամեն տիպի ու տեսակի հասարակական պահերի համար, որոնք լավագույն դեպքերում կարող են բնորոշվել, կամ իբրև հասարակական կյանքում բալաստի դեր կատարող բաղադրիչի տարրեր,— կամ,— որ ավելի կարևոր և նշանակալից է՝ պարզապես հողարկված կամ տնտեսդասակարգային թշնամի տարրեր բաղաքական ֆիշքեր չատ ցայտուն իճճագիտակցությամբ:—

Մի կողմ թողած սակայն մեր հասարակական շրջապատի այս տիպի պասսիվ կամ ակտիվ բաղաքականապես օտար տարրերը,— նույնիսկ խորհրդային հասարակայնության միանգամայն կողմնորոշող, բայց բաղաքականապես անպատրաստի որոշ տարրերի համար ևս վերջին շրջանում մեր բաղաքական-հասարակական կյանքում կատարված դեպքերը կարող են թվալ,— և մասամբ թվում են,— ինչ-որ արտառոց, անսպասելի դեպքեր:

Մեր բաղաքական—հասարակական կյանքում վերջին շրջանում կատարված դեպքերի և իրադարձությունների հենց այսպիսի թեկուզ և արտաքին «արտառոց» բնույթն իճճին միանգամայն անժխտելի օբյեկտիվ գրավական է այն բանի, որ վերջին շրջանում մեզ մոտ կատարված այդ դեպքերն ու իրադարձությունները՝ եթե ոչ «անսպասելի կամ պատահական»,— ապա միանգամայն նոր, դեռ չեղյալ որակի, վնասակար դեպքեր և իրադարձություններ են— հենց բաղաքական, այսինքն՝ սոցիալիստական-դասակարգային բովանդակության խորությամբ, ծավալով և ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ:

Այլ կերպ ասած՝ անկախ դրական կամ բացասական վերաբերմունքից՝ վերջին 8—10 ամիսների ընթացքում թե՛ խորհրդային ամբողջ Միության մեջ և թե՛, մասնավորապես, մեր անմիջական շրջապատում՝ խորհրդային Հայաստանում

կատարված դեպքերն ու իրադարձությունները՝ մեր քաղաքական —հասարակական կյանքում առաջացրած փոփոխություններով և ստեղծված կացությամբ, այսինքն՝ իրենց ազդեցության խորությամբ ու դիապազոնով,— ոչ մի դեպքում չեն կարող որակվել, իբրև սովորական, ընթացիկ դիապազոնի դեպքեր ու փոփոխություններ,— (ինչպես, օրինակ, մեր չափանիշով՝ խորհրդային կամ, կուսակցական ղեկավարության ընթացիկ փոփոխություն՝ այս փակագծի մեջ ի նկատի առնելով անգամ նին ղեկավարության (Աշ. Հ...-ի փոփոխությունը 1928 թ.-ին),— այլ— և՛ պմբողջ Խորհրդային Միության, և՛, մասնավորապես, մեր անմիջական շրջապատի՝ Խ. Հ.-ի՝ քաղաքական-հասարակական բովանդակության և հետագա զարգացման համար էապային շրջադարձային նշանակություն ունեցող դեպքեր և իրադարձություններ: Եվ խորհրդային կյանքում, մասնավորապես մեզանում, Խորհրդային Հայաստանի իշխանության մեջ, անկախ վերաբերմունքից և գնահատականից, չի կարող գոյություն ունենալ որևէ ինչ-որ չափ ակտիվ հաղորդացի, որ չհասկանա, կամ չզգա կատարվող դեպքերի և իրադարձությունների այսպիսի շրջադարձային նշանակությունը: Առավել ևս խորհրդային ամբողջ Միության մեջ կատարվող քաղաքական այս ամենի շրջադարձի «արտաքոց» հկատակկիզմային» բնույթն ու նշանակությունը չէին կարող չզգալ իրենց անձնական կաշվով խորհրդային հասարակության մեջ խլուրդային ձևով թաքնված այն ամեն տեսակի հակախորհրդային, հակահեղափոխական ուժերն ու տարրերը, որոնց առաջին հերթին պիտի պլաններ և ելույթ աշխարհ հաներ քաղաքական ներկա շրջադարձի հեղափոխական հատվածը, իբրև ներկա շրջադարձի համար, ամենաբնորոշ այս շրջադարձի համար առանձնահատուկ տցիալական և դասակարգային ներքին ուժեր:—

Դրանց՝ տոլիտիկական հեղափոխության ներկա էտապի համար ամենաբնորոշ դասակարգային դիմադիր ուժն ու

կերպարանքն ճանդիսացող այդ թշնամիների մասին չէ այստեղ իմ խոսքը: Դրանք ոչ միայն հիանալի կերպով գգում էին, այլև հիանալի կերպով հասկանում և պատկերացնում էչ միայն ընթացող տեղաշարժի իմաստն ու նշանակությունը՝ դեռևս տեղաշարժի նախօրյակին,— այլև, ինչպես ցույց տվին հետագա դեպքերը,— հիանալի կերպով, ըստ <մեր> ուժերի և հնարավորությունների,— (իհարկե, նիշտ այնման, ինչման խլուրդներն են ընդունակ նախատեսել գալիք խոսքի ուժն ու խորացման ունակությունը)— նախատեսելով իրենց գլխին կախված սպառնալիքը՝ ավելի և ավելի խորն էին թաղվում խորհրդային հասարակական կյանքի հողաշերտի մեջ՝ «անցյալի» փորձից բաջալերված՝ հույս ունենալով մի կերպ այս շրջադարձին ևս ազատվել ճեղափոխության խոփից. Իհարկե, այս տարիների (ոչ ներքին ոչ էլ արտաքինը) համար չէ, որ անպատելի կամ, մանավանդ— սկզբում— արտաոոց և անհրաժեշտի էր բադաճական այս տեղաշարժը՝ մանավանդ իր կոնկրետ արտահայտությամբ մեզանում, մեր իրականության մեջ:

(ՉՖ, № 166)

Չարենցը իրեն կարծեք մոլորության մեջ էր դնում: Նա շատ լավ գիտակցում էր, թե ինչ է կատարվում երկրի քաղաքական կյանքում: Բայց և կյանքի ու մահվան այս հաշվեհավասարության մեջ ապրելու ուղիներ էր որոնում՝ ոչ թե ինքը լրջորեն կարծելով, այլ ըստ ամենայնի ձնաբնելով և ժամանակին հավատացնելով, թե իբր հեղափոխությունը շարունակվում է: Իսկ ժամանակը հանրապետության դեկավարն էր, որը իշխանության էր հասել հենց [illegible] նահապետը փակելու հրահանգով: Եվ [illegible] հեղափոխությունը շարունակվում էր, ապա [illegible] 20-ամյակից հետո, դա մահվան [illegible] և [illegible] հեղափոխության շարունակությունը դա չէր, այդ դա վկայն էր բոլոր նրանց, ովքեր [illegible] և ավերվել հեղափոխության [illegible] աշխատանքին: Չարենցը մոլորվածների մեջ էր դասվում էր, որ հեղափոխությունը [illegible]

ձել երկու վրացի դահիճների սեփականություն։ Մի ամբողջ երկրի բախտ ու ճակատագիր տնօրինում էին մութ անցյալի տեր և հնաոճոխության գաղափարները վաճառքի հանած հրեշավոր ուժեր, որոնք իրենց իշխանությունը հաստատեցին և ապա շարունակեցին արյան ու սարսափի ճանապարհով։ Ի՞նչ աներ Չարենցը և ի՞նչ աներին Չարենցի նմաններըս Մահվամբ հերոսանալու հնարավորությունը կար, բայց դա մահ չէր պատերազմի դաշտում, թշնամու հետ հավասար կռվի պայմաններում։ Դա մահ էր ստորացուցիչ հարցաքննություններով ու կասկածամտության կտտանքներով, մատնություններով ու ինքնարդարացման փորձերով, ծեծով, խոշտանգումներով ու գնդակահարությամբ։

Այս գիտակցությամբ Չարենցը գրում է Ամատունուն ուղղված «Բաց նամակի» մի նոր տարբերակ ևս՝ ավելի խորացնելով «ինքնաքննադատության» մեղադրանքները և դրանով իսկ կրճատելով իր կյանքի հնարավորությունները։ «Նամակի» այս տարբերակն ամենայն հավանականությամբ առաջին գիրն է։ Բացակայում է ինքնագրի առաջին էջը։ Մյուս էջերում կան գրած և իր կողմից չնչած հատվածներ, որոնք անտեսել չի կարելի, ուստի՝ դրանք պահպանել ենք հրապարակման մեջ՝ վերցնելով սուրանկյուն փակագծերում։

Չարենցը վերստին խոսում է Կիրպոտինի զեկուցման մասին և ասում, որ այն «իր ընդհանուր իդեալիան բարձրությամբ ինձ ամբողջովին ցնցեց»։ Այդ մեղադրանքները Չարենցը այսպես բարեկիրթ «ինքնաքննադատությամբ» ընդունում է, որովհետև չի ցանկանում վեճի մեջ մտնել Ամատունու հետ, որովհետև Կիրպոտինի ելույթում բանաստեղծն ամենից առաջ լսում էր Ամատունու ձայնը և տեսնում կուսակցական ղեկավարության վերաբերմունքը իր հանդեպ։ Ուստի՝ Կիրպոտինի կարծիքներին առարկել, նշանակում էր առարկել պետական վերաբերմունքի դեմ և էլ ավելի ծանրացնել վիճակը։ Այս տհավոր ճնշման պայմաններում, իրեն ուղված ուղղման հնարավորությամբ, Չարենցը իրեն սկսում է ուղղամամբ մեղավոր է համարում։ Բայց ԲՆ ինչո՞ւմն է մեղքը՝ մնում է անհասկանալի։ Այդպես է, որովհետև մեղք չկար, կար մեղքի պարտադրանք։ Եվ Չարենցը գրում է, ԲՆ այդ

ամիսների շրջադարձային դեպքերի ազդեցությամբ ինքը վերանայել և տեսել է իր «որոշ գործերի և գրվածքների իսկական քաղաքական բնույթն ու նշանակությունը», որտեղից էլ բխում է նրա «սեփական քաղաքական հանցագործության դիտակցումը», «հանցապարտությունը», «ժողովրդի հանդեպ կատարած հանցանքի պատկերացումը», «մեղսագործության էական կերպարանքը»։ Ահա սրանք են Կիրպոտինի «մեղադրական եզրակացությունից» բխող հետևանքները, որոնք Ջարևնցը իրեն ոչ բնորոշ հնազանդությամբ «խոստովանում» է՝ մեղմորեն հպանցիկ ակնարկելով նաև այդ ամենի «առանձնակի խստությունը» և «սրությունը»։

Այս տարբերակը ևս անավարտ է, ավելի ստույգ՝ թերի, որ հրապարակում ենք այնպես, ինչպես պահպանվել է։

<ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿ. ԱՄԱՏՈՒՆՈՒՆ>

Քաջի այս՝ ճնարավոր է սկսել ընկ. Կիրպոտինի ելույթից և ա՛յն պահից, որ նրանում սպառիչ կերպով դրված և արծարծված են բոլո՛ր այն ֆաղաֆական—գաղափարախոսական սկզբունքային և կոնկրետ խնդիրները, որոնք անմիջական առնչություն ունեն իմ խնդրի հետ՝ ամենից առաջ իբրև ֆաղաֆական ընդհանուր խնդրի։

Վերջապես, ես անհրաժեշտ եմ գտնում սկսել դրանից և այն կարևոր նկատառումով, որ ընկ. Կիրպոտինի ելույթը ոչ թե բնորհանրապես արված տեսական զեկուցում է, այլ խորհրդային ամբողջ Միության ֆաղաֆական—հասարակական կյանքում ստալինյան կոնստիտուցիայի կենսագործումից առաջացած հասարակական ուժերի ներկա խորագույն <պոլյուրիցիայի> պայմաններում ֆաղաֆական կոնկրետ կուրսի պաշտոնական արտահայտություն,— համամիութենական խորհրդային գրականության ֆաղաֆական—կազմակերպչական ղեկավարներից մեկի պաշտոնական ելույթը Հ. Խ. Գ.-ի ակտիվում՝ ակտիվի ֆաղաֆական ներկա կուրսից

բիլ ոչնչիմներին գրական—հասարակական—տպագրությամ,— ուր իմ խնդիրը ևս արծարծվում է ոչ թե իբրև «ձևական» մի խնդիր,— այլ՝ առընթեր մեր ամբողջ գրական կյանքի խաղաղական պրակտիկ կողմնորոշման՝ այսօր ևեր իր խաղաղական պրակտիկ լուծումը պահանջող խաղաղական կողմնորոշման խնդիր: —

Կարի՞ք կա արդյոք ասելու, որ այդ ելույթում ես (ինչպես և ամեն ոք) լսող ամենայնի, չէի կարող ուշադրությամբ չլսել իմ խորհրդային երկրի ու ժողովրդի Բարձրագույն Ղեկավարի Ձեր ձայնը,— ինչպես և ողջ ղեկավարության, հասարակության և ժողովրդի ձայնը՝ առավելագույն ճշտակրությամբ և ջերմությամբ արտահայտված խորհրդային համամիութենական գրականության լավագույն տեսաբաններից և խաղաղական կազմակերպչական ղեկավարներից մեկի՝ ընկ. Կիրպոտինի ելույթում:— Կարծում եմ չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ այդ ելույթը՝ իր ընդհանուր իդեական բարձրությամբ և ջերմությամբ ինձ ամբողջովին ցնցեց: —

Այսպիսի հզոր տպավորության պատճառը, գուցե մասամբ այն էր, որ վերջին ամիսների վերագնահատական պրոցեսից ճիշտ արդեն պատկերվում էր թեորիապես,— այն, որ ես համառ կերպով չէի գիտակցում՝ ինձ վերագրվող առանձին սխալների անհիմն լինելու «մասերի» ետևից չտեսնելով գաղափարախոսական–խաղաղական «անասունը»,— ընկ. Կիրպոտինի ելույթում գտել էր սպառիչ, որոշակի, կոնկրետ, ծայր աստիճանի ցայտուն արտահայտություն:—

Սպառիչ պարզորոշությամբ և կոնկրետությամբ բնորոշել այդ –հիմնական» ու «էական» մոմենտը, որ ընկ. Կիրպոտինի ելույթի սկզբունքային բարձրության կուլմինացիոն մոմենտն էր,— բնորոշել այդ ճշարավոր որոշակիությամբ— նշանակում է ձևակերպել և՛ խաղաղական սխալների ու սայթաքումների գաղափարախոսական որակը,— և՛, միևնույն ժամանակ, դրանց վերագնահատության խաղաղական մակարդակը: Կարիք կա՞ արդյոք ասելու, ընկ. Ամատունի, որ այդ ելույթում ես (ինչպես և ամենքը) ամենից առաջ լսում էի իմ խորհրդային երկրի ու ժողովրդի բարձրագույն խաղա-

ֆ[illegible]ան ղեկավարի <ի>, այսիրն Ձեր ձայնը,— ինչպես և իմ խորհրդային երկրի ամբողջ ղեկավարության, հասարակայնության և ժողովրդի խոսքն ու վերաբերմունքը՝ արտահայտված համամիութենական խորհրդային գրականության լավագույն տեսաբաններից, բաղաքական—կազմակերպչական ղեկավարներից մեկի ոգեշունչ և հարազատ լեզվով։ —

Սակայն այն, ինչ ցնցեց և ինձ,— ինչ ռադիումի էմանացիայի նման ճառագայթում և լուսավորում է ամեն խորհ ու էություն, թափանցում է ամենակարծր և ամենաբարդ, խրթին և խոր տարրերի և երևույթների մեջ,— այն ներհին, ներհուսա իմաստավորող և արժեքավարող հուրը, որ առանց բացառության չերմացնում և իմաստավորում է իդեապես յուրաքանչյուր գիծ ու խոսք, յուրաքանչյուր բայլափոխ ու բոխչք,— այն, որ իդեապես կյանք ու շունչ է տալիս բոլոր գործերին ու խոսքերին խորհրդային երկրում և դարձնում է դրա ներգործական և կենդանի,— դա, իհարկե, լենինյան-ստալինյան իդեական ուշխարհազգացումն ու ճպատակասլացումն էր, որի, ինչպես լույսի, ներծծման աստիճանով է միայն, որ կարող է համապատասխան չափով արժեքավորվել և շունչ ու ոգի ստանալ խորհրդային աշխարհում ամեն մի գործ ամեն մի միտք, ամեն մի շարժում։— <Հիմ. Կիրպոտինի նույթի ոչ թե այս կամ այն առանձնակի ցնցող փաստական մատերիալից, կամ հեղափոխական առանձնապես ցայտուն որևէ դիտողությունից կամ վերլուծական առանձնակի խորությունից,— այլ ամբողջ ելույթի իդեական ճպատակադրումից, սկզբունքային աննաշտ, կողմնորոշչային հագեցվածությունից,— մի խոսքով ոչ թե առարկայական կոնկրետ մատերիալից, այլ իդեական հագեցված, ճպատակասլայաց շնչից ու չերմությունից մերկ ճշմարտության պես խտացավ, կանգնեց իմ աչքերի առաջ, իբրև իմ բաղաքական նախկին մտայնության դատավճիռ,—> Ինչպես իճն է ասում՝ եկել է, որ իր «ազատ և ստեղծագործող ժողովրդի հետ» միասին՝ մարդկության ապագայակիր Իոսիֆ Ստալինի դրոշի ներքո երգի և պայքարի, շնչի և ստեղծագործի սոցիալիզմի կառուցման վսեմագույն սպարեզում, իբրև սոցիալիստական խորհրդային անձնայրածիր հայրենիքի մարտիկ ու բաղաքացի։—

<կարո՞ղ էր արդյոք չցնցել ինձ այս ամենը, ընկեր Ամատունի, եթե ես միևնույն համառությամբ նույնիսկ շարունակեի մինչև այժմ չգիտակցել իմ հանցավորությունը: Վերջին ամիսների ընթացքում մի շարք դեպքերի և հանգամանքների շնորհիվ արդեն վերահայել և տեսել էի իրերի իսկական դրությունը,— ոչ միայն ուրիշների, այլև իմ որոշ գործերի և գրվածքների իսկական բաղադրիչ բնույթն ու նշանակությունը: — Որքան էլ ծանր էր, իհարկե, <դրա հետևանքով առաջացած սեփական հանցանքի գիտակցությունից բխող՝ բաղադրիչ հանցավորության սեփական հանցագործության գիտակցությունը,—> սակայն, այնուամենայնիվ,— ես ուզում եմ նշած լինել, որ ներքին երկարատև վերահայումից, հետո որքան էլ դառն ու դժնի լինի սեփական բաղադրիչ հանցագործության գիտակցումը,— եթե անգամ ժողովրդի հանդեպ կատարած հանցանքը շատ ավելի ծանր ու չափազանց պատկերանա սեփական գիտակցության մեջ, քան օբյեկտիվ նշմարտությունն է,— միևնույնն է՝ ոչ մի համեմատություն իսկ չի կարող լինել այն զարհուրելի, ցնցող տպավորության և ազդեցության հետ, որ թողեց ինձ վրա խորհրդային հասարակության և ողջ ժողովրդի առաջ ընկ. Կիրպոտինի ելույթը, էապես, իհարկե, մեղմ ձևակերպումով <իմ գրական— բաղադրիչ մեղքերի հրապարակային> ինձ առաջադրած իմ <բաղադրիչ> «մեղադրական եզրակացությունը»:

Ցնցողը, ծանրը, — ոչ թե ընկ. Կիրպոտինի «մեղադրական եզրակացության» առանձնակի խստությունը կամ սրությունն էր (ընդհակառակը՝ իմ ներքին պատկերացումն այդ մասին շատ ավելի մթին էր ու մեծ) — այլ մեղադրական ակտի ֆասադրական ընթերցումը,— իմ բաղադրիչ հանցանքի մերկ ցուցադրումը խորհրդային ժողովրդի առաջ:—>

Կարո՞ղ էր արդյոք չցնցել այս տեսարանը,— եթե ես նույնիսկ մինչև այժմ գիտակցած էլ չլինեի իմ հանցապարտությունը:

Որքան էլ իմ գիտակցության մեջ վերագնահատական երկար ու դժվարին պրոցեսից հետո շատ ավելի սոսկալի ու մութը էր ժողովրդի հանդեպ կատարած իմ հանցանքի պատ-

կերացումը,— և, ընդհակառակը,— որքան էլ, համեմատաբար մեղմ էր ընկ. Կիրպոտինի «մեղադրական եզրակացության» ձևակերպումը,— բայց և այնպես ոչ մի ձևակերպում, կամ ներքին պատկերացում չէր կարող այնքան ցնցող կերպով, այնքան կոնկրետ և սուր, ինչպես մերկ ճշմարտությունն է,— այնքան պարտադիր, կատեգորիկ կերպով վեր հանել իմ մեղսագործության էական <կերպարանքը>, որքան միայն և միայն խորհրդային հասարակայնության և ողջ ժողովրդի առաջ կատարված հանցագործությունը՝ պարզապես իր անունով անվանելու սովորական հանցանքը:

Ինչո՞ւ: —

Բացատրել այս—նշանակում է հիմնականում ձևակերպել հաղթական սխալները, <անընթ. բառ> պատճառը, ինչպես և իմ սխալների հաղթական վերագնահատության գաղափարական վարկը:— Այստեղից, միևնույն ժամանակ, ես կարող եմ անցնել խնդրի կոնկրետ վերլուծությանը:—

(ՉՖ, № 166)

Այսքանից հետո, այլևս չդիմանալով պետականորեն իրեն պարտադրված «ինքնաքննադատության» կեղծ բարեպաշտությանը և այլևս չկարողանալով հանդուրժել իր անձի ու գործի շուրջ ուժեղացող սադրանքները՝ Չարենցը Ամատունու և ընդհանրապես Կենտկոմի հասցեով շարադրել է մի գրություն ևս, որի մեջ, առանց մշուշապատ բացատրությունների, առանց «սուբյեկտիվ» և «օբյեկտիվ» ընկալումների նուրբ և անտեղի տարբերակման, դրանց տարբերությունից ծնված բախման հանգամանքների քննության, շատ պարզ ու որոշակի ասում է, որ անմեղ է ինքը: Ահա այդ գրության էկիզբը.

Ընկեր Ամատունի,— և, ընդհանրապես,— ընկ. Կենտկոմ.—

Ես իմ գրական—հասարակական ողջ էությամբ,— վերջապես իրեն հասարակ մարդ և հասարակ, շարքային խաղաթղթի— չեմ կարող լինել, եթե ուզենամ անգամ, իմ խորհրդային երկրի ու ժողովրդի դեմ...

(ՉՖ, № 166)

Այս գրության և նախորդի համեմատությամբ ահավոր լարվածության պայմաններում երևում է այն անել, չղածից վիճակը, որի մեջ գտնվում էր Ջարենցը։ Մի դեպքում, կարծելով, թե իր համար այդպես լավ է, նա ընդունում է իր չարած, բայց իրեն վերագրված մեղքերը, մյուս դեպքում՝ հոգու անկեղծ պոռթկումով հերքում պետականորեն մշակված և իրեն վերագրված ամեղադրական եղրակացությունը»։ Ստալինյան հավատքննությունը ստիպում է նրան ամենքին ի լուր հայտարարելու, որ ինքը որպես բանաստեղծ ու քաղաքացի, ի վերջո, չի կարող ելնել իր ժողովրդի դեմ և գործակցել ամեն տեսակի «ֆաշիստական ազգ-հարյուրակային տարրերի հետ», որոնցից էին հենց ստալինիզմի քաղաքականությունը իրականացնողները, որոնք, Հիտլերի հետ մրցակցության մեջ մտնելով, աշխարհը մաքրում էին բոլոր լուսավոր մարդկանցից։

Այս գրության մեջ է նաև, որ Ջարենցը խոսում է իր շուրջ կատարվող քաղաքական անցուդարձի վերաբերյալ գոնե նվազագույն չափով «ճշգրիտ տեղեկություն» չունենալու մասին, ինչն էլ երբեմն պատճառ է հանդիսացել «բնկնելու» սխալների տակեր, որ մեր մտքովն իսկ չէր կարող անցնել երբևիցե»։ Ջարենցը գրում է.

Ինֆորմացիա է:— Այս միտքն առավելագույն չափով ճշմարիտ և կիրառելի է մանավանդ այն մարդկանց վերաբերմամբ, ովքեր իրենց շուրջը կատարվող բաղաքական երևույթների մասին անգամ հասկանալի պատճառներով չեն կարող ունենալ անգամ լիակատար երևութային պատկերացում, այսինքն՝ դուրս են գտնվում բաղաքական անգամ երևութային անցուդարձի մասին գոնե մինիմալ չափով ճշգրիտ տեղեկություն ունենալու դիապազոնից:— Մի՞թե ես երբևիցե մինիմալ հնարավորություն անգամ ունեցել եմ (և կարո՞ղ էի ունենալ)— թե գեթ երևութային առումով՝ ի՛նչ կոնկրետ բաղաքական ակտեր են կատար<վ>ել... Մի՞թե կարող է կասկած իսկ հարուցել այն հանգամանքը, որ հենց «ինֆորմացիայի» լիակատար բացակայությունն է շատ անգամ հենց այդ միանգամայն արտաքին, մեխանիկա-

կան մոմենտ է շատ հաճախ պատճառ ծառայել ինձ նման գոնե երեվութայինի ինֆորմացիայից զուրկ մարդկանց՝ ընկնելու այնպիսի տեղեր, որ մեր մտովն իսկ չէր կարող անցնել երբևիցե <....>։ Այս կապակցությամբ ինչ չարժե միմիայն կենսկոմի պանակատանը 1935 թվին ինձ խուզարկելու դեպքը...

(ՉՖ, № 166)

Մահվան չափ ահարկու այս օրերին Չարենցն ապրում է մեկ այլ տագնապալի վիճակ։ Դա պատմությունից և ժամանակից դուրս մնալու ահռելափն էր։ Օրերի ընթով ապրող բանաստեղծը զղում էր, որ ինքն այլևս ժամանակի կենտրոնում չէ. պա նրա համար արդեն կրկնակի մահ էր, որովհետև ֆիզիկական ոչնչացման վտանգին ավելանում էր նաև հոգևոր մեկուսացումն ու ոչնչացումը։ Ամատունուն հասցեագրված թղթերի մեջ պահպանվել են նաև այլ թերթիկներ, պատառիկներ, որոնցում բացվում է Չարենցի ապրած տառապանքի այս կողմը ևս։ Ահա դրանցից մի քանիսը.

Յուրաքանչյուր ժամ, օր՝ օրին և վայրկյան առ վայրկյան ավելի ու ավելի համակվելով, զգալով, գիտակցելով խորհրդային հայրենիքում օրըստօրե վիթխարի թափով ծավալվող հերոսական պայքարի նշանակությունն ու իմաստը ողջ մարդկության ներկա և ապագա լավագույն կյանքի համար՝ այնուհանդերձ և ամբողջովին եմ համարում զգալ ինձ ոչ միայն անմասն այդ պայքարից, այլ օբյեկտիվորեն՝ իմ ստեղծագործության լավագույն և մեծագույն մասում երգած այդ հերոսական պայքարի այսօրվա սև թշնամիներին աջակցողի, նրանց, ժողովրդի այդ ամենասև թշնամիների, գազրելի գործերին առնչություն ունեցողի զարհուրելի դերում։—

Իմ ամբողջ գրական—հասարակական գործունեության ընթացքը, անկախ բազմաթիվ ձախողանքներից, սխալներ<ց> և սայթաքումներից պետք է որ գոնե իր լավագույն մասում երաշխիք լինի ամեն մի կանխակալությունից զերծ դատավորի գոնե այն անհողդողդ հանգամանքի, որ ես վճռական մարտերի ժամանակ օրգանապես, իմ ողջ էությամբ չեմ կարող լինել հակահեղափոխական, հակամարդկային սև ուժերի հետ...

(ՉՖ, № 166)

Երկու այլ թերթիկների վրա պահպանվել են այս տողերը.

«...մարդու առաջ,— մարդու, որ իրեն պատասխանատու է զգում իր ժողովրդի և երկրի հանդեպ իր կատարած հասարակական յուրաքանչյուր քայլի համար, երբ նման միչ քն շատ հասարակական պատասխանատվություն զգացող մարդու առաջ խնդիրը դրվում է լինել, թե չլինելու,— մարդկության ապագայի, թե սևճարյուրակային միջնադարյան անցյալի հետ լինելու պատմական անկշռելի կատեգորիկ <անընդ. բառ> իմաստով,— նա չի կարող իր ուժերի բովանդակ ձայնով չաղաղակել՝ դիմելով իրեն հարազատ, իր կյանքի և գործի միակ հասցեագիրն հանդիսացող երկրին ու ժողովրդին, խորհրդային երկրին ու ժողովրդին,—...

(ՉՅ, № 166)

Մեկ այլ պատառիկի վրա կարդում ենք.

...այսօր մեզ մոտ, Հայաստանում, թե խորհրդային Հայաստանի մայրաքաղաքից սկսած՝ մինչև խորհրդային անծայրածիր երկրի ամենահեռավոր վայրերը,— ինչպես և իսպանական ֆրոնտում, կամ նույնիսկ հյուսիսային բևեռում մղվող մարդկության լավագույն մասի հերոսական պայքարից,— որ միևնույն պայքարն է՝ տարբեր տեղական կոնկրետացումով,— դուրս մնալ մեր օրերի այս համաշխարհային միասնական պայքարից,— նշանակում է դուրս մնալ կյանքից ու պատմությունից,— նշանակում է գնալ դեպի մահ և վայրենացում:—

Ընկ. Ամատունի՛:

Սա ո՛չ թե «անպատասխանատու» «պոեզիա» է, այլ — ամենախոսուն համոզմունք:— Մի՞թե դժվար է պատկերացնել, որ ինձ համար,— այսինքն՝ իմ արկե, մանրբուրժուական տարերից եկած մի իսկական իմտելիգենտի համար,— ամենաէականը և ամենադրժվարը— հենց այս գիտակցության գալն էր՝ այսինքն՝ ամբողջովին, հերոսաբար, անշեղորեն զգալն ու հասկանալը, որ մեր անմիջական շրջապատում՝ այսինքն խորհրդային

Հայաստանում վերջին շրջանում կատարվող այսպես թե այնպես ավելի քան շրջադարձային, համարյա կատակլիզմային բնույթ ունեցող դեպքերի և փոփոխությունների լույսի ներքո, — նույնն է, ինչ-որ ողջ Խորհրդային Միության և ամբողջ աշխարհում անօրինակ թափով զարգացող հեղափոխական և հակահեղափոխական ուժերի բազմապիսի բախումների իմաստը:

(ՉՖ, № 166)

Սրան գալիս են լրացնելու նաև հետևյալ տողերը.

...գրական նշանակության գիտակցությամբ, ոչ միայն մեր, այլև ամբողջ աշխարհի, ամբողջ մարդկության լավագույն կուլտուրայի լինել կամ չլինելու համար, — ես այնես ինձ համար՝ իբրև պոետի ու հասարակական մարդու՝ մեծագույն հանցանք եմ համարում, բացի ամեն ինչից, — այնես գեր մի վայրկյան դուրս մնալ այս մեծագույն պայքարը մղող միլիոնավոր մարդկանց շարքերից:— Դուրս մնալ...

(ՉՖ, № 166)

Ամատունուն հղած այս նյութերի կապակցությամբ Չարենցը տեսակցություն է խնդրել նրա հետ, որպեսզի տա ավելի մանրամասն բացատրություն: Հայց այդ տեսակցությունը չի կայացել: Երկու առանձին թերթիկի վրա պահպանվել է այսպիսի մի գրություն.

Ձեզ ուղղած իմ առաջին հայտարարության մասին չունենալով մինչև օրս որևէ պաշտոնական վերաբերմունք կամ առաջադրանք՝ անհրաժեշտ եմ համարում հայտնել Ձեզ հետևյալը:—

Տեղեկանալով ընկ. Աբովից, որ իմ հայտարարությունը ուղարկված է նրան՝ Հ. Խ. Գ. Միության նիստում ճնշության տակելու համար՝ ես, ինչպես հայտնի է ձեզ, ցանկություն հայտնեցի հնարավորություն տալ ինձ նախքան այդ անձամբ խոսել Ձեզ հետ դրա հետ կապված մի շարք խնդիրների մասին: Որքան ես կարողացա հասկանալ՝ Ձեր պատասխանն այդ մասին դրական էր՝ սակայն մի օր հետո ընկ. Աբովն ինձ հայտնեց, որ Դուք ծայր աստիճանի զբաղված լինելով (կարծես թե ես այդ չգիտեի և պետք է նրանից իմանայի) — հանձնարարել եք նրան, որպեսզի ինքը խոսի ինձ հետ, որից

հետո մնում էր հայտնելու հարցի բուկ. Ամատունի, որ, դրժ–
բախտաբար, այդ... *(ՉՖ, № 166)։*

*Այս կապակցությամբ Չարենցը հեռախոսով խոսել է Ամա–
տունու հետ։ Հավանաբար դա եղել է սառը խոսակցություն և
Չարենցի մեջ ոչինչ չի մնացել ամիսներ առաջվա հանդիպման
ոգևորությունից, որը նույնիսկ պսակվեց պոեմով։ Ամատու–
նին հավանաբար քննադատել է Չարենցին ու նաև նրան նա–
խատել թե ինքնամերկացման և թե ընկերներին դատափե–
տելու անկարողության մեջ։ Այդ ենթադրության համար հիմք
է մի քայքայված ու թերի պատառիկ, ուր Չարենցը գրել է.*

...Ձեր վերաբերմունքը դեպի ինձ այս կամ այն մասնա–
վոր խնդրի կամ սխալի համար,— որքան էլ անողոք է եղել
ճաճախ ձեր վերաբերմունքը իմ նույնիսկ ամենաթեթև թեֆ–
ման հանդեպ — սակայն այնուամենայնիվ ես մինչ այդ դեռ
մերկացված չէի զգացել ինձ այնպիսի վիճակում, երբ թվում
է, թե արդեն... *(ՉՖ, №166)։*

*Չարենցի առաջին «Բաց նամակից», որ ինքը նաև «Հայ–
տարարություն» է անվանում, Ամատունու ունեցած դժգոհու–
թյունը երևում է նաև մեկ այլ պատառիկից, որի մեջ կար–
դում ենք.*

Ուստի ի լրացումն և կոնկրետացում իմ նախկին հայ–
տարարության՝ հարկ եմ համարում ի նկատի ունենալ և այս
անհունորեն անկեղծ, անվերապահ խնդիրս։

Տվեք ինձ հնարավորություն՝ ինչ ձևով և ինչ կերպ որ
նպատակահարմար կգտնեք՝ ասելու խորհրդային ժողովրդի
առաջ, իմ միակ ժողովրդի և միակ հայրենիքի, ինձ համար
օրգանապես ընդունելի միակ իդեական մայր երկր<ի> առ–
ջև իմ անկեղծ ու անվերադարձ խոսքը... *(ՉՖ, № 166)։*

*Օրըստօրե, ժամ առ ժամ Չարենցն զգում է դանդաղ մահ–
վան ողբերգությունը։ Հանրապետության ղեկավարը մեր–
ժում է նրան ընդունել և բացահայտ թշնամական վերաբեր–
մունք դրսևորում նրա հանդեպ։ Նա զրպարտվում է ամեն տե–
սակի քաղաքական մեղադրանքներով, որի համար հիմք են
ծառայեցնում իրենց պատկերացմամբ նրա ունեցած գրական
և գաղափարական սայթաքումները և ամենակարևորը՝ կապը
արդեն իսկ սպանված Խանչյանի և զնդաններում տանջամահ
արվող գրական—մշակութային շրջանակի ընկերների հետ։*

Չարենցը իրեն պաշտպանելու համար դիմում է «ինքնաքննադատության», բայց և ապարդյուն։

Կենտկոմում նրա հարցը քննելու փոխարեն, քննության են ուղարկում գրողների միության, այսինքն՝ նրանց, ովքեր մի քանի ամիս առաջ մահվան ու հալածանքի էին դատապարտել Բակունցին և մյուսներին, իսկ ապրիլին՝ իրեն՝ Չարենցին։

Ահա այսքանից հետո 1937 թ. մայիսի 30-ին Չարենցը Ամատունուն հղել է մի բացատրություն ևս, որի պահպանված սևագիր տարբերակը ասում է.

<ՀԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԸՆԿ. ԱՄԱՏՈՒՆՈՒՆ>

30. V. 1937

<Ի հավելումն Ձեզ ուղղած իմ առաջին հայտարարության՝ խնդրում եմ ի նկատի առնել իմ հետևյալ հայտարարությունները։>

Մի քանի օր առաջ Ձեզ ուղղած իմ հայտարարության կոնկրետացման և պարզաբանման կարգով՝ խնդրում եմ թույլ տալ հայտնել Ձեզ հետևյալը.

1) Բանավոր կերպով խնդրելով Ձեզ չդնել իմ հայտարարության այդ տեմատը նրապարակային քննության (թեկուզ Գրողների միության վարչության շրջանակում) ես ի նկատի ունեի այն պարզ նանգամանքը, որ այդ տեմատը գրված է եղել իմ կողմից միմիայն կենտկոմի համար, այսինքն, ինչպես տիք ուեցա հայտնելու Ձեզ հեռախոսով՝ դա լոկ ընդհանուր հայտարարություն է՝ ուղղված միմիայն Կենտկոմին, իբրև տեղեկանք իմ հաղաքական սխալների ընդունման փաստի և դրա իդեոլոգիական նախապայմանների մասին՝ ի նկատի ունենալով, որ դրանից հետո լայն հնարավորություն կտրվի շատ ավելի կոնկրետ կազմելու նրապարակային տեքստ, որը և կտրվի քննության, ըստ Ձեր հայեցողության՝ համապատասխան ընթացքով ու կարգով։

<Ինչպես հայտնված էր իմ հայտարարության սկզբում

իմ այդ գրությունն այդ ձևով (տ ե ֆ ա տ ի իմաստով) Ձեզ ուղարկելուս հիմնական դրդապատճառն այն է եղել, որ այլևս անհնարին էր հետաձգել իմ պատասխանը, որ հետագա հապաղումն իմ կողմից միանգամայն իրավացիորեն կարող է ընդունվել խաղաֆական անհամաձայնություն, իմ խուսափողական դիրքի իմաստով:—

Ուստի ես, ուղարկելով այն, <պատկերացնում էի>, որ ս կ զ բ ու ն ք ա յ ի ն ընդունելության դեպքում ինձ կառաջարկվի կամ այդ տ ե ֆ ա տ ի ց, կամ միանգամայն նոր՝ կազմել գրություն հրապարակային ճննարկման համար,— այսինքն՝ կազմել իմ խաղաֆական վերադիրեավորման մ ի ա ն ո ւ յ ն ս կ զ բ ու ֆ ա յ ի ն դրույթից բխող՝ մի այնպիսի հայտարարություն, որ հ ր ա պ ա ր ա կ ա յ ի ն ճննության համար առավելագույն չափով լիներ կոնկրետ և հասկանալի:—< *(ՉՖ, № 85)*։

Ամենայն հույս կորցնելուց հետո, 1937 թ. մայիսի 10-ին Չարենցն Ամատունուն մի վերջին երկտող է հղում և վերջին անգամ փորձում կյանքը փրկելու իր հնարավորությունը։ Դա մամուլում հոդված տպագրելու մի այսպիսի խնդիրք է.

Թույլ տվեք լույս ընծայել իմ ներ ո գ ր յ ա լ հոդվածը «Խ. Հ.»-ում, անկախ իմ հանդեպ ցույց տրվելիք խաղաֆական-պ ր ա կ տ ի կ վերաբերմունքից՝ այսինքն ա ն ձ ն ա պ ե ս ի ն ձ ն ա մ ա ր իմ խաղաֆացիական դրական կամ բացասական բնույթից (ի ն ձ տ ր վ ե լ ի ք ա ն ձ ն ա կ ա ն հնարավորությունների հնարով)։

Եղիշե Չարենց

1937. 10 մայիսի
Երևան

Վերնագիր

Մայիսյան հեղափոխության, իբրև դասակարգային շարժման, կատեգորիկ դասն ու ցուցմունքը հայ ամբողջ ժ ո ղ ո վ ր դ ի ն (լենինյան առումով— ժողովուրդների ազ—... *(ՉՖ, № 164)*։

Թուրքն այստեղ կեսից ուղիղ կտրված—պատռված է, իսկ հոդվածը լույս չի տեսել։ Այդպես, հենց այդ տեղից կտրվեց ու պատռվեց նաև Չարենցի ապրելու հնարավորու-

Բյուրը, բնև դեռևս մինչև վերջնական մահը ամիսներ կային։

Մահվան անդունդի առջև կանգնած՝ ինչ որ ուներ ասելու, Չարենցն ասաց։ Հիմա արդեն հերթը Ամատունունն էր, որը և 1937 թ. մայիսի 26-ին բացված ՀԿ(բ)Կ տասներորդ համագումարում նախ դատապարտեց Բակունցին, հետո «Նոյեմբեր» միության գործունեությունը և ապա Չարենցին։ Ահա նրա տխրահռչակ ճառի այդ հատվածը.

Դաշնակ Բակունցը Հայկիենոյում պահանջել է ֆիլմ նկարել և ցուցադրել դաշնակ ավանդույթներ ճարճատուրմբ Օտտոմանյան բանկի վրա, առաջարկում էին կինոնկար պատրաստել նախահեղափոխական դաշնակ—խմբապետ Անդրանիկի մասին։

«Նոյեմբեր» խմբակը, որ առաջ էր եկել 1925 թ. Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի նացիոնալ—ուլտռնիստական—սպեցիֆիկյան դեկավարության աջակցությամբ (Ամատունին այստեղ ճարվածում է Մյասնիկյանին և Ա. Հովհաննիսյանին՝ Դ. Գ.) սնվում էր սպեցիֆիկների հակահեղափոխական թեորիայով, որը ժխտում էր Հայաստանում պրոլետարական գրականություն ստեղծելու անհրաժեշտությունը, և հնարավորությունը, հայկական խորհրդային գրականությունը հակադրում էր ռուսական խորհրդային գրականությանը (սա լրիվ հերյուրանք է և կեղծիք՝ Դ. Գ.)։

Հենց այդ խմբակի ձայնափողն էր հանդիսանում գրող Մ. Արմենը, որը ապրիլի 23-ի որոշումից հետո հանդես եկավ «ազգային հատկանիշների խաթգման» վերաբերյալ «տեսությամբ», որն ըստ էության մատնիչող նացիոնալիզմի պրոպագանդա էր։

Ահա այս խեղաթյուրված նախաբանից հետո Ամատունին անցնում է Չարենցին։

Մեր նվաճումների ազդեցության տակ իր դիրքերի հակահեղափոխականությունը խստովանեց գրող Եղիշե Չարենցը։ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի անունով ուղղված իր նամակում նա հայտարարում է. «Ես նույնիսկ չեմ կասկածում, որ իրոք իմ սխալներն ունեն նացիոնալիստական, հետևաբար և (սոսկում եմ ասել) հակահեղափոխական, ուրեմն և հակախորհրդային էություն»։

Այս խոստումներր և իր սխալների ու վարմունքի ննջո-
դատությունը Չարենցին պարտավորեցնում են մինչև վերջը
գիտակցել իր հանցանքը խորհրդային գրականության հան-
դեպ և գործնականում նոր ստեղծագործական պրոդուկցիա-
յով ապացուցել, որ նա իսկապես դառնում է լիարժեք խոր-
հրդային գրող:

Ժամանակն է, վերջապես, որ Չարենցը լրիվ հաշիվ տա
իրեն իր ամբողջ ուղու մասին և դադարեցնի թե իր և թե
գրականության հանդեպ երկերեսանիություն անելը: Նա
պետք է հասկանա, որ ամենից առաջ հարկավոր է անկեղ-
ծություն *(ԳԹ, 1937, № 18, 12 Հունիսի)*:

*Ամատունին Չարենցից պահանջում է ստեղծագործական
նոր արտադրանք, իսկ Չարենցն էլ խնդրում էր, որ իրեն
հնարավորություն տան թեկուզև մայիսյան ապստամբության
մասին հոդվածով հանդես գալ մամուլում: Ամատունին գի-
տեր, թե իր պահանջների տակ ինչ էր թաքնված և ինչի էր
մղում Չարենցին: Չարենցն էլ գիտեր, որ ակնհայտ մահվան
դեմ հանդիման ինքը այլ ճանապարհ չունի, քան գոնե առե-
րես մասնակի զիջումների գնալը: Բայց դա էլ չի օգնում:
Այդհանդերձ, 1937 թ. Հունիսի 1-ին Հկ(բ)կ կուսկոլեգիայի
անունով Չարենցը գրում է ծավալուն մի դիմում, որի մեջ
պարզ տեսնելով, որ երկաթյա դաժանությամբ դրված է ով՝ ում
հարցը, այլ խնդիրների հետ մեկտեղ խոսում է նաև իր դեմ
Ն. Չարյանի ուղղած մեղադրանքների մասին և սոփսլած
նորից դիմում ինքնապաշտպանության: Ահա հատվածներ
այդ անտիպ դիմումից.*

Վերագրելով իրեն բավական անադատ պրոլետգրողի և
բոլշևիկի անաղարտ կեղպարանք և հեղինակություն՝ նա իրեն
թույլ է տալիս վերապահում մեղադրել ինձ ամեն տեսակի գրա-
կան—քաղաքական մեղքերում ու հանցանքներում,— իր այդ
նոանդում հասնելով այն աստիճանի, որ ինչպես հայտնի է
ինձ բազմաթիվ աղբյուրներից՝ նա արատավոր է համարում
ոչ թե իմ այս կամ այն երկը, այլ— իմ ամբողջ գրական
հասարակական գործունեությունը, գտնելով, որ ես երբեմն էլ
ոչ մի առնչություն չեմ ունեցել ոչ կոմունիստական կուսակ-
ցության, ոչ էլ խորհրդային հասարակարգի հետ— որ ամբամ

իմ հեղափոխական պոեմները— ըստ էության հակահեղափոխական երգեր են և ուրիշ ոչինչ:

<.....> 1919 թվից մինչև օրս, այսինքն ավելի քան 20 տարվա ընթացքում ամբ ունենալով աշխատելու միևնույն ասպարեզում... Նաիրի Զարյանը բոլոր պայմաններում, ֆաղաֆական բոլոր սիտուացիաներում ծառայել է իմ դեմ իբրև տվյալ ֆաղաֆական մոմենտի 100%-ին իդեոլոգ՝ <.....> ինձ իբրև ֆաղաֆական տվյալ աիրապետող սիտուացիայի դիրքերից <.....> մեղադրողի դերում:

Անավասիկ փաստեր:

1919—20. Երևան:

Ես արդեն գրել և հրապարակել եմ Հոկտեմբերյան հեղափոխության նվիրված իմ առաջին պոեմները՝

1) «Սոմա»

2) «Ամբ. խելագարված»

3) «Երեք ռադիոպոեմները»—

Անկախ իմ այս պոեմների գրական կամ հասարակական այս կամ այն թերություններից՝ ոչ միայն հայ, այլև բովանդակ Ռուսաստանի իրականության մեջ առաջին գրական-գեղարվեստական երկերն էին, որ ներշնչված էին Հոկտ. հեղափոխության պաթոսով,— և, իբրև այդպիսիք, ներաճ ժամանակին ունեցան խոշորագույն հեղափոխական նշանակություն մեր գրական-հասարակական կյանքում:— Իսկ այն մերկ փաստը, որ 1918 թվին տպված «Սոմա» պոեմի վերջում գրված էր «1917 թ. Յարիցին, Կարմիր բանակ»— հավասարազոր էր հազար գրական երկի ֆաղաֆական նշանակության՝ իբրև մանիֆեստի մի հայ սկսնակ պոետի կողմից Հոկտեմբերյան հեղափոխության խնդագին և անվերապահ ոգեշնչման մասին...

<.....> Այդ ժամանակամիջոցին ես միշտ, առանց բացառության, առիթ եմ ունեցել տեսնելու Նաիրի Զարյանին՝ նույն <.....> իներցիայով ինձ «ազգի դավաճանության» մեջ մեղադրողի դերում...

<.....> 1922—1925 թթ.—

Ես գրում եմ «Երկիր Նաիրին», «Ամենապոեմը», «Կապկազը» և այլն,— հայտնի է բոլորին:—

<....> Իմ «Սոմայի» հետևությամբ նա գրում է «Վհ-
րաբռազնա» չնչին պոեմը,— և դուրս է գալիս, որ այդ պոե-
ման նույնպես իսկական պրոլետարական է, իսկ
ի՞նչ է իմ «Սոման»— մանրուքժուական և այլն:

Ամենազարմանալին սակայն դեռ հետո պիտի գար:—

1925-ին կազմակերպվում է Հ. Պ. Դ Ասոցիացիան:—

<....> Վահանդեցին <....> շուտով միակ պրոլե-
տարական պոետ է ճայտարարում Ն. Զարյանին,—
իսկ իմ մասին տպած իր բոշյուրում իմ ողջ ստեղծագործու-
թյունը նամարում է ոչ միայն մանրուքժուական,— այլև սա-
դիստական, շարչիական, անգամ... մոնարխիստական (տես
Գ. Վ.-ի՝ «Ե. Չ. և Մ. Սարյան» հրատ. Հ. Պ. Գ. Ա.-ի) (Զա-
րենցն ակնարկում է Վահանդեցու «Մարտիրոս Սարյան, նդի-
շե Զարենց, 1923 գիրքը՝ Դ. Գ.).

Այս ամենի մեջ ամենամեծ կուրյոզը սակայն այն է, որ
նույն բաղմականի կռիվների մասին Հայաս-
տանում, <որին> ես մասնակցել եմ իբրև կա-
միր բանակային... ինչ որ գրում եմ ես՝ մասնակիցս—
«պրոլետգրող» Վահանդեցու և նրա ասոցիացիային <հարմար-
վողների> կողմից անվերապահ կերպով ճայտարարվում է
;մանրուքժուական և «ազգայնական», իսկ Ն.
Զարյանի գրած պոեմը այն դեպքում <....>
ճայտարարվում է իսկական պրոլետարական, որի
մի տողը բարձր է ինձ եմած ողորմելի մանր-
բուրժուական գրողի բոլոր գործերից...

Եվ միևնույն ժամանակ նույն Ն. Զարյանը տարիներ շա-
րունակ *a priori* վարկաբեկում է ինձ՝ ելնելով նրանից, թե ես
ինչպես կարող եմ պրոլետգրող լինել՝ երբ
կտրված եմ worյա պրակտիկայից: Որ միայն
worյա պրակտիկային մասնակցողը կարող
է լինել տվյալ ճասարակայնության արտա-
ճայտիչ:—

<....> Հետևյալ ամենամեծ կուրյոզը:

Նախքան Զարյանը ջանք չէր խնայում վարկաբեկելու Աշոտ
Հովհաննիսյանի բաղմական կերպարանքը: Շատ լավ կլիներ,
եթե, միայն <....> սրա-ներքո բաղված չլիներ նույն
անձնական, <....> ճասարակական մարդու

համար անվայել խմբապետական «գլուխ պահելու» հոգեբանությունը:

Հետաքրքիր է, ի՞նչ ֆիզիոնոմիայով պիտի նա ներկայանար լույս աշխարհին, երբ նրան մի օր հարց տային, թե ինչպես է նա դարձել կոմ. կուսակցության անդամ... Այստեղ, ավաղ, պիտի ստեղծվեր մի տեսարան, որ կարող էր նկարագրել միմիայն Գոգոլը... Մի տեսարան, ուր ես՝ նվաստս ևս, ինչպես միշտ, պիտի մնայի կախված բրով,— որովհետև՝

ՍԵՆՍԱՑԻԱ !!!

Նաիրի Զարյանին կոմունիստական կուսակցության մեջ ընդունվելու համար երաշխավորել են...

Ի՞նչ եք կարծում — ովքե՞ր...

Իմացեք.—

1) Աշոտ Հովհաննիսյանը.—

և —

2)՝ ...Ավա՛ղ... իմս... — այսինքն՝ Եղիշե Չարենցը...

Գտե՛ք կենսակոմի արխիվում այդ պատմական դոկումենտը — և կտեսնեք, որ, ավաղ, դա այդպե՛ս է...

Թե ո՞ւմ համար է դրությունը ամենից ավելի ողբերգական,— բոդ որոշի իմիր՝ ա ն ա ղ ա ր տ բ ո լ շ և ի կ և պ ր ո լ ե տ ա ր ո ե տ Ն. Զ ա ր յ ա ն ը:

Ես կարող եմ ասել միայնայն, որ այո՝ դ ե ռ այ ն ժ ա մ ա ն ա կ տ ա ռ ա պ ե լ ե մ իդիոտայինբարեհոգությամբ, որը և իմ մեծագույն դժբախտությունն է եղել և շարունակում է լինել:

<. . . . . .>

Դաժան, բայց մերկ ճշմարտությունը սա՛ է և, ոչ մի պաշտպան չունենալով, Չարենցը ակամա, բայց անհրաժեշտաբար դիմում է ինքնապաշտպանության, այդ ընթացքում ստիպված լինելով ասելու բաներ, որոնք այլ դեպքում, ինչքան էլ նրան հալածեին, անգամ դուրս մղեին գրականությունից, նա չէր ասի:

Այս օրերին, ավելի ստույգ՝ 1937 թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին են վերաբերում մահվան ծանր մշուշ բերող նրա մայրամուտային երկու երգերը՝ մեկը մահվան մոխիր ցանող «Մայրամուտն» է, մյուսը՝ կյանքի անել զառանցանքո

ՄԱՅՐԱՄՈՒՏ

Մառ մոռմոռում է մայրամուտը,
Մանվան մոխիր է մովից մաղում,—
Մեռնում է մութը մթնշաղում,—
Մառ մոռմոռում է մայրամուտը:—
Մտորումներս մաճ են, մութ են,
Մարխե մտեր են միայն մխում,—
Եվ մոռմոռում է մայրամուտը,
Մանվան մռայր է մովից մաղում...

Իսկ մյուսի մեջ կան այսպիսի տողեր.

Կյանքը բերել է վոռձանք ու անկում,—
Միշտ համբերել ես դու, սիրտ իմ աճուն...
... Մի՞թե վոռձանք է մեր կյանքն անիշնար,—
Սին վառանցանք է — և՛ կյանք, և՛ ճար...

Վերոտին մատնանշենք նաև այդ օրերի դեպքերը։ Մեկը մյուսի հետևից հրապարակվում էին դատապարտվածների ցուցակները՝ միևնույն անբեկանելի դատավճիռով՝ գնդակահարություն։ ՀԿ(բ)Կ 10-րդ համագումարում Ամատունին «մերկացնում» է «Հայաստանի հակահեղափոխական նացիոնալիստական-տրոցկիստական կենտրոնը», որի անդամներն էին Ա. Երզնկյանը, Ա. Եսայանը, Ս. Փիրումյանը, Պ. Մակինցյանը, Դ. Շահվերդյանը, Ս. Մարտիկյանը, Ռ. Դաշտոյանը, Օ. Դուրգարյանը և ուրիշներ, որոնց վերջը կամ մահն էր, կամ գնդակահարությունը։ Իսկ հունիսի 11-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանը «մի օտարերկրյա պետության ծառայելու և լրտեսությամբ զբաղվելու համար մահապատժի է դատապարտում այնպիսի բարձրաստիճան զինվորականների, ինչպիսիք էին Մ. Տուխաչևսկին, Ի. Յակիրը, Ռ. Ուբորևիչը, Ա. Կորկին, Ռ. Էյդեմանը, Բ. Ֆելդմանը, Վ. Պրիմակովը, Վ. Պուտնան։ Իսկ մինչ այդ մահվան դատավճիռ էր կայացվել Զինովև-Կամենևի

և Բուխարին-Ռիկովի «խմբերի» նկատմամբ։ Արյունը հոսում էր երկրի երեսից, բանտերն ու աքսորավայրերը լեփ լեցուն էին անմեղ մարդկանցով։ Բայց Ստալինի և Բերիայի արյան ծարավը դեռ չէր հագեցել. անհրաժեշտ էր ձերբակալել նոր մարդկանց, հայտնաբերել տրոցկիստական ու նացիոնալիստական նոր խմբեր։ Չհայտնաբերողը ինքն էր վճարում իր արյամբ։ Այդպես եղավ Եսենչյանի հետ։ Նույնիսկ այդ պատրվակով կարճ ժամանակ անց պիտի դժգոհեին Ամատունուց։ Գիտենալով գործող մեխանիզմի օրենքները՝ Ամատունին կարողացածի չափ դեռևս կերակրում էր մարդակեր հրեշին։

Ահա համատարած մահվան այս օրերին Չարենցի կյանքն վերջնականապես դառնում է ան-տա-նե-լի։ 1937 թ. ամռանը նրա ընտանիքը մեկնում է Ծաղկաձորի հանգստյան տուն։ Հալածանքները շարունակվում են նաև այստեղ։ Խոսքը տանք դեպքերի անմիջական մասնակցին՝ Չարենցի կնոջը։

Ամառը շոգ էր, 37 թիվն էր։ Չարենցն ասաց. «Արի ես ել երեխաների հետ Դարաչիչակ ուղարկեմ, էնտեղ ճով է, դու լավ կլինես»։ Նա ինձ երկու երեխաների հետ մեքենա նստեցրեց և տարավ։ Էնտեղ վերևի հարկում մի հատ սենյակ վերցրեց։ Գրողների տունն էր։ Իսկական էպես մի սենյակ տվեցին։ Ես մի ամիս էնտեղ ապրեցի։ Չարենցն էլ ճորից վերադարձավ Երևան։ Չեմ հիշում ո՞վ էր՝ եկավ ասաց, որ դուք պիտի այս սենյակը ազատեք։ Ասում եմ՝ «Ինչո՞ւ»։ Ասում է՝ «Մեկ ամիս ապրել եք, բավակա՛ն է, հիմա էլ պիտի ուրիշներն ապրեն»։ Ասում եմ՝ «Բա ես որտե՞ղ գնամ, սպասեք մի քանի օր, Չարենցին ճայտնեմ, որ գա մեզ տանի Երևան»։ Նա չսպասեց։ Իմ իրերը սենյակից դուրս հանեց։ Ճամպրուկս վերցրի, ներքև իջեցրի։ Պատշգամբում, որտեղ ճով էր, շուրջ բոլորը բաց, ես երկու հատ երկաթյա մահճակալ դրեցի, երեխաների համար տեղ շինեցի այնտեղ, և ինքս էլ նրանց հետ պառկեցի։ Գիշերը շատ վատ ինեցի, որովհետև վախենում էի։ Շուրջ բոլորը բաց էր, ցուրտ էր, ասում էի երեխեքը կմրսեն։ Առավոտյան ես փնտրեցի մի մարդու, որ ասեր Չարենցին, որ էսպիսի դրության մեջ եմ։

Դարաչիչակ եկավ: Շատ նուզված էր, որ տեսավ էս դրությունը՝ մենք պատշգամբի վերջին կետում, երեխեք, ես: Նա ուղղակի սոսկալի նուզվեց և շատ վատ էր իրեն զգում: Նա ոչ մեկի ոչ մի բան չասաց: Գնաց մի սայլորդ վարձեց. ասաց. «Դու բարձրացիր վերև, սայլի վրա նստիր»: Ես էլ վերցրի երկու երեխեիս, մեկին գրկեցի, մեկին կողիս նստեցրի սայլի մեջ: Ու իմը գնաց: Ասաց. «Մի տասը րոպե սպասեք, հիմա կգամ»: Չեմ իմանում որտեղից զուռնաչիներ գտավ: Բերեց սայլի առաջը դրեց և ասաց. «Նվագեք ամենախո՜ւր երգը»: Նրանք սկսեցին նվագել, և սայլը զուռնաչիներով կամաց-կամաց շարժվեց: Ով մեկ էլ տեսա, որ այդ զուռնաչիների ձայնի՞ց էր, թե ինչի՞ց էր, ամբողջ Դարաչիչակի ժողովուրդը դուրս էր թափվել և նայում ու ասում էին. «Էս ի՞նչ բան ա, էս ի՞նչ բան ա»: Ես ասացի. «Ջարենց, ա՛յ, նայիր, ամբողջ ժողովուրդը դուրս է եկել փողոցները, նայում են, լավ չի, էս ի՞նչ զուռնաչիներ են»: Ասում է. «Թող նայ ժողովուրդը տեսնի, որ նայ գրողը վերջին ճանապարհն է գնում»: Կամաց-կամաց մենք շարժվեցինք մինչև Դարաչիչակի փոխրիկ կամուրջ կար, նրա մոտ: Էնտեղից արդեն մենք մեքենա նստեցինք և եկանք Երևան: (Ի. Ջարենցի նուշերի այս ձայնագրությունը պահվում է ԳԱՓ ՁՖ):

Ջարենցը ընտանիքը տեղավորում է Նորքում, բայց զայրույթը չի անցնում: Ե՛վ Մաղկաձորում, և՛ Երևանում նա իր բարկությունն արտահայտել է հայհոյելով իրեն ու իր ընտանիքը այդ վիճակի մեջ դնողներին և նրանց մեջ՝ առաջին հերթին Ամատունուն: Հիմա, արդեն բանտում, Ջարենցն է պատմել այդ մասին.

Սա բանտ է, ուղղիչ տուն չէ... ինձ բանտ բերելուց հետո անցել է մի քանի ամիս, բայց ինձ մոտ ոչ մի քննիչ չի եկել, ոչ մի հարցաքննություն չի եղել և ոչ մի արձանագրություն չի կազմված, և ես չգիտեմ, թե ինչումն են ինձ մեղադրում— եթե այն է, որ ես Մաղկաձորում հայհոյել եմ Ամատունուն— լավ եմ արել, պատրաստ եմ կրկնել նույնը, նա մեր Աղասու գլուխն ուռողներից է *(Դ. Դշնունի, Ոտետ քաղաքացին.— ՁՖ, № 221)*:

Ահա հոգեկան խռովքի այսպիսի մի պահ էլ Չարենցին ձերբակալել են։ Ձերբակալությունը կատարվել է Հայաստանի ներքին գործերի ժողկոմ Խ. Մուղդուսու գիտությամբ և հրահանգով, իսկ նրան ցուցում կարող էր տալ Ամատունին։ Ձերբակալությունը կատարվել է հուլիսի 26-ին։

Միկոյանը Մալենկովի հետ 1937 թ. սեպտեմբերի 15—26-ը գտնվել է Երևանում և մասնակցել ՀԿ(բ)Կ կենտկոմի պլենումին։ Պլենումը ողբերգական վախճան է ունենում Ամատունու և նրա կաբինետի անդամների համար։ Սեպտեմբերի 23-ին, պլենումի վերջին օրը Ամատունին ազատվում է զբաղեցրած պաշտոնից, հանվում կենտկոմի կազմից, հեռացվում կուսակցությունից, հանձնվում ներքին գործերի մարմիններին ի տնօրինություն։ Զբաղեցրած պաշտոնից հեռացվում, բանտարկվում և հետո գնդակահարվում է նաև Խ. Մուղդուսին։

Տեսնելով այս փոփոխությունները և կարծելով, թե հնարավոր կլինի Չարենցին փրկել՝ նրա կինը Միկոյանին է հղում հետևյալ դիմումը.

ԽՍՀՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԸՆԿ. ՄԻԿՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՉԱՐԵՆՑԻ ԿՆՈՋԻՑ ԴԻՄՈՒՄ

Արդեն երկու ամիս է, ինչ իմ ամուսինը բանտարկված է Հայաստանի ներքին գործերի նախկին ժողկոմ Մուղդուսու կողմից, բստ որի՝ նա բանտարկվել է «որպես խուլիգան»։ Բայց առ այսօր, հակառակ մեր սոցիալիստական պետության բոլոր օրենքների, նույնիսկ ֆենոլյուց չի կատարված և հայտնի չէ, թե ինչո՞ւ է նա ձերբակալված։ Ես ուզում էի հեռագրել առաջնորդ ընկ. Ստալինին, բայց ինձ խորհուրդ չտվեցին։ Ես ցանկանում էի նամակ գրել առաջնորդին, բայց ինձ ասացին, որ միևնույնն է նամակը կալանքի տակ կդնեն, որ, հեռագիրը կամ նամակը կալանավորելուց հետո, իմ վիճակը նույնպես կվատանա, որ դրա համար մեկ այլ պատր-

վակով ինձ կարող են պատասխանատվության կանչել: Վերջ ի վերջո, նամակը ես ուղարկեցի Լենինականից և այսպիսի պայմաններում, իհարկե, ենթադրում եմ, որ առաջնորդին հասցեագրված նամակը կարող է և տեղ չհասնել:

Իմ ամուսինը տառապում է ծանր հիվանդությամբ, 10 տարիների ընթացքում նա անագին չափերի հասնող (մինչև 150 գ) մարֆի է ընդունում: Վերջին երկու տարիների ընթացքում նա գամված էր անկողնուն, բայց և ստոր թշնամիներ այստեղ էլ նրան հանգիստ չթողին, շարունակելով նրան ամեն կերպ ստորացնել և վիրավորել, վտարելով նրան պրոլետգրողների միությունից, նրա ընտանիքը երբեմն հասցնելով ամենասուր կարիքի, սովի, չտպագրելով նրա ստեղծագործությունները, որոնցից մի բանաստեղծություն, նվիրված առաջնորդ ընկ. Ստալինին, ուղարկում եմ Ձեզ:

Բանտարկությունից հետո նրա հանդեպ կիրառվող ռեժիմը նկարագրության ենթակա չէ: Ես չեմ խոսում մանրուքների մասին, ես ուզում եմ հաղորդել Ձեզ, որ մարդուն, որի օրգանիզմը սովոր է (մինչև 150 գ) մորֆի ընդունելու, թողել են առանց դեղորայքի, դրանով իսկ հասցնելով այնպիսի վիճակի, որ նա փորձել է ինքնասպանություն գործել:

Հաղորդելով այս ամենի մասին, խնդրում եմ միջոցներ ձեռնարկել ազատել իմ հիվանդ և անմեղ ամուսնուն, որ տառապում է ստոր թշնամիների բանսարկություններից և վերականգնել նրա դիրքն ու հեղինակությունը հասարակության մեջ:

Խնդրում եմ Ձեզ կամ ընդունել ինձ, կամ ինձ պատասխանել հետևյալ հասցեով՝ Սունդուկյան, 6, Ջարենց:

25. X—37 թ. Իզաբելլա Ջարենց

(Թարգմանված է ռուսերենից, բնագիրը պահվում է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվում, մեզ է տրամադրել ինստիտուտի աշխատակից, պատմական գիտությունների թեկնածու Ա. Վիրաբյանը):

Այս դիմումի հետևանքը այն է լինում, որ կարճ ժամանակ անց ձերբակալում են նաև Ջարենցի կնոջը, բախտի քմահաճույքին մատնելով երկու մանկահասակ երեխաներին:

Սանրանում է նաև Չարենցի վիճակը, որովհետև կինն այլևս չի կարողանում նրան օգնել դրսից։

Ռ. Ղազարյանը իր հուշերի մեջ գրում է, որ մի անգամ, երբ կինը լվացել է բանտից բերած Չարենցի շապիկը, նրա վրա կարդացել են քիմիական մատիտով գրած բանաստեղծի «հրկտողը». «Իզաբելլա, լավ նայիր երեխաներին, փրկիր ձեռագրերս և այդ հարցով դիմիր միայն և միայն Ռեգինային և վստահիր նրան» (Գարուն, 1987, № 1, էջ 72)։ Բանտում 1937 թ. սեպտեմբերի 27-ի գիշերը թաշկինակի վրա գրել է նաև «Ավ. Խահակյանին» բանաստեղծությունը և հոկտեմբերի 6-ին գրած գրության հետ սպիտակեղենի կապոցի մեջ ուղարկել կնոջը։

Սիրելի Ավետիք,— գրել է Չարենցը,— ներքևում երգում էին fo երգը,— սիրտս լցվեց և ես գրեցի հետևյալ ստիխը. ընդունիր իբրև ձոն և ողջույն։

Եվ ապա.

Այս է, սիրելի Ավետիք։

Ոգով պայծառ եմ և առույգ, ընտանիքի հոգսն է միայն ինձ հուզեցնում և նոշատում։

Այդ էլ բողնում եմ ալլահին և հայ ժողովրդին։

1937. 6. X. բանտ

Իր ողջույնով Չարենցը նաև ակնարկել է Խահակյանին փրկության ճար գտնել իր ու իր ընտանիքի համար։ Միաժամանակ նույն օրը կնոջը հասցեագրած նամակում Չարենցը խորապես մտահոգվել է Խահակյանի ճակատագրով, թե հանկարծ իր նամակը փորձանք չդառնա նրա գլխին.

Իզաբելլա,

Հանձնիր Ավետիքին, բայց այնպես, որ ոչ ոք բացարձակապես չիմանա և չտեսնի։ Ասա նրան, որ կարդալուց հետո ոչնչացնի կամ, եթե ուզենա պահել, պահի այնպես, որ ոչ ոք չիմանա և որ բացարձակապես ոչ ոքի ցույց չտա։

Պատմում են, որ բանտախցի պատերին Չարենցը բանաստեղծություններ է գրել։ Պատմում են նաև, որ ծխախոտի տուփերը խոնավացրել է, ստվարաթուղթը շերտ-շերտ անջատել և չորացած էջերին շարադրել իր ծանր խոհերը... Բանտից նաև նամակներ է հղել ընդամենը մի քանի ամիս

առաջ իր որպիսությամբ հետաքրքրված առաջնորդին, որոնք տեղում էլ ոչնչացվել են, իսկ եթե տեղ էլ հասնեին, միևնույն է Չարենցի վիճակը դրանով չէր թեթևանալու։ Բանտային օրերի վկաներից մեկը հետագայում այսպիսի հուշեր է դրի առել.

Ստալինին դիմում է գրել, որ բանտում էլ պատռել են, տեղ չի հասել: Կնոջը կալանավորելուց հետո՝ սրսկման հնարավոր դեղամիջոց բերող չկար: Յավերի ժամանակ գոռում էր. «Օգնեցե՛ք, մեռնո՛ւմ եմ»: Չարենցին գրոսաճի էին տանում միայնակ, այն էլ գիշերը: Գրկում էր բանտի ճաղերը և գոռաց նայում...

(Վաչե Աբգարյան, ՉՖ, № 211)։

Բանտում Չարենցին չորս անգամ սաիրած Ջանիբեկ Գալստյանը այսպիսի հուշի պատառիկ է թողել.

Հյուծված էր, կմախքի էր նման, հազիվ կարողանում էր խոսել: Ասում էր՝ «Ջանիբեկ, բա մեր հալը ո՞նց կլինի»: *(ՉՖ, № 218)։*

Մազերը խուզած, քմրադեղերի բացակայությունից արյունալույծ հիվանդությամբ տառապող բանաստեղծը անօգ պահերին «Քո՛ւյր, քո՛ւյր» էր կանչում, կարծելով և հուսալով, որ կգան ու կբուժեն իրեն ու նաև տարակուսում իր վիճակի համար, դեռևս մտածելով արդարության մասին։ Բայց արդարությունը վերջնականապես երես էր թեքել նրանից ու աշխարհից։

Անձնասպանելիորեն հյուծված, օրեր շարունակ անշարժ վիճակում անկողնին դամված բանաստեղծը մահացել է Երևանի բանտի հիվանդանոցում, 1937 թ. նոյեմբերի 28-ի առավոտյան 8—8.30-ի սրանքում։ Ըստ այդ պահի ականատես հուշագրի նրա վերջին խոսքերը եղել են այսպիսին.

Ես գնում եմ այս աշխարհից որպես Չարենց ու կդառնամ նորեն որպես Չարենց *(Ս. Ղրդիլյան, Յոթ օր Չարենցի հետ.— Գրական թերթ, 1988, № 7, 12 փետրվարի)։*

Սա արդեն վերջն է, արյունոտ ողբերգության վերջին արարը։

Գիշերով, նոյեմբերի 29-ին, երբ բացվում էր Հայաստանի խորհրդայնացման 17-րդ առավոտը, նրա դին գաղտնի, աչքից հեռու պահ են տվել հողին։

Դրանից մի քանի օր առաջ հայ գրողները, անդրկովկասյան մյուս ժողովուրդների գրողների մասնակցությամբ, անանց կսկիծի տառապանքը դեմքներին սգո հանդիսավոր արարողությամբ թաղում էին նոյեմբերի 13-ին վախճանված Հ. Հակոբյանին, ճառեր ասում հայ գրականության հետագա զարգացման մասին և մեկը մյուսին զերազանցող հավատարմության երդումներ տալիս «Հայր» Ստալինին։

Իսկ հայ բազմադարյա պոեզիայի բացառիկ հանճարներից ու 20-րդ դարի համաշխարհային պոեզիայի ամենախոշոր ներկայացուցիչներից մեկի՝ Եղիշե Չարենցի աճյունը ևս այսօր հանգչում է անհայտության մեջ՝ պատմության դարձած օրերի խորքից մեզ հասցնելով նրա դրամատիկ ու ողբերգական ձայնը.

Չկա ավելի ամեհի պատիժ, քան այն, երբ մարդուն դատապարտում են իբրև դավաճանողի մի գաղափարի դեմ, որը ճենց նրա սրբազան և միակ — նրա կյանքի միակ իմաստը կազմող գաղափարն ու գործն է: Եվ չկա ոչ մի միջոց այդ «հասարակ», լույսի պես պարզ ճշմարտությունն ապացուցելու, քանզի չկա տանջանք ավելի մեծ ու պատիժ ավելի սև,— քան դատել մարդուն նրա սրբազան գաղափարի, նրա ողջ կյանքի միակ գործին դավաճան լինելու համար, և չկա ոչ մի միջոց ցույց տալու, համոզելու, որ այդպես չէ— որ ճենց այդ նույն մեղքի օբյեկտն է իմ միակ սրբությունը...

ՉԱՐԵՆՑՆ ԻՐ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՌՋԵՎ

(Ուղիս վերջաբան)

Առաջին իսկ բանաստեղծություններից սկսած Չարենցը հոդով մերկ ու անպաշտպան կանգնեց ինքն իր առջև և ճանաչելի ու անճանաչելի բոլոր կողմերով դարձավ իր ամբողջ քնարերգության ու նաև արձակի գլխավոր հերոսը։ Աշխարհի հզոր հոբձանքն անցնում էր նրա միջով, և նա էր ժամանակի գլխավոր վկան։ Եղուկյես ինքնատիպ անհատականություն լինելով, հասու լինելով ներանձնական ապրումների լաբիրինթոսների դաղանիքներին՝ նա նաև ամբողջովին իր ժամանակի ձայնագիրն էր, իր օրերի ցավի և ուրախության հավատարմատարը, մարդու և ժամանակի միջև ստեղծվող դաշինքի ու այդ դաշինքի խզման ականատեսը, ժամանակների կապի ու հիշողությունների շղթայի տերը, որն իր կյանքըն ապրեց և՛ որպես տոն օրվա խրախճանք, և՛ որպես անկումների սարսափի եզրին կանգնած կամավոր զոհ, և՛ որպես ահարկու սպիրդության դատապարտված մահապարտ։ Նրա ճակատագիրը պատմություն էր, պատմությունն էլ՝ նրա ճակատագիրն էր։ Սա էթե ճշդրիտ չհամընկներ նրա հետագրերին՝ պարապ բառախաղ կդառնար։ Նա այս առնչությունների մեջ էլ առանձնանում են հարաբերության հիմնական եզրերը։ Մի կողմում ինքն է՝ մարդ-անհատ և բանաստեղծ-անհատ եղիշե Չարենցը, մյուսում՝ ժամանակը, որը և՛ պատմական ժամանակ է, և՛ պատմություն դարձող ժամանակ՝ առավել չափով ներկա օրվա պատմականացումով, երրորդ կողմից շրջապատն է՝ սկսած մտերիմներից, վերջացրած օտարները, սկսած բարեկամներից, վերջացրած թշնամիները, սկսած իր օրերի գրական մարդկանցից, վերջացրած պատմությունից իրեն ձեռք մեկնող անունները՝ Խորենացուց մինչև Տերյան, Հոմերոսից մինչև Գյոթե, Պուշկին և Ուիթմեն։

Եվ ինչպես պատանության տարիներին, այնպես էլ հասուն այրության արյամբ շառագունած կարմրածուփ կեսօրին՝ ժողովրդի հավաքական հանճարի խտացում հանդիսացող օրերի բանաստեղծ ու վկա Չարենցի առջև վերստին կանգնում է պատմության մեծ երթի ուղեկից Չարենցը։ Եվ կար-

ծեք շարունակվում է հյուսվել բազմիցս ընդհատված, բայց և խոսքի ներքին միասնությամբ միշտ նույնը եղած «Զարենցնամեն»: Քայքայված և դժվար ընթեռնելի թղթի մի պատառիկի վրա, որը նախապես եղել է նրան հասցեագրած մի գրություն՝ ընթեռնելի այս տողերով. «Երևան, Սպանդարյան և Սունդուկյան անկյուն, III հարկ, բնկ. Զարենցին», պահպանվել են բանաստեղծի սխրանքի և արիացման այս տողերը.

... Ապա որա՜ն էլ սև լինի ճանդեռձաճճե ոգուդ,
Որոան էլ սև թվա ճանկարծ ընթացդ անշեղ՝
Ո՜վ սիրելիս՝ երբե՛ք չմոռանաս, ու մեր
Տառապանճներե անգամ որպես սերմեր
Անգամ սխա՛լ ցանած, անգամ իբրև որմեր,—
Սակայճ ձգտել են միշտ դեպի գալիճե՝ անշեղ...
Ո՜վ սիրելիս, եթե անգամ ճատվի սգիդ—
Եվ ճանկարծ դու fո <անրնք.> զգաս,—
Օ, թող երբեք, երբեք,— անգամ դեպճում սգո,
Չխեղճանանք ոգով—և նոր «դարձի չգաս»,
Այդ միջոցով երբեք դու նոր դարձի չգաս... (ՁՅ, № 104)

Սա ինքն է՝ Զարենցը, անդավաճան ինքնությամբ և իր օրերի թանձր մշուշը ճեղքող ապագային հառած հայացքով: Բայց ո՞ւր էր այդ ապագան՝ հանուն որի նա պայքարի կոչ էր անում ժամանակին, հանուն որի հիմա տոկում էր ու փորձում անգամ պահպանել գրաված դիրքերը: Պահպանվել է մի պատառիկ, պայքարի կոչի մի ծվենն, ուր ինքն է իր տարերքի մեջ՝ ընկերներին մի նոր եզերք հանող Վիրգիլիոսի նման.

Ես կոչում էի նրանց դժվարին
Մեծագործության, պայծարի, մարտի,—
Իսկ նրանք միայն երազի, վարդի
Դատաճներ էին՝ մեր ճին աշխարճի
Նեղ շավիղներով մի գիշեր ճասած
Հայրենի երկրի գիրկը երազած...
(ՁՅ, № 107)

Թուղթն այստեղ պատռված է: Այլ թանաքով Զարենցն ավելացրել է մի արտահայտություն՝ «Զվարթ գիտությունս», հավանաբար այդ վերտառությամբ իր 40-ամյակի առթիվ գրառումներ անելու և չափածո տողեր շարակարգելու նկա-

տառումով։ Այսպիսի մի գրառում և բանաստեղծություն՝ գրված 1937 թ. մարտի 28-ի գիշերը պահպանվել է և հետագայում տպագրվել։ Չարենցն այստեղ խոսում է իր միայնակ ու հալածական վիճակի մասին և մի երգ ոգում, ուղղված թեև փողոցային երգչին, բայց և ինքնավերադարձ այսպիսի վերջաբանով.

Գուցե երգի՞չ ես այդ դու,— ես՞զ տեսել դո՛ւ գուցե
Այդ երգչի մեջ փողոցի և նույնիսկ ես տալիս ես՞զ,—
Սակայն... նրան ճակատակ՝ դու պիտի կյա՛նքդ զոցես
Եվ — խոշտանգես անգամ ես՞զ...

«Չվարթ գիտությունը» միջնադարյան թափառական երգիչների՝ Պրովանսի քնարերգուների արվեստն էր։ Անդրադարձ կապով Չարենցն իրեն տեսնում է նրանց կողքին, բայց իրական կյանքը «զվարթ գիտությունն» առնում էր չակերտների մեջ, որը նույնն է, եթե բանաստեղծի անունը դրվեր սև շրջանակում։

Ահա այսպես՝ իր նախկին կոչերի և ներկա պատգամների միջև աստիճանաբար բացվում, խորանում է մի վիհ՝ քերծի ծայրին կանգնած և վերադարձի ճանապարհ չունեցող մարդու օրհասական վիճակով։ Վիհը խորանում է իր ու տիրող վարչակարգի, իր ու շրջապատի, իր ու գրական միջավայրի միջև։ Կյանքից ու պայքարից դուրս մնալու զգացողություններ համակում է նրա ամբողջ էությունը։

Պահպանվել է «Իջել է այսօր Հելիկոնն ամբողջ Նաիրյան երգի — նկուղ սևասև» մուտքն ունեցող բանաստեղծության մի անտիպ տարբերակ՝ սկսվածքի այս տողերով.

Նստած է այսօր երկրի Նաիրյան
Երգեհոնն ամբողջ ճերմեռամարկում փա՛կ
Ամբաստանության փոսում դժնդակ,
Այնտեղ, ուր լուսե Մուզայիը միայն
Կարող են մտնել, թափանցել, թևել,
Չքոսեճ՛ել—երբ էլ ճոմա կամենան.—
Եվ ... գիշե՛րն անգամ կարող են ՝ճակ՝
Այրերն այճոսիկ ցանկանան երբ... (ՁՖ, №120)

Չորրորդ և հինգերորդ տողերը Չարենցը չնչել է և ավելացրել «սուտ Մուսաններն են» արտահայտությունը, այսինքն՝ բռնադատվող ազատության կողքին «լուսե Մուզայք» չեն

կարող լինել, այլ միայն՝ «սուտ Մուսաներ»։ Ահա, կյանքից ու պայքարից դուրս մնալու տագնապը հենց այս վիճակում այլ ելք չի գտնում՝ քան ամենամծանր պայմաններում իսկ ընկերների ճակատագիրը կիսելու պատրաստակամությունը։ Տալագրված այս տողերին՝

Եվ չեմ բաժանի իմ բախտը ղժնի
Ոչ տաժանմներից նրանց այսօրվա,
Եվ ոչ՝ պատմության նժարին դրված
Գործից նրանց վեհ և խոսքից ազնիվ,—.

գալիս են ավելանալու անտիպ տողեր, ուր, ամեն տեսակի անարդարություն նկատի ունենալով, Չարենցն ասում է.

Բանաստեղծ և այր մի նվաստագույն
Ես հեռու, այո, կկանգնեմ աճեղ—
Աճեղծ պռեսի այն իրավունքով,
Որ արցունքով են միայն վաստակում...
(ՉՖ, № 52)

Ընկերներին պայքարի տանող ուրախ կոչերը, որ տարիների հեռվից զրնգում էին նրա ականջներում, վերածվում են խոչելության այսպիսի ճանապարհի և դարձյալ ինքն է ցանկանում խաչը շալակած առաջ ընկել...

Հանուն ճշմարիտ հավատի մղվող այս պայքարն ու անգամ նահատակությունը, որին Չարենցը պատրաստ է եղել ի սկզբանե՝ իր երկրի վերջին զոհը լինելու մահվան տեսլապատրանքից սկսած, միշտ չէ, որ ըմբռնվել է իր պարզ և ուղղակի ճշմարտությամբ։ Դա էլ իր հերթին խորացրել է խզումը նրա ու գրական շրջապատի միջև։ Բանսարկությունների, դավերի ու խարդավանքների արանքում գլուխ է բարձրացնում կասկածանքը, երկմտանքը։ Դա դառնում է մեծ ցավ և ծնունդ տալիս մի շարք գործերի, այդ թվում՝ «Նաիրյան օվոդներին», որը քայքայված և անընթեռնելի հատվածներով պահվում է Չարենցի ֆոնդում (№ 58)։ Այդ երկը գրվել է 1936 թ. հոկտեմբերի 5-ի գիշերը և ըստ էության երգիծանք է ու ծաղր՝ ուղղված նրանց, ովքեր դավեր են նյութել իր դեմ։ Սյուրռեալիստներին Չարենցն անվանում է օվոդ, որ նշանակում է բոռ, գոռևխ, այսինքն՝ ձրիակեր։

Չարենցն ուրվագծում է բավականին երգիծական մի տեսարան. Ավետիք անունով մեկի «դուխանում» հայ գրողները

Նստած լոբի են ուտում։ Դա էլ լոբի չէ սովորական, այլ՝ «վիրական», այսինքն վրացական՝ ուղարկված Ստալինի ու Բերիայի «ձեռամբ»։ Դա անմարդկային մոլուցքի և գարշ մատնության պահ է, որ բանաստեղծը պատկերում է այսպես.

Ես չեմ մոռանում,
Թե ինչ դուխ երեկ
Նստած դուխանում
Լոբի եմ կերել։
<.....> Շուրջը սեզանի
Նստած խմբովին՝
Լափում էիմ դուխ
«Վիրական լոբին»։
<.....> Հարձակվում էիմ
«Լոբու» վրա դուխ,
Թափելով փսլինք,
Ե՛վ լորձում, և՛ քուխ,—
Ախ, այնման, որ խեղճ
Ավետիքն անգամ
Ձեզ «լոբի» կոչեց
Եվ ամոթանքով
«Հայկական վիրի»—
Քշեց զզվանքով
Իր տրակտիրից...
<.....> Իսկ ճարերը, որ
Եկել եմ, եկել,—
Ախ, «լոբի» էին լոկ
Զնայած կծռել,—
Ավելի անգետ,
Ավելի ապատ,—
Հյուսելով ճանգեր,
Որպես խարազան,—
Նախյան ճամայն
Ճորտությանն այսօր...
<. . . . . .>

Այստեղ և՛ վրացական լոբին է խորհրդանշան, որ նշանակում է գարշանք տարածել շրջապատի վրա, և՛ հայկական «վիրը», որը Ամատունին է, և՛ Ավետիք կոչվածի «դուխան-տրակտիրը», որը հարցաքննության և մատնությունների որջն է։

Նույն այս զգացողությունն էր ծնունդ տվել նաև «Պոետի վիշտը» բանաստեղծությանը, որի տպագրված տարբերակներից մեկում կան այսպիսի տողեր.

Իմ վիշտը մխայն
Ես ինձս գիտեմ—
Կանդնած նախյան
Այս լճակի գեմ...
Սևանի նման փոքրիկ այս լճի,—
Ջրերով սակայն...
Ոչ այդման վճիռ...
Օ՛, լիճ նախյան
Ե՛վ ջինջ, և՛ նողին,—
Լազուր օրորան
Հույզերի շնչին...

Ահա գավառական այս խեղճուկրակության մեջ, բոռերի վերածված գրական մարդկանց միջավայրում, ամենօրյա քսությունների հորձանուտում Չարենցն աշխատում էր ապահովել բարձր պահել նվիրումն ու սերը։ Բայց օրերը սոսկ վարձանք էին գուժում։ Կամաց-կամաց աճող այս տագնապ-

Ներն էլ վերածվում են կրակե հրդեհի և ծնունդ տալիս արյան կարմիր շառագույնով ներկված «կ» տառերի կուտակումից առաջացած մի բազաձայնույթի, որն ամբողջովին կարմիր զառանցանք է, կարմիր ողբերգություն, կարմիր մահ, որ եկել է փոխարինելու տարիներ առաջ սկսված, բայց և այն ժամանակ ողջունելի ու գեղեցիկ կրակե շուրջպարին: Հոնականության հոգեվիճակը, որը խանդավառություն էր, բրոնզե եռք ու կարմիր նժույգների խելահեղ թռիչք, նույն կարմիրի հոսքով վերածվում է արյունոտ ողբերգության: Այդ անտիպ բանաստեղծությունը անավարտ ու թերամշակ վիճակում անգամ պատկերացում է տալիս բանաստեղծի կարմիր տագնապների մասին, որոնք գալիս են լրացնելու «Իմ կեսօրին» տպագրված բանաստեղծության հիմնական գույներանգը: Չարենցի դեռևս չհատակված, ամբողջական բանաստեղծության չվերածված մտահղացումը, կամ այլ կերպ՝ խոսքի նախածննդյան միգամածությունը ցույց տալու համար թերևս ավելորդ չի լինի ներկայացնել այդ ուրվագիրը՝ մթերած լրացուցիչ տողերով, բառերով ու արտահայտություններով.

ԿԵՍՕՐ

Կարմիր կեսօր է կրկեսում կիս <.....>,
Կաս կաթսաներ են կարծես կոր <.....>,
Կռնիեր կարմրաթեք <.....> կիզում,
Կապույտ <. . . . . .>
Կաթնածիր <. . . . . .>
Կաս կաթսաներ են կարծես,
Կարմիր կրեր է կիզում,
Կապույտ — կրակարան,—
Կոփվում է կամրջ կյանքի կարած կռնիում,
Կո՞ւյր է, կավա՞տ է, կի՞ն է կամ կեսո՞ր,
Կլոր ու կարիճ է, կամճ ու կարիճ,—

էջի հակառակ երեսին գրել է բանաստեղծության վերածվող էլի մի քանի տող.

Ո, կյանք կարմրածախ, օ, կեսօր,
Կրկեսներ կրմի, կամճի, կավի...

Այս տողերի կողքին ամբողջ էջը Չարենցը հեղեղել է «կ»-երի հնչյունական ցանց ստեղծող ահա այսպիսի արտահայտու-

թյուններով և բառերով. կարմրալուրջ՝ կափարիչ, կեռած կուռ, կռում, կռվում, կեռման, կարիք, կոծում, կեսօր, կին, կանայք, կավատներ, կանոն, կանուխ, կաշառ, կաշկատ (քարերի դեզ), կապարճ - անդարձ (փախչող), կառչել, կառուցողակիր, կառուցողավար, կանխամուտ, կանխասաց, կանխաճաշ, կանխահոժար, կանխապարտավ, կանխավաղ, կանխատես, կանխօրինակ, կառամարտ, կառափն, կառափնատ, կառաւիճատուն, կազմ, կազմած, կազմիչ, կաթարոս (մածուր), կաթիլ, կաթնածիր, կաթնացած, կաթոգին, կալանք, կտրվելիր, կահույր (ջրաման), կաճառախիտ, կամակատար, կամավոր, կռվասեր, կամասլաշտ, կամասեր, կամարանայ, կամեցող, կամուրջ, կայուն, կայանավոր, կայանանալ (ՉՅ, № 116)։ Բառերի կողքին գրված բացատրությունները Չարենցինն են, բայց բանաստեղծություն այդպես էլ չդարձան։

Այսպիսի բաղձայնույթները օրերի ողբերգության որոշակի արձագանք էին։ Կարմիր արույնոտ կեսօր խորհրդանշող հնչյունները «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» տետրապատիկոսում վերածվում են «արեգնացյալ կաղնի» պատկերների։ Նույն կերպ «Մայրամուտի երգ» վերնագրված տրիոլետի մի քանի տարբերակներում «մ»-երի կուտակումով նա ստեղծում է մահվան ահասարսուռ մթնոլորտ։ Մեկ այլ բանաստեղծության մեջ էլ «վ» հնչյունների կուտակումով նա սևեռուն պատկեր է դարձնում վահրը, վրեժը, ոխն ու վարակը («Վաղվաղակի վառել ես վառ», տես նաև սրա սևագիր տարբերակը՝ ՉՅ, № 101)։

Սա անժամանակ մայրամուտն էր, կամ ըղձյալ այգաբացի արյունալից կեսօրը։ Եվ Չարենցը, վերաճշտելով իր գործունեության սկզբունքները, որ կոչված էին պահպանելու ժողովրդի մաքառման ոգին, ազգային նկարագիրն ու առաջընթացի ուղեգծերը, դեռևս գրական պայքարի դրոշակ էր պարզում։ Մեկ անգամ չէ, որ այս օրերին նա հայացքը ուղղել է ետ, վերհիշել իր գրական մուտքի տարիները, իր շռնդալից հաջողություններ։ Սևագիր մի պատառիկ այսպիսի տողեր է հասցրել մեզ (ՉՅ, № 68).

Բայց աճա անցել ես ճանապարհիդ
Քառասնաղարձ զարուճն արդեն անվերադարձ,—
Բայց շեղշողաց ճո աստղը — լոկ առաջին տարին...

Վայելաճար փառիդ դեռ առաչին պահին
Ինչ խնդություն ու ճար էր՝ ինձ ի վերուստ տրված...

Այս նույն էջի վրա կա նաև մեկ այլ պատառիկ՝ գրված 1936 թ. դեկտեմբերի 11-ին, որը նախորդի հետ մեկտեղ հավանաբար պիտի վերածվեր ամբողջական բանաստեղծության։ Բայց չի՛ վերածվել և այդ տողերը մնացել են որպես բանաստեղծի նյարդային հուզեվիճակի էլեկտրագրեր.

Օ, աննահգիստ իմ սիրտ,
Օ, աննահգիստ իմ սիրտ ու անկարող...
Այլևս ի՞նչ մնաց ինձ խնդրելու կյանքից,—
Ախ, խնդություն միայն ու խռնջենքի կարոտ,—
Խաղաղություն ունխոճ,— մաճվան հանգիստ...

Հետո տողերի տարբերակներն են՝ «Ախ խռնջենքի միայն անեզրական կարոտ», «Քեզ արևեց ողջ հուրը և քեզ է տրված վերուստ...» և քարի պես միայնակ ընկած մի բառ՝ «Ահավոր»։ Ահավոր ինչպես մահը։

Ի՞նչ եղավ, ի՞նչ պատահեց, ինչպե՞ս խավարեց կյանքի լուսաստղը... Բայց և իր ճանապարհին իջած ուղեփակոցի գերանները՝ անգամ այդ ահավոր ծանր պահին նրան մղում էին սխրանքի, շրջապատի կապարե հաստաբևնտ պատնեշի դիմադրության հաղթահարման։ Ահա իր ժողովրդից ժառանգաբար ստացած այս մաքառման ոգին է, որ բնորոշում է նրա ամբողջ գրական կյանքը, առավել ևս՝ 1930-ական թթ. դրամատիկ ընթացքը։ Եվ ինչքան էլ, իր բառերով ասած, «մեր ամբողջ կուլտուրական մակարդակի ցածր լինելը» ազդեր նրա վրա, ինչքան էլ գավառական կյանքի փոքր կրքերն ու չարությունները չհանդուրժեին իրենց մեջ ապրող հանճարին, ինչքան էլ քաղաքական տարբեր և միշտ էլ անհիմն մեղադրանքներով կասեցնեին նրա արձակային հզոր թռիչքը, ինչքան էլ մահվան սարսափի տակ նրան լռեցնեին և, ի վերջո, տային մահու բերան, այնուամենայնիվ Չարենցը հաղթողն է, պարտվողը չէ, մնացած բոլոր ժամանակների մեջ իր օրերի սերը ինքն է, մյուսները չեն և նրա մահն էլ մահ չէ, այլ անմահություն, այլ անվախճանական մի երթ՝ իր ժողովրդի հարատևության երաշխիքով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս գրքի մասին 3

Չարենցը 1930-ական թթ. գրական-հասարակական կյանքի հորձանուտում (Որպես առաջաբան կամ գրքի ուղեցույց 7

Չարենցի երկրային սերը 103

Ընծայագրեր, նամակներ, գրություններ 129

«Մատյան ժառանգության» կամ «Տետր գրության այլևայլ» (Ստեղծագործական մտահղացումներ, ծրագրեր, օրագրեր, գրառումներ, թարգմանություններ) 139

Խոսք իրենից կամ հպիգրամների անվրեպ կրակահերթ . . . 166

Չարենց և Կոմիտաս 187

Հայ երգի ժամանակն ուղին և հայ երգչի ճակատագիրը 194

«Որպես գիշ, դեղին տերևներ» 202

Չարենց և Ջիտյոճ 226

«Ով որքա՜ն տխուր է իսկապես» 235

Չարենց / Ստալին 242

Երկու ճգնաժամերի բախում 277

«Թուղթ՝ նվիրե Չարենցից» 279

Ողբերգության այլաբանություն 288

«Մի վայի վայրում, չգիտեմ որտեղ» 290

Ազետի օրերի գաղտնագրեր 295

Չարենը Ամատունու վարչապետության օրերին կամ ողբերգության վերջին արարը 314

Չարենն իր ու ժամանակի առջև (Որպես վերջաբան) 375

Գրական-գեղարվեստական հրատարակություն
Դասպարյան Դավիթ Վազգենի

ՈՂԲԵՐԴԱԿԱՆ ՁԱՐՆՆՑԸ

Կյանքի և ստեղծագործության ճառագայթ էջեր

Литературно-художественное издание
Гаспарян Давид Вазгенович

ТРАГИЧЕСКИЙ ЧАРЕНЦ

Незнакомые страницы жизни и творчества
Ереван, издательство «Наири»

На армянском языке
Ереван, 1990

Խմբ. վարիչ՝ Ս. Է. Թոփչյան
Խմբագիր՝ Ն. Հ. Մամիկոնյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Նկարիչ՝ Հ. Մ. Մատուրյան
Վերատեսող սրբագրիչ՝ Զ. Ս. Կարապետյան

ИБ № 6599

Հանձնված է շարվածքի 6.11.89։ Ստորագրված է տպագրքի 4.09.90։ Ձևաչափ՝ 84×108¹/₃₂։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակը սովորական։ Տպագրություն՝ բարձր, 20,16 պայմ. տպ. մ. 16,9 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 15.000։ Պատվեր 86։ Գինը 1 ռ. 70 կ.

«Նաիրի» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Наири», Ереван—9, ул. Теряна, 91.
ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան փող.
Типография № 6 Госкомитета Арм. ССР по делам издательств полиграфии и книжной торговли. Ереван, ул. Туманяна, 23/1.

70.551